

ԱՐԱ ԳԵՎՈՂԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵԼԻ  
ԲԱՆԱԿ

1

«Հին Հայաստանի ռազմական գործը»  
մատենաշար. հատոր II

Արա Գևորգյան. Տիգրան Մեծի բանակը.  
մ.թ.ա. 95 – 55 թթ. Դրակ I:

Երևան. «Արևելք – Արևմուտք» ԳԲՀ հրատ.

2009



**«Արևելք - Արևմուտք»**  
գիտական և բժշկական հիմնադրամ

Ուգմագիտական հետազոտությունների կենտրոն

ՀՏԴ 941 (479.25) :355/359  
ԳՄԴ 63.3(22)+68  
Գ 479

Գևորգյան Ա. Ա.

Գ 479. Տիգրան Սեծի բանակը մ.թ.ա. 95-55 թթ. Պրակ I: («Հին Հայաստանի ուգմագիտական գործը» մատենաշար. հատոր II): Եր.: «Արևելք - Արևմուտք» ԳԲՀ հրատ., 2009 թ., 372 էջ, նկ.:

Աշխատության մեջ սկզբնադրյուրների և մասնագիտական գրականության վերլուծության հիման վրա ներկայացվում են մ.թ.ա. 95 - 55 թթ. Տիգրան Սեծի ուգմագիտական և ուգմագրադարձական գործությունները:

Ուգմագիտական արվեստի պատմության տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող ուգմագրավեճրը և ճակատամարտերը ներկայացված են առ լուսաբանությամբ:

Մասրամասնորեն ներկայացված և մեկնարակած են մ.թ.ա. 69 - 67 թթ. հայ-հռոմեական պատերազմի ընթացքը և հետևակենքը:

Գիրքը նախառնեսված է ուգմագիտուների, պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

ISBN 978-9939-9003-0-8

ԳՄԴ 63.3(22)+68

© Ա. Գևորգյան, 2009 թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	Էջ
Շնորհակալություններ	9
Սույնը	11
Նախաբան	
Հին Աշխատության ուգմագիտական գործություններում համագործակցության առաջարկ	15
ՄԱՍ I.	
Մ. Թ. Ա. 535 - 69 թթ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ	33
Գլուխ 1.	
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՄԻԱՉԵՎ ՏԻԳՐԱՆ Բ-ի ԳԱԶԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ (մ.թ.ա. 535-95 թթ.)	34
1.1.Հայկական բանակը Արեմենյան տերության ուգմագիտական համակարգում՝ 535 - 331 թթ.	36
1.2.Երվանդունիների բանակը՝ 331-201 թթ.	48
1.3.Արտաշեսյանների բանակը՝ 201-95 թթ.	51
Գլուխ 2.	
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԾՈՓՔԻ ՄԻԱՑՈՒՄԻ ՆԱԽՕՐԵԻՑ ՄԻԱՉԵՎ ԱՍՈՐԻՔԻ ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ (մ.թ.ա. 95-83 թթ.)	67
2.1.Տիգրան Բ-ի ուգմագրական կոնցեպցիան	68
2.2.Ծոփքի միացումը՝ 94 թ.	92
2.3.Հայ-հռոմեական հակամարտությունը Կապադովկիայում՝ 93-91 թթ.	94
2.4.Տիգրանի Բ-ի առաջին ուգմագիտական ռեֆորմը՝ 91-89 թթ.	99
2.5.Վիրքի և Աղվանքի հպատակեցումը՝ 89-87 թթ.	125
2.6.Երկրորդ հայ-պարթևական պատերազմը՝ 86-84 թթ.	127
2.7.Միրիայի հպատակեցումը 83 թ.	131

<b>Գլուխ 3.</b>	
<b>ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ</b>	
(մ.թ.ա. 83-69 թթ.)	134
3.1.Հայկական կայսրության բանակի թիվը, կազմը և մարտավարությունը՝ 83-69 թթ.	137
3.2. 77 թ. կապարվվկիական արշավանքը.	154
3.3.Տիգրան Մեծը և կիլիկյան ծովահենները՝ 83-69 թթ.	156
3.4.Տիգրան Մեծը և Սպարտակը՝ 73-71 թթ.	168
3.5.Հարավսիրիական պատերազմը՝ 73-69 թթ.	170
3.6.Տիգրան Մեծը և Միհրդատ Եվպատորը՝ 73-69 թթ.	172
 <b>ՄԱՍ II.</b>	
<b>Մ. Թ. Ա. 69 – 67 թթ. ՀԱՅ – ՀՈՇՈՍԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ</b>	177
 <b>Գլուխ 4.</b>	
<b>ՀԱԿԱՍԱՐԾՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒԾ</b>	
<b>ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ</b>	178
4.1.Հոռմեական բանակի ուժերը և նրանց տեղակայումը Փոքր Ասիայում 69 թ.	178
4.2.Լուկովլոսի ռազմավարական ծրագրերը	210
4.3.Հայկական բանակի ուժերը և նրանց տեղակայումը կայսրությունում 69 թ.	212
4.4.Տիգրանի ռազմավարական ծրագրերը	225
4.5.Կողմերի բանակների և ծրագրերի գնահատականը	227
 <b>Գլուխ 5.</b>	
<b>Մ.Թ.Ա. 69 թ. ՌԱԶՄԱՐԴԱՎԸ</b>	237
5.1.Լուկովլոսի արշավանքի սկիզբը և առաջին մարտերը	239
5.2.Տիգրանակերտի գլխավոր ճակատամարտը	280
5.3.Տիգրանակերտի անկումը և 69 թ. ռազմարշավի ավարտը	335
5.4. 69 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը	341
 <b>Գրականություն</b>	346
<b>Հավելված</b>	368

## Պ Ր Ա Կ Ա Ռ

### Գլուխ 6.

<b>Մ.Թ.Ա. 68 թ. ՌԱԶՄԱՐԴԱՎԸ</b>	
6.1.69-68 թթ. Տիգրան Մեծի երկրորդ ռազմական ռեֆորմը	
6.2.68 թ. ռազմարշավի սկիզբը և առաջին մարտերը	
6.3.Արածանիի գլխավոր ճակատամարտը	
6.4.Հոռմեական բանակի նահանջը և երրորդ գլխավոր ճակատամարտը	
6.5.Հայ-պոնտական հակահարվածը Պոնտոսում.	
6.6.68 թ. ռազմարշավի վերջին մարտերը և Մծինի անկումը	
6.7.68 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը	

### Գլուխ 7.

<b>Մ.Թ.Ա. 67 թ. ՌԱԶՄԱՐԴԱՎԸ</b>	
7.1.Հայ-պոնտական բանակի մարտերը Պոնտոսում. Զելայի ճակատամարտը	
7.2.Հոռմեական բանակի նահանջը Հայաստանից	
7.3.Հայկական բանակի հակահարձակումը Կապաղադովկիայում	
7.4.67 թ. ռազմարշավի արդյունքները և գնահատականը	
7.5.69-67 թթ. հայ-հռոմեական պատերազմը ռազմարվեստի պատմությունում	

### ՄԱՍ III.

<b>ՀԱՅ – ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ.</b>	
<b>ՀԱՅԱՍՏԱՆ՝ ԱՅՆ, ՊՈՆՏՈՍ՝ ՈՉ</b>	

### Գլուխ 8.

<b>ՊՈՄՊԵՈՍԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԾՆՈՒՆԴԸ</b>	
8.1.Չորրորդ պոնտական պատերազմը՝ 67-66 թթ.	

- 8.2. Երրորդ հայ-պարթևական պատերազմի սկիզբը՝ 66 թ.
- 8.3. Հայ-հոռոմեական պազմանազիրը. Պոմպեոսը Հայաստանում:
- 8.4. 66 թ. Պոմպեոսի ռազմարշավի արդյունքները և գնահատականը

Գլուխ 9.

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՈՒՄ (Մ.թ.ա. 65-55 թթ.)

- 9.1. 65 թ. Պոմպեոսի կովկասյան արշավանքը և Հայաստանը
- 9.2. 66-64 թթ. Երրորդ հայ-պարթևական պատերազմի վերջին ռազմարշավները
- 9.3. 64-55 թթ. ռազմաքաղաքական վիճակը Արևելքում և Հայաստանը

Գլուխ 10.

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- 10.1. Քաղաքական
- 10.2. Ռազմական
- 10.3. Քարոյահոգեբանական

Վերջաբան

ԱՊԱԳԱ ԱՍԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրականություն

Հավելված

1. Կենսագրական բառացանկ - տեղեկատու
2. Տեղանունների բառացանկ
3. Բառարան
4. Քարտեզների ցանկ
5. Նկարների ցանկ

Ամփոփում

Резюме

Summary

## ՇՆՈՐՉԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կցանկանայի շնորհակալություն հայտնել անվանի պատմաբան Ռուբեն Մանասերյանին իր Տիգրան Մեծ Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևաստանի դեմ. Մ.թ.ա. 94 – 64 թթ.: Երեսն, “Հայաստան”, 1987, 240 էջ. Խոյակապ մենագրության համար, որը ոգևորեց և դրեց ինձ “Հին Հայաստանի ռազմական գործը” եռահատորյակի ստեղծմանը, որի հրատարակումը սկսվում է Տիգրան Մեծի ժամանակշրջանին նվիրված սույն՝ երկրորդ հատորից:

Շնորհակալություն եմ հայտնում արդի հայ մտավորականության ամենափայլուն եերկայացուցիչներից մեկին՝ մեծ ճարտարապետ Սաշուր Քալաշյանին, մեր բազմաթիվ քննարկումների և բանավեճերի ժամանակ ինձ պարզեած բազմաթիվ անսպասելի և խորարափանց մտքերի համար:

Շնորհակալ եմ Դավիթ Հարությունյանին, Համետ Գասպարյանին, Էմմա Հովսեփյանին և Համետ Շատուրյանին իմ աշխատությանը ծանոթանալու և արժեքավոր նկատողություններ և առաջարկներ կատարելու համար:

Շնորհակալ եմ դիտողությունների համար հիմնականում Նարինե Գևորգյանին, նաև Հրանուշ Խառատյանին, Սեղա Սկրտյանին, Գագիկ Սարոյանին, Անահիտ Էբեյանին և Էմմա Հովսեփյանին օգնության, ինչպես նաև իմ բանաստեղծական օպուտներին ավելի բարեհունչ տեսք տալու համար: Շնորհակալ եմ Լիլիթ Ավագյանին ու Տաթևիկ Հովսեփյանին վեկսորային զծանկարչության և նկարիչ Ծովինար Ղազարյանին արժեքավոր նկարների համար:

Շնորհակալ եմ Սուսաննա Խաչանյանին բարձրակարգ խմբագրական աշխատանքի համար:

Շնորհակալ եմ Տիգրան Կուչուկյանից և Ռուբեն Ավագյանից ցուցադրած տեխնիկական աջակցության համար:

Այս աշխատությունը անհնարին կլիներ հասցնել ավարտի առանց իմ ելքոր՝ Աշոտ Ղորովչյանի մշտական օգնության, որի համար հայտնում եմ իմ խորին երախտագիտությունը:

Վերջապես, այս աշխատությունը անհնար կլիներ արագ

ավարտել առանց իմ սիրելի տիկնոց՝ Նարինե Գևորգյանի ինտելեկտուալ ու գործնական և մեր երեխաների՝ նաև իմ քրոջ և մայրիկիս բարոյական աջակցության, որի համար ես բոլորին հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը:

Հեղինակ  
հոկտեմբեր 2009 թ.  
ք. Աշտարակ

## Նվիրվում է մայրիկին

### ՄՈՒՏՔ

Հարգելի ընթերցող, մտեք Հայաստանի ցանկացած զբաղա-  
րան, չմոռանալով նաև Սատենադարանը և փնտրեք վերջին  
տասնվեց դարերի ընթացքում հայի կողմից գրված և պահպան-  
ված մի հայալեզու ստեղծագործություն, որտեղ ներկայացված  
լինեն ուազմական արվեստին վերաբերող հարցերը: Եթե փոր-  
ձեր ակնարկել այլ երկրների հայազգի ուազմական գործիչնե-  
րին, ես Ձեզ հետ չեմ համաձայնվի: Օրինակ աղմիրալ Խաչո-  
վը նավատորմի մասին ունի ծանրաթեք տեսական և գործնա-  
կան աշխատանքներ: Սակայն, ի նշ կապ ունենք մենք՝ հայերս,  
Խակովի ներկայացրած ուազմական դրկտրինայի հետ: Ոչ մի  
սովորական գործչի այս աշխատությունները կազմում են ոռու-  
սական ուազմական մտրի անբաժանելի մասը:

Մենք ցանկացել ենք գոնել միջնադարյան մի հայ գրողի,  
որը շարադրել էր, թե ինչպես պետք է կազմել, վարժել և ուզմի  
դաշտում դեկավարել ջոկը, վաշտը, գունդը ու բանակը: Չենք  
գոտել ոչ մի հայերն զիրք, որտեղ բանիմացությամբ, գրագետ  
շարադրված լիներ, թե ինչպես կարելի է արյունավետ ոչնչաց-  
նել թշնամուն ուազի դաշտում՝ կրելով նվազագույն կորուստ-  
ներ: Աշխարհի բոլոր հին ժողովուրդները ունեն այս կարգի  
գրականություն:

Փոխարենը գրել ենք ողբի, լաց ու կոծի, մեր ճակատազրի  
լուծը խոնարհ կրելու մասին անվայել շատ, հսկայածավալ  
գրականություն: Ցավայի է ...

Մեր պատմիչների ճաշող մասը եկեղեցականներ եր կյան-  
քի, իրականության հանդեպ այս դասին բնորոշ մտածելակեր-  
պով և կյանքի իրողությունների հանդեպ վերաբերմունքով: Այդ  
պատճառով պատերազմներին, կամ ընդհանրապես, ուազմա-  
կան գործին վերաբերող բոլոր դրվագների նկարագրություն-  
ները կատարված են ոչ պրոֆեսիոնալ ձևով: Համապատասխա-  
նաբար, մեր գրավոր պատմությունն էլ ավելի ճիշտ է անվանել  
«եկեղեցագիր պատմություն հայոց»: Այս հանգամանքը զգալիո-  
րեն դժվարացնում է մեզանում ուազմարվեստի և պատերազմ-  
ների պատմության ուսումնասիրությունը:

Բողոքի զգացում է առաջացնում նաև «պատմություն հայց» բառակապակցությունը, որը փոխարինել է «Հայաստանի պատմություն» հպարտ բառակապակցությանը՝ միանգամից գրելով մեզ Հայրենիքի որոշակիությունից:

Հայաստանի հնադարը մենք ուսումնասիրում ենք գերազանցապես օտարների գրած պատմական և այլ գրական նյութերի հիման վրա՝ ոչ բարյացակամ, հաճախ թշնամնքի ոգով շարադրված նյութերի մեջ հազվադեպ գտնելով չեզոք դիրքերից գրված սակավաթիվ տեղեկություններ: Այս բոլորը պետք է վերլուծել տարածաշրջանի և համաշխարհային պատմության համատեքսում՝ համարելով հնագիտական, հնագրական, պատմական մարդարանության, լեզվաբանության տվյալների հետ, որպեսզի ստանակը մեր անցյալի թիշ թե շատ օրիենտիվ պատկերը:

Վերջերս, հայտնվել են մի շաբթ աշխատություններ, որտեղ մեր նախնիները սկսել են թրթի վրա «փառապանձ հաղթանակներ» տանել: «Կոստրվում» են տասնյակ հազարավոր թշնամիներ, կատարվում են աներենակայելի սխրանքներ ... Ոչ մի ընդհանուր բան պատմական գիտության հետ այս աշխատանքները չունեն, նրանց հիմքում ընկած է սխալ հասկացված (և այդ պատճառով խեղաթյուրված) հայրենասիրությունը և, ամենակարևորը՝ պատմության թերի ընկալումը:

Հայաստանի հազարամյակների ընթացքում գտնվել է աշխարհի ուսումնականորեն ամենաուժեղ, աշխարհակալ պետությունների հարևանությամբ և բազմից ընդհարվել է նրանց հետ: Եթե մենք անընդհատ հաղթեինք Խեթական, Ասորեստանյան, Հին Պարսկական, Հռոմեական, Պարթևական, իսկ հետո Բյուզանդական, Արարական, Մոնղոլական և Թուրքական տերություններին, ապա կունենայինք միանգամայն այլ ճակատագիր, նաև կարգավիճակ ժամանակակից աշխարհում: Դա չի նշանակում, որ մենք չունենք ուսումնական պատմության փայլում ենք: Ամենին, մենք կարծում ենք, որ այդ փառապանձ եջերը պետք է զանասիրաբար բացահայտվեն, համակողմանի գիտականորեն ուսումնասիրվեն ու հիմնավորվեն, և միայն դրանից հետո մատուցվեն լայն հանրությանը:

Ճշմարտության ուժին չի հանդուրժում կանխակալություն, հայրենասիրության կերծ ընկալում, անցյալը «գեղեցկացնելու» միտում, ազգային մնապարծություն և գորոզամություն: Այլա-

պես գիտական միտքը կտկարանա, աննկատ կփոխարինվի գիտանմանով, և հայրենի պատմագրությունը XXI դարի սկզբին կկատարի (կավարտի) ինքնառշնչացման աշխարհազարման ակտը:

Մազմական գործը Հին աշխարհում (գրեթե ոչ մի բան չի փոխվել մինչ այսօր) մարդկային աշխատանքային գործունեության բաղկացուցիչ մասն էր: Արտադրության (զյուղատնտեսություն, արեստագործություն) և մշակույթային գործունեության հետ միասին նա անտիկ շրջանի մարդու կյանքի անբաժանելի մասն էր և արժանի է համակողմանի գիտական ուսումնասիրության:

... զարնանային զով առավոտ Արտաշեսյան Հայրի սահմանամերձ սարալանցի ստորոտում ...

## ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Պողպատակուա լուր շարքերով իջնում ենք մեր լեռներից, Նիզակակիր, վահանավոր, սուրն է ճոճվում գոտու կապից, Մեր հետևկից, աղեղն ձեռքին, նետաձկներն քայլում են լուր, Նրանք, հայացքն հառած հեռուն, իրենց հունձն են տեսնում հեռում:

Հայրենիքին բույրն է այստեղ, իմ հետևում տունն հայրական, Փոքրիկներս՝ ամենօրյա ուրախ, զվարթ խաղով տարված, Կին է այսօր անշափ գունատ՝ հայր, ամուսին՝ մարտ ուղարկած, Սորս լարված հայացքի մեջ՝ Երկինք ուղղված հավերժ խնդրանք:

Կմունենան գլուխը մեր աղադակող պիղծ թշնամուն, Որը, կարծես հսկա մի ոհմ, զ'մեզ է վազում արյունաբրու, Ու այդ պահին կ'որոտա՛ ահեղ կանչը մեր մարտական, Բախում, հարված, վահանի զարկ ... անմահություն

ու Հաղթանակ:

Հաղթության աղի, արևախառն քրտինք ...  
Ձեռքեր՝ շաղախված արյունոտ հողով ...  
Շնչահեղձ կրծքում կիսաձայն մի կանչ  
Թշնամին պարտված, ոտքին տակ ընկած:

Վիրափոր մարդկանց հառաջ ու տերոց,  
Երբերին անեծք արյունոտ աստծուն ...  
Ցնծությունը կորավ, մնաց միայն ցավ,  
Պատերազմը ծանր անեծք է մարդուն:

Թրծված եմ մարտում. սթափվեցի արագ,  
Այրված ցուղերը հիշեցի հովտում,  
Սաղկած այգիներն՝ դիերով լցված,  
Ու սուրս պատժեց անգութ թշնամուն:

... Օ, մարդ, ինչ ու ես գազան:

Արա Գևորգյան  
թ. Աշոտարակ  
30.12.2006



## Նախարան

ՀԻՆ ԱՇԽԱՐՁԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՌՈՏ ԱԿԱՐԿ

Պատերազմը – քաղաքականության շարունակություն  
է այլ՝ բռնի միջոցներով:

Կարլ ֆոն Կլաուզեից, 1827 թ. [129]

Ռազմա-պատմական գիտությունը մի շարք գիտակարգեր  
ներառող համակարգ է, որոնցից կարևորագույններն են. ռազ-  
մական արվեստի պատմությունը, պատերազմների պատմու-  
թյունը, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգաց-  
ման պատմությունը, զինված ուժերի կառուցման պատմությու-  
նը, առանձին զորամասերի և զորավարների պատմությունը  
[280]:

Ռազմական պատմության յուրահատուկ բնագավառներ  
են. ռազմական պատմագրությունը, ռազմական հնագիտու-  
թյունը, ռազմական վիճակագրությունը և ռազմական աղբյու-  
րագիտությունը:

Սակայն ռազմական պատմության առանցքը կազմում են  
պատերազմների պատմությունը և ռազմական արվեստի  
պատմությունը [83, 100, 137, 199, 262, 283, 285]:

Հին աշխարհի պատերազմները հիմնականում միջեղայ-  
ին, կամ միջպետական պատերազմներ էին, որոնց ժամանակ  
զինված պայքար էր ծավալվում ցամաքում, երեւմ՝ ծովում:  
Նրանք ներառում էին ռազմական արշավներ, առանձին ճակա-  
տամարտեր, քաղաքների ու ամրոցների պաշարումներ և զրոհ-  
ներ, որոնք իրականացվում էին հավաքագրված և մշտական  
բանակներով:

Զինված ուժերը կազմված էին բանակից և նավատորմից:  
Բանակը հիմնականում բաղկացած էր երկու զորատեսակից՝  
հետևակից և հեծելազորից, որոնք բաժանվում էին թերեւ- և  
ծանրազենների: Ա. թ. ա. III հազարամյակից մինչև մ. թ. ա. I  
դարի կեսը, որոշ ճակատամարտերում որպես առանձին զորա-  
տեսակ օգտագործվում էին մարտակառքերի ստորաբաժ-  
նումներ: Օժանդակ զորամասերի մեջ ներառված էին ինչպես

սակրավորների, այնպես էլ պաշարողական և հեռահար տեխնիկայով զինված հատուկ ստորաբաժնումներ [224, 232]:

Սպառավիճությունը բաղկացած էր սառը գենքից՝ նետ ու աղեղից, տեղերից, նիզակներից, պարսատիկներից, բրերից, սրերից, սոսերներից, սակրերից, մարտակառքերից, նետող և բանող մեքենաներից, պաշարողական աշուարավներից:

Մարմնի պաշտպանության համար օգտագործում էին սաղավարներ, լանջապանակներ ու այլ տեսակի տարբեր պաշտպանական զրահներ:

Բանակները ունեին կազմակերպման տարբեր ձևեր և հատուկ մարտավարություն: Օրինակ՝ Հին Եգիպտոսի բանակները կազմակրված էին ջոկատներից, գնդերից, զորաբանակներից (կորպուս), Հին Հունաստանի բանակները՝ ջոկատներից, լոխերից, մորաներից, փաղանգներից, Հին Հոռոմները՝ կենուորիաներից, մանիպուլներից, ալաներից, կոհորտներից և լեգեոններից, Հին Իրանի կամ Հայաստանի բանակները՝ ջոկերից, փաշտերից, գնդերից, զորաբանակներից:

Խոշոր պատերազմները տևում էին տարիներ, հազվաբեր՝ տասնյակ տարիներ և երբեմ ուղեկցվում էին հասարակության ուժերի ծայրահեռ լարումով: Երբեմ պատերազմները ընդունում էին ծայրահեռ կատաղի բնույթ, որի հետևանքով առաջանում էին անասելի մարդկային տանջանքներ՝ մարդկանց հսկայական զանգվածների ստրկացում ու ոչնչացում և վիթխարի նյութական կորուստներ:

Հին աշխարհը տվել էր ռազմական մտքի փայլուն ներկայացուցիչներ՝ Սուն Ցզի, Ու Ցզի, Քսենտֆոն, Էնեաս Տակտիկոս, Պոլիբիոս, Պոլիկսա, Հուլիոս Կեսար, Ֆրուստինոս և այլք, որոնց զաղափարները այժմ ուսումնասիրվում են ոչ միայն պատմաբանների կողմից [104, 119, 120, 128, 197]: Ժամանակակից աշխարհի ամենահեղինակավոր բարձրագույն ռազմական ուսումնական հաստատություններում նրանց աշխատությունները օգտագործվում են ապագա սպաների տեսական և գործնական զիտելիքները կատարելագործելու համար [128, 138, 148, 263]:

XIX-XX դդ. Հին աշխարհի ռազմական պատմության ուսումնասիրության մեջ բեկում առաջացավ. այն հիմնականում դրվեց զիտական հիմքերի վրա: Այս հարցում հատկապես նշանակալից էր գերմանացիներ Կարլ ֆոն Կլաուզիցի և Հանս

Նելբրյուկի, իսկ տիգրանյան ժամանակաշրջանի ուսումնասիրության համար՝ Կուրտ Էրիարտի դերը [11, 100, 101, 129]: Կարևոր էր նաև ոռւս զիտնականներ Ավելսանդր Սվեշինի և Եվգենի Ռազինի մենագրությունների դերը: Այս անունների շարքը կարելի է զգալիորեն ընդլայնել գերմանացի, ոռւս, անգլո-և ֆրանսալեզու մի շարք հեղինակավոր զիտնականների փայլուն ուսումնասիրություններով [74, 76, 85, 87-89, 98, 99, 102, 105-108, 114, 131, 137, 145, 152, 189, 206, 211, 213, 242, 248, 265, 270, 272, 278]:

Սույն հետազոտության ժամանակ մեզ անհասանելի էին չին աշխարհի ռազմական պատմությանը նվիրված արտասահմանում հրատարակած մեծաքանակ մենագրությունները և տարբեր զիտական պարբերականներում տպագրված հոդվածներում շարադրված հսկայածավալ փաստագրական և վերլուծական նյութերը: Այս բնագավառում արդի զիտության նվաճումների մասին մասամբ կարելի է տեղեկություն ստանալ համացանցում տեղադրված կայքերից [65, 77, 99, 104, 108, 134, 143, 254, 266, 267, 268], սակայն դա մեզ հետաքրքրող բնագավառի համար տեղեկատվության սահմանափակ աղբյուր է:

Արդի ռազմապատմական զիտությունը բռնել է սրընթաց զարգացման ուղի: Պատերազմների ու ռազմական արվեստի պատմության բնագավառում հայթահարված են բազմաթիվ միամիտ և կողմնակալ տեսակետներ: Դրա հետ մեկտեղ, միևնույն այժմ, արդի մասնագիտական գրականության մեջ համառորեն կրկնվում են մի շարք հնացած, չիմենափրկված և փաստագրությական պատմությունների ռազմական գործիքների և իրադրածությունների վերաբերյալ: Այդպիսի պատմագիտական զնահատականների «զնիերի» թվին է պատկանում նաև Տիգրան Մեծի ռազմաքաղաքական գործունեության արդի գնահատականը:

Հայաստանում ռազմական պատմությանը նվիրված աշխատանքները սակավարի են: Պետք է նշել Ա. Գարազաշյանի, Հ. Աստուրյանի, Ն. Աղոնցի, Հ. Մանանյանի, Ս. Կրկյաշյանի, Գ. Բուտնազյանի, Բ. Հարությունյանի, Ս. Սարգսյանի, Ռ.

Մանասերյանի, Հ. Հակոբյանի, Ա. Մովսիսյանի, Ա. Մարտիկյանի և մի շարք այլ հետազոտողների ավանդը ուզմական պատմության որոշ հարցերի լուսաբանման հարցում [1, 5, 16, 19, 20, 21, 25, 29, 30-35, 37, 38, 45, 81]: Սակայն, ուզմական պատմության բնագավառում, Հին Հայաստանին նվիրված ծանրակշիռ ուզմագիտական աշխատություն դեռ ստեղծված չէ: Սարգիս Սարգսյանի վերահիշյալ գիրքը, լինելով առաջին մասնագիտական մենագրությունը, ակնարկային բնույթի և ակնհայտորեն հետագել է տիգրանյան ժամանակաշրջանի դեպքերի շարադրման և մեկնարանման հարցերում: Չենքերի և մենամարտության մասին կարևոր տեղեկություններ են պարունակում Կարյեն Աթոյանի մենագրությունները [2, 3]:

Ուզմական հետագիտությունը մեզ մոտ համեմատաբար ավելի հարուստ է, օրինակ՝ Ա. Եսայանի հանրահայտ մենագրությունները [110-112], Գ. Տիրացյանի [49], Բ. Առաքելյանի [61 - 63], Ժ. Խաչատրյանի [13], Հ. Հակոբյանի [22], և Ֆ. Տեր-Մարտիրոսյի [227 - 229], հետազոտությունները, սակայն մեզ հետարքրորդ ժամանակաշրջանը այնքան էլ ներկայացված չէ, որքան ցանկալի էր:

Ուզմական պատմության առարկան մեծ դեր է կատարում ցանկացած երկրի սպայական կրթական համակարգում և տվյալ երկրում ստեղծում է ուզմա-պատմական հարցերով հետաքրքրվող հասարակության որոշակի խավ, որի առկայությունը ևս այդ երկրի պաշտպանողականության բարձր մակարդակի ապահովման գրավականներից մեկն է: Հայաստանում, աներածեցարար, պետք է ստեղծենք այս կարգի գիտական և գիտահանրամատչելի գրականություն՝ գուգահեռ ձևավորելով այս հարցերով հետաքրքրվող հասարակություն:

Տիգրան Մեծի զահակալության տարիները, Հին Հայաստանի ուզմական պատմության ուսումնասիրության համար ամենահինֆորմատիվ ժամանակաշրջաններից մեկն է: Կատարար կարող ենք պնդել, որ մ.թ.ա. VI – մ.թ. I դդ. ժամանակահատվածում անտիկ գրականության մեջ չկա հայկական ուզմական գործին վերաբերող ավելի մանրամասն նկարագրություն: Ուստի տրամաբանական է Հին Հայաստանի ուզմական

գործի ուսումնասիրությունը սկսել հենց տիգրանյան ժամանակաշրջանի պատերազմներից:

Հայաստանյան և, ընդհանրապես, հայկական պատմական գիտությունը հիմնականում փաստագրական է: Չափազանց քիչ են հայտնվում մեզ մոտ այն հետազոտությունները, որոնք մենք կարող ենք վերագրել վերլուծական պատմության ժանրին: Խորիրդային ժամանակաշրջանի գաղափարական կապանքները արդեն ավելի քան երկու տասնամյակ (1988 թ.-ից արդեն մտածվում և գրվում էր, ինչպես որ կուզես) չեն արգելակում մեր միտքը, սակայն անսպասելիորեն երկարատև տևեցած ժամանակաշրջանից ժառանգված մտածելակերպի իներցիան: Այդ իներցիայից դուրս ստեղծված աշխատանքների մեջ էլ հաճախ առկա էր հուսահատության հասցեող մասնագիտական որակի անկում:

Այս գրքում փորձ է կատարվում կիրառել արդի ուզմական մտածելակերպ՝ տիգրանյան Հայաստանի ուզմաբաղարական պատմությունը վերականգնելու համար: Հին աշխարհի ուզմական պատմության դրվագները վերականգնելու այդպիսի փորձերը նշանակալից և ընդունված են արդի ուզմական պատմագրությունում [93, 94, 123 - 125, 151, 215, 216, 245, 277]:

Հասարակության մեջ Հին աշխարհի պատմության հիմնախնդիրների հանդեպ հետաքրքրությունը չի մարում արդեն մի քանի դար: Քաղաքակրթության արշալույսը ունեցավ շափականց հարուստ քաղաքական ու ուզմաբաղարական պատմություն և ձևավորեց մարդկային գործունեության այս ոլորտի հիմնական հասկացությունները և չափանիշները: Հին դարերի փորձը անզնահատելի կյութ է հասկանալու համար ևս արդի մարդուն և արդի հասարակության եռթյունը: Դժբախտաբար, անցումը Հին դարերից դեպի Միջնադար, Նոր դարեր և նոյնիսկ Նորագոյն ժամանակները հականորեն չփոխեց մարդկանց՝ պատերազմներ հրահրելու ու վարելու դաժան եռթյունը, ինչպես ևս ան շուտակորեց, չառաջացրեց գոնե հեռավոր ապագայում անպատերազմ հասարակության առաջանալու հույսի մի շող:

Ուստի հին հոռմեացի Վեգետիոսի ասույթը՝ *Si vis pacem, para bellum* (Եթե ցանկանում ես խաղաղություն, պատրաստվիր պատերազմին) այժմեական է ցայսօր, ինչպես միշտ [70]:

Դատմուրյան դասերը միանշանակ ուսուցանում են, որ այն ազգը, պետությունը, հասարակությունը ընդհանրապես, որը ընդունակ չէ պաշտպանել իրեն, դատապարտված է ոչխացման: Բնության նմանատիպ համբահայտ օրենքի ինչ պարտադիր՝ իմակերատիվ տարածում է դա սոցիոլոգիական ոլորտի վրա:

Այդպիսով, ռազմական արվեստի պատմության ուսումնասիրությունը ոչ թե շրեղություն, այլ անհրաժեշտություն է (որում մենք՝ հայերս անքույլատրելի թերացել ենք): Սուս Ցզին (Չինաստան, մ.թ.ա. V դ.) ասում էր. «Պատերազմը՝ մեծ գործ է պետության համար, դա կամքի և մահվան եխմքն է, դա գոյատևման և կործանման ճանապարհն է» [138, 234]:

Հին Հայաստանի պատմության խեղաքուրումը հասել է անթույլատրելի չափերի, ընդ որում անտեսվում և խեղաքուրում են հատկապես մեր ռազմաքաղաքական և ռազմական նվաճումները [73, 144, 252]:

Հայաստանի ռազմական պատմությունը Հայաստանի ընդհանուր պատմության բաղկացուցիչ մասն է, մյուս կողմից, նաև անբաժանելի մասն է կազմում համաշխարհային ռազմական պատմության: Այն մշտական ուշադրության կարիք ունի հասարակության և պետության կողմից:

Պատունը իր «Թիմեռո» երկխոսության մեջ եզիպտական քրիստոնեական առաջնորդ արտահայտեց այն միտքը, որ այն ժողովուրդը, որը չփափ իր անցյալը, դատապարտված է հայերծ մնալու մանկական հասակում [230]: Այն քանի ըստ շի ուսումնասիրում ու հիշում իր անցյալը, դատապարտված է ամեն անզամ վերականգնելու իր ռազմական ավանդույթները, կամ հենվելու մեկ ուրիշ ժողովորդի ռազմական ավանդույթների վրա: Մենք ունեցել ենք հազարամյա ռազմական ավանդույթներ, որոնց ուսումնասիրությունը և վերականգնումը մեծապես կնպաստի մեր երկրի պաշտպանական համակարգի հոգեբանական բաղադրիչի հզրացմանը:

Սակայն, առանձ համաշխարհայինի հետ համարելու, հետաքոր չէ լիարժեք ճանաչել սեփական ժողովորդի կյանքի ցանկացած երևույթը: Վշադիմիր Տոմսինովը գրում էր. «Կարծիքը այն մասին, որ սեփական երկրի պատմությունը և սեփական ժողովորդի մշակույթը ճանաչելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել անմիջապես միայն դրանք՝ ներկայումս, դժբախտա-

բար, բավականին տարածված մեծ մոլորություն է: Իրականում, ամեն ինչ իսկականից ընկալվում է միայն համեմատության մեջ: Միայն ուրիշ ժողովուրդների պատմության և մշակույթի պրիզմայով սեփական երկրի պատմությունը և մշակույթը դիտարկող տեսակետը թույլ է տալիս տեսնել և հասկանալ նրա մեջ ամենակարևորը՝ նրա դերը ու նշանակությունը համաշխարհային պատմության մեջ» [230]:

Մեր հետազոտության ընթացքում բազմիցս հանդիպել ենք տեսակետների, որոնք բավարար հիմնավորված չեն եղել կամ արտացոլել են ավելի շատ տվյալ ժամանակի և տարածաշրջանի պատմաբանների նախապաշարմունքները, քան կուր գիտական վերլուծության երակացությունները: Այդ դեպքում մենք հիմնվել ենք լրող բովինզբրուկի առաջարկած այն միակ դեղատումսի վրա, որը կարող էր դրաս բերել փակուդի մտած կամ ինքնախարեւությանը զոհ գնացած պատմագիտական տեսությունները (որոնք, հաճախ, իրականում ոչ այնքան տեսություններ են, որքան թույլ հիմնավորված վարկածներ): Վերադասնալ ակունքներին և մեկ անգամ ևս ուսումնասիրել դրանք:

«Կարձ ասած, միլորդ, այս բոլոր գիտական համակարգերը ոչ այլ ինչ են, քան կախարդված ամրոցներ. նրանք թվում են ինչ-որ մի իրականություն, իսկ իրականում միայն առերևության են և այդ ամրոցների նման անհետ կորչում են, հենց հանվում է հմայախոսըր:

Կախարդանքը քանդելու համար անհրաժեշտ է վերադասնալ ակունքին: Այս արտահայտությունը կարող է տարօրինակ թվական բայց այստեղ առկա է ուրույն իմաստ:

Մենք պետք ենք մանրակրկիտ և անկողմնակալ ուսումնասիրներ հիմունքները և, եթե հայտնաբերենք, որ նրանք թիվ հավանական կամ, ընդհանրապես, անհավանական են, անհեթերություն կիննի սպասել այս հիմքի վրա կերտած կառույցի մեջ եղածից ավելի լավը» [80]:

Նախարանի վերջում, ցույց տալու համար, թե ինչ ուսմանքուրդուններ մեր պատմության հանճեա՝ կոստի և կողմնակալ սխաններ, կարող են թույլ տրվել հայկական ռազմական և բաղադրական նվաճումների վերաբերյալ, բերենք մի քանի կարծիք արդի ուսուական պատմագրության եջերից:

Բելիկովը իր «Կրասսոսի պարթեական արշավանքը.

ոազմա-տեխնիկական տեսակետ» հոդվածում [71] գրում է.

1. ... հոռմեացիները առաջին անգամ միայն մ.թ.ա. 53 թ. Խառանում հանդիպեցին պարբեսերի կողմից կիրառված արևելյան հեծելազորային մարտավարությանը: Բելիկովը մ.թ.ա. 68 թ. Արածանիի ճակատամարտի ընթացքի և մարտավարության մասին կարող էր տեղեկանալ ոչ միայն Պլուտարքոսի և Դիոն Կասիոսի Երկերից, այլ նաև Կուրտ Էրեարտի գերմաներեն աշխատությունից և, ամենակարևորը, Հակոբ Սահանյանի «Տիգրան Երկրորդը և Հռոմը» աշխատության 1943 թ. ուստերեն հրատարակությունից:

2. ... ցիտում է Զ. Վելեսին, որը համարում էր, որ արշավանքը սխալների մի հաջորդություն էր, որոնք դասակարգում էր ըստ կարևորության: Առաջին տեղում «Ճայաստանի հետ դաշնակցությունից հրաժարումն էր, որը Կրասոսին կարող էր տալ թեթևագեն զինվորներ»: Ակսում ես կասկածել, որ վերոհիշյալ հեղինակը առնվազն ուշադիր չի կարդացել Պլուտարքոսին: Ինչ ու թեթևագեն զինվորներ: Արտավազդ Բ-ի առաջարկը արշավել Հայաստանով և 16.000 հեծելազորը, որի մեջ էին, անկասկած, պարբեսերին մի քանի անգամ հաղթած կատաֆրակտուները, և 30.000 հետևակը՝ յոկ թեթևագեններ են: Չեմ կարծում, որ աս հայաժխոտ մի միտում է, պարզապես արդի պատմաբանների մի մասը իրական պատմական հետազոտությունը երբեմն փոխարինում է նախկինից ժառանգած հարյու ու սիրունիկ դիցարանական պատմվածքների վերաշրադրմամբ՝ երկարացնելով ին պատմաբանական անհեթթությունների և թյուրիմացությունների կյանքը:

3. ... Բելիկովը ամենայն անկեղծությամբ հավատում է, որ եթե չիններ Կրասոսի արկածախնդրային արշավանքը, ասպա Հռոմը և Պարթևաստանը անպայման կապահպանեին բարի դրացիական հարաբերությունները ապագայում: Նա ճիշտ է նշում, որ յավ հարաբերությունները Հռոմի հետ անհրաժեշտ էին Հրահատ Գ-ն Հայաստանի հզորությունը թուլացնելու համար, սակայն հաշվի չի առնում, որ 66 թ.-ից սկսած Հայաստանը արդեն Հռոմի հարկադրված դաշնակիցն էր, իսկ հոռմեական ծավալապաշտությունը դեպի արևելք սկսվում էր դեռ Լուկուլլոսի 68 թ. անիրազորելի երազանքներից՝ նվաճել ողջ Իրանը և կրկնել Ալեքսանդր Սակերնացու ռազմական հաջորդությունները: Ակնհայտ միամստություն կամ թերամտություն է համարել, որ

երկու աշխարհածավալ տերությունների՝ Հռոմի և Պարթևաստանի հարաբերությունները անդառնալիորեն փշացրեց ազահ Կրասոսը. այդ հարաբերությունները լարված, իսկ հետո վատ էին ի սկզբանե: Տերություններից ոչ առաջինը, ոչ էլ երկրորդը հակված չէին հանդուրժել իր սահմանին այլ աշխարհակալ ուժ: Կատաղի պայքարը անխոսափելի էր, և կայացավ: Այն փաստը, որ Պարթևաստանը՝ որպես պակաս գորեկ ուժ ավելի զգուշավոր էր, հարցի եռթյունը չի փոխում: Հետազոյում՝ Սասականների օրոք, ուժեղացած Իրանը կնախաձեռնի պատերազմների մեծ մասը և դեռ կիոշուի Հռոմեական կայսրության ողջ Արևելքը:

4. ... Քարոյական տեսակետը: Ի՞նչ հուզիչ տեսարան է նկարագրում Բելիկովը: Բազմաթիվ երկներ և պետություններ կործանած և կողոպտած Հռոմը, որի տնտեսության պարտադիր բաղադրիչներից էր ռազմավարը, «ժողովրդական տրիբուն Անտեյի միջոցով ցանկանում էր կասեցնել արշավանքը անմեղ մարդկանց դեմ»: Ի՞նչ հուզիչ է, բայց անհամոզիչ: Իրականությունը նրանում էր, որ խայտառակ պարտություն կրած հոռմեական պետությունը, իր խարիսխած հասարակական վարկը վերականգնելու համար ստեղծել էր այս անհեթթեր կեղծիքը: Ֆաշիստական պրոպագանիստայի դեկավար Հեթելը ուսուցանում էր, որ ինչքան մեծ լինի սուսու, այնքան շուտ դրան կհավատան: Ճին հոռմեացիների բաղարական գործիչներին դա հաշորվել էր ոչ միայն իր ժողովրդի, այլ նաև արդի պատմաբան Բելիկովի հանդեա:

5. ... Բելիկովը նշում է, որ պարթևները այնքան թույլ և հասարակ չէին, ինչպես փոքրասիացիները: Այդ ի՞նչ տվյալների հիման վրա է թույլ համարում փոքրասիացիներին մեր հեղինակը: Միհրդատ Պոնտացու և Տիգրան Մեծի Հռոմի կործանմանը ուղղված կատաղի պատերազմներից ելնելով: Թէ Բուրանիայի կամ Գալարիայի ոչ մեծ, բայց բավականին ուժեղ պետությունների ռազմական պատմությունը ուսումնասիրելուց հետո: «Թույլ» փոքրասիացիները, հոռմեական դաշնակցական բանակների կազմում այնքան հաճախ էին փրկել նոյն հոռմեական գենքի պատիկը, որ առնվազն անարդար կլիներ այդպիսի գնահատական ստանալ արդի պատմաբանի կողմից:

6. ... Հռոմեացիների վատ հետախուզությունը: Մի թէ չեր կարելի ասել, որ պարթևների յավ հակահետախուզությունը

ձախողեց հռոմեական լավ հետախուզության փորձերը՝ ստանալ քիչ թէ շատ արժեքավոր տեղեկություններ հակառակորդի մասին։ Դա ամենակին է նույնը չէ։

7. ... Բելիկովը համարում է, որ հոդագործական Արևոտքը մարտնչեց բռչվոր Արևելքի հետ նրա տարածքում և պարտվեց։ Հնչում է շատ գեղեցիկ, սակայն նման ինսինուացիայի պրիմիտիվիզմը ակնհայտ է։ Երկրագործության հայրենիքը Արևոտքում չէ։ Իրանի բնութագրումը՝ որպես բռչվորական մի երկիր առնվազն ճիշտ չէ։

8. ... Բելիկովին նույնիսկ կարելի է գրել, որ նետն ու աղեղը երբեք չէին եղել ավանդական հռոմեական գենք, որովհետո հակասում էին հռոմեական պատկերացումներին ազնիվ մենամարտի (և մարտի) մասին։ Միջնադարյան «ասպետական» մոտեցում հնադար ունի. Կեցցե՞ս, եղջինա՞կ։ Բայց, անտեսելով մեր հեղինակի կարծիքը, ին հռոմեացիները «արհամարելով պատվի հարցերը», կասեի, «անամոթաբար» օգտագործում էին որոշ ճակատամարտերի ժամանակ ոչ միայն նետաձգությունը, տեղահարումը և պարսամարտը, այլ նաև դաշտային կատապուլտները, բալիստները և օնագրները։

Անշուշտ, Բելիկովի հոդվածում կան նաև բազմաթիվ հետաքրքիր մտահղացումներ, և հեղինակը միանգամայն կոմպետենտ մասնագետ է։ Դա է պատճառը, որ քննարկեցինք հենց այս հոդվածը՝ ցոյց տալու համար՝ որքանով Հայաստանի մասին պատմական տեղեկությունները դուրս են մնացել նաև բարեխիղդ հետագոտողների տեսադաշտից, և որքանով դեռ ուժի է միակողմանիությունը Առաջավոր Ասիայի պատմության հարցերի վերաբերյալ։

Բազմաթիվ «միամիտ» և չիիմնավորված մտքեր Բելիկովը հայտնել է նաև իր մեկ ուրիշ հոդվածում. «Ըսում և Պարթևստան. Փոխադարձ մերժման ակունքներ» [72]։

2003 թ. Ստավրոսովում՝ Բելիկովը հրատարակել էր մի գիրք, որը որոշակիորեն առնչվում է մեր հետազոտության թեմայի հետ, սակայն այն առ այսօր մեզ անհասանելի է (Беликов А.П. Рим и эллинизм: проблемы политических, экономических и культурных контактов. Ставрополь, 2003, 402 с.): Գրախոսվող փոքր հոդվածում կատարած սխալների թիվը մեզ ենթայիլ է տալիս, որ իր հեղինակած գրքում նույնպես հանդիպելու ենք

տարբեր բացթողումների։ Կարևոր է տալ այսպիսի գրքերի հանգամանալից գրախոսականը, որը կարող է դրական անբարդառնալ հեղինակի հետագա հրապարակումների վրա։

Երկրորդ օրինակը վերաբերվում է 1995 թ. Ռուսաստանում Նիժնի Նովգորոդում տեղի պետական համալսարանի կողմից հրատարակած Եվգենի Սոլիի «Պոնտոսի տիրակալը. Սենագորություն» 144 էջանոց գրքին [169]: Մեզ հասանելի էր գրքի էլեկտրոնային տարբերակը՝ տեղադրված [www.militera.lib.ru](http://www.militera.lib.ru) կայքում։ Գիրքը հախատեսված է պատմաբանների, բուհերի պատմական ֆակուլտետների ուսանողների, ինչ աշխարհի պատմության սիրահարների, դպրոցների և վարժարանների ուսուցիչների համար։

Անտարակոյս, ցանկացած գրքում անխուսափելի են որոշ անձնություններ և վրիշպակներ և մենք մուադիր չենք դրանք այստեղ մանրամասնորեն քննարկել։ Կարող ենք միայն ասել, որ Տիգրանի հետ կապված բոլոր իրադարձությունների շարադրումը այս գրքում վկայում է, որ Հակոբ Սանահյանի՝ 1943 թ. ուստերեն վերահրատարակած «Տիգրան Երկրորդը և Հռոմը» գիրքը [157], ցատ ուսական արդի պատմագիտության ավանդության, հեղինակը ևս չի նկատում։

Այժմ խոսենք գրքում տեղ գտած զավեշտի մասին։ Սոլիլ իր գրքի վերջաբանում գրում է.

«Միհրդատի՛, (խոսքը Պոնտոսի արքայի մասին է – իմ մեջբերումը), որպես կառավարչի գործունեության մյուս գևահատականը դարձավ իր կողմից “արքայից արքա” տիտղոսի ընդունումը, որը այդ ժամանակ կրում էր միայն Մերձավոր Արևելքի ամենավաստակավոր կառավարիչը։ Ճիշտ է, այդ տիտղոսը հռոմեացիների դեմ առաջին պատերազմում Միհրդատի կրած պարտությունից հետո անցավ Տիգրան Բ-ին։ Բայց մենք արդեն տեսել ենք՝ որքանով մեծ էր տարբերությունը այս երկու միապետների միջև, որ զահատենք հաջորդին նախորդից բարձր։ Նույնը կարելի է ասել այս տիտղոսը կրող Միհրդատի ուրիշ մոտակա նախորդների և հետնորդների մասին։ Ըստում, չի կարելի մոռանալ, որ Տիգրան Բ-ն և պարթևական թագավորները առաջին հերթին ի հայտ էին զայիս որպես իրենց ժողովուրդների կառավարիչներ, իսկ Պոնտոսի թագա-

վորը ի սկզբանե բազմազգ պետության կառավարիչ էր, ինչը, անշուշտ, դժվարացնում էր նրա ֆունկցիաները որպես կառավարիչ Պետությունը զիսավորողի գործունեության կարևորագույն չափանիշն է իր ստեղծած տերության ամրությունը: Մենք արդեն նշել ենք, որ Միհրդատի ստեղծած համապնտական պետությունը բավականին կենտրոնական էր և՝ տնտեսական, և՝ ռազմական առումով: Իգուր չէ, որ համապնտական միավորման զարդարը շարունակում էր ապրել և Միհրդատի մահվանից հետո:

Մենք զիտենք՝ հեղինակը պատմաբան է, թե զրոյ, սակայն հեղինակավոր հրատարակչությունում տպված աշխատությունը մտածել է տալիս, որ «զիտնական» է: Հասկանալի չէ միայն՝ այս բացարձակ անհերեքությունը տկարամության, թե միտումավորության արդյունը է:

Ինչպ էս կարելի է շիմանալ, որ արքայից արքա տիտղոսը Տիգրան Բ-ին անցել է 86-84 թթ. հայ-պարթևական պատերազմում տարած հաղթանակից հետո, որպես պարտված պարթևներին պարտադրված պայմաններից մեկը: Պարթևստանում առաջին անգամ արքայից արքա տիտղոսը կրող Միհրդատ Բ Մեծի մահվանից հետո նրա հետևող Օրորենք, այն հարկադրաբար զիշեց Տիգրանին՝ որպես Արևելի ամենաուժեղ տիրակալի: Դա կարելի է կարդալ ցանկացած թիշ թե շատ հայտնի՝ Հոռոմի պատմությանը նվիրված դասագրքում [170, 171, 290]:

«Կենոննակ» պոլտական պետությունը կործանվեց Հոռոմի կողմից, իսկ հայկական և պարթևական «անկենտանակ» պետությունները հարատնեցին: Հատկապես դժվար էր Հայաստանին, սակայն իր բազավորների հանճարը գրավականն էր պատմության անբարենպաստ պայմանների դեմ տարած հաղթանակից: Արտավազդ Բ և արժանիորեն էր կրում հօրից ժառանգած արքայից արքա տիտղոսը, և Միհրդատ Զ Եվպատոր Պոլտոսի արքան շատ բան կտար նախախնամությանը, որ ռազմաքաղաքական ընդունակությունների հետ մեկտեղ տիրապետեր նաև Տիգրանի և Արտավազդի բնավորության արտակարգ հավասարակշռվածության մի մասին:

Բոլոր գնահատականները այս գրքում տառապում են ծայրահեղ կողմանակալությամբ, Պլոտարքոսից (մոտ 46 – մոտ 123 թթ.) 1.900 տարի հետո Տիգրանին տրվում են ել ավելի ծայրահեղ և անարդարացի գնահատականներ: Եվ, եթե մենք մեծ հովանի ստեղծագործությունները ընթերցում ենք խորագույն հարգանքով և սիրով՝ քաջ գիտակցելով կենսագրական համեմատությունների ողջ դաստիարակչական և, անտարակույս, պատմագիտական նշանակությունը, ապա Մոլեի նման նորագոյն զրշակներին հարկադրված ենք տալ իրենց ստեղծածին համարժեք գնահատականը: Չպետք է հապաղի նաև որևէ ոռւսական գիտական պարբերականում հանգամանալիորեն շարադրված համապատասխան զրախոսականը:

1999 թ. հրատարակվել էր Սմիկովի հոդվածը Լուկիոս Լիկինիոս Լուկովոսի մասին, որտեղ փորձ էր կատարվում գնահատել հոռմեացի գորավարի գործունեությունը և նրա հանդեպ ձևավորված հասարակական կարծիքը [218]: Հեղինակը օգտագործած զրականության ցանկում նշում է նաև Հակոբ Մանանդյանի «Տիգրան Մեծը և Հոռոմը ...» մենագրության 1943 թ. ոռւսական հրատարակությունը [157], որից հետո անվերապահորեն կրկնում է XIX դարի պատմաբանների անհիմն պնդումները այն մասին, որ հոգևած և ցրտահարված հոռմեական լեզեներները խեղճ Լուկովոսին ստիպեցին վերադառնալ Պոլտոս: Լուկովոսի հարկադրված նահանջի հիմնավորումը Մանանդյանի մոտ կատարված է այնպես համոզից, որ ճիշտ եզրականզմանը հանգելու համար ավելին զրել այլևս անհրաժեշտ չէր: Մանանդյանի կողմից Դիռն Կասսիոսի երկի մեջքերված հատվածի ընթերցումը արդեն բավարար էր հասկանալու համար՝ ինչ դեռ կատարեց Արածանիի ճակատամարտը հոռմեական ձախողումների և նահանջի մեջ: Սակայն Սմիկովը անտեսում է վերը նշվածը: Ավելին՝ նա մեջքերում է կատարում Կիկերոնի «Մանիկոսի օրենքի մասին» ճառից՝ մինչ այդ նշելով, որ Լուկովոսը Կիկերոնի ընկերն էր, և նա խուսափում էր նրա մասին բացասական կարծիք հայտնելուց [218]: Կիկերոնի՝ այս դեպքերի ժամանակակցի ստեղծագործություններում պահպանվել են չափազանց կարևոր գնահատականներ, սակայն Սմիկովը այս ամենը նույնպես «չի նկատում»: Նրա

համար պատմության ուսումնասիրությունը ճշմարտությանը հասնելու միջոց չէ: Չափազանց տհած է «գիտնականի» կողմնակալությունը ավելի քան երկու հազար տարի առաջ տեղի ունեցած դեպքերի հանդեպ: Երբ դա տեղի է ունենալ այն գիտնականների կողմից, որոնք նկարագրվող դեպքերին մասնակցած պատմական ժողովուրդների արդի ներկայացուցիչներն են՝ պարսիկներ, հայեր, հոյներ, երեաներ և այլն, մենք հասկանում ենք նշված բնագավառում այս կամ այն աստիճանի մարդկային բովության՝ կողմնակալության դրսերման հնարավորությունը, սակայն որպես գիտնական այս երևոյթը վճռականորեն դատապարտում ենք:

Համացանցի ոռուսախոս երեական պատմական կայքերից մեկի ֆորումում ծավալվող բանավեճը այնքան անսոլոր ընտրյան էր ենթարկում սեփական պատմության անցքերը, որ հիմքունքով ես լցում մասնակիցների ճշմարտությանը (նոյնիսկ հետազոտողի համար տհած) հասնելու ձգուսմին [277]: Յուրաքանչյուր իրեն հարգող գիտնական պետք է յուրացնի հենց այս աշխատանքային ոճը:

Ասյշեցնում է արդի արևմտյան և ոռու պատմաբանների անբարոյականությանը հասնող, երբեմն կանխամտածված արհամարհական կամ թշնամական վերաբերմունքը Հին Հոռոմի հակառակորդների հանդեպ: Դա չի վերաբերում միայն հարգանքի և սիրո «ինդուլգենցիա» ստացած մի քանի պատմական դեմքերին՝ Պիրրոս, Հաննիբալ, Միհրդատ Պոնտացի, Արմինիոս և այլն: Սրանք կոչված են ընդգծել Հոռոմի փառքը: Սակայն պատմությունը գիտություն է, որը պահանջում է մեզ հասած բազմաթիվ գրական և նյութական արժեքների հիման վրա վերստեղծել անցյալի հնարավոր հավաստի պատկերը:

2006 թ. Ս. Ռոդիոնովի հրատարակած Հին Հունաստանի և Հին Հոռոմի պատմության դասախոսությունների սեղմագրի մեջ, որը նախատեսված էր համալսարանների հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար, պնդուական պատերազմները, ըստ Եուրոյան, նկարագրված չեն [202]: Միակ տեղեկությունը այն մասին է, որ Սուլլան Միհրդատի դեմ իր հաղթական արևելյան պատերազմից հետո իշել է Խուալիա, որ գրավի Հոռոմը: Բանիմաց հեղինակի կողմից փայլուն ձևով կազմված այս դասագրում տեղ են գտել մանրամասն տեղեկություններ, որոնց մի մասը վստահարար, ավելի կարևոր չեր Հին Հոռոմի

պատմության սկսեակ ուսումնասիրողի համար, քան պոնտական պատերազմների սեղմ նկարագրությունը: Սակայն այստեղ ոչինչ չի ասվում Հոռոմ – Միհրդատյան (ըստ Եուրոյան Միհրդատ–Միգրանյան դաշինքի) կատաղի հակամարտության մասին, որի ելքից մ.թ.ա. Ի դ. առաջին կետում մեծապես կախված էր այն ժամանակավա թե՛ Հոռոմի, թե՛ ամբողջ օյկումենի հետագա ճակատագիրը [109]:

Եերված օրինակները պարտադրում են մեզ ավելի աշալցորեն վերաբերվել Հին Հայաստանի և հարակից տարածաշրջանների պատմությանը նվիրված բոլոր, այդ թվում և ուղմապատմարանական ուսումնասիրություններին:

Տիգրան Մեծի գործունեության քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակույթային, էրենողգերանական նշանակության ըմբռնման համար հայագիտությունը հսկայական անելիք ունի: Լինելով համաշխարհային պատմության խոշորագույն դեմքերից մեկը՝ որպես այդպիսին Տիգրան Բ Մեծ արքայից արքան, ըստ արժանվույնի չի գնահատվել նոյնիսկ սեփական ժողովրդի պատմաբանների կողմից: Բազմաթիվ ներբողները և հիմքունքային գեղումները գիտական աշխատանքային ոճ չեն կարող հանդիսանալ և պատմաբանների համար անհետարքի են [6]: Թվում էր, թե Ռուբեն Սանաերյանի աշխատություններում կատարված անհերքելի եզրակացությունները կարող էին Հայաստանում սկիզբ դնել Տիգրանյան ժամանակաշրջանի խորը, գիտական անկողմնակալ ուսումնասիրությանը, սակայն դրանք անտեսվում են մեր արդի պատմաբանների կողմից նոյնիսկ ժամանակակից դպրոցական դասագրքերում:

Եեր հետազոտությունների առարկան է Հին Հայաստանի ուղմական արվեստի զարգացումը և ռազմարադարական պատմությունը: Տիգրանյան ժամանակաշրջանի ամենամասն նկարագրված ռազմական դրվագը մ.թ.ա. 69-67 թթ. հայ-հոռմեական պատերազմն է: Այս պատերազմի ընթացքը լուսաբանել են բազմաթիվ անտիկ հետինակներ [17, 42, 51, 59, 60, 83, 167, 191 – 195, 238, 279], իսկ XIX դարից սկսած հետազոտել են մի շաբթ հայ և եվրոպական գիտնականներ [1, 5, 11, 18, 28, 29, 41, 45, 58, 66, 69, 146, 210, 220, 243, 273], որոնցից անլուսաբարային են երեքը, դա Կուրտ Էքհարդտի [11], Հակոբ

Մանաւոյանի [29] և Ռուբեն Մանասերյանի [30 - 35, 158 - 163] աշխատություններն են: Հենվելով նրանց վրա և հաշվի առնելով համաշխարհային հանրության չմարող հետաքրքրությունը Հին Հոռոմի պատմության այս ժամանակաշրջանի հանդեպ՝ անհրաժեշտ է պատշաճ հիմնավորել և ներկայացնել այդ պատմական անցքերի մեր տեսակետը, թարգմանել բազմաթիվ լեզուներով և տարածել համացանցում:

Տիգրանյան ժամանակաշրջանի ռազմական և ռազմաքաղաքական իրադարձությունների մեր վերլուծությունները մեծապես հիմնված են Ռուբեն Մանասերյանի պատմական կոնցեպցիայի վրա, ուստի ցանկալի եր, որ ընթերցողը ծանոթ լինի նրա կորողային «Տիգրան Մեծ» Հայաստանի պայքարը Հոռոմի և Պարթևաստանի դեմ. Ս.թ.ա. 94 - 64 թթ.» մենագրության առաջին, կամ երկրորդ, լրացված հրատարակություններին (Երևան, 1987, 2007 թթ.):

Նոյնական կարևոր է ընթերցողի համար ծանոթ լինել Հայկ Հակոբյանի Տիգրան Մեծին նվիրված աշխատություններին, որոնք շարադրված են մի փոքր այլ տեսանկյունով և հենց այդ պատճառով՝ խիստ արժեքավոր [19, 21, 22]:

Մի շաբթ հայ պատմաբաններ երբեմն անդրադառնում են Տիգրանի ժամանակաշրջանին և ներկայացնում արժեքավոր նոր զաղափարներ [7, 8, 9, 24, 27, 36, 40, 47, 56, 69, 165, 208]: Լայն հասարակայնության հետաքրքրությունը բավարարելու համար նկարահանվել է զիտահանրամատչելի փաստազրական ֆիլմ [48]:

Մեր կողմից ներկայացվող աշխատանքը գերծ չէ թերություններից: Առ այսօր լինելով Տիգրան Մեծի ռազմական գործունեության համայնքի վերլուծության զիտական առաջին փորձերից մեկը, նա ներկայացնում է տեսակետներ, որոնք կարող են անսպասելի լինել մեր ընթերցողների մեծ մասի համար: Ավելին, անկասկած կառաջարկվեն տիգրանյան ժամանակաշրջանի ռազմական պատմության այլ ընկալրումներ: Հեղինակը իր այս աշխատանքը դիտում է որպես սպասվող բանավեճի ծավալման համար անհրաժեշտ առաջին քայլ և երախտազիտությամբ կընդունի ընթերցողների բոլոր կարծիքները և հիմնավորված քննադատությունը:

• • •

Ծանուցում 1 (Որպես օրինակ, ներկայացվում են մի քանի մեզ անհասանելի հրապարակումներ):

1. Adcock Massachussetts, 1940.F.E. The Roman Art of War under the Republic. Cambridge/
2. Connolly P. Greece and Rome at War. London, 1981.
3. Couissin P. Les Armes Romaines. Paris, 1926.
4. Kromayer J., Veith G. Heerwesen und Kriegsführung der Griechen und Römer. München, 1928.
5. Majumdar R.B. The Military System in Ancient India. Calcutta, 1960.
6. Manaseryan, R.L. L'Arménie et le Proche-Orient hellénistique aux temps de Tigrane le Grand. – Arménie entre Orient et Occident, Bibliothèque nationale de France, Paris 1996, p.32-37.
7. Schneider R. Legion und Phalanx. Berlin, 1893.
8. Sekunda N.V. Army of Alexander the Great (Men-at-Arms Series 148). London, 1984. (համացնից միջոցով հասանելի է միայն մի գլուխը)
9. Беликов А.П. Рим и эллинизм: проблемы политических, экономических и культурных контактов. Ставрополь, 2003. 402 с.
10. Никоноров Б.П. Вооружение и военное дело в Парфии: Автореф. на соискание уч. степени канд. ист. наук. – Л., 1987.
11. Никоноров Б.П. Парфянские катафрактарии.



Նկար Ն1. Գառնիի ամրոցի պարիսպները

32

ՄԱՍ I

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ  
Մ. Թ. Ա. 535 – 69 թթ.

33

## Գլուխ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԼԱԿԸ ՄԻՒՉԵՎ ՏԻԳՐԱՆ Բ-Ի  
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ  
(մ.թ.ա. 535 – 95 թթ.)

Հայաստանի պատմության ժամանակագրությունը ներառում է հետևյալ ժամանակաշրջանները:

1. Նախապատմություն և հնագոյն պատմություն -քարեղար՝ պալեոլիթ, մեզոլիթ, նեոլիթ, պղնձեքարեղար, վաղ բրոնզեդար: Ներառում է Հայաստանում՝ Հայկական լեռնաշխարհում բնակվող մարդկային ցեղի պատմությունը հնագոյն ժամանակներից մինչև մ.թ.ա. III հազարամյակի սկիզբը: Հնագոյն պատմությունը կազմում է Հին աշխարհի՝ հնադարի պատմության բաղկացուցիչ (սկզբնական) մասը:

2. Հնադար – հայոց պատմությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբից մինչև մ.թ. IV դարի վերջը – V դարի սկիզբը՝ շուրջ 3.500 տարի:

3. Միջնադար – հայոց պատմությունը V դ. սկզբից մինչև XVIII դ. վերջը, գրեթե 1.400 տարի:

4. Նոր դարեր – հայոց պատմությունը 1801–1921 թթ.: 120 տարի: Նոր ժամանակների պատմությունը ներառում է իր մեջ նաև նորագոյն պատմությունը:

5. Նորագոյն պատմություն – 1921 թ. մինչև մեր ժամանակները (2009 թ.): 88 տարի:

Այդպիսով, Հայաստանի պատմությունը բաղկացած է հին, միջնադարյան և նոր պատմություններով:

Հասարակության զարգացման առումով, Հայաստանում մենք ունեցել ենք մարդկային ցեղի զարգացման բոլոր երեք փուլերը:

1. Վայրենություն – քարեղար՝ պալեոլիթ՝ ավելի, քան 800.000 տարի:

2. Բարբարություն – մեզոլիթ, նեոլիթ, պղնձեքարեղար, վաղ բրոնզեդար՝ մոտ 10.000 տարի (այլ տեսակետներով՝ մոտ 40.000 տարի):

3. Քաղաքակրթություն – մ.թ.ա. III հազարամյակի սկզբից

մինչև մեր ժամանակները՝ մոտ 5.000 տարի:

Հայաստանում, ոազմական գործի ակունքները կորչում են քարեղարում՝ մեզոլիթում, երբ երբեմն բախտամներ էին առաջանում տարբեր մարդկային խմբերի, հետո ցեղերի միջև: Արդեն նոր քարեղարում՝ նեզոլիթում, այդ բախտամների ժամանակ օգտագործվում էին հատուկ պատերազմական հնարքներ, որոնք ընորոշ չէին որսին: Դա հատուկ գիտելիք էր՝ ստացված մարդկանց դեմ վարվող պայքարում, այսինքն ոազմական արվեստի զարգացման վաղնջական շրջանն էր:

Ըստ արդի հայկական գիտության կողմից ընդունված տեսություններից մեկի (որի կողմանակիցն են նաև ես), Հայկական լեռնաշխարհի տարածքում, մոտավորապես IV հազարամյակի կեսից հարավային հնեկըրոպացիների հանրությունից առանձնանում են նախահայերը, որոնք մ.թ.ա. III հազարամյակի սկզբին արդեն ձևավորվում են որպես առանձին՝ հայալեզու ցեղերի միություններ. որոնց հիմքի վրա հետագայում ձևավորվում են առաջին մակր հայկական պետությունները [43]:

Որոշակի համակարգված տեղեկություններ այս ժամանակաշրջանում տեղի ունեցած պատերազմների և ոազմական արվեստի զարգացման մասին մենք ունենք՝ սկսած Հին Հայքի՝ Հայաստայի թագավորությունից՝ մ.թ.ա. XV – XIII դդ., հիմնականում խեթական աղբյուրներից: Հետագայում՝ մ.թ.ա. XIII – IX դդ., Հայաստանի մասք պետությունների՝ Նաիրի միության և, հատկապես, հզոր Կանի թագավորության՝ մ.թ.ա. IX – VI դդ. ոազմական պատմության մասին տեղեկությունները բավականին շատ են հատկապես ասորեստանյան, հետագայում նաև բիայնական աղբյուրներից, սակայն մասնագիտական՝ ոազմագիտական տեսանկյունից այս ժամանակաշրջանը ևս արդի պատմագիտության կողմից դեռ բավարար ուսումնասիրված չէ:

Վաղ Երվանդունիների պետության ժամանակաշրջանը՝ մ.թ.ա. VII դ. - 535 թ. նույնական թույլ է ուսումնասիրված ոազմական պատմության տեսանկյունից:

Կյուրոս Սեծի ապստամբությունը Աժդահակի՝ Աստիագեսի դեմ, հաջողությամբ ավարտվեց նաև Տիգրան Երվանդյանի ոազմական աջակցության շնորհիվ [14]: Այդ աջակցության համար, արդեն պարսիկներից կախյալ հայոց թագավորությունը

Կյուրոսի կողմից վերացվեց միայն Տիգրանի մահից հետո՝ մթա. 535 թ.’ կազմելով Արեմենյան տերության XIII և XVIII սատրապիաները։ Հայաստանը թևակոխեց իր պատմության հաջորդ՝ Արեմենյան տիրապետության ժամանակաշրջանը։

### 1.1.Հայկական բանակը Արեմենյան տերության ռազմական համակարգում մ.թ.ա. 535 – 331 թ.

Հայաստանում արեմենյան ժամանակաշրջանը տևեց ավելի քան երկու դար՝ մ.թ.ա. 550 (535) – 331 թթ. և խորը դրաշմ բողեց Հայաստանի, ինչպես նաև պարսկական տէրության համակարգում գտնվող զբերե բոլոր երկրների և ժողովուրդների վրա: Հայերը տէրության այս ժողովուրդներից էին, որոնք ակտիվորեն ներգրավված էին պարսից արքայից արքաների կողմից անցկացվող տարաբնույթ ռազմական գործողություններին, և թե՛ զինվորների քանակով, թե՛ ցուցադրված մարտունակությամբ զբաղեցնում էին պատվավոր երրորդ տեղը իրանալեզու ժողովուրդներից՝ պարսիկներից ու մեղացիներից հետո, իսկ ուշ Արեմենյանների ժամանակ, ըստ երևույթին, նաև հոյն վարձկաններից հետո [55]:

Հետազոյում, աքեմենյան ռազմական ավանդույթները Հայաստանում մասնակիորեն շարունակեցին Երվանդունիները՝ մ.թ.ա. 331 – 201 թթ., սակայն արդեն Արտաշեյանների մոտ՝ մ.թ.ա. 201 – 95 թթ., զգայիորեն խամրեցին և մոռացվեցին, զիշելով իրենց տեղը Սելևկյանների ռազմական կառուցվածքից բնորինակած կամ նմանակած տարրերին:

Արեւմենյան բանակի թվաքանակի, կազմի, կազմակերպման, սպառագինության, հրամանատարության, մարտավարության ձևերի մասին գոյություն ունի ստվարածավալ գիտական գրականություն [26, 82, 91, 96, 97, 175, 177 – 179, 188, 251]; Բավականին մանրամասն ուսումնախրված է նաև նշված ժամանակաշրջանի պատերազմների պատմությունը [4, 15, 97, 105, 123 – 125, 174, 227, 236]:

Արեմենյան ժամանակաշրջանի Հայաստանի մասին պահանջված են որոշ տեղեկություններ պատմական երկերում և

փաստաթղթերում, նաև որոշ վիմագիր արձանագրություններում: Հարուստ նյութ կարող է տալ նաև հնագիտությունը:

Պեղումների միջոցով ստացված տեղեկությունները հնադարի ռազմական ընդհարումների և պատերազմների նյութական արտացոլումն են, որոնք մեծապես օգնում են մեզ վերականգնել ռազմական կենցաղի տարրերը:

Հատկապես մեզ համար կարևոր են Քսենոփոնից ստացված տեղեկությունները [53, 140 - 142], քանզի նա այն հազվագյուտ հովս հեղինակներից էր, որը համատեղում էր մտավորականի փայլուն միտքը հմտու զինվորականի ունակությունների հետ։ Քսենոփոնը, լինելով բարձրաստիճան սպա, անձամբ էր շփկել հայերի և Հայաստանի հետ, հունական բյուրի նահանջի ժամանակ, այդ թվում ունեցել էր ռազմական ընդհարություններ Հայաստանում։

Պարսկական բանակի կազմում գտնվող հայկական գործերի մասին որոշ տեղեկություններ կարելի է քաղել նաև Հերոդոտոսից [26], սակայն դա մեր այս աշխատության խնդիրներից դուրս է: Հաջորդաբար համառոտ թեսարկենք մ.թ.ա. VI – IV դդ. հայոց բանակի սպառազինությունը, հավաքագրումը, կազմակերպման հնարավոր ձևերը և մարտավարությունը:

### Ապառագինություն

Նիզակ՝ 1,5 – 4,0 մ խոցող, որոշ դեպքերում հատող գենք ձեռնամարտի, կարճ տեսակները՝ նաև նետելու համար [2, 180]: Հին աշխարհի ամենատարածված գենքերից մեկը՝ Հայերի մոտ 1,8 – 3,0 մ երկարությամբ, օգտագործվել էն հետևակի և հեծելազորի կողմից: Նիզակի մասնագիտացված տեսակների հետ՝ մակերոնական սարխաների (4,5 – 6,5 մ, քաշը 6-8 կգ), հետազոյում նաև հորմեական պիլուսի (մինչև 1,2 – 1,5 մ կորով և ծանր ու երկար 0,7 – 1,2 մ երկարեւ միայն հատող ծայրով, ձեռնամարտի և նետելու համար) հետ հայկական բանակը հանդիպել էր մարտում:

**Տեղ՝** 1,2 – 1,5 մ կարծ նիզականման գենը, հակառակորդի վրա նետելու համար [2]: Գործողության արդյունավետ հեռահարությունը՝ 25 – 50 մ:

**Աղեղ ու նես՝** աղեղները, երբեմն հասարակ, ավելի շատ քարդարադարձիչ առաջավորասիական, ավելի հաճախ սկյու-

թական ձեմ, նետերը՝ թեթև ծայրով – հեռահար նետահարման համար և ծանր ծայրով՝ ուժեղացված զրահահատ հատկությամբ [67, 156, 260]: Նետերից առաջինով արդյունավետ նետահարությունը հնարավոր էր մինչև 200 մ, երկրորդով՝ մինչև 100 մ [156, 260]: Նետերը, երբեմն հասուն զրպանում նաև աղեղը, պահվում էն կապարձում (20 – 50 նետ):

Մեզ հայտնի չե՞ն որ ժողովուրդն է հնարել բարդադարիչ աղեղը: Հնագիտական պեղումները վկայում են, որ այսպիսի աղեղ հայտնվել է տարբեր ժողովուրդների մոտ գրեթե միաժամանակ մ.թ.ա. III հազարամյակում: Ըստ վերջին տվյալների, այս ստեղծվել էր Փոքր Ասիայում, Հայաստանում, Միջագետքում և Միջին Ասիայի որոշ վայրերում: Հնագույն պահպանված նմուշներից է արևմտասիական «անկյունային աղեղը», որը հայտնվել էր մ.թ.ա. III հազարամյակում և օգտագործվել մ.թ.ա. 2400 – 600 թթ. [156]:

Էղիքարդ Մակուտենի և ընկերների կողմից պատրաստվել էր այս աղեղի ճշգրիտ նմանակը [156], որը ցուց էր տվել, որ ի հաշիվ նրան, որ աղեղի կենտրոնի անկյունը կոչու է և թերվում են միայն ուսերը, լարի ձգման երկարությունը հասնում է 101 սմ, կատարվում է սահուն և ճշգրիտ նետաձգություն: Հեռահարությունը և ուժը զգալիորեն գերազանցում են հասարակ աղեղի ցուցանիշները [260]:

Ակյութական աղեղը, որը մշակված էր դեռ մ.թ.ա. IX դարում սկզբութերի կողմից, հետազոտում կիմերների կողմից բերվել էր Առաջավոր Ասիա՝ մասնավորապես Հայաստան, և այսուղե լայն կիրառում գտել: Այս բարդադարիչ աղեղի ուսերը թերված են առաջ, որի շնորհիվ մոտ 127 սմ երկարություն ունեցող աղեղի լարը ձգվում է մոտ 76 սմ: Աղեղը համեմատաբար կարծ էր, սակայն թույլ էր տախու նետաձգության ժամանակ հասնել մեծ հզորության [156, 261]:

Արևմտասիական և սկզբութական բարդադարիչ աղեղները արտակարգ ձկուն էին, բավականաշափ հզոր, և, ի տարբերություն հասարակ աղեղների, անհամեմատ ավելի քիչ կախված եղանակի բահաճույքներից: Տիգրանյան ժամանակաշրջանի Հայաստանում օգտագործում էին հիմնականում սկզբութական աղեղները, հետևակը կարող էր ունենալ նաև այլ տեսակների աղեղներ: Հեծելազորը բացառապես զինված էր «սկզբութական» աղեղներով:

Հակառակորդի մոտ զրահի լայն օգտագործումը պարտադրեց երկու ձեմ նետերի օգտագործում՝ ծանր և թեթև ծայրերով:

Դիսն Կաստիոսը գրում էր, որ Արածանիի ճակատամարտում հայերը գործածում էին երկծայր նետեր, որոնք մեծ վնաս էին հասցնում հոռմեացիներին: Այս նետերի կառուցվածքի մասին մանրամասն կանդրադառնանք Արածանիի ճակատամարտի վերաբերյան ժամանակ:

Սուր - ուղիղ, երկսայր խոցող և հատող գենք ձեռնամարտի համար, 50 – 95 սմ երկարությամբ, ավելի երկար տեսակները բնորոշ էին հեծելազորի սպառազինության համար:

Թուր - ուղիղ, կամ թեր միասայր (հատող հարվածի ուժը ավելացնելու համար մի կողմը պատրաստվում էր հասու) խոցող և հատող գենք ձեռնամարտի համար, 50–95 սմ երկարությամբ, ավելի երկար տեսակները բնորոշ էին հեծելազորի սպառազինության համար:

Սուսեր - ուղիղ, խոցող գենք ձեռնամարտի համար, 50–90 սմ երկարությամբ, թերեացված գենք թերևացենների համար, որի մարտական էֆեկտիվությունը գրեթե չէր զիջում սրին և թրին, եթե հաշվի առնենք, որ խոցող վերքերը ավելի վտանգավոր և մահաբեր են: Բարձրորակ մետաղից պատրաստված սուսերով կարելի էր դիմակայել և' սրին, և' թրին:

Դաշոյն - ուղիղ, կամ թեր միասայր (հատող հարվածի ուժը ավելացնելու համար հաճախ մի կողմը պատրաստվում էր հասու), կամ երկսայր խոցող և հատող գենք ձեռնամարտի համար, 25 – 50 սմ երկարությամբ: Մարտում շատ արդյունավետ ծանր պարսկա-սկզբութական դաշոյնները՝ ակինակները, այդ դարաշրջանի արեմենյան բանակի ամենա օգտագործելի և սիրված գենքերից էին:

Դանակ - քարե դարից մինչև այժմ ցանկացած բանակի անհրաժեշտ օժանդակ գենքը:

Սվին - խոցող և հատող գենք ձեռնամարտի և նետերու համար, 0,8 – 1,2 մ ընդհանուր երկարությամբ, որից 0,15 – 0,3 մ կազմում էր երկսայր ծայրը, որը ամրացված էր կոթին: Այս գենքի կիրառման մասին հին Հայաստանում հստակ տեղեկություններ մենք չունենք, սակայն չենք բացառում նրա օգտագործումը նաև հետապում [2]:

Սակր - կացնանման բազմաթիվ գենքերից մեկը: Հարգի էր «սկզբութական» աղեղներով:

իր ուժեղացլած հատող – հարվածող հնարավորության համար: Օգտագործվում էր հետևակի և հեծելազորի կողմից:

Դարսատիկ՝ պարանից հյուսած, կամ կաշվից պատրաստված քար նետող սարք, որը լինում էր մի քանի տեսակի, երկարությունը՝ 50-ից մինչև 120 սմ, 30 – 200 մ հեռահարությամբ:

Անտիկ հելլենակները հայկական քանակում նման զորամասերի առկայության մասին չեն հիշատակում, սակայն պարսավորների ստորաբաժնումների՝ վաշտերի առկայությունը հայկական հետևակային գնդերում կասկածիծ վեր է (Խորենացու մոտ նշված են պարսավորը) [14, 215, 216]:

#### Նկար 1.1. Պարսավորի գենքը

Արտաշատի պեղումների ժամանակ հայտնաբերվել էին պարսատիկով նետելու համար հավաքված քարակույտեր [57]:

Դաշտանական միջոցները էին տարբեր տեսակի վահանները, սաղավարտները, զրահները. ծանր հեծելազորում կարող էին օգտագործվել պաշտպանական հանդերձանքներ և նժույգների համար:

#### Հավաքագրումը և կազմակերպումը

Հետևակի և, հատկապես, թերեազեն հեծելազորի մեծ մասը հավաքագրվում էր համայնքային գյուղացիությունից: Հրամանատարական կազմը և ծանր հեծելազորի ընտիր մասը, գերազանցապես, կազմում էին ազնվականները:

Չորրորդ կազմված էր ըստ զորատեսակների՝ ծանր և թերև հետևակից և հեծելազորից: Մեզ բխում է, որ այս ժամանակաշրջանում հայկական ծանր և թերև հեծելազորը խիստ տարանջանված չէր, նետաձգությամբ կարող էին մարտնչել բռլորը, ձեռնամարտի ժամանակ, անկասկած, առաջին շարքերը կազմում էին լավ զինված և զրահապատկած պյովեսինալ բանակայինները և ազնվականները:

Չորրորդ, ինչպես գրեթե ամենուրեք Արևելքում [96, 100, 285], կազմակերպված էր տասական համակարգով՝ 10 զինվոր կազմում էին մեկ զոկ, 10 զոկից բաղկացած ստորաբաժնումը, որտեղ կար 100 զինվոր՝ անվանվում էր վաշտ, 10 վաշտը կազմում էր գունը՝ 1.000 զինվորից բաղկացած զորամաս, 10 զոյից կազմված միավորում էր բյուրը, կամ զորաբանակը (կոր-

պու), որի կազմում կար 10.000 զինվոր, մի քանի բյուրը կազմում էին բանակ:

#### Նետաձիգներ

- թերև հետևակայիններ, որոնք զինված էին սկզբանական կամ առաջավորասկանի նման աղեղներով և երկու տեսակի նետերով, առաջինը՝ ծանր երկարեց կամ պողպատեց ծայրով, նախատեսված էր զրահը հատելու համար, սակայն կիրառելի էր միայն կարճ տարածության վրա, և երկրորդը՝ ավելի թերև ծայրով, որը նախատեսված էր հեռահար նետահարման համար: Պաշտպանական սպառազինությունից էին թերև սաղավարտը և գոտին:



#### Նկար 1.2.

Բարդարադիրիչ սկզբանական աղեղը ուներ 115 – 130 սմ երկարություն, մինչև 30 – 35 կգ ձգման ուժ ու գործնական էր մինչև 150 – 200 մ հեռահար և 75 – 100 մ զրահահատ նետահարման համար: Փորձված նետաձիգի ձեռքին, հատկապես վաշտի կամ զնիի կազմում հզոր, ազդու գենքը էր, սակայն նետաձիգի գենքը ռազմիկից պահանջում էր մշտական մարդումներով պահպանել նետաձգության հմտությունը [260]:

Նետաձիգը զինված էր նաև ինքնապաշտպանական օժանդակ գենքով, որը պետք է համապատասխաներ մի քանի պահանջների:

1. շխանգարելի հիմնական գենքի տեսակի օգտագործմանը.

2. լինել թերև և կրելու ժամանակ լավ հարմարեցված մարդու մարմնին.

3. լինել հնարավորին չափ արդյունավետ ձեռնամարտի ժամանակ:

Այս իրարամերժ պահանջներին առավելագույնը համապատասխանում էին սուսերը և փոքր, թերև կաշվելի վահանը:

Սուսերը – սրանման թերև խոցող զենք էր, որի թերեացրած տեսակը, որով մարզված մարտիկը կարող էր հաջողությամբ դիմակայել և՛ թրին, և՛ սրին: Սուսերի շեռը հիմնականում ուներ 60 – 75 սմ երկարություն, հազվադեպ մինչև 85 – 90 սմ: Հատող հարվածով կարող էր խոցել նույնիսկ զրահը՝ ծանր և մահացու վերքեր պատճառելով հակառակորդին:

Արեմենյան ժամանակաշրջանի պարսկական բանակի

փորձից մենք զիտենք [123, 124], որ որոշ տեսակի ծառերի ճկուն ճյուղերից հյուսված կլոր վահանը պատվում էր հատուկ մշակված հաստ կաշվով, որից հետո դառնում էր անխոցելի նետող, հատող և խոցող գեներերի համար: Այդ հատկությունը ապահովում էր վահանի ճկունությամբ, որի շնորհիվ նա հարվածը ընդունում էր որպես ռետինե հաստ թիթեղ: Դրա հետ մեկտեղ, վահանը շատ թեթև էր: Միակ անհարմարությունն այն էր, որ մի քանի ամիս հետո ճյուղերը չորանում էին և վահանը կորցնում էր իր ճկունությունը, դառնում ավելի խոցելի: Անհրաժեշտ էր պատրաստել նոր վահան: Վահանների տրամագիծը տատանվում էր 45 – 55 սմ սահմաններում: Նմանատիպ վահաններ կարող էին ունենալ նաև մեր նետաձիգները:

Նետերի պահպանման համար օգտագործվում էին փայտից, կամ կաշվից (փայտյա կմախրով) պատրաստված կապարձներ, որոնք տեղափորում էին 30 – 50 նետ և, որպես օրենք, ունեին աղեղը և սուսերը պահելու հատուկ գրավաններ: Կապարձը գոտիներով հուսալի ամրանում էր մարտիկի ուստրին՝ ազատ թռնելով ձեռքերը: Կապարձի արտաքին մասում հատուկ բռնակների վրա ամրանում էր վահանը:

Անձնական իրեր, մթերք և թիկնոց պարունակող պարկը նույնպես գոտիներով ամրանում և կրվում էր մեջքին:

Հստ երևոյթին, հետիոտն նետաձիգի տեղափոխվող բեռք զբերե երբեք չեր գերազանցում 16 կգ, որից սպառավիճությունը մոտավորապես կեսն էր, կամ մի քիչ ավել (մինչև 10 կգ):

Չոլիք տասը նետաձիգներից մեկը ավագն էր՝ տասնապետը, տասն անգամ տասը՝ հարյուր գինվորից կազմված վաշտի հրամանատարն էր՝ հարյուրապետը կամ վաշտապետը. տասը վաշտը կազմում էին նետաձիգների գունդ, որի հրամանատարն էր հազարապետը կամ վանապետը:

Հայկական քանակի քան հազար նետաձիգները [45, 140] կարող էին քածանել երկու բյուրի, բյուրապետի հրամանատարությամբ, սակայն այդքան մեծ միավորման օգտագործումը առանց այլ զորատեսակների նկարագրված չէ և մեզ համար մարտավարության տեսանկյունից այնքան է հասկանալի չէ:

Ճակատամարտում հիմնական մարտավարական միավորներն էին վաշտը և գունդը: Մարտավարությունը ենթադրում էր երկու եղանակ.

1.հակառակորդի դեմ միայն նետաձիգների մարտ,

2.մարտ այլ զորատեսակների կազմում:

Առաջինի ժամանակ նետաձիգները ձգուում էին գրավել որևէ բյուր լանջ, թեքությամբ դեպի հակառակորդը: Այդ դեպքում նվազում էր հակառակորդի հարձակողական թափը, և երկրորդը ու ամենակարևորը, նետաձիգները հնարավորություն էին ստանում միաժամանակ զանգվածային կիրատել իրենց հիմնական գենքը՝ նետն ու աղեղը: Եթե նետահարությունը չէր կանգնեցնում հակառակորդին, ապա առաջին շարքը դիմավորում էին նրանց սուսերներով և վահաններով: Հետին շարքերը շարունակում էին հակառակորդի հետին շարքերի նետահարումը: Անհաջողության դեպքում թեթև սպառագինությունը թույլ էր տալիս նահանջել կամ պարզապես հակառակորդից վախչել ավելի դժվարամատչելի վայր և այնտեղ կազմակերպել դիմադրությունը:

Նետաձիգների զորամասերը հետևակի ամենաարագաշարժ մասերից էին, որոնք անհրաժեշտության դեպքում օրական կարող էին անցնել 50 – 60 կմ ճանապարհ, երբեմն, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, նաև մի մասը վագելով՝ մի քանի ժամում անցնելով 20 – 25 կմ:

Նետաձիգների համար մասհացու վտանգավոր էր անհաջող բախումը հեծելազորի հետ հարթավայրում: Այստեղ նահանջը կամ փախուստը կարող էր բերել խպառ ոչնչացմանը, և հարկադրված պաշտպանական մարտաճար շրջանամարտն էր. արտաքին մի քանի շարք՝ սուսերամարտող, ներքին մնացած շարքերը՝ նետահարող:


Նետաձիգները, համեմատած թեթև հետևակի այլ տեսակների հետ, ավելի ինքնուրույն և ինքնաբավ զորատեսակ էին, սակայն իրենց գործողության էֆեկտիվությունը զգալիորեն աճում էր, երբ մարտին մասնակցում էին այլ զորատեսակները, հատկապես նիզակակիրները:

### Նիզակակիրներ

«Միջին» (թեթևացված ծանր՝ հունական պելտաստների նման) հետևակայիններ, որոնք զինված են 1.8-2.5 մ երկարությամբ նիզակով, սրով, նաև կարող են զինված լինել պարաստիկով:

Հաճախ հոյսն հովալիտները (ավելի շատ տեղեկություններ կան հոռմեական լեզենականների մասին) իրենց հետ կրում

Էին մի քանի քար, կամ կավից պատրաստված գնդեր՝ հակառակորդի վրա նետելու համար: Ոչ մի արգելք չկար, որ այդպես վարվեն նաև մեր քարաշատ երկրի հետևազորայինները, իսկ ձեռքով նետելուց մինչև պարսատիկ օջուագործելը մեկ քայլ է, ուստի պարսատիկի առկայությունը նիզակակիրների մոտ հնարավոր է:



Նկար 1.3. Նիզակակիրի գենքը

Իրենց գործողության էֆեկտիվությունը զգալիորեն աճում էր, եթե մարտին մասնակցում էին նաև նետաձիգները և վահանակիրները:

Ճակատամարտում հիմնական մարտավարական միավորներն էին վաշտը և գունդը: Մարտավարությունը ենթադրում էր երկու եղանակ.

1. Միայն նիզակակիրների մարտ,
2. մարտ այլ զորատեսակների կազմում:

Առաջինի ժամանակ նիզակակիրները ձգուում էին զրավել որևէ բրիդ լանջ, թերությամբ դեպի հակառակորդը: Այդ դեպքում նվազում էր հակառակորդի հարձակողական թափը, երկրորդը և ամենակարևորը, նիզակակիրները հնարավորություն էին ստանում միաժամանակ կիրառել իրենց օժանդակ գենքը՝ քարերը: Առաջին շարքը կարող էր նետել նիզակները հակառակորդի վրա, սակայն դա ենթադրում էր յուրահատուկ դասավորություն՝ առաջին շարքը առնվազն 2 մ առաջ պետք է կանգնած լիներ երկրորդ շարքից, որ հետո գրնիեր հակառակորդի վրա սուրը ձեռքին: Այսպիսի մարտառման հնարավորությունը քննարկվում է Հին աշխարհի ռազմական գործով գրադիդ գիտնականների հրապարակումներում, սակայն ունի սակավաթիվ կողմնակիցներ [115 - 117]: Անհրաժեշտության դեպքում կարող էին նաև հետահար մարտ վարել՝ նետելով պարսատիկների համար պահպող քարերի պաշարը (ոչ միայն պարսատի-

կով, մոտ տարածքից նաև ձեռքով):


Այդպիսով, նիզակը ծառայում էր ձեռնամարտի, երբեմն էլ նիզականնետության համար: Եթե նիզակամարտը և քարամարտ-պարսամարտը չկը կանգնեցնում հակառակորդին, և առաջին շարքերը խառնվում էին, սկսվում էր սրամարտը: Տեսին շարքերը շարունակում էին հակառակորդի հետին շարքերի վրա քարանետումը (հազվադեպ): Անհաջողության դեպքում, համեմատաբար թերեւ սպառազինությունը թույլ էր տալիս պարզապես նահանջել տեղանքի ավելի դժվարամատչելի վայր և այնուել շարունակել մարտը:

Նիզակակիրների գորամասերը կանոնավոր հետևակային մարտում որոշ ժամանակ կարող էին դիմադրել նույնիսկ ծանր հետևակին՝ փաղանգին, սակայն առանց այլ զորատեսակների գործուն աջակցության այս մարտը՝ որպես օրենք, ավարտվում էր ծանր հետևակի հաղթանակով:

Նիզակակիրների գորամասերը հայկական ծանր հետևակի ամենա արագաշարժ մասերից էին, որոնք օրական կարող էին անցնել 40 – 50 կմ ճանապարհ, անհրաժեշտության դեպքում՝ վագելով՝ մի քանի ժամում անցնելով 17 – 20 կմ:

#### Վահանակիրներ

- ծանր հետևակայիններ, որոնք զինված էին 1,8-3,0 մ երկարությամբ նիզակներով ու սրով: Պաշտպանական սպառազինությունից ունեին մեծ, երկար վահան, սաղավարտ, զրահ, գոտի:



Նկար 1.4. Վահանակիրների գենքը

Հիմնական մարտառման էր վահանակակը՝ 2-4 (մինչև 8-10 շարք) շարքերով իրագործվող վահանակակը, որի հետևից երբեմն գործում էին նետաձիգները և նիզակակիրները: Անհրաժեշտության դեպքում զորայուններով զրոհում էին հակառակորդի վրա՝ բռնվելով նիզակամարտի և սրամարտի:

Վահանակիրների գորամասերը ծանր հետևակի դանդաղաշարժ մասերից էին, որոնք օրական կարող էին անցնել առավելագույնը՝ 25 – 35 կմ ճանապարհ:

Միայն ծանր հետևակային գնդերի՝ վահանակիրների առկայությունը բանակի կազմում այլ զորա-

տեսակների հետ համատեղ թույլ էր տալիս ռազմադաշտում պայքարել, ինչպես հավասարը հավասարի հետ հակառակորդի ցանկացած բանակի դեմ: Վահանակիրների, նիզակակիրների ու նետաձիգների համաձայնեցված գործողությունները և հեծելազորի գրոհները կարող էին ապահովել հայթանակը ճակատամարտում:

Տեղը՝ զրահը հատելու համար նախատեսված, երկարէ կամ պողպաստ ծայրով, կարծ նիզականման զենք էր: Նետվում էր հակառակորդի վրա ձեռով, 25 – 50 մ հեռավորության վրա: Մտնելով վահանի մեջ՝ խանգարում էր նրա օգտագործումը և երբեմ նոյնիսկ ստիպում մարտիկին հրաժարվել խոցված վահանից: Տեղերը լայնորեն օգտագործվում էին հետևակում և հեծելազորում: Հատուկ տեղակիրների գնդերի գոյության մասին տեղեկություններ չունենք:


#### Մարտավարությունը

Հայկական զորքը ճակատամարտի ժամանակ բաժանվում էր երեք մասի՝ աջ և ձախ թևեր և կենտրոն: Որպես օրենք հեծելազորը գտնվում էր թևերում: Ճակատամարտը սկսվում էր թեթևագենների հեռահար մարտով՝ նետաձգությամբ, տեղանետությամբ, պարսամարտով, որին հաջորդում էր նիզակակիրների և վահանակիրների ձեռնամարտը:

Նիզակակիրների կամ վահանակիրների գնդերը մարտի էին մտնում խորը զրայուններով, որոնք շարժվում էին հակառակորդի վրա իրարից 2-5 մ հեռավորության վրա, հետաքոռինս փոխանակածայնեցված, որպեսզի վերջում ներկայացնեն իրենցից փաղանգ: Հաճախ դա չէր հաջողվում, և զրայունները, բայսվելով թշնամու հետ, խառնում էին իրենց շարքերը:

Նետաձիգները և պարսակիրները հեռահար մարտ էին վարում ծանր հետևակի հետևեցից, կամ պահպանում նրա թևերը:

Ճակատամարտի ժամանակ պահեստազոր (կամ ոեզերվ), առանձնացնելու մասին նյութեր չունենք: Հայթանակից հետո հաճախ կազմակերպվում էր պարտված հակառակորդի հետապնդումը: Ա.թ.ա. 420 – 300 թթ. հայկական բանակի զրատսակները և կառուցվածքը ներկայացված են թիվ 1.5. զծանկարում:



Գծանկար 1.5. Ա.թ.ա. 420 – 300 թթ. հայկական բանակի զրատսակները և կառուցվածքը ուշ Աքեմենյանների և Երվանդ Մեծ թագավորի ժամանակ:

Եթե հայկական բանակի մարտական պատրաստությունը մոտ էր պարսկա-մեղքա-արևելաշիրանականին՝ սակեր, սոգդի-ացիներ և այլն, ապա կարելի է խոսել զորքերում բավականին բարձր կարգապահության, հրամանատարական կազմի հրմտության և հեղինակության, զորավարների բանիմացության և զրագիտության մասին [123, 124]:

## 1.2. Երվանդունիների բանակը մ.թ.ա. 331 – 201 թթ.

### 1.2.1. Երվանդ Մեծի բանակը՝ 331 – մոտ 300 թթ.

Դա այն բանակն էր, որը Գավգամելայի ճակատամարտում ջախջախել էր մակեդոնական բանակի ձախ թևը, որը դեկավարում էր Ալեքսանդր Մակեդոնացու լավագույն զորավար՝ Պարմենիոնը [4, 55], իսկ ճակատամարտի անհաջող ելքից հետո ոչ թե փախել, այլ նահանջել էր ռազմի դաշտից դեպի հայրենիք՝ Հայաստանի լեռները: Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Հայաստանը և, մասնավորապես, Սալեր գավառի ոսկու հանքերը գրավելու համար ուղարկված Մելոնի ոչ մեծ մակեդոնական բանակը հայերը զիսովին ջախջախել և խսպառ կործանել էին հայկական լեռներում [18, 45]:

Հետագայում՝ մ.թ.ա. 322 – 321 թթ., հայկական բանակը ջախջախում է Կապանդովկիան զրաված խոշոր մակեդոնական բանակը կապանդովկիական զահը վերապարձելով՝ Հայաստանի փախած Արիարաթեսին [16, 55]: Դիոդորոս Սիկիլիացին վկայում է, որ երբ մ.թ.ա. 322 թ. սկզբին մակեդոնական զորքերը արշավեցին Կապանդովկիա, երկրի ծերունազարդ քաղաքոր Արիարաթեսը նրանց դեմ դուրս եկավ 30.000 հետևակով և 15.000 հեծյալներով, սակայն պարտվելով՝ գերի ընկավ և մահապատժի ենթարկվեց: Նրա որդին, որը նույնպես կոչվում էր Արիարաթես, փախավ Հայաստան և որոշ ժամանակ հետո, «վերցնելով արմենների Արդուստես թագավորից զորք, սպանեց մակեդոնացիների զորապետ Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերագրավեց իր հայրենի իշխանությունը»:

Մ.թ.ա. 317 – 301 թթ., Անտիգոնոսի և Սելինոս Ա-ի միջև

ընթացող պայքարում Կապանդովկիայում մակեդոնացիների դեմ մարտնչում էր հայոց բանակը [16, 46]:

Երվանդյան Հայաստանը նպաստել էր Պոևոսի՝ մոտ 300 թ. և Փոքր Հայքի անկախացմանը:

Երվանդունիների վարած ակտիվ արտաքին քաղաքականությունը մեծապես կապված էր երկրի ռազմական կարողությունների հետ: Հայոց բանակն էր այն վճռորոշ գործոնը, որը հնարավորություն էր տալիս դիմակայել նաև հզոր Սելիսյան տերության ճնշմանը:

Հայկական բանակի ներքին կառուցվածքի, հավաքագրման, համալրումների և մարտավարության մասին տեղեկություններ չեն պահպանվել, և մենք այսօր հնարավորություն չունենք պարզելու՝ որքանով էր բանակը փոխվել ուշ արեւելյան ժամանակաշրջանից:

Երվանդը համշխացավ ուշ Երվանդունիների (մ.թ.ա. 331 – 201 թթ.) հարստության հիմնադիրը: Նա մի հզոր անձնավորություն էր, որի նպատակավագ գործունեությունը նպաստեց ոչ միայն անկախացած Մեծ Հայքի հարատևմանը: Երվանդը մեծապես աջակցեց իր հարևանների մի մասի անկախացմանը և նշանակալից դեր խաղաց Փոքր Ասիայի քաղաքական դիմակարի ձևավորման մեջ: Նույնիսկ մեզ հասած սակավականից տեղեկությունները ուրվագծում են նրա գրեթե քառասնամյա (մ.թ.ա. 338 – 331 թթ. Հայաստանի սատրապ, 331 – մոտ 300 թթ. թագավոր) գործունեության վիթխարի արյունքը՝ վերականգնված հայկական թագավորությունները: Իմ կարծիքով, ժամանակակիցները նրան կարող է շնորհած լինեն «Մեծ» պատվավոր անունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր պատմության տարբեր «Երվանդներին» երբեմն դժվար է տարբերել, մենք այսուհետ մեր նկարագրված Երվանդ թագավորին կկոչենք Երվանդ Մեծ: Երվանդ Մեծը՝ Մեծ Հայքի ուշ Երվանդյան հարստության հիմնադիրն է: Սովոր նորենացուց ավանդված բացասական վերաբերմունքը Երվանդունիների հանդեպ պատմականորեն անարդար է և պետք է վերանայվի: Նույնիսկ Երվանդ Վերջինին կարելի է գնահատել միայն իր գործունեության մակրամասն ու անաշառ ուսումնասիրությունից հետո:

## 1.2.2. Երվանդունիների զինուժը՝ 300 – մոտ 220 թթ.

Հայաստանի բավականին ակտիվ արտաքին քաղաքականությունը թույլ է տալիս մտածել, որ Երվանդունիները պատշաճ մակարդակի էին պահում բանակի մարտունակությունը: Այդ ժամանակահատվածում Սելևյանները կարողացան մի քանի ծանր հարված հասցնել պարքի Արշակունիներին, սակայն նրանց այրակն է շխաջողովեց ընկճել Երվանդունիներին:

Սեմնն Հերակլեացին հայորդում է, որ Բյութանիայում ծայր տված գահակալական կրիվների պատճառով մահացած Նիկոմեդես թագավորի որդիներից Զհաելասը, մոտավորապես մ.թ.ա. 260 թ. ապաստան է գտնում արմենների թագավորի մոտ, որի անունը, դժբախտաբար, նա չի հիշատակում [16]:

Դոլինոսը հիշատակում էր, որ Անտիոքոս Հիերաքսը, շուրջ մ.թ.ա. 240 թ. ապստամբելով իր զան բարձրացած եղբոր՝ Սելևկոս Կայինիկոս թագավորի դեմ, պարտվում է և Միջազգետքից փախչում է Արմենիա՝ ապաստանելով Արսաքեսի (Արշամ կամ Արշա'կ) մոտ [16, 197]:

Անցկացնել այսպիսի քաղաքականություն, որի գլխավոր բաղադրիչներից է որևէ երկրի շահերին ակտիվ հակադրվելը, կարելի է միայն հզոր բանակի առկայության դեպքում: Համաշխարհային պատմությունը ուսուցանում է, որ ինչպես օրենք:

Հզորների դեմ չեն կոլում, հզորների հետ բանակցում են:

## 1.2.3. Երվանդ Վերջինի բանակը 220 – 201 թթ.

Սենք կարող ենք դատել Երվանդի և Արտաշեսի միջև ծավալված պայքարի մասին միայն Սովորություններից [14], պայքարի ելքի մասին՝ նաև մի շարք այլ հեղինակներից: Հիմնական տպավորությունը՝ Սեծ Հայքի ռազմական ուժի հետափորությունների զգալի նվազում: Այս հարցը կարու է մանրամասն մասնագիտական ուսումնասիրության և մեր ներկա աշխատության շրջանակներից դուրս է:

## 1.3. Արտաշեսյանների բանակը մ.թ.ա. 201 – 95 թթ.

Արտաշեսյանների հարստության հիմնադիրը՝ Արտաշես Ա-ն կառավարեց Հայաստանի մեծագույն մասում՝ Սեծ Հայքում, ավելի քան չորս տասնամյակ՝ 201 – 160 թթ., որոնք լեցուն էին տարբեր պատերազմներով և ռազմաքաղաքական այլ անցքերով:

### 1.3.1. Արտաշես ստրատեգոսի բանակը՝ 201 – 190 թթ.

Արտաշեսի հաղթանակը Երվանդ Վերջինի հանդեպ վկայում էր հայկական հասարակության խորը ճգնաժամի մասին: Սեծ էր նաև Հայաստանի վրա սելևյան հզոր Անտիոքոս Գ թագավորի ճնշումը, որին չեր դիմացել նույնիսկ վերընթաց ապրող պարթևական թագավորությունը [14, 18, 45, 122]: Սենք չգիտենք՝ Արտաշեսը Երվանդին հաղթել էր որպես սելևյան գորավար՝ ստրատեգոս, թե ապստամբելով Երվանդի դեմ՝ աջակցություն խնդրել Անտիոքոսից՝ խոստանարկ ճանաչել նրա գերիշխանությունը: Խնդրի եռությունը դրանից առանձնապես չի փոխվում:

Սեկ դարից ավել պայքարելով Սելևյանների դեմ՝ այսուամենայիվ, Հայաստանը մ.թ.ա. 201 թ. ընդկրկեց և ենթարկվեց Սելևյան թագավորության հիմնադիր Սելևկոս Ա-ից հետո Սելևյան թագավորության ամենահզոր թագավորի՝ Անտիոքոս Գ Սեծի կամքին:

Դրանով բռվացած Հայաստանը ավելի քան մեկ տասնամյակով կորցրեց իր լիակատար անկախությունը:

Ինչպիսին էր բանակի վիճակը 201 թ.-ից հետո: Ուդրակի տեղեկություններ մենք չունենք, սակայն տրամաբանական է ենթադրել, որ Արտաշեսը՝ ռազմական գործին քաջատեղյակ և ունակ մի գործից փորձել էր բարեկավել բանակի վիճակը և բարձրացնել նրա մարտունակությունը: Սակայն այդ միջոցառումները կրում էին սահմանափակ բնույթ, որ շրաբրքեին հզոր և կասկածամիտ Սելևյանների անհանգստությունը:

**1.3.2.Արտաշեսի ռազմական ռեֆորմը՝ մ.թ.ա. 190 - 189 թթ. և Հաննիբալի դերը հայկական քանակի բարեփոխումներում:**

Մ.թ.ա. 190 թ. մոտավորապես դեկտեմբերի 22-ին Սագնեսիայի մոտակայրում տեղի էր ունեցել հոռմեա-սիրիական պատերազմի զիսավոր ճակատամարտը, որին իր արժեքավոր հետագոտությունն է նվիրել Դմիտրի Շկրարոն [258]: Ըստ Լիվիոսի և Ապպիանոսի հոռմեական 30-31.000 քանակը վճռական հաղթանակ է տանում Անտիոքոս Գ-ի 70-72.000 քանակի դեմ (Այսուղի նույնպես ներկա են պրոպագանդիստական 300.000 հետևակը և նույնքան հեծյալները, չհաշված մարտակառքերը՝ Ֆլորի բերված տվյալները): Շկրարոն համոզիչ ձևով ապացուցում է, որ հոռմեացիներից նույնպես ճակատամարտում ունեին 72.000 զիսնվոր, և ուժերը գործնականում հավասար էին. Աստիրորսը խիստ գերազանցում էր հակառակորդին հեծելազորի և փերի քանակով, մի փոքր առավելություն ուներ թերև հետևակի մեջ և խիստ՝ մոտավորապես 1,5 անգամ զիշում էր ծանր հետևակի մեջ [196, 258]: Ճակատամարտի ելքը խիստ անբարենպաստ էր Անտիոքոսի, սակայն շատ դրական էր հայկական պետության ճակատազրի համար:

Մ.թ.ա. 189 թ., Արտաշեսը, օգտվելով Անտիոքոս Գ-ի Սագնեսիայի ճակատամարտում կրած ծանր պարտությունից, հարում է հոռմեացիներին և հայտարարում Մեծ Հայրի անկախության մասին [18]: Հիմք է դրվում Արտաշեսյան հարստությանը: Սիածամանակ Ծոփրում իրեն անկախ է հայտարարում Զարեհը՝ իհմք դնելով Ծոփրի Զարեհյան հարստությանը: Առուավորապես մ.թ.ա. 180 թ.-ից փաստորեն Փոքր Հայքը անկախ կառավարում է սելևյան սատրապ Միհրդատը:

Հայաստանի երեք թագավորություններում՝ Մեծ Հայրում, Փոքր Հայրում և Ծոփրում, իշխում են հայազգի թագավորները, որոնք հայտնվում են միջազգային բարդ քաղաքական իրադարձությունների հորձանուսում [18]: Հայկական երեք թագավորությունների կամավոր միավորում չեր կարող իրականացնալ, որովհետև արքաներից ոչ մեկը կամավոր չեր զիշի իր գահը համահայկական համագործակցության գաղափարի հա-

մար. ավելի կարևոր՝ էին նեղ, տեղական շահերը, որով Փոքր Հայքը զիսավոր ավելի էր կապվում Պոնտոսի, իսկ Ծոփրը՝ կիսահայացած Կոմմագենեի հետ:

Մեծ Հայքի միջազգային դիրքը ամրապնդելու համար Արտաշեսի մոտ ծառանում են երեք կարևորագույն ռազմապահքական խնդիրներ.

1.քանակի կատարելագործումը և ուժեղացումը.

2.նոր, լավ պաշտպանված մայրաքաղաքի կառուցումը.

3.Երվանդյան Հայաստանի վերջին տարիների թուլության հետևանքով կորցրած ծայրազավառների վերադարձը:

Այդ երեք խնդիրների լուծմանը մեծապես նպաստում է Արտաշեսի մոտ կարթագենացի հանձարեղ գորավար Հաննիբալի ժամանումը:

Մ.թ.ա. 189, խուսափելով հոռմեացիների հնարավոր հետապնդումներից և վլեմինդությունից, կարթագենացի հանձարեղ գորավար Հաննիբալը, թողնելով Անտիոքոս Գ-ի արքունիքը, Աստրիքից տեղափոխվում է Մեծ Հայք [42, 139, 192, 244]:



Նկար 1.6. Հաննիբալ  
(մ.թ.ա. 247 – 183 թթ.)

Գ-ն Հաննիբալին հեռու պահեց Սելևյան տերության ճակատազրի համար ամենակարևոր ցամաքային ճակատամարտերից, հատկապես Սագնեսիայի մոտ կայացած մեծ ճակատամարտի նախապատրաստումից և իրականացումից:

Պլուտարքոսը գրում էր.

«... կարթագենացի Հաննիբալն այն քանից հետո, երբ Անտիոքորսը հոռմեացիների հետ մղվող պատերազմը վերջնականացնալու տանու տվեց, զիաց Արտաշես Արմենի արքունիքը, որին պիտի իշտանի իշտիքներ ու իրահանգներ տվեց»:

Ի՞նչ «խորհուրդներ» ու հրահանգներ» կարող էր տալ ականավոր զինվորականը հայոց եռանդուն արքային: Պատասխանը միանշանակ է՝ ուզմական և ուզմաքաղաքական: Հոռմեական տերությանը կործանման եզրին հասցրած, ժամանակի կարթագենական, հունական, հռոմեական և սէլևյան ուզմարվեստին բաջատեղյակ հանձարել անձնավորության ազդեցությունը խորը դրույմ պետք է բռուած լիներ Արտաշեխ արքայի անձի և հայկական բանակի կառուցվածքի ու մարտավարության վրա: Արտաշեխը պարզապես չէր կարող չօգտագործել իր երկիրը հզորացնելու այս աննախադեպ առիթը:

Արտաշատի հզոր պաշտպանական կառուցների հատակագիծի ստեղծման մեջ կարևորվում էր Հաննիբալի ունեցած ավանդը: Կարծում ենք, որ աշխարհում ամենահմուտ ամրոցաշինության ավանդույթներ ունեցող երկրներից մեկում՝ Հայաստանում նույնական է [44], հանձարել կարթագենացին կարող էր ասել իր ծանրակշիռ խոսքը:

Այս ժամանակաշրջանի հայկական բանակի կառուցվածքի, սպառագինության և մարտավարության մասին մենք տեղեկություններ գրեթե չունենք, սակայն ապագա հետազոտություններում հնարավոր է պարզել՝ Հաննիբալի մարտարվեստի տեսական և գործանկան գիտելիքների որ մասը հնարավոր էր՝ «պատվաստել» հայկական հողում:

Հաննիբալի կենսագրությունը և ուզմական գործունեությունը հին աշխարհի ուզմական արվեստի պատմության ամենատառմասահրաժան էջերից են: Նրա գորավարական տաղանդը արժանիքուն գնահատվել էր դեռ անտիկ պատմիչների կողմէց: Հաշվի առնելով մեծ կարթագենացու հնարավոր խոր ազդեցությունը հայկական ուզմարվեստի զարգացման վրա՝ հայկական ուզմապատմական միտրը պարտավոր է ապագյում մեր ընթերցողին հայերենով ներկայացնել Հաննիբալին վերաբերող համահավաք խորը ուսումնասիրություն:

Հաննիբալի ազդեցությունը այնքան նշանակալից էր, որ մենք կարող ենք ենթադրել, որ ըստ եռթյան, Արտաշեխը անցկացրեց լուրջ ուզմական բարեփոխումներ՝ ուժիում:

Ո՞րն էր, այդ բարեփոխումների եռթյունը: Քննելով հայկական բանակի կառուցվածքը և մարտավարությունը Արեմեն-

յաններից մինչև Երվանդ Սեծ և Արտաշեխ Ա Բարին, մենք տրամաբանորեն տեսնում ենք, թէ ինչպես բանակում որոշակիորեն պետք է բարձրանար ծանր այրումիու և հետևակի տեսակարար կշիռը:

Արեմենյան ժամանակաշրջանի հայկական բանակը բաղկացած էր 7-8.000-ոց հեծելազորից (որը, ըստ երևոյթին, դեռ հստակ բաժանված չէր ծանրի և թեթևի) և 40.000 հետևակից, որից 20.000 նետաձիգներ ու 20.000 նիզակավիրներ [45, 140]: Այս նիզակավիրները իրենց սպառագինությամբ և մարտավարությամբ պելտասաներ են: Այդպիսով, հայկական բանակում ծանր հետևակը որպես զորատեսակ մ.թ.ա. 535 – 331 թթ. ժամանակահատվածում զործնականորեն բացակայում էր: Դա չի նշանակում, որ հետևակայիններից ումանք չեն կրում զրահ: Սակայն, եթե մենք ունենայինք թիշ թէ շատ մարտունակ ծանր հետևակ, նույինիկ 5-10.000 զինվոր, ապա գրեթե անհնար էր, որ դրա մասին չտեղեկացնեին հույն պատմիչները: Հայտնի է, որ արեմենյանների բանակի ծանր հետևակը վարձկան հույն հոպլիտների փաղանգներն են:

Ուշ Երվանդունիների (մ.թ.ա. 331 – 201 թթ.) բանակում Սելևյան բազավորության բանակի ազդեցության շնորհիվ ըստ երևոյթին հայտնվեցին մի բանի ծանրազնեն վահանակիրների գլուխք, սակայն նրանց բանակը անհշան էր և եսակե չփոխեց դաշտային բանակի մարտավարությունը:

Իրենք՝ Սելևկյանները, ծանր հետևակի մշտական կարիք ունեին, որը լրացնում էին Սիրիայում բնակվող մակեդոնացիներից ու հույներից կազմված «մակեդոնական» փաղանգով և վարձկան հույն հոպլիտների փաղանգներով: Սրան նաև պետք է ավելացնել մարտունակ վարձկան զայտական ծանրազնեն հետևակը: Մ.թ.ա. 217 թ. Ռաֆիայի ճակատամարտին մասնակցած Անտիոքոս Գ-ի 62.000 հետևակից միայն 35.000 էր ծանրազնեն (որից 20.000 կազմում էր փաղանգը) և 27.000 պելտասաներ էին, այս դեպքում, եթե Պտղոմեոսը ուներ 52.000 ծանրազնեն և 11.000 պելտասա: Այդպիսով, նույնիսկ Սելևյան արքաներին ոչ միշտ էր հաջողվում լրացնել ասիական բանակներին ընորոշ թուղթյունը ծանր հետևակի մեջ: Անսպաս բանակով հավաքվող պելտասաները այդ բացը լրացնել չեն կարող:

Հաննիբալը, որը տասնամյակներ շարունակ կովել էր հռոմեական լեգեոնների դեմ, բաշածանոթ էր թէ՝ հռոմեական, թէ՝

### 1.3.3. Արտաշես Ա բանակը՝ 188 – 160 թթ.

հունական հետևակային մարտավարությանը, կարող էր առաջարկել իր կիրառած լուծումները: Ծանր հետևակին հակագերու համար անհրաժեշտ էր կամ ստեղծել համարժեք ծանր հետևակ, կամ արմատապես բարելավել հեծելազորը՝ բաժանելով նրան ծանրագինների և թերևագենների գնդերի: Ամենաարդյունավետ լուծումը, երկու բարեփոխումների համակցում էր:

Մեր կարծիքով, զգալիորեն ավելացվեց հեծելազորի բացարձակ բանակը, ստեղծվեցին մի բանի զրահապատ հեծելազներ (մեր կարծիքով, ընդամենը 5.000 հեծյալ), որի միջուկը կազմեց ազնվականությունը: Աճեց հեծելազորի տեսակարար կշիռը և դերը ճակատամարտերում: Նիզակակիրների մի մասը ստացավ մեծ վահանեներ ու ծանր պաշտպանական հանդերձանք և կազմեց հայկական բանակի նորաստեղծ վահանակիրների փաղանգը, որը ճկունության համար բաժանված էր գնդերի: Ծանր հետևակի և ծանր հեծելազորի առկայությունը թույլ էր տալիս բաց ճակատամարտում դիմակայել ցանկացած հակառակորդի, որը և արտահայտվեց 165 թ. Սելևյան հզոր Անտիոքու Դ Էպիփանես թագավորի բանակը ընկելու և Հայաստանի սահմաններից հետ շպրտելու մեջ:

Հանիբալը լավ գիտակցում էր հռոմեական ծանր հետևակի՝ լեզենի կազմակերպաչական և մարտավարական առավելությունները: Արդեն իր երրորդ մեծ ճակատամարտի նախօրեին ինքը գիտել էր իր լավագույն հետևակայիններին ուազմավարային հռոմեական լեզեններների գենքով և կազմակերպել հետևակը լեզենների նման: Սակայն իր աֆրիկյան կարթագենա-լիվիական հետևակն ուներ մեծ փորձ, որը թույլ տվեց արագ վերածել նրանց լեզենների: Հայկական ծանր հետևակը ուներ որոշակի փորձ, սակայն դժվար թե ոյուրությամբ վերածեր լեզենային մարտավարությունը կիրառող զրամասերի: Ավելի հեշտ էր բարելավել ու կատարելագործել հայկական հեծելազորը:

Հայոց բանակի 165 թ. բախումը Սելևյանների հզոր բանակի հետ հաստատեց, որ Հայաստանը իր ուազմական գործի զարգացումով մոտ էր հզորագույն հելլենիստական պետությունների մակարդակին:

Հայկական բանակի բարեփոխումները զգալիորեն բարձրցրին նրա մարտունակությունը: Ապացուց՝ Արտաշեսի բազմաթիվ հաջողված ուազմական ձեռնարկումներն էին: Արտաշեսը առաջինը հետ վերցրեց հարևաններից Մեծ Հայքի կորցրած ծայրագավառները: Նա ձեռնարկեց նաև Ծոփքի հպատակեցումը, սակայն հանդիպելով Կապաղովկիայի կտրուկ հակագդեցությանը՝ հրաժարվեց այդ զադափարից, չցանկանալով մեկ հզոր հակառակորդին՝ Սելևյաններին, գումարել ավելի թույլ, սակայն ազդեցիկ Կապաղովկիային:

Սակայն հայկական բանակի մարտունակության ամենավառ ապացույցն էր մ.թ.ա. 165 թ. Տմորիքի համար տեղի ունեցած խոշոր ճակատամարտը Սելևյան թագավոր Անտիոքու Դ Էպիփանեսի բանակի դեմ, որը ընդմիշտ վերջ դրեց Սելևյանների պահանջատիրությանը Հայաստանի հարավային ծայրագավառների հանդեպ: Պատերազմի ելքի մասին Անտիոքոսի պնդումը իր հաղթանակի մասին չի պացուցվում հետոպա իրադարձությունների ողջ ընթացքով: Ըստ Եռության, Արտաշեսը դուրս է մղում սիրիացուն Մեծ Հայքի սահմաններից դրւս դեպի Հյուսիսային Սիհագետը, և շարունակում է իր Եռանդրուն ուզմական քաղաքականությունը Հայաստանի հարավի հարակից շրջաններում [10, 18, 54]:

Հիերոնիմոսի (335 – 420 թթ.) մեջ բերած Պորփյուրոսի (234 – 305 թթ.) Վկայությունից հայտնի է, որ Արտաշեսի հետ պատերազմելուց հետո Անտիոքու Դ Էպիփանեսը «հաստատում է վրանը Սպեղնուն կոչված վայրում, որը զոնվում է երկու լայնահուն գետերի՝ Տիգրիսի և Եփրատի միջև» Սիհագետում [17]: Դիորդոս Սիկիլիացու (շուրջ 90 – 20 թթ. մ.թ.ա.) հաղորդումը Անտիոքոսի հաղթանակի մասին հավանցիկ է և չի արտահայտում իրականությունը [16, 46]: Տմորիքը, որը Արտաշեսը միացրել էր Մեծ Հայքին, մնաց, ըստ Ստրաբոնի, Հայաստանի կազմում [219]:

Այդպիսով, սելևյան վերջին հզոր արքան, ում ուազմական տաղանդը անհերքելի էր, բազմաթիվ ճակատամարտերում կոփված հզոր սելևյան բանակով արշավում էր հայկական բանակի դեմ, որպեսզի դիմագրավի Արտաշեսի առաջնադաշտումը դեպի հարավ և վերագրավի կորցրած երկրամասը: Ճակատա-

մարտից հետո նա ճամբար է դևում Միջազգետրում և որպես միխթարակ հայտարարում է իր «հաղթանակի» մասին:

Մենք հակված ենք մտածել, որ ճակատամարտի եզրը բռլոր դեպքերում բարենպաստ էր ավելի շատ հայերի, քան սիրիացիների համար: Ավելին, ըստ մեզ, բախումը հզոր հայկական բանակի հետ, վերջնականապես հստակեցրեց Մեծ Հայրի ռազմական գերազանցությունը Սելևկյանների հանդեպ: Մ.թ.ա. 165 թ. հայկական բանակը, որը լավ էր յուրացրել Հաննիքայի տփած խորհուրդները, ապացուցեց, որ տարածաշրջանի հզորագույններից է: Հետագայում սելևկյանն Սիրիան այլև «մոռակում» է հյուսիսային ուղղությունը և զնալով ավելի ու ավելի է բռլանում:

Մի բանի տարի հետո՝ 161 թ.-ին Արտաշեսը աջակցում է Բաբելոնիայի և Սեղիայի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապատամբությանը: Վերջինս իրեն սելևկյաններից անկախ է հայտարարում Սեղիայում, որտեղ կառավարում է 162 – 160 թթ. [16]: Դա բացահայտ հակասելույթ բայց էր:

### 1.3.4. Տիգրան Ա և Արտավազդ Ա-ի բանակը՝ 160 – 95 թթ.

Արտաշեսյանների այս 65-ամյա ժամանակաշրջանի ռազմական կարողությունների վերլուծությունը խիստ կարևոր է մեր հետագա հետազոտության համար՝ ելնելով հետևյալ պատճառներից:

- Տիգրան Բ-ի հետագա ռազմական և ռազմաքաղաքական հաջողությունները հիմնված են 160 – 95 թթ.-ին Մեծ Հայրի հզորության զգալի աճի վրա:

- Տիգրանի ռազմական գործունեությունը, կարող էր իրականացնալ՝ սկսած մ.թ.ա. 120 թ.-ից, այսինքն ընդգրկում էր վերահիշյալ ժամանակաշրջանի վերջին երրորդը.

- Այս ժամանակահատվածում մեզ հայտնի է միայն մեկ մեծ պատերազմ, որը վարել են Արտաշեսյանները, դա առաջին հայ-պատերազմ, որը վարել են Արտավազդ Ա-ին և Տիգրան Ա-ին

- Ռազմաքաղաքական վիճակը Առաջավոր Ասիայիում այս տարիներին թույլ չի տվել Արտավազդ Ա-ին և Տիգրան Ա-ին

Մոփը և Փոքր Հայրը միացնել Մեծ Հայրին.

- Մ.թ.ա. 130 – 110 թթ. բաղաքական և ռազմաքաղաքական իրադարձությունները առաջին անգամ ուրվագծել են Պարթևական տերության և Հոռոմի հակապետության երապանսիայի պոտենցիալ վտանգները Հայաստանի համար:

Արտաշես Ա-ի հաջորդների մասին պահպանված տեղեկությունները շատ քիչ են: Գիտենք, որ թագավորել են Տիգրան Ա և Արտավազդ Ա թագավորները: Ըստ Սովուս Խորենացու՝ առաջինը թագավորել է Արտաշեսի ավագ որդին՝ Արտավազդ Ա, հետո կրտսերը վեց որդիներից՝ Տիգրան Ա-ն [14, 18]:

Հայ ժողովրդի պատմության ակադեմիական ութիսառորյակի առաջին հատորում առաջին Արտաշեսյանների անվանացանկը ներկայացվում է այսպես:

Արտաշես Ա Բարի Երվանդական	189 – 160
---------------------------	-----------

Արտավազդ Ա և Տիգրան Ա	160 – 95
-----------------------	----------

Տիգրան Բ Մեծ	95 – 55
--------------	---------

Տայկական Սովուսական Հակագիտարանի երկրորդ հատորում (Վերահաստատված Հայկական համառոտ հանրագիտարանի 1990 թ.-ի առաջին հատորում) և Հայ ժողովրդի պատմության ըրեստոմատիայի առաջին հատորում Ենթադրաբար բաժանվում են Արտավազդ Ա և Տիգրան Ա-ի զահակալության տարիները.

Արտաշես Ա Բարի	189 – 160
----------------	-----------

Արտավազդ Ա	160 – 115
------------	-----------

Տիգրան Ա	115 – 95
----------	----------

Տիգրան Բ Մեծ	95 – 55
--------------	---------

Արտաշեսյանների հարստության ժամանակագրության ճշշման մեջ նշանակալի է ակադեմիկոս Գ. Սարգսյանի առաջարկած Արտաշեսյանների գենեալոգիական ծառը [209], որտեղից:

Արտաշես Ա Բարի	189 – 160
----------------	-----------

Տիգրան Ա	160 – ?
----------	---------

Արտավազդ Ա	? – 95
------------	--------

Տիգրան Բ Մեծ	95 – 55
--------------	---------

Մենք կարծում ենք, որ Տիգրան (Տիգրան Ա) Ա զահակալության պայմանական ժամկետը կարող է համարվել 160 – 125 թթ. մ.թ.ա., այդ դեպքում Տիգրան Բ-ի զահակալությունը 125 թ.

մ.թ.ա., կարող էր չկայանալ, որովհետև նա դեռ 15 տարեկան անշափահաս էր: Գահին նստեց հորեղբայրը՝ ապագա Տիգրան Բ-ին հաստատելով զահաժառանակ:

Ընդհանրապես, Արտաշեսյան զահացանկը քննելիս առաջանում են բազմաթիվ հարցեր: Օրինակ՝ վերլուծենք արքաների տարիքը և զահաժառանգների ծնունդը:

Եթե Արտաշես Ա հայրեց Երվանդ Վերջինին 201 թ., նա արդեն զորավար էր, ուներ որոշակի ուսումնական և պալատական փորձ: Քանի տարեկան կարող էր նա լինել մոտավորապես երեսուն: Ուրեմն նա ծնվել է մոտավորապես 230 թթ. և ապրել է մոտ 70 տարի, կառավարել Մեծ Հայքը 41 տարի, որից 30 թագավորել:

Նրա որդին՝ Տիգրան Ա, թագավորել է 160 – 125 թթ., ծնվել է մոտավորապես 200-190 թթ., ապրել 65-75 տարի, որից միայն 35 է թագավորել:

Արտաշեսի կրտսեր որդի Արտավազդ Ա ենթադրաբար ծնվել է մոտավորապես 180 թ. մ.թ.ա., թագավորել է 30 տարի 125 – 95 թթ., մահացել մոտավորապես 85 տարեկան հասակում:

Տիգրան Բ Մեծը ծնվել է 140 թ., թագավորել 45 տարի՝ 95 – 55 թթ., մահացել 85 տարեկանում:

Ստացվում է, որ Տիգրան Ա հայրը եղել է մոտ 30-40 տարեկան, Արտավազդ Ա-ինը՝ 50, Տիգրան Բ-ինը, մոտ 50-60 տարեկան: Հասկանալի չէ, կարո՞ղ ո՞ւ է Տիգրան Բ-ի Արտավազդ Ա-ի որդին ե: Այդ դեպքում գոնե հայրը կլինի մոտ 40 տարեկան:

Այս հարցերի պարզաբանումը մեր աշխատանքի խնդիրներից դուրս է, ուստի բավարարվենք այսքանով, ընդունելով (պայմանականորեն) Արտաշեսյան արքաների հետևյալ հերթականությունը.

Արտաշես Ա Բարի	(201) 189 – 160
Տիգրան Ա	160 – 125
Արտավազդ Ա	125 – 95
Տիգրան Բ Մեծ	95 – 55
Արտավազդ Բ	56 – 34

### 1.3.5. Ա. թ. ա. 112 – 111 թթ. հայ-պարթևական պատերազմը:

Այս ժամանակաշրջանի միակ արժանահավատ ռազմական իրադրությունը 112 – 111 թթ. հայ-պարթևական մեծ պատերազմն է, որի ժամանակ խիստ հզորացած Պարթևստանի բանակները ներխուժում են Հայաստան և փորձ կատարում հպատակեցնել Մեծ Հայքը:

Հայ-պարթևական հարաբերություններին նվիրված կամ այդ հարաբերությունները ինչ-որ չափով հիշատակող աշխատանքներում ուսումնական տեսանկյունից իրադարձությունների վերլուծություն՝ գրեթե չի կատարվում [5, 10, 41, 52, 78, 86, 172]:

Պարթև Արտավազն Ա (128 – 123 թթ.) թագավորի որդի Միհրդատ Բ Մեծի (123 – 87 թթ.) բանակը 112 թ. ներխուժում է Հայաստան: Կատաղի մարտերում հայերին հաջողվում է հասնել, ըստ եռթյան, ուսումնական հավասարության, որից հետո դանարարեն դուրս մղել ահեղ հակառակորդին երկրից: Սակայն պարթևներին բախտը ժպտում է, նրանց հաջողվում է 111 թ. պատահաբար գերի վերցնել հայոց թագաժառանգին՝ Տիգրանին, որը, ըստ երևոյթին, հայոց գորաբանակներից մեկի հրամանատարն էր: Պարթևներին չի հաջողվում գրավել ոչ՝ «յորանասուն հովիտը», ոչ՝ ընկճել հայկական բանակը: Սակայն իրենց ձեռքբերումն էր բավարար էր, որ իրենք զոհ մնան պատերազմի երից՝ իրենց ձեռքում էր հայկական զահի ժառանգը:

Ուսումնական գործողություններ իմանականում ծավալվում էին Հայաստանի տարածքում: Պարթևական բազմաքանակ և մարտունակ հեծելազորը անկարող էր գրավել հայկական հզոր ամրոցները և բերդաբարձրները: Ուստի պարթևները ասպատակում էին երկիրը և փորձում ճակատամարտել հայերի հետ դաշտավայրերում, ուր կարող էին օգտագործել իրենց հզոր հեծելազորի հարգածային ուժը:

Հայկական բանակի ավելի փոքրաքանակ հեծելազորը հաջողությամբ պայքարում էր պարթևների դեմ հիմնականում



Նկար 1.7. պարթև Միհրդատ Բ Մեծ արքայից արքան

իր բազմաթիվ հետևակի օժանդակությամբ՝ անհրաժեշտության դեպքում հենվելով երկրի պաշտպանական կառույցների՝ ամրոցների և բերդաբաղաքների համակարգի վրա: Պատերազմի ընթացքը ցույց տվեց, որ հայերին չի հաջողվում վերջնական պարտության մատնել արագաշարժ պարթեներին: Պարթեներն էլ չեն կարողանում ընկճել հայկական պաշտպանական ամրություններից իրենց հակահարված հասցնող հայկական բանակը: Պատերազմի երկրորդ տարում վիճակը սկսեց մտնել փակուղի, և հայերը սկսեցին դանդաղ հասնել առավելության՝ ի հաջիվ սեփական երկրի մարդկային, տնտեսական և բարյա-քարոզական միջոցների գերազանցությանը:

Այս պարագայում մարտերից մեկի ժամանակ պարթեները գերի են վերցնում թագաժառանգ Տիգրանին, ինչը պարթեների համար լավ առիթ էր հանդիսանում պատերազմը դադարեցնելու համար: Պարթենական գորքերը դուրս են բերվում Հայաստանից: Տիգրանին տանում են Միհրդատ Բ Մեծի արքունիք: Չնայած Հայաստանում պարթեների վարած պատերազմի բացարձակ անհաջողությանը (Նրանց չհաջողվեց գրավել ոչ մի տարածք)՝ Տիգրանի գերեվարումը մատուցվեց որպես խոշոր հաջողություն, և պատերազմի ավարտի հաջորդ տարին պարթեն Միհրդատ Բ-ն իրեն հոչակեց արքայից արքա:

Անշուշտ, թագաժառանգին պատանդ պահելով, Միհրդատը Հայաստանի վրա ճնշում գործադրելու արդյունավետ միջոց ձեռք բերեց, որը կանխում էր Հայաստանի հնարավոր հակապարթեական գործունեությունը:

Տիգրանը տասնվեց երկար ու ձիգ տարի մնաց պարթեական արքունիքում, որի ընթացքում իր դուստրերից մեկին կնուրդյան տվեց Միհրդատ Բ-ին: Հայոց թագաժառանգի և պարթեն արքայից արքայի միջև ենթադրում ենք բավականին շերմ հարաբերություններ: Պատանդության տարիների ընթացքում խաղաղությունը երկու թագավորությունների միջև մնաց անխախտ, սակայն ինչպես ցույց տվեց ապագան, մրցակցությունը շմարեց:

Մենք ունենք ևս մեկ ենթադրություն: Թե՛ պարթեն, թե՛ հայոց արքաները իրենց զգում էին Աքեմենյանների փառքի ժառանգորդը: Ըստ երևույթին, դա ծնում էր ոչ միայն մրցակցության, այլև միասնության զգացման:

Այս պատերազմի մասին Պոմպեոս Տրոգոսի «Փիլիպպոս» պատմություններ» շպահպանված երկից հատվածներ է բերում Հուստինոսը.

3-6. Արտավածին հաջորդեց նրա որդի Միհրդատը, որն իր գործերի համար կոչվեց Մեծ: ... սա մեծ բաջությամբ վարեց հարեանների հետ բազմաթիվ պատերազմներ ու Պարթևական թագավորությանը միացրեց շատ ժողովուրդներ: Նույնպես և սկզբութացինների հետ նա մի բանի անզամ հաջողությամբ պատերազմեց և վերծիննդիր եղավ նախորդների վիրավորակերների համար: Վերջը կոչվեց արտենների բազավոր Արտավագդյան հետ: ՔԱՂՎԱԾՔՆԵՐ, XLII, 2 [17]:

Միհրդատ Բ Մեծը մ.թ.ա. 110 թ. արքայից արքա տիտղոսը ընդունելուց հետո ավելի հարձակողական բաղարականություն է որդեգրում նաև Միհրայի հանդեպ: Կարծես պարթենները հավակնում են վերականգնել Աքեմենյանների շուրջ և փառքը: Արտաշեսյաններին դա դուր չի գալիս, չէ՞ որ նրանք նույնպես անհաղորդակից չեն Աքեմենյանների փառքին: Հայրական գծով նրանք սերում են ազնվազարմ Երվանդունիններից, իսկ մայրականով՝ նույն Աքեմենյաններից: Գաղափարական պայքարը հավակնորդների մեջ, մեր կարծիքով, ծագել էր վաղուց և առավել սրացավ առաջին հայ-պարթեական պատերազմի ժամանակ:

Պարթեական արքունիքում ի հայու եկան Տիգրանի բնակության գծերից կարևորագույնները արտակարգ զավածությունը և մտքերը թաքցնելու արտասալվոր ունակությունը: 95 թ. ազատելով ապագա հայոց արքային պատվավոր գերությունից՝ Միհրդատը չէր կարող պատկերացնել անզամ՝ պարթեական պետության ինչ հզոր հակառակորդի ձեռքերն է նա արձակում:

Հետազոյում Տիգրանը, իր ազատության համար հարկադրված զիշելով պարթեններին «յոթանատուն հովիտները», կվերադարձնի դրանք տասը տարի հետո ...

Մենք կարող ենք վստահաբար պնդել, որ Տիգրան Բ-ի (հատկապես սկզբնական շրջանում) տպավորիչ հաջողությունները հնարավոր չեն լինի, եթե չիրականանար Հայաստանի տնտեսական և մշակութային նշանակալի առաջընթացը, որի

Հնորհիվ Մեծ Հայրում կուտակված չլիներ համապատասխան պատկառելի ռազմական ներուժ:

### 1.3.6.Հայկական բանակի թվաքանակը և կառուցվածքը մ.թ.ա. 535 – 95 թթ.

Հայկական բանակի բանակի մասին հայկական աղյուրներից հստակ տեղեկություններ չունենք, որոշ պատկերացում կարելի է կազմել այլազգի սկզբնաղյուրներից մեզ հասած հետևյալ թվերից:

- 521 թ. Դարեւ Ա-ի դեմ ապստամբության ժամանակ հայերը տվել են հինգ ճակատամարտ, որի ժամանակ, ըստ Բեհիստունյան արձանագրության, կորցրել են մեծ բանակով զինվորներ [18, 227].

- 400 թ. (Քսենոփոն. Կիրոպեդիա) – 8.000 հեծելազոր, 40.000 հետևակ, կեսը նիզակակիր, կեսը նետաձիգ: Դաշտային բանակը՝ եշգած բանակի կեսը՝ 24.000 զինվոր [140].

- 331 թ. Գավզամելայի ճակատամարտում պարսկական բանակի կազմում (Շուտֆու. Ալեքսանդր Սակեդոնացու պատմությունը) - մոտ 7.000 հեծելազոր, 40.000 հետևակ: Դաշտային բանակի բանակը՝ 47.000 զինվոր (մոտ է Քսենոփոնի տվյալներին, նույն զորատեսակները) [4, 55].

- 300 թ. Կապադովկիայում հաղթեցին 45.000 կապադովկիացիներին պարտության մատնած մակերնական խոշր բանակին՝ վերականգնելով զահին Հայաստանում ապաստանած թագավորին: Հայկական դաշտային բանակի բանակը՝ մոտ 30-50.000 զինվոր ը.

- 260 թ. ռազմական ուժով Բյութանիայում վերականգնեցին զահին Հայաստանում ապաստանած թագավորին: Հայկական դաշտային բանակի բանակը՝ մոտ 30-50.000 զինվոր ը:

- 201 – 180 թթ. Արտաշես Ա ժամանակ բանակը ոնքորմների է ենթարկվում, ստեղծվում են ծանր հետևակի՝ վահանակիրների գնդեր՝ հոպիտների փաղանգ: Դաշտային բանակի թվաքանակը, ամենայն հավանականությամբ, ավելանում է.

- 165 թ. ճակատամարտ Տմրիքում Մելսկյանների դեմ՝ 50-60.000 զինվոր դաշտային բանակու մ.

- 111-110 թթ. պատերազմ պարբեների հետ: Հայկական դաշտային բանակի բանակը մոտ 30-50.000 զինվոր ը:

Տարբեր սկզբնաղյուրների համարությունով, հարկան երկրների ռազմական գործի զարգացման օրինաշափությունները հաշվի առնելով, կարող ենք մոտավորապես հանգել հետևյալ եղակացությունների:

Վաղ Արեմենյան ժամանակաշրջանում (մ.թ.ա. մոտ 535 – 410 թթ.) հայկական բանակի թվաքանակի մասին տեղեկություն չի պահպանվել, հաշվի առնելով Տիգրան Երվանդանի որոշիչ օգնությունը Կյուրոսին Աժդահակի դեմ պայքարում՝ մի բանի տասնյակ հազար զինվոր: Հիմնականում զյուղացիներից հավաքագրված բանակ:

Քիչ թե շատ հավանականությամբ կարելի է պնդել, որ Արեմենյանների և Երվանդունիների օրոք (մ.թ.ա. մոտ 410 – 201 թթ.) հայկական դաշտային բանակը մոտ 47-50.000 զինվոր էր, որից 7-8.000 հեծելազոր, և ավելի, քան 40.000 հետևակ, որից 20.000 վահանակիր ու 20.000 նետաձիգ: Հիմնականում զյուղացիներից հավաքագրված բանակ էր, սպայական կազմի և հեծելազորի ընտիր ստորաբաժանումների մի մասը՝ ազնվականներ:

Արտաշեսյանների ժամանակ (մ.թ.ա. 201 – 95 թթ.) հայկական բանակը զգալիորեն մեծացել էր, ստեղծվել էր մարտունակ ծանր հետևակ՝ վահանակիրների զնդեր:

Առաջին Արտաշեսյանների ժամանակաշրջանի բանակը կարելի է պատկերացնել հետևյալ ձևով: Սուս երկու, երկու և կես անգամ ստվարացել էր հեծելազորը, որը հատկապես անհրաժեշտ էր սելևյաններին և պարբեներին դիմակայելու համար: Ստեղծվել էին ծանր հեծելազնդեր:

Բանակում կար մոտավորապես 60.000 զինվոր, որից մոտ 20.000 հեծելազոր (ըստ երևությին, մոտ 5.000՝ ծանր) և 40.000 հետևակ: Հետևակը բաղկացած էր 20.000 նետաձիգներից, 10.000 վահանակիրներից ու 10.000 նիզակակիրներից: Հրամանատարական պաշտոնները վարող ազնվականները և բանակի աննշան մասը կազմող որոշ դրանիկ ստորաբաժանումները պրոֆեսիոնալներ էին, մասամբ՝ հիմնականում համայնական

զուղացիներից հավաքագրված զինվորներ: Բանակի մարտավարությունը (նաև Հաննիբալի խորհուրդների և ձեռք բերած փորձի շնորհիվ) էականորեն կատարելագործվել էր:



66

## Գլուխ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԾՈՓՔԻ ՄԻԱՅՈՒՄ  
ՆԱԽՕՐԵՒՅՑ ՄԻՆՉԵՎ ԱՍՈՐԻՔԻ  
ՀՊԱՏԱԿԵՑՈՒՄԸ  
մ. թ. ա. 95 – 83 թթ.

Внутренний мир древней Армении отнюдь не представляет гладкой поверхности стоячей воды. Армения внутри жила с интенсивностью, поразительной для нас, усвоивших созданное западно-европейским тицеславием ходячее мнение о неподвижности восточных народов. Правда, темп армянской жизни ускорялся под влиянием внешних факторов, но наличие особых местных условий и их реагирующая на ход событий роль не может подлежать сомнению.

Н.Я. Марр  
23-го мая 1899 г. [164]

Հին Հայաստանի ներքին աշխարհը իրենից ամեննին չի ներկայացնում կանգնած ջրի հարք մակերես: Ներքուստ Հայաստանը ապրել է ինտենսիվությամբ, որը մեր՝ արևելյան ժողովուրդների անշարժության մասին արեվմտակրոպական սնապարծությամբ ստեղծած հանրահայտ կարծիքը յուրացրածներիս համար ապշեցուցիչ է: Ճիշտ է, հայկական կյանքի տեմպը արագանում էր արտաքին գործոններից, սակայն հասուլ տեղական պայմանների առկայությունը և նրանց՝ իրադարձությունների ընթացքի վրա արձագանքող դերը կասկածի տեղիք չի կարող տալ:

Նիկողայոս Մարր  
1899 թ. մայիսի 23-ը

67

## 2.1. Տիգրան Բ-ի ռազմավարական կոնցեպցիան

Մ.թ.ա. I դ. առաջին կեսի անտիկ աշխարհի ռազմարարական իրադարձությունները այնքան փոխկապակցված էին, որ արդի պատմաբանների բոլոր փորձերը՝ լիարժեք քննել դեպքերի ընթացքը, որիցեւ առանձին էրկրում, ի սկզբանեւ դատապարտված էն անհաջողության: Համակարգերի ընդհանուր տեսությունը պնդրում է, որ հնարավոր չէ համակրողմանի հետագութել մի համակարգ, առանց գերհամակարգում այդ համակարգի հնարավոր բոլոր կապերի ուսումնասիրությանը, այլապէս զրկվում էնք նշանակած համակարգի վրա արտօհամակարգային ազդակների ազդեցության հետևանքները քննելու հնարավորությունից [130]:

Մ.թ.ա. 95 թ. Տիգրանը վերադառնում է հայրենիք, որպէս թագաժառանգ՝ Պարթևստանում անցկացնելով երկար ու ձիգ տասնվեց տարի: Այս տարիները լի էին մտորումներով Հայաստանի ապագայի մասին: Այդ ապագան կերտելու համար բազմարիվ այլ գիտելիքներից բացի, անհրաժեշտ էր նաև լավ իմաստալ սեփական և համաշխարհային պատմությունը: Իսկ օյկումենի պատմության վերջին երեք-չորս դարերի կարևորագույն իրադարձությունները հույն պատմագիրների կողմից նկարագրված էին ամենայն մանրամասնությամբ: Այդ երկերը լայն տարածում ունեին հելլենիստական աշխարհում և ամենայն հավանականությամբ մատչելի պէտք է լինեին նաև Տիգրանին:

Նա պէտք է ծանոթ լիներ Հերոդոտոսի (մ.թ.ա. մոտ 484 – 425 թթ.), Թուկիդիդեսի (մ.թ.ա. մոտ 460 – 396 թթ.), Քսենոփոնի (մ.թ.ա. 430 – 355 թթ.), Պոլիբոսի (մ.թ.ա. մոտ 201 – 120 թթ.) պատմական երկերին, որոնք հասել են նաև մեզ:

Մի շարք կարևոր հեղինակների պատմական երկերը չեն հասել մինչև մեր օրերը, չնայած բավականին տարածված էին հելլենիստական ժամանակաշրջանում, և նրանցից հետագա դարերում օգտվել էին բազմաթիվ հույն, հռոմեացի և այլազգի հեղինակներ, օրինակ՝ Կոտեսիասի (Քսենոփոնի ժամանակակից), «Պարսկականքը» և «Հնդկականքը», զրված մի մարդու կողմից, որը 17 տարի ապրել էր Պարսկաստանում և եղել էր Արտաքսերքսես արքայի պալատական քժիշկը: Այն զրվել էր

մոտավորապէս մ.թ.ա. 396 թ. [286]: Հոյն պատմաբան Պոսիդոնիոսը շարունակել էր Պոլիբոսի պատմությունը, սակայն այս ստեղծագործությունը մեզ չի հասել: Բազմաթիվ հեղինակներ, որոնց մի մասի միայն անունն էր պահպանվել, նկարագրել էին Ալեքսանդր Սակեդոնացու արշավանքները, դիադոխների պայքարը, հելլենիստական պետությունների պատմությունը [257, 286]:

Արխատուտելի (մ.թ.ա. մոտ 384 – 322 թթ.), մի շարք երկեր նույնպէս կարող էին զրավել հայոց թագաժառանգի ուշադրությունը, հատկապես «Պոլիտեաները» և ընդհանրացնող՝ «Պոլիտիկան»:

Լուկիոս Կինկիոս Ալիմենուսը (մ.թ.ա. III դար), հռոմեացի պատմաբան էր, որը գրել էր հունարեն, նա մասնակցել էր Երկրորդ պյունիկյան պատերազմին, գերի էր ընկել կարթագենացիների մոտ, շփվել Հաննիբալի հետ: Նրա երկերը նոյն պէս բավականին լայն տարածում ունեին Միջերկրականի ափերին:

Բացի պատմականից, մ.թ.ա. II – I դր. հելլենիստական աշխարհում կար նաև ընդարձակ զեղարվեստական գրականություն, որտեղ երբեմն կային կարևոր տեղեկություններ տարբեր երկրների մասին: Հելլենիստական աշխարհի ընթերցանության միրահարները ունեին լայն ընտրանի՝ Հոմերոսի հանճարեղ դյուցազնաերգերից մինչև դրամա և երգիծանք:

Պոնտոսում կարող էին լինել հոյն պատմիչներ, որոնք նկարագրում էին ոչ միայն հարազատ բաղարի, այլև տարածաշրջանային իրադարձությունները:

Վերջապէս, Հայոց և Պարթևաց արքունիքները չեն կարող չունենալ ինչ-որ զրառումներ դինաստիայի կարևորագույն իրադարձությունների մասին, որոնցից կարող էր օգտվել Տիգրանը: Այն, որ արամեերեն և հունարեն լեզուներով այդպիսի գրականություն գյուղուուն ուներ, կասկածից վեր է:

Անշուշտ, նա ծանոթ էր հայրենի, իսկ Պարթևստանում գտնվելու տարիներին նաև Իրանում ապրող ժողովուրդների դյուցազներգությանը ու բանահյուսությանը:

Մեծ նշանակություն ունեին տարբեր երկրներում ճանապարհորդած առևտրականների պատմածները և նպատակային հարցուփորձը:

Դա նշանակում էր, որ իր գահակալության սկզբին, Տիգրանը օկումենի պատմական և արդի բաղարական զարգացում-

Ների մասին ուներ բավարար տեղեկատվություն:

Բացի հայերենից, Տիգրանը առնվազն լավ տիրապետում էր հունարենին ու պահյակերենին:

Այս ամենը մեզ տալիս է լավ կրթված, բանիմաց, հետաքրքրասեր անձնավորության կերպար: Տարբեր պատմիչների երկերից տեղեկանում ենք, որ Տիգրանը անկաշկան շփվում էր բազմաթիվ դիվանագետների, բանաստեղծների, փիլիսոփաների և այլոց հետ՝ միայն անհրաժեշտության դեպքում հիշեցնելով իր գրադեգոված դիրքի բացադիկությունը: Իր շքեղ արքունիքում տիրում էր հելլենիզմի և ամենակարևորը՝ հունականացված ու հայկականացված արքենիզմի ոգին:

Այսպիսի անձնավորությունը ընդունակ էր իր մտավոր տեսադաշտում պահել ողջ օյկումենում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունները, վերլուծել և ըմբռնել ժամանակի և տարածության մեջ կատարվող այդ իրադարձությունների թաքնված շարժառիթները և իմաստը:

Տիգրանը տեսնում էր՝ ինչպես արդեն ավելի քան մեկ դար, կործանելով իր ճանապարհին կանգնած բոլոր պետությունները, ծավալվում էր դեպի արևելք Հռոմը: Որքան համար դիմայության էր հանդիպում, այնքան անողոք էր Հռոմի հաշվեհարդարը հաղթանակից հետո: *Vae victis* (պարտվածներին՝ վիշտ)՝ սա հոռմեական ասացվածք էր [70], որի արդարությունը ժամանակակիցներից ոչ մեկի մոտ կասկած չէր հարուցում: Դիմայրող պետությունները կամ ցեղերը երբեմն ունենում են ժամանակավոր հաջորդություններ և փայլուն հաղթանակներ: Սակայն ոչ մի քան չէր կանգնեցնում Հռոմին: Հմուտ հոռմեական դիվանագիտության նախապատրաստած ուղիներով նորից և նորից հոռմեական բանակները համարեն փորձում էին իրենց ուազմական բախտը: Փոխզիջումները՝ կոմպրոմիզը, անհնար էր: Հռոմին կարելի էր կանգնեցնել միայն կործանելով նրան: Պատմության ընթացքը ցույց տվեց, որ Միհրդատը և Տիգրանը շատ լավ էին յուրացրել այդ անհերքելի ճշմարտությունը:

Միաժամանակ, Արևելից դեպի Միջերկրական էր ձգուում ուժեղացող Պարթևատանը՝ այդ ճանապարհին իրեն ենթարկելով տարբեր պետություններ: Զնայած, որպես օրենք, նվաճված պետությունները մտնում էին Պարթևատանի կազմի մեջ՝ պահ-

պանելով իրենց ներքին կառուցվածքը, սակայն Պարթևական տերությունը հոռմեականից պակաս եռանդ ու համառություն չէր ցուցաբերում այդ երկրների նվաճման և շահագործման գործում:

Մ.թ. 94 թ. կայացած Հայաստանի և Պոնտոսի՝ Տիգրանի և Միհրդատի դաշինքը, իմ կարծիքով, հատկապես ուղղված էր եղել համաշխարհային տիրապետությանը հասնելուն, որի համար նախատեսվում էր ընկեր Հռոմեական և Պարթևական տերությունների դիմադրությունը իսկ հետազայտում նաև նվաճել և ոչչացնել կրանց (հատկապես Հռոմը): Այս նպատակը դաշնակից արքաների մոտ հղացել էր մ.թ. 94 թ. վերջին և, վերջնականապես, հստակեցվել էր 80-ականների սկզբին:

Մեր այս եզրակացությունը այնքան անսպասելի և հանդուզ է հնչում, որ պարտավոր ենք ներկայացնել առաջարկվող տեսակետի հանգամանալից հիմնավորումը:

Ո՞վ էր Տիգրանը: Հզորացող մեծ երկրի գորավար-զահաժառանգ՝ իր ակունքները Արեմենյանների և Երվանդունիների միջացքը հասցնող միջն աստվածները: Գերության մեջ նա շփվում էր մի միջավայրում, ուր երազում էին վերականգնել Արեմենյան տերության սահմանները: Հերոս էր իր պապը՝ Արտաշես մեծ արքան: Հերոս էր նաև պարք արքայից արքա Միհրդատ և Արշակունին, որին իրենք՝ Արտաշեսյանները կարողացել էին հաջորդությամբ դիմակայել մարտում: Ինչ ու աստվածները պետք է օգնեն միայն պարթիկն: Տիգրանը նովսպես Արեմենյանների շառավիղն էր: Եթե պարքեները դեռ պետք է ապացուցեն իրենց արեմենյան ծագումը, ապա ինքը դրա կարիքը չունի, դա ակնհայտ է: Իսկ աստվածները օգնում են միայն ընտրյալներին: Տիգրանը ընտրյալ է, տեսեր՝ ինչպես են շողորդություն իրեն նույնիսկ հզորները, և ասում շատերը թէ՝ հայոց, թէ՝ պարթևաց արքաներում: Տիգրանը գուսապ է, հավասարակշռված, անկեղծ ու հավատարիմ ընկեր և, ամենակարևորը, ձառներում իր մորերը գերազանց թարցնող անձ: Շուտ ընկալում է նորը, հիշում անհրաժեշտը: Մ'ի թէ մեծն Կյուրոսը կամ Ալեքսանդր Մեծաւը ունեցել են ավելի մեծ թագավորություն,

քան ինքը, երբ իրենց պայքարով հասել են երկրային փառքի զագաթնակետին: Ամենին: Իր կրթությունը, որը ավանդաբար ստանում են հայոց արքունիքում բոլոր ազնվականները, նոյնպես է հիմնված է հույս իմաստունների ուսմունքների վրա: Այստեղ էլ նա չի զիջում մեծն Ալեքսանդրին: Տիգրանը պատրաստվում է հետաքրորդյան դեպքում առաջ անցնել գոռող պարթեց: Իսկ Հոռոմը ընկալվում է մշուշի մեջ, նա այնքան կյուրական չէ, ինչքան Պարթևստանը: Սակայն հոյսն պատմիչների գրքերից ցայտում է հոռոմեացինների վիթխարի ուժը: Տիգրանը լավ չի հասկանում այդ ուժի աղբյուրն ու էռթյունը, սակայն մտովին աշալըօրեն հսկում է Արեմուտքի քաղաքական բոլոր զարգացումները:

Տիգրանը կվերականգնի Արեմենյան տերությունը, բայց չի կրկի այն: Նա հայերի գերիշխանությամբ ու հելլենների օգնությամբ կստեղծի տեղացինների և հելլենների միացալ թագավորությունը, ինչպես ցանկանում էր վերջին արեմենյան միապետը մեծն Ալեքսանդր Մակեդոնացին:

Միհրդատ Զ Պոնտացին նոյնական երազում էր Ալեքսանդր Մակեդոնացու փառքի մասին: Իր մեջ կրելով պարսիկ մեծատոհմիկի և հունական արյունը՝ իր մանկության և պատանեկության լավագույն տարիները Փոքր Հայքում անցկացրած թագավորը հավասարապես իրեն հարազատ էր համարում և՝ արեմենյանների ժառանգությունը, և՝ հայկական ողին, և՝ հունական մտրի և գրձի նվաճումները: Պոնտոսի թագավորության արագ վերելքը, հսկայական ռազմաքաղաքական և տնտեսական նվաճումները, հելլենիստական գիտության և արքեստի հովանավորումը խիստ բարձրացրել էին նրա հեղինակությունը հելլենիստական աշխարհում և բուն Հունաստանում: Պոնտոսը, որը իր մեջ արդեն ներառել էր սևծովյան գրեթե ողջ երկրները, նոյնիսկ զաղափարապես սկսվեց հակադրվել Հոռոմին: Միհրդատը իրեն տեսնում էր որպես առաջնորդ հելլենական միապետ, որը պայքարում էր Հոռոմի ուսնագությունների դեմ հանուն համայն հելլենական աշխարհի: Իսկ Հոռոմի դեմ հաջողությամբ պայքարել կարելի էր՝ միայն ոչնչացնելով նրան: Միհրդատի հուզումնաշատ, կրբու և անվախ անձնավորությունը գիտակցում էր այս պայքարի վտանգը, բայց նաև ձգուում էր դրան: Միհրդատը անվերապահորեն հավաստում էր և՝ իր կարողություններին, և՝ ամենակարևորը, իր ճակատա-

#### գրին:

Այսպիսին էին այս արտակարգ ընդունակությունների տեր երկու թագավորները, որոնց լուծումների մեջ կար, համենայն դեպքու, մի էական տարբերություն Տիգրանը գուսապ էր և միշտ իրաւու, Միհրդատը անհամեմատ ավելի անողոր և անհամբեր: Սրան պետք է ավելացնենք մի վճռորոշ տարբերություն ևս. Տիգրանի համար հայրենիքը ավելի բարձր էր իր անձից, Միհրդատի համար հայրենիքը ինքն էր:

Ե՞վ Տիգրանը, և՛ Միհրդատը քաջ գիտակցում էին, որ իրենց պետությունների ուժերը առանձին չեն կարող դիմակայել պիտիյան հզոր տերությունների դեմ: Հաջողության հասնելու միակ հնարավորությունը միասնության մեջ էր: Այստեղից էր բիտմ այս միասնության ամրությունը և 28-ամյա հարատևումը:

Միհրդատը պետք է ուժեղ հարված հասցներ Հոռոմական հանրապետությանը Փոքր Ասիայում ու Հունաստանում և միացներ այն իր տերությանը, որը Պոնտոսին վերջնականապես կվերածեր հզոր կայսրության: Տիգրանը պետք է ընկճեր և իրեն ենթարկեր Պարթևական տերությունը, խեր նրանից ողջ արևմտյան Բրանը և Միջազգետքը, որից հետո նա ժառանգորդ էր դառնում Արեմենյանների՝ նախկինում զբաղեցրած գրեթե բոլոր տարածքներին: Տեսու նա կզրավեր Միհրիան, որը Հայաստանին կվերածեր ժամանակաշրջանի հզորագույն կայսրությանը: Երկու արքաների հաջողության դեպքում իրենց պետությունների համատեղ տարածքը կգերազանցեր և՝ Արեմենյանների, և՝ Ալեքսանդր Մակեդոնացու տերությունները: Այսպիսի ծրագրեր ունենալու համար երկու արքաներն էլ պետք է ունենային ամուր հիմք: Ապազա հետազոտությունների միջոցով անհրաժեշտ է բացահայտել այս աննախադեպ որոշման հիմքը ընկած զաղափարական, տնտեսական, ռազմական և ռազմա-աշխարհագրական հիմքերի մանրամասնությունները:

Միհրդատը Պոնտոսի և Փոքր Հայքի միացալ պետությունների արքան էր: Ինչպես Տիգրանը Միհրիայում հանդիսանում էր Միհրիայի թագավոր, այնպես էլ Միհրդատը դիտվում էր որպես Փոքր Հայքի թագավոր: Փոքր Հայքի հայկական 10.000 այրուածին մշտական մասնակցում էր նրա բոլոր արշավերին և կազմում արևտեսական գորքի ընտիր՝ ամենամարտունակ միափրումներից մեկը [59, 169, 173]: Փոքր Հայքի հետևակը

կայազորներով կանգնած էր Միհրդատի տերության կարևորագոյն քաղաքներից մի քանչափ՝ ապահովելով նրա տիրապետությունը [173]: Այդախով, Միհրդատը, որը իր հայ հաստակեների հետ շփում էր իրենց մայրենիով և դաշնակից էր հայոց մեծ արքա Տիգրան Բ-ին, օրինաշափորեն ընկալվում էր որպես երկրորդ հայկական պետության միապետ:

Պոնտոսը և Հայաստանը, լինելով այդքան տարրեր, միավորված էին ոչ միայն իրենց արքաների միությունով, այլև իրենց երկրների ազգաբնակչության կարևոր հատվածների ընդհանուր հայկական հայրենիքով, համատեղ արեւելյան անցյալով, մակեդոնացիների՝ դիադոխների և էպիգոնների դեմ համատեղ հայրական պայքարով, փորրասիական մշակութային ընդհանրություններով, Պոնտոսում և Հայաստանում քաղաքայի հելլենական մշակութային քաղաքականությամբ, և ամենակարևորը՝ թշնամիների դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտության զգացումով:

Հզոր կայսրություններ ստեղծելու համար բավարար չեր միայն ռազմական ուժը, անհրաժեշտ էր զաղափարական հիմնավորում, որը կարելի էր գոնել Ալեքսանդր Սակերնացու միացալ հունա-իրանական երկմիասնության մեջ, որը կարելի էր բնորոշել որպես ընդլայնված և հելլենականացված արեւելյականի: Արևելյան Միջերկրականի գրեթե համատարած հելլենիզմը իր գոյության ավելի քան երկու դարում դրա համար արդեն պարարտ հող էր ստեղծել: Տիգրանի և Միհրդատի հաջողությունը կարող էր վերակենդանացնել Ալեքսանդր Սակերնացու երազանքը՝ միացնել Արեւելը և Արևմուտքը: Սակայն նրանք պարտվեցին, և դա տեղի չունեցավ: Այդ երազանքը հետազոտ ժառանգեց և մասնակիորեն իրագործեց հայրանակած Հռոմը:

Դատմությունը ընթացավ այլ ճանապարհով: Միհրդատը և Տիգրանը պարտվեցին, և օյկումենի թեալոյնեց հոումահրանական կատաղի հակամարտության յոթարյա փուլը, որի ընթացքում նույնիսկ չնկատվեց Հին աշխարհի վախճանը և նորի՝ Միջին դարերի ծնունդը:

Ա. թ. ա. I դարում, Հռոմեական հանրապետությունը իր 45 -

55 մլն. բնակչությունով և Պարթևական տերությունը իր 20-25 մլն. ազգաբնակչությամբ, մոլորակի խոշորագույն պետություններից էին: Նրանց հավասար էին կամ գերազանցում էին միայն Զինական կայսրությունը և Հնդկաստանի ամենախոշոր պետությունները:

Խոշոր պետություններ էին նաև Տիգրանյան Հայաստանը և Միհրդատյան Պոնտոսը, որոնք, սակայն, բնակչության քանակով և միջոցներով զգալիորեն զիջում էին իրենց ախտանիւթին: Սակայն պատմությունը ոչ ամեն ինչ է հաշվարկում ուժի տրամաբանությամբ, օրինակ, եթե առաջին աշխարհամարտի նախօրեին համեմատելիք Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի մարդկային և նյութական միջոցները Անտանտի պետությունների հնարավորությունների հետ, ապա առաջինները, պարզապես, պատերազմը չակեր է սկսելու: Սակայն մեզ հայտնի է 1914 թ. իրադարձությունների իրական լութացքը:

Տիգրանը հոյակապ գիտեր Պարթևական տերության ուժեղ և թույլ կողմերը: Նա Պարթևաստանում ուներ բազմաթիվ հետախոյներ, գործակալներ, կողմնակիցներ և, պարզապես, ընկերներ, միաժամանակ, անկասկած, նաև բազմաթիվ թշնամիններ: Տիգրանը, գրեթե երկու տասնամյակով, խիստ թուլացրեց պարթևական պետությունը, խլեց նրանցից

բազմաթիվ երկրամասեր, նպաստեց պարթևներին ենթակա մի շարք երկրների անկախացմանը: Սակայն դա բավարար չէր Իրանին ոչ միայն վերջնական տիրանալու, այլ նաև պարթևներին գոնե վստահաբար վերահսկելու համար: Պարթևաստանի կազմում մնաց կենտրոնական Սիցագետը՝ Բարեկոն քաղաքն իր շրջակայրով: Խիստ թուլացած, սակայն ընդունակ արագ վերականգնելու իր ուժերը, պարթևական Իրանը զսպված էր, սակայն ոչ ընկճված: Զիազողվեց Տիգրանի զաղափարական երսանիան՝ հայոց արքայի գերակայությամբ վերականգնել նախկին Արևելյան տերության երբեմնի հզորությունը:

Ս.թ.ա. 92 թ. կայացած հոումեացիների և պարթևների բանակցությունները և պայմանավորվածությունները ուղղմական հա-



Նկար 2.1. Տիգրան Բ Մեծ

մագործակցության մասին ամենենին պատահականություն չէին: Արդեն ուրվագծել էին Միհրդատ-Տիգրանյան համագործակցության ուժագծերի հիմնական տարրերը, որոնք պահանջում էին Հռոմին և Պարթևստանին անհապաղ անցնել կտրուկ հակագրեցության:

Արքաների պատրաստության մասշտաբը հատկապես անհանգուացնում էր Հռոմին: Նա էլ. մ.թ.ա. 89 թ. սանձազերծեց առաջին հռոմեա-պյուտական պատերազմը, որը տևեց մինչև մ.թ.ա. 85 թ.: Ա.թ.ա. 86 թ. Տիգրանը սկսեց իր հումկու զրոհը պարթևների դեմ, որը ավարտվեց մ.թ.ա. 84 թ. հայ-պարթևական պայմանագրով:

Կայացած պայքարում Հռոմը հաղթեց Պոնտոսին, Հայաստանը՝ Պարթևստանին: Սակայն այս երկու հաղթանակն էլ վերջնական չէին, հակառակորդը խիստ թուլացել էր, սակայն չէր կործանվել: Դա ցույց տվեցին հետագա դեպքերը. հռոմեացիների փորձը ստուգել Պոնտոսի պահպանված ռազմական կարողությունը սահմանափակ՝ երկրորդ պոնտական պատերազմում (մ.թ.ա. 83 – 81 թթ.) Հռոմի համար անփառունակ վախճան ունեցավ:

Այդ տարիներին Տիգրանը միացնում է Հայկական տերությանը Միհրիան և հասնում է իր հզորության գագաթնակետին (սակայն Արեւելում պարթևների կարողությունները՝ անհանգուացնություն պատճառել Տիգրանին, դեռ սպառված չէին): Երկու կողմերն էլ տեսագին պատրաստվում էին հետագա պայքարին:

Հանգուցարուծումը տեղի ունեցավ մեկ տասնամյակում՝ մ.թ.ա. 74 – 64 թթ. պատերազմների ընթացքում, երբ Պոնտոսը վերջնականապես պարտվեց և կործանվեց, իսկ Հայաստանը, միաժամանակ պայքարելով Հռոմի և Պարթևստանի դեմ, Տիգրանի ռազմաբարաքական հանձարի շնորհիվ պահպանեց իր անկախությունը՝ կատարելով բարդ ռազմաբարաքական անցում դեպի Հռոմ, իսկ հետո հակադրվելով Հռոմին՝ սկզբում գաղտնի, հետո բացահայտ ի օգուտ ավելի թույլ՝ նշանակում է



Նկար 2.2. Միհրդատ Զ Եվպատոր

Հայաստանի համար ավելի անվտանգ Պարթևստանին՝ ապահովելով դրանով իր ապագան:

Հետազոյում դարեր շարունակվող պայքարում իրանցիները և հայերը դեռ կստիպեն Հռոմին ընդունել Եփրատյան Վերջնասահմանի իրողությունը:

Ա.թ.ա. 93 – 64 թթ.՝ շուրջ երեսնամյա ծանր պայքարում, հենվելով դաշնակից Պարթևստանի որոշ օգնության վրա, Հռոմեական հանրապետությունը հաղթող դուրս եկավ Արեւելյան Միհրդարազնվորում ծավալված պատերազմներում: Շուտով նրան կիակաղըրվեր պարթևների կողմից միավորված իրանը:

Պոնտոսը մտավ հռոմեական պետության կազմի մեջ, իսկ Հայկական պետությունը դարձավ օկումենեի այն երրորդ խոշոր ռազմաքաղաքական ուժը, որի կողմնորոշումից այսուհետ մեծապես կախված էր առաջին երկուսի ռազմական հակամարտության ելքը: Հետազոյում, Հայաստանի արտաքին քաղաքական վիճակի այս յուրահատկությունը կամրազվեր Հռոմի և Պարթևստանի միջև կայացած համաձայնությամբ՝ Մեծ Հայքի քաղաքների գահակալության կարգի և իրավունքների ճանաշման վերաբերյալ:

Հռոմը իր պատմության մեջ ուներ քազմաթիվ ուժեղ թշնամիներ: Սակայն հատուկ ատելությամբ նա վերաբերվում էր իր այն թշնամիներին, որոնք ծրագրում էին Հռոմեական պետության կործանումը: Այդպիսին էր Հաննիֆրալը, այդպիսին էին նաև Տիգրանը և Միհրդատը, սակայն հռոմեական հասարակական կարծիքում որպես իրենց հիմնական և անզիջում թշնամի ընկալվում էր հատկապես Միհրդատ Զ Եվպատորը:

Իրականությունը չէր վրիպել միայն ամենախորաբաժանց հռոմեական քաղաքական գործիչներից, ինչպիսին էր, օրինակ՝ Կիկերոնը (Cic. Pro P. Sestio oratio, 27, 58), որը Տիգրանի մասին խստիխ շեշտում էր՝ «... և ինքնին նա շատ զորել էր (ամենի) (Hic et ipse per se vehementer fuit)» և «ինքը հռոմեական ժողովոյի թշնամի (et ipse hostis fuit populi Romani)», որը «պայքարեց զրեթե տիրակալության համար (qui de imperio paene certavit)» [34]:

Տիգրանի հետնորդները՝ Արտավազդ Բ և Արտաշես Բ-ն ևս վարեցին մեծապետական միջազգային քաղաքականություն, սակայն այն իր հիմքում արդեն զուտ պաշտպանական էր և

հիմնված էր պարթևների հետ համագործակցության վրա:

Հաննիբալի փայլուն հաղթանակներից հետո երբեք Հոռմի ճակատագիրը այսքան վտանգված չէր: Ռազմական գործողությունների մասշտաբը գերազանցում էր Երկրորդ պյունիկյան պատերազմի դեպքերը, իսկ պարբարը վարվում էր նույն անողոք վճռականությամբ:

Միհրդատ-Տիգրանյան պատերազմները մանրամասն, բայց միակողմանի լուսաբանված են հոռմեա-հունական պատմագրության կողմից, որը բույլ է տախս վերականգնել հիմնական իրադարձությունների ամենահերախավոր ընթացքը՝ վերջապես ընդմիշտ ավարտելով Միհրդատի և հատկապես Տիգրանի անարդար, երբեմն ծաղրանկարային նկարագրության ավանդույթը արդի պատմագրության մեջ:

Ժամանակի մեծագույն միավաները իրապես արժանի են ավելի արդար, գիտականորեն հիմնավորված անկողմնակալ գնահատականի:

Տիգրանը ռազմաքաղաքական (նաև տնտեսա-մշակույթային) ծրագրերի ռազմավարությունը կառուցում էր իր ժամանակաշրջանի համաշխարհային քաղաքականության վերլուծության հիման վրա, որտեղ հայկական քաղաքականության համար կարևորվում էին հետևյալ գործունները.

1...Հոռմի առաջխաղացումը դեպի Արևելք.

Մ.թ.ա. III-րդ դարի վերջին տասնամյակներին, Հոռմը սկսում է մտնել Արևելյան Միջերկրածովյան քաղաքականության ոլորտը:

Մ.թ.ա. 200 թ. Հոռմը միջամտում է Մակեդոնիայի ընդհարմանը Պերգամոսի և Հոռոսի հետ վերջիններին կողմից: Շագում է Երկրորդ Մակեդոնական պատերազմը (մ.թ.ա. 200 – 197 թթ.): Մակեդոնիան պարտվում է, և Փիլիպոս Ն արքան, ըստ կերպարված խաղաղության պայմանագրի, հրաժարվում է Մակեդոնիայից դուրս բոլոր իր տիրույթներից, հանձնում հոռմեացիներին իր ռազմական նավատորմը և վճարում 1.000 տաղան ռազմատուգանը [195, 202]:

Հոռմեացիների հաջողությունները անհանգստացնում են Արևելյան Միջերկրածովյան ամենահզոր տերության՝ Սելևկյան քաղաքագրության արքա Անտիոքոս Գ-ին: 193 թ. հոռմեացիների

դեմ ապստամբում են կտորիացիները (193 – 191 թթ.): Անտիոքոսը, հովար դնելով հովար օգնության վրա, 192 թ. փոքր՝ 10.000 զորքով իջնում է Հունաստան, սակայն գրեթե բոլոր հովարները պահպանում են հավատարմությունը Հոռմին: Ակսվում է հոռմա-սկրիբական պատերազմը (192 – 190 թթ.), որտեղ ինքը, Անտիոքոսը, 191 թ. կրում է պարտություն Թերմոպիլեն և հարկադրված է լինում լրել Հունաստանը: 190 թ. Փոքր Ասիայում՝ Մագնեսիայի մեծ ճակատամարտում, նա կրում է ծանր պարտություն և կերպում խիստ անքարենպաստ Ապամեայի պայմանագիրը, որով հրաժարվում է իր եվրոպական և փոքրասիական բոլոր տիրույթներից հօգուս Հոռմի դաշնակիցներին, վճարում 15.000 տաղանդ ռազմատուգանը (հետաքյանում, Հոռմի պահանջով, մ.թ.ա. 164 թ., Սելևկյանները նույնիսկ կկոտորեն բոլոր մարտական վիճերին և ծովափի պաշտպանության համար կթողնեն միայն 12 ռազմանավա):

Օգուվելով Անտիոքոս Գ-ի ծանր վիճակից և ստանալով հոռմեացիների աջակցությունը՝ 189 թ. իրեն անկախ է հոչակում Արտաշես Ա-ն Մեծ Հայրում՝ վերացնելով ավելի քան մեկ տասնամյակ տևող հպատակությունը (մ.թ.ա. 201 – 189 թթ.):

Մ.թ.ա. 171 թ. սկսվեց Երրորդ Մակեդոնական պատերազմը (171 – 168 թթ.): Մակեդոնիայի քաղաքով Պերսոնը 168 թ. պարտվում է Պիլնայի ճակատամարտում, և հոռմեացիները բաժանում են Մակեդոնիան չորս ոչ մեծ «հանրապետությունների»: Մակեդոնիայի դաշնակից Էսփիրոսը հիմնահատակ կողոպտվեց, իսկ նրա 150.000 բնակիչները քշվեցին ստրկության [202]:

Մ.թ.ա. 149 թ. Հոռմը շիանդութեց նախկինում պարտված Կարթագենի տնտեսական քարգավաճումը և հրահրեց Երրորդ Պունիկյան պատերազմը (149 – 146 թթ.) գրեթե անպաշտան քաղաքի դեմ: Զնայած հերոսական պաշտպանությանը, 146թ. Կարթագենը գրավվեց և հիմնահատակ կործանվեց, սպանվեցին 250.000, իսկ կենտավի մասաւ 55.000 կարթագենացիք վաճառվեցին ստրկության [202]:

Մ.թ.ա. 148 թթ. Մակեդոնիայում ծագում է ապստամբություն, որի դեկապարն էր ուս Անդրիսկոսը (Պերսեսի կեղծ Փիլիպոս որդին): Ապստամբությունը ճնշելուց հետո Մակեդոնիան վերածվում է Հոռմի նահանգի (արովինցիա): Շուտով հակահոռմեական ապստամբությունը տարածվում է Հունաս-

տանով և վերջանում է Աքեյան միության ջախջախմամբ և Հունաստանի կատաղի կողոպուտով: Հունաստանը սկզբում ենթարկվում է Մակեդոնիայի նահանգապետին, հետագայում Հունաստանը հռոմեացիք վերածում են Արայա նահանգի [202]:

Ս.թ.ա. 133 թ. Պերգամոսում մահանում է Ատտալոս թագավորը, որը ժառանգել էր իր թագավորությունը Հռոմին: Երկրում սկզբում է Արիատոնիկի ապստամբությունը Հռոմի դեմ (133 – 129 թ.): Միայն 129 թ. հռոմեացիք կարողանում են ճնշել ապստամբությունը: Պերգամոսի թագավորությունը վերացվում է, ստեղծվում է հռոմեական Ասիա նահանգը [169, 202]:

Ս.թ.ա. 102 թ. հռոմեական ոչ մեծ քանակը և նավատորմը, ընկերով տեղացիների դիմադրությունը, մշտականապես հաստատվում են Լեռնային Կիլիկիայում, որը վերածվում է հռոմեական նահանգի [170]:

Միաժամանակ Հռոմը չի թուլացնում ճնշումը նաև Արևմտյան Միջերկրածովյան: Կատաղի պայքար է ծավալվում Խսպանիայում, որտեղ 197 թ. հռոմեացիները նախկին կարթագենական տիրույթներից կազմում են երկու նահանգ: 179 թ. հռոմեացիները ենթարկում են Կենտրոնական Խսպանիայի ցեղերին, հատկապես կելտիքներին:

151 թ. Լուգիտանիայում (Ներկա Պորտուգալիա) բռնկվում է Վիրիատի զիլավորած հզոր ապստամբությունը, որը մի քանի ծանր պարտություն է հասցնում հռոմեացիներին: Միայն 138 թ. հռոմեացիները կարողանում են ճնշել ապստամբությունը՝ նախապես կազմակերպելով Վիրիատի սպանությունը: Միաժամանակ ապստամբում են կելտիքները և 137 թ. Լումանցիա քաղաքի մոտ գերի են վերցնում մի մեծ հռոմեական քանակ: Միայն 133 թ. Ավիայոն Էմիլիանի հսկայական հռոմեական քանակը գրավում է Լումանցիան և խաղաղեցնում Խսպանիան [170, 202]:

Սորուկների հսկայական կենտրոնացումը Սիկիլիայում և նրանց անողոք շահագրքումը բերում է երկու մեծ ապստամբության՝ 136 – 132 թթ.-ին սիրիացի Էվեր զիլավորում է առաջին ապստամբությունը արքա Անտիոքոս անունով, իսկ 104–101 թթ. սկզբում է Սալլիոսի և Ափինիոսի զիլավորած երկրորդ ապստամբությունը: Երկուսն էլ հռոմեացիները ճնշում են անողոք դաժանությամբ, ուժերի մեծ լարումով [170, 202]:

Ս.թ.ա. 125–118 թթ. հռոմեացիները վարում են ծանր պա-

տերազմ զաղղիացիների դեմ [170]:

Ս.թ.ա. 111–105 թթ. հռոմեացիները վարում են պատերազմ նումիդիացիների դեմ [170]:

Ս.թ.ա. 113–101 թթ. Հռոմը հարկադրված է լինում պաշտպանվել կիմվրերի և տևտոնների գերմանական ցեղերի ներխուժումից, որոնց ջախջախում է հռոմեացի ականավոր զորավար Մարիոսը՝ ողջ մասածներին վաճառելով ստրկության:

Ս.թ.ա. 107–105 թթ. Մարիոսը անցկացրեց հռոմեական քանակի իր նշանավոր ռազմական ուժքորմը:

Ս.թ.ա. 91–88 թթ. բուև Խոտայիայում հռոմեացիները մեծ դժվարությամբ ճնշում են դաշնակիցների ապստամբությունը, սակայն հետագայում համաձայնվում են որոշակի ընդլայնել նրանց իրավունքները:

Այդպես, անընդհատ ծավալվելով Միջերկրականի ավերով, Հռոմը դառնում է այս ընդարձակ տարածաշրջանի ամենամեծ և ուժեղ պետությունը: Հռոմեական նվաճման վտանգը մոտենում է Արևելյան Միջերկրածովի մնացած պետություններին:

2....Պարթևաստանի առաջխաղացումը դեպի Արևմտուք.

Ս.թ.ա. III-րդ դարի կեսերին Սելևկյանների հսկայական պետությունը իր հյուսիս-արևելյան տարածքների մեծ կորուստ ունեցավ: Այստեղ մ.թ.ա. 247 թ. ապստամբեցին իրանալեզու պարթևները և ստեղծեցին իրենց պետությունը, որը 238 թ. արդեն միահեծան կառավարում էր Արշակ Ա-ն:

228 թ. Սելևկոս II-ի արշավանքը կկործաներ Պարթևաստանի Տրդատ Ա թագավորին, եթե Միջին Ասիայից վրա ջահաներ ազգակից իրանալեզու քոչվոր ցեղերի ռազմական օգնությունը: 209 թ. պարթևները պարտվեցին սելևկյան հզոր արքա Անտիոքոս Գ-ի գորքերից: Արտաքան Ա կարողացավ հաշուություն կնքել երա հետ՝ միայն զիջելով իր տիրությների մի մասը: Հաջորդ թագավորների ժամանակ Պարթևաստանը դանդաղ ուժեր էր հսկացրում, և աշխարհակալ Մեծ Պարթիայի նա վերածվեց արդեն Սիրիատ Ա Արշակունու օրոր (171 – 138 թթ.), եթե տարածվեց Հինդուկուշի լեռներից մինչև Եփրատ:

Հրահատ Բ-ն (139 – 129 թթ.), 129 թ. ծանր պարտության մատնեց սելևկյան Անտիոքոս և թագավորին: Սակայն պարթևների առաջխաղացմանը դեպի Արևմտուք խանգարեց Կենտրո-

նական Ասիայի տափաստաններից Պարթևստանի վրա հարձակվող բռչվորների հզոր ալիքը, որին զոհ գնացին Հրահատ Բ, և նրա հաջորդ՝ Արտարան Բ թագավորները (128 – 124 թթ.):

Քոչվորներին վերջնական հարել հաջողվեց միայն Սիհրդատ Բ Մեծ արքային (124 – մոտ 88 թթ.), որը սկսեց լայնածավալ էքսպանսիա նաև Արևմուտքում [34]: Հենց Սիհրդատ Բ-ի ժամանակ վերջնականացես Պարթևստանը դարձավ աշխարհակալ մեծ պետություն, որի շահերը անխուսափելիորեն պետք է բախվեին Հայաստանի և Սելյան պետության շահերին:

Այդպես, անընդհատ ծավալվելով դեպի Արևմուտք, Պարթևստանը դառնում էր տարածաշրջանի ամենամեծ և ուժեղ պետությունը: Պարթևական նվաճման վտանգը մտնում էր նաև Արևելյան Միջերկրածովյան որոշ պետություններին:

3....Պոնտոսի արտաքին քաղաքականությունը:

Ս.թ.ա. 323թ.՝ Ալեքսանդր Սակեդոնացու մահվանից հետո, ոմն Սիհրդատ Արեմենյան ցեղից փախչում է Կապատովկիա, որտեղ գրավում է Օլգասա լեռան ստորոտին գտնվող լավ ամրացած Կիմիատա ամրոցը: Նրա անունն էր Սիհրդատ Ա Քտիստ (Հիմնադիր) և Կապատովկիայի հյուսիսում՝ իր փորձիկ պետությունում, նա ապրում է մինչև խորը ծերություն՝ 84 տարի [169]:

Սիհրդատ Քտիստի որդին՝ Սիհրդատ Բ, Պոնտական պետության իրական հիմնադիրն էր: Նրան հաջողվեց ենթարկել իրեն մոտակա կապատովկիական և պաֆլագոնական որոշ տարածքներ՝ Իրիս գետի հովիտը Հյուսիսային Կապատովկիայում և Ամսիադա գետի հովիտը Հյուսիսային Պաֆլագոնիայում: Ակզբանական շրջանում երիտասարդ պետությունը դեպի ծով ելք չուներ: Սիհրդատ Բ, ելեկով իր տնտեսական և ուգմավարական շահերից, սկսում է օգնել և պաշտպանել մերձափնյա հունական քաղաքներին, որի շնորհիվ մ.թ.ա. 280 թ. կերպում է «Հյուսիսային լիգա» դաշինքը սևծովյան մի շարք քաղաքների՝ Հերակլեայի, Քնուսի, Տիրայի և Բյութանիայի Զիրոյետ թագավորի հետ: Արդեն Սիհրդատ Բ-ի որդի Արիոբարգանին հաջողվում է ձեռք բերել սևծովյան ափի առաջին քաղաքը՝ Ամաստրիան, որն իրեն հանձնում է հենց քաղաքի կառավարիչը [167, 169]:

Ս.թ.ա. 275 – 270 թթ. եզիստական թագավոր Պտղոմեոս Ֆիլադելֆի ուզմարշավը Փոքր Ասիայի սևծովյան ափ հանդիպում է պրևուական գորքերի և իրենց օգնության հասած զալատների կատարի դիմադրության և ավարտվում վերջիններիս լիակատար հաղթանակով [169]:

Ս.թ.ա. 250 թ. Արիոբարգանը գրիվում է զալատների դեմ մղվող պատերազմում, և իշխանությունը անցնում է մանկահասակ Սիհրդատ Գ թագավորին: Պոնտական թագավորության գոյության համար այս ծանր պահին օգնության են հասնում հունական որոշ քաղաքները: Սիհրդատ Գ այնքան է ուժեղանում, որ 220 թ. արդեն անցնում է որոշ հարավային սևծովյան հունական քաղաքների բռնի հպատակեցմանը: 220 թ. նա պաշարում է խոշոր և լավ ամրացած Ալեսոպը, սակայն անհաջողություն է կրում, և զրեթե 40 տարի պոնտացինները հրաժարվում են Սիհրդատ գրավելուց:

Փառնակես Ա սկսեց իր գործունեությունը այն ժամանակ, երբ հումետական լեգենների հաղթանակները հելլենիստական ուժեղ պետությունների հանդեպ խիստ քարձաքցել էին Հուսի հեղինակությունը Փոքր Ասիայում: Այլևս դժվար էր վարել քաղաքականություն՝ առանց այս գործոնը հաշվի առնելու: Ս.թ.ա. 182 թ. Փառնակեսը սկսում է պատերազմ Պերգամոնի դեմ՝ առանց փորքահական գործերի վերաբերյալ հոսմեական ծերակոյսի որոշումներին տեղեկանալու: Արյուներում նա ընկերում է ծանր վիճակի մեջ. նրան լրում է և բոլոր դաշնակիցները, քացի Փոքր Հայքից, սակայն որովհետև հակառակորդներն նույնպես հյուծված էին պատերազմից, նրան հաջողվում է կերպված հաշուության պայմանագրում հիմնականում պահպանել իր ձեռքբերումները [59, 169]:

Փառնակեսի մահվանից հետո թագավորում է նրա եղբայր Սիհրդատ Դ Ֆիլոպատոր-Ֆիլադելֆը (170 – 150 թթ.), որի թագավորության տարիները խաղաղ էին, երկրի տնտեսական վիճակը՝ բարգավաճ: Միայն 156/55 թ. նա խառնվում է Բյութանիայի և Պերգամոնի պատերազմին:

Ս.թ.ա. 150 թ. Պոնտոսի զահին է նստում Փառնակեսի որդի Սիհրդատ Ե Էվերգետը (150 – 122 թթ.), որը, ավելի քան իր նախորդները, զնահատում էր հովաների դերը իր պետության հզորության և քաղաքական մեջ: Արքունիքը զրեթե լրիվ հելլենացվում է, սկսվում է զաղտնի լայն հետախուզական գործու-

Նեությունը հարևան երկրներում:

Միհրդատ Ե-ի գործունեությունը՝ ուղղված ուժեղ պետության ստեղծմանը, անհանգստացնում է Հռոմին, որը և կազմակերպում է դավադրություն, որում ներգրավում է նաև նրա կնոջը՝ Լատիլիկեն: 122 թ. արքան սպասվում է մերձավորների ձեռքով Մինոպում: Ձևականորեն զարդ ժառանգում են Միհրդատ և Էվերգետի երկու որդիները, որոնցից մեծը 11-ամյա ապագա թագավոր Միհրդատ Զ Եվպատորն էր: Լատիլիկեն հռոմեակեր քաղաքականությունը դժբահություն է առաջացնում Պոնտոսի հատկապես հովին քաղաքական գործիչների մոտ:

Միհրդատ Զ Եվպատորը, որը ծնվել էր 132 թ. Սինոպում, մինչև 11 տարեկան սկսել էր ստանալ լավ ռազմական և ընդհանուր հունական կրթություն: Հետազայում, ըստ անտիկ հետինակերի, նա տիրապետում էր իր երկրում ապրող ժողովուրդների 22 լեզուներին: Հոր մահվանից հետո նա մշտապես հարկադրված էր լինում խուսափել այն մահափորձերից, որոնք կազմակերպում էր իր մայրը՝ Լատիլիկեն: Վերջապես նրան որտորդությամբ զբաղվելու պատրիվակով հաջողվում է փախչել Փոքր Հայր, ուր ամբողջ 7 տարի պատսպարվում է իրեն սպանացող վտանգից:

Փոքր Հայրի դժվարամատչելի լեռներում ու անսատներում նա գտնում է հուսալի ապաստարան թշնամիներից: Որտորդությունը և բացօյյա լյանքը կոփում է Միհրդատին: Փոքր Հայրի թագավոր Անտիպատրոսը, որը չուներ ըստ երևույթին առաջին կարգի ժառանգներ, հովանավորում է նրան, իսկ հետագայում օգնում է վերադարձնել իշխանությունը հայրական թագավորությունում: Անտիպատրոսը կամավոր հանձնում է (ձանալում է իր միակ ժառանգը), իր թագավորությունը Միհրդատին: Միհրդատը համարվում էր միացալ Պոնտոսի և Փոքր Հայրի թագավորը:

Հետազայում է Փոքր Հայրի կարգավիճակը իսկատ տարբերվում էր Պոնտոսի այլ մասերից. նա երբեք չի համարվել նվաճված երկիր: Փոքր Հայրում կառավարում էր Միհրդատի որդի Արկաթիոսը: Պատրաստվելով Հռոմի դեմ պատերազմին՝ Միհրդատը Փոքր Հայրում կառուցեց մեծաքանակ անառիկ ամրոցներ, ուր տեղափոխեց իր զանձարանի մեծ մասը: Փոքր Հայրի զինվորները, հատկապես հայրական 10.000 հեծելազորը,

կարևոր դեր էին կատարում Միհրդատի բոլոր ռազմական միջոցառումների մեջ: Փոքր Հայրի ավագանու պահանջով, նա Պոնտոսի ծովամերձ տարածքի մի մասը՝ Տրայակոն քաղաքով, միացնում է Փոքր Հայրին:

Փոքր Հայրի բնակչությանը նա վստահում էր ավելի, քան իր պետության որևէ այլ երկրամասի ժողովրդին:

Հետազայում՝ իր կյանքի մայրամուտին, շախազամվելով Լուկովլոսի, հետազայում Պոմպեոսի կողմից, նա միշտ ձգուում է պատսպարվել հենց Փոքր Հայրում: Արդյո՞ք չկա այստեղ ապահով հայրական հովանոցի մանկական վերհուց:

Մ.թ.ա. 113 թ. Միհրդատը Զ Եվպատորը սկսում է թագավորել իր եղբար՝ Միհրդատ Քրեստի հետ, որը, սակայն, շուտով մահապատճի է ենթարկվում դավադրության կազմակերպելու մեղադրանքով: Մայրը՝ Լատիլիկեն, հետազայում մահանում է Պոնտոսի բանտերից մեկում [59, 169]:

Հյուսիսային սևծովյան հունական քաղաքները մշտապես վտանգված էին շրջապատող ցեղերից, նաև շահագրգոված միացալ սևծովյա անվտանգ առևտորի հեռանկարով: Այդպիսով, ստեղծված էր մի իրավիճակ, երբ կար միավորման անհրաժեշտության գիտակցություն և պատրաստակամություն նաև հունական քաղաքների կողմից, որտեղ գիտակցում էին, որ Միհրդատյան Պոնտոսը այն վստահելի և կարող ուժն է, որը ի վիճակի է իրականացնել այդ նպատակները:

Պոնտոսի համար սկսվեց այդ միավորման համար մղվող ելքսինան պատերազմների ժամանակաշրջանը (112–105 թթ.): Այն ավարտվեց Միհրդատի լիակատար հաղթանակով, ստեղծվեց հզոր սևծովյան տերություն՝ հարուստ տնտեսությամբ և վիթխարի զինուժով:

Պոնտոսի հզորացման երկրորդ փուլը կապված էր նշանակալի հաջողությունների հետ փոքրասիական գերիշխանության համար մղվող պայքարում (104 – 90 թթ.), երբ նա, ոչ առանց Տիգրանի օգնության, տիրացավ Կապադովկիային և Պաֆիլագնիայի մի մասին [169]:

Պոնտոսի համար կարևորագույն նշանակություն ուներ մ.թ.ա. 94 թ. Տիգրան Բ Մեծի հետ ռազմական դաշինքի կնքումը, որը ոչ միայն ապահովում էր Պոնտոսի թիկունքը Հռոմի հետ անխուսափելի դարձած պատերազմի ընթացքում, այլև թույլ էր

տալիս անհրաժեշտության դեպքում օգտվել Հայկական տերության ռազմական օգնությունից:

Դուստոս Սիհրդատ Զ-ի որոք ձգողական ուժ ձեռք բերեց ողջ հունական աշխարհի համար: Սիհրդատի փայլուն տնտեսական քաղաքականությունը բերեց կրան, որ նոյնիսկ ամենածանր պատերազմների ժամանակ կրա զանձարանը չըր դատարկվում: Սիհրդատը հովանավորում էր գիտությունը և արվեստները:

Խոշոր հելլենիստական պետություններից Սակերոնիային ոչչացրել էր Հոռոմը, Սելևյան Ասորիքը և Պոտրոմեյոսյան Եզիզտոսը զգալիորեն թուլացել էին և քաղաքական մշտական ճգնաժամի մեջ էին, առաջինը հոռոմեական և պարթեական ճնշման, երկրորդը՝ ներքին պառակտուման հետևանքով: Հայաստանը կամ Պարթևաստանը հոյների կողմից չեն ընկալվում որպես հելլենիստական աշխարհի մաս: Բուն Հունաստանը Սակերոնիայի և Փոքր Ասիայի մի մասի նման նոյնպես զավթել էին հոռոմեացիները, որոնց կեղերից տնտեսական քաղաքականությունը առաջացրել էր խորը դժգոհություն հունական հասարակությունում: Բուքանիայի, Պաֆլագոնիայի և Կապադովկիայի՝ Հոռոմից կախյալ թագավորությունների ժողովուրդները նոյնպես հարստահարվում էին սեփական հոռոմեակար տիրակալների և հոռոմեացիների կողմից, ուստի դժգոհ էին իրենց վիճակից և համակրանքով էին վերաբերվում Պոնտոսի՝ Սիհրդատ Եվպատորի քաղաքականությանը:

Այդ տարիներին Հոռոմը զբաղված էր մի շարք ծանր պատերազմներով՝ զաղինական (125 – 118 թթ.), նումիդիական (111 – 105 թթ.), գերմանական՝ կիմբրերի և տևտոնների դեմ (113 – 101 թթ.), որի պատճառով թուլացրել էր փոքրասիական գործերի վերահսկողությունը:

#### 4....Հայաստանի արտաքին քաղաքականությունը:

Մ.թ.ա. 331 թ. Գավամելյայի ճակատամարտում պարտությունից հետո քանդվեց Դարեհ Գ Կողոմանոսի Աքեմենյան տերությունը: Ճակատամարտում, պարսկական թանակի կազմում աշքի ընկած հայկական գործերը, որոնք ընկճել էին մակերոնացիների ձախ թիվ դիմարտությունը և նահանջել միայն մարտի դաշտից Դարեհի փախտասից հետո, վերադարձան հայրենիք: Հետազոտությունը Երվանդը հակահարված է տալիս Մե-

նոնի զիսավորությամբ Հայաստան ներխուժած մակեդոնական ոչ մեծ բանակին և խապար ոչչացնում նրանց [18, 56]: Մեծ Հայքը դարնում է անկախ երկիր:

Մ.թ.ա. 322 թ. Մեծ Հայրում ապաստան է գտնում մակեդոնացիներից պարտված Կապադովկիայի Արիարթես թագավորը [16]:

Մ.թ.ա. 305–301 թթ. հայկական թանակը Կապադովկիայում պարտության է մատնում խոչոր մակեդոնական բանակին և Արիարթեսին վերականգնում իր զահին [16]:

Մ.թ.ա. 300 թ. Հայաստանը Աքեմենյան ցեղի շառավիղներին նպաստում է ստեղծել Կապադովկիայի հյուսիսում Պոնտական պետությունը:

Հետազոյում ևս Մեծ Հայքը վարում է ինքնուրույն ակտիվ արտաքին քաղաքականություն, օրինակ՝ 260 թ. ապաստան է տալիս Բուքանիայի Զիաթելաս արքայազնին և օգնում վերականգնել հոր զահին [16], իսկ 240 թ.-ին ապաստան է տալիս Սելևյանների արքայազնին:

Անընդհատ դիմակայելով հզոր Սելևյան տերությանը՝ Մեծ Հայքը զգալիորեն թուլանում է և Երվանդ Վերջինի ժամանակ (մոտ 220 – 201 թթ.) ներկայացնում է իրենից շափակոր ռազմական կարողություններով երկիր, որի հետևակրով ունենում է նաև որոշ սահմանային զավաների կորուստներ:

Երվանդյան Հայաստանը (331 – 201 թթ.) հետաքեմենյան մի երկիր էր, որի պետական զարաֆարախոսության մեջ մշտապես ընդգծվում էր խնամիական կապը Աքեմենյանների հետ, հայերի գրաված դիրքը նախկին Աքեմենյան տերությունում, նրանց ցուցաբերած ռազմական կարողությունները և վատակը մակեդոնացիների դեմ վարած պատերազմում:

Անշուշտ, Հայաստանի արևոտորում և հարավում գտնվող հելլենիստական երկրներից (նաև Փոքր Հայքից և Ծոփքից) կար որոշակի քաղաքական և մշակութային ազրեցություն, որը հատկապես ուժեղացել էր Արտաշեսի 201 թ. հաղթանակից հետո: Սակայն հելլենականության այդ ներթափանցումը ավելի շատ մակեդեսային էր և չէր ազդում ոչ միայն ժողովրդի, այլ նաև ավագանու խորքային կյանքի վրա, ուստի այդ ժամանակաշրջանի Հայաստանը մենք չենք կարող անվանել հելլենիստական երկիր:

Աստիճանու Գ Մեծը, ենթարկելով Ծոփքը, Մեծ Հայրում

հրահրում է քաղաքացիական պատերազմ, որի ընթացքում Երվանդյան տոհմի հետ մայրական գծով կապված մի ազնվական՝ Արտաշեսին, դրում է ապստամբել Երվանդի դեմ: Տեղի ունեցած ճակատամարտում Արտաշեսը հաղթում է, որից հետո ընդունելով հզորացած Սելևյան թագավորության գերիշխանությունը, հոչակվում է Մեծ Հայրի ստրատեգոս՝ փոխարքա: Տասը տարի հետո՝ 190 թ. Մազմեսիայում Անտիոքուր ծանր պարտություն է կրում հռոմեացիներից, որից օգտվելով՝ 189 թ. Արտաշեսը Մեծ Հայրը հայտարարում է անկախ:

Արտաշեսյան հարստության հիմնարիբ Արտաշես Ա Բարի Երվանդական հայոց թագավորը (190 – 160 թթ.) հիմնովին վերանորոգում և հզորացնում է Մեծ Հայրի պետությունը: Համագործակցելով Փոքր Հայրի և Ծոփաց հայոց թագավորությունների հետ, նա բոլոր հարեւաններից են է վերջնում կորցրած տարածքները:

Այն, ինչ որ համեմատաբար դյուրին էր հյուսիսում և մասսամբ արևելքում, շատ դժվար էր իրագործել հարավում: Տմուրիի համար ծավալված ծանր պայքարը իրենց նախնական հզորությունը գրեթե վերականգնած Սելևյանների հետ ավարտվեց 165 թ. խոշոր ճակատամարտով, որով Արտաշեսը վեճը լուծեց իր օգտին: Մակայն բոլոր փորձերը՝ միացնել Մեծ Հայրին Ծոփքը, որի հետևում կանգնած էին նոյն Սելևյանները, անհաջող էին:

Արտաշեսի օրոք զզալիորեն համարվեց և հզորացավ բանակը, բարձրացավ թագավորության միջազգային վարկանիշը: Մեծ Հայրը վերականգնեց իր նախկին հետինակությունը տարածաշրջանում:

Հետազոյն՝ Տիգրան Ա օրոք (160 – 125? թթ.), տեղեկությունները Մեծ Հայրի մասին խիստ սակավարիկ են: Կա ենթադրություն, որ առաջին հայ-պարթեական բախումը տեղի է ունեցել դեռ 141 թ., որի ընթացքում հայերը հաջողությամբ հետ են մղել պարթենների գրոհը [10]:

Արտավազը Ա (116–95 թթ.) ժամանակաշրջանում, պարթեանի Սիրիատ Մեծի թագավորության տարիներին խիստ ուժեղանում է Պարթևատանը, որը 112– 111 թթ. պատերազմ է վարում նաև Մեծ Հայրի դեմ: Հայերը կարողանում են հետ վանել պարթեններին, սակայն սկզբնական շրջանում պատերազմն անցնում է պարթենների որոշ առավելությամբ, և հայոց թագաժա-

ռանզը պատասի է վերցվում Սիրիատ Մեծի արքունիք:

Պարթևատանը անցկացված 16 տարին՝ 29-ից մինչև 45 տարեկանը, շատ կարևոր էին Տիգրանի կյանքում: Պարթևական կյանքի բոլոր դրսնորումների քաջ իմացություն, հսկայական գործակալական ցանց, մեծ քանակությամբ բարեկամներ և ընկերներ: Մասնաւումներ ապագա անելիքների մասին, պարթևական ռազմական մերեւայի մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրություն: Նաև պարկեցածություն տանտիրոց և փեսայի հանդեպ մինչև Սիրիատ Մեծի մահը նա շխախտեց հայ-պարթեական սահմանի անբորրը ...

Ս.թ.ա. 95 թ. ստանձնելով հայոց երկրի կառավարումը՝ նա անմիջապես անցավ ակտիվ, լավ մտածված գործողությունների: Առաջինը Ծոփքի միավորումն էր, երկրորդը՝ դաշինքը Սիրիատ Պոնտացու հետ:

5....Հայաստանի և Պոնտոսի ռազմաքաղաքական դաշինքի անհրաժեշտությունը

Վերջին դարի պատմական իրադարձությունների ողջ ընթացքը հայոց և պոնտական թագավորներին ցույց էր տալիս Հոռմետական հանրապետության և Պարթևական տերության հետ ընդհարվելու անխուսափելությունը:

Հայաստանը, որը մեկ կամ երկու անգամ ետ էր մղել պարթևական հարձակումները, զգացել էր նրանց ուժը և դրանից իր անկախությանը եկող ահեղ վստանքը: Պոնտոսն էլ, իր հերթին, այնքան էր հզորացել, որ բացարձակ անհանդուրժելի էր դարձել հզոր Հոռմետ համար:

Երկու տերությունների (հոռմետական և պարթևական) դեմ տարբեր ուժերի վարած բոլոր զուտ պաշտպանական պատերազմները վերջացել էին այդ ուժերի պարտությամբ: Ուստի, հայթանակի համար, պայքարը պետք էր սկսել միայն հանուն նիրապետության:

Շնայծ ուժերի ակնհայտ անհավասարությանը՝ Հայաստանի և Պոնտոսի՝ Պարթևատանին և Հոռմետ ջախջախելու փորձը ավելի իրական էր, քան հաջողությունը զուտ պաշտպանական պատերազմում:

Դեպքերի հետոազ ընթացքը մեզ թույլ է տալիս հիմնականում վերականգնել դաշնակից արքաների ծրագրի ընդհանուր դրույթները:

## Առաջին փուլ:

Տիգրանը պետք է հարձակվեր պարթևների վրա, պարտության մասներ նրանց և զրավեր ողջ Սարաստանը, ողջ Միջազգետը, իրեն ենթարկեր Սուլեստանը և Պարսքը: Պարթևները պետք է հետ մղվեին դեպի իրենց ավանդական միջինասիական տիրույթները: Իրանական գերակայությունը պետք է անցներ Արեւելյան Իրանի մեջ այլ ժառանգորդի՝ Հայաստանի ձեռքը: Այսուհետ Հայկական տերությունն էր հավաքելու արեմենյան ժառանգությունը:

Պարթևական պետությունը ոչնչացնելու ծրագրեր չկային, այլապես կկորչեր հուսալի պատնեշը միջինասիական քոչոր ցեղերի և Իրանական սարահարթի կենտրոնական մասերի միջև: Պարթևստանը պետք է դառնար դաշնակից կախյալ թագավորություն արքայից արքա Տիգրան Բ տերության համակարգում: Ենուազյում, զրավելով Ասորիքը, Տիգրանը գրեթե վերականգնում էր Արեւելյան սահմանները:

Փոքր Ասիայի և Բաղկանյան թերակղում Միհրդատ Զ Եվպատորը պետք է կազմակերպէր հուժկու զրոհ և, հենվելով տեղական, հատկապես հունական, բնակչության աջակցության վրա, ջախջախեր և դուրս մղեր այստեղից հոռմայեցիներին: Եթե հաջողվեր, հետուազյում պատերազմը պետք է տեղափոխվեր Խոսահան և կործաներ Հոռմին: Դա երկրորդ փուլի գերխնդիրն էր՝ վերջնական հարված հասցնել բուլացած Հոռմին:

Հոռմը դիսվում էր որպես ավելի ահեղ և անզիջում հակառակորդ, հնարավոր է, որ սկզբնական շրջանում անհրաժեշտ էր համարվում առաջին հերթին պարթևների կործանումը, որից հետո միայն միացյալ ուժերով պատերազմել Հոռմի դեմ՝ նրան ոչնչացնելու համար:

Ծրագիրը հանդուզն էր, սակայն ոչ անիրազործելի: Հոռմը և Պարթևստանը այս ահեղ իրողությունը լրիվ ըմբռնեցին և 92 թ. իրենք նոյնպես կազմեցին ուազմական դաշինք՝ ընդդեմ Միհրդատի և Տիգրանի: Օյկումենեում ուրվագծվեց աննախադեալ, հսկայական ուազմական բախման հնարավորությունը:

Հոռմեացիները, իրենց պատմության ընթացքում ունեցել էին բազմաթիվ թշնամիներ: Սակայն իրենք հասուն վախ և ստելություն էին տածում միայն նրանց հանդեպ, ով պայքարում էր հատկապես Հոռմը կործանելու համար՝ զաղղիացիների, Հաննիրալի և Միհրդատի Զ Եվպատորի հանդեպ:

Տիգրանը, որը այս պայքարում հիմնականում ուներ այլ պարթևական ուղղության ծանրաբեռնվածություն, իսկ ծավալված պայքարի վերջում կատարեց դիվանագիտական բարդ շրջադարձ սկզբում, կեղծ, դեպի Հոռմ, հետո, իրական, դեպի Պարթևստան, չեր ընկալվում հոռմեական հասարակության կողմից որպես մահացու թշնամի, այլ հավասարը հավասարի հետ պայքար մղող մեծ արքա: Սակայն Տիգրանի պայքարը աշխարհում գերակայության հասնելու համար, չեր վրիշել ամենախորաթափանց հոռմեական բաղարական գործիչներից: Տիգրանի գործունեության Կիկերոնի գնահատականը բոլորին հայտնի է [34]:

Դրան նպաստում էր նաև երկու արքաների բնափորությունների տարբերությունը: Այս արտասովոր տաղանդավոր մարդկանց մրցակցության մեջ միշտ հաղթել էր Տիգրանը, մի քան, որը զարմանալիորեն չի ցանկացել նկատել պատեթիկայի և ցուցամղական հերոսականության սիրահար անտիկ պատմագրությունը և արդի ոռու ու արևմտյան պատմաբանների ճնշող մեծամասնությունը:

Հոռմեական հանրապետությունը և Պարթևական տերությունը բուլացնելու կամ կործանելու Տիգրանի և Միհրդատի ծրագրերը ձախողվեցին:

Տիգրանը «պարտվեց» իր հաղթական պարթևական պատերազմի ժամանակ՝ չկարողանալով մինչև վերջ ծնկի բերել ու ենթարկել իրեն պարթևներին, դրանով սկսել իր լայնածավալ ծրագրերի իրագործումը: Պարթևները օրորացին, շատ քան կորցրին, զիշեցին ենթակա երկրներից մինչև պատվազոր տիտղոսը, սակայն դիմացան և շիանձնեցին ամենակարևորը՝ Բաբելոնը: Այդպիսով, նրանք դիմացան և ծախողեցին Տիգրանին գրոհի հիմնական նպատակը:

Միհրդատը պարտվեց Հոռմատանում, իր կողմից ակնկալվող համահունական հակահոռմեական ընդվկումը չեղափ: Հոյս զինվորականությունը, ըստ իրեն տրամադրած վարձավարի, որպես վարձկաններ բաժանվեց երկու մասի Սուլլայի և Միհրդատի բանակներում և դրանով ոչնչացրեց Հոռմի իշխանության տակից դուրս զայրու Հոռմատանի վերջին հնարավորությունը: Իսկ ինչ'ու դուրս զայրու Հոռմի մասին: Հոգնած հունական հասարակությունը հակված չեր ավելի, քան Հոռմին, իր ապագան վստահել Պունտոսին:

Միհրդատ Զ Եվպատորը, Անտիոքոս Գ Մեծի նման, Հունաստանում հավատաց նույն չգործող «պանհելլենիստական գաղափարի» համար հականումեական համընդհանուր ապստամբության հենարավորությանը և տեղափոխելով գորքերը Հունաստան՝ ընկավ նույն ծուղակը:

Երկրորդ փուլը ենթադրում էր գործողություններ օյկումենայում Հայաստանի և Պոնտոսի բացարձակ տիրապետությունը հաստատելու համար: Այս փուլի մասին կարելի էր մտածել միայն առաջին փուլի հաջողությունից հետո:

Եթե հաղթեին դաշնակից արքաները, մոտակա մի քանի դարերի ընթացքում Հին աշխարհը՝ օյկումենեն, նոյնապես կիներ բաժանված հելլենիստականի և իրանականի:

Անխուսափելի էր հետազոյում հակամարտությունը Հայաստանի և Պոնտոսի միջն, ինչպիսին մենք ունեցանք Հոռոմի և Իրանի միջև: Աշխարհը կիներ մի քիչ ուրիշ, բայց ոչ այնքան ուրիշ, որ նրա ընտերքից շնչվեին առաջավորասիական և եվրոպական միջնադարյան ու նրա հասարակությունները:

Պատմության անիվի ընթացքը անդառնալի է, և տեղի ունեցածի վերլուծությունը ցույց է պայման, որ Հոռոմի և Իրանի հաղթանակը կանխորշված էր մի շարք ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութաբանական գործոններով (առավելություններով):

Պոնտոսի և Հայաստանի դաշինքը սկսվեց քայլայվել դեռ 67 թ., և ընդհատվեց 66 թ., երբ արքաների ծրագրերը վերջնականապես հակադրվեցին:

Տիգրանը պահպանեց կարսոր և կորցրեց ցանկալին, Միհրդատը կորցրեց ամեն ինչ, այդ թվում՝ կյանքը: Երկուսն էլ ձեռք բերեցին փառք, որի փայտաժնի մեջ շահեց ողբերգականը:

## 2.2. Ծոփքի միացումը՝ 94 թ.

95 թ.-ին Տիգրանը, որպես փրկազին պարթևներին զիշելով «յոթանասուն հովիտը», վերադարձավ Հայաստան և թագադրվեց Աղձնիքի սրբավայրերից մեկում:

Արդեն հաջորդ տարի սկսվեց նրա եռանդուն արտաքին

քաղաքական գործունեությունը: 94 թ.-ին նա մտավ Ծոփք, սպանել տվեց Ծոփած քազավոր Արտանեսին և Ծոփքը միացրեց Մեծ Հայքին: Ըստ երևույթին, Տիգրանը Ծոփքում ուներ միացմանը նպաստող կողմանակիցներ, սակայն միացումը իրականացվեց ռազմական ճանապարհով՝ ընկճելով Արտանեսի կողմանակիցների դիմադրությունը:

Տիգրանի գահակալությունից հետո սա իր առաջին ռազմական գործողությունն էր, որը մեծ ոգևորություն առաջացրեց երկրում:

Հայկական երկու պետությունների միավորումը զգալիորեն բարձրացրեց Հայաստանի ռազմական կարողությունները: Հայաստանի 2-2,5 միլիոնանց բնակչությանը ավելացավ Ծոփքի ոչ պակաս, քան կես միլիոնանց հայությունը, որի մշակութային և տնտեսական զարգացման աստիճանը ավելի բարձր էր, քան Մեծ Հայքինը: Ռազմական առումով, Ծոփքը ոչ մեծ պետությունը բավականին ուժեղ էր և լավ կազմակերպված: Անկասկած, Ծոփքի վերնախավը և զինված ուժերը կազմեցին Հայաստանի վերնախավի և զինվորականության անբաժանելի մասը: Միացման ռազմական բաղադրիչի մանրամասնությունները մեզ անհայտ են:

Միացման քաղաքական հետևանքները հայտնի են, կատարվածի հետևանքով Պարթևստանի խոր դժգոհությունը և անհանգստությունը, Կապադովիկիայի հակազդեցության ոչ այնքան իրական, որքան ցուցադրական գործողությունները: Հայաստանից զգալիորեն ռազմականորեն թույլ Կապադովիկիան չէր հանդգնի հակադրվել հայերին, սակայն նրա հետևում կանգնած էր հզոր Հոռոմը:

Ծոփքի միացումը ունեցավ երկու անմիջական հետևանք:

1. հայ-հռոմեական հակասությունների առաջացումը,
2. Պոնտոսի հետ ռազմաքաղաքական համագործակցության սկիզբը:

Չի բացառվում, սակայն, որ հայ-պոնտական համագործակցությունը՝ Տիգրանի և Միհրդատի գաղտնի շփումները կայացել էին դեռ 95 թ., երբ Պոնտոսը անհաջող փորձել էր կըրկին ենթարկել իրեն Կապադովիկիան:

## 2.3.Հայ – հռոմեական հակամարտությունը Կապադովկիայում՝ 93 – 91 թթ.

Մ.թ.ա. 93 – 91 թթ. Կապադովկիայի բաղաքական պատմությունը մանրամասնորեն շարադրված է Շուրեն Սանասերյանի մենագրությունում [34]: Մեզ հետաքրքրում է այս դեպքերի ուսումական բաղադրիչը:

Մ.թ.ա. 93 թ. հայկական բանակը մտնում է Կապադովկիա, վրանում զահից Հռոմի դրածո Արիոբարզան Ա Հռոմեասերին և թագավոր կարգում կապադովկիական ավագանու և ժողովրդի մեջ մեծ ժողովրդականություն վայելող ազնվաստոհիմք Գորդիոսին: Այդպիսով, Հայաստանը ցուցադրում է իր վճռականությունը կասեցնել Հռոմի առաջնադացումը մինչև իր սահմանը դարձած Եփրատը:

Կապադովկիային Տիգրանը նախատեսում էր միջանկյալ՝ բուժերային պետության դեր: Դա բխում էր Հայկական պետության ուսումավարական շահերից: Եթե Կապադովկիան չէր կազմելու Պոնտոսի մասը, ապա կարող էր ապագայում դառնալ Հռոմի նահանգ, որը Տիգրանը երբեք չէր հանդուրծի:

Կապադովկիայում Տիգրանը քողնում է կայսարուներ, նպաստում է կապադովկիական բանակի մարտունակության վերականգնմանը:

Ի պատասխան Տիգրանի գործողությունների՝ 92 թ. Հռոմը դիմում է ուղղակի ուսումական միջամտությանը՝ Բնալիայից Կապադովկիա ուղարկելով ականավոր զորավար Լուկիոս Կոռոնելիոս Սուլլային [235, 237]:

Սուլլան ափ է իջնում փոքրասիական թերակղու հարավ-արևմուտքում՝ Պամֆիլիայի ու Լիկիայի շրջակայրում, մի փոքր հռոմեական բանակով և ստանձնում է Լեռնային Կիլիկիայի նորաստեղծ նահանգի դեկավարությունը:

Արևմտյան կամ Լեռնային Կիլիկիայի հռոմեական նահանգը ստեղծվել էր դեռ մ.թ.ա. 102 թ., երբ պրետոր Մարկ Անտոնիոսի մեծ նախատորմը կոստորել էր կիլիկյան ծովահենների ուժերի մի մասը և նրանց առավելյան հենակետերը ու ամ-



Նկար 2.3. Լուկիոս Կոռոնելիոս Սուլլա

րացել երկրուս:

Սուլլան հավաքում է մի բանակ, որը բոլոր հեղինակները ընտրագրում են որպես ոչ մեծ:

Փորձենք պարզաբանել Սուլլայի բանակի կազմը և հնարավոր թվաքանակը:

Բացի բոլոր հռոմեացիներից, նրա բանակը, ըստ ստվարության, պետք է համարված լիներ դաշնակիցների՝ իտալիկների ուժերով: Հռոմի փոքրասիական դաշնակիցները ևս պարտավոր էին առաջին խոկ պահանջի դեպքում տրամադրել օգնական զորք: Փոքր Ասիայում միշտ կարելի էր հավաքել վարձկանների ջոկատներ: Արիոբարզանեսին հարող կապադովկիական «հռոմեասերները» նույնպես կարող էին որոշակի զինվորական ուժ ներկայացնել:

Եթե համարենք, որ Սուլլան իշել էր ափ աննշան ուժերով, առենք մեկ լեգեոնով, ուժեղացված հռոմեական դաշնակիցներով, ապա դա արդին:

1.մեկ լեգեոն – 6.000 կամ նվազագույն դեպքում 5.000 լեգեոններ և մոտ 300 հեծյալ:

2.հռոմեական դաշնակիցներ – ոչ պակաս 5-6.000 ծանրագեն հետևակ, 1-2.000 թերևազեն և ոչ պակաս 500-1.000 հեծյալ:

3.կապադովկիական, հնարավոր է նաև բյութանիական և զալարական օժանդակ զորքեր, թվով ոչ պակաս Բնալիայից ծամանած բանակից:

Բնալիայից թերված իր մոտավորապես 12-15.000 զինվորներին ավելացնելով տեղական ուժերը՝ Սուլլան առնվազն կուներար 25-30.000 զինվոր:

Սակայն սա կը վերջնական թիվը չէ: Հռոմը Լեռնային Կիլիկիայում այդ տարիներին մշտական տեղակայում էր մեկից մինչև երեք լեգեոն՝ համարված դաշնակից ուժերով: Բնչն էր խանգարում Սուլլային, այդ ուժերից կապադովկիական արշավին ներզրավել մեկ կամ երկու լեգեոն, չէ՞ որ նա նշանակվել էր Լեռնային Կիլիկիայի պրոպրետոր: Դա նշանակում էր առնվազն ևս 15 -20.000 զինվոր:

Իրականում Սուլլան սկսել էր իր կապադովկիական արշավանքը պատկառելի բանակով, որը աննշան կարող էր համարել միայն անմիջապես Հռոմից ուղարկված զորքի բանակի իմաստով: Մեզ բաց հայտնի են հռոմեական զորավարների շակերը՝ քողարկել իրենց հրամանատարության տակ

գտնվող բանակների իրական թվաքանակը: Իսկ Սուլլան այդ խարեւուրյուններում նույնիսկ յուրայինների մեջ անզերազանցելի էր:

Անկասկած է, և դա հաստատվում է հոռմեական ռազմական պատմության ողջ ընթացքով, հոռմեացիները ցանկացած պատերազմում ձգուում էին հասնել հաղթանակի: Դա ենթադրում է, որ հաղթանակի համար պետք է պահպանվեր անհրաժեշտ տեղում անհրաժեշտ քանակությամբ ուժ ունենալու սկզբունքը: Մինչ այդ հայկական բանակի հետ չընդհարված և նրա ուժի մասին պատկերացում չունեցող հոռմեացիները առնվազն պետք է ձգտեին թվային հավասարության, եթե ոչ գերակշռության, որի հնարավորությունը Փոքր Ասիայուն նրանք ունեին:

40.000 զինվոր Սուլլայի բանակում մեր կատարած հաշվարկների միջին թիվն է: Նա չէր կարող պակաս լինել 30.000-ից և թիվ հավանական է, որ գերազանցեր 60.000-ը: Այս թվերից մեզ իրական է թվում նվազագույնը՝ 30.000 զինվորը՝ ելնելով հետևյալ նկատառումներից:

ա. մեծ բանակ հավաքելու համար Սուլլան ժամանակ չուներ.

բ. 93 թ.-ին Կապադովկիա ներխուժած հայկական

բանակի թիվը և կազմը հոռմեացիներին հայտնի էր և նրանք 92 թ. գործողությունների համար բավարար էին համարում 30.000 բանակը.

գ. 40-60.000 հոռմեական և նույնառ հայկական բանակի բախումը պետք է որ ավելի մեծ արձագանք զտներ հոռմեական և հոռմեասեր պատմիչների մոտ:


Արդեն հաղթական պատերազմից հետո Սուլլային կարելի էր հիշեցնել հոռմեական հասարակությանը, որ այն ձեռք է բերվել ոչ մեծ ջանքերով. դրա համար Հռոմից ուղարկվել էին անշան ուժեր: Զեին մոռացվել նաև Հռոմի դաշնակիցները. ըստ Պլուտարքոսի՝ նրանք իրենց վճռական գործողություններով մեծապես նպաստել էին հաղթանակին [42, 221 - 223]:

Այդայսով, Գորդիոսի կապադովկիական բանակի և օգնության ուղարկված հայկական բանակի դեմ Սուլլան արշավում էր ոչ պակաս, քան 30.000 բանակով: Սրընթաց մտնելով Կապադովկիա՝ նա առաջինը շարուրում է աշխարհազորային-

ներով ուժեղացված կապադովկիական բանակը, հետո ճակատամարտի բոնվում վրա հասած խոշոր հայկական բանակի դեմ:

Պլուտարքոսի հաղորդումը ըննելիս հասկանալի է դառնում պատերազմի ընդհանուր ընթացքը:

Սուլլան, իշելով ափ և համալրելով իր բանակը, սրընթաց շարժվում է դեպի Կապադովկիայի մայրաքաղաքը՝ Մաժարը, որտեղից Գորդիոսը, որը հնարավորություն չուներ դիմակայել Սուլլային միայն իր ուժերով, իր զորքերով և կապադովկիացի աշխարհազորայիններով նահանջում է դեպի Հայաստանի սահմանը: Նրա նպատակն էր միանալ օգնության շրապող հայկական բանակին և ճակատել հոռմեացիների հետ միայն հայերին միանալուց հետո:



Քարտեզ 2.4. Ա.թ. 92 թ. հայ-հոռմեական պատերազմը  
Կապադովկիայում:

Սակայն, փորձառու հոռմեական զորավարը նույնպես կանխատեսում է այդպիսի, իր համար անցանկալի գործերի ընթացքը: Նա, ըստ երևույթին, ունենալով առավելություն շարժունակության մեջ, վրա է հասնում Գորդիոսի բանակին մինչև հայերի հետ միանալը և հարկադրում տալ ճակատամարտ, որում հուսահատ կովող կապադովկիացիները չունեին հաղթելու ոչ մի շանս:

Հաջորդ ճակատամարտը տեղի է ունենում արդեն վրա հասած հայկական բանակի հետ, լինում է ավելի վճռական ու

համառ: Բաժանելով և թուլացնելով հակառակորդին՝ Սուլլան, հմտութեավարելով հոռմեական բանակի գործողությունները, հասեռում է հաղթանակի, որի հետևանքը ուժեղացնում է պարտված հայկական բանակի ռազմավարական հետապնդումով մինչև Հայաստանի սահմանը:

Հայկական բանակի դեմ ճակատամարտը առավել համարել, հոռմեացիների հակառակորդը՝ անհամեմատ ավելի մարտունակ, քան կապաղովկիացիները, սակայն, չի բացառվում, որ այսուել արդեն Սուլլան կարող էր ունենալ որոշ թվային գերազանցություն: Մարտում այդի ընկան թներում կանգնած հոռմեական դաշնակիցները [42]:

Այդպիսով, առաջին ընդհարումը հայկական և հոռմեական ռազմական մերենաների միջև ավարտվեց առաջինի պարտությամբ: Արիոբարզանես Ա Հռոմեասերը վերականգնեց Կապաղովկիական զահին:

92 թ. հայ-հոռմեական սահմանափակ պատերազմի արդյունքները և հոռմեա-պարթևական բանակցությունները խիստ անհանգստացրին Տիգրանին: Նա շիապաղեց պատասխանել նոր արշավանքով դեպի Կապաղովկիա:

91 թ. հայկական գորքերը զորավարներ Միթրասի և Բագրասի հրամանատարությամբ կրկին մտան Կապաղովկիա և վոնեցին Արիոբարզանես Հռոմեասերին՝ այս անգամ արդեն երկրը հանձնելով Միթրդատի որդուն՝ Արիարաթին:

Տիգրանը, հանձնելով Կապաղովկիան Միթրդատին, այլ միջոցներով, քան 93-92 թթ., ապահովում էր իր պետության թիկունքը պարթևների հետ անխուսափելի դառնող պայքարում:

Հանձնելով Միթրդատին Կապաղովկիան՝ Տիգրանը տնօրինում էր այդ երկրի ողջ շարժական գույքը, որի տեղափոխումը Հայաստան հիմնահատակ ավերեց Կապաղովկիան:

Կապաղովկիան մնաց Պոնտոսի ձեռքում մինչև 89 թ., երբ Փոքր Ասիա ժամանած Հռոմի դեսպան Մանիոս Արվիլիոսը վերականգնեց զահին Արիոբարզանեսին: Սակայն նոյն տարի սկսվում է առաջին հոռմեա-պոնտական պատերազմը, և պնտացիները վերստին գրավում են Կապաղովկիան:

93 թ. Տիգրանի Բ-ի՝ Կապաղովկիայում սեփական բաղրականություն վարելու փորձը հանդիպեց Հռոմի վճռական հակազդեցությանը՝ 92 թ. հայ-հոռմեական ռազմական ընդհար-

մանը: Հայերը պարտվեցին և վտարվեցին Կապաղովկիայից: Սակայն 91 թ. հայկական բանակը կրկին ներխուժեց Կապաղովկիան և հանձնեց այն իր դաշնակից Միթրդատին՝ տանելով Հայաստան հարուստ ավար՝ որոշ բանակությամբ բնակչություն և շարժական գույք: Այդպիսով Տիգրանը վերացրեց իր համար անբարենպաստ 92 թ. ռազմարշավի ռազմաքաղաքական հետևանքները:

#### 2.4. Տիգրանի Բ-ի առաջին ռազմական ոեֆորմը՝ 91–89 թթ.

Ս.թ.ա. 92 թ. ռազմական պարտությունը Կապաղովկիայում ցույց տվեց Տիգրանին հայկական բանակի ռազմավարական և մարտավարական թույլ կողմերը: 91 թ., կապաղովկիական երրորդ ռազմարշավից հետո Տիգրանը որոշեց կատարելագործել բանակի կառուցվածքը և մարտավարությունը:

Հատ երեսույթին, ռազմական վերափոխումները սկսվել էին այս ժամանակահատվածի առաջին կետում՝ 91–90 թթ., որը հաստատում էն հետևյալ փաստարկները:

- 92 թ. անհաջող պատերազմը հոռմեացիների դեմ Կապաղովկիայում հոգերանորեն և զործնականորեն պահանջում էր արագ վերլուծել պատճառները և վերացնել թերությունները հայկական բանակում:

- պարթևների հետ ապագա առճակատման մասին Տիգրանը մտածում էր դեռ 94 թ., որովհետև միացնելով Ծոփքը՝ նա հզրանում էր և դրանով իսկ հակադրվում նաև պարթևներին, որոնք աչ էին դրել հարեւան Կոմմագենեի վրա.

- հայկական բանակի վերակառուցման զաղափարները, մասնավորապես Ճոշափոր այրուձիու կատարելագործումը՝ կատաֆրակտուսների գնդերի բարելավումը, Տիգրանը հղացել էր դեռ պարթևների մոտ պատանդ լինելու ժամանակ, ուստի որքան արագ անցկացվեր ոեֆորմը, այնքան լավ. վտանց կար շիացնել կատարել բարեփոխումները պարթևների դեմ հնարավոր պատերազմից առաջ.

- Տիգրանը գիտեր հոռմեա-պոնտոսյան հարաբերությունների լարվածության աստիճանի մասին, Միթրդատը սպասում էր,

- որ պատերազմը կսկսի 88-ից ոչ շուտ, սակայն, հոումեացիների դրդումով նա սկսեց արդեն մ.թ.ա. 89 թ.-ին:
- ի հակակշխո 94 թ. հայ-պոլտական ռազմարադարական դաշինքին՝ հետևեց 92 թ. հոումեա-պարթևական ռազմական դաշինքի փորձը, որը կարելի էր չեղորացնել միայն հզոր և շարժուն հայկական բանակի առկայության դեպքում.
  - Հոռմի դեմ հնարավոր պատերազմում Տիգրանը կարող էր օգտագործել ծանր հետևակի (հովայիների, պելտաստների փաղանգ, մալեդիոնական փաղանգ) դեմ պարթևական հեծելագորային մարտի փորձը.
  - Վիրքի և Աղվանիք մոտայլութ հավատակեցումը կարող էր լավ մարզադաշտ՝ պոլիգոն, հանդիսանալ բանակի բարեփոխված զորատեսակներին վարժելու և մարտավարությունը կատարելագործելու համար:

Ամենայն հավանականությամբ ոեֆորմը անցկացվել էր 91 – 89 թթ., որի հետևանքով հայկական բանակի որոշ մասի, հատկապես այրումիու սպառագինությունը, կառուցվածքը և մարտավարությունը զգալիորեն կատարելագործվել էին:

Ծանր հեծելագնդերից, որոշ թերեւ հեծելագնդերից, մասսամբ նաև նոր զիվորների հավաքագրումով հայկական ազնքվական դասի լավագույն ներկայացուցիչների ավելի լայն ընդգրկումով (իսկ նրանք, ինչպես օրենք, վարժ էին հեծելամարտում) ստեղծվում է 10-12 հազարանոց պրոֆեսիոնալ ճշշավոր զրահակիր այրումին՝ կատաֆրակտուները, հայկական բանակի ծաղիկը և հիմնական հարփածային ուժը:

Բարեկավելի էր նաև այրումիու ձիերի կազմը, որի համար Հայաստանում դեռ արեւելյան ժամանակաշրջանից հատուկ բուժվում էին մեծ և դիմացկուն, Նիսայից ներմուծված ձիերը:

Բուն հայկական բանակի թիվը, ներգրավելով Ծոփքի զինված ուժերը, ևս մեծացավ՝ առանց հետազայում միացած հպատակ ժողովուրդների և դաշնակիցների զորքերի, նա անցավ հարյուր հազար զինվորի թվաքանակը (հետազայում, 83 – 69 թթ., հպատակների և դաշնակիցների տրամադրած զորքերի հետ միասին Հայկական տերության զորքերի թիվը հասնում էր արդեն 300 հազարի):

Բանակը պահպանում էր իր կառուցվածքի տասնորդական

համակարգը՝ 10 զինվոր կազմում էին ջոկ՝ տասն, տասնապեսի հրամանատարությամբ, 10 ջոկ կազմում էին վաշտ՝ 100 զինվոր, հարյուրապեսի կամ վաշտապեսի հրամանատարությամբ, 10 վաշտ կազմում էին գունդ՝ 1.000 զինվոր, հազարապեսի կամ գնդապեսի հրամանատարությամբ, 10 գունդ կարող են կազմել բյուր (զորաբանակ)՝ 10.000 զինվոր, բյուրապետի կամ զորավարի հրամանատարությամբ: Տասը բյուրը կազմում էր բուն հայկական բանակը՝ 100.000 զինվոր և սպա: Մրան էր գումարվում հայոց արքայի թիկնազորը, որը ըստ Արեւելյաններից եկող ավանդույթի, բաղկացած էր 2.000 զրահակիր հեծյալներից՝ կատաֆրակտուներից, և 2.000 հետևազորայիններից՝ 1.000 վահանակիրներից և 1.000 աղեղնավորներից:

Տարբեր զորաբաների ժամանակ, կախված բանակի վրա դրված խնդիրներից, դաշտային բանակի թիվը կարող էր զգալիորեն տատանվել՝ 20.000-ից մինչև 50.000, բացադրված դեպքերում՝ մինչև 70.000 զինվոր: Մնացած զորքերը տեղակայված էին Հայաստանի տարբեր վայրերում և ապահովում էին երկրի անվտանգությունը:

Ըստ Կրկյացարյանի՝ բդեշխությունները առաջացել են Հայաստանում մ.թ.ա. II դարի կեսերին [16]: Բդեշխների՝ փոխարքաների ինստիտուտը զարգացել էր հատկապես Տիգրան ՄԵծի օրոք. Աղձնիքի, Գուգարքի և Նոր Շիրականի բդեշխներին գումարվեց Ծոփքի բդեշխի պաշտոնը (հետազա դարերում նաև Կորդվաց բդեշխը): Այս չորս ավագագույն պաշտոնակիր մեջ Աղձնիքի բդեշխը ավագն էր (Աղձնիքում էր գտնվում Տիգրանակերտը): Մայրաքաղաք Արտաշատը դեկապարում էր շահապը (սատրապ), որի իրավունքները հավասար չէին բդեշխներին, նրանք հիմնականում կարգավորում էին տնտեսական գործունեությունը [16]:

Կենտրոնացնելով իրենց ձեռքում ռազմական և քաղաքացիական իշխանությունը՝ բդեշխները առաջին հերքին խոշոր զորաբանակ ունեցող զորավարներ էին, որոնց հիմնական խնդիրը Հայաստանի տվյալ ռազմավարական ուղղության հուսալի պաշտպանությունն էր:

Հայկական բանակի զորատեսակներն էին.

- հեծելազորը՝ 30.000 զինվոր, որից ծանրը՝ կատաֆրակտու-

- ները՝ 10.000 զինվոր և թերև հեծելազորը՝ 20.000 զինվոր.
- հետևակը՝ 60.000 զինվոր, որից ծանր հետևակը՝ 40.000 զինվոր, և թերև հետևակը՝ նետաձիգները ու պարսավորները՝ 20.000 զինվոր: Ծանր հետևակը բաղկացած էր երկու մասից. ա. բուն ծանր հետևակ՝ վահանակիրներ՝ 20.000 զինվոր.
  - բ. թերևացած ծանր հետևակ (միջին հետևակ՝ պելտաստներ)՝ նիզակակիրներ՝ 20.000 զինվոր:
  - օժանդակ զորքերը (սակրավորներ, պաշարողական ստորաբաժանումներ, գումակը սպասարկող ստորաբաժանումներ)՝ 10.000 զինվոր:

Այդպիսով, բանակի ընդհանուր թիվը կազմում էր 100.000 զինվոր, որից 30.000 հեծյալ և 70.000 հետևակային:

Հայկական բանակը կարելի էր ներկայացնել նաև որպես տասը բյուրից բաղկացած տասը զորաբանակ (զորագունդ, կորպուս), յուրաքանչյուրը բաղկացած 10 գնդերից.

- 1 գունդ զրահակիր այրումի – 1.000 զինվոր,
- 2 գունդ թերև հեծելազոր – 2.000 զինվոր,
- 2 գունդ վահանակիր – 2.000 զինվոր,
- 2 գունդ նիզակակիր – 2.000 զինվոր,
- 2 գունդ նետաձիգ – 2.000 զինվոր,
- 1 գունդ սակրավոր և այլ օժանդակ զորք – 1.000 զինվոր:

Հայկական բանակում գործում էին հետևյալ համամասնությունները. հետևակը երկու անգամ շատ էր հեծելազորից, թերև հեծելազորը երկու անգամ շատ էր ծանր հեծելազորից, ծանր հետևակը երկու անգամ շատ էր թերև հետևակից, օժանդակ ստորաբաժանումները կազմում էին բանակի մեկ տասերորդ մասը (Պլոտարքոսի այս թվային տեղեկությունները վերաբերում են 68 թ. հայկական բանակին, սակայն ստորև մենք ցույց կտանք, որ 68 թ. ուազմական ռեֆորմը վերաբերում էր ոչ թե թվաքանակի փոփոխությանը, այլ ծանր հետևակի արմատական ձևափոխմանը):

Այսպիսով, հայկական բանակի կառուցվածքը ձեռք էր բերում համամասնություն և անհրաժեշտ կազմակերպչական ձևունություն, նաև հնարավորություն էր ստեղծվում անցնել միանման սպառազինության:

Հայկական բանակի զորատեսակների, կառուցվածքի, տե-

ղարաշխման, մարտակարգի և արշավակարգի մանրամասնությունները համապատասխանաբար ներկայացված են թիվ 2.5., 2.6., 2.7., 2.8., 2.9. գծանկարներում:

#### Ծանր հետևակ.

- վահանակիրներ՝ բուն ծանր հետևակ՝ մեծ օվալաձև, կամ ուղղանկյուն վահան, սաղավարտ, զրահ, կամ լանջապատճեկ, սուր, նիզակ.
- նիզակակիրներ՝ միջին հետևակ (պելտաստներ)՝ 2 – 2,5 մ նիզակ, սուր, միջին չափի կլոր վահան, սաղավարտ, գոտի, երբեմն թերև լանջապատճեկ, հնարավոր է նաև պարսատիկ:

#### Թերև հետևակ.


- նետաձիգներ և պարսավորներ՝ թերև հետևակ՝ (աղեղ ու նետեր, կամ պարսատիկ, սուսեր, փոքր չափի կլոր, կամ օվալաձև վահան, սաղավարտ, գոտի, շատ հազվադեպ՝ թերև լանջապատճեկ):

#### Ծանր հեծելազոր.


- ուզմական ռեֆորմից հետո հայկական ծանր հեծելազորը բաղկացած էր կատաֆրակտուսների զնդերից: Կատաֆրակտուսներ (զրահապատ այրումի)՝ 3,0–4,0 մ նիզակ, երկար բուր, կամ սուր, նետ ու աղեղ, միջին չափի կլոր վահան, սաղավարտ, գոտի, մարմինը և ձին՝ զրահապատ: Մշտական պրոֆեսիոնալ տասներկու գունդ, որից երկուսը՝ արքայի թիվնազորում: Հայկական բանակի հիմնական հարվածային ուժը:

Կատաֆրակտուսներ էին անվանում ոչ թե ցանկացած զրահապատ հեծելազորին, այլ հասուն ձևով կազմակերպված և հասուն ոճով մարտ վարող ծանր հեծելազորին:


XIX դարի ուազմական պատմագնետներից սկսվում է ավանդույթը ոչ կանոնավոր անկազմակերպ հեծյալների ցոլատները և զնդերը անվանել հեծելազոր (կոնսուլա), իսկ կազմակերպված, վարժված, շարքերով գրոհի դիմելու ունակ հեծյալ ստորաբաժանումները անվանել այրումի (կավալերիա):



Գծանկար 2.5. Հայկական բանակի զորատեսակների կառուցվագրը:




Գծանկար 2.6. Հայկական բանակի (հնարավոր) բաժանումը զորաբանակների




Գծանկար 2.7. Հայկական բանակի հնարավոր  
տեղաբաշխումը Մեծ Հայքում:

106




#### Գծանկար 2.8. Հայկական բանակի արշավակարգը

107




Գծանկար 2.9. Հայկական զորաբանակների մարտակարգը:

108




#### Գծանկար 2.10. Հայկական հեծելազնդի կառուցվածքը:

109




Գծանկար 2.11. Հայկական հետևակային գլուխ  
կառուցվածք:

110



Նկար 2.12. Արտաշատի պեղումներ. ձախից՝ նետերի երկաթյա  
ծայրեր, աջից՝ երկաթյա դանակ, բառածայր բուրակ, կապար-  
ճի մաս և նետերի երկաթյա ծայրեր [63]:



Նկար 2.13. Արտաշատի  
պեղումներ՝ ձախից երկաթյա  
դաշույններ, աջից՝ նիզակների  
և տեղերի երկաթյա ծայրեր [63]:

111

Կատաֆրակտան՝ թեփուկավոր զրահը՝ ճռշանը, լավ էր պաշտպանում հեծյալին, միաժամանակ մարտի ժամանակ չզրկելով նրան անհրաժեշտ շարժունակությունից: Մենք կատաֆրակտոսներին կանվանենք ճռշավոր այրումի: Պարթևական հեծելազորի երկու զինավոր տեսակների մասին է վկայում Կասպիու Դիոն. «Պարթևները վահան չեն օգտագործում, բայց իրենց զորքերը կազմված են հեծյալ նետաձիգներից և նիզակակիրերից, մեծ մատով լրիվ զրահավորված» [51]:

Փոքր վահան հեծելազորը (ըստ երևույթին) համենայն դեպքում ունեցել է (դժվար չէ թամբին կապած փոքր վահան պահել), սակայն հազվադեպ է օգտագործել միայն ձեռնամարտի ժամանակ և այդ պատճառով հունա-հռոմեական պատմիչների ուշադրությունից վրիպել է:

Տուս հայտնի պատմաբան Խազանովը նշում էր, որ, ըստ պատմական տվյալների, ճռշավոր այրումի սկզբնական շրջանում ունեցել են միայն երեք ժողովուրդները՝ պարթևները, հայերը և սարմատների ցեղերը [240, 241]: Նա ենթադրում է, որ աղվանները և իրեններն նույնպես ունեցել են նման զորատեսակ, սակայն խոստովանում է, որ սկզբաղյուրները խոսում են միայն այդ ցեղերի մոտ զրահապատ հեծյալ ջոկատների առկայության մասին: Աշխատանքը զրկած էր խորհրդային ժամանակաշրջանում, եթե մեր հարևան հանրապետությունների «պատմաբանները» ուշի ուշով հետևում էին, որ հայկական որևէ պատմական երևույթի վերաբերյալ անմիջապես «անհրաժեշտ գործադրություն անցկացվելու» և նույնատիպ նվաճումներ գրանցվեն հարևանների «փառավոր պատմական անցյալում»:

Հեղինակը ցույց այդ պարտադրանքը կատարելուց խոսափելու փայլուն օրինակ՝ ծանոթությունում նշելով, որ դա միայն զրահ ունեցող հեծյալներ էին, իսկ հոդվածում մի քանի անգամ նշում էր, որ ցանկացած զրահապատ հեծելազոր դեռ ճռշավոր այրումի չէ:

Դեռ մ.թ.ա. VI դ. հայտնի էր զրահապատ հեծյալների հոծ ջոկատներով հակառակորդի դեմ մարտ վարելու եղանակը, որը կատարելազործվելով ծեծեց ծանր հետևակին այրումիով հակազդելու էֆեկտիվ միջոց: Կատաֆրակտոսների զորատեսակը սկզբնական տեսք ստացավ մ.թ.ա. IV դ. վերջին քառորդում – III դ. սկզբին կիսարշոշով պարթև ցեղերի և բոշվոր սարմատների միջավայրում Բրանի արևելքում՝ հիմնականում ել-

ներով ծանր հետևակին՝ հունա-մակեդոնական փաղանգներին դիմակայելու անհրաժեշտությունից:

Մ.թ.ա. II դ. կեսին – I դ. սկզբին կատաֆրակտոսների մարտավարական հետաքրքր ստացան զարգացում նաև պարթևների հետ մարտնչած հայերի մոտ, որոնք իրենց ծանր հեծելազորի մի մասը վերածեցին կատաֆրակտոսների զների դեռ մ.թ.ա. II դ. վերջին: Սակայն Հայաստանում, որպես հզոր առանձին զորատեսակ, կատաֆրակտոսների այրումիով ստեղծման պատմվը, անկասկած, պատկանում է Տիգրան Մեծին:

Նոր մարտավարությունը էֆեկտիվ էր նաև հեծյալների ճակատամարտերում՝ թույլ տալով ճակատային զրոհում ջախչախիչ պարտության մատնել հակառակորդին, ցրելով նրա հեծելազորը կանոնավոր շարքերով ընթացող կատաֆրակտոսների կործանիչ հարվածով:

Երբ կատաֆրակտոսների զները համագործակցում էին թերևն հեծելազորի հետ, նրանց էֆեկտիվությունը զգալիորեն աճում էր:

Մ.թ.ա. 190 թ. Անտիոքոս Գ Մեծը Մագնեսիայի ճակատամարտում ծանր հեծելազորի կազմում օգտագործեց մի քանի հազար կատաֆրակտոսներ, որոնք ժամանել էին իր տերության արևելյան տիրույթներից, սակայն ճակատամարտի ընթացքը վկայում է, որ նա չփառ նրանց օգտագործման ձևը և նրանք հիմնականում կատարել են սելևյան ծանր հեծելազորի՝ ազգեմային ճակատամարտում հատկացված դերը:

Մ.թ.ա. II դ. վերջին քառորդում ճռշավոր այրումիով մարտավարությունը արդեն վերջնականորեն մշակված էր: Դա տեղի ունեցավ հիմնականում պարթևական միջավայրում, որտեղ կային անհրաժեշտ պայմանները՝ պետականության առկայությունը և երկարատև ծանր պատերազմները ուժեղ հետևակ և այրումի ունեցող Սելևյանների դեմ: Սելևյանների որոշ զրահապատ հեծելազորներ իրենց մարտավարությամբ նույնպես մոտ էին կատաֆրակտոսներին:

Ենթադրում եմ, որ Տիգրանիան ժամանակներին կարելի է վերագրել հայկական բանակում հետազայում արմատավորված մի շարք ռազմական տերմինների առաջին կիրառումը՝ ջոկ, ջոկատ, վաշտ, գունդ, սպա և այլն (փոխառված պարթևներից):

Որոշ հեղինակների պնդումները, որ այս զորատեսակը ծնվել և կատարելագործվել է միջինասիական սարմատական բռչվոր միջավայրում, ոչ մի քննադատության չեն դիմանում: Այդ միջավայրում, անշուշտ, կարող էին ծնվել կատաֆրակտուսների սպառազինության, կամ մարտավարության որոշ նախնական տարրերը, սակայն լավ վարժված, հստակ մարտավարությամբ գործող ճոշավոր հեծելազնդերը պարթևական ծնունդ էին:

Հայերը նույնպես ունեցել են զրահակիր հեծելազնդեր և կիրառել են հեծելամարտի որոշ հնարքներ, որոնք նմանվում էին կատաֆրակտուսների մարտավարությանը, սակայն դա բավարար չէ, որ մենք խոսենք հայկական միջավայրում նման մարտավարության ծնունդի մասին:

Դա պայմանավորված էր ևս մեկ կարևոր հանգամանքով՝ որքան կ առաջնակարգ համարվեր հայկական բանակում հեծելազորը, սակայն պատշաճ ուշադրություն էր հատկացվում նաև հետևակի զարգացմանը. Երկիր տեղանքը պարզապես թույլ չէր տալիս որդեգրել այլ մոտեցում: Փոքրասիական պետությունների կամ Սելևկյանների հետ պատերազմելիս հայկական հետևակը կատարում էր կարևոր դեր. հաղթանակը երկու զորատեսակի գրումարելին էր:

Եթե, ընդանրապես, խոսենք ծանր հեծելազորի ծնունդի մասին, ապա նրա ակունքները կտանեն Ասորեստանի և Վանի թագավորության բանակները, որտեղ մ.թ.ա. VIII դարում առաջին անգամ ձևավորվեցին զրահակիր հեծյաների ստորաբաժանումները [203, 205, 225]: Ս.թ.ա. IV դարից գոյություն ուներ մակեդոնական ծանր հեծելազորը, որը մակեդոնական փաղանգի հետ միասին ռազմի դաշտում որոշում էր ճակատամարտի ելքը [176, 184 – 186, 255]:

Չինաստանում այրումին առաջին անգամ հայտնվում է Վու-լին թագավորի ժամանակ (մ.թ.ա. 325–299 թթ.), իսկ մ.թ.ա. II դարի վերջում՝ ծանր (զրահապատ) հեծելազորը, սակայն այս հեծելազորի մարտավարությունը թույլ չի տալիս նազանուին պնդել, որ գործ ունենք կատաֆրակտուսների հետ [127, 239 – 241, 284]:

Հետաքրքիր է, որ չինական զրահապատ այրումին հայտնվելը ժամանակային առումով անմիջապես հաջորդում է Պարթևականում ճոշավոր այրումին գնդերի մարտավարու-

թյան վերջնական ձևավորմանը: Նոյնը հոների և Հնդկաստանի որոշ պետություններում ստեղծված զրահապատ այրումին մասին, որոնց կազմակերպությունը և մարտավարությունը չինականի նման միայն մասնակի զուգահեռներ են թույլ տախս անցկացնել կատաֆրակտուսների հետ:

Մ.թ.ա. VII դարի ասորեստանյան հեծելազորի մի մասը ոչ միայն զրահապատ էր, այլև կազմակերպված էր որպես առանձին զորատեսակ, ինչպիս մ.թ.ա. V դարի վերջում Կյուրոս Կրտսերի հեծելազորի ընտիր գնդերից մեկը: Սակայն նրանց մարտավարությունը նույնպես տարբերվում էր կատաֆրակտուսների օգուազործած մարտավարությունից:

Որոշ հետազոտողներ գուգահեռներ են փորձում փնտրել կատաֆրակտուսների և միջնադարյան ասպետների միջև, որը նույնպես անթույլատրելի է, որովհետո նրանց մարտավարությունը հականորեն տարբեր էր: Ասպետների գրոհը պարտադրաբար ավարտվում էր մենամարտով, իսկ կատաֆրակտուսները գործում էին միայն ստորաբաժանումներով՝ վաշտերով, գնդերով և ձեռնամարտից բացի կիրառում էին նաև նետաձգությունը:

Հետազոյում հոռմեացիները, որոնք իրենց վրա էին զգացել այս զորատեսակի կործանիչ ուժը, իրենք դիմեցին նույնանման այրումին կազմակերպմանը III – IV դդ., ընդ որում (հոռմեական բանակում առաջին կատաֆրակտուսների գնդերը կազմակերպվել էին Ալեքսանդր Սենեկու կայսրի օրոք), սկզբնական ժամանակներում օգտագործում էին պարսիկներից և հայերից ավար վերցրած սպառազինությունը:

Կատաֆրակտուսների և կիլիբանարների տարբերության մասին բազմից արտահայտվել են ինն աշխարհով զրադին անվանի ռազմական պատմաբանները և զինագետները, որոնք նախընտրում են այսուհետ կիլիբանարներ անվանել միայն մ.թ. III – IV դդ. հոռմեական ծանր այրումին որոշ տեսակները:

Տիգրանյան ժամանակաշրջանի կատաֆրակտուսները ազդերի և սրունքների շրջանում պաշտպանվածություն դեռ չունեին՝ մ.թ.ա. 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլոսը հրամայելու էր լեգոններներին խոցել կատաֆրակտուսների անպաշտպան ոտքերը: Սակայն արդեն հաջորդ դարում կատաֆրակտուսը արդեն լրիվ փակված էր զրահով:

Ճոշավոր այրումին զլամակոր հարձակողական գենքը նի-

գակն էր, որի երկարությունը 3,0 – 4,0 մ էր, որի մի մասը կարող էր պահպել ձիու վզից ազատ զցված գոտիով, մյուս կողմից հեծյալը կառավարում էր նիզակի ծայրի ուղղությունը: Հեծյալի հարվածի ուժը այստեղ երկրորդական էր, որովհետև մեծ արագությամբ ընթացող նժույգի քաշը և իներցիան գերազանցում էին մարդու ֆիզիկական հնարավորությունները՝ գումարվելով հեծյալի քաշին և ուժին: Հասցված հարվածը, որը կատարվում էր ոչ թե անհատական, այլ ջոկի, վաշտի կամ զնի կազմում՝ շարքերով ընթացող լավ վարժված այրուձիու ամբողջ թափով, կործանիչ անդիմադրելի ուժ ուներ: Միքանելով հակառակորդի շարքերը, որտեղ արդեն հնարավոր չէր օգտագործել երկար նիզակը, հեծյալը դիմում էր երկար, հեծելազորային թրին կամ սրին:

Կատաֆրակտոսի սպառազինության պարտադիր մասն էր կազմում նաև նետն ու աղեղը: Հեռահար մարտ վարելու ունակությունը խիստ բարձրացնում էր ճոշավոր այրուձիու մարտական ձկունությունը:

Ճոշավոր այրուձիու դեմ մարտնչելիս մինչ այդ անպարտելի հոռմետական ծանր հետևակը զըրկվում էր իր առավելությունների մեծ մասից:

Խազանցը գրում էր. «Կատաֆրակտոսների գնդերը, ըստ եռյան, այն միակ զորատեսակն էր, որը կարողացավ դիմակայել հոռմետական լեզենին ոչ թե պատահարար, այլ մշտապես: Եթե հոռմետական լեզենը անտիկ ուազմական մորի զագարենակետն էր հետևակի կազմակերպման իմաստով, ապա կատաֆրակտոսների հեծելազները նոյն ռազմական մտրի զագարենակետն էին այրուձիու կազմակերպման իմաստով» [239 - 241]:

Սենք անվերապահորեն համաձայն ենք անվանի պատմաբանի կարծիքի հետ: Ավելին, մ.թ. III-V դդ.-ից օգտագործվող կատարելազորքված քամբը և ասպանդակը վերջապես թույլ տվեցին հեծյալին մարտի ժամանակ ավելի էֆեկտիվ օգտագործել իր դիրքի առավելությունները: Նոյն ժամանակաշրջանում հոռմետացինները ստեղծեցին ծանր այրուձիու կանոնավոր գնդերը:

Հունական, հատկապես մակերոնական փաղանգին, հոռմետական լեզենին Արևելքը պետք է հակադրեր համարժեք զորատեսակ, այլապես զոհ էր գնալու զավթիչներին: Մ.թ.ա. V – I

դարերում դա մանգաղակիր մարտակառքերն էին, որոնց մարտական էֆեկտիվությունը չափավոր էր: Մ.թ.ա. III դ. – մ.թ. IV դ.՝ ճոշավոր հեծելազների մարտավարությունը ծանր հետևակի դեմ ավելի էֆեկտիվ էր: Արդյունքում, այրուձին հաղթեց, նոյն հոռմետացինները հարկադրված էին հետազայում ստեղծել ճոշավոր այրուձիու գնդեր [239 – 241, 282]:

Դա չի նշանակում, որ ճոշավոր այրուձին, ինչպես և լեզենները բազմաթիվ անզամներ պարտություն չեն կրել ռազմի դաշտում: Սակայն այդ ճակատամարտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե պարտությունը պայմանավորված չի եղել այլ գործուների հետ (խուճապ, հուսալքություն, դափաճանություն և այլն), ապա հաճախ դա այդ մարտում տվյալ զորատեսակի անզրագետ օգտագործման հետևանք էր:

#### Թեթև հեծելազոր:

Հեծյալ նետաձիգներ՝ աղեղ ու նետեր, տեգեր, երկար սուր, կամ թուր, փոքր չափի կլոր կամ օվալաձև փահան, սաղավարտ, զնի:

Թեթև հեծելազորը հայկական բանակի կարևորագույն տեսակներից մեկն էր: Նա կատարում էր հետախուզական, զայդական, հետապնդման, մարտական և բազմաթիվ այլ ֆունկցիաներ, իսկ հեռահար մարտում՝ նետաձության մեջ գերազանցում էր փառաբանված կատաֆրակտոսների գնդերին: Ոնց որ օրենք, թեթև հեծելազների մի մասը նաև ուղեկցում էր կատաֆրակտոսների գնդերին:

#### Օժանդակ զորամասեր:

- սակրավորների գնդեր.
- պաշարողական տեխնիկայով զինված գնդեր.
- օժանդակ զորամասեր՝ գումակ, սպասարկման և այլն:

Սակրավորները և պաշարողական տեխնիկայով զինված գնդերը պահպելում էին հայկական բանակի մարտադաշտի նախապատրաստման և քաղաքների և ամրոցների պաշարման խնդիրները: Հետազայում Հայկական կայսրության բանակում հասուլ համբավ ունեին կորդվացիների պաշարողական ստորաբաժանումները: Անկասկած, Տիգրանը իր բանակի այս ստորաբաժանումներում պետք է ներգրաված լիներ նաև հունական փայլուն մտավորականության ներկայացուցիչներին՝ ռազմական վարպետներին և Ճարտարագետներին: Հետազա-

յում մենք կտեսնենք, որ Տիգրանակերտի պաշտպանության ժամանակ հայկական բանակը օգտագործում էր հելլենիստական աշխարհին ծանոթ բոլոր տեխնիկական հնարքները [65, 68, 83, 102, 199, 224, 226, 281], ինչը ապացուցում է Տիգրանի բանակի օճանդակ զորամասերի բարձր մարտունակությունը:

Կանոնավոր բանակը բաղկացած էր պրոֆեսիոնալ զինվորներից և որոշ ժամկետով հավաքագրված զինվորներից, արտակարգ դեպքերում բանակը կարող էր համարվել բաղաքների և մարզերի աշխարհագրորով:

Ըստ երևույթին, բանակում պրոֆեսիոնալները չեն գերազանցում բանակի թվաքանակի մեկ քառորդը-հինգերորդը, ոչ ավել քան 20-24.000 զինվոր.

- կատաֆրակտուներ - 10.000 զինվոր.
- նետաձիգների, թերթի հեծելազորի, վահանակիրների, նիգակալիրների ընտիր զնդեր.
- սակրավորների և պաշարողական տեխնիկայով հազեցած որոշ խիստ մասնագիտացած ստորաբաժանումներ.
- արքայի թիկնազորը:

Մնացած 80.000-ը, հիմնականում զյուղացիներից և բաղացիներից հավաքագրված զինվորներն էին:

Արքայի թիկնազորը՝ որանիկ զորագունդը, մեր կարծիքով, անմիջապես չէր մտնում բանակի կազմի մեջ: Նրա հետարակոր կազմը և թվաքանակը կարելի է վերականգնել՝ Արեմենյանների և մի շարք Սելևկյան արքայական թիկնազորների հետ համեմատելով [74, 96, 97, 204]: Դժվար թե հայոց արքաների լուծումները եւկանորեն տարբերվեին նրանցից: Ենելով այդ կանխադրությոց, ենթադրում է թիկնազորի հետևյալ կազմ:

- կատաֆրակտուներ՝ 2.000 հեծյալ,
- վահանակիրներ՝ 1.000 հետևակային,
- նետաձիգներ՝ 1.000 հետևակային:

Ըստամենք 4.000 զինվոր, որից վահանակիրները և նետաձիգները հիմնականում ապահովում էին արքունիքի անվտանգությունը, իսկ հեծելազորները ուղեկցում էին արքային:

Եթե 100.000 հայկական բանակին գումարենք նաև Տիգրանի 4.000 թիկնապահ զորքը, կտանանք մի թիվ, որը նշում է Ապահանուը [17, 59] որպես հայկական բանակի թիվը 68 թ.

ուազմարշալից առաջ՝ 70.000 հետևակ և նրա կեսի չափ հեծելազոր, այսինքն՝ 105.000 զինվոր, որը զրեթե համընկնում է մեր հաշվածի հետ:

Այդպիսով, Տիգրանի առաջին ուազմական բարեփոխումը հիմնականում հեծելազորի արմատական ձևափոխում էր, որի հետևանքով նա կազմակերպվել էր պարթևական ձևով, յուրացնելով կատաֆրակտուների հեծելամարտի բոլոր ձևերը:

91-83 թթ. հայկական բանակի կառուցվածքի և մարտառմբ վերականգնումը՝ ուեկոնստրուկցիան, թույլ է տալիս արդի պատմագիտությանը որոշակի պատկերացում կազմել մ.թ.ա. Ի դարի ևս մեկ կանոնավոր բանակի մասին:

Խոսելով հայկական բանակի այս կամ այլ բանակից յուրացած մարտաձևների մասին՝ մենք մեկ անգամ ևս պետք է հիշենք, որ Տիգրանից առաջ արդեն կար հայկական ուազմական կայուն ավանդույթը, որը հայկական բանակի ավելի քան մեկ և կես հազարամյա անցած ուրու հետևանք էր:

Բանակը պետք էր սպառազինել, կերակրել, ապահովել տանիքով, կազմակերպել բուժական սպասարկումը, նաև ձիերի բուժումը, խնամքը, բուժումը, վարժեցումը: Եթե դա հարյուր հազարավոր զինվորներից և մի բանի տասնյակ հազարավոր ձիերից ավել բաղկացած բանակ էր, ապա նրա կազմակերպումը և սպասարկումը դառնում էր երկրի տնտեսության ճյուղ:

Հայաստանում օգտագործվող ողջ սպառազինությունը պատրաստվում էր տեղում: Մենք չունենք ոչ մի տեղեկություն Հայաստան ներմուծվող գենքի մասին: Աշխարհում մետաղագործության ակունքը հանդիսացող երկիրը, բնական է, որ կարող էր իրեն ապահովել բարձրորակ մետաղով, նաև արհեստագործ վարպետներով, դարբնի աշխատանքը միշտ հարգի էր հայերի մոտ:

Հայաստանում, ինչպես ամենուր, գենքի մի մասը ուներ օրիգինալ ծագում և օգտագործում, միուսը՝ ըստհանուր առաջավորախական ծագում, հայտնի էր տարբեր տեղերում, և նրանց ծագումը դժվար է պարզել: Կային գենքի կամ զրահի այնպիսի տեսակներ, որոնք սկզբում կիրառվել էին որոշ ժողովուրդների մոտ, հետո տարածվել հարեանների և ոչ հարեանների մոտ, սակայն կրում էին իրենց ստեղծած ժողովուրդի անունը՝ հայկական սվին, սկյութական նետ, իսպանական

սուր, մակեդոնական նիզակ՝ սարիսսա:

Մահրամասն գենքափուտական հետազոտությունը պահեցում է հետազոտների, պատմաբանների և գենքագետների համատեղ բրունաշան աշխատանք և դուրս է ներկա աշխատանքի շրջանակներից: Սակայն խուսափել որոշ հարցերի ընարկումից չի հաջողվի, այլապես չեն կարող ամբողջացնել տիգրակյան բանակի պատկերը:

Եթե Հերոդոտոսը [26], Նկարագրելով հոյն-պարսկական պատերազմների մի դրվագ, բողել էր մեզ հետաքրքիր վկայություններ արևելյում՝ Արեմենյան տերությունում, պատրաստված զենքի որակական գերազանցության մասին հոյնականի համեմատությամբ: Ազնվական պարսիկ հեծյալ զինվորներից մեկին սպանելու համար հոյն հովայիշները նրան տապարում են գետին, փորձում իսցել նիզակներով և սրբով: Սակայն պարսիկի զրահը դիմանում է բոլոր հարվածներին, և նա, հսկայական ուժի տեր մի մարդ, մի քանի անգամ կարողանում է ոտքի կանգնել, ամեն անգամ սպանելով մեկ կամ մի քանի հոյն զինվորների: Վերջապես հոյներից մեկը հուշում է ընկերներին, որ նիզակի հարվածը ուղղեն դեպի սաղավարտի աշերի համար նախատեսված անցքերը, որով և սպանում են պարսիկներ:

Այս դրվագի նկարագրությունը շատ հետաքրքիր է մեզ համար: Պարսիկի զրահը պահպանում է ողջ մարմինը: Անխոցելի է ոչ միայն մարմինը, այլ նաև ձեռքերը և ոտքերը: Ըստ երևույթին, նրանք պատրաստված են բարձրորակ երկարից կամ պողպատից և դիմանում են երկաթ և բրոնզ զենքերի հարվածներին: Անշուշտ, այս որակի զենքն ու զրահը դժվար թե հասանելի լիներ բոլոր զինվորներին: Սակայն մեզ համար կարևոր է այն փաստը, որ այս որակի զենքը կարող է արտադրվել նաև Հայաստանում: Հնագիտական պեղումների արդյունքները և պատմական վկայությունները այս պերմանը հակառակ չեն [110, 111, 168, 231]:

Տասներկու հազար կատաֆրակտոսների համար անհրաժեշտ էր պատրաստել սպառագիտության համապատասխան տասներկու հազար կոմպլեկտ: Նոյնքան լանջապանականան անձկող անհրաժեշտ էր ունենալ ձիերին պաշտպանելու համար: Այս ամենը արտադրելու համար, բայց երևույթին,

Արտաշատում և երկրի այլ քաղաքներում կազմակերպվել էին խոշոր զինագործական արհեստանոցներ:

Տասը հազար կատաֆրակտոսներ հանդերձավորելու և սպառագիներու համար անհրաժեշտ էր ավելի շատ ջանք և ծախս, քան 20.000 լեզեռներների համար, իսկ եթե հաշվի առնենք ձիերի ծախսը, ապա բոլոր 25.000-նը: Այս միջոցներով կարելի էր սպառագիներ և պահել երեք – չորս հռոմեական լեզեռներ:

Սպառագինությունը պատրաստվում էր ոչ միայն ծանրագին հեծելազորի համար: Զգայնորեն կատարելազորվել էր նաև այլ զորատեսակների սպառագինությունը, որը պահանջում էր պահել մի քանի անգամ ավելի շատ արհեստանոցներ: Որոշ զենքի տեսակներ կարող էին պատրաստվել նաև մասնավոր դարբնոցներում, որպես պետական պատվեր:

Հայկական բանակի արշավակարգը նման էր Հին աշխարհի, մասնավորապես Հին Արեւելի բանակներում անհիշելի ժամանակներից կիրառվող սկզբունքի՝ առջևից քայլում էր ծանր հետևակը, հետո՝ թերեւ հետևակը, ապա հեծելազորը, վերջում՝ գումակը: Երթի ժամանակ զորքը անսպասելի հարձակումից պաշտպանվում էր առաջապահ, վերջապահ և կողմանապահ զուկատներով, որոնց հատկացլում էին հիմնական զորամիավորումներից: Ավելի հեռահար զինում էին բանակի շրջակա տարածքները հետախույզների խմբերը: Նման արշավակարգի հիմքում ընկած էր մեկ հասարակ սկզբունք՝ զորքի շարժման տեմպը, արագությունը որոշվում է նրա ամենադանդաղ մասսով: Հին աշխարհի բանակների մեծ մասում դա ծանր հետևակն էր: Երբ բանակը արշավի էր ելուսմ միայն թերեւ հետևակով, հեծելազորով և թերեւացրած գումակով, ապա նրա շարժմանակությունը խիստ աճում էր: Ավելի արագ էին շարժվում միայն հեծյալ բանակները: Թշնամական տարածքներով անցնելիս, խիստ ուժեղացվում էր գումակի պահպանությունը, որպես օրենք, այն տեղափոխվում էր արշավակարգի կենտրոնը: Նման արշավակարգի նկարագրությունները և պատկերացնակները մեզ հայտնի են դեռ ասորեստանյան բանակների արշավաերենից ժամանակաշրջանից:

Լեռնային երկրի բանակը անհրաժեշտաբար պետք է կարողանար օգտագործել տեղանքի, հատկապես նեղ կիրճերից անցնելու վտանգը նվազեցնող բազմաթիվ հնարքներ: Նոյնը

Վերաբերում էր զարնանը վարարող գետերի գետանցման ժամանակ հանկարծակի հարձակումից խուսափելու խնդիրներին: Անհրաժեշտության դեպքում կառուցվում էր դաշտային ճամբար, սակայն, ի տարբերություն հոռմեական բանակի, այդպիսի պաշտպանությանը հայկական բանակը դիմում էր հագվադեպ:

Մեմբ քննարկեցինք բանակի թվաքանակի, կազմակերպման, կառուցվածքի, մասամբ նաև մարտավարության հարցերը: Մարտավարությանը մենք դեռ կանրադաշնակը ճակատամարտերի ընթացքի քննության ու նկարագրության ժամանակ: Սակայն, ուղարկան հաջողությունները կապված են նաև այլ, ոչ պակաս կարևոր գործուներից, որոնք գերազանց ներկայացրել էր գերմանացի անվանի ուղարկան պատմաբան Հելլբրյուկը.

«Ռազմական հաջողությունները կախված են ... ոչ թե մեկ, այլ երկու բացարձակ տարբեր պատճառներից: Առաջին պատճառը, որը ավելի շուտ է աչքի ընկնում, առանձին զինվորի խիզախտքյան և ֆիզիկական պիտանելիության մեջ է: Հաջորդ պատճառը մարտավարական միավորում առանձին զինվորների իրար մեջ ներքին միարանության ամրության մեջ է: Ինչքան է տարբեր լինեն իրենց քննությունը այս երկու ուժը՝ առանձին մարտիկի պիտանելիությունը և զորամասում իրար մեջ իրենց ներքին միարանությունը, չի կարելի, համենայն դեպք, երկրորդը լրիվ անշատել առաջնից: Ինչքան էլ լավ լինի վարժեցված և միարանված զորամասը, բայց եթե այն բաղկացած լինի միայն վախճուներից, ապա կինքի լրիվ անպիտան: Բայց, եթե զինվորական զանգվածը ունի գոնեն չափավոր քանակի արիություն, ապա դրան գումարվում է երկրորդ տարրը՝ կորպորատիվությունը և դա ստեղծում է այնպիսի զինվորական ուժ, որի առաջ հարկադրված են նաև անհատական խիզախտքյան բոլոր դրսուրումները: Հունական քաղաքացիների փաղանգին շարդվեց պարսիկների ասպետական քաջությունը, ընդ որում այս մարտավարական միավորի՝ փաղանգի հետագա զարգացումը տվեց նոր, ավելի նուրբ ձևեր, մինչև մարտական գծաշարի ու կոհորտների. այս ամենը հանդիսանում է անտիկ ուղարկեստի պատմության հական բովանդակությունը: Հոռմեացիները միշտ հաղթում են ոչ թե այն պատճառով, որ

ավելի խիզախ էին իրենց հակառակորդներից, այլև այն պատճառով, որ իրենց կարգապահության շնորհիվ նրանք ունեին ավելի ամուր մարտավարական գորամասեր: Դա խոսում է այն մասին, թե ինչքան կարևոր և, միաժամանակ, ինչքան դժվար էր սկզբնական դժվարաշարժ փաղանգից ստեղծել բազմաթիվ փորք օպերատիվ շարժական մարտավարական գորամասեր:» [100]:

Հայկական բանակի միատարր ազգային խառնվածքը, հայոց արքաների իրականացվող ուղմագվարական խնդիրների համաժողովրդական շահերից բխող բնույթը, հաճախ անմիջապես հայրենի հողի պաշտպանությանը ուղղված մարտական գործողությունները՝ գումարած լեռնաշխարհի դաժան կլիմայում ապրող ազատ համայնական գյուղացու հոգեբանությանը տալիս են երկրին լավ զինվորներ:

Հունական և հոռմեական բանակների կառուցվածքը և մարտառք միշտ գտնվել են ժամանակակից հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հունական պատմագրական, վիմագրական և հնագիտական նյութերը մեծապես նպաստել են բազմաթիվ հարցերի պարզաբանմանը: Հազարավոր զինվորական հողվածներում և հարյուրավոր մենագրություններում շարադրված նյութերը անհամեմատ ավելի քիչ տեղեկություններ են պարունակում հովերի և հոռմեացիների հակառակորդների բանակների մասին՝ ոչ միայն տվյալների սղության, այլ նաև պատշաճ ուշադրության բացակայության պատճառով [84, 283]:

Հայկական բանակի զորատեսակների ձևավորման, կառուցվածքի և մարտառի վերականգման ժամանակ մենք դուրս չենք եկել արդի ուղարկան պատմագիտության մեջ լայնորեն կիրառվող մեթոդների շրջանակից, ավելին, ձգտել ենք լինել չափավոր և պահպանողական: Նույնիսկ այս համեստ մուտեցմամբ կատարվող հետազոտությունների արդյունքները ապշեցուցիչ են. անցյալի ստվերից դուրս են զալիս ոչ թե «բարբարոս զինյալների ամրությունները», այլ սեփական և հարևանների մշակած ուղարկեստը հմուտ կիրառող կանոնավոր բանակի պատկերը:

Հոռմացիները, պարբեսերը, Տիգրանյան տերության հայերը, Միհրանատի պոլստացիք հազվադեպ էին պատերազմում առանց դաշնակիցների: Սուն Ցզիի այս միտքը, որ երբեք մի՛ պատերազմիր առանց դաշնակիցների, նրանք կիրառում էին անշեղորեն:

Հոռմացինան հանրապետությունը ունենալով մ.թ.ա. I դարում մոտ 200.000-300.000 մշտական հոռմացինան բանակ՝ 40-50 լեգեոն, դաշնակիցների կազմում ևս ուներ առնվազն 200.000-300.000 զինվոր:

Պոլտական պետության զորքերը ծայրահեղ լարման դեպքում կարծ ժամանակով կարող էին հասնել 300.000 զինվորի՝ իր մեջ ունենալով երեք հիմնական բաղկացուցիչ մաս՝ հոյն հոպլիտներ ու նավաստիներ, փոքրիայրյան հեծելազոր ու նետաձիգներ, տեղական ցեղերից հավաքված ջոկատներ և զորաբանակներ:

Պարթևական տերությունը ի զորու էր ռազմի դաշտ հանել մինչև 50.000 հեծելազոր և ոչ պակաս հետևակային: Բանակի ընդհանուր թվի մասին հրատարակված տեղեկություններ մենք չենք հայտնաբերել, սակայն կասկածիծ վեր է, որ զինված ուժերի ընդհանուր բանակը 200.000 – 300.000 պակաս չէր կարող լինել, իսկ արևելյան սահմանների կիսանկախ քոչվորների ավելի լայն ընդգրկման դեպքում՝ ավելի շատ:

Օյկումենի ամենահզոր պետությունների զինված ուժերը ունեին ուժեղ ազգային միջուկ, միայն Պոլտակուն էր դուրս մնալու այս օրինաշափությունից: Պատահական է արդյոք, որ Պոլտական պետությունը իսպատ կործանվեց, իսկ Հայաստանը, սեղմված լինելով Հոռոմի և Իրանի միջև, պայքարեց և գոյատևեց: Այս պայքարը, բացի մեզ հայտնի պետական և զինվորական դեմքերից, ունի մեկ ուրիշ մշտական գործուն մասնակից՝ հզոր հայոց բանակը: Տարբեր դարերում այս հզորության ճարտարապետներն էին Երվանդ Մեծը (մ.թ.ա. 336 – 300 թթ.), Արտաշես Ա Բարին (մ.թ.ա. 201 – 160 թթ.) և հայոց արքաներից ամենակառունք՝ Տիգրան Բ Մեծը (մ.թ.ա. 95 – 55 թթ.):

Հայկական բանակի զանգվածային պրոֆեսիոնալիզացիան սկսվել էր Տիգրան Մեծի օրոք: Բանակի մի մասը (մոտ մեկ քառորդ-հինգերորդը) դարձել էր զինվորական դաս, որը ժառանգաբար փոխանցում էր իր պարտականությունները և իրավունքները: Մնացածը հավաքագրվում էր ժողովրդի այլ

խավերից, զրեթե զերազանցապես համայնական զյուղացիությունից և երկարատև ծառայելով բանակում՝ ստանում համապատասխան ռազմական պատրաստություն:

Հայաստանի ռազմական համակարգը որոշ չափով նմանվեց պարբեսականին, սակայն կար նաև մի էական տարբերություն. առաջնությունը տալր հեծելազորին՝ հայկական բանակը փորձել էր պատշաճ մակարդակի պահել նաև հետևակը: Որքանու էր դա հաջողվել, առանձին կիսումի հետագայում:

Անժմտելի է, որ Հայաստանի լեռնոտ բնաշխարհում, առանց որակյալ հետևակի գործուն մասնակցության, անհետքին էր պատերազմում հասնել հաղթանակի:

Մեզ համար կարենու է պարզել հայկական զորքերի հնարավոր տեղաբաշխումը երկրում: Այդ մասին կան կցկուուր տեղեկություններ, որից ամանակարելոր բդեշխների ինստիտուտի առկայությունն է: Տիգրան Մեծի ժամանակ կար չորս բդեշխնություն՝ Աղձնիքը, Ծոփքը, Գուգարքը և Նոր Շիրականը (Նորշիրականը): Հայաստանում զորքերը հնարավոր է տեղակայված լինելին այսպես:

- Աղձնիք՝ մոտ 10.000 զինվոր,
- Գուգարք՝ մոտ 10.000 զինվոր,
- Նոր Շիրական՝ մոտ 10.000 զինվոր,
- Ծոփք՝ մոտ 10.000 զինվոր,
- մայրաքազար Արտաշատ՝ մոտ 5.000 զինվոր,
- Հայաստանի այլ վայրերում՝ մոտ 5.000 զինվոր,
- ընդամենը՝ 50.000 զինվոր:

Այդ դեպքում դաշտային բանակը ևս կազմում էր 50.000 զինվոր՝ հայկական բանակի կեսը: Այս թվերը հավաստված չեն պատմական աղբյուրներում, սակայն տրամաբանական են և, ընդհանուր առմամբ, արտացոլում են հետազոտվող ժամանակաշրջանի իրականությունը (ուսակաները):

## 2.5.Վիրքի և Աղվանիքի հպատակեցումը՝ 89 – 87 թթ.

Վիրքի և Աղվանիքի հպատակեցման ժամանակի մասին մենք ուղղակի տեղեկություններ չունենք, սակայն Տիգրանի

գործողությունների հերթականության տրամարանությունը ցույց է տալիս, որ ամենահնարավորը 89 – 87 թթ. ժամանակահատվածն է: Բրագես:

- 95 թ.՝ զահակալում,
- 94 թ.՝ Ծոփքի զրավում,
- 93 – 91 թթ. կապարովկիական ճգնաժամ,
- 90 – 89 թթ. բանակի ռեֆորմ,
- 89 – 87 թթ. ... ??
- 86 – 84 թթ. հայ-պարթևական պատերազմ,
- 83 թ. Միրիայի հպատակեցում:

Նախատարաստվելով մեծ պատերազմներին Հռոմի և Պարթևատանի դեմ, Տիգրանը և Սիհրդատը պետք է ապահովենի իրենց թիկունքը Կովկասում: Միհրդատը դա արեց 107 թ.՝ Փոքր Հայքի գործուն աջակցությամբ զրավելով Կողքիսը և իր ազդեցությունը տարածելով սևծովյա ցեղերի վրա մինչև Բուապրյան թագավորություն, որը, հետագայում, նույնպես իրեն ենթակա էր [169]:

Տիգրանը իրագործեց Վիրքի և Աղվանքի հպատակեցումը 89 – 87 թթ. ժամանակահատվածում: Քիչ հավանական է, որ պատերազմը հյուսիսում տևեր ամբողջ Երեք տարի, սակայն, ըստ Երևանյին, նա հասարակ ռազմական գրոսանք է չեղու: Հետազոտում, ըստ Պլուտարքոսի, 66 – 65 թթ. Պոմպեոսին հզոր հոռմետական բանակին անհրաժեշտ եղավ անցկացնել Երկու ռազմարշավ այս ցեղերին հպատակեցնելու համար՝ տալով Երեք ճակատամարտ: Առաջինը՝ 40.000 աղվան զինվորների դեմ քուտի ափին, Երկրորդը՝ մոտ 40.000 իբրևների դեմ Իբերիայում և Երրորդը՝ 72.000 աշխարհազորային աղվանների դեմ՝ Ալազանի ափին [42]: Նույնիսկ եթե իբերների և աղվանական ցեղերի գորքերի թվաքանակը հետազոտում Պոմպեոսը իր գեկուցումների մեջ ուոճացրել էր, այնուանենայնիվ պետք է ընդունենք, որ հյուսիսային այս ցեղերը բավականին ուժեղ հակառակորդ էին, իսկ հոռմեացի զալթիչներին նրանց լուրջ դիմադրություն ցույց տալու փաստը անժևտելի է:

Տիգրանը Վիրքը և Աղվանքը հպատակեցրել էր և միացրել Հայաստանին: Միայն 66 թ.-ին այս երկու երկրները, օսուվելով Տիգրանի ռազմաքաղաքական ծայրահեռ լարված ու բարդ

իրավիճակից, դուրս էին եկել Տիգրանի գերիշխանությունից:

Մ.թ.ա. 89-87 թթ. Վիրքը և Աղվանքը, Էականորեն զիջելով հայերին կազմակերպվածության, սպառազինության և մարտավարության մեջ, դիմագրավել հայկական բանակի հումկու զրոհը չեին կարող, հպատակել էին և կազմել Հայկական տերության բաղկացուցիչ մասը:

## 2.6.Երկրորդ հայ - պարթևական պատերազմը՝ 86-84 թթ.

Հայ-պարթևական պատերազմին Տիգրանը պատրաստվել էր համակողմանիորեն: Մշտական հետախուզումից բացի օգտագործելով իր պարթևական արքունիքի լավ իմացությունը՝ Տիգրանը 90 – 87 թթ. հրահրում է Պարթևատանում զահականական վեճեր, որոնք վերաճում են խոռությունների և կրիվների պարթև թագավորի հետ: Այս ամենը խիստ բուլացնում է Պարթևատանին, ջատում նրա ուժերը և մեծապես նպաստում հայերի հաղթանակին:

Մոտ 90 թ. Միհրդատ Բ Մեծը կորցնում է իշխանությունը իր հարավային տիրույթների՝ Քարակենեի և Էյսումայիսի նկատմամբ՝ պահպանելով այն Հյուսիսային Միջազգետրում, Բարելոնիայում և Մելիխայում: Պարթևաց արքայից արքա Միհրդատ Բ Մեծի վիճակը այնքան է վատանում, որ նա նոյնիսկ, ակնկալում է իր աներոշ՝ Տիգրանի օգնությունը. Տիգրանի դրսուր Արիազատ-Ավտոման Միհրդատ Մեծի երկրորդ կինն էր [34]:

Մեր Միհրդատ Բ Մեծ Արշակունին մահացավ մոտ 87 թ.: Մենք չգիտենք այդ երկու արտակարգ անձնավորությունների՝ հայոց և պարթև մեծ արքաների՝ աներոշ և փեսայի անձնական փոխարքերությունների մանրամասնությունները, սակայն փաստ էր, որ Տիգրանը զրոհը Պարթևատանի դեմ սկսեց միայն փեսայի մահվան հաջորդ տարրում: Հաշվի առնելով արդեն 90 թ. սկսած իմդժությունները Պարթևատանում՝ միայն հարմար պահի ընտրությունը չէր կանգնեցնում հայոց զահակալին: Գուցեց մրցակցության զգացումից բացի, տասնվեցամյա մշտական շփումը առաջացրել էր մարդկային շերմ զգացումներ ...

Համաշխարհային պատմությունը շարադրելիս արդյոք մեկը հաշվի ենք առնում մարդկային փոխարաբերությունների նշանակությունը աշխարհում կատարվող անցքերի վրա:


Հետազայում, մանրամասն քննելիս Տիգրանի և Պոմպեոսի փոխարաբերությունները, մենք ավելի մանրամասն կանդրադառնանքը դրան:

Դարթեստանում միահեծան իշխանության հավակնող Գոտարձը բաղարակած ասպարեզից հեռացավ մոտ 86 թ.: Ամենայն հավանականությամբ, նա պարտվեց Օրոդեսին, որը սկսեց վերականգնել Պարթևական տէրության խարիսված հիմքերը և ամրապնդել իր՝ միահեծան տիրակալի իշխանությունը:

Տիգրանի համար արդեն չէր կարելի հապաղել և կորցնել հարմար պահը: Պայքարել հզորությունը վերականգնած Իրասի հետ անհամեմատ ավելի ծանր՝ զրեթե անիրազրծելի խնդիր էր. նոյնիսկ Հռոմը, իր հզորության գազաթնակետին, ժամանակավոր հաջողությունների էր հասել միայն պատակաված Իրասի հանդիպ:

Մ.թ. 86 թ. վերջին հայկական բանակը սկսեց իր հուժկու գրոհը դեպի Կենտրոնական Սիցագետը: Հետ գրավելով հայկական «հոթանասուն հովիտները», Տիգրանը ներխուժեց Արդարենե, որի կենտրոն Արքելայի և այնուհետև Նինվեի մոտակայքում տեղի ունեցած ճա ատամարտերում հաղթեց պարթևական բանակներին: Այս հաղթանակներից հետո հայկական բանակը կտրուկ շրջվու և դեպի արևմուտքը, հպատակեցնում Կորդորը, հետո՝ Սիրի նիսան, որտեղ գրավում է Հյուսիսային Սիցագետքի խոշորա ույն ամրությունը՝ Սծրին քաղաքը, որը պարբռների գլխավոր, հենակետն էր հյուսիսում:

Հաջորդ հարվածը Տիգրանը ուղղում է դեպի Եկրատան՝ Մեծ Մեղիայի մայրաքաղաքը, որը հանդիսանում էր պարքը Արշակունիների ամստային նատավայրը: Ընտրելով Հյուսիսային Սիցագետքից Մեծ Մեղիա շարժվելու ամենահարմար երթուղին, հայկական բանակը Տիգրիսի հոսանքով շարժվում է դեպի արևելք: Եկրատանին՝ ուղենալով Ասորեստանի կողմից՝ Տիգրանը գրավում է Աղրա սև բերդը, որը փակում էր Քերմանցանից Համարան՝ Եկրատ և տանող ուղին:



Քարտեզ 2.14. Մ.թ. 86-84 թթ. հայ-պարթևական պատերազմ

Համալրելով իր բանակը հպատակեցլած թագավորությունների զորքերով, Տիգրանը պաշարում է Էկրատանը, որտեղ գտնվում էր այդ պահին պարթևական արքունիքը:

Տիգրանի խոշորագույն հաջողություններից էր Ասորատականի թագավոր Սիրիդատի հայոց գերիշխանությունը ճանաչելը, որից հետո ատրպատականյան հեծելազները, ինչպես կորդվացների պաշարողական ջոկատները, համալրում են հայկական բանակը:

Պարթև Արշակունիները խաղաղություն են խնդրում և Եկրատանի մոտ կնքվում է հաշոռության պայմանագիրը:

Պատերազմի արդյունքները հետևյալն են:

- Կորդորի, Օսրենեի, Աղիաբենեի, Ասորպատականի, հետագայում նաև Կոմմագենեի կախյալ թագավորությունները այսուհետ անցնում են հայոց գերիշխանության տակ.
- Միզոնիան կցվում է Հայաստանին՝ դառնալով նրա նահանգը որի կառավարիչն է նշանակվում Տիգրանի եղբայր Գուրասը.

- Պարթևստանը անվերապահորեն ճանաչում է Պարսիք, Էյսումայիսի և Քարակենեի թագավորությունների անկախությունը.
- Արքայից արքա տիտղոսը պարթևներից անցնում է հայերին.
- Պարթևները պարտավորվում են երկրորդ կողմի հետ չկըրել հակահայկական պայմանագրով:

Հայաստանը ևս պատերազմում սպառեց իր հարձակողական թափը, ծանր պատերազմը շարունակելու նրա հնարավորությունները գրեթե սպառված էին: Էկրատանի պայմանագիրը տվեց Տիգրանին իր ունեցած ուժերի համեմատ առավելագույն արդյունքը: Այսուհետև Տիգրանը ջանում էր պահել առավելությունը ոչ միայն ռազմական գերազանցության ճանապարհով, այլ նաև դիվանագիտական՝ մշտապես իրարելով Պարթևստանում գահակալական կորիվները:

Տիգրանը իրականորեն էր զնահատում Իրանի կարողությունը՝ արագ վերականգնել իր ուժերը:

Կա ևս մի կարևոր հանգամանք, որը փրկեց Պարթևական պետությունը կործանումից, իսկ Իրանը հայոց գերիշխանության տակ միավորվելու հնարավորությունից: Չարդարացան Տիգրանի հաշվարկները՝ քայլայել ախտյանին ներսից պատրազմի վերջում պարթևները ցուցաբերեցին դիմադրելու մեծ կամք, իսկ պահպանելով իրենց դիրքերը Միջագետքի կարևորագույն մատում՝ Բարեկրնում և կապերի մեծ մասը Միջին Ասիայի հետ՝ նրանք ունակ էին դեռ հասցնել հայերին ծանր հարվածներ:

Եվ ամենակարևորը՝ Իրանի ավագանու մեծամասնությունը նախընտրեց Արշակունիներին և մերժեց Արտաշեսյանների հետաքեմելյան հավակնությունները: Տիգրանին չհաջողվեց ներկայանալ որպես Արեմենյանների ոգին վերակենդանացնդ համահրանյան առաջնորդ: Ըստ երևույթին, Իրանի ավագանու տիգրանամետ խմբավորումները մասսամբ ոչնչացվեցին, և մի մասն էր միայն շարունակում զադունի աջակցել Տիգրանին:

Տիգրանի մեծապեսական ամենափայլուն ձեռնարկումը՝ պատերազմը Պարթևական տերության դեմ, վերջացավ փայլուն հարթանակով, սակայն, ըստ եռության, դա իր և Միջերդատի օկումենի նվաճմանը ուղղված ծավալապաշտական հսկայա-

կան ծրագրի անհաջողությունն էր: Պարթևստանը պարտվեց, սակայն վերջնական չնկավեց և չդարձավ Հայկական տերության կցորդը:

Տիգրանի մեծ հայրանակի լուրը տարածվեց օյկումենեում, նա միանգամից ճանաչվեց աշխարհի արքաներից մեծագույնը՝ արքայից արքա, սակայն իր ծրագրերի ձախողումը ակնհայտ էր: Իրանը նվաճելու միջոցով Հռոմին դիմակայելու և հայթերու համար հզոր հիմք ստեղծելու ծրագրերը հօդ ցնեցին: Առցելով սպասվում էին դիվանագիտական և ռազմական ծանր պաշտպանական մարտեր. 89-85 թթ. առաջին հոռոմեապոնտական պատերազմում Միջերդատը պարտվել էր:

Ռազմական արվեստի պատմության համար երկրորդ հայպարթևական պատերազմը զգալի հետաքրքրություն է ներկայացնում միևնույն այժմ: Մի քանի հազար կիլոմետր ուժեղ հակառակորդի դեմ հայթական մարտերով անցած հայկական բանակի ռազմավարությունը և մարտավարությունը գերազանցեցին պարթևականինը: Հայկական բանակը ցուցաբերեց լավ կազմակերպվածության և բարձր մարտունակության վառ օրինակ, որը արժանի է հատուկ պատմագիտական ուսումնասիրության:

Ռազմական արվեստի պատմության տեսանկյունից այս արշավանքը հետաքրքիր է համեմատել պարթևների դեմ նախկինում կատարված Սելևկյանների և հետազոյում կատարված հռոմեական արշավանքների հետ:

## 2.7.Միջիայի հպատակեցումը՝ 83 թ.

Միջիայի հպատակեցման գործընթացը հայոց արքայից արքան, ըստ երևույթին, սկսել էր 83 թ.-ից շատ շուտ, եթե զաղտնի կապեր էին հաստատվել աստրական իշխող վերևախավի բազմաթիվ ներկայացուցիչների հետ, և աննախադեպ աշխուժացավ Միջիայում հայոց հետախուզական գործունեությունը: Ակտիվ հետախուզվում էին սելևկյան բանակի վիճակը, սելևկյանների արքունիքի, պոլիսների վերնախավերի տրամադրությունները: Տիգրանի գործականների օժանդակությամբ

Սիրիայում ստեղծվում էին հայամետ խմբավորումներ:

Սիրիայի հասարակության մեծ մասի ցանկությունը՝ Տիգրանին տեսնել սելեկյան զահին, պայմանավորված էր իր կարևորագոյն պահանջները կատարելու Տիգրանի համաձայնությունից:

- ապահովել երկրում խաղաղություն և առևտրային ճանապարհների անվտանգություն.

- հարգել երկում ապրող ժողովուրդների հավատալիքները, սրբավայրերը և Մելիկյանների կողմից շնորհած իրավունքները.

- սահմանափակել երկրի իշխող վերևախավի իրավունքները այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Սիրիայի պաշտպանության և զարգացման համար:

83 թ. Սիրիայի հպատակեցման քաղաքական մակրամասնությունները պարզաբանված են Ծուրեն Մասասերյանի մենագրությունում [34]:

Հայոց արքայից արքայի այս միջոցառումը ուներ նաև շատ հետաքրքիր ուազմական քաղաղորիչ:

Քարդություն էին առաջացնում հետևյալ հանգամանքները.

- Հրավիրված լինելով սիրիական զահին՝ Տիգրանը հանդիպելու էր հակառակ կուսակցության հակազդեցության, այդ թվում և ուազմական: Անհրաժեշտ էր ճնշել այդ դիմադրության օջախները ամենայն խասությամբ, սակայն առանց մեծ արյունահեղության՝ նախնանութելով այլ խաղաղեցման միջոցներ:

- Հայկական ստորաբաժանումները պետք է տեղադրվեին Սիրիայի ուազմավարական նշանակություն ունեցող քաղաքներում և ամրոցներում: Այս գործողությունը անհրաժեշտ էր կատարել արագ և կազմակերպված՝ ապահովելով տեղական բնակչության բարյացակամ վերաբերմունքը դեպի հայկական բանակը: Դրան կարելի էր հասնել տեղացիների վրա ազդելով ոչ միայն իր հգրությամբ, այլև կարգապահությամբ:

- Արևոտրական ճանապարհների ապահովության համար պետք է ձեռնարկվեին հասուկ վերահսկողական միջոցառումներ: Սիրիայում տիրող անիշխանության պայմաններում աշխուժացած որոշ հրոսակախմբերը պետք է ցրվեին, կամ ոչընչացվեին:

- Սիրիայի սահմանային շրջաններում պետք է տեղադրվեին ոչ մեծ շարժուսակ ստորաբաժանումներ:

- Սիրիական բանակի մսացորդների հետ, որի գերազույն հրամանատարը արդեն Տիգրան Մեծն էր, անհրաժեշտ էր հաստատել բարի դրացիական հարաբերություններ:

- Անհրաժեշտ էր կարգավորել կիլիկյան ծովահենների և նրանցից մեծապես տուժող Սիրիայի և Փյունիկիայի առափնյա բնակչության հարաբերությունները՝ այսուհետև արգելելով ծովահեններին հարձակումները Տիգրանի հպատակների վրա:

Սիրիայի վրա արագ և անվերապահ ուազմաքաղաքական վերահսկողություն սահմաննելը բավականին բարդ ուազմավարական խնդիր էր, որը փայլուն կերպով իրականացրին Տիգրանի գորավարները:



## Գլուխ 3

### ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ

(մ.թ. 83 – 69 թթ.)

1. Сунь-цзы сказал: управлять массами – все равно, что управлять немногими: дело в частях и числе.
2. Вести в бой массы – все равно что вести в бой немногих: дело в форме и назывании.
3. То, что делает армию при встрече с противником непобедимой, это правильный бой и маневр.

Сунь-цзы (Китай, VI-V вв. до н.э.) [138]

1. Սուն-ձին ասաց՝ կառավարել զանգվածներով նոյնն է, ինչ կառավարել քչերով՝ գործը մասերի և թվի մեջ է:
2. Մարտի տանել զանգվածներին նոյնն է, ինչ տանես քչերին. գործը ձևի և անվանման մեջ է:
3. Այն, ինչը հակառակորդին հանդիպած բանակին դարձնում է անպարտելի, ճիշտ մարտը և գորաշարժն է:

Սուն-ձի (Չինաստան, մ.թ.ա. VI-V դդ.)

Մենք մանրամասն նկարագրեցինք Մեծ Հայքի թագավորության 95–83 թթ. վերելիք ուազմական բաղադրիչը: 94 թ.-ից սկսած Տիգրանը, համառորեն հաղթահարելով բոլոր խոշնդուսները, հզորացնում էր հայոց թագավորությունը: 86–84 թթ. հայ-պարթևական պատերազմում տարած փայլուն հաղթանակը և 83 թ. Սիրիայի թագավորության համեմատաբար խաղաղ հապատակեցնումը Հայկական տերությանը աննախաղեակ բարձրցին Տիգրանի հեղինակությունը աշխարհում:

Պարթևներից խելով արքայից արքա տիտղոսը՝ Տիգրանը դրանով փոխում էր նաև իր պետության միջազգային կարգավիճակը: Այսուհետ մենք պետք է խոսենք ոչ թե Մեծ Հայքի թագավորության, այլ Հայկական տերության՝ կայսրության (աշխարհակալության) մասին:

83 թ. Տիգրանյան Հայաստանը իր մարդկային և նյութական

միջոցներով գերազանցեց առանձին վերցրած Պարթևական և Պոնտական տերություններին և զգալիորեն, ավելի բան երկու երեք անգամ զիջում էր միայն Հռոմեական հանրապետությանը կամ չինական Խան կայսրությանը:

Անկախացած Պարսք, Քարակենեն, Էյումայիսը, Սակաստանը և սակարակառուկների երկիրը ակտիվ շփման մեջ էին Հայկական տերության հետ: Պոնտոսի տերությունը Հայկական կայսրության դաշնակիցն էր: Սակայն Հայկական կայսրության հզորության իսկական հիմքը մեծ և մարտունակ բանակն էր:

86–83 թթ. իրադարձությունները արմատապես փոխեցին Տիգրան Մեծի գինված ուժերի կազմը և կառուցվածքը. այն դարձավ կայսերական:

83–69 թթ. ժամանակաշրջանում տեղի ունեցած ուազմարադարձությունները հասկանալու համար անհրաժեշտ է լավ պատկերացնել Տիգրան Մեծի գինված ուժերի կառուցվածքը և մարտավարությունը:

Այս թեման գրեթե չի շոշափվել մասնագետների կողմից: Պատճառը սկզբնադրյուրների կցկոտուր տեղեկություններն են և ամենակարևորը՝ հետաքրքրության բացակայությունը:

Պատմական վերականգնման՝ ուկնսորուկցիայի մեթոդը թույլ է տալիս Հին աշխարհի ուազմական գործի մասին առ այսօր աշխարհում կուտակված բոլոր տվյալների և առաջարկված վերականգնումների հիման վրա որոշակի եզրակացությունների հանգել Տիգրանյան Հայաստանի բանակի հնարավոր թվարակի, կառուցվածքի և մարտավարության վերաբերյալ: Այս գիտում կատարված եզրակացությունների մի մասը վերցված է վերականգնման հետևանքով ստացված մոտավոր տվյալներից, այսինքն՝ «օդից» (Մենք, չունենալով պատմիչներից մեզ հասած թվեր, նաև ստուգելով եղած, անընդհատ պետք է հաշվի առնենք Հան Դելբրյուկի այն հրամայական պահանջը, որ օգտագործվող թվային տվյալները պետք է շահկասեն բանականությանը և ֆիզիկական աշխարհի օրենքներին) [100, 101]: Սակայն այդ «օդը» բացարձակ անինֆորմացիոն տարածություն չէ: Արդի պատմագիտությունը հսկայական նյութ է կուտակել Հին Հայաստանի որոշ հարակից երկրների գինված ուժերի վերաբերյալ [90, 92, 121, 126, 132, 133, 136, 137, 149, 150, 184, 211, 214, 233, 275]:

Անշուշտ, ոչ բոլոր երկրներն են այնպես համակողմանի

ուսումնասիրված, ինչպես Հին Հունաստանը, Հռոմը և Խան կայսրությունը: Այստեղ պատմական նյութերի համեմատական առատությունը նպաստում է ուելոնստրուկցիային. Վերականգնումը կատարվում է ավելի դյուրիխ և ճշգրիտ: Եթե ընդհանրացնենք Ռատչենկոյի հանրահայտ այն միտքը, որ մենք VI – XI դդ. Եվրոպայի պատմության ժամանակաշրջանը երբեմն ավելի վատ գիտենք, քան Հռոմի մ.թ.ա. I – մ.թ. I դդ. Ժամանակաշրջանի իրադարձությունները [50], ապա կարող ենք ասել, որ տիգրանան Հայաստանի ռազմական մեքենան մենք պատկերացնում ենք բավականին հստակ: Ինչ վերաբերում է Հայկական կայսրության որոշ ենթակա երկրներին, օրինակ՝ Միջիային, ապա պատմաբանական նյութը այստեղ անհամեմատ ավելի առատ և ամբողջական է, քան բուն Հայաստանինը:

Մեր հակարած խճանկարի ոչ բոլոր մասնիկներն են տեղում, սակայն գիտական շրջանառության մեջ մտած նոր տվյալները այնքան ներդաշնակ են զրադեցնում իրենց տեղերը ընդհանուր պատկերում, որ թուլացնում են սկզբունքային՝ կոնցեպտուալ սխալ կատարելու մտավախտությունը:

Նախորդ գլխում մենք փորձ կատարեցինք վերականգնել հայկական թագավորության ռազմական մեքենայի ընդհանուր պատկերը: Այս ուելոնստրուկցիան անվերջ հեռու չէ իրականությունից: Նա չի հակասում մ.թ.ա. 95 – 55 թթ. աշխարհի և մեր երկրի զարգացման հիմնարար պատկերացումներին:

Մեր գիտելիքները իին աշխարհի ռազմական գործի տարրեր կողմերի մասին շատ անհավասար են: Մենք գիտենք ձանձրացնող մանրամասնություններ հոումեական լեզեռների կենցաղից [77, 132, 137, 183, 212], սակայն մինչ այժմ վիճաքանության առարկա են լեզեռների մարտավարության որոշ սկզբունքային եղանակները [79, 115 – 118, 135, 166, 150 – 152, 200, 274]:

Կատաֆրակտուների մարտավարության հարցերի վերաբերյալ ևս գիտական բանավեճը չի մարում արդեն մի քանի տասնամյակ [75, 79, 91, 103, 181, 182, 190, 198, 217, 225, 269]:

Կարող է հայկական բանակի կառուցվածքի վերականգնը-ման փորձը մի փոքր գեղեցկացված է: Այդ դեպքում առաջարկեր ձերը՝ չմոռանալով նախապես հիմնավորված քննադատել մեր առաջարկածը:

Մենք չենք կարող վերադառնալ XIX դարասկզբի միամիտ պատկերացումներին, որոնք մերժվեցին նույն դարի վերջում, օրինակ՝ հետխոտն զինվորը ոչ մի դեպքում չի կարող կանգնեցնել իր վրա սրընթաց սլացող ձիավորին: Սակայն, մինչև այժմ մենք տեսնում ենք նման նկարազբություններ XX և XXI դարի ռազմարվեստի պատմության մասնագետների մոտ: Դրա համար միայն պետք է, որ ձիավորը լինի Արևելքից, իսկ հետիւնը՝ հոյս հոպլիտ, կամ հոումեացի լեզեռներ [264, 281, 282]:

Արգել՝ տարբար է դրված արևելյան բանակների որևէցետ ստորաբաժնման ցանկացած կանոնավոր շարժման վրա: Վերջերս բացառություն արեցին միայն կատաֆրակտունների գնդերի համար: Մ.թ.ա. XI – VII դդ. ասորեստանյան բանակում լայնորեն կիրառված տեխնիկական և մարտավարական հնարքները անտեսվեցին, որից հետո նրանք «հայնտարերվեցին» Արևմտարի «սիրելի» հունական և հոումեական բաղարակրթություններում:

### 3.1. Հայկական կայսրության բանակի թիվը, կազմը և մարտավարությունը՝ 83 – 69 թթ.

Տիգրանի կայսրության ռազմական ուժի միջուկն էին կազմում լավ կազմակերպված, միանման սպառազինված, մարզված, մոնուենիկ հայկական գնդերը, որոնց շուրջը համախմբվում էին ենթակա ժողովուրդների և ցեղերի զորքերը:

Հայկական բանակի կազմի և կառուցվածքի մասին մենք արդեն մանրամասնել ենք: Այժմ խստենք հայկական կայսրության հպատակ ժողովուրդների զինված ուժերի մասին: Տիգրանի կայսրության զորքերի ընդհանուր թվի մասին մենք կարող ենք պատկերացում կազմել Պլուտարքոսի հաղորդումից [...]: Հունա-հոումեական միջավայրում այս տեղեկությունները կարող էին ստացված լինել հենց Պոլակոսից, որը երկար ժամանակ անձամբ շփվել էր Տիգրան Մեծի հետ: Ինչպես և կարող էր անվանի հոումեացի զորքավարը բաց թողնել առիթը և հարց ու փորձ շանել արքայից արքային երա բանակի կազմի և թվաբանակի մասին:

Պլուտարքոսը, պատմելով Տիգրանակերտի ճակատամար-

տի մասին, հայկական զորքերի քանակի մասին տալիս է անհավանական, ուռացած թվեր: Մեր կարծիքով, այսուեղ արտացոլվում է հայկական տերության զորքերի կառուցվածքը՝ ըստ զորատեսակների, և գործի ընդհանուր քանակը:

- 55.000 հեծելազոր, որից 17.000 զրահապատ.
- 20.000 աղեղնավորներ և պարսավորներ.
- 150.000 ծանր հետևակ.
- 35.000 ճանապարհաշինարարներ, կամուրջ կապողներ,

գետերը մաքրողներ, անտառահատներ և այլն:

Ընդամենը 260.000 մարդ, որից 205.000 հետևակ: Այս տվյալներին մոտ են Ապահանոսի թվերը, որոնք նույնպես վերաբերում են Տիգրանակերտի ճակատամարտին՝ 250.000 հետևակ և 50.000 հեծելազոր: Այս երկու թվերից որին տանը նախապատվությունը, կայարգենք ստորև:

Կուրտ Երիարտը առաջինը ենթադրեց, որ Պլուտարքոսի մոտ Տիգրանի հետևակի և օժանդակ զորքերի (նույնպես հետևակ) միացյալ թիվը ցույց է տրված 205.000 զինվոր: Ապահանոսը նշում էր 250.000: Երիարտը կարծում էր, որ այսուղ տեղ է գտնվել արտագրողի սխալ, որի հետևանքով 205.000 դարձել էր 250.000:

Կարելի էր ընդունել ևս մեկ տարբերակ: Ճշմարտություն են արտահայտում միայն Պլուտարքոսի տվյալները, իսկ Ապահանոսը այս թվերը, որոնք կրկնում են Միհրդատի 89 թ. հումեական Ասիա նահանգ արշաված գորքերի քանակը, միայն դաշնակից միապետների հսկայական մորիլիզացիոն հնարավորությունների պատկերավոր արտահայտությունն են:

Եթե Պլուտարքոսի ներկայացրած թվաքանակից հանենք բուն հայկական զորքերի թիվը՝ 100.000 զինվոր, ապա կստանակը Տիգրանի հպատակների զորքերի ընդհանուր թիվը:

- 25.000 հեծելազոր, որից 6.000 զրահապատ.
- 110.000 ծանր հետևակ.
- 25.000 ճանապարհաշինարարներ, կամուրջ կապողներ, գետերը մաքրողներ, անտառահատներ և այլն:

Ընդամենը 160.000 մարդ, որից 135.000 հետևակ: Այս թվերը չափազանցացված չեն և ճիշտ են արտահայտում Հայկական մեծ տերության հնարավորությունները:

Մենք կարծում ենք, որ ծանր հետևակի մեջ պետք է ընդգրկած լինեին նաև միջին հետևակին՝ նիզակակիրներին (պելտաստներին) վերաբերվող թվերը: Եթե պայմանականորեն համարենք, որ բուն ծանր հետևակի՝ վահանակիրների և նիզակակիրների թիվը պետք է մոտավորապես իրար հավասար լիներ (օրինակ՝ նման հարաբերություն կար երվանդյան Հայաստանում), ապա կարող ենք ունենալ հետևյալ պատկերը:

- 6.000 զրահապատ հեծելազոր՝ կատաֆրակտուո.
- 19.000 թերեւ հեծելազոր.
- 55.000 նիզակակիրներ
- 55.000 վահանակիրներ.
- 25.000 ճանապարհաշինարարներ, կամուրջ կապողներ, գետերը մաքրողներ, անտառահատներ և այլն:

Այժմ, դասակարգենք ենթակա թագավորությունները ըստ իրենց ուազմական հզրության և Տիգրանի զորքերում ներգրավվածության աստիճանի:

- առաջին խումբ՝ Ասրպատական.
- երկրորդ՝ Վիրը և Աղվանը.
- երրորդ՝ Արիարենե, Օսրոենե, Կոմմագենե, Կորոուր.
- չորրորդ՝ Սիրիա և հարակից արարական ցեղեր.
- հինգերորդ՝ Դաշտային Կիլիկիա:

Ուազմական գործողությունների ժամանակ հպատակ ժողովուրդները տրամադրում էին արքայից արքային իրենց զորքերի մի մասը, ըստ երևույթին երբեք ոչ ավելին, քան կեսը: Տրամադրված զորքերը կարող էին տեղակայվել հայկական տերության ցանկացած երկրում, սակայն, ըստ երևույթին, զորամասը իր երկրից հանում էին միայն անհրաժեշտության դեպքում:

Հայկական բանակի բոլոր հպատակ ժողովուրդները կիրառում էին Արևելքում ավանդական դարձած ստորաբաժնումների տասական համակարգը՝ 10 զինվոր՝ զոկ, 100 զինվոր՝ վաշտ, 1.000 զինվոր՝ գունդ և 10.000 զինվոր՝ բյուր՝ զորանակ:

Հպատակ և դաշնակից ժողովուրդների բանակները նկարագրվում են խիստ մոտավոր ձևով, ուղղակի թվային տվյալներ պատմիչներից չեն պահպանվել:

### 3.1.1. Ենթակա թագավորությունների զորքերը

#### Ասրապատականի բանակը

Իր ռազմական կարողություններով ատրապատականյան մեղական բանակը հայկականից հետո երկրորդն էր կայսրության ռազմական համակարգում:

Ատրապատականի թագավոր Միհրդատ Մեղացին, որը Տիգրան Մեծի փեսան էր, անկասկած օժուլած էր զորավարի տաղանդով և, մինչև 66 թ., երբ նրան զահընկեց արեցին Ատրապատական ներխուժած պարթևական զորքերը, Տիգրանի հավատարիմ ենթական և զինակիցն էր:

Սկսած 85 թ.-ից նա մասնակցել էր Տիգրանի բոլոր ռազմաշավներին, 69 թ. Տիգրանակերտի ճակատամարտում ղեկավարել հայկական զորքերի աջ թևը, մասնակցել Արածանիի և հարավային Հայաստանում տեղի ունեցած մեծ ճակատամարտերին: 67 թ., որպես հարձակվող հայկական բանակի առաջապահ զորաբանակ, ներխուժել էր Պոնտոս և Կապադովիա և կտորել այնտեղ գտնվող հռոմեական բանակի մանր ստորաբաժանումները:

Տիգրանի համար այդքան ծանր 66 թ. Միհրդատ Մեղացին շանցակ պարթևների կողմը, նա դիմադրեց Ատրապատական ներխուժած պարթևական բանակին, որի շարքերում էր Տիգրան Մեծի դավաճանած որդին՝ Տիգրան Կրտսերը: Սակայն ուժերը անհավասար էին, և Միհրդատը պարտվեց:

Միհրդատը ոչ միայն ենթակա, այլև համազաղափարակից և զինակից էր: Տիգրանը անվերապահորեն վստահում էր Միհրդատ Մեղացուն:

Ի՞նչ էր իրնից ներկայացնում տիգրանյան ժամանակաշրջանի ատրապատականյան բանակը: Դա տիպիկ իրանական բանակ էր, որտեղ հիմնական հարվածային ուժ էր հանդիսանում հեծելազորը, հատկապես ծանր հեծելազորը: Հայկական տերության մեջ, հայերից բացի, մեղացիք միակ ժողովուրդն էին, որ ունեին կատաֆրակտունների գնդեր:

85-66 թթ. ատրապատականյան բանակի թվաքանակը հնարավոր չէ ստույգ որոշել, այդպիսի տեղեկություններ սկզբնադրյուրներից մենք չունենք: Ատրապատականյան զորքի բանակի մասին պահպանված միակ վկայությունը, որը վերաբերում է արդեն մ.թ.ա. 36 թ. հռոմեա-պարթևական կոյիլներին, մեզ օգ-

նում է մոտավոր պատկերացում կազմել 50 – 30 տարի առաջ եղած ատրապատականյան բանակի մասին: Մենք կարծում ենք, որ այս թվերը բավկանին ճիշտ են բնորոշում Ատրապատականի ռազմական կարողությունը: Հաշվի առնելով Հայաստանի և Ատրապատականի հասարակությունների որոշակի նմանությունը և Վերջինիս ազգաբնակչության մոտ երկու անգամ պակաս լինելը՝ պայմանականորեն կարող ենք համարել, որ բանակի թիվը գրեթե հայկականի կեսն էր՝ մոտ 50.000 զինվոր:

Հեծելազորը կազմում էր բանակի մոտ մեկ քառորդը – մեկ երրորդը՝ մոտավորապես 10-15.000 հեծյալ: Հեծելազորի փոքր մասը 4.000 կատաֆրակտուններն էին՝ չորս գունդ:

Շարունակենք ենթադրել, որ Միհրդատ Մեղացու թիկնացորի հեծելազորում կային ևս 1.000 կատաֆրակտու (Տիգրան Մեծ արքայից արքայի թիկնացորից ուղիղ երկու անգամ պակաս) [96]: Ապայինոսի հաղորդումը այս մասին, որ Տիգրանակերտի ճակատամարտում Տիգրանը ուներ 7.500 կատաֆրակտուններ, չի հակասում մեր ենթադրություններին:

Այսպիսով, հայկական բանակի 12.000 կատաֆրակտուններին գումարվում էին ատրապատականյան 5.000 կատաֆրակտունները՝ հասցենորդ տերությունում այս զորատեսակի թիվը մինչև 17.000 հեծյալի, որը համապատասխանում է Պլուտարքոսի տվյալներին [42]:

Ատրապատականյան մնացած հեծելազորը՝ մոտ 6-10.000, թերևազեն էր:

Բանակի մնացած մասը հետևազորն էր, մոտ՝ 35-40.000 զինվոր, որի մեջող մեծամասնությունը պետք է կազմեին նետաձիգները և նիզակակիրները: Ըստ երևույթին, կային նաև վահանակիրների մի քանի զնդեր:

Ըստհանուր առմամբ, ներկայացված պատկերը հման է հայկականին, հետևյալ տարբերություններով.

- հետևակում գրեթե չկային ծանր հեծելազոր՝ վահանակիրների զնդեր.
- ծանր հետևակը ավելի ցածր պատրաստվածություն ուներ, քան հայկականը և ճակատամարտերի ժամանակը նախընտրում էր կատարել երկրորդական ֆունկցիաներ.
- մարտավարության մեջ ավելի ընդգծված էր հեծելազորի դերը.
- պաշտպողական տեխնիկայի մասին տեղեկություններ

չունենք, թիշ հավանական է, որ այս գործը բավարար գարցացած լիներ:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք եզրակացնել, որ ատըրպատականան բանակը ուներ հայկականին մոտ սպառագինուրյուն, կազմում կար մոտ 11-15.000 հեծելազոր և 35-40.000 հետևակ, ընդամենը՝ ավելի, քան 50.000 զինվոր հետևյալ գորատեսակներում.

- 5.000 կատաֆրակտոս
- մոտ 6-10.000 թերթազեն հեծյալ
- մոտ 25-30.000 նիզակակիր և վահանակիր
- մոտ 10.000 նետաձիգ

Ռազմարշավների ժամանակ, բնական է, որ երկրից դուրս եր հանվում բանակի կեսից ոչ ավելին:

Կարելի է ենթադրել, որ հայկական բանակի կազմում մարտընչող Միհրդաստ Մեղացու զորաբանակը առավելագույնը կարող էր ունենալ 15-20.000 զինվոր՝ մոտավորապես 6-7.000 հեծելազոր, որից 3.000 կատաֆրակտոս և 8-14.000 հետևակ:

Մնացած 30-35.000 բանակը ապահովում էր Հայկական կայսրության և, մասնավորապես, Ատրպատականի, անվտանգությունը ամենավտանգավոր ուղղություններից մեկում՝ պարթեականում:

Այդպիսով, հայկական բանակի ատրպատականյան զորաբանակը արագաշարժ, կարգավահ և փորձված միավորում էր՝ հմուտ և հավատարիմ զորավարով, ընդունակ լուծել բարդ, այդ թվում և ռազմավարական խնդիրներ:

#### Երերների, մարդերի և աղլանների գորքերը

Այսկըսվկայան երկրները Տիգրանը նվաճել էր դեռ 89-87 թթ., որից հետո Վերոնիշյալ ազգերի թերև հեծելազաները, հետրավոր է նաև որոշակի բանակությամբ հետևակ, մասնակցել էր տիգրանյան պատերազմներին:

Պլուտարքոսը հատկապես նշում է իբերների և մարդերի թերև հեծելազորի մասնակցությունը՝ Արածանիի ճակատամարտին: Մինչև 66 թ. հավատարիմ են եղել արքայից արքային, որից հետո Միհրդատի դրդմամբ՝ անկախացել էին:

66-65 թթ. իբերները և աղլանները տասնյակ հազարամոր զինվոր հանեցին Պոմպեոսի բանակի դեմ և տվեցին մի քանի ճակատամարտ: Ըստ Պլուտարքոսի [42], Պոմպեոսը մեկ ան-

գամ ճակատամարտել էր աղվանների, հետո իբերների 40.000 աշխարհազորներիի հետ: Վերջում ջախչախել էր 60.000 հետևակայիններից և 12.000 հեծելազորից բաղկացած աղվանական գորքին: Սակայն դա աշխարհազոր էր, իրականում, Տիգրանի ռազմարշավներին իբերները, մարդերը և աղվանները կարող էին մասնակցել ոչ ավելի, քան 5.000 հեծյալներով, և կրկնակի բանակի հետևակներ:

Այդպիսով, Տիգրանի ռազմարշավներին մասնակցող իբերների, մարդերի և աղվանների հեծելազորի թիվը ընդունում ենք մոտավորապես 5.000 (կարծում եմ, որ բացադիր դեպքերում, արքայից արքայի պահանջով նրանք միասին առավելագույնը կարող էին դուրս հանել մինչև 10.000 հեծյալ): Հեծելազորից բացի, իբերները և աղվանները կարող էին տրամադրել կայսրությանը ոչ պակաս, քան 10.000 հետևակ՝ նիզակակիրներ և նետաձիգներ: Պայմանականորեն կարող ենք հյուսիսային ժողովուրդների մշտական զորաբանակի միացյալ թիվը հաշվել մոտ 15.000 զինվոր:

Այդպիսով, Հայաստանի, Ատրպատականի, Վիրքի և Աղվանքի հավաքական գորքը մոտավորապես հավասար էր մոտ 165.000 զինվորի: Հիշենք այս թիվը՝ նույնիսկ 69 թ. աշխանք՝ կայսրության մասնակի քայլայումից հետո էլ Տիգրանի ռազմական հնարավորությունները հսկայական էին:

#### Աղիաբենեի, Օսրենեի, Կումազենեի և Կորդութի բանակները

Աղիաբենե թագավորությունը՝ պատմական Ասորեստանը, իր մեծությամբ երկրորդ ենթակա թագավորությունն էր Հայկական տերությունում (մենք հիշում ենք, որ Միհրիան այս ցուցակի մեջ չեն ունի հասուլ կարգավիճակ): [39]:

Աղիաբենեն ոչ մեծ թագավորություն էր, որի ռազմական կարողությունները զգալիորեն զիջում էին ոչ միայն Հայաստանին, այլև Ատրպատականին:

Չունենալով ոչ մի հստակ թիվ, ենելով երկրի մեծությունից և բնակչության գրադաւունից՝ կարող ենք ենթադրել, որ Աղիաբենեի բանակի բանակը չէր գերազանցում 20-25.000 զինվորից, որից հեծելազորը առավելագույնը պետք է կազմեր մոտավորապես 4-5.000՝ զորքի 20%: Աղիաբենեն երբեք հոչակամ չի եղել իր ձիերով կամ չի նշվում, որպես լավ հեծելազոր ունեցող երկիր:

Տանամյակներ շարունակ լինելով պարթևական տերության կազմում՝ Աղյաբենեն մասնակցել էր պարթևական տերության գիւղորական գործի ներքին մասնագիտացմանը. պարթեները նախընտրում էին հեծելազորը հավաքել Իրանի արևելյում, իսկ հետևակը՝ Միջազգետքից Տրամարանական է, որ հայոց արքայից արքան նույնպես այդպես պետք է վարչեք:

Ըստ երևույթին, Տիգրանի տերության դաշտային բանակի կազմում ներգրավված էին նաև Աղյաբենեի հետևակային զնները: Մեզ թվում է, որ Աղյաբենեի բազավորությունը Տիգրանի դաշտային բանակի համար տրամադրում էր հիմնականում հետևակային զրամասեր:

Կամ մի պատճառ, որը կարող է կողմնակիրքն հաստատել այս վարկածը. Աղյաբենեն նույնպես սահմանակից էր թշնամաբար տրամադրված Պարթևական պետությանը, որի գործին դիմակայելու համար հատկապես անհրաժեշտ էր հեծելազորը: Աղյաբենենի մեջակային տիգրանյան բանակի կորիզը, անշուշտ, այստեղ գտնվող հայկական հեծելազորներն էին, որոնց հետ միասին այս ռազմավարական ուղղությունը ձեռք էր բերում որոշակի պաշտպանական հնարավորություններ:

Աղյաբենեի բանակը բանակը առավելագույնը ընդունենք 5.000 հեծելազոր և 20.000 հետևակ: Եթե համարենք, որ աղյաբենեի բանակը զգալիորեն տարբերվում էր հայկականից և մեղականից իր հետևակի բանակով, և որ այստեղ կար ծանր հետևակի որոշակի ավանդույթ, ապա պայմանականորեն հետևակը բաժանում ենք երկու մասի՝ 15.000 ծանրազեն, որից 5.000 միջին՝ նիզակակիրներ և 5.000 թեթևազեն:

Այս զրաբանակի հրամանատարն էր Աղյաբենեի թագավորը, որը Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ հայկական բանակի ձախ թիվ հրամանատարն էր: Դա նշանակում է, որ նա ուներ որոշակի ռազմական փորձ և զորավարի ընդունակություններ, այլապես Տիգրանը նրան չէր վստահի այս կարևոր պաշտոնը:

Օսրոենեի թագավորությունը նախկինում պարթեներին, հետո հայերին ենքակա փոքր թագավորությունն էր Հայկական տերությունում:

Օսրոենեի բանակը մոտ 15-20.000 զինվոր էր, որից հեծելազորը առավելագույնը պետք է կազմեր 20-25%: Օսրոենեն չի նշվում, որպես լավ հեծելազոր ունեցող երկիր, բանակի գերակշռող մասը հետևակն էր: Կումագենեն գտնվում էր Հայկական տերության արևմուտքում և սահմանակից էր Կապարովիլային: Բանակը առավելագույնը ընդունենք 2.000 հեծելազոր և 3.000 հետևակ [276]:

Ճուրջան մի մասը արաբներ էին, և դա ենթադրում է հեծելազորի որոշ ընդունելի բանակ և որպես Տիգրանի տերության դաշտային բանակի կազմում ներգավակած էր հիմնականում Օսրոենեի հետևակը, հազվադեպ՝ արաբական ցեղերի հեծյալները:

Օսրոենեն գտնվում էր Հայկական կայսրության ներսում և սահմանակից չեղ այլ տերությունների հետ: Բանակի թվաքանակը առավելագույնը ընդունենք 3-4.000 հեծելազոր (արաբական ցեղերի հեծյալ ջոկատները ներառյալ) և 12-17.000 հետևակ: Թագավորության մայրաքաղաք Երևան ներկայացնում էր լուրջ ամրություն և հուսայի պաշտպանված էր կայսրորդ:

Կումագենեն մերձեփրատյան փոքրիկ թագավորություն էր, որը բավականին երկար միացյալ թագավորություն էր կազմել Ծոփի հետ և ուներ կիսով չափ հայկական բնակչություն՝ ավելի հելենականցված, քան Ծոփը: Հետազայում նա հայուննեական պատերազմին չի մասնակցի, հարելով Լուկուլլոսին, սակայն հետազայում միայնակ կղիմադրի Պոմպեոսին: Ունենք մեկ տեղեկություն կումագենյան բանակի թվաքանակի մասին՝ 2.000 հեծելազոր և 3.000 հետևակ [276]:

Մեզ թվում է, որ մշտական բանակը առնվազն 8-10.000 զինվոր էր, որից հեծելազորը առավելագույնը պետք է կազմեր մեկ հիգերորդը: Կումագենեն չի նշվում, որպես լավ հեծելազոր ունեցող երկիր, բանակի գերակշռող մասը հետևակն էր: Կումագենեն գտնվում էր Հայկական տերության արևմուտքում և սահմանակից էր Կապարովիլային: Բանակը առավելագույնը ընդունենք 2.000 հեծելազոր և 8.000 հետևակ:

Մեր ենթադրությամբ, Կումագենենում մշտական գտնվում էր մի բանի հազար զինվորից բաղկացած հայկական զրաբանական:

Թագավորության մայրաքաղաք Շամշատը՝ Սամոսատը, իրենից ներկայացնում էր լուրջ ամրություն և հուսալիորեն պաշտպանված էր կայսրորդ:

Կորդվացիք հայկական տերության բանակում զբաղեցնում էին յուրահատուկ տեղ: Լինելով հմուտ պաշարողական մերժաներ պատրաստող և օստագործող՝ նրանք ապահովում էին հայկական բանակի պաշարողական կարողությունները: Տրամադրած գործի թվաքանակը հայտնի չէ, կարելի է մոտավորապես հաշվել ոչ ավել, քան 5-10.000 զինվոր:

## Սիրիական բանակը և արարական հեծյալ ջոկատները:

Սիրիան իր վեց միլիոնանց բնակչությունով մոտավորապես երկու անգամ մեծ էր քուն Հայաստանից, սակայն ռազմական իմաստով՝ շատ ավելի թույլ [34]: Նա շատ յուրահատուկ կառուց էր Հայկական կայսրության ռազմական համակարգում: Այդ առանձնահատկությունը կապված էր նրա քաղաքական կարգավիճակի հետ: Սիրիան դիտվում էր, որպես Տիգրանի երկրորդ քաջակիրությունը:

Դարձարով նաև Սիրիայի միապետը՝ Տիգրանը ժառանգում էր սիրիական բանակի մասցորդները և ռազմական ուրույն համակարգը:

Մելքյան տերության քաջակիրները իրենց երկիրը դիտում էին որպես մակերևացի Մելքյանների գերջաստանի նվաճած անձնական տարածք, որտեղ ապրում էին բազմաթիվ ժողովուրդներ, և կային հունական, կամ հունականացված քաղաքային համայնքներ՝ պրիխներ: Մելքյանները իրենց իրավունքները երկրում իրականացնում էին բացառապես ռազմական միջոցառումներով, և իրենց մշտական բանակը նախատեսված էր միայն երկիրը քաջակիրի ձեռքում պահելու համար: Այդ բանակը չէր մասնակցում ոչ միայն Մելքյանների մղած պատերազմներին, այլև երկրի սահմանների պաշտպանությանը:

Պատերազմների ժամանակ դաշտային զորքեր էին հավաքագրվում Սիրիայի համայնքներից, այդ թվում Սիրիայում գտնվող հունական և մակերևանական տարբեր բնակավայրերից: Այս գինուրները կազմում էին Մելքյանների «մակերևանական փաղանգը»: Բացի դրանից, կար 1.000 ծանրազեն հեծյալց բաղկացած «քաջակիրի ընկերների» ընտիր զորագունդը՝ ազեման, որը կատարում էր քաջակիրի թիկնագործի պարտականությունները:

Մելքյանների տերության երկրամասերի պարտավորությունների մեջ ռազմական ծառայություն սովորաբար կար. իսկ պոլիսների համար՝ որպես օրենք, չկար: Օրինակ՝ մ.թ.ա. 190 թ. Սագնեսիայի ճակատամարտին մասնակցել էին Մելքյան տերության արևելյան մասերից ուղարկված 6.000 կատաֆրակտուս, որոնց Անտիոքու Գ Մեծը, չունենալով համապատասխան փորձ, օգտագործել էր որպես սովորական ծանր հեծելազոր:

Երր 83 թ. Տիգրանը նստեց Սիրիայի գահին, երկիրն արդեն մի քանի տասնամյակ գտնվում էր ավերիչ արքունական հեղաշրջումների և դինաստիական կոփվների հորձանություն: Եթե նախկինում՝ Անտիոքոս Գ-ի ժամանակներում, Մելքյանները կարող էին հավաքել մինչև 72.000 դաշտային բանակ, ապա 90-80 թթ. գահակալական կոփվները վերջին Մելքյան թագավորիները անցկացնում էին առավելագույնը 10-12.000 բանակներով, որոնք մեծ մասամբ կազմված էին վարձկաններից:

Տայկական տիրապետության օրոք Սիրիան տրամադրում էր հիմնականում վարձկաններ՝ ծանրազեն հետևակ (հոպլիտներ): 83 – 69 թթ. հայկական դաշտային բանակի կազմում այդ հետևակը պատկառելի թիվ արդեն չէր կարող կազմել: 69 թ. Տիգրանակերտի պաշտպանների կազմում եղած վարձկանները, ըստ երևույթին, հենց Սիրիայում հավաքված հույն հովայիտների ստորաբաժանումներն էին, որոնք այդպիսի ճակատագրական դեր խաղացին մայրաքաղաքի կործանման մեջ:

Սիրիայի քաղաքներն ունեին աշխարհազորներ, սակայն նրանք նախատեսված էին քաղաքների պաշտպանության համար և Տիգրանի հրամանով չէին կարող օգտագործել կայսրության տարբեր վայրերում: Ավելին, նրանք պահպանեցին իրենց չեղորությունը Տիգրանի վարած բոլոր պատերազմներում:

Այնուամենայնիվ, Սիրիայի նման խոշոր բնակչություն ունեցող երկրից միշտ կարելի էր հավաքագրել ինչ-որ բանակությանը զորք, իսկ երկրի ինքնապաշտպանական համակարգում մեծ դեր խաղացող տեղական ուժերի թիվը գերազանցում էր 25.000-ը:

Կայի ն արյոցը փղեր 90-80 թթ. երին վերջին Մելքյանների բանակում: Ավանդաբար փղերին պահում էին Ապամեայի մոտակայքում գտնվող բարեբեր դաշտում: Մ.թ.ա. 164 թ. փղերի կոտորածից հետո, երբ հոռմեական ծերակույոր պահանջել էր կոտորել մարտական փղերին և ոչնչացնել նավատօրմը (բացի 12 պահակային ռազմանավերից), սիրիացները միշտ զարտնի պահում էին ինչ-որ բանակությամբ մարտական փղեր, սակայն տիգրանյան ժամանակաշրջանում նրանք կարծեն թե արդեն չկային: Անտիկ հետինակները այդ մասին ոչ մի տեղեկություն չեն հայորդում:

Մելքյաններից ժառանգված նավատօրմ կարծեն թե չկար,

համենային դեպս այս հարցը մնում է մինչև վերջ շպարզաբանված: Ինչից ետք Տիգրանի տերության ծովային հղորության հիմքը և միակ ուազմական նավատորմը ոչ թե սիրիական ու փյունիկյան, այլ կիլիկյան ծովահենների նավատորմերն են:

Հայկական տերության ուազմական համակարգի մասն էին կազմում նաև որոշ արաբական ցեղերի հեծյալ գորամասերը:

Խոսք զնում է ոչ թե դաշնակցայիին քարակենական արագաշարժ հեծելազների մասին, այլ Սիրիական անապատի արաբական քոչվոր ցեղերի այս հեծյալ ջոկատների մասին, որոնք կարող էին օգնության գալ Տիգրանի բանակին՝ ելնելով իրենց հապատակությունից կամ դաշնակցային պարտավորություններից: Նրանք հիմնականում կատարում էին սահմանապահ և տարանցիկ առևտրական ուղիների անվտանգությանը վերաբերող պարտականություններ:

Դաշտային Կիլիկիայի բնակչությունը զբաղվում էր ծովահենությամբ և բանակ Տիգրանին չեր տրամադրում: Կիլիկիայի ծովահենները՝ ըստ էության, հայկական տերության դաշնակցային ծովային ուժերն էին:

Հաշվի առնելով հարևան Լեռնային Կիլիկիայում (որը մ.թ.ա. 102 թ.-ից հոռմեական նահանգ էր) մշտական տեղադրված 2-3 հոռմեական լեգոնները՝ Դաշտային Կիլիկիայում հայերը հարկադրված պետք է պահեին մարտունակ գորաբանակ:

#### Դաշնակիցների գորքերը.

##### Քարակեննեի արաբների հեծյալ զնդերը

Խոսքը կարող է գնալ արաբական քոչվոր ցեղերի հեծյալ ջոկատների կամ քարակենական արագաշարժ հեծելազների մասին, որոնք կարող էին օգնության գալ Տիգրանին՝ ելնելով իրենց դաշնակցային պարտավորություններից:

Ուղարկված զորքի քանակը ըստ երևույթին 3-5.000 հեծյալներից չեր անցնում:

##### Սակարառակների հեծյալ ջոկատները:

Խոսքը Արևելքում ապրող իրանական ցեղի՝ սակարառակների հեծյալ ջոկատների մասին է, որոնք, ելնելով իրենց դաշնակցային պարտավորություններից, Տիգրանին օգնության հասնելու համար պետք է անցնեին Պարթևատանով:

Չի բացառվում, որ դեռ 84 թ. հայ-պարթևական պայմանագրի մեջ կարող էր լինել նման կետ, որ պարթևները չխոչընդոտեին Տիգրանի դաշնակիցներին՝ Պարթևատանի վրայով զայր իրեն օգնության: Նոյն պայմանագիրը կարող էր գործել նաև քարակեննեցիների համար: Ուղարկված զորքի քանակը, ըստ երևույթին, ոչ ավել, քան 3-5.000 հեծյալ:

##### Կիլիկիցիների ծովային ուժերը

Կիլիկիցիները Տիգրանի ուազմական համակարգում զբացնում են բացառիկ տեղ՝ իրանք, ըստ էության, կոմպենսացնում էին Հայկական կայսրության ուազմական նավատորմի բացակայությունը:

Կիլիկյան ծովահենները Տիգրան Մեծի ավելի շատ դաշնակիցներ, քան ենթականներ էին, սակայն նրանց զրեթե բոլոր կարևոր նավահանգիստները գտնվում էին Դաշտային Կիլիկիայում, որը Տիգրանի տիրակալության տակ էր, և դա որոշակի կախվածության մեջ էր զցում նրանց հայց արքայից: Հայկական գորքերը, անհրաժեշտության դեպքում, կարող էին փորձել արմատախմիլ անել նրանց Կիլիկիայից: Բայց դրա փոխարեն, նրանք, ըստ էության, պաշտպանում էին կիլիկիցիների նավահանգիստները հենց նոյն հոռմեացիներից:

Ծովահենները, ավելի քան տասներես տարի ահ ու սառսափ սիրելով Միջերկրականի արևմտյան հատվածներում, ըստ էության, պաշտպանված էին Հայկական կայսրության հղորությամբ և գործում էին նրա օգտին: Հեեց որ այս հովանին վերացավ, 67-66 թթ. Պոմպեոսը արտասովոր կարծ ժամկետում հաշվեհարդար տեսավ նրանց հետ:

Այդ պատճառով կարելի է համարել, որ Տիգրանի համար կիլիկյան ծովահենները կառավարելի էին այնքան, որքան իրեն դա անհրաժեշտ էր: Դրա վառ ապացույցը մենք ստանում ենք, երբ քննում ենք ծովահենների կատարած առաջադրանքները Բասպանիայում Սերտորիոսի զորքերի հետ կապ հաստատելու գործով, կամ Սպարտակի ապատամբությանը օժանդակելու համար Խոտայիս՝ հայկական հեծելազունդ տեղափոխելու գործում կամ Խոտայիսի ափերին գտնվող քաղաքների վրա ասպատակիչ արշավակրեսերի կազմակերպման մեջ: Մինչև 83 թ. կիլիկյան ծովահենները ակտիվ համագործակցում էին Միհրդատ Եվպատորի հետ, և մենք տեսնում ենք որոշ հաջորդականություն նրանում, որ Տիգրան Մեծի՝ Դաշտային Կիլիկիայում

հաստատվելուց հետո նրանք անցնում էին Տիգրանի գերակայության տակ:

Ամփոփենք Տիգրանի Մեծի Հայկական կայսրության բանակի նկարագրությունը: Աղյուսակով ներկայացնենք Տիգրան Մեծի զորքերի ընդհանուր թվի և զորատեսակների համահավաք տվյալները՝ մեկ անգամ ևս հիշեցնելով այս տվյալների ենթադրյալ ոչ փաստված բնույթը:

Աղյուսակ 3.1.1. Հայկական կայսրության բանակի մոտավոր թվաքանակը ըստ հայտակ երկների (ուկոնստրուկցիա).

	Հեծելազոր	Հետևակ	Բանակ
Հայաստան	30.000	70.000 (որից 10.000 օժանդակ զորք)	100.000
Ատրպատական	11-15.000	35-40.000 (որից 5.000 օժանդակ զորք)	50.000
Իրերիա, մարդեր և Աղվանք	5.000	10.000	15.000
Ալիարենե, Օսրոեն (նաև քոչվ. արաբներ), Կոմագենե և Կորոնք	9-10.000	60.000 (որից 15.000 օժանդակ զորք)	70.000
Միրիա	-	25.000 (որից 5.000 օժանդակ զորք)	25.000
Ընդամենը՝	55-60.000	205.000	260.000

Դաշնակիցները՝ Միրիական անապատի արաբներ, Քարակենեի արաբներ և Միջին Ասիայի սակարառուկներ՝ մոտ 10-20.000 հեծելազոր: Անհրաժեշտության դեպքում Տիգրանը կա-


րող էր Միրիայում հավաքել ևս 10-20.000 վարձկան հետևազոր, որից 5-10.000 հովվիս:

Այսպիսով Տիգրան Մեծի Հայկական կայսրության զինված ուժերի ընդհանուր թվաքանակը դաշնակիցների հետ միասին (առանց կիլիկյան ծովահենների թվաքանակի) կազմում էր մոտավորապես 300.000 զինվոր:


Ամփոփելով շարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ հայկական կայսրության բանակը կարողանում էր մարտի դաշտ հանել իին աշխարհում գոյություն ունեցող բոլոր զորատեսակները, բացառությամբ երկուահ՝ մանգաղասայր մարտակառքերի ջոկատների [253, 259], որոնք արդեն դարձել էին պատմական անախրոնիզմ ու առանձնապես չին կարող գործել Հայաստանի նման լեռնոտ երկրում և մարտական փոերի ջոկատների (տեսականորեն կարող էին լինել հայկական բանակում 83 թ. Միրիան Հայկական տերությանը միացնելուց հետո), որոնց ներկայությունը հայկական բանակում ակնարկված չէ ոչ մի սկզբնադրյուրում: (Հայերին վիճակվել էր միայն ճակատամարտերում երբեմն դիմակայել այդ հզոր կենդանիներին, որոնք կարող էին հանդիպել սելևկյան և պարթևական բանակներում: Իսկ մանգաղասայր մարտակառքերի ջոկատներ կային Միրիատ Պոնտացու բանակում, սակայն նրանց մարտական արյունավետությունը անհնարին էր:)

Եթե նույնիսկ հոռմեացիների պահանջով և անմիջական հսկողության տակ սիրիացիները դեռ մ.թ.ա. 164 թ. կոստորած շինենին սեփական մարտական փոերին, ապա մ.թ.ա. I դ.-ում հայերի կողմից նրանց մարտական օգուազործումը վկայված չէ և ըստ իս, գործնականորեն անհնարին էր:

Հայկական տերության դաշտային բանակների թիվը սովորաբ 50-60.000 զինվոր էր, սակայն անհրաժեշտության դեպքում Տիգրանը ընդունակ էր մարտի դաշտ հանել նաև 100.000 բանակ:



Գծանկար 3.1. Հայկական կայսրության զինված ուժերի կազմվածքը:



Գծանկար 3.2. Հայկական կայսրության դաշտային բանակի կազմով վածքը:

Ա.թ.ա. 88 թ. Արևելքում տեղակայված հոռմեական բանակն ուներ մոտ 150.000 զինվոր [169]: Հոռմեացիների դաշնակից Բութանիայի թագավոր Նիկոմեդը՝ 50.000 հետևազորային և 6.000 հեծելազոր: Միհրդատի բանակում բոլոր ուժերը հավաքելուց հետո կար 250.000 հետևազորային և 40.000 հեծյալ առանձին նշվում էր 10.000-ոց Փոքր Հայքի ընտիր հեծելազորը [59]: Այդպիսով, Արաջին պոնտական պատերազմի սկզբին հակառակորդների ուժերը համապատասխանաբար 206.000 և 300.000 էին:

Այս թվերի համեմատությանը Հայկական կայսրության բանակի թվաքանակը՝ 205.000 հետևակ և 55.000 հեծելազոր, ընդամենը՝ 260.000 զինվոր, իսկ դաշնակիցների հետ միասին՝ մոտավորապես 300.000 զինվոր, միանգամայն տրամարանական և ընդունելի է:

### 3.2. 77 թթ. կապադովկիական արշավանքը

77 թ. կարևորագույն իրադարձությունը՝ կապադովկիացիների բռնազարդն էր Հայաստան:

78 թ. հոռմեական ծերակույտի պահանջով Միհրդատը հերթական անգամ հեռացավ Կապադովկիայից: Օգտվելով այդ ատիթից, Տիգրանը 77 թ.-ին նորից կազմակերպում է մեծ արշավանք դեպի Կապադովկիա, որտեղից բնակչության զգալի զանգված (մոտ 300.000 մարդ), այդ թվում՝ Մաժարի բնակչության զգալի մասը, բռնի տեղափոխում է Հայաստան: Տեղափոխված բնակչությունից քաղաքաբենները բնակեցվում են նոր կառուցվող Տիգրանակերտում և տերության այլ քաղաքներում, իսկ մնացած տեղաբաշխություն են Հայաստանով մեկ:

Այս գործողությամբ Տիգրանը ստվարացնում է Հայաստանի բնակչությունը, իսկ Տիգրանակերտ մայրաքաղաքի համար «գունում» մի քանի տասնյակ հազար նոր բնակիչ:

Տիգրանի կապադովկիական արշավանքի ժամանակ մեծ ռազմական գործողություններ չեն եղել, որովհետև հզոր հայկական բանակին Կապադովկիան չեր կարող ուազմականորեն հակադրվել: Սակայն այս արշավանքը մեզ համար հետաքրքիր է որպես հայկական պետության կողմից իրազործված

մարդկային հսկայական զանգվածների տեղաշարժ: Վերոհիշյալ 300.000 վերաբնակիչներին պետք էր հասցնել Հայաստան ապահով ու անվճառ և իրենց գույքով: Այս միջոցառումը խոշոր կազմակերպչական խնդիր է նույնիսկ մեր օրերին: Բնակչության տեղափոխումը հայկական բանակը կատարեց հաջողությամբ:

Այստեղ անհրաժեշտ է խոսել Տիգրանի կողմից բնակչության տեղափոխման ևս մեկ շատ կարևոր կողմի մասին: Կապադովկիայի բնակչությունը չեր դիտվում որպես թշնամական երկրից դուրս բերվող ռազմավար: Մենք գիտենք դասական Հունաստանում, Հոռմի կողմից և հելլենիստական աշխարհում մ.թ.ա. VIII-III դդ. որպես կանոն օգտագործվող սովորությունը քաղաքը գրոհով կամ պաշարումով վերցնելուց հետո սովորաբար սպանում էին բռնոր տղամարդկանց, իսկ կանանց և երեխաներին տանում գերության և վաճառում ստրուկների շուկաներում [226]: Հիշենք Կարթագենի և մի շարք այլ քաղաքների սարսափելի ճակատազիրը: Եթե մի քանի անգամ, գերված քաղաքում բռնոր տղամարդկանց սպանելու փոխարեն, նրանց նույնպես վաճառեցին ստրկության, դա համարվեց արտակարգ մարդասիրական արարք [226]:

Անսախադեպ մարդասիրական արարք էր հպատակեցնել քաղաքը և տեղում բռնել բնակչիներին (բնական է, լավ քալանելուց հետո): Լուկուլլոսը գրավելով Պոնտոսի քաղաքները, նրանց մատնել էր վայրի թալանի, մի մասին էլ՝ ոչչացման [42, 169]:

Տեղափոխված կապադովկիայի զյուղացիները և քաղաքիները Հայաստան վերաբնակվեցին այնպես, որ չվիրավորվեց ոչ նրանց ընտանիքների արժանապատվությունը, ոչ էլ կորուստ կրեց իրենց սեփականությունը: Հայաստանում նրանք կազմեցին բնակչության մի ստվար շերտ՝ անձնապես ազատ, տեղացի հայերի հետ գորեք իրավահավասար: Այս է պատճեռը, որ ուր տարի հետո նրանց աննշան մի մասը միայն լրեց իրենց երկրորդ հայրենիքը Տիգրանակերտի աղետից հետո:

Հայկական բանակի կարգապահության և բարձր կազմակերպվածության մասին վկայող 77 թ. իրականացված այս գործողությունը կարևոր դեր խաղաց Հայաստանի բնակչության ստվարացման, նշանակում է՝ երկրի ուժեղացման գործում:

Հետազայում վերաբնակեցված կապարովկիացիները հետզիեստ քոնեցին հայացման ուղին և կազմեցին հայ ժողովրդի բաղկացուցիչ մի մասը:

### 3.3.Տիգրան Մեծը և կիլիկյան ծովահենները՝ 83–69 թթ.

84-83 թթ. Հայաստանը դարձավ աշխարհի հզորագույն տերություններից մեկը, որին էր պատկանում արևելյան Միջերկրածովքի զգայի մասը: Փյունիկիան, Սիրիան և Դաշտային Կիլիկիան արևելյան Միջերկրածովքի այն երկրներ էին, որոնց ծովային սահմաննիշ պաշտպանության համար անհրաժեշտ էր ունենալ պատկառելի ռազմական նավատորմ:

Այդ տարիներին Միջերկրական ծովի արևելյան մասում մոլեզնում էին կիլիկյան ծովահենները:

Ըստհանրապես, ծովահենությունը Միջերկրական ծովում առափնյա քաղաքների հնագույն զբաղմունքներից էր: Ամբողջ ժողովուրդներ կանոնավոր զբաղվում էին այդ արհեստով: Նույնիսկ փյունիկեցիր հաջողությամբ համատեղում էին ծովային առևտուրը և ծովահենությունը: Այն ժամանակներում նույն մարդը հաճախ համատեղում էր առևտրականի և ծովահենի մասնագիտությունները:

Միջերկրական ծովի հզոր ծովային պետությունները մեծ ջանքեր էին ծախսում ծովը ծովահեններից ազատելու կամ էլ սեփական ծովահեններով փոխարինելու համար: Ա.թ.ա. 146 թ. հռոմեացիները կործանեցին Կարթագենը և Կորինթոսը, որոնք համապատասխանաբար Միջերկրական ծովի արևմտյան և արևելյան հատվածների հորոր ծովային պետություններն էին: Գոյացած դատարկությունը արագորեն լրացրին առափնյա գրեթե բռնը երկրների ծովահենները:

Հոռմին այդ ամենը առանձնապես չեղ անհանգստացնում, մինչև Հունաստանի վերջնական նվաճումը և փոքրասիական տիրույթների նվաճումը: Առևտրական կապերի ամրապնդումը Եգիպտոսի հետ նույնին խիստ բարձրացրեց ծովային ուղիների նշանակությունը:

Արդեն մ.թ.ա. II դ. վերջին քառորդում ծովահենությունը

խիստ հոշընդուռում էր ծովային բեռնափոխադրումներին, սակայն վիճակը դառձավ անտանելի հատկապես մ.թ.ա. I դ. 90-ական և 80-ական թվականներին (մինչև 83 թ.): Ծովահենությունը լուրջ վտանգում էր հռոմեական ծովային առևտրական ուղիները, մի բան, որը չէր կարող վրիպել Միջերդատ Զեվսատորի ուշադրությունից: Առաջին հռոմեա-պոնտական պատրազմի տարիներին (ինձ թվում է, որ շատ ավելի շուտ, մոտավորապես Էվրինյան պատերազմների ժամանակաշրջանից սկսած՝ մոտ 112-107 թթ.)՝ 88-85 թթ. Միջերդատը կապեր հաստատեց արևելյան Միջերկրածովքի, հատկապես կիլիկյան ծովահենների հետ, որոնց գործունեությունը համընկնում էր պոնտական քաղաքորի ռազմաքաղաքական շահերի հետ:

Մ.թ.ա. 83 թ. Դաշտային Կիլիկիան Սիրիայի և Փյունիկիայի հետ միասին մտավ հայկական տերության կազմի մեջ:

Ալեքսանդր Խլեովի պնդումը այն մասին, որ Կիլիկիան մտել էր Միջերդատի տերության կազմի մեջ, Տիգրանի կատարած գործերը Միջերդատին վերագրելու խորհրդային և հետխորհրդային ուսուական պատմագրության հերթական (և արդեն սովորական դարձած) ինսինուացիա է (247): Այս երեք երկրամասը կազմում էին նախկին Սելևկյան քաղաքության հիմնական մասը, և անժմանելի պատմական փաստ է, որ ինչպես մ.թ.ա. 102 թ.-ից Լեռնային՝ արևմտյան Կիլիկիան դարձել էր հռոմեական նահանգ, այնպես էլ 83 – 69 (66) թթ. Դաշտային՝ արևելյան Կիլիկիան դարձել էր Տիգրան Մեծի Հայկական կայսրության անբաժանելի մասը:

Խլեովը չիմանափորված պնդում է, որ 80-ական թթ. Միջերդատը բնակեցնում էր ծովահեններին Կիլիկիայից բացի նաև Կելեսիրիայում, Պաղեստինում և պոնտական հողերում՝ Սև ծովի ափերին: Ըստ երևույթին, իրեն քվում է, որ Հայկական կայսրությունը Միջերդատի սեփականությունն էր: Ասենք, Միջերդատը Տիգրանին ինչպես և բնակեցրեց ծովահենների մի մասին Միջուկյունիկեռում, ապա ինչպես ն դա պետք է աներ անկախ Հուդայում, մեզ հասկանալի չէ: Խլեովին այսպիսի «մարդաբանություններ» չեն հետաքրքրում, որը այն բանի կողմնակի վկայությունն է, որ նա լավ չի պատկերացնում իր կողմից նկարագրվող ժամանակաշրջանի միջազգային կարգավիճակը: Այս ամենից հետո, Խլեովին կարող ենք թողնել միայն իր

պիտումը պոնտական հողերի բնակեցման մասին: Կարծում եմ, որ Ալեքսանդր Խլովի բանիմաց և գեղարվեստական բարձր արժանիքներով օժտված հոյակապ մենագրությունը մեծապես կշահեր, եթե վերացվեին այսպիսի անծշուռթյունները:

Երբ Տիգրան Մեծի բանակը դուրս եկավ Կիլիկիայի, Սիրիայի և Փյունիկիայի ծովամերձ շրջանները, առաջացավ մի վիճակ, եթե այս երկու ուժերը կարող էին ընդհարվել, սակայն դա տեղի չունեցավ: Ծովահենները տեղի տվեցին և ենթարկվեցին Տիգրանի կամքին: Այսուհետ իրենց ռազմական գործողությունները սահմանափակված էին Միջերկրական ծովի արևելյան հատվածում ու անսահմանափակ բնույթ կարող էին կրել միայն արևմտյան հատվածում:

Խլովին կցանկանայի հարցնել, Դաշտային Կիլիկիայի հարևան Լեռնային Կիլիկիայում հոումեացիները այս ժամանակաշրջանում մշտական պահում էին 3 լեգոն և մեծաթիվ դաշնակից գորքեր: Օժանդակ ուժերի հետ միասին դա առնվազն 30.000 բանակ էր: Ի՞նչն էր խանգարում այս բանակին մտնել Դաշտային Կիլիկիա և ոչնչացնել հոումեացիներին այսքան գիշացավանք պատճառած կիլիկյան ծովահենների առավելյա քաղաքները և ամրոցները: Երսի 88-85 թթ. առաջին պոնտական պատերազմում ծանր պարտություն կրած Միջերդա տը, որի տիրույթները նույնիսկ սահմանակից չեն Կիլիկիային:

Կար ող էր պատահել, որ ծովահենները այնքան ուժ ունեին, որ կարող էին ցամաքում դիմակայել հզորագույն հոումեական բանակի հարձակմանը:

Անվանի ոռու պատմաբանը (Ալեքսանդր Խլովիլը) այնպէս էլ անտեղյակ մնաց [247], որ կիլիկյան ծովահենների անձեռնմընելիության գրավականը Դաշտային՝ իմացիր՝ Հայկական Կիլիկիայում տեղադրված հզոր հայկական գորաբանակն էր, որը հսկում և զապում էր հարեան հոումեական նահանգում գործերի ցանկացած գորաշարժը:

Այսպէս Տիգրանը լուծեց միանգամից մի բանի հարց.

- ապահովեց իր տերության ծովային սահմանների անձեռնմընելիությունը,
- հանդիսանալով Կիլիկիայում գտնվող ծովահենների հենակետների և քաղաքների պաշտպան՝ դյուրացրեց նրանց գործողությունները հոումեական նավատորմերի դեմ,
- օգտագործելով ծովահենների նավատորմը՝ հնարավորու-

թյուն ստացավ օժանդակելու Սպարտակի ղեկավարած ապստամբած ստրուկների բանակին Խոտայայում.

- կապ պահպանեց Խսպանիայում գտնվող մարիականների՝ Սերտորիոսի կառավարության հետ:


Եթե սկզբնական շրջանում ծովահենների փոքրիկ արագաշարժ նավերը փոքր խմբերով հարձակվում էին մեկ-երկու արևտրական նավերի վրա, ապա հետագայում ծովահենները թերև շալանդանների և «մեկուկեսականների» փոխարեն սկսեցին կառուցել մարտական բիրեմաններ և տրիբեմաններ: Այս տիպի նավերը հասուլ մարտական նավեր էին, որոնք կարող էին դիմակայել ցանկացած հակառակորդին: Ստեղծվեցին առաջին «ծովահենական» էսկադրաները, որոնք կարող էին մարտի բրոնվել ցանկացած հոումեական նավատորմի դեմ [113, 247]: Մասնավոր թալանչիներից ծովահենները վերածվեցին հայկական տերության ռազմական ուժերի կարևորագույն դաշնակիցներից մեկին: Հայկական պէտության ստեղծած հնարավորությունները Կիլիկիայում այն կարևոր օժանդակությունն էր ծովահենների համար, որ նշանակալից դեր խաղաց երանց հզորանալու համար:

Այսուհետ ռազմական գործողությունները, ծովահենյա շրջանների ավերումը և թալանը կատարվում էին նաև Տիգրանի շահերի պարտադիր պահպանմամբ և ուղղված էին Հռոմի ծովային հզորությունը խորտակելու վրա:

Միջերդատի պարտությունները Առաջին պոնտական պատերազմում անգործ էր թողել մեծ քանակութամբ փորձված նավապետների, շկկաբերների և նավավարների: Այս բուտն խառնվածքով ու անհանգիստ բնավորության տեր մարդիկ սովոր էին ծովային արշավներին և ճակատամարտերին, միաժամանակ ասում էին հոումեացիներին: Այս ողջ մարդկային զանգվածը ձգտում էր Տիգրանյան Կիլիկիա, ստանում այստեղ պաստան և, ըստ մասնագիտության՝ զբաղմունք:

Պատված Միջերդատի նավաստիները արժանի ընդունելություն գտան հայոց արքայից արքայի մոտ և խառնվելով կիլիկյան բազմազգ նավաստիության հետ՝ հիմք ստեղծեցին Կիլիկյան ծովային ենթապետության անսահմանեալ հզորության համար: Ցամաքային բազաների ապահովությունը, ծովահենների ընտանիքների ապահովությունը, զուտ թալանչիական գործողությունների վերափոխումը հիմնականում բարդ ռազ-

մական ծովային օպերացիաների, արմատապես փոխեցին կիլիսան ծովահենների նկարագիրը: Այսուհետ մենք «ծովահեն» ենք նրանց անվանում զուտ իներցիայի պատճառով, քաջ զիտակցելով այս տերմինի անհամապատասխանությունը այն ունիկալ պատմական երևույթին, ինչպիսին էր 83 – 67 թթ. կիլիկյան ծովահենությունը:



Նկար 3.3. Հունական ուազմանավ՝ բիրեմա

Հետազայում այս մարդկանց ոչ ավազակային բնույթը շատ լավ ըմբռնեց խորարափանց Պոմպեոսը, որը, հաղթելով Տիգրանի՝ պաշտպանությունից զուրկ ծովահեններին, ոչ թե դաժան հաշվեհարդար տեսակ նրանց հետ, այլ բնակեցրեց Կիլիկյայի և այլ տեղերի լրված քաղաքներում: Պոմպեոսի այս որոշման մասին մենք մասնաւուն կխոսենք ստորև:


Ըստհանրապես Պոմպեոս Մեծի, այդ մինչև վերջ չհասկացված և չգնահատված հոռմեական հանճարեղ քաղաքական և ուազմական գործի գործունեության անկողմնակալ և իրական գնահատականը դեռ տրված չէ և կարոտ է նոր՝ ավելի խոր և հիմնավոր ուսումնասիրությունների:

Այդ տարիներին ծովահենները բազմից ըստհարվեցին հզոր հոռմեական նավատորմերի հետ և տարան մի շարք փայլուն հաղթանակներ:

Ծովահենների նավատորմերը ունեին իրենց փորձված և տարանակավոր ծովականները, որոնք վարում էին իսկական պատերազմներ: ծովափնյա խիստ ամրացված քաղաքները վերցվում էին զրոհով կամ պաշարումից հետո այն ժամանակավա պաշարողական և քարեւու տեխնիկայի բոլոր նվա-

ճումների օգտագործումով: Վերցնում էին մեծ քանակությամբ պատանդներ, որոնք հետազայում ազատվում էին որոշ փրկագնուվ: Վերաբերունքը գերվածների հանդեպ բավականին մեղմ և հարգալից էր, միայն հոռմեացիներին ծովահենները ընդգործված չէին սիրում:

Գնալով ծովահեններին էին միանում մեծաքանակ ազնվականներ, որոնց ներկայությունը ավելի էր խստացնում այստեղի բարբերը: Ծովահենները նեղանում էին, եթե իրենց ավազակներ էին անվանում և համարում էին, որ իրենք յուրահատուկ պետություն են: Այս դրույթի հետ մենք պետք է լիովին համաձայնենք և համարենք, որ Կիլիկյայի ծովահենների պետությունը ուներ դաշնակցային, իսկ որոշ հարցերում նաև վասալային ենթակայություն Հայկական կայսրությունից:



Նկար 3.4. Հոռմեական ուազմանավ՝ տրիրեմա

Պլուտարքոսը գրում էր (Կենսագրություններ. Պոմպեոս. 24, 25) [42].

«24. Ծովահենների հզորությունը ծայր առավ նախ Կիլիկյայում: Ակզրում նրանք գործում էին համարձակ ու խիզախ, քայլ ամրողովին թաքուն: Նրանք ինքնավորահ ու հանդուզն դարձան միայն Միհրդաստյան պատերազմի ժամանակից, քանի որ արքայի մոտ ծառայում էին իբրև նավաստիներ: Եթե հոռմեացիները քաղաքացիական պատերազմների ընթացքում կրվում էին Հռոմի դարպանակների մոտ, ծովը, թողնված լինելով առանձ հսկողության, սկսեց աստիճանաբար հրապուրել ծո-

վահեններին և նրանց քաջալերեց հետազա ձեռնարկումների. ուստի և նրանք ոչ միայն սկսեցին հարձակվել ծովագիտացների վրա, այլև ամայացնել կղզիներն ու առափևա քաղաքները: Արդեն շատ մարդիկ, հարուստ, անվանի և, ընդհանուրի կարծիքով խելամտության սկսեցին երևակային նավեր բարձրանալ և մասնակցել ծովահենության գործին, կարծես թէ այն կարող էր իրենց փառք ու պատիվ բերել: Շատ վայրերում ծովահեններն ունեին խարսխակայաններ և աշուարակներով ամրացված դիտակետեր: Ծովերում ցրված նրանց նավակազմը առանձնանում էր ոչ միայն իր լավագույն նավաստիներով, այլև հմուտ նավավարներով, նավերի արագությամբ ու թերթությամբ, նավեր, որ հատկապես պատրաստված էին այդ գործի համար: Ծովահենների գարշելի ցովությունը ավելի շատ զգված էր առաջացնում, քան սարսափ. ցուցադրելով նավախելի ոսկեզօծ կայսերը, ծիրանի վարագույնները և արծարապատ թիավաները՝ ծովահեններն ասես ծանակում էին իրենց զոհերին և հոյարտում իրենց չարագործություններով: Յուրաքանչյուր ափին երգ ու երաժշտության ուղեկցությամբ նրանց զինարքուները, բարձր պաշտոնյանների գերեվարումը, գրաված քաղաքներից վերցվող ռազմատուգանքը, - այս ամենը ամոր էր հոռմեական տիրապետության համար: Ավագակների նավերի թիվը հազարից ավելի էր, և ծովահենները կարողացան նվաճել մինչև չորս հարյուր քաղաք: Նրանք կողոպսեցին մինչև այդ անձեռնմխելի համարվող Կարսոսի, Դիյումեի, Սամոթրակեի սրբավայրերը, Քթոնիայի տաճարը Հերմիոնում, Ասկլեպիոսի տաճարը Էպիդալոսում, Պուեդրոնի տաճարները Իսթմոսում, Տենարու երկանդանում և Կապարիա կղզում, Ասպոլոնի տաճարները Ակտիոնում ու Լևկասում, Հերայի տաճարները Սամոսում, Արգոսում և Լավինիայի երկանդանում: Իրենք՝ ծովահենները, Օլիմպոսում կազմակերպում էին տարօրինակ, անհասկանալի տոնախմբություններ և կատարում ինչ-որ միստերիաներ, որոնցից ցարդ տարածում ունեն Սիհրական միստերիաները, որ առաջին անգամ նրանք են կատարել:

Ծովահեններն իրենց չարագործությունները առավելապես անում էին հոռմեացիների դեմ: Ափ դուրս գալով՝ նրանք կողոպսում էին մեծ ճանապարհների վրա և ավերում ծովամերձ կալվածները: ...

25. Ծովահենների հզորությունը տարածված էր համարյա

ամրող Սիցերկրականի ավազանի վրա, ուստի և ծովը կատարելացես անմատչելի դառձավ ծովագեացության և առևտրի համար: Այս հանգամանքն էլ ստիշեց հոռմեացիներին, որոնք արդեն մթերքի պակաս էին զգում և վախենում էին դաժան սովոր, ուղարկել Պոմպեոսին՝ ծովը ծովահեններից մաքրելու համար: ...»

Հոռմի պայքարը ծովահենների դեմ ծայրահեղ դժվարացած էր նրանով, որ հոռմեացիների համար նրանք գրեթե անորսալի էին: Ապահանուր զրում էր [59].

«... իրենց, ոնց որ նավաստիներին, շնորհիվ իրենց հանդերձանքի դուրս պրծնել. Ելույթ էին ունենում իրենք ոչ հարազատ հողից, որը բոլորին հայտնի լիներ, և չունեին որինչ սեփական և անձնական՝ միայն այն, ինչ այդ պահին ընկնում էր իրենց ձեռքը: Այդ պատճառով, պատերազմը իրենց դեմ սովորական չէր և չուներ ոչ մի օրինացափություն, ոչ մի կայունություն, կամ պարզություն. դրանով այն առաջացնում էր անօնականության և վախի զգացում:»

78 թ. Լեռնային Կիլիկիայի պրոկոնսով Պուբլիոս Սերվիլիոսը կատաղի պայքար է սկսում ծովահենների դեմ: Սերվիլիոսը հարվածը հասցնում է ծովահենների քաղաքներին և ամրոցներին: Մեծ արշավանք է սկսվում ծովահենների դաշնակից խավառուների չինազանդեցված ցեղերի դեմ, տեղի է ունենում մի քանի մեծ ծովամարտ: Մինչև 76 թ. տևած այս լարված պայքարի ընթացքում Սերվիլիոսը հասնում է զգայի հաջողությունների. շահում է մի քանի ծովային ճակատամարտ, դեսանուներ է իշեցնում ծովակի՝ պաշարելով ու զրավելով ծովահենների քազմաթիվ նավահանգիստներ, քաղաքներ ու ավաններ Խավրիայում, Հռոմեական Կիլիկիայում, Պամֆիլիայում և Լիկիայում: Ծովահենների տասնյակ նավեր այրվեցին, հազարավոր ծովահեններ զոհվեցին մարտերում, որի համար Սերվիլիոսին Հռոմում շնորհեցին պատվավոր «Բասավրիական» կոչումը: Սակայն Սերվիլիոսը ոչ մի ձևով չկարողացավ խոչընդունել այն ծովահեններին, որոնք տեղափոխվել էին Կիլիկիայի հայկական մասը: Կարծ ժամանակում ծովահենները վերականգնեցին և ավելի հզորացրին իրենց ռազմական կարողությունները: Ծովահենները մի քանի անգամ դեսանտ իշեցրին նոյնիսկ

Բրունիզիումի մոտ, նաև Էտրուրիայում:

Ոչ մի քան չեր կարող անել նաև Մարկ Անտոնիոսը (հանրահայտ Մարկ Անտոնիոսի հայրը), որը 75 թ. դեկավարում էր պայքարը ծովահենների դեմ: Օժոված շինելով իր նախորդի ռազմական և կազմակերպչական տաղանդներով՝ ընշաքաղը և եսասեր հոռմեացին հինգ տարի անհաջող կառավարեց պայքարը ծովահենների դեմ, մինչև ջախջախվեց կրետյան նավատորմի կողմից և հարկադրված եղավ կըթել ծովահենների հետ խաղաղության պայմանագիր:

73 թ.-ին արևելքում սկսվեց Հռոմի վճռական ընդհարումը դաշնակից մեծ արքաների դեմ: Առաջին ռազմաբեմը Փոքր Ասիայում էր՝ հոռմեա- պանտական երրորդ պատերազմը, երկրորդ՝ Սիրոփյունիկիայում, ուր հոռմեացիները Տիգրանի դեմ էին հրահել Սելենե-Կյելոպատրայի ռազմական երսրը, որին դաշնակցել էին Նարաքեայի և Յուդայի թագավորությունները: Ծովահենները կազմում էին այս մեծ պատերազմի երրորդ՝ ծովային ռազմաճակատը: Ծովահենների միջոցով Տիգրանը օգնություն հասցրեց ներև ընկած Սպարտակին՝ ուղարկելով նրան մի ընտիր հեծելագունդ: Ըստ երևույթին, ծովահենների միջոցով Սիրիայում մոտ Պոնտոս էին հասել հոռմեացի սերտորիական սպասերը:

Չորրորդ հակահոմեական ռազմաճակատն էին կազմում բուն Իտալիայում Սպարտակի դեկավարությամբ Հռոմի դեմ ապստամբած ստրուկները: Բապանիայում շարունակվում էր սերտորիականների դիմադրությունը՝ հինգերորդ ռացմաճակատը: Բուն Հռոմում շարունակվում էր զգվուցքը տարբեր կուսակցությունների միջև:

Թվում էր, թե հոռմեական պետությունը գտնվում է կործանման եղին: Սակայն Հռոմը ցուցաբերեց հսկայական կենսունակություն և մեկ անգամ ևս ցուցաբերեց իր վիրխարի ուժը՝ 73 – 66 թթ.-ին հաղթելով իր բոլոր ախտյաններին:

Իսպանիայում Սերտորիուսի գոհվելուց հետո ազատվեցին զգալի ուժեր, որոնք հոռմեացիք 69 թ. տեղափոխեցին Արևելք և ուժեղ հարված հասցրին ծովահեններին՝ հարձակվելով Կրետ կղզու վրա: Կրետացիք, որոնք մինչ այդ Լասֆենի և Պանարի զիսավորությամբ ջախջախել էին Անտոնիոս Կրետիկի դեկավարած հոռմեական նավատորմը, արդեն պետք է դիմակայեն պրոլետառուկ Քվինտոս Մետելլի 3 լեգեոնին (մոտ 30.000-ոց

բանա՞կ): Վերջիններս իշխում են Կրետե կղզի և Կիդոնիայի ճակատամարտում մեծ դժվարությամբ հաղթում են Լասֆենի և Պանարի՝ կրետացիներից բաղկացած 24.000-ոց բանակը: Կրետացիները պայքարում են արժանապատվորյամբ և արտակարգ խիզախ: Հաղթանակը Մետելլին տրվում է շատ մեծ կորուսների հաշվին և չի կանգնեցնում կրետացիների նավատորմի հետագա հաջող հակահոմեական գործողությունները:

Պատմելով ծովահենների գործած չարիքների մասին՝ անհրաժեշտ է հիշել, որ ծովում պատերազմելիս հոռմեական, նախկինում նաև կարրազենական, կամ հունական նավատորմերի գործողությունները իրենց դաժանությամբ չեն զիջում ծովահեններին:

69 թ. ծովահենների ծովակալ Ափինոդրոսը հարձակվում է Դելոս կղզու վրա, գրավում այն և բոլոր բնակչներին վաճառում ստրկության՝ այդախոսվ վերջ դնելով այդ խոշոր հոռմեամտ առնտրական կենտրոնին: Այստեղ էր կենտրոնացած ողջ արևելյան Սիրելիքածովուրում գերի ընկած ստրուկների վաճառքը Խոսլիայի ստրկատերերին: Բոլոր ազատ մարդիկ առում էին այս շարիքի կենտրոնը և երազում նրա կործանումը [147]:

Սյուս ծովակալը՝ Պիրգանիոնը, գրավում է Սիրկիլիայում Սիրակալուգները և սարքում իր հենակետը: Մեծ դժվարությամբ Սիրկիլիայի պրոլետառուկին հաջողվում է վոնդել ծովահեննին:

Օգովելով հոռմեացի ծովակալների անփութությունից ու սխալներից՝ ծովահենների նավատորմերը թափանցեցին նոյնիսկ Տիրենական ծով և Հռոմի անմիջական մոտակայքում՝ Օստիայի նավահանգստում լրիկ ոչնչացրեցին. այրեցին հոռմեական ռազմական նավատորմը:

70-69 թթ. ծովահենների հզորությունը հասավ զազարնակետին. նրանց հսկողության տակ էին գտնվում ավելի, քան 400 ծովափեյա քաղաք, իսկ ռազմական նավատորմը բաղկացած էր մոտ 1.000 ռազմանավերից: Տիգրանը արդեն ջախջախել էր հարավսիրիական կուալիցիայի հիմնական ուժերը և պաշարում էր Պաղոմայիսը և մի շարք այլ մերձակնյա Փյունիկյան քաղաքներ, որոնք ծովից շրջափակել էին Տիգրանի դաշնակից ծովահենները:

Հռոմում և ողջ Իտալիայում հացի զները խիստ աճեցին,

որը մեծ դժգոհություն առաջացրեց հասարակ ժողովրդի շարքերում:

Մինչև Հայկական կայսրության կործանումը ծովահենները Տիգրանի հավատարիմ դաշնակիցներն էին: Նրանց համազործակցությունը խիստ արյունավետ էր երկուակ համար և տևեց Տիգրանի կողմից Մելլյանների զահին տիրանալու ողջ ժամանակաշրջանի ընթացքում՝ 83 – 69 թթ., հնարավոր է նաև մինչև 67 թ., եթե արմատապես փոխվեց տիգրանյան քաղաքականության ռազմավարությունը:

Ծովահենների հզորությունը Հռոմը կարողացավ վերջնականապես խորտակել միայն 67թ., եթե արդեն ծովահենները չէին օգտվում Տիգրանի աջակցությունից (69թ.-ի վերջից Տիգրանը գործնականում չէր վերահսկում Կիլիկիան, Սիրիան և Փյունիկիան) [155]:

Մասնակցել են հայ մարդիկ՝ զինվորները և նավաստիները, ծովահենների գործոդուրթյուններին, մենք չզիտենք, ենթադրում եմ, որ այս՝ սակայն դա կարող էր ունենալ զուտ պատահական բնույթ, որից բան է, որ ծովահենների միջավայրում հայերը պարտադրաբար ունեցել են տարբեր լիազորությամբ օժոված եմիսարներ:


Ծովահենների մասին այս քիչ թե շատ մանրամասն տեղեկությունները տրվում են նրա համար, որ ընթերցողը պատկերացնի ողջ աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հաջորդականության և դրա հիման վրա իրականացվող գործունեության տիգրանյան շրջանակները և ծավալը:

Ընթերցողի մոտ կարող է ծագել ևս մի հարց. որքանով բարյական էր սեփական երկրի շահերից ենելով, խրախուսել ծովահենությունը: Իմ պատասխանը միանշանակ է: Մենք տեսնում ենք՝ ինչպես միջնադարի վերջում նոր գիշատիչ Անգլիան, չկարողանալով ուղղակի պատերազմ վարել մեկ որիշ հին գիշատչի՝ դեռ շատ ուժեղ հակառակորդի՝ Բապանիայի դեմ, ոչ միայն խրախուսում, այլև հրահրում է ծովահենությունը, նրա համար, որ խորտակի Բապանիայի ծովային հզորությունը: Այս ծովահենները կատարում էին անսելի զազանություններ, սպանում էին հազարավոր անմեղ մարդկանց, սակայն մինչ այսօր նրանցից չի իշնում ոռմանտիկ հերոսների շղարշը ...

Ծովահեններին դիմակայող հոռմեական բանակը և նավա-

տորմիղները բաղմաթիվ զազանություններ են կատարել իրենց նվաճած երկրներում, սակայն այդ փաստը չի պակասեցնում իին աշխարհի պատմության սիրահարների հիացական վերաբերմունքը դեպի Հռոմը: Այս մարդիկ սիրում են միայն մի սցենար՝ Հռոմի հակառակորդները հերոսաբար պայքարում են հոռմեացիների դեմ, նույնիսկ մեկ-երկու անգամ հաղթանակներ են տանում, մինչև հերթական հոռմեական հերոսը չի կործանում նրանց: Իսկ եթե հանկարծ որևէից ուժ, չասենք հայերը, թող լինեն պարթեները, Հռոմին դիմակայում են հաղթականորեն, ապա դառնում են այս մարդկանց համար իրենց հիքնասիրությունը գրգռող տհած և անցանկալի երևույթներ, որոնց դեմ իրենք պայքարում են այս փաստերը մոռացության տալով՝ ճիշտ այնպես, ինչպես նման դեպքերում վարվում էր «ինքնասիրությունը խոցլած» անտիկ հոռմեական հասարակությունը:

Հետագա իմ հետազոտություններում պարտադիր եմ համարում ևս մեկ հարցի թնարկում. ո՞ր հասարակությունն էր ավելի վայրենի, հայ – իրանականը, թէ՝ Կոլիզեումներում մարդկանց արյունով զվարճացող հոռմեականը: Հռոմեացիների կողմից նվաճված հովտերին այնպես էլ չհաջողվեց պատվաստել Հռոմում Օլիմպիական և այլ մարզականադերի զարաֆարը, օրինակ՝ ըմբշամարտը կամ սկավառականեսությունը: Այս ամենը իին հոռմեացիներին հետաքրքիր չէր. այստեղից չէր գալիս արյան հոտը, և չին լսվում զոհվողների հոգեվարքի ճիշերը [287]:



Նկար 3.5. Քարնետ մեքենաներ

### 3.4. Տիգրան Մեծը և Սպարտակը՝ 73–71 թթ.

#### 3.4.1. Միհրդատի փորձերը օգտագործել Սպարտակի ապստամբությունը:

Գիտական պատմագրության մեջ նախկինում հայտնվել էր կարծիք, որ Միհրդատ Եվպատորը որոշ չափով օժանդակել էր Սպարտակի ապստամբությանը Խոալխայում: Այդ օժանդակության չափը և բնույթը չեն հստակեցրել բացի մեկ որույթից՝ առաջարկվել էր մի վարկած, որ Միհրդատը հեծելազոր էր ուղարկել Սպարտակին: Միհրդատի օժանդակությունը Սպարտակին շատ տրամաբանական և հավանական էր, սակայն արդյո՞ք բ հնարավորություն ուներ Միհրդատը հեծելազորով օգնել Սպարտակին իր համար այդքան ծանր 71 թ.-ին: Առաջ քաշելով այս վարկածը՝ օտարազգի հետազոտողները «չեն նկատել» պոնտացի արքայի ծայրահեղ ծանր վիճակը 71 թ. և ավանդաբար «չեն նկատել», որ դա կարող էր անել Տիգրանը: Պարզվում է, որ այդ օգնությունը ցույց էր տվել դաշնակից արքաներից մյուսը՝ Տիգրանը:

Ավելին չեն կարող սպասել այն «գիտնականներից», որոնց համար հայոց արքան լոկ պոնտացու կամակատարն է ...

#### 3.4.2. Տիգրանի աջակցությունը Սպարտակի ապստամբությանը:

2004 թ.-ին այս հարցի վերաբերյալ հանգամանալից հոդվածով հանդես եկավ Ռուբեն Մանասերյանը, որը, մասրամասն հետազոտելով Սպահանոսի հաղորդումը Սպարտակի մոտ ժամանած հեծելազորի մասին, ուշադրություն դարձրեց մի շարք կարևոր հանգամանքների վրա [33].

- հեծելազորը Սպարտակի մոտ գալիս է ոչ թե միանգամից, այլ կուտակվում է՝ ժամանելով փոքրաթիվ խմբերով մոտավորապես մեկ ամսվա ընթացքում (71թ. հունվար, վետրվար ամիսներին):
- Սպահանոսի հաղորդումից բխում է, որ Սպարտակը խիստ կարիք ուներ հեծելազորի մեջ, սակայն չէր կարողա-

նում բավարար քանակությամբ և որակի հեծելազոր հավաքել: Այս հեծելազորը, որը ժամանանում էր Սպարտակի մոտ ինչ-որ տեղից, ակնհայտորեն հարևան գյուղական տարածքներից հավաքագրված անփորձ հեծելազոր չէր:

- հեծելազորը ժամանում էր ծովով և այն հնարավոր է, որ տեղափոխում էին շատ հեռավոր վայրերից:

Ռուբեն Մանասերյանը, համակորմանի քննելով Միհրդատի ծանր վիճակը 71թ. ձմռանը և Տիգրանի 72–69 թթ. պայքարը Փյունիկիայում և Կելեսիրիայում, առաջ քաշեց վարկած այն մասին, որ Տիգրան Մեծը, որը շահազգոված էր Սպարտակի բանակի հետազու պայքարի շարունակման մեջ, իրեն դաշնակից կիլիկեցի ծովահենների միջոցով կարող էր Սպարտակին ուղարկել հեծյալ նետաձիգների մի ընտիր գունդ:

Հոռմեացիները չկարողացան որոշել, թե որտեղից էր ժամանել Սպարտակի մոտ այդ այրուձին, որն էլ մասնակցեց Սպարտակի բանակի վերջին բոլոր կոիկներին, մինչև նրա բանակի կործանումը 71 թ.-ի մարտին տեղի ունեցած մեծ ճակատամարտում:

Հոռմեացիները բոլոր հիմքերն ունեին կասկածելու, որ 72–71 թթ. ապստամբած Սպարտակին որոշ օգնություն են ցույց տվել դաշնակից արքաները:

#### 3.4.3. Սպարտակի անձնավորության մասին:

Սպարտակի կենսագրությունը հետազոտելիս հետազոտողները առաջ են քաշում երկու հիմնական վարկած: Առաջինը, որ նա եղել է պոնտական բանակի սպաներից մեկը, որը գերի է ընկել հոռմեացիների ձեռքը և իր արտակարգ ուժի ու խիզախության համար վաճառվել է զաղիխատրական դպրոց: Երկրորդ վարկածը ենթադրում է, որ Սպարտակը ծառայել է հոռմեական բանակում և պոնտական պատերազմների ժամանակ լրել է հոռմեական բանակը և փորձել է անցնել հակառակորդի կողմը, որի համար էլ բռնվել և վաճառվել է զաղիխատրական դպրոց:

Կասկածներ կան նաև Սպարտակի ազգության վերաբերյալ, թրակիացի նրան կարող էին անվանել ոչ թե ազգությունը նշելու համար, այլ այն պատճառով, որ զաղիխատրական սո-

վորաբար բաժնում էին երկու խմբի. մեկին տալով թրակիացի, մյուսին՝ սամիկու մարտական կեղծանունները: Հետազոտողների երկրորդ խումբը արդարացիորեն մատնանշում է, որ Սպարտակ անունը այլ վկայություններում հիշատակված չէ թրակիացիների մոտ, նրանք ենթադրում են, որ Սպարտակ անունը զայդատորների դպրոցում տվել են նրա համար, որ նա ծագումով Սպարտակից էր [12, 33, 246, 288]:

Մենք հակված ենք ընդունել այս երկրորդ վարկածը, քանի  
որ չենք հավատում, որ անգրագետ և ռազմարվեստին անծա-  
նոթ մարդ կարող էր դեկավարել 90-120 հազարանց բանակը և  
հաղթելով բացում ճակատամարտերում՝ ծանր հարվածներ  
հասցնել հոռմեացիներին: Մեր կարծիքով՝ Սպարտակը Միհր-  
դատի բանակում ծառայող ապարտանցի սպա էր, որը գերի էր  
ընկել հոռմեացիների մոտ և վաճառվել էր զատիշատորների  
դպրոց:

Նույնիսկ, եթե ճիշտ են առաջին խմբի գիտնականները, ապա պետք է ենթադրենք, որ Սպարտակը լավ կրթություն ստացած բրակիացի ազնվական էր։ Միհրդատի կամ հոռմեական բանակի սպա։

Հայ հնարավոր է, որ Միհրդատը և Տիգրանը կապեր ունենային Սպարտակի հետ և բոլոր հնարավոր միջոցներով աջակցեն նրան:

Երբեմն առաջանում է հանդուզն ենթադրություն, որ ընդհանրապես Սպարտակի կողմից դեկավարվող ստրուկտորի ապատամբությունը Բուալիայում հրահրել են դաշնակից արքաները: Այստեղ մենք պետք է հիշենք, ինչպիսի հակառակական սոցիալական ապատամբություն առաջացրեց Միհրդատի գործերի մուտքը 89թ.-ին հունեական Ասիա նահանգ, որին զոհ գնացին 80.000 իտայիկներ:


### 3.5.Հարավսիրիական պատերազմ՝ 73–69 թթ.

71 թ. ամրանք Տիգրանը կրկին գտնվում էր Սիրիայի հարավում՝ Կելեսիրիայում, որտեղ շարունակում էր պայքարը Փյունիկիան հայկական տիրույթներից անջատած Աւելիյան Կելպատրա-ՍԵԼԵՆԵ թագուհու, Նաբաթեաի և Հուդայի հականա-

կական կոռալիցիայի դեմ [34]: Այս կոռալիցիայի հետևող կանգնածքները չեն հաջողաբար ուղարկվում, որը էլեկտրոնային փոստում կազմակերպված է:

Տիգրանը Նարաթեայի և Հուդայի բազավորությունների զավթում չէր նախատեսում: Ինչքան էլ նրանք անհանգստացած լինեին հզոր հարևանին ներկայությամբ, դա բավարար չէր նրա համար, որ Նարաթեացիք և հրեաները հանդիսեին պատերազմ սկսել հզոր Հայկական կայսրության դեմ: Դա հնարավոր էր միայն Հռոմի դրդմամբ և ուղղակի ուզմական աջակցության խոստումով:

73 -71 թթ. ընթացքում հայկահյեղական կոստիցիան, որի միացյալ ուժերի թիվը հասնում էր մինչև 100.000 զինվոր, պարտվեց պատերազմում: Հայկական տերության բանակը մի քանի խորտակիշ հարվածներով ճնշեց այս եղույթը և գրավեց Դամասկոսը: Այս պատերազմներում հայկական զորքերի գլխավոր հարվածային ուժը հայկական ճոշավոր այրումին էր:



Քարտեզ 3.6. Ա.թ.ա. 73-69 թթ. հարավսիրիական պատերազմ

Ամրանալով Սիրոփյունիկիայի մի շարք ամրոցներում և քաղաքներում, Կլեոպատրա-Սելենեի կողմանկիցները շարունակեցին զինված պայքարը հայկական բանակի դեմ: Սիրոփյունիկյան ծովամերձ լավ ամրացված քաղաքների և ամրոցների գրոհը տևեց մինչև 69 թ. գարունը: Ի շնորհիվ հայկական բանակի մասնագիտացված պաշարողական ստորաժամանուներին, ամրությունների մեծ մասը վերցրին գրոհով (դեռ 71 թ.-ին Տիգրանը մի քանի օրում գրոհով վերցրել էր ապստամբ Կորուքի մայրաքաղաք Փինական՝ հաղթահարելով նրա չորս շարք պարիսպները):

Վերջինը ընկավ Պոտորմայիսը, ուր պատսպարվել էր ինքը՝ Կլեոպատրա-Սելենե թագուհին:

Հարավսիրիական պատերազմի արդյունքները հայերի համար նշանակալից էին.

- Հոռոմի հրահրած հակահայկական դաշինքը կործանվեց.
- հայկական բանակը ցուց տվեց իր ակնհայտ գերազանցությունը տարածաշրջանի բոլոր ուժերի հանդեպ.
- Սիրոփյունիկիայի՝ բոլոր ուազմավարական նշանակություն ունեցող քաղաքներում և ամրոցներում տեղակայվեցին հայկական տերության բանակի կայազորները:

Սակայն այս բոլոր ձեռքբերումները չին գերակշռում զիսավոր կորուստը՝ Տիգրանը զրկվեց երրորդ հռոմեա-պոնտական պատերազմի ամենավճական պահին Սիրիդատին օգնելու հնարավորությունից:

### 3.6.Տիգրան Մեծը և Սիրիդատ Եվպատորը՝ 73–69 թթ.

Տիգրան Մեծի և Սիրիդատ Եվպատորի հարաբերությունները 73 – 69 թթ. բարդ ժամանակաշրջանում միանշանակ կարող ենք բնորոշել որպես բարի դրացիական և դաշնակցային, եթե վստահ լինենք, որ Սիրիդատի մասոր խարը չէր Հայաստանում տեղի ունեցած Զարեհի ապստամբությանը:

Կարե՞լի է տեսականորեն ենթադրել մի վիճակ, եթե Սիրիդատը հրահրի Հայաստանում ավելի ուազմատեսչ, քան Տիգրան

Մեծն էր, ավագանու խմբավորման դժգոհությունը, և այդ ամենի զինին կանգնած լինի իր թոռը՝ Տիգրանի որդին՝ Զարեհը:

Սեղ այդ վարկածը անընդունելի է թվում հետևյալ պատճառներով.

- 94 -71 թթ. Տիգրանի քաղաքականությունը այնքան հարձակողական էր, որ ավելի շատ կարող էր հենց այդ պատճառով դժգոհություն առաջացնել հայկական ավագանու որոշ մասում.

- գրեթե քառորդ դար երկու դաշնակից արքաները կիսել էին հաջողությունները և անհաջողությունները. ոչ մի հիմք չկար՝ փոխելու իրար հանդեպ նման վերաբերմունքը այժմ (66 թ. դեպքերի ժամանակ Հայաստանը ակնհայտ փոխել էր իր քաղաքական նախապատվությունները, որը բացարձակ անընդունելի էր Սիրիդատի համար).

- Տիգրան Կրտսերը դեռ միացնում էր, այլ ոչ թե բաժանում էր հորը և պապին:

Դաշնակից արքաների հարաբերությունների վասացում կարող էր լինել այն պատճառով, որ Տիգրանը 71 թ. օգնության շիասավ աներոջը՝ Սակայն Տիգրանի ուազմաքաղաքական վիճակը այդ ժամանակ բավականին լարված էր, և նա որոշումներ էր ընդունում՝ 73 – 69 թթ.-ին Հայկական կայսրության ուազմաքաղաքական դրույթունից ենելով, որը բնորոշվում էր հետևյալ գործոններով.

- հոռմեական վտանգի առկայությունը.
- պարթևական վտանգի առկայությունը.
- ներքին պառակտումները Հայաստանում.
- մինչև 71 թ.-ը Պոնտոսի ինքնապաշտպանության բավական ներուժը.

- հաշվարկել՝ հայկական կայսրության ամբողջականությունը վտանգող երևոյթները կարելի է անտեսել թե այս պարագայում դաշնակցին օգնության գնալը ինքնապանություն նման մի քան է.

- այլ, մեզ անհայտ, ուազմաքարական գործոններ:

XIX – XX դդ. գրեթե բոլոր գիտնականները, որոնք հետազոտում էին հոռմեական պատմության այս ժամանակշրջանը, զարմացած էին մասել նրանով, որ Տիգրանը օգնության չի հասել Սիրիդատին երրորդ պոնտական պատերազմի ժամանակ,

հատկապես պատերազմի երկրորդ կեսին, երբ Միհրդատի ռազմական վիճակը խիստ վատացավ: Ումանք դա նույնիսկ բացատրում էին Հայոց արքայից արքայի անհիմս անհոգությամբ և լավատեսությամբ: Գիտնականների այս գնահատականը հարցի թերի ուսումնասիրության հետևանք է: Մեր՝ մինչ այժմ շարադրված նյութը տեղ չի թողնում նման գնահատակի համար: Ավելին այն հնում է միամիտ և խիստ կողմնակալ:

Այն հետազոտողները, որոնք Հայկական կայսրությունը և Տիգրանին դիտում են միայն որպես Միհրդատի շահերը սպասարկող «կլիինս», զարմանում են՝ ինչպես նա չհասավ «տիրոջ» Նեղության պահին: Սակայն այս դիրքորոշման տհասությունը մեզ համար այնքան ակներն են, որ ենթակա չէ անզամ քննարկման: Տիգրան – Միհրդատյան հարաբերությունները քիչ թե շատ խորը քննած ցանկացած պատմաբանի համար ակնհայտ են, որ առաջատարը այստեղ Տիգրանն է:

Հստ Եռարյան 73-69 թթ. Պոնտոսում և Հարավային Միհրիայում ծավալվող ռազմական գործողությունները, նույն արևելյան պատերազմի տարբեր ռազմաբեմերն էին: Տիգրանը չեր կարող հասնել օգնության Միհրդատին, մինչև պարտության շմատներ Միհրիայի հարավում ձևավորված հականայկական կոռալցիան՝ Սելևյաններին, Նաբաթեան թագավորությանը և Հուդային:

Անտիկ ոչ մի հեղինակի մոտ մենք չենք գտնում նշում այն մասին, որ Միհրդատը նախատի Տիգրանին իրեն օգնության շհասնելու համար: Ինչ-ինչ, բայց Միհրդատը գիտեր, թե ինչ ծանր պատերազմ էր վարում իր տերության հարավում Տիգրանը:

Տիգրանի առաջին քայլը հաղթանակից հետո՝ Հոռոմի դեմ պատերազմ հայտարարելն էր:

73-69 թթ. Տիգրանի և Միհրդատի հարաբերությունները հիմնականում բարեկամական և դաշնակցային էին: Այն, որ 71-69 թթ. Տիգրանը, գտնվելով իր կայսրության հարավում (Միհրդատինիլյան պատերազմի վճռորոշ տարիներին) և բավականին երկար բացակայելով Հայաստանից, բռոյ չտվեց, որ Միհրդատը ուոր դնի Արտաշատ՝ հայոց արքունիք, բացատրվում էր նրանով, որ Միհրդատը կարող էր զգալիորեն փոխել հայ ավա-

գանու տրամադրությունները ի շահ իր խնդիրներին: Տիգրանը դա բռոյլ տալ չեր կարող և չտվեց: Միհրդատը դա գիտակցում էր և չեր նեղանում, որովհետև իսքը նույն պարագայում նույնապես կվարվեր Տիգրանի հետ:



## ՄԱՍ II

Մ. Թ. Ա. 69 – 67 թ.

ՀԱՅ – ՀՈՌՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

## Գլուխ 4

### ՀԱԿԱՍՄԱՐՏՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՈՒԺԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒԾԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

... cum Armeniorum rege Tigrane grave bellum nuper  
ipsi diuturnumque gessimus.

Cic., Pro Sestio oratio, 27, 58. [34]

... մենք իսրանք վերջերս վարել ենք հայոց քազա-  
վոր Տիգրանի դեմ երկարատև և ծանր պատերազմ։  
Կիկերոն, մ.թ.ա. 56 թ. մարտի 13-ին։

#### 4.1. Հռոմեական բանակի ուժերը և տեղակայումը Փոքր Ասիայում

##### 4.1.1. Լուկիոս Լիկինիոս Լուկովոսի համառոտ կենսագրությունը

Լուկիոս Լիկինիոս Լուկովոս (մինչև 117 – 56 թթ. մ.թ.ա.)  
մ.թ.ա. 104 թ. պրետոր Լուկիոս Լիկինիոս Լուկովոսի և Կեկի-  
լիս Սետելի որդին էր [154]:

89 թ. Դաշնակցային պատերազմի ժամանակ ռազմական  
տրիբունի պաշտոնում ծառայել էր Սուլլայի հրամանատարու-  
թյան տակ։

87 թ.-ից մասնակցել էր առաջին պոնտական պատերազ-  
մին քվեստորի, իսկ 86 – 80 թթ. զբաղեցրել էր Սուլլայի պրո-  
բեստորի պաշտոնը։

85 թ. հռոմեական նավատորմը անցկացրել էր Էգեյան ծով  
և գրավել էր պոնտացիներից Քիոս կղզին։

Նոյն թվականին հրաժարվել էր օգնել Ֆիմբրիային Միհր-  
դատ Եվպատորի դեմ պայքարում և օգնել էր Սուլլայի բանա-  
կին անցնել Հելլեսպոնտը։

Սուլլայի Ինուախա վերադառնալուց հետո մնացել էր Ասիա  
նահանգում մինչև 80 թ., ընդ որում, իր բացակայության ընթաց-  
քում Հռոմում 79 թ. ընտրվել էր կուրուլային եղիլ ապա 78 թ.՝

պրետոր։ Եղել էր Սուլլայի ամենավստահելի մարդկանցից մե-  
կը։ Իրեն էր Սուլլան վստահել իր որդու խնամակալությունը և  
հուշերի խմբագրումը։

77 – 76 թթ. կառավարել էր Աֆրիկա նահանգը։

74 թ. ընտրվել էր կոստով, և նրան նշանակել էին Ցիսալ-  
յան Գաղղիա, սակայն տարբեր խարդավանքների միջոցով  
Լուկովոսին հաջողվում է փոխել նշանակումը Ասիա նա-  
հանգ, որտեղ նրան էր հանձնարարվում պատերազմը Միհր-  
դատ Եվպատորի դեմ։ Հոտմի ծերակոստը Լուկովոսին էր Են-  
թարկում Ֆիմբրիայի և Սերվիլյոս Խավլացու բանակները,  
նաև բովու տայիս նոր լեզեռն հավաքել Ինուախայում՝ արևելք  
մեկնելու համար։

73 – 68 թթ. հռոմեական Կիլիկիա նահանգի պրոկոնսուլը  
էր, 73 – 69 թթ. Ասիա նահանգի պրոկոնսուլը էր, 73 – 67 թթ.  
Բութանիայի և Պոնտոսի պրոկոնսուլը էր։

##### 4.1.2. Երրորդ պոնտական պատերազմի ավարտը և Միհրդատի փախուստը Հայաստան

71 թ. զարնանը Լուկովոսի բանակը Պոնտոսում վերսկսեց  
հարձակումը Միհրդատի բանակի վրա։ Լուկովոսը Ամիսոսի,  
Տեմեսիկիրայի և Եվպատորիայի պաշարման համար իր լեզատ  
Լիկինիոս Սուլլենային հատկացրել էր երկու լեզեռն, ինըը,  
երեր լեզեռնով և հեծելազորով անցնելով Պերիանդրոսի լեռ-  
նանցըները, որ իջներ Ֆանարեայի հովիտը։

Միհրդատը հեծելազորով անցնում է Լիկոս գետը և անհա-  
պահ հարձակվում Պերիանդրոսի լեռներից իջնող հռոմեացի-  
ների վրա։ Սրբնթաց զրոհը ուղղված էր հատկապես հռոմեա-  
կան հեծելազորի դեմ, որը չի հասցնում նույնիսկ վերադասա-  
վորվել և լրիվ ջախջախվում է։ Լուկովոսը հարկադրված է լի-  
նում բանակը հետո քաշել և ամրանալ լեռնանցըներում։

Սակայն հետո, տեղացի հովոն որտրդների օգնությամբ  
Լուկովոսին հաջողվում է անկորուստ լեզեռները իջեցնել հո-  
վիտ, որտեղ տեղի է ունենում հաջորդ ընդհարումը հակառա-  
կորդների միջև, որում Միհրդատի զինվորները մեկ անգամ է  
են հաղթում։

Սովոր վտանգից խուսափելու համար Լուկուլլոսը ուղարկում է Հռոմի դաշնակից Կապադովիայի թագավոր Արիաբարզանի մոտ՝ իր լեզաւ Սորնատիուսին 10 կոհորտով պարեն բերելու համար (հոռմեական լեզենքը բաղկացած էր 10 կոհորտից, որին Սորնատիուսը ղեկավարում էր ոչ թե ամբողջական լեզենի, այլ տարբեր լեզեններից հավաքած 10 կոհորտանց զորախումբը): Միհրդատի հեծելազորը Մենանդրոսի հրամանատարությամբ հարձակվում է Նրանց վրա, սակայն հետ է մղվում: Հաջորդ բախումը ճակատագրական է դառնում պոնտացիների համար. անհարմար տեղում մարտի բռնվելով Սորնատիուսի հոռմեացիների հետ՝ Նրանք կոպիտ սխալ են բույլ տալիս: Պոնտացիները զրոհում են հոռմեացիներին նեղ կիրճում՝ չսպասելով, որ հոռմեացիները անցնեն լայն հովիտ, որտեղ Նրանց դեմ կարող էին արդյունավետ օգտագործել իրենց հզոր հեծելազորը: Արդյունքում պոնտացիները իրենց 4.000 հետևակից և 2.000 հեծելազորից կորցնում են հեծելազորի մեծ մասը: Հոռմեացիները պարզապես ոչնչացնում են անշարժացած հեծյաներին:

Միհրդատի զիսավոր մարտավարական առավելությունը՝ ուժեղ հեծելազորը, մի հարվածով վերանում է: Իմանալով հեծելազորի կորստի մասին՝ պոնտական բանակը հուսահաւալվում է ու կազմակերպում: Պոնտացիների ճամբար վրա հասած հոռմեական բանակին, որի առաջին շարքերում դաշնակից զալաթներն են, լուրջ դիմադրություն չի ցուցադրվում (աս հոռմեատեր անտիկ պատմիչների տվյալներն են, մեկ է, զիտես որտեղից հայտնված հոռմեացիների փոքրասիական դաշնակիցները: Ակսում են հասկանալ, որ հոռմեական բանակը ամենափեկ է միայն լեզենները չեն): Հոռմեացիները շրջապատում են պոնտացիների ճամբարը և կոսորում խուճապահար բանակի մեծ մասը՝ 40.000 հետևակից 30.000-ին: Միհրդատը մնացած 2.000 հեծելազորով դուրս է պըճնում, կտրվում իր հենուից ուղարկված լեզաւ Մարկոս Պոնտեոսի զորքից և նահանջում Փոքր Հայրի Տալավրա ամրոցը, որը գտնվում էր Մեծ Հայր ու ապաստան խնդրում Տիգրանից:

Լուկուլլոսը նվաճում է Փոքր Հայրի մեծ մասը (Տալավրա ամրոցը չի կարողանում գրավել), նաև խալերի և տիբարեննե-

թի ցեղերը և իջնում Պոնտոսի ծովափնյա մասը:

Սկսվում է պարտված Պոնտոսի վերջնական հպատակեցումը. 71թ. աշնանից մինչև 70 թ. ամառը հոռմեացիք գրավում և անխնա կողոպտում են Հերակլեան և Սինոպը, իսկ աշնանը դիմադրության վերջին օջախը՝ Ամիսոսը:

Պոնտադրոս. Կենապորություններ. Լուկուլլոս. 23, 24.

«23. Այդ ընթացքում Լուկուլլոսը, Ասիայի պրովինցիային լիակատար արդարադատություն և խաղաղություն շնորհելով հանդերձ, չարհամարհեց նաև այն, ինչ ծառայում է զվարճության և հաճույքների: Կանց առնելով Եփեսոսում՝ նա ջանք ջննայեց քաղաքները սիրաշակելու հաղթական երթերով և տոնախմբություններով, մարզիկների և զլադիատորների մըրգումներով: Իրենց հերթին, քաղաքները նրան պատասխանեցին՝ նրա պատվին հաստատելով Լուկուլլոսյան խաղեր և այն անկեղծ նվիրվածությամբ, որ առավել թանկ է ամեն տեսակ մեծարումից:

Երբ Կապիդոսը վերադարձավ, և որոշվեց պատերազմ սկսել Տիգրանի դեմ, Լուկուլլոսն իր զորքով նորից շարժվեց դեպի Պոնտական թագավորություն և պաշարեց Սինոպն, կամ ավելի ճիշտ կիսի ասել, այն գրաված կիլիկեցիներին, որոնք հարել էին արքային: Գիշերով թշնամիները փախան նախապես սպանելով՝ բազմաթիվ սինոպեցիների և հրկիզելով բաղարը: Նրանց փախուստն իմանալուց հետո Լուկուլլոսը մտավ Սինոպէ, կոտորեց իր ձեռքն ընկած ութ հազար թշնամու, իսկ բաղարացիներին վերադարձեց իրենց ունեցվածքը և, ընդհանրապես, այդ բաղարի նկատմամբ առանձին հոգատարություն դրսւուեց: Դրա պատճառը մի տեսիլ էր: Երազում նրա առաջ կանգնեց ինչ-որ մեկը և ասաց. «Ավելի! մոտեցիր, Լուկուլլոս: Այսուեղ է Ավտովիկոսը և ուզում է հանդիպել թեզ հետո: Զարթնելով Լուկուլլոսն սկզբում չեղ կարողանում հասկանալ, թե ինչ է նշանակում այս երազը: Այդ օրն իսկ նա գրավեց Սինոպն և, դեպի իրենց նավերը փախչող կիլիկեցիներին հետապնդելիս տեսակ ծովափին ընկած մի արձան, որ կիլիկեցիները չեն հասցել քաշել տանել մինչև նավ: Դա Ստենիդեսի լավագույն գործերից մեկն էր: ...»

Մինչ այդ նրան հայտնեցին, թե Միհրդատը և Տիգրանը մտադիր են իրենց ուժերով մոտ ժամանակներս մտնել Լիկաո-

Նիա և Կիլիկիա, որպեսզի իրենք առաջինը սկսն պատերազմական գրծողությունները՝ ներխուժելով պրովինցիա Ասիա: Այս հանգամանքը ստիպեց Լուկովոսին տարակուսել Տիգրանի վերաբերմունքից: Եթե նա մտադիր էր հարձակվելու հորմացիների վրա, ապա նա ինչ՝ու չդաշնակցեց Միհրդատի հետ այն ժամանակ, երբ պննտացին զոնվում էր իր հզորության բարձունքին, ինչ՝ու նա իր զորքերը չմիացրեց նրա բանակին, երբ վերջինս լիակատար ուժ էր. ինչ՝ու թույլ տվեց, որ Միհրդատն ընկեն և թուլանա, իսկ այժմ պատերազմ է սկսում հաջողության նվազագույն հույսով, իրեն կործանման մատնելով նրանց հետ, ովքեր արդեն չեն կարող ուշքի գալ և ոտքի կանգնել:

24. Այս ամենից հետո, երբ Մաքարեսը՝ Միհրդատի որդին, որը տիրում էր Բոսպորյան թագավորությունում, Լուկովոսին պսակ ուղարկեց հազար ոսկի արժողությամբ՝ ինչպես իրեն ճանաչել հոռմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից, Լուկովոսը նախկին պատերազմը ավարտված համարեց և Սոռնատիոսին թողնելով վեց հազարանոց զորամատով Պոնտական մարզը պահպանելու, ինքը տասներկու հազար հետևակով և երեք հազարից էլ պակաս հեծյալներով մեկնեց՝ հաջորդ պատերազմը մղելու: Կարող էր թվալ, թե ինչ-որ վայրենի, ողջախոհությանը հակառակ եռան նրան մղում է անհամար հեծելազոր ունեցող ռազմատեշ ցեղերի կենտրոնատեղին, անծայրածիր մի երկիր, որ ամեն կողմից շրջապատված է խորունկ գետերով և ձյունապատ լեռներով, որոնց վրա ձյունը չի հալչում: Իր զինվորները, որ առանց այն էլ աչքի չէին ընկնում հետազանդրությամբ, գնում էին դժկամությամբ՝ իրենց դժգոհությունը բացահայտ արտահայտելով: Նոյն այդ ժամանակ Հռոմում ժողովրդի պարագուխները Լուկովոսի դեմ հանդես էին զայլս բուռն կշամքանքներով ու մեղադրանքներով, որ իրը նա մի պատերազմից անցնում է մյուսին, - թեն պետությունը դրա կարիքը բռնորովին չունի, - միայն թե ինքը մնա զլիավոր հրամանատար և առաջան նման օգովի վտանգներից, որոնց նա ենքարկում է հայրենիքը: Հետազայում այս շարախտառությունները հասան իրենց նպատակին:

Լուկովոսին արդեն արագ կերպով անցավ ճանապարհը մինչև Եփրատ. Բայց վշտացավ՝ տեսնելով, որ գետը վարարել էր ու պղտորվել ձմեռային անձրևերի պատճառով: Նա մտա-

ծեց, որ հարկադրված կլինի երկարատև ու ծանր աշխատանք թափել լաստանավեր շինելու և նավակամուրջ պատրաստելու համար: Սակայն երեկոյան ջուրն սկսեց իջնել և զիշերվա ընթացքում այնքան պակասեց, որ առավոտյան կարելի էր տեսնել, որ գետը պարփակվել էր իր հունի մեջ: Երբ տեղի բնակիչները նկատեցին, որ անցավայրում փոքրիկ կցակներ են հայունքել, և դրանց ծուրջ ջուրը ծանծաղացել է, սկսեցին իջըն աստված մեծարել Լուկովոսին, քանի որ առաջներում նման բան հազվադեպ էր պատահում, իսկ այժմ, ինչպես նրանց թվում էր, ինքը՝ գետը հոժարակամ, սանձահարված և մելմացած հետազնդվել էր նրան՝ հետավորություն տալով արագ և դյուրին անցնել: Այսպիսով, Լուկովոսը, օգովելով այս երշանիկ պատահարից, զորքը անցկացրեց Եփրատով...  
...

Լուկովոսը Եփրատին ևս զոհաբերեց մի ցուց բարեհաջող գետանցի համար: Այդ օրը զորքը հանգստացավ, իսկ հաջորդ օրվանից սկսած՝ Լուկովոսն առաջ շարժվեց Ծոփի միջով՝ ոչչոզ չներացնելով տեղաբնիկներին, որոնք հոժարակամ հետազնդվում էին նրան և սիրով ընդունում հոռմեական զորքը: Երբ զինվորները ցանկություն հայտնեցին զրավել մի բերդ, որտեղ կարծում էին, թե մեծ զանձեր կան, Լուկովոսը, ցույց տալով նրանց Տավրոսը հետովում, ասաց «Ավելի լավ է նվաճենք այս բերդը. Իսկ սրանք առանձ այդ էլ կմնան հայողոններին»: Նա, արագացնելով իր երթը, անցավ Տիգրիսը և ներխուժեց Հայաստան:» [42]:

Ապահանոսը Պլուտարքոսի տված այս տեղեկություններին ոչ մի նոր բան չի ավելացնում:

Ըստերեցելով Արտարքոսին՝ հասկանում ենք, որ Սինոսը քաղաքում տեղի են ունեցել այնքան լուրջ ռազմական գրծողություններ, որ ժամանել էր իր ողջ բանակով ինքը՝ Լուկովոսը: Սինոսը և Ամասիան մնացել էին Լուկովոսի բանակին դիմադրող վերջին պոնտոսյան քաղաքները: Կիլիկյան ծովահենների նավատորմը մտել էր Սինոսը, և դրա շնորհիվ քաղաքի պաշտպանությունը խիստ ուժեղացել էր: Հռոմեացիներին պահանջվեց հատուկ արշավանք կազմակերպել Սինոսի վրա, պաշարել և վերցնել գրոհով, ընդ որում միայն զոհված կիլիկեցիների թիվը հասել էր 8 հազարի: Ինչքան հոռմեացի էր զոհվել, Պլուտարքոսը չի հաղորդում: Սակայն վերջնական ջախջախին ծովահեններին չի հաջողվել. նրանց մի մասը հեռացել էր դեպի

իրենց նավերը այնքան անշտապ՝ փաստորեն ծրագրած նահանջով, որ, հռոմեացիներին շթողնելու համար, կարողացել են իրենց հետ տանել նոյնիսկ ճանաչված հովյա քանդակագրծերի գործերը: Գնալուց առաջ նրանք կողոպատել էին Սինոպը, որը հետո կրկնակի կողոպատեցին նաև հռոմեացիները: Այս ամենը Պլոտոնարքոսը պատմում է թերևն և հպանցիկ, որպեսզի սովեր անգամ չցցի իր սիրելի հերոսի՝ Լուկովլոսի վրա, սակայն պահպանվել են այս իրադարձությունների Ասպիհանոսի և Մեմոնի նկարագրությունները:

Այս ծովային օպերացիան ցույց է տալիս դաշնակից արքաների՝ Տիգրանի և Միհրդատի հեղինակության աստիճանը Առաջավոր Ասիայում և արևելյան Միջերկրածովյան, նաև պատկերացում պայխու՝ ինչ հզրություն ունեին Միհրդատի և Տիգրանի ծովային դաշնակիցները: Կարելի է հիանալ ծովահենների նավաստիական և զորական վարպետությամբ և գնահատել նրանց ճշգրիտ հաշվարկը ու համարձակությունը. Եթե հաշվի առնենք, որ հռոմեացիները, փաստորեն, լրիվ վերահսկում էին Բուրանիան, և ծովահենների նավատորմի համար Դրապունտիսի նեղուցներով անցնելը մահացու վտանգավոր էր: Պոնտոսի հունական բաղարների դառը ճակատագիրը հետևանք էր հռոմեացիների, երբեմն ել նրանց որոշ հակառակորդների (ծովահենների) ազանության և դաժանության:

Տիգրանի ծովային դաշնակիցների այս փայլուն ռազմական գործողությունները Տիգրան – Միհրդատյան սպասվող հարձակման նախակարապետն էր. Պոնտոսում և ամբողջ Փոքր Ասիայում սպասում էին դաշնակից արքաներին, և Լուկովլոսը դժվար թե դա չհասկանար: Նա զիտակցում էր, որ 73 - 70 թթ. հայ-հռոմեական «սառը» պատերազմը 70 թ.-ի վերջում կամ 69-ի սկզբին վերածվելու է հսկայական ռազմական դիմակայության, և նախընտրեց նախահարձակ լինել:

Ներկայացված հատվածը նաև վկայում է՝ ինչ լուրջ պատրաստություն էր տեսնում մեծ պատերազմից առաջ Լուկովլոսը՝ իր թիկունքը պահովելու համար ձգտելով սիրաշահել Փոքր Ասիայի ժողովուրդներին և տեղական կառավարիչներին:

Եթե 68 թ. աշնանը Միհրդատը հայկական գործերով և իր թիկունքով կմտնի Պոնտոս, վերջինս կապստամբի հռոմեացիների դեմ՝ մեկ անգամ ևս հաստատելով Լուկովլոսին Փոքր Ասիայում հարգելու ու սիրելու մասին մեր սիրված մեծ կենսա-

գրագետի (Պլոտոնարքոսի) գնահատականների, մեղմ ասած, անձշուությունը:

70 թ. վերջին, Լուկովլոսը վերադառնում է Ասիա հռոմեական նահանգ և իր գործերը կենտրոնացնում է Էփեսոսում:

#### 4.1.3. Լուկովլոսի հայկական արշավանքի նախապատրաստումը

Լուկովլոսը 73 թ. հռոմեա-պրոնտական պատերազմը սկսել էր 5 լեզենով՝ 30.000 լեզեններներով և 1.600 կամ 2.500 հեծելազորով: Այս լեզեններից երկուար ֆիմբրիայի լեզեններն էին: Մեկ լեզեն էլ նա իր հետ 73 թ. թերել էր Հռոմից, իսկ երկու մասցածը՝ Սերվիլիոսի լեզեններից էին (Սերվիլիոսը Լեռնային Կիլիկիայում ուներ 3 լեզեն, որին նրանցից մեկը Լուկովլոսին չէր վերանքարկվել): Ասիա նահանգում կարող էր գտնվել ևս 2 (?) լեզեն, որի հրամանատարությունը նա ստանձնել էր որպես նահանգի պրոկոնսուու:

Բացի դրանից, Ասիայում և Բուրանիայում էր գտնվում նաև պրոկոնսու Կոտոտայի բանակը, որում կար առնվազն 3 լեզեն (Քալկեդոնի ճակատամարտում Կոտոտայի բանակից 5.300 զինվոր զինվում է և 4.500 զերի և ընկուու, սակայն նա հետազոյում ունի ոչ մեծ, բայց պայքարը շարունակելու համար բավարար ուժեր: Մեր կարծիքով նա ուներ 3-4 լեզենից ոչ պակաս՝ շահշափած դաշնակիցների ուժերը: Կոտոտայի լեզեններից մեկը գրեթե լրիվ ոչնչացել էր, իսկ մասցած երկու-երեքն էլ խիստ բռվացած էին:

Հարեւան հռոմեական Լեռնային Կիլիկիա նահանգում մըշտական տեղակայված էին 3 հռոմեական լեզեններ, սակայն այս տեղից հանվել էին Սերվիլիոսի 2 լեզեննը (?):

Եթե ամփոփենք Փոքր Ասիայում գտնվող հռոմեական ցամաքային ուժերի հաշվառումը, ապա տեսնում ենք, որ Ասիա նահանգի երկու և Կիլիկիա նահանգի երեք, ընդամենը՝ հինգ լեզեններին անհրաժեշտ է գումարել Լուկովլոսի հինգ և Կոտոտայի երկու (նախկինում՝ 3-4) լեզենները: Այդպիսում, Հռոմը տարածաշրջանում ուներ 12 - 14 լեզեն՝ մոտ 65-70.000 լեզեններ և մի քանի հազար հեծելազոր: Դրան պետք է գոմարել

Տրիարխուսի ղեկավարած բուն հռոմեական նավատորմի անձնակազմը: Այդպիսով, Հռոմը Ասիայում ուներ մոտ 80.000 հռոմեացի և իտալիկցի զինվոր: Հաշվի առնելով հռոմեացիների սովորությունը՝ լեզենին կցել նույն քանակության ծանրագնես հետևակայիններ, կրկնակի-եռակի քանակությամբ հեծելազոր և առնվազն մեկ-երկու հազար թթեսազեն, ապա դաշնակիցների հաշվին այս թիվը հանգիստ կարելի է ավելի քան կրկնապատկել: Այդպիսով, հաշվարկերը ցույց են տալիս, որ Ասիայում Հռոմեական հանրապետության զինված ուժերը բաղկացած էին մոտ 160.000 – 180.000 զինվորներից և նավատիներից:

Հաշվի առնելով նաև Հռոմաստանում և Սակեդրենիայում գտնվող բուն հռոմեական և դաշնակիցների ուժերը՝ վստահաբար կարող ենք ասել, որ Հռոմեական հանրապետությունը արևելյան ուղղության վրա պահում էր, մոտավորապես, իր զինված ուժերի կեսը՝ ավելի, քան 200.000 զինվոր: Այս թվերը համընկնում են Մեծ Հակոբյանի [23, 59, 137, 199] տվյալների հետ, որը օգործվում է Ապահանոսի, Պ. Կոնտամինի, Պ. Կոննոլիի, Ե. Ռազինի և Ա. Այվազյանի տվյալներից:

Միամտություն է կարծել, որ այս ուժերից 170-180.000 հնարավոր էր կենտրոնացնել մեկ հակառակորդի դեմ [23]: Այդքան ուժ կենտրոնացնելու համար նախապես պետք էր սեփական 200.000-ը մորիլիզացիայով հասցնել մինչև 250-300.000, որից հետո միայն փորձել այդ «քաղաքայի» 170-180.000 կենտրոնացնել մեկ արշավի համար: Դրանից հետո անհրաժեշտ կիներ լուծել այդքան մարդկանց սնվելու հարցը և այլն ...

Պոմպեոսին հաջողվեց Արևելքում կենտրոնացնել 120.000-ոց քանակի և մեծ նավատորմ միայն Արևմտության հսկայական ուժեր Արևելք տեղափոխելուց հետո:

Կարող ենք եզրակացնել, որ Հռոմը Արևելքում պահում էր քավարար ուժ օյկումենի մեծ տերությունների՝ Պոնտոսի, Հայաստանի և Պարթևստանի ուսամական ելույթը զավելու համար: Եթե նշված տերությունները կարող էին լարված մորիլիզացին գործունեության շնորհիվ կարճաժամկետ հավաքագրել մոտավորապես 250-300.000 զինվոր, ապա Հռոմը կարողանում էր իր 200.000 զորքը Արևելքում պահել զրեթե որպես մշտական քանակ:

Խսկապես, Պոնտոսի, Հայաստանի և Պարթևստանի իրական զինուժը 69 թ. գարնանը կազմում էր նրանց մորիլիզացին

հնարավորությունների մոտավորապես կեսը, համապատասխանաբար, 150.000, 150.000 և 100.000 զինվոր:

Հակասիզգրական տրամադրված Պարթևստանը Հռոմի լուսյա դաշնակիցն էր: Այդպիսով, Հռոմը Արևելքում պահում էր այնքան զինուժ, որ կարող էր միաժամանակ դիմակայել միհրդատ-տիգրական հակառակական դաշինքի բոլոր ուժերին:

Դրա հետ մեկտեղ մենք հիմնվելով մեզ հասանելի գրականության, նաև հռոմեական, հայկական և պոնտական քանակների կառուցվածքի հիմացության վրա, պերում ենք, որ օյկումենում մ.թ.ա. 300 – 50 թթ. պատերազմները վարվում էին խոշոր՝ 50.000, շատ մեծ՝ մինչև 100.000, բացադրի դեպքերում՝ հսկայական, մինչև 120-150.000 քանակներով: Հին աշխարհում ավելի մեծ քանակներներով մարտնչել են միայն Չինաստանում:

Որպես օրենք՝ հռոմեական լեզենները կազմում էին հռոմեական քանակի միայն միջուկը: Օրինակ՝ Սուլլայի կեղծ հաղորդումները, որ ինքը 30.000 կարողացել է հաղթել 120.000 պոնտական քանակին Հռոմաստանում, ոչ մի քննադատության շեն դիմանում: Իրականում, կողոպտելով Հռոմաստանի կեսը, Սուլլան այդ հսկայական միջոցներով հավաքել էր նոյն Հռոմաստանում այնքան վարձկան զինվորներ, որոնց միննույն էր՝ ում կողմից և ում դեմ կովել, որ հասցել էր իր զինված ուժերի քանակը առնվազն պոնտականի քանակին (չի բացառվում, որ Սուլլան իր զեկուցումներում նաև առնվազն կրկնապատկել էր պոնտական քանակի իսկական թիվը):

Հայթանակից հետո նա նշում էր միայն բուն հռոմեական զորքի (առանց դաշնակիցների) թիվը, իսկ կորուստների մասին Սուլլայի հաղորդումները հնչում են որպես ծաղրանք լսողի համար. ողջ օրը կատաղի ճակատամարտած հռոմեական քանակը սպանում է 60.000 թշնամի և կորցնում ... 14 զինվոր [169, 193]:

70 թ. Կոուտան հետ է կանչվում Հռոմ՝ նախապես Լուկովլուսին հանձնելով իր զարքերը՝ 2-4 լեզեն և այլ ուժեր: Մինչ այդ, Բուտակայից Լուկովլուսի համար օգնական զորք էր բերել Բարբան: Որովհետև Սեմաններ այստեղ չի նշում զորամիավորումը, մենք կարծում ենք, որ համարումը առանձին զորա-

մաս՝ լեզուն չկը:

Այդպիսով, իր անմիջական հրամանատարության տակ 69թ. գարնանը Ասիայում Լուկուլլոսը ուներ հետևյալ ուժերը՝

- Ասիա նահանգում տեղադրված 2 լեզունը.
- 74 թ. Ռուալիայից Ասիա տեղափոխած իր նոր հավաքած 1 լեզունը.
- 86 թ. հավաքած նախկին Ֆլամինիուսի (հետո Ֆիմբրիայի) 2 լեզունը.
- Կոստոյի 2-4 լեզունների մնացորդները (?):

Ընդամենը 7-8 լեզուն, որոնցից ամենափորձվածները ֆիմբրիական լեզուններն էին [187]: Բացի դրանից, նա իր ձեռքում էր կենտրոնացրել աննախադեպ իշխանություն։ Միաժամանակ երեք նահանգի պրովինտուլ էր, և իրեն, փաստորեն, ենքարկում էին Ասիայում գտնվող բոլոր հռոմեական զորքերը։

Այդպիսով, Լուկուլլոսը իր հրամանատարության տակ գտնվող 12 լեզուններից առնվազն 4-ը կարող էր օգտագործել հայկական արշավանքը իրականացնելու համար։

Ասիա նահանգ	2 լեզուն
Բութանիա	1 լեզուն
Լեռնային Կիլիկիա նահանգ	3 լեզուն
Պոնտոս	2 լեզուն
Հայաստան ներխուժելու համար	4 լեզուն

Լուկուլլոսի բանակի կազմում գտնվող լեզունների զինվորների թվաքանակը որոշելուց առաջ անբաղանանք հռոմեական լեզունի կազմակերպման և մարտավարության մի քանի հարցերին, առանց որոնց կղծվարանա հետագա շարադրությունը։

Եթե մենք հետևենք Հին աշխարհում հետևակային մարտավարության զարգացմանը, ապա կնկատենք, որ հևագույն ժամանակներում մարտից առաջ զինվորները ընդհանրապես չեն դասավորվում։ Երկու կողմի զինված ամբոխները նետվում էին իրար վրա, և հարցը լուծվում էր ամենափորձվածների, խիզախների և համառների օգտին։ Հին Արևելքի առաջին պետությունները, նաև մեծ ցեղային միությունների աշխարհազորը արդեն սկսում են մարտը ավելի կազմակերպված ձևով. դա

զորայուներն են և մարտական գծերը, որոնցից սկսվում է փաղանգի զաղափարը։ Մի քանի զորայունով հարձակվող հետևակը մոտենում էր հակառակորդին և զրոհում. հարվածից հետո, որպես օրենք, շարքերը կազմակուծվում էին։ Ասորեստանի և նրան զրեթե հավասար կազմակերպված Վասի թագավորության բանակները, հատկապես նրանց ընտիր արհեստավարժ գնդերը կովում էին մարտական գծերով՝ առաջին երկու - երեք շարքերում ունենալով վահանակիրներին, հետևից տեղադրվում էին մեկ - երկու շարք նետաձիգներ։ Առավելացույնը հինգ շարք ունեցող այս մարտագիծը պահանջում էր զգայի զինվորական վարպետություն։ Հետազայում Արևելքը հիմնականում գնաց հեծելազորի դերի բարձրացման ճանապարհով՝ միշտ գերազանց պահելով թերեւ հետևակի ընտիր մասը՝ նետաձիգների զնիերը։ Հունաստանը գերադասեց ծանր հետևակի հոսպիտալ հետևակը՝ հոսպիտալներին։ Սեեր այստեղ չենք քենարկում այս ընտրության տնտեսական, հասարակական կամ ազգային պատճառները։ Արևելքում ծանր հետևակի մարտը միշտ համակցվում էր թերեւ հետևակի, մարտակառքերի և հեծելազորի գործողությունների հետ։ Ասորեստանից և Բիայնիլիից հետո մենք որպական ծանր հետևակ չենք տեսնում։ Այլ էր Հունաստանում։ Հին ժամանակներից սկսած՝ հոսպիտը, ինչպես աշխարհի բոլոր հնագույն ժողովուրդները, կովում էին ամբոխներով, հետո զորայուններով, որտեղ, ինչպես ամենուրեք, առաջին շարքերում էին կովում ամենալավ սպառազինվածները և փորձառուները՝ ազնվականները՝ իրենց հետևից տանելով մնացած զինվորներին։ Հետազայում զորայունները սկսեցին լայնանալ, որ առաջին շարքում ունենան ավելի շատ զինվոր, և ուժեղանա ուզմական ճշշումը հակառակորդի վրա։ Առաջին փաղանգները կազմված էին պոլիսների բաղաքացիներից, որոնք ժամանակ առ ժամանակ էին միայն զորակոչվում պատերազմի, և բանակը կուսած էր միլիցիոն բնույթ։ Հետազայում մարտավարությունը իմաստ զարգացավ, համակցվեց թերեւազեն հետևակի և հեծելազորի գործողությունների հետ (որը հիմնականում պահպանում էր փաղանգի թերեւը ու հետապնդում պարտված թշնամուն)։ Կատարելիության հասավ հին Ապարտայում։ Հունական փաղանգը սակայն ուներ մի թերություն, որը հնարավոր չեղավ հալթահարել ոչ միջին հետևակի՝ պելտաստների զորատեսակի ներմուծումով, ոչ էլ փաղանգի զաղափարը

ծայրահեղությանը հասցնելով մակերռնական փաղանգում: Սակայն այս երկու ներմուծումը, նաև ծանր հեծելազորի դերի ակներև բարձրացումը ծննդին մի մարտավարության ոճ, որի փայլուն ներկայացուցիչներն էին Ալեքսանդր Մակերռնացին և նրա հետևողները: Ալեքսանդր Մակերռնացու ռազմարվեստի մեջ զագաթնակետին հասավ պատերազմի՝ արդեն հունամակերռնական ռազմավարությունը: Հետևակային մարտավարության իմաստով այն ծանր՝ մակերռնական փաղանգի, միջին՝ պելտաստների փաղանգների և թթևնազեն հետևական մարտ էր՝ ծանր և թթևն հեծելազորի գործուն մասնակցությամբ:

Մակերռնական փաղանգն ուներ երկու անհաղթահարելի արատ, որոնք էլ ստիպեցին վերջնականապես հրաժաշվել այս մարտառմից: Առաջինը. մարդկանց այսպիսի հսկայական զանգվածը խիստ պահանջկոտ էր տեղանքի նկատմամբ կտրտված տեղանքը մահացու վտանգավոր էր մակերռնական փաղանգի համար (այն անխուսափելիորեն խախտում էր իր շարքերը): Երկրորդը. պահեստազորի՝ ռեզերվի բացակայությունը. ամեն ինչ մարտի մեջ էր զցվում միանգամբ, և փաղանգը կամ հաղթում էր, կամ էլ խախտում իր շարքերը և ջախջախում: Հանդիպելով հոռմեական մասնատված մարտակարգով կովող լեզեռնի դեմ՝ մակերռնական փաղանգը, որպես օրենք, պարտվում էր: Կինոսկեֆալում և Պիդնայում մակերռնացիները պարտվեցին ոչ միայն ավելի վատ դեկավարության, այլ նաև հետևակի մարտավարության թերության հետևանքով: Սակայն, իր անկատարելիությամբ հանդերձ, մակերռնական փաղանգի գրոհը ահազդու էր, նա կարող էր սառսափեցնել նույնիսկ տուկուն հակառակորդին. հոռմեական զորավարները պատկերավոր ձևով պատմում էին այն սարսուի և դողի մասին, որը իրենց պատում էր, եթե իրենց վրա էր շարժվում հսկայական մարդկային զանգվածը: Մ.թ.ա. 148 թ. Պիդնայի ճակատամարտից հետո մակերռնական փաղանգը գործնականորեն, այլևս չէր օգտագործվում: Հոռմեական մանիպուլային մարտավարությունը համարվում էր լավագույնը:

Մ.թ.ա. 148 – 107 թթ. հոռմեացիները երահրեցին բազմաթիվ պատերազմներ և ենթարկվեցին տարբեր թշնամիների հարձակմանը: Այս ժամանակաշրջանը վերջնականապես բացահայտեց լեզեռնի թուլությունը, եթե նա բախվում էր մեծաքանակ

փորձած հետևակի կամ լավ կազմակերպված հեծելազորի հետ: Բանք նրանում էր, որ մանիպուլ շատ փոքր միավոր էր, որ դիմանար այդպիսի հարվածին: Ելքը գուակ Մարիուսը՝ արմատապես ձևափոխելով լեզեռնը: Այստեղ պահպանվեց միայն լեզեռնի հիմնական մարտավարական սկզբունքը՝ բաժանումը տասը մարտավարական ստորաբաժանումների՝ կոհորտների:

Մ.թ.ա. 107 թ.-ին սկսվում է Գայոս Մարիուսի հոչակավոր ռազմական ռեֆորմը: Հոռմեական բանակի հիմնական միավորը՝ լեզեռնը արմատապես կատարելազորձվում է: Այս նշանավորում էր հրաժարումով մանիպուլային մարտավարությունից և անցումով կոհորտային մարտավարությանը: Ռեֆորմը ընդգրկում էր կառուցվածքային, սպառազինության և մարտավարության ոլորտները: 105 թ. Մարիուսի ընկեր Պուբլիոս Ռուստիլիոս Ռուֆոսը կազմում է ռազմական ուսուցման նոր կանոնները և բանակը վերջնականապես անցնում է նոր համակարգի:

Լեզեռնի կազմը հաստատվում է. 6.000 ծանրազեն հետևակային՝ լեզեռներ, որոնք բաժանվում են 10 կոհորտի, ամեն մեկում 600 զինվոր: Վերանում է տարբերությունը լեզեռնի երեք մարտական գծերը կազմող հաստատների, պրինցիպների և տրիարիուսների միջև: Այսուհետ այդ բաժանման վերհուշը պահպանվում է միայն կենտուրիոնների ավագության աստիճանը ընդգծելով համար: Սպառազինությունը դառնում է միանման. մեծ զանանման արտափրկած ուղղանկյուն վահանով, պիլումով և սրով պարտադրաբար զինվոր են բոլոր լեզեռներները: Կարծ իսպանական սուրը մի փոքր երկարացվում է: Սաղավարտը, զրահը (կենտուրիոնների և հարուստ զինվորների մոտ հաճախ՝ օդազրահը), սոնապանները դառնում են պարտադիր: Ազգային հոռմեական նիզակը՝ պիլումը, շարունակում է մասը կարեռագոյն հոռմեական հարձակողական միջոցը: Այս ծանր նիզակը, որն ուներ մոտ մեկ մետր երկարությամբ երկարէ ծայր և 1,8 – 2,2 մ երկարություն, նետվում էր հակառակորդի վրա 20-25 մ հեռավորությունից և գրեթե միշտ ծակում էր դիմացինի վահանը կամ զրահը: Պիլումով խոցված վահանը այլևս օգտագործել չէր լինում, որովհետև պիլումը երկար ցցված ծանր երկարէ ծայրը հնարավոր չէր կտրել: Հոռմեացիների առաջին երկու շարքերը, մեծ վարպետությամբ նե-

տելով պիլումները, գրեթե միշտ կարողանում էին խախտել հակառակորդի շարքերը, որից հետո սրբով նետվում էին թշնամու վրա: Դիլումը թույլ էր տալիս հաջողությամբ մարտընչել նաև հեծելազորի դեմ. մենք ունենք բազմաթիվ նկարագրություններ, թե ինչպես լեզեններները գրոհում են հեծելազորի վրա: Հաճախ լեզեններները պահում էին կամ հավաքում էին քարերի որոշ պաշար՝ հակառակորդի վրա նետելու համար: Այսպիսով, լեզեններները կարող էին վարել և՛ սահմանափակ հեռահար մարտ պիլումով, և՛ քարերով՝ մինչև 25 մ, և՛ շատ լավ ձեռնամարտիկ էին: Լեզեններների անհատական բարձր զինվորական վարպետությանը գումարվում էր հոռմատական հետևակային մարտավարությունը, որը վերջին երկու հազար տարվա ամենահեղինակավոր զինվորական մասնագետների կողմից անվերապահորեն համարվում էր լավագույնը մինչհրագենային ժամանակաշրջանի համար:

Նոր լեզենի մեկ կոհորտում կար վեց կենտուրիա՝ հարյուրյակ, որոնց հրամանատարն էր կենտուրիոնը, ընդամենը կոհորտում՝ 600 զինվոր և 6 կենտուրիոն: Կոհորտի հրամանատարն էր տրիբունը կամ առաջին կենտուրիոնը: Լեզենում սովորաբար լինում էր տրիբունի վեց պաշտոն, որոշ հեղինակներ ավելացնում էին երանց թիվը մինչև տասը: Լեզենի երեք մարտական զծերը մնացին ուժի մեջ, սովորականում՝ առաջին մարտական գծում չորս կոհորտ, երկրորդում և երրորդում՝ երեքական: Հակառակորդի հետ անմիջական բախումից առաջ երկրորդ շարքի կոհորտները շարժվում էին առաջ և փակում առաջին գծի միջկոհորտային տարածությունը: Գոյանում էր ամուր և ճկուն մարտական զին: Փաղանցից նա տարբերվում էր նրանով, որ կազմված էր ինքնուրույն մարտական միավորներից, որոնց այնքան էլ հեշտ չէր ընկճել զանկացած հակառակորդի համար: Երրորդ գծի կոհորտները ևս կատարում էին տեղաշարժ: Եզրայինները՝ մինչև առաջին գծի եզրերը ձախ ու աջ համապատասխանաբար, և միջին կոհորտը՝ լեզենի երկրորդ գծում՝ դեպի կենտուրուն: Դրանով լեզենը ձեռք էր տերում անհրաժեշտ խորություն և ռեզերվ, որի միջոցով դիմակայում էր գրոհին կամ ինքն էր անցնում գրոհի: Լեզենի համար անսպասելի հարձակումները թերից և թիկունքից, ինչպես նաև կիսված փառակների համար, շատ վտանգավոր էին, սակայն


ոչ ճակատագրական: Լեզենի մարտական գծերը, դասավորումը երթի և մարտի ժամանակ ձեռք բերեցին այնպիսի բազմազնություն, որ կարողացան համապատասխանել իրական մարտի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ ձերթի բազմազնությանը: Ավելին, եթե հունական փաղանցի հարվածով իրականացվող զորավարի մոգակացումը այլս գրեթե հնարավոր չէր փոխել ապա լեզեննային մարտավարությունը թույլ էր տալիս մարտի ընթացքում փոխել նպատակների նախապատվությունները: Եթե սրան գումարենք հոռմետական բանակի գերազանց մարզվածությունը և կարգապահությունը, ապա հասկանալի են դառնում հոռմետական հայրանակների անվերջ շարանները:

Հին աշխարհը այս մարտավարությանը կարողացավ հակառակ միայն պարբևա-հայ-սարմատական ճոշավոր այրուձիու կատարելազործված մարտավարությունը, որը սկզբում որպես հավասարը հավասարի, իսկ հետո գերակա մարտավարություն, փոխեց հոռմետացիներին և արդեն մ.թ. III դարում մենք գործ ունենք հոռմետական կատաֆրակտուսների՝ կլիբանարների գնդերի հետ:

Անհրաժեշտության դեպքում լեզենը կարող էր շարվել երկու և մեկ գծով: Որպես առանձին միավոր՝ կոհորտը ավելի ինքնուրույն էր, քան նախկին մանիպուլը: Լեզենի կատարումը մարտում թերևացավ, և ավելի տուկուն դատավ մեծ մարդկային զանգվածների և հեծելազորի հարվածի հանդեպ [83, 84, 126, 137, 170, 199, 281, 283, 285]:

Եզրակացնենք. բազմաթիվ և ուժեղ հակառակորդի դեմ լեզենի շախմատած մարտակարգը վտանգավոր էր նրանով, որ թշնամին կարող էր ջարդել և հետ շարտել մասնատված առաջին զինը: Այդ դեպքում երկրորդ գծի կոհորտները մտնում էին առաջին զծի բացվածքները և ստեղծում փաղանց: Երրորդ գծի երեք կոհորտը ավելի էին մոտենում առաջին զինին և կազմում էին երկրորդ զծի պահեստազորը (ռեզերվը) կենտուրունում և թերին՝ անհրաժեշտության դեպքում հակառակորդի ձեղբանը դիմակայելու կամ գրոհի անցնելու համար: Լեզենի հրամանատար՝ լեզատը այսպիսով հետարավորություն էր ստանում իր զորամիավորման լավ կառավարելիության հաշվին եականորեն ազդել ճակատամարտի ելքի վրա:


Ստորև մենք դեռ մանրամասն կխոսենք ամենակատարյալ հեծելազորային՝ պարթևա-հայկական մարտավարության մասին, որի 87 - 66 թթ. անգերազանցելի վարպետներն էին հայկական այրուձիռն հեծելազորները։ Սակայն, 69-67 թթ. հայում էական պատերազմի ընթացքը հասկանալու համար անհրաժեշտ է մանրամասնազույն ձևով պատկերացնել հոռոմեական բանակի մարտական, արշավային և կենցաղային առօրյան։ Այլապես մեր պատերազմի ընթացքի վերականգնման սկզբունքները և մանրամասնությունները կդառնան անվերջանակի կիսազրագետ քննարկումների առարկա։



Նկար 4.1. Հոռոմեական դաշտային ճամբարի հատակագիծը

Լեզենին պարտադիր կցվում էր 300 հեծյալից բաղկացած ջոկատ՝ ալա (թև), որը բաժանվում էր 10 տուրմայի։ Լեզենին նաև պարտադիր կցվում էր սովորաբար իտալիկներից հավաքված, երկուսից ոչ պակաս թերևազենների օժանդակ կոհորտ, ընդունելի՝ 1.000 - 1.200 զինվոր։ Այդպիսով, օժանդակ զորամասերի հետ միասին, լեզենում կար մոտ 7.500 զինվոր։ Հաճախ առաջին կոհորտը լինում էր ավելի մեծ՝ ունենալով մինչև 800 զինվոր (այստեղից Մարիոսի ձևափոխված լեզենին

բանակի մեկ ուրիշ բիվը՝ 6.200 լեզեններ), երա պարտականությունների մեջ էր մտնում լեզենին հրամանատարի՝ լեզատի անվտանգությունը և շտաբի պահպանման որոշ ֆունկցիաները։



Նկար 4.2. Հոռոմեական լեզենի կոհորտային մարտակարգը

Լեզատի անմիջական թիկնապահական պարտականությունները սովորաբար կատարում էին օժանդակ զորամասի զինվորները, որովհետև համարվում էր, որ այդ պարտականությունները սովորացուցիչ են Հոռոմի քաղաքացու համար։

Այդ առենք հաշվի առնելով՝ կարող ենք լեզենի կազմը միշտն հաշվել մոտ 7.5-8.000 զինվոր (գումարելով լեզենի օժանդակ ծառայությունները, սակայն, օրինակ, կանոնավոր բժշկականը կլինի միայն մեր-երկու դար հետո)։

Սակայն այսքանն էլ բավարար չեղ։ Լեզենին կցվում էին դաշնակիցների ծանր հետևակի փաղանգներ, (հետազոյում՝ լեզենի կառուցվացքով՝ կոհորտներով), ինչպես օրենք, թվով ոչ պակաս, բան լեզեներները, կրկնակի, կամ եռակի քանակությամբ հեծելազորով և թերևազեններով, այսինքն՝ 6.000 հոպլիտ, 2.000 - 2.500 թերևազեն և 900 հեծելազոր, ընդամենը՝ 9.000 - 9.500 զինվոր։

Այս հավաքական կազմով լեզենում տեսականորեն կարող էր լինել մինչև 12.000 ծանրազեն հետևակ, 3.500 թերև հետևակ և 1.500 հեծելազոր, ընդամենը՝ 17.000 զինվոր։

Իրականում, այս հարաբերությունները երբեք չպահպանվեցին՝ խախտվելով դեպի նվազելու կողմը: Իրականում լեզենը կարելի էր հաշվել որպես բուն հռոմեական և դաշնակից գործերի մոտավորապես հետևակային 10-12.000 զորաբանակ, որից մոտավորապես 1-2.000 թեթևազեն՝ գումակած 500 - 1.500 հեծելազոր, ընդամենը՝ 10-14.000 զինվոր:

Ժամանակակից բանակում դաշնակիցներով ուժեղացված լեզենին համապատասխանում է դիվիզիան, որտեղ նույնապես ներկայացված են բոլոր զորատեսակները:

Մեռում է հիշեցնել, որ բուն հռոմեացիներից կամ իտալիկներից կազմված լեզեննի առավելագույն քանակը գրեթե երբեկ չէր անցնում 6.000 ծանրազեն հետևակայինից: Այս թիվը գործնականում նույնապես հազվատեղ էր պահպանվում: Բանք նրանում էր, որ հռոմեական զորավարները համեմատարար հազվադեպ էին համալրում արդեն գոյություն ունեցող զորամասերը կամ լեզենները՝ նախընտրելով կազմել նոր լեզեններ:

Սառայությունը լեզենում տևում էր 20 տարի, որից հետո վետերանը ապահովվում էր հողով և ապրելու այլ միջոցներով պետության հաշվին: Օժանդակ՝ թեթևազենների և հեծելազորի քանակը ևս կարող էր խիստ տարբերվել նկարագրվածից:



Նկար 4.3. Հռոմեական զենքի նմուշներ. նիզակ՝ պիլում, սուր և տեզեր

Փոքր Ասիայում սովորական հարաբերություններն էին՝ 6.000 լեզեններ, 1-2.000 թեթևազեն և 1.000 - 1.200 հեծյալ: Օժանդակ զորամասերով՝ մոտ 10.000 զինվոր:

70-69 թթ. գրեթե կորել էր տարբերությունը բուն հռոմեացիներից և լատինացիներից, կամ իտալիկներից հավաքված լեզենների մեջ: Հաճախ Իտալիայից Արևելք բերված «հռոմեական»

հեծելազորը իտալիկան էր կամ նույնիսկ կազմված էր Ցիւլյայան Գաղղիայի բնակչներից (որոնց շուտով շնորհել էին լատինական քաղաքացիության իրավունք):

Փոքր Ասիայում ավանդաբար հռոմեական դաշնակիցներն էին բուրանիացիք, զալատները, պափլագոնացիք, կապադովկիացիք և թրակիացիք:

Անիրաժեշտության դեպքում հռոմեացի զորավարները կարող էին հավաքագրվել վարձկան հովոյ զինվորներ նաև բուն Հռոմեատանից:

Լուկովոսը հայկական արշավանքի համար ընտրում է 4 լեզեն:

- իր Իտալիային 73 թ. հավաքագրածը, գումարած Բարբայի համալրումը. 1 լեզեն՝ 6.000 լեզեններ.
- Սուրենայի Ասիա նահանգի լեզեններից մեկը, 1 լեզեն՝ 6.000 լեզեններ (գումարած Բարբայի համալրումը).
- Ֆիմրիական առաջին լեզենը՝ 1 լեզեն՝ 4.000 լեզեններ.
- Ֆիմրիական երկրորդ լեզենը՝ 1 լեզեն՝ 4.000 լեզեններ: Ընդամենը՝ 4 լեզեն՝ 20.000 լեզեններով:

Իտալիայում 73 թ. հավաքագրած լեզենի լեզատն էր Սերստիլիոսը, մյուսը Սուրենայի լեզենն էր, ֆիմրիական լեզենների լեզատների անունը պատմիչներից ոչ մեկը չի նշում (այս լեզենները մինչև իրենց զորացրվելը Հռոմում համարվեցին «մարիական» և ըմբուտ):

Սուրենան՝ Լուկովոսից հետո Հայաստան արշավող բանակում ամենաբարձրաստիճան զորավարը, ըստ Երևանին, արշավի ժամանակ նաև Լուկովոսի տեղակալն էր:



Նկար 4.4. Հռոմեական զենքի նմուշները՝ կազմված լավագույն ծանր հետևական մեծ փորձ և ազգային պատմական ազգային լավագույն լեզեններից էին՝ աշխարհի լավագույն ծանր հետևակը:

Կատաղի մարտերում նոսրացած Սուրենայի և Սերստիլիոսի լեզենները որոշ շափով համալրվում են Բարբայի՝ Իտալիայից բերված զինվորներով: Անփոփոխ է թողնվում ըմբուտ, բայց արտակարգ մարտունակ ֆիմրիական լեզենների կազմը:

Սուրենայի և Սերստիլիոսի լեզեններում Միհրդատի դեմ

73 - 71 թթ. անցկացրած մարտերից հետո կար մոտ 5.000-ական լեգեոններ, որոնք, համարվելով Բարբայի բերած լեգեոններով, հասցել էին մինչև պահանջվող 6.000-ականը, երկու ֆիմբրիական լեգեոններում կազմը մնացել էր անփոփոխ՝ 4.000-ական: Ֆիմբրիական լեգեոնները ծանր մարտեր էին վարել 86-70 թթ. և անձնակազմի զգալի՝ մոտ 33-35% կորուստ ունեին:



Նկար 4.5.

Հռոմեական  
կենսուրին

Պլուտարքոսը նշում էր, որ Հայաստան արշավող հռոմեական զորքի թիվն էր 12.000 հետևակ և մոտ 3.000 ձիավոր: Փաստորեն, նա չէր նշում ֆիմբրիական լեգեոնները և 1.000 թերևագեններին, սակայն այս բոլոր զորքերի և դաշնակիցների մասին նաև հիշատակում է իր հետագա պատմվածքում:

Ապահանոսը նշում է երկու ընտիր լեգեոնն և 500 ձիավոր: Նա նշում էր Պլուտարքոսի նշած նոյն երկու՝ Սուրենայի և Սերսիլիոսի համարված լեգեոնները և այդ լեգեոններին կցված երկու ալա հեծելազորը: Այնա բաղկացած էր 300 ձիավորից, մենք այստեղ մեկ ալայում տեսնում ենք 250 հեծյալ, որը, հաշվի առնելով նախկին կորուստները, ընդունելի թիվ էր [170]:

Եվլորոպիոսը նշում է 18.000 զինվոր (milites) [29]: Սա շափազանց կարևոր հողորդում է, որի նշանակությունը, ըստ առժամկույնի, չի զնահատվել: 18.000 ոչ թե լեգեոններ, այլ՝ զինվոր: Եթե զրած լիներ լեգեոններ, ապա, առաջ ընկնելով իրադարձություններից, պետք է պատմեինք Լուկովոսի ապազան կորուստների մասին, որի պատճառով նա Տիգրանակերտի ճակատամարտից անմիջապես առաջ ուներ արդեն 18.000 լեգեոններ չորս լեգեոնում: Ասակայն Եվլորոպիոսը հստակ նշում է 'milites' զինվորներ, և մենք մեզ համար բացահայտում ենք Լուկովոսի ներխուժած բանակի և մի հույժ կարևոր ռազմավարական հնարքը: Լուկովոսի բանակը, ներխուժելով Հայաստան, շարժվում է դեպի Տիգրանակերտ երկու շարապյուններով՝ էշելոններով, առաջնում՝ Սերսիլիոսի և ֆիմբրիական լեգեոնները, բուն հռոմեական թերևագենները և հեծելազորը՝ ճիշտ 18.000 զինվոր: Հետևից, ապահովելով ներխուժող հիմնական

զորախմբի թիկունքը, շարժվում էր Սուրենայի լեգեոնը՝ 6.000 լեգեոններ, որը չի նշում Եվլորոպիոսը: Դաշնակիցների մասին Եվլորոպիոսը տեղեկություններ չի տալիս:

Փորձառու Լուկովոսը չէր կարող ապավինել իր թիկունքի հուսալիությանը միայն ծովոքեցիների բարի դրացիության մասին հայտարարությունների հիման վրա: Իր թիկունքը, կապը Կապատովկիայի հետ և ծովոքեցիների չեզորությունը ծավալվող պայքարում, որպես ներխուժող բանակի երկրորդ էշելոն, արշավի սկզբնական շրջանում ապահովում էր մեկ լեգեոն, ըստ երևույթին՝ Սուրենայի լեգեոնը:

Ըստամենք 4 լեգեոնում կար 20.000 լեգեոններ, 1.000 թերևագեն և 3.000 հեծյալ որից միայն 500 բուն հռոմեացի (ոչ խոալիկներ): Հռոմեացիների թիվը կազմում էր 24.000 զինվոր: Ըստ հռոմեական ավանդույթի, այս բանակը պետք է համարվեր նվազագույնը հետևյալ դաշնակիցներով՝ 20.000 ծանրագեն հետևակ, 2-3.000 թերևագեն և 6-9.000 հեծելազոր, ընդամենը՝ 28-32.000 զինվոր: Եթե համեմատաբար հեշտ հավաքագրվող թերև հետևակի բանակը մենք դաշնակիցների մոտ եռապատկում ենք, ապա հեծելազորի հավաքագրումը անհամեմատ պետի ծանր խնդիր էր (մենք տեսնում ենք՝ ինչ դժվարություններ ունեք Լուկովոսը մարտունակ պունտական հեծելազորին դիմակայելու գործում), որը հաշվի առնելով, հռոմեացիների դաշնակիցների հեծելազորի բանակը համարում ենք կրկնապատիկ՝ մոտ 6.000 հեծյալ: Ավելի թիշ բանակը անհասկանալի է. Լուկովոսը զինվոր էր մարտնչելու պարթևական հեծելազորին պարտության մատնած բանակի դեմ 3.000 հեծելազոր՝ ով: 69-67 թթ. պատերազմի ընթացքի նկարագրությունը վկայում է մեծաքանակ և մարտունակ հռոմեական հեծելազորի առկայության մասին:

Ծրագրելով գրոհով վերցնել Տիգրանակերտը՝ Լուկովոսը պետք է մտածեր նաև սակրավորների և պաշարողական որոշ ստորաբաժնումների մասին, բանակը սպասարկելու համար ևս պետք է որոշ անձնակազմ, 50.000-ոց բանակի համար ոչ պակաս, բան գումակի 2.000 զինվոր: Դրանով հռոմեական բանակի բանակը հասնում է մոտավորապես 55.000 զինվորի: Այդպիսով, մենք հաշվարկեցինք

Հայաստան ներխուժած բանակի մոտավոր թքարանակը: Կար ող էր Լուկովլոսը ավելի մեծ բանակ հավաքել: Անշուշտ, իրեն ենթակա երկրամասերի մարդկային և նյութական ռեսուրսները դա թույլ էին տալիս:

Ի հաշիվ իր փոքրասիական դաշնակիցների, Լուկովլոսը կարող էր



Նկար 4.6. Հռոմեացի հեծյալ

շարժվել Հայաստան ավելի մեծ, ասենք 75.000 բանակով:

Այժմ պարզենք, որը կարող էր լինել արշավի մասնակիցների նվազագույն թիվը: Եթե Լուկովլոսի բուն հռոմեական բանակում կար 24.000 զինվոր, ապա հենց անտիկ հեղինակների կողմից նշված դաշնակիցների հետևակը և հեծելազորը առնվազն պետք է կազմեին գոնե 6.000 զինվոր: Այդ դեպքում ընդունում ենք, որ Լուկովլոսի 3.000 հեծելազորից միայն 500 էին հռոմեական, մնացածը դաշնակիցներ էին: Այդ դեպքում, Լուկովլոսի ներխուժման բանակի թիվը կազմում էր մոտ 30.000 զինվոր:

Այսպիսով, նվազագույնը՝ 30.000, միջինը՝ 55.000, առավելագույնը՝ 75.000 զինվոր: Մենք կարծում ենք, որ ամենաընդունելի թիվը միջինն է, հռոմեական Արևելքը կարող էր ապահովել իր ներխուժման բանակի այս թվաքանակը:

Եթե Լուկովլոսը արշավեր 30.000 բանակով, ապա առաջին իսկ անհաջողությունը կարող էր վերջանալ կործանումով կամ մեծ անախորժություններով: Բնակ 75.000 բանակ հավաքելը զգալիորեն ավելի դժվար խնդիր էր, քան 55.000-ոցը: Բացի դրանից, բանակի հռոմեական կորիզը նուրանում էր այնպես, որ բանակը սկսում էր կորցնել իր հռոմեական նկարագիրը:

Այսպիսով, մենք ընդունում ենք, որ Լուկովլոսի՝ 69 թ. գարնանը Հայաստան ներխուժած բանակի բանակը 55.000 զինվոր էր, որից կեսից մի փոքր պակաս՝ 24.000 հռոմեացի էին: Այս արշավը Լուկովլոսը անցկացնում էր մի բանակով, որը կազմում էր Արևելքում հռոմեական և դաշնակիցների ուժերի մոտ մեկ քառորդը և խիստ չեր լարում հռոմեական ռազմական մերձական Արևելքում:

Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցած հռոմեա-

կան զորքի թվի մասին անտիկ հեղինակների հաղորդած տվյալները հաստատում են Լուկովլոսի բանակի զորատեսակների բանակի՝ մեր կատարած վերականգնումը՝ ուկնասորուկցիան: Տիգրանակերտի ճակատամարտի մանրամասն վերլուծության ժամանակ մենք դեռ կտեսնենք՝ որքան ներդաշնակ են այս հաղորդումները, որի պատճառով ենթադրում ենք այս ճակատամարտի մասին պատմող միայն մեկ սկզբաղյուրի առկայությունը:

55.000 թիվը ստացվում է հաշվումներով և ինչ-որ տրամարանություն ունի: Բացի այդ, մենք ունենք մեկ ուրիշ՝ սուբյեկտիվ հիմնավորում: Պատերազմը Միհրդատի հետ ցույց տվեց, որ բանակի որակը նախընտրելի է բանակից, և Լուկովլոսը մեծ ջանքեր պետք է գործածած լիներ այդ որակը ապահովելու համար: Պատերազմը ցույց տվեց, որ Հայաստան ներխուժած Լուկովլոսի բանակի որակը գերազանց էր:

Ինչից է, 69 թ. գարնանը էվետոսում պատրաստ կանգնած էր տագմանակն մեծ փորձ ունեցող կարգապահ, լավ հանգստացած Լուկովլոսի կողմից ընտրված հռոմեական բանակը: Բանակը գրեթե չուներ գումակ: Լուկովլոսը հրամայել էր Կասպառվկիայի թագավոր Արիորարգանեսին զադունք նախապատրաստել պարեն և լաստե՛ր՝ Եփրատը արագ անցնելու համար:

Այսպիսով, Լուկովլոսը 69 թ. դուրս եկավ արշավանքի՝ ունենալով՝

- 40.000 ծանր հետևակ, որից 20.000 հռոմեական,
  - 4.000 քերև հետևակ, որից 1.000 իտալիկյան,
  - 9.000 հեծելազոր, որից 3.000 իտալիկյան,
- նետարյալ 500 բուն հռոմեական և
- 2.000 գումակ և պաշարողական զորամասեր:

Մենք գիտենք, որ արշավին մասնակցել էին դաշնակիցներ՝ թրակիացիները, գալատացիները և բութանիացիները: Ենթադրվում է, որ կարող է մասնակցած լինեն նաև ինչ-որ բանակով կապահպանվկիացիներ:

Այժմ ընենք Լուկովլոսի բանակի կառուցվածքը ըստ զորատեսակների ու դաշնակիցների կարելի է հստակեցնել ի շնորհիվ մ.թ.ա. I դ.

Լուկովլոսի բանակի կառուցվածքը ըստ զորատեսակների ու դաշնակիցների կարելի է հստակեցնել ի շնորհիվ մ.թ.ա. I դ.

առաջին կեսի հոումեական բանակի լավ ուսումնասիրվածության: Վերջին երեք դարերի ընթացքում այդ թեմայով անցկացվել են բազմաթիվ հետողություններ և գրվել են ստվարաձավակ հազարավոր աշխատություններ: Ժամանակաշրջանի մեր իմացությունը տարածվում էր ոչ միայն բանակի կառուցվածքի, այլ նաև մարտավարական տիպային՝ ստանդարտ հնարքների վրա, որոնք կիրառվում էին հոումեական բանակում: Այս ամենը թույլ է տալիս անտիկ սուտ տվյալների հիման վրա (Պլուտարքոսի հայտնած տեղեկությունների առատությունը երբեմ մեզ օգնական չէ, որովհետև հեղինակը լավ չգիտ ուազմական գործը) վերականգնել Լուկուլլոսի բանակի մոտավոր պատկերը:

**Գծանկար 4.6.-ում ներկայացված են հոումեական 4 լեզենք, 2 կրիորտ թերևազենները և 12 ալա հոումեա-իտալիկյան հեծելազորը: Փորձ է կատարված պարզել՝ ի՞նչ մոտավոր կազմ կարող էին ունենալ հոումեական դաշնակիցների ուժերը: Այստեղ մենք շատ տեղեկություններ չունենք, սակայն դաշնակիցների գորամիրավորումները հոումեական լեզենին կցելու ավանդական ձևերը շատ կայուն էին և տրամաբանական: Մենք ևս կհետևնեք այդ տրամաբանությանը.**

- զայատացիները՝ կելտերը, արդեն երեք դար Փոքր Ասիայում ունեին լավ պատերազմողների համբավ: Գրեթե բոլոր պատերազմների ժամանակ այս կամ այն կողմը նրանց ներգրավում էր կամ որպես դաշնակից, կամ վարձկան: Երկու պարտականությունն էլ զայատները կատարում էին հաճույրվ՝ ակնկալելով պատերազմում հարուստ ռազմավար: Լուկուլլոսը կարող էր հավաքագրել զայատական հեծելազոր և ծանր հետևակ: Մեծ վահաններով և երկար սրերով զինված զայատական ծանրազեն հետևակը բազում ճակատամարտերում նպաստել էր հայթանակին հասնելուն և շատ բարձր համբավ ուներ, ուստի Լուկուլլոսը, ըստ երևոյթին, Սուլթենայի և Սերսուլիոսի լեզենները համարել էր զայատական դաշնակցային հետևակով՝ ամեն մի լեզենին կցելով 5.000 զայատացի ծանրազեն հետևակային, ընդամենը՝ 10.000 հետևազոր: Մրան անհրաժեշտ է ավելացնել ոչ պակաս, քան 10 ալա՝ 3.000 զայատական հեծելազոր, որից հետո զայատական դաշնակցային գորքերի բանակը հասնում էր 13.000 զինվորի:

- բութանիացիները 88 – 84 թթ. ունեին 6.000 հեծելազորից և 50.000 հետևակից բանակ, ընդ որում հետևակի ճնշող մեծամասնությունը ծանրազեններ էին: Բութանիայան բանակի այս մասը տեղական կառավարությունը ավելի դյուրին կարող էր տրամադրել իր դաշնակցին: Բութանիացիները, ինչպես նաև զայատացիները և թրակիացիները բազմից մասնակցել էին հոումեացիների հրահրած պատերազմներին: Ենթադրում եմ, որ Լուկուլլոսի բանակի կազմում եղել էր ոչ պակաս, քան 10.000 բութանիացի ծանրազեն հետևակային, որոնք բաշխված էին երկու ֆիմբրիական լեզենների միջև: Լուկուլլոսը այս, որակով զայատացիներին զիշող, հետևակը, ըստ երևոյթին, տրամադրել էր ֆիմբրիայի արտակարգ մարտունակ լեզեններին, որոնց հարեւանությունը, անկասկած, կրարձրացներ բութանիացիների մարտական ոգին:

- թրակիացիները ներկայացված էին հեծելազորով՝ ոչ պակաս, քան 3.000 հեծյալ և հետևակով: Թրակիացիները այս ժամանակաշրջանում հայտնի էին որպես լավ ծանրազեն, բայց, հատկապես, որպես շատ լավ թերևազեն հետևակայիններ: Ըստ երևոյթին, թրակիավիններից էր կազմված դաշնակիցների թերեւ հետևակը՝ 6 կոհորտ՝ 3.000 զինվոր: Այդպիսով, դաշնակից թրակիացիների հնարավոր թիվը կարող էր հասնել 6.000 զինվորի:

Ցանկացած բանակը չի կարող գոյատևել առանձ գումակի: Եթե մենք ընդունենք նվազագույն թիվը, ապա ամեն մի լեզեն պետք է ունենար իր գումակը. մեկ օժանդակ կոհորտի 500 զինվորին բազմապատկերով լեզենների բանակին, ստանում ենք նվազագույն 2.000 զինվորների թիվը Լուկուլլոսի բանակի գումակում: Իրականում այդ թիվը կարող էր շատ ավելի մեծ լինել, սակայն դա եւկան չէ և ոչ մի բան չի փոխի մեր հետազա վերլուծությունների արյունքների մեջ:

Գումարելով բոլոր դաշնակիցների գորամիրավորումների թիվը՝ ստանում ենք 31.000 զինվոր: Այս հավանական թիվը գումարելով բութ հոումեական բանակի թվին՝ ստանում ենք Հայաստան ներխուժած բանակի մեր ընդունած թվաքանակը՝ 55.000 զինվոր:

Այժմ պարզենք Լուկուլլոսի բանակի կառուցվածքը ըստ գորամիրավորումների: **Գծանկար 4.7. ներկայացված են Լուկու-**

լուի բանակի հիմնական 4 գորամիավորումը՝ Սուրենայի, Մեքստիլիոսի, առաջին և երկրորդ ֆիմբրիական լեզեռնները՝ իրենց կցված դաշնակցային ծանր ու թեթև հետևակով և հեծելազորով։ Եթե մեկ ալա հեծելազորը պարտադրորեն մնում էր լեզեռի հրամանատարի՝ լեզատի հրամանատարության տակ հետախուզության և պարենակային ծառայությունների համար, ապա մնացած հեծելազորը կարող էր դուրս բերվել լեզատների հրամանատարությունից և չորս գնդրով ենթարկվել Լուկովլոսի հեծելազորի հրամանատարին։


Գումակի մեկ կոհորտը ևս կարող էր ժամանակավորապես հանվել լեզատի հրամանատարությունից և ենթարկվել գումակի հրամանատարին որպես պարենակորման, բժշկական ծառայության և այլ օժանդակ խնդիրներ իրագործող բարձրագույն ռազմատնտեսական ղեկավարին։

Այրահանվ, հեծելազորը և գումակը չնայած բաշխված էին չորս լեզեռնային միավորումներում, սակայն, անհրաժեշտության դեպքում, կարող էին միավորվել հեծելազորի և գումակի պետքի հրամանատարության տակ։

Մենք կարող ենք ասել, որ Լուկովլոսի բանակը բաղկացած էր 4 գորամիավորումից, որոնցում կային 120 ստորաբանումներ՝ 80 ծանրազեն հետևակի կոհորտ, որից 40 հոռմեական, 8 կոհորտ թեթևազեն հետևակ, որից 2 «հռոմեական», 32 ալա հեծելազոր, որից 12 «հռոմեական», որից 2 արդեն բուն հոռմեական։


Լուկովլոսի ռազմական խորհրդի պարտադիր անդամներն էին՝ լեզեռնների չորսը լեզատները, հեծելազորի և գումակի հրամանատարները։

Այսպիսով, Լուկովլոսի բանակի ռասումասիրությունը ցույց է տալիս, որ այն ներկայացնում էր իր ժամանակաշրջանի լավագույն հոռմեական բանակներից մեկը, ուներ կուռ կառուցվածք և հստակ ու փորձառու հրամանատարություն։




Գծանկար 4.7. Հռոմեական բանակի հնարավոր կառուցվածքը ըստ գորամասակների և դաշնակիցների։

Գծանկար 4.8. Հոռմեական բանակի հնարավոր կառուցվածքը ըստ գորամիավորումների:



Գծանկար 4.9. Հոռմեական բանակի արշավակարգի երկու տարբերակից առաջինը՝ ապակենտրոնացած հեծելազորով:



Գծանկար 4.10. Հոռոմեական բանակի արշավակարգի երկու տարբերակից երկրորդը՝ կենտրոնացած հեծելազորով:

Հոռոմեական բանակի արշավակարգի մանրամասնությունները նկարագրելուց առաջ պարզէնք մեր չափի միավորները [201, 256]: Այս գործողության անհրաժեշտությունը կապված է չին աշխարհի ճանապարհային չափերի տարբերությունների ազդեցությունը վերացնելու հետ: Այսուհետ, մենք համարում ենք, որ:

ստադիումը հավասար է՝ 185 մ.

ասպարեզը հավասար է՝ 230 մ.

հոռոմեական մղոնը հավասար է՝ 1.500մ (Ժիշտը՝ 1.475 մ).

փարսախը՝ 5.250 մ.

Այս դեպքում մեկ փարսախը հավասար է 3,5 հոռոմեական մղոնի:

Մանրամասնագույն ձևով մշակված էր նաև հոռոմեական բանակի արշավականների կազմակերպումը: Մարդկանց հսկայական զանգվածները կազմակերպված տեղափոխվում էին հազարավոր մղոն հեռավորությունների:

Ներկայացնում ենք հոռոմեական բանակի արշավակարգի երկու տարբերակ՝ առաջինը ապակենտրոնացած, երկրորդը՝ կենտրոնացած հեծելազորով (Գծանկար 4.9. և 4.10.): Այս արշավակարգը կիրառվում էր ռազմական գործողությունների գոտում: Հռոմի ենթակա տարածքներում շարժվելիս գումակը, սովորաբար, տեղադրվում էր շարասյունների վերջում:

55.000 բանակի արշավային շարասյունները երկարում էին ավելի քան 20 հոռոմեական մղոն (մոտավորապես 30 կմ): Հետախուզությունը կատարվում էր ոչ պակաս, քան 20 մղոն խորությամբ (հեռավորության վրա): Հատկապես ուշադիր էին անցնում հոռոմեացիները նեղ կիրճերով և այլ դժվարամատչելի տեղերով՝ ձգուելով հնարավորինս ապահովել բանակի անվտանգությունը երթի ժամանակ:

Գիշերը պարտադիր կառուցվում էր ժամանակավոր դաշտային ճամբար: Այս գործը հոռոմեացիները կատարում էին այնքան արագ և կատարյալ, որ մինչև այժմ հիացնում են արդի գիտնականներին և գիտավորականներին:

Ուզ արևմտյան Եվրոպայում պեղված են բացմարիկ այդպիսի ճամբարների մնացորդներ, որոնք լավ պատկերացում են տալիս հոռոմեական գիտավորական կենցաղի մասին: Միջին տա-

բածությունը ճամբարների միջև մոտ 22 կմ է, որը կարելի է ընդունել որպես սովորական երթով անցնելու օրական միջին հեռավորությունը: Արագացքած երթով հոոմեացիները կարող են անցնել մեկ և կես անգամ ավելի շատ տարածություն:

Այս բանակով Լուկուլոսը 69 թ. գարնանը սրբնիքաց արշավով անցավ Կապադովկիան, հայկական սահմանամերձ Տոմիսա ամրոցից ոչ այնքան հեռու անցավ վարարած Եփրատը և հայուղեց Հայաստանում՝ Ծոփում:

Հայ- հոոմեացիան պատերազմը սկսվեց:

#### 4.2. Լուկուլոսի ուազմավարական ծրագրերը

Լուկուլոսը դեռ 71 թ. աշնանից մշակում էր Տիգրանի դեմ մեծ պատերազմի ծրագիրը: Նա բխում էր Պոնտոսամ Սիրիդատի դեմ հաջողված պատերազմի զարգացնելու տրամաբանությունից. ախտանին տապալելուց հետո Լուկուլոսի ուշադրությունը գրավելու էր պայքարը Սիրիդատի դաշնակցի դեմ: Այսպես իր բոլոր նվաճումները Տիգրանի մեկ հարվածով կարող էին անհետանալ:

Եթե Ապիոս Վլոդիոսը որպես դեսպան մեկնել էր Անտիոքոս՝ Տիգրանի հետ Սիրիդատի ճակատազրի մասին բանակցելու համար, Լուկուլոսի բանակատեղիում պատերազմի ծրագրի վերջին թերություններին էին շտկում: Այդ պատճառով, սպասելով Տիգրանի Անտիոքոս ժամանելուն, Վլոդիոսը ավելի շատ գրավված էր ոչ թե դիվանագիտական, որքան հետախուզական և պառակտիչ գործունեությամբ: Զարիենուսի ապստամբությունը, Կոմմագենեի պատերազմին շմասնակցելը, Սելիվիա Դիերիա քաղաքի համայնքի անհնազանդությունը, երբեմն սկսում են նույնիսկ մտածել, որ կարող է նաև Զարեկի ապստամբության խրախուսումը՝ բոլորի մեջ նվաճումը է հոոմեական հետախուզության և դիվանագիտության ձեռքը:

Պատերազմի սկիզբը և հետագա ընթացքը մեզ թույլ են տալիս պատկերացում կազմել Լուկուլոսի ծրագրերի մասին:

Լուկուլոսը մեծ գրավարի խորաքափանցությամբ ճիշտ էր ընտրել հարձակման տեղը և ժամանակը: Նա տեսնում էր, որ Կապադովկիայից ամենակարծ ճանապարհն է դեպի Երկրի

երեք սրտերից կենտրոնականը՝ Տիգրանակերտը: Անսպասելի սրբնիքաց երթով կտրել անցնել Կապադովկիան, Ծոփիքի վրայով Միսրամիլե հայկական տերության սիրտը՝ Աղձնիքը և զրավել Տիգրանակերտը, որի անառիկ պարհսպները թուլացած էին քաղաքի ներտում ապրող մեծաքանակ բռնաբնակեցված այլազգիներով: Հետո սրբնիքաց երթ դեպի Անտիոք, որը ուղիղ կիաներ Տիգրանի դեմ նրա սիրիական հակառակորդներին: Եթե նույնիսկ չհաջողվեր վերցնել Տիգրանակերտը, ապա Եղեսիա – Անտիոք հարվածը կարող էր քայրայել Տիգրանի կայսրությունը և հաղթանակ բերել:

Այդպիսով, մեկ սրբնիքաց հարվածով Լուկուլոսը ծրագրում էր քայրայել և խիստ թուլացնել Հայկական կայսրությունը:

Հետազայում, եթե Տիգրանակերտի ճակատամարտում տարած հալթանակի և Տիգրանակերտի գրավման քաղաքական արդյունքները խիստ գերազանցեցին ուազմականին, Լուկուլոսը կորրեկցիայի ենթարկեց իր ծրագրերը:

69 թ. աշուն-ձմռանը և 68 թ. ձմռանը-գարնանը հայերը դուրս բերեցին իրենց գորքերի մեծ մասը Սիրիայից և Աղյաբենեից, Օսրոենեից, Կոմմագենեից և Դաշտային Կիլիկիայից: Տեղի բնակչության վերաբերմունքի փոփոխությունը և, ամենակարևորը, հայենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը գերակա էին: Հայաստանի հպատակներից հավատարիմ էին մնացել միայն Վիրքն ու Աղվանքը և, ամենակարևորը՝ Ատրք-պատականը:

Լուկուլոսի ծրագրերը փոխվեցին, Սիրիա մտնելու անհապաղ կարիքը այլևս չկար, և նա որոշեց արշավել Արտաշատի վրա և ընդհանրապես կործանել հայկական թագավորությունը: Լուկուլոսին թվաց, թև Տիգրանակերտի տակ հասցված երկու վերքերը՝ պարտությունը ճակատամարտում և մայրաքաղաքի գրավումը մահացու են, և Տիգրանն այլևս անզոր է իրեն դիմակայել:

Համաշխարհային պատմությունը գիտի այսպիսի բազմաթիվ դեպքեր, եթե նույնիսկ ամենախելոր և զուսպ քաղաքական կամ ուազմական գործիչը հոգեբանութեն չի դիմանում իր հաջողությանը: Այսպես էլ կատարվեց Լուկուլոսի հետ: Տիգրանակերտի հաջողություններից հետո իրեն դավաճանեց սրաի մտածողությունը և նա չտվեց հայկական տերության պահպանված ուազմական հնարավորությունների իրական գևահա-

տականը: Միայն Հայաստանը և Ատրպատականը կազմում էին հայկական ռազմական հզորության ավելի քան կեսը: Տիգրանակերտի ճակատամարտում հայկական բանակը ցրված էր, բայց ոչ ոչեցած: Հայկական տերության հարավային երկրամասերը լրած հայկական զորաբանակները իրենցից ներկայացնում էին մարտական փորձ ունեցող կանոնավոր բանակի խոշոր միավորումներ, որոնք ընդունակ էին լուրջ հարվածներ հասցնել թշնամուն:

Եթե Լուկովոսը հարվածը ուղղեր հարավ, ապա, ըստ երեվությին, ինքը, այլ ոչ թե Պոմպեոսը, կգրավէր Տիգրանից այդ երկրամասերը և Տիգրանի հետ կվերեր խաղաղության պայմանագիրը:

Սակայն պատմության ընթացքը ուրիշ էր, Լուկովոսը գերազնահատեց իր ուժերը, սիսալ հաշվարկեց իր հնարավորությունները, ցանկացավ անհասանելին և պարտվեց: Հայկական կայսրությանը հնարավոր չէր ընկեր մեկ հարվածով:

Այդպիսով, զննահատված հերոսի՝ Լուկովոսի հետագա նեղացած կեցվածքը և նախանձը Պոմպեոսի հաջողությունների հանդեպ բացարձակ անտեղի էին:

#### 4.3.Հայկական բանակի ուժերը և նրանց նեղակայումը կայսրությունում 69 թ.

##### 4.3.1.Հայ-հռոմեական պատերազմին անմիջապես նախորդող իրադարձությունների ժամանակագրությունը.

Հիշենք հայ-հռոմեական պատերազմին անմիջապես նախորդող իրադարձությունների ժամանակագրությունը.

74 թ. - Սահանում է Բութանիայի Նիկոմեդես թագավորը, որը իր թագավորությունը ժառանգում է Հռոմին: Բութանիայի անցնելը հռոմեացիների ձեռքը նշանակում է Հելլենապոնտի նեղուցների վերահսկում, այսինքն պոնտական առևտուրի վերահսկում և խափանում՝ Պոնտոսի տնտեսության քայլայում: Միհրդատը դա չէր կարող հանդուրժել: Հռոմը և Պոնտոսը պատրաստում են պատերազմ:

տերազմի:

- Տարեկերջին հռոմեական ծերակույտը Անտիոքոսին՝ մահացած Անտիոքոս Բարեպաշտի և Կիեոպատրա-Սելենեի որդուն, ջնորհում է Հռոմի «բարեկասի և դաշնակցի» կարգավիճակ, մեկ անգամ ևս հաստատում է, որ նրանց է ճանաչում որպես Միհրայի Սելենյան թագավոր, որից թագավորությունը «անօրենաբար» զավթել է հայոց արքան, և իր եղբայր Սելենկոսի հետ ուղարկում է Միհրայի հարավ՝ Փյունիկիա: Նախազգուշության նպատակով եղբայրներին ուղարկում են առանձին:

- Անտիոքոսը նախընտրում է Միհրիայի վրայով անցնող ճանապարհը և Միհրակուզում հյուրընկալվում է կղզու կուսակալ Ընշաքաղծ Գայոս Վեռեսի մոտ: Անտիոքոսի թանկարժեք մեծ աշտանակը յուրացնելուց հետո Վեռեսը սկսում է հորդորել նրան՝ շտապ հետանալ կղզուց, քանի որ, իբր, լուր է ստացել, որ Միհրայից Միհրիան են գալիս ծովահենները: Անգամ եթե Վեռեսը հնարել էր այդ քանը, Անտիոքոսը տագնապում է: Հավանականությունը, որ Տիգրանը իրեն քոնելու համար նման կարգավորություն կարող էր անել կիլիկյան ծովահեններին, շատ մեծ էր:

73 թ. - Սկսվում է հռոմեա-պոնտական երրորդ պատերազմը: - Միհրայի հարավում և Փյունիկիայում հայտնված Կիեոպատրա-Սելենեն և իր որդի Անտիոքոսը զաղտնի սկսում են պատրաստել հակահայկական ապստամբություն:

72 թ. - Միհրայի հարավային որոշ շրջաններում Անտիոքոսին հրչակում են Անտիոքոս XIII թագավոր, «հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակց»: Զգայի ուժի վերածված Սելենյաների պայքարը դեկավարում է Կիեոպատրա-Սելենեն: Նրանց եղույթը սկսվեց Փյունիկիայում, որտեղից նրանք փորձեցին շարժվել դեպի հարավային Միհրա:

- Հռոմեացիները կարողանում են Տիգրանի դեմ հանել նաև Հռոմայի և Նարաթեական թագավորությունները: Այս երեք ուժը ստեղծում են հակահայկական ռազմական միություն:

- Միության ուժը նշանակալից էր: Միայն Նաբաթեայի Հարիթաք քաջավորը ուներ 40.000 հետևակ և 10.000 ընտիր հեծյալ, ուղտերի վրա նստած ջոկատներ: Նրան էր պատկանում Դամասկոսը: Կոալիցիայի ընդհանուր ուժերը հասնում էին 100.000 զինվորի [34]:
  - Տիգրանը հզոր հարված է հասցնում Կելեսիրիայում Նաբաթեացիներին և պարտության մատնում Նրանց վճռական ճակատամարտում, ապա գրավում Դամասկոսը: Հրեական բանակը, որը շտապում էր միանալ նաբաթեացիներին, հետ է վերադառնում:
  - Տարեկերջին Հայաստանում Տիգրանի դեմ ապստամբում է ավազանու մի մասը, որին առաջնորդում էր նրա որդի Զարեկը:
- 71 թ.
- Հունվար-փետրվար ամիսների ընթացքում Տիգրանը հարավային Խոտախյում արգելափակված Սպարտակին օգնելու համար Կիլիկիայի ծովահենների միջոցով ուղարկում է նետաձիգների ընտիր հեծելագունդ, որի շնորհիվ Սպարտակի բանակը դրւում է պրծնում ծուղակից:
  - Տարեկազրին Տիգրանը Հայաստանում տեղի ունեցած ճակատամարտում ջախջախում է խոռվարարներին: Զարեկը կործանվում է:
  - Ամունը Տիգրանը վերսկսում է գրոհը ապստամբ փյունիկյան ծովափնյա քաղաքների դեմ:
  - Ամունը Լուկովլոսից պարտված Միհրդատին իր 2.000 թիկնազորով տեղավորում է Մեծ Հայրի Փոքր Հայրին սահմանամերձ ամրոցներից մեկում:
  - Աշնանը հանդիպում է Անտիոքում Հռոմի դեսպան Ապիոս Վլավիլոսի հետ և հրաժարվում է Հռոմին հանձնել Միհրդատ Եվպատորին:
  - Կորդուքի քաջավոր Զարբինոսին, որը հռոմեացի դեսպանի հրահրումով ապստամբել էր իր դեմ և փակվել իր քառապարհապ մայրաքաղաք Փինակայում, մահապատժի է դատապարտում քաղաքը վճռական գրոհով գրավելուց հետո:
  - Գարնանը ուժեղացնում է ճնշումը պաշարված փյունիկյան քաղաքների վրա և մեկը մյուսի հետևից գրոհով գրավում է:
- 70 թ.

- Vis major (գերազանցող ուժ) - Հյուսիսային Միհրիայի ծովափնյա շրջաններում տեղի է ունենում վիթխարի ուժի երկրաշարժ, ցնցումները ուղեկցվում են ափերից դրւու եկած կոհակներով: Չոհվում է ավելի քան 170.000 մարդ:

- Տարեկերջին Տիգրանին անհնազանդություն է հայտնում ծովափնյա խոշոր Սելևկիա Պիերիա քաղաքը և Ճանաչում Անտոռոս XIII-ին: Տիգրանը որոշում է այս քաղաքով զրադվել Փյունիկիայից հետո:

69 թ.

- Գարնանը հայկական բանակը գրավում է Փյունիկիայի վերջին ապստամբ քաղաքը՝ Պողոմայիսը, որտեղ ապաստանել էր Կիեռպատրա-Սելևկնեն: Հռոմեացիների դրդած հարավսիրիական ապստամբությունը վերջնականապես ճնշվում է: Կիեռպատրա-Սելևկնեին բերում են եփրատամերձ Սելևկիա ամրոցը և մահապատժի ենթարկում: Անտիոքոս XIII-ին հաջողվում է այս անզամ էլ ճողովրել Տիգրանի ձեռքից և քարնվել Հռոմեական Կիլիկիայի խոլ ծովափնյա անկյունում:

- Տիգրան Մեծը իր մոտ է կանչում Միհրդատին, որի հետ երեք օր բանակցելուց հետո, հռոմեացիների դեմ ենելու հրաման է արձակում: Միհրդատին տրամադրում է 6.000 այրուձի, որը միանալով նրա 4.000 հեծյալներին, կազմում է 10.000 հեծյալ զորաբանակ՝ Պոնտոս ներխուժելու համար:

- Տեղեկանում է, որ գարնանը հռոմեական բանակը, սրբներաց անցնելով Կապադովկիայով, ներխուժել է Հայաստան՝ Ծոփք: Ակսում է հայ- հռոմեական պատերազմը:

69 թ. գարնանը Հայկական կայսրության ռազմաքաղաքական վիճակը կտրուկ վատացավ: Նա զրկվեց գրեթե իր բոլոր հզոր դաշնակիցներից: Մնացել էին միայն կիլիկյան ծովահենները: Արդեն մի քանի տարի էր, ինչ չկային Տիգրանի այնպիսի հզոր անուղղակի դաշնակիցները, ինչպիսիք Սերտորիոսը և Սպարտակն էին: Իր ամենամոտ դաշնակից Միհրդատը պարտված էր և անօգնական պատսպարված Հայաստանում, իսկ Պոնտոսը հոգեվարքի մեջ էր և 70 թ. Ամիսոսի անկուսից հետո լրիվ վերահսկվում էր հռոմեացիների կողմից: Կիլիկյան

ծովահենները նախկինի պես հզոր էին, սակայն 70 թ. արևելյան Միջերկրածովյում տեղի ունեցած կործանիչ երկրաշարժը և ցունամին տարել էին 170.000 կյանք, որից տուժել էին նաև ծովահենների բնակավայրերը: Արևելյում բավականին հզորացել էին պարթենները, և Տիգրանը անընդհատ զգում էր այնտեղից եկող լուս սպառնալիքը:

69 թ. գարնանը Տիգրանը դեռ գտնվում էր Սիրիայի հարավում կամ Եփրատամերձ Մելեկիա ամրոցում, երբ իր և Սիրիատ Եվպատորի խորհրդակցությունից հետո որոշվեց հոռմացիներին հարվածել Պոնտոսում և ազատազրել այն: Միհրդատին Տիգրանը տվեց 6.000 ընտիր հեծյալ, որը, գումարվելով պոնտական 4.000 հեծելազորին, դարձավ մի խոշոր հեծելաբանակ՝ 10.000-ոց այրումի: Բնոր՝ Տիգրանը, եռանդրուն նախապատրաստում էր բանակը՝ Սիրիայի հարավից արևմուտք արշավելու համար:

#### 4.3.2.69 թ. գարնանը Հայկական տերության ռազմաբարական վիճակի վերլուծություն

Ցանկացած պետության պաշտպանությունը կախված է երկրի աշխարհա- և ռազմաբարական բազմաթիվ գործոններից: Այդ գործոնների վերլուծության հիման վրա երկիրը կառուցում է իր պաշտպանական համակարգը: Հայկական կայսրությունը բացառություն չէր այդ օրինաշափությունից: Վերոհիշյալ գործոնների մեծ մասը հասանելի է վերլուծության համար նաև այժմ և կարող է ըննվել մեր կողմից: Դա գրավականներից մեկն է, որ մեր վերլուծությունը մոտ կլինի իրականությանը:

Հայկական տերության հիմնական ռազմաբարական ուղղություններն էին.

Արևելյանը՝ Ասրապատականը.

Հարավարևելյանը՝ Միջորնիս և Աղիաբեննե.

Հարավայինը՝ Փյունիկիա և Կելեսիրիա.

Ծովայինը՝ Սիրիայի, Փյունիկիայի և Հաշտային

Կիլիկիայի մերձափնյա շրջանները.

Հարավարևմտյանը՝ Ծոփք, Կոմագենն և Դաշտ. Կիլիկիա.

Արևմտյանը՝ Պոնտոս.

Հյուսիսայինը՝ Իբերիա և Աղվանը:

Այս ուղղությունները իրենց ռազմավարական նշանակությամբ համարժեք չեն: Հայկական տերության ուժերի տեղադրության վրա ազդում էին բազմաթիվ գործոններ, որից կարևորագույնն էին՝ արտաքին սպառնալիքի բնույթը և ուժը, կենտրոնական իշխանության հանդեպ տեղական բնակչության լոյալության աստիճանը, Տիգրան Մեծի տերության մոտակա և հեռահար նպատակները տարածաշրջանում:

Արևելյան ռազմավարական ուղղություննը պայմանավորված էր առաջին հերքին նրանով, որ Ասրապատականը տերության երկրորդ ուժեղ թագավորությունն էր, որի գիտմքը զգայինորեն բարձրացնում էր հայկական բանակի հզորությունը: Նրա՝ մոտավորապես 10-15.000 զորաբանակը մշտապես մասնակցում էր Տիգրանի արշավանքներին, իսկ Միհրդատ Մելեացին հավատարիմ վասալ և փորձված զորավար էր:

Երկրորդը՝ մոտ լինելը Հոռից հետո Հայաստանի երկրորդ զորեղ ախտյանի՝ Պարթևատանի կենսական կարևոր վարչական կենտրոններին ստիպում էր միշտ աջալուք լինել պարթենների հանկարձակի հարձակման դեմ և միշտ պատրաստ լինել անհրաժեշտության դեպքում այստեղից սպառնալ պարթեններին:

Հաշվի առնելով հնարավոր հակառակորդի մոտ հզոր հեծելազորի առկայությունը՝ անհրաժեշտ էր այստեղ պահել համապատասխան հեծյալ զորաբանակ և անրացնել երկրի քաղաքները և ամրոցները, հատկապես մայրաքաղաք Ֆրասասպան: Այդ պատճառով Ասրապատականից հնարավոր էր հանել միայն հեծելազորի և հետևակի մի մասը (ըստ իմ պատկերացումների՝ ասրապատականյան զորքի ոչ ավելին, քան մեկ երրորդը):

Հայկական բանակի մի քանի գունի կարող է գտնվելին Ասրապատականում և կատարեին երկու կարևոր ֆունկցիա.

առաջինը՝ պարթեններին գեղծ պահեին Ասրապատականի հանելական ունագություններից, երկրորդը՝ վերահսկեին ասրապատականյան իշխանությունների և բանակի գործողությունները: Այս հայկական գնդերը, ըստ երևույթին, ենթարկվում էին Նոր Շիրականի բդեշխին և նրա զորաբանակից էին:

Հաշվի առնելով ուղղության կարևորությունը և այն, որ հայկական բանակի արշավանքներին մասնակցում էր ատրպատականյան բանակի զրեք մեկ երրորդը՝ մինչև 15.000 զինվոր՝ Նոր Շիրականի հայկական զորաբանակը Ատրպատական կարող էր ուղարկել իր գնդերի մի մասը՝ մինչև 5.000 զինվոր։ Իրականում այսպիսի լարվածություն Պարթևստանի հետ հարաբերությունների մեջ մենք տեսնում ենք միայն 66 թ։ Ըստ երևույթին, 73 – 69 թթ., Ատրպատականում մշտական գունվում էին ոչ ավելի, քան 1-2.000 հայ զինվոր։

Հարավարեւյան ուղմավարական ուղղության նշանակությունը նույնպես պայմանավորված էր Պարթևստանի գործունք։ Տարբեր էին Աղյաբենեի և Միզորնիայի քաղաքական վիճակները՝ Աղյաբենեն ենթակա թագավորություն էր, իսկ Միզորնիան՝ Հայաստանի նահանգ, որտեղ բդեշխի՝ փոխարքայի իրավունքով կառավարում էր Գուրը՝ Տիգրանի եղբայրը։ Աղյաբենեն ուներ Ատրպատականի կարգավիճակը, սակայն այստեղ կար մի եական տարբերություն։ այս երկրամասը չուներ Ատրպատականի ուղմական հզորությունը։ Նրա ուղմավարական նշանակությունը մեծանում էր նրանից, որ ինքը նույնպես շատ մոտ էր Պարթևստանի խոշոր տնտեսական կենտրոններին։ Այս ուղղության պաշտպանությունը ևս ենթադրում էր հայկական զորաբանակի ներկայություն, որի շուրջը կարող էին համախմբվել աղյաբենեցիների և Միզորնիայի արամեացիների ու հայերի ուժերը։ Տարածաշրջանի կարևորագույն ամրությունն էր Մծինը։ Այնտեղ որպես փոխարքա՝ բդեշխ ևստած էր Գուրը, որին ենթարկվում էին այս ուղղության բոլոր զորքերը։ Ըստ երևույթին, Աղյաբենեի մայրաքաղաք Արքելայում ևս կային որոշ հայկական ստորաբաժանումներ։ Ուղղությունը պաշտպանող հայկական զորաբանակի թիվը նույնական է այստու մոտ 5-10.000 զինվոր։ Նվազագույնը նույն բանակությամբ աղյաբենցի զինվոր պետք է, որ մասնակցեին Տիգրանի արշավանքներին հայկական բանակի կազմում։

Արևելյան և հարավարեւյան ուղմավարական ուղղությունները ունեին մեկ հավանական հակառակորդ և անհրաժեշտաբար պետք է համագործակցեին։ Պարթևստանի Հրահատ Գ քաղավորը նման չէր ծեր խաղաղասեր Սինասորուկ (77 – 75 թթ.) քաղավորին։ Սակայն Պարթևստանը դեռ սեղմված էր

արևելքից սակարառւկների, իսկ հարավում Քարակենեի, Էյումայիսի և Պարսիք միջն և անմիջական վտանգ դեռ չէր ներկայացնում։ Դրա հետ մեկտեղ հայերը երբեք չէին մոռանում 92 թ. հռոմեա-պարթևական համաձայնության մասին։

Հարավային ուղմավարական ուղղության նշանակությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով։

- հարավային սահմանն էին կազմում նոր հնազանդեցված թշնամական երկու փոքր թագավորություն՝ Նարաթեան և Հուդան։

- խոռվություն բարձրացրած Փյունիկիան նոր էր հնազանդեցված գեների ուժով, ընդ որում որոշ տեղերում (Պոտղոմայիս) ցուց էր տվել համար համաժողովրդական դիմադրություն։

- անհնազանդության ալիքը, որը ծնվել էր Փյունիկիայում, հետագայում տարածվեց հյուսիս՝ Սելևկիա Պիերիա. այս վտանգավոր տեսնենցը կարող էր կրկնվել։

- տեղանքը շատ հարմար էր հռոմեական դեսանտ իջեցնելու համար։ Եթե կիլիկյան ծովահենները թուլացնեին ծովի վերահսկումը, ապա հռոմեական 50-60 նավից բաղկացած նավատորմը կարող էր այստեղ մի քանի հազարանոց զորք իջեցնել, կրկին ապստամբեցնել տարածաշրջանը և մեծ զիսացավանք պատճառել Տիգրանին։ Սակայն հաշվի առնելով ծովահենների հզորությունը՝ այս սցենարը թիւ հավանական էր։

- Եզիփտոսի մոտ լինելը՝ Տիգրան-Միհրդատյան դաշինքի շահերը բազում անգամներ բախվել էին Եզիփտոսում հռոմեականների հետ, ըստ որում մի քանիսը հանգուցալուծվել էին հօգուտ արքաների։ Խուլիսին հացով ապահովող Եզիփտոսի նշանակությունը շուտի համար այնքան մեծ էր, որ նվազագույն վտանգը այստեղ հռոմեացիներին կարող էր դրդել՝ անցնել վճռական գործողությունների։

Այս ամենից ենելով՝ Տիգրանը պետք է այստեղ թողներ բավականին հզոր զորաբանակ՝ բաղկացած ոչ պակաս, քան 10-15.000 զինվորներից, առնվազն 5.000 զինվոր էր բուն Միհրիայում, որից մոտ 1-3.000՝ Անտիոքում և Ջրակայրում։

Փյունիկիայի 10-15.000 զորաբանակի միայն կեսը կարող է լինելու բուն հայկական զորքերը, մասցածը՝ հաստակ մեղացիք, աղյաբենցիք, կոմմագենցիք, հնարավոր է նաև վարձկան որոշ ստորաբաժանումներ։

Ծովային ռազմավարական ուղղության նշանակությունը պայմանավորված էր նրանով, որ այս ուղղության շնորհիվ Տիգրանը կարողանում էր իրականացնել իր համաշխարհային կայսերական քաղաքականության արևմտյան մասը:

Կիլիկյան ծովահենների հսկայական հաջողությունները, երբ նրանց հաջողվեց մի քանի մեծ ծովային ճակատամարտներում պարունակյան մատնել հռոմեական նավատորմին, մեծապես կախված էին Դաշտային Կիլիկիայի մերձափնյա շրջանում գտնվող նրանց բազաների պահպանությունից: Այդ ապահովությունը առաջին հերթին կապված էր հայկական խոշոր զորաբանակի առկայության հետ Դաշտային Կիլիկիայում: Հարևան Լեռնային Կիլիկիա հռոմեական նահանգում մշտական գտնվում էր խոշոր հռոմեական բանակ՝ երեք լեզեռնից ոչ պակաս: Մեկը հետազոյում կտեսներ՝ ինչ արագությամբ Ռումանուր ջախջախեց կիլիկեցիների նավատորմը և զրավեց նավահանգստները, այդ ամենը հռոմեացիներին անհասանելի էր ավելի քան 15 տարի՝ ի շնորհիվ Դաշտային Կիլիկիայում հղոր հայկական բանակի առկայության:

Այսպիսով, ծովակեյսար ուղղությունը պաշտպանվում էր ծովից կիլիկյան ծովահենների նավատորմներով, իսկ արևմուտքից՝ հայկական հատուկ զորաբանակով՝ մոտ 5-10.000 զինվոր:

Հարավարևմտյան ռազմավարական ուղղության նշանակությունը առաջին հերթին պայմանավորված էր նրանով, որ նա Հայկական տերության կենսական՝ կենտրոնական շրջաններ թափանցելու համար ամենախոցելի ուղղությունն էր:

Կապադովկիայից Ծոփի և Աղձնիքի վրայով մինչև Հայկական տերության վարչական, տնտեսական և զաղաքարական կենտրոնը՝ Տիգրանակերտը, մոտ 50 փարասխ էր (մոտ 250 կմ)՝ արագաշարժ հռոմեական բանակի համար ընդամենը տաս օրվա ճանապարհ:

Այս ուղղության վտանգները քննելիս հասկանալի են դատնում Կապադովկիան շեզորքացնելու, նվաճելու, կամ գոնե Միհրդատին հանձնելու Տիգրանի բոլոր ջանքերը:

Այս ուղղությունը պետք է պաշտպաներ եփրատամերձ սահմանային խոշոր ամրոցների ցանցը, և Ծոփիում մշտական տեղակայված տեղի բդեշի ընտիր 10.000-ոց հայկական զորաբանակը: Սակայն այս էլ բավարար չէր: Հակառակորդի հար-

ձակման դեպքում Կոմմագենեում տեղադրված հայկական զորագունդը՝ մոտ 5.000 զինվոր, կոմմագենյան կիսահայկական բանակի հետ միասին պետք է կամ ուժեղ հարված հասցնեին Կապադովկիայում, կամ նահանջելով Ծոփ, ուժեղացնեին այստեղի ուժերը:

Աղձնիքում և, մասնավորապես, Տիգրանակերտում տեղակայված Աղձնիքի բդեշի մոտավորապես 10.000 ընտիր հայկական զորաբանակը ռազմավարական առումով կոչված էր համագործակցել Ծոփիում, Կոմմագենեում, Օսրոենեում և Կորդուրում տեղադրված հայկական զորքերի հետ:

Այսպիսով, այս ուղղության վրա տեղակայված էր հայկական բանակի ամենախոշոր զորախումբը, որը կոչված էր կանիւլ հակառակորդի մուտքը Հայաստանի խորքերը:

Արևմտյան ռազմավարական ուղղությունը ստեղծվել էր Միհրդատի 71 թ. պարտությունից հետո, երբ դաշնակից երկրից Պոնտոսը դարձավ թշնամիների հենակետ: Այս ուղղությունը սպառնալից էր հռոմեական բանակի հետ անմիջական ընդհարման և հնարավոր ներխուժման հնարավորությունով: Տիգրանը հարկադրված էր այստեղ պահել 4-5.000 զինվոր, որոնք, ըստ երևոյթին Գուգարաց բդեշի զորաբանակից էին:

Հյուսիսային ռազմավարական ուղղությունը այս ժամանակաշրջանում հայկական տերության համար ամենաանվտանգն էր: Վիրքում և Աղվանիքում կարող է լինելին Գուգարքի բդեշի աննշան հայկական ստորաբաժանումներ:

Մայրաքաղաք Արտաշատը, հաշվի առնելով Զարեհի զինված երկութը, անհրաժեշտարար պետք է պաշտպանվեր բոլոր ուժնգություններից՝ մոտ 5.000 զորաբանակ:

Այժմ փորձենք պատկերացնել 69 թ. գարնանը Միհրովիունիկեում գտնվող հայկական դաշտային բանակի մոտավոր բանակը և կազմը:

Հայկական տերության բանակի թվաքանակը պարզելու համար մենք ունենք միայն երկու հենակետ. դրանք են Պոնտարքուի և Ապահնանոսի վկայությունները հայկական բանակի մասին Տիգրանակերտի ճակատամարտում: Լինելով այս ճակատամարտի համար ակներև չափազանցություն՝ այս տվյալները մեր համար հետաքրքիր են հայկական տերության

զինուոժի ընդհանուր քանակը որոշելու համար:

Մեկ անգամ ևս հիշենք, որ Երիարդուր առաջինը (և միակը) ուշադրություն դարձեց, որ Պլոտարքոսի մոտ Տիգրանի հետևակի և օժանդակ զորքերի (նովնայես հետևակ) թիվը ցուց է տրված 205.000 զինվոր, սակայն Ապահանոսը նշում էր 250.000: Կ. Երիարդը ենթադրեց, որ այստեղ տեղ է գտնել արտագրողի սխալ, որի հետևանքով 205.000 դարձել է 250.000: Հեծելազորի թիվը Պլոտարքոսը նշում էր 55.000, իսկ Ապահանոսը՝ 50.000, որը գրեթե նույն է, սակայն ենթադրելով արտագրողի անփութությունը՝ առաջին դեպքում, մենք կարող ենք ենթադրել այն և երկրորդ դեպքում, որից հետո 55.000 դարձավ 50.000:

Կարելի է ընդունել ևս մեկ տարբերակ: Ճշմարտություն են արտահայտում միայն Պլոտարքոսի տվյալները, իսկ Ապահանոսը այս թվերը (օրոնք կրկնում են Միհրդատ Եվլպատորի՝ Ասիա նահանգ արշաված զորքերի քանակը 89 թ.) ավելի շատ արտահայտությունն են այս երկու միավետների հսկայական մորիիզացիոն հետարավորությունների:

Պլոտարքոսը կարող էր տեղեկություն քաղել մեզ անհայտ աղբյուրից, որտեղ այս տեղեկությունները հասած լինեին անմիջապես Պոմպեոսից (օրագրեր, նամակներ, հուշեր և այլն), որին այդ մասին կարող էր պատմել ինքը՝ Տիգրան Մեծը: Այդ դեպքում կարող ենք համարել, որ մեր՝ առաջին ձեռքից ստացված տեղեկությունները հավասար են:

Հայկական քանակի դեպքում զարմացնում է ծանր հետևակի անսպասելի մեծաքանակությունը, որը, ըստ իս, կապված է մի թյուրիմացության հետ. այստեղ նշված է նաև միջին հետևակը նիզակակիրները (պելտաստները): Եթե ընդունենք, որ նրանք իրենց քանակով մոտավորապես իրար հավասար էին, կարելի է պատկերացնել հայկական կայսրության քանակի հետևյալ կառուցվածքը ըստ զորատեսակների՝

- 17.000 կատուֆրակոս
- 38.000 թեթև հեծելազոր
- 20.000 նետաձիգ և պարսավորք
- 75.000 նիզակակիրներ
- 75.000 ծանր հետևակ վահանակիրներ
- 35.000 սակրավոր, պաշտողական և օժան դակ զորք ընդամենը՝ 260.000 զինվոր:

Այս քանակից 100.000 հայկական և մոտ 50.000 մեղական (ատրպատականյան) քանակներն էին:

Հայկական զորքի թվաքանակի մասին մենք դատում ենք 68 թ.-ին վերաբերող Ապահանոսի վկայությունից հայկական քանակի մասին, իսկ ատրպատականյան քանակի մասին ելեկով նրա ընդհանուր նմանությունից պարթևական ու հայկական քանակներին և նրանից, որ Ատրպատականը (բայց ոչ ամբողջ Սարաստանը) մոտ երկու անգամ փոքր էր Հայաստանից: Հայկական քանակի թվի մասին կա ևս մեկ այլ վկայական՝ 53 թ. Արտավազդ Բ-ն իր կողմից Անտոնիոսին առաջարկում էր 46.000 զինվորից քաղաքացած հայկական դաշնակից քանակ, որը հայկական զորքերի մոտավորապես կեսն էր, այսինքն՝ հայկական քանակի ընդհանուր թիվը մոտ 92-100.000 զինվոր էր:

Մ.թ.ա. 36 թ. Մարկոս Անտոնիոսի դեմ պատերազմի ժամանակ պարթևական հեծելազորի 50.000-ից՝ 10.000 ատրպատականյան էր: Եթե համարենք, որ դա երկու կարողությունների մի մասն էր միայն, ապա ստացվում է մոտ 11-15.000 հեծելազոր: Հեծելազորից երկու-երեք անգամ ավել հաշվենք հետևյակը՝ 30.000-40.000 զինվոր, ապա մեր ենթադրությունները ստանում են որոշ հիմնավորում:

Սույ 15.000 զինվոր կարող էին տրամադրել իրեները, աղվանները և մարդերը:

Մնացած ավելի քան 100.000 զինվորը տերության մնացած բոլոր ժողովուրդների կոնտինենտներն էին:

Հունա-հռոմեական հեղինակների պելտաստներին մենք անվանում ենք նիզակակիրներ, իսկ ծանր հետևակը՝ վահանակիրներ:

Վահանակիրները պարտադիր ծանր հետևակ են, որովհետ կրում են մեծ, ծանր վահաններ և մարտնչում շարքերով, որը իրենց քնարոշում է որպես ծանր հետևակ: Որպես օրենք զրահապատ են:

Նիզակակիրները զինված են ավելի փոքր ու թեթև վահանով և կարող են կովել և՛ խիտ, և՛ ցրիչ շարքերով: Դա միջին հետևակ էր, որը իր ֆունկցիաներով ավելի տրամարանական է ներկայացնել որպես ծանր, քան հեռահար մարտ վարող թեթև հետևակ:

Հայկական կայսրության քանակից մոտավորապես 100.000 բաշխված էին տարբեր ուղղմակարական ուղղություններով,

մոտավորապես այդքան է կար հպատակ ժողովուրդների տեղական կոնսինգենտներում: Մնացած ընտիր 60.000 Տիգրանի շարժական դաշտային բանակն էր, որին, անհրաժեշտության դեպքում, միանում էին տերության տարբեր հատվածներում տեղակայված հայկական զորաբանակները և հպատակների կամ դաշնակիցների զորքերը: Ծայրահետ անհրաժեշտության դեպքում օգտագործվում էին նաև տեղական ուժերը, որոնք հենվում էին երկրի պաշտպանական ամրությունների համակարգի վրա: Այսպիսով, հայկական բանակի թիվը կարող էր գերազանցել 100.000, սակայն այդպիսի անհրաժեշտություն գրեթե չէր լինում:

Նման ռազմական համակարգը բավականին արդյունավետ էր պարթևական և այլ պետությունների դեմ, սակայն տարբեր պատճառներով այնքան էր բավարար չէր հոռմեացիների դեմ պայքարելու համար:

Այս ուժերի մեջ հաշվարված չեն Սիրիայի պոլիսների վարձկան կամ աշխարհագրային ուժերը, որովհետև նրանք չեն մասնակցում կամ գրեթե չեն մասնակցում արքայից արքայի արշավներին: Տիգրանը սիրիական բանակի մնացորդները՝ մոտավորապես 10.000 զինվոր, պահում էր որպես վարձկան:

Հայկական բանակի թվաքանակին անհրաժեշտ է ավելացնել դաշնակից զորքերը՝ Պոնտոսի արքայի՝ (այս, Պոնտոսի արքա. չէ՝ որ Տիգրանը երբեք չէր ճանաչել այնուեղանությունների իրավունքները) Սիրիատի 4.000 հեծելազորը, նաև քարակենացիների և սակարառուկների դաշնակցային հեծելազորը:

Հայկական կայսրության բանակի կազմակերպման տասական համակարգի մասին մենք արդեն պատմել ենք: Հետագայում՝ Տիգրանակերտի ճակատամարտի նկարագրության ժամանակ, մենք ավելի մանրամասն կանդրադառնանք հայկական բանակի կառուցվածքին և մարտավարությանը:

#### 4.4.Տիգրանի ռազմավարական ծրագրերը

Տիգրանը զիտեր, որ պատերազմը Հռոմի հետ անխուսափելի է, և հնարավորին չափ պատրաստվում էր դրան: Անցել էր 94 – 84 թթ. բուն ժամանակաշրջանը, երբ դաշնակից արքաները մրցում էին Հռոմի և Պարթևստանի հետ համաշխարհային տիրապետության համար: Ներկա ռազմավարական ծրագրերը անհամեատ ավելի համեստ էին՝ պաշտպանել տերությունները Հռոմի և Պարթևստանի ուսունագործություններից: Հնարավորության դեպքում կնքել հաշտության պայմանագրեր և պահպանել ձեռք բերվածը, որ հետագայում ավելի հզորանալ սակայն, հաշվի առնելով Հռոմի անհաշտ դիրքորոշումը, դա գրեթե անհնար էր:

Հաշտության հասնելու համար անհրաժեշտ էր պարտության մասնել Հռոմին, որից հետո առաջ քաշել համեստ պահանջներ: Անհրաժեշտ էր ստեղծել մի վիճակ, երբ խաղաղությունը ավելի ձեռնորու դառնար Հռոմին, քան պատերազմը: Սակայն այս հեռահար նպատակը իրագործելի էր միայն սեփական ուժը ցուց տալուց հետո: Անհրաժեշտ էր հաղթական պատերազմ Հռոմի դեմ և Պոնտոսի պետության վերականգնումը:

Մ.թ.ա. 69 թ. գարնանը Տիգրանը Հռոմի դեմ պատերազմի հրաման արձակեց: Սիրիդատին հանձնած խոշոր հայկական հեծյալ գորաբանակը սրբնթաց շարժեց դեպի Պոնտոս: Տիգրանը պատրաստվում էր Սիրիայի հարավից շարժել դեպի Կապադովկիա, երբ եկավ հոռմեացիների ներխուժման գույժը: Լուկուլլոսը հարվածել էր առաջինը:

Տիգրանը չէր կարող նախատեսած չիներ իրադարձությունների զարգացման նման տարբերակը: Նա նույնպես տեսնում էր, որ իր տերության պաշտպանության ամենախոցելի հատվածը կապադովկիական սահմանն է: 94 թ. սկսած, երբ Տիգրանը Մեծ Հայրին միացրեց Ծոփքը, կապադովկիական ուղղության գործոնը կարևորագույններից էր հայոց արքայի մոտ: Արքայից արքայի հոգսերը այս ուղղությամբ ևս չելազեցին:

Ռազմական վտանգը կանխելու համար Տիգրանը կատարել էր մի շարք քայլեր.

- Ծոփրում էր գոնվում Մերուժանի (Միհրաբարզանի) գորաբանակը՝ 3.000 ընտիր հեծելազոր և 7.000 հետևակ: Այս բանակը սահմանային ամրոցների համակարգի հետ միասին պետք է ապահովէր սահմանի անձեռնմխելիությունը.

- Կոմմագենեում և Օսրոենեում գոնվող հայկական զորագնդերը պետք ապահովէին տեղական թագավորիկների մասնակցությունը մարտական գործողություններին՝ աներաժեշտության դեպքում ուժեղացնելով Մերուժանի զորաբանակը կամ ինքնարույն գործողություններ ծավալելով հակարակորդի դեմ: (Երկրորդը հնարավոր էր կապարովկիական բանակի դեմ, սակայն թիջ հավանական էր, որ տեղական զորաբանակները առանց հայերի մարտնչեին բուն հոռմեացիների դեմ).

- Տիգրանակերտի հզոր պաշտպանական համակարգը ընդունակ էր կանգնեցնելու նույնիսկ շատ ուժեղ հակառակորդի ցանկացած հզորության բանակը: Աղձնիքի 10.000 ընտիր զորաբանակը ապահովում էր նաև քաղաքի պաշտպանությունը՝ չհաշված տեղական՝ քաղաքային ուժերը.

- Ծոփրում գոնվող հայկական բանակին օգնության կարող էին հասնել Աղյարքնեում և Միջորնիայում տեղակայված զորքերի մի մասը, որը կարող էր ապահովել հարավային Հայաստանում հայկական մոտ 30.000 բանակի առկայությունը.

- Մինչև վճռական գործողությունների ծավալումը Տիգրանը միշտ կարող էր հասցնել հասնել Աղձնիք, որից հետո հակառակորդը պետք է պայքարեր արդեն 80-90.000 հզոր հայկական բանակի դեմ:

Մրագիրը տարբեր պատճառներով չիրականացավ, ընդ որում, քաղաքական գործուները այստեղ խաղացին ավելի կարևոր դեր, քան բուն ուազմավարականները:

Տիգրանի ծրագրերում անպայման պետք է լինեին նաև հակազդելու այլ՝ միջազգային դիվանագիտական հնարքներ, սակայն 69 թ. դրանց հնարավորությունը խիստ նվազել էր. Պոնտոսը պարտված էր, Սպարտակի ստրուկների ապսպամբությունը Բուտակիայում՝ ճնշված, Բապանիայում Մերտորիուսը արդեն երրորդ տարին էր, ինչ չկար:

Այսպիսով՝ ուազմավարական առումով պաշտպանական լինելով հանդերձ՝ Տիգրանի արտաքին քաղաքականությունը և

նրա ուազմաքաղաքական բաղկացուցիչը ակտիվ հարձակողական էին: Նա ծրագրում էր պայքարել Հռոմի դեմ Պոնտոսում՝ օգնելով Միհրդատին վերանվաճել իր պետությունը և Կապաղովկիայի վրայով հարված հասցնելով հռոմեական Ասիա նահանգին (ըստ երևույթին, Միհրդատի հետ համատեղ): Այս ծրագիրը միանգամայն իրազործելի էր իր սկզբնական փուլում, սակայն անելուանկարային էր հետագայում՝ հաշվի առնելով, որ Հայաստանը փաստորեն մենակ էր մտում Հռոմի և Պարթևստանի դեմ, որովհետև քայրայված Պոնտոսը այլև անկարող էր հավաքել հզոր բանակներ:

#### 4.5. Կողմերի բանակների և ծրագրերի գնահատականը

Տիգրան Մեծի քաղաքականությունը և ուազմական գործունեությունը կազմում են մի անբաժանելի ամբողջություն: Հնարավոր չէ հասկանալ մեկը՝ առանց քննելու երկրորդի գաղտնի գաղանակները: Մենք ցույց տվեցինք, ինչպես Կուրտ Էքբարդի առաջին լրտումներին հետևեցին Հակոբ Մանանյանի կարևոր ճշումները:

Սակայն Արևելյամիջերկածովլում կատարվող իրադարձությունների մեջ Տիգրան Մեծի իսկական դերի քացահայտման պատիվը պատկանում է Ռութեն Մանասերյանին: Արյ'որ ամեն ինչ պարզաբանվեց նրա մենազորություններում: Դեռևս ոչ Զարմանայի խորաթափանցությամբ և հետևողությանը բացահյուրել մ.թ.ա. I դարի առաջին կեսի իրադարձությունների ներքին շարժադիթները և կապը՝ Մանասերյանը «շիանդրգնեց» կատարել տրամարանորեն հետևող հաջորդ՝ վերջին քայլը և համակարգված ներկայացնել պոնտ-հայկական դաշինքի համաշխարհային տիրապետության համար Հռոմի և Պարթևստանի դեմ մղվող պայքարը՝ որպես այս ժամանակաշրջանի (մ.թ.ա. 89 – 64 թթ.) օյկումենի պատմության զինավոր իրադարձությունը:

Նոր տեսանկյան տակ դիտարկված պատմական անցքերը թույլ են տալիս պնդել, որ հայ-պոնտական միության ջախջա-

խոսմը Հռոմի համար ուներ նոյն նշանակությունը, ինչպէս արևմտյան Միջերկրածովքում Կարթագենի կործանումը մ.թ.ա. III - II դր.: Առաջինը Հռոմին տվեց արևմտյան-, իսկ երկրորդը՝ արևելյան Միջերկրովքը: Հռոմը այլևս չուներ լուրջ խոչընդուռ Միջերկրական ծովը ներքին ծով վերածելու համար:

Դրա հետ մեկտեղ Արևելքում Հռոմը մոտեցավ իր բնական սահմաններին և սկսեց ձևավագործել իրանա-հոումեական քաղաքական երկրենության՝ դրամիզմի համակարգը: Հին աշխարհի պատմության այս ժամանակաշրջանը դեռ կարու է համընդհանուր, այդ թվում նաև ռազմական և ռազմաքաղաքական բաղադրիչների համակարգային վերլուծությանը:

Մ.թ.ա. 95 - 94 թթ. Տիգրան Բ Սեծը և Միհրդատ Զ Եվպատուրը՝ Հայաստանի և Պոնտոսի արքաները, կորցեցին դաշինք, որի նպատակը Հռոմի և Պարթևստանի կործանումն էր: Պայքարի առաջին փուլը տևեց 95-84 թթ.<sup>1</sup> 11 տարի, որի ընթացքում նրանց ծրագրերը ձախողվեցին, սակայն նրանք նույնպես ախոյաններին հասցրեցին ծանր հարվածներ, իսկ հակառակորդներից մեկին՝ Պարթևստանին, կանգնեցրին գրեթե վերջնական քայլայման եղին:

Պայքարի երկրորդ՝ վերջնական փուլը տևեց 74-64 թթ.<sup>2</sup> 10 տարի, որի ժամանակ առաջին փուլում պարտություն կրած, սակայն հսկայական ռազմաքաղաքական ներուժ ունեցող Հայաստան-Պոնտոս դաշնությունը կատաղի պայքար մղեց իր գոյությունը պահպաննելու համար: Հակամարտությունը առաջինի նման գորքալ պատերազմի բնույթ չէր կրում, և արքաները արդեն համաձայնության են գալիս հոումեական հակամարտող կուսակցություններից մեկի՝ մարիականների հետ: Արդեն այդ փաստը վկայում էր, որ նրանք կողմնակիրքն ներքաշվում էին հոումեական ներաշխարհի քաղաքական ոլորտը:

Պայքարի վերջում տեղի է ունենում բարդ հոգեբանական և ռազմավարական բեկում: հաղթանակած Հռոմն արդեն սկսում է Պարթևստանին ընկալել որպես գալիք նոր աշխարհամարտի գլխավոր ախտյան: Այս պայմաններում Հայաստանը Հռոմի համար ձեռք է բերում կարևորագույն նշանակություն: Պոնտոսը, որն այլևս համաշխարհային միավոր չէ, կործանվում է: Նրա մեծ տնտեսական նշանակությունը հնարավոր էր իրագործել և որպես հոումեական նահանք:

Այլ է Հայաստանը: Նրա հսկայական ռազմաքաղաքական

հարձակողական և պաշտպանական դերը Հռոմում ընկալվեց շատ արագ, սակայն Արտավազդ Բ-ի հաջողված փորձը խաղալ պարթևա-հոումեական հակամարտության վրա, և Արտաշեն Բ-ի անգուսապ վրեժինսդրության տրամադրությունները ժամանակավորապես տագնապեցրին Հռոմին:

Այսպիսի խնդիրների լուծման հոումեական ստերեոտիպերը իրենց թելապուրում էին կիրառել ավանդական սխեման՝ լրիվ կախյալ երկիր՝ «հոումեասեր» քագավորիկով, հետո նահանք:

Սակայն հոումեացիները հաշվի չէին առել հարեւան դարձած Պարթևստանի հզոր գործոնը և Հայաստանի մոնուքնիկ ուժեղ միջուկով մեծ և լեռնային երկիր լինելը: Մ.թ.ա. 20 - մ.թ. 53 թթ. Հայաստանը պայքարեց երբեմն միայնակ, և Հռոմի կարծեցալ հաջողությունները միանգամբ հօդու ցնդեցին, երբ Պարթևստանում որոշում ընդունեցին Արշակունիների հարստության ճուղերից մեկը պատվաստել քայքայված հայկական զահին, իրենց՝ պարթևական ազդեցությունը ամրացնելու համար:

Սիամամանակ հոումեական դանարաշաշրժ և կրնաբրվածիվ միտքը վերջապես յուրացրեց Իրանին հայթելու անկարողության գաղափարը: Եփրատը սկսում էր ընկալվել որպես կայսրության արևելյան սահման, իսկ Հայաստանը ավելի ձեռնըտու էր պահել կիսանկախ վիճակում թէ՝ Հռոմից, թէ՝ Պարթևստանից, որովհետև ռազմականորեն անհամեմատ ավելի թույլ հայերի մոտ արդեն բացակայում էր եքսպանսիայի գաղափարը դեափ Արևելք կամ Արևմուտք, սակայն իրենց անկախության մնացորդները պահպաննելու համար հայերը պատրաստ էին կատաղի պայքար մղել թէ՝ Հռոմի, թէ՝ Իրանի դեմ: Իսկ Իրանում արդեն Սասանյաններն էին և Հռոմն էր արդեն պաշտպանվողի դերում:

Այդպես ծնվեց հայոց վերջին Արտաշեայանների և Արշակունիների պետության գոյաւուման ֆենումենը երկու մեծ աշխարհակալությունների միջև: Հետո տերությունների մոտեցումները փոխվեցին, որի հետևանքով տեղի ունեցավ Հայաստանի՝ 387 թ.-ի ցավախ բաժանումը և հավասարակշռության հին գաղափարը խամրեց և փոխարինվեց ուրիշով: Հռոմի արտաքին քաղաքականության այս աններելի սխալը բազմաթիվ անգամներ քննարկման առարկա էր դարձել միջնադարյաններից մինչև XIX դարի եվրոպացի պատմաբանների մոտ: Հերից մինչև

Մեսանքը՝ յոթերորդ դարն էր, երբ իսլամով միավորված քաջոր արարքների հարվածներից սկսվեց Սասանյան Իրանի կողմանումը, որին հետևեցին Բյուզանդական կայսրության անդանայի կորուստները:

Մեզ հետաքրքրում է Սիկրդատ-Տիգրանյան պաշտպանական գոյամարտի պատմությունը: Հռոմի դեմ պայքարում Տիգրանյան Հայաստանի դերը այսքան մեծ էր, որ այս երկու պայքարի փուլերը մենք առաջարկում ենք անվանել ոչ թե պոնտական պատերազմներ, այլ մ.թ.ա. 95-83 թթ. առաջին հռոմեապոնտիայրյան հակամարտություն և մ.թ.ա. 74-64 թթ.՝ երկրորդ հռոմեա-պոնտիայրյան հակամարտություն, իսկ մ.թ.ա. 83-74 թթ.՝ հարաբերական զինադադարի փուլ:

Հոռմեա - պյունիկայրան հակամարտության աշխարհագործունը ընդգրկում է ողջ Միջերկրականը և Առաջավոր Ասիան՝ հասնելով մինչև Հնդկաստանի սահմանները:

Հոռմը, բանակներ ուղարկելով Միհրդատի դեմ, միաժամանակ հակասադրանյան կոալիցիա էր ստեղծում Միհրիայի հարավում: Սա նոյն պատերազմի տարբեր ռազմաբաներն էին: Դաշնակից արքաները հետ չէին մնում, կապեր էին հաստատում Բապանիայում գտնվող Սերտորիուսի հետ, Միհրդատը և Տիգրանը գործուն աջակցություն են ցույց տալիս Սպարտակի ապստամբությանը: Կիլիկյան ծովահենները ձգուում են կարգածահար անել հռոմեական ծովային բերնափոխադրումները: Տիգրանը անընդհատ խառնվում էր պարթևական ներարրունական պայքարին՝ միաժամանակ հակասադրեական դաշինքներ կնքելով արևելքի ռազմուների հետ:

թյանը ենթարկել ուղ հունական աշխարհը և զլրբալ պատրազմ սանձագերծել հոռմեացիների դեմ՝ հեարավոր է, եաւ հասնելով նրանց լիակատար ջախջախմանը: Տիգրան Բ-ն ստեղծեց ուրիշ տարածաշրջանային գերտերություն, որն ընդգրկում էր բացի բուն անտիկ Հայաստանից նաև Փոքր Ասիայի արևմտատըրը, Ծոփքը, Ասրպատականը, վերին Միջագետը, Սիրիան, Փյունիկիան՝ դաշնալով Սելևկյանների հաջորդը: Միջերկրական ծովից մինչև Հնդկաստանի սահմանները Ասիայի տերեր էին իրենց համարում պարք բազավորները: ... Ըստ որում, ըստ Երևուութին, առաջին իսկական զլրբալ պատրազմ էր հռչակավոր III Միհրդատյան պատերազմը, որը սկզբում անցկացնում էր Լուկուլլոսը, հետո՝ Պոմպեոսը: Ինչպես Լուկուլլոսի հարձակումը (74 – 67 թթ.), այնպես էլ Պոմպեոսի արշավանքը (66 – 62 թթ.) փաստորեն ձևափոխվեցին հոռմեական «Ալեքսանդրի արշավանքը» շահմանափակված որիցից հին աշխարհակարգով և կայացած սահմաններով և հարաբերություններով: Միհրդատի ջախջախմը բավականաշափ ներդաշնակ ձևով անցավ իր տերության նվաճմանը, պրևուտական բազավորի հետապնդումը՝ Տիգրանի հետ պատերազմի, պարքեների հետ ընդհարումը քիչ էր մնում վերածվեր նոր պատերազմի և հոռմեական հարձակման սահմանը դրեցին աշխարհագրական գործոնները ու հնարավորությունները և անվերջ արշավին չղիմացած բուն հոռմեական բանակի տրամադրությունները (Plut. Romp. 7-36): Նոյնքան զլրբալիստական էր Պոմպեոսի արշավանքը. փաստորեն սկսելով զլրբալիստական գործողությունից ծովահենների դեմ՝ Պոմպեոսը հասավ Միհրդատի ոչնչացմանը, Տիգրանի տերության բայրայմանը, նախկին Սելևկյան բազավորության ոչնչացմանը: Նշենք, որ ոչ Սելևկյան Սիրիան, ոչ էլ Հուդան ի սկզբան չէին հանդիսանում Հռոմի հակառակորդները և էրսպանսիայի օրեւէս էին դարձել միայն վերջին աստիճանին:» [109, էջ 88-90] (Plut. Romp. 27-42):

Եգորվիլ տերմինարանական մոդային անտեղի հետևելը, ինչպես նաև Ապահանոսի և, հատկապես, Դիոն Կասսիոսի երկերի վատ իմացությունը թողնելով իր խոճին: Նա այն «պարզունակ» ռուս հետազոտողներից է, որոնք հավատում են հռոմեացիների «հոգնելուն»: Կարևոր այն է, որ Եգորվիլը ըմբռնում է այս իրադարձությունների ներքին կապը և համաշխարհային բնույթը:

Եգորովը չի նկատում առաջին Պոնտական պատերազմի և հայ-պարթևական պատերազմի «զլորայիստական» էությունը: Ավելին, 74-64 թթ.-ի հոռմեական «զլորայիզմը՝ 89-83 թթ. ուազմաքաղաքական իրադարձությունների անմիջական հետևական է:

Նույնիսկ 83-74 թթ.-ի զինադարձը լիարժեք չէր: 83-81 թթ. բոնվում է երկրորդ պոնտական պատերազմը, 78-77 թթ. տեղի են ունենում կապադովկիական դեպքերը. այս բոլորը գաղտնի պայքարի դրստրումներ են:

Այսպիսով, մ.թ.ա. 95 – 83 թթ. առաջին հոռմեա- պոնտիայրյան հակամարտությունը ներառում է:

- 95 թ. պոնտ-կապադովկիական պատերազմը.
- 93 – 91 թթ. կապադովկիական հայ-հոռմեական պատերազմը.
- 89 – 85(84) թթ. առաջին հոռմեա-պոնտական պատերազմը.
- 86–84 թթ. հայ-պարթևական երկրորդ պատերազմը.
- 83 թ. հայերի կողմից Սիրիայի հպատակեցումը:

Մ.թ.ա. 83 – 74 թթ. հոռմեա- պոնտիայրյան հակամարտության հարաբերական զինադարձը ներառում է:

- 83–81 թթ. հոռմեա-պոնտական երկրորդ պատերազմը.
- 78–77 թթ. Կապադովկիական ճգնաժամը:

Մ.թ.ա. 74-64 թթ. երկրորդ հոռմեա- պոնտիայրյան հակամարտությունը ներառում է:

- 73–71 թթ. հոռմեա-պոնտական երրորդ պատերազմը.
- 73–71 թթ. Խոտլիայի ստրուկների պատերազմը.
- 73–69 թթ. հայ-հարավսիրիական պատերազմը.
- 71 թ. հակատիզրանյան ապստամբությունը Հայաստանում.
- 69–67 թթ. հայ-հոռմեական պատերազմը.
- 67–66 թթ. հակածովակինային հոռմեա-կիլիկյան պատերազմը.
- 67–66 թթ. հոռմեա-պոնտական չորրորդ պատերազմը.
- 66–65 թթ. հոռմեա-կովկասյան պատերազմը.
- 66–64 թթ. հայ-պարթևական երրորդ պատերազմը:

73–71 թթ. հոռմեա-պոնտական երրորդ պատերազմը և 73–69 թթ. հայ-հարավսիրիական պատերազմը, ըստ Էության, նույն պատերազմի տարբեր ուազմաքեմերն են: 71 թ հակատիզրանյան ապստամբությունը Հայաստանում, որը զիսավորում էր թագաժառանգ Զարեհը, շատ հավանական է, որ նույնպես ինչ-որ չափով դրդված լիներ հոռմեացիների կողմից: Հարավսիրիական և հակատիզրանյան ապստամբությունը Հռոմը կապեց Տիգրանի ձեռքերը և թույլ չուվեց օգնության հասնել Միհրդատին:

Մ.թ.ա. 74-64 թթ. երկրորդ հոռմեա- պոնտիայրյան հակամարտության հետևանքով հելլենիստական աշխարհը հիմնվին փոխվեց: Մ.թ.ա. 64–62 թթ. Արևելքում ստեղծվեց աշխարհարաբական նոր իրավիճակ, որը հիմնականում անփոփոխ մնաց յոթ դար՝ մինչև արաբական նվաճումները:

#### 4.5.1. 69 թ. հոռմեական և հայկական բանակների գևահատականը

Հակամարտությանը պատրաստվող հոռմեական և հայկական բանակները ունեին հարուստ մարտական փորձ և կուռ կառուցվածք, սակայն էականորեն տարբերվում էին իրարից մարտավարական հնարքներով և պատերազմելու ոճով:

Եթե հոռմեական մարտավարության անկյունաբարը հանդիսանում էր հօշակափոր լեզեռնային հետևակային մարտավարությունը, ապա հայկական մարտավարության անկյունաբարը հեծելազորային մարտն էր՝ կատաֆրակտոսների և հեծյալ նետուածիզների փոխհամաձայնեցված գործողությունները: Հետևակի գործողությունները երկրորդային էին. հաղթանակը պայմանավորված էր ճոշավոր այրուածու կործանիչ հարվածով:

69 թ., պատմության մեջ առաջին անգամ աշխարհի լավագույն ծանր հետևակը պետք է պայքարեր աշխարհի լավագույն ծանր հեծելազորի դեմ (պարթևական հեծելազորի հանդեպ տարած փայլուն հաղթանակները հաստատում են հայկական այրուածուն տրված մեր այս գևահատականը):

Արդեն միայն այդ պատճառով, սկսվող պատերազմը եր-

կու կողմերի համար լի էր անհայտ հետևաեթերով:

Հոռմեական հանրապետությունը Արևելքում օբյեկտիվորեն ուներ ավելի շատ ուժ և միջոց՝ պատերազմը շահելու համար, սակայն Լուկուլլոսի քանակը, որը կազմում էր այդ ուժի մոտ մեկ քառորդը, կարող էր լուրջ հաջողության հասնել Հայաստանում միայն Տիգրանի կողիտ սխալների դեպքում։ Եթե Պոնտոսը կորցրած չլիներ իր հզորությունը, ապա այս պատերազմը կլիներ գրեթե անհնարին։ Տիգրանը լավ գիտակցում էր, որ պարբեականից հետո իր այս երկրորդ ճակատը Պոնտոսի քաջակորության պարտության հետևանքն էր։

Պատերազմի սկզբում Լուկուլլոսը սրափ էր գնահատում իր քանակի հնարավորությունները և նրա առաջ դնում իրագործելի խնդիրներ՝ հարձակվել Հայաստանի հարավային մարզերի վրա, փորձել գրավել Տիգրանակերտը, ետ մղել Տիգրանի քանակի հարձակումը և Օսրոենեով արշավել Սիրիա՝ գրավել Սելևկիան ու Անտիոքը, այդպիսով Տիգրանին ետ մղել Սիցերկրականի ավագանից։

Շատ դժվար է հաշվարկել, որ կողմն ուներ մարտավարական գերազանցություն պատերազմի սկզբին։ Եթե հոռմեական ծանր հետևակի շնորհիլ Լուկուլլոսը զգալիորեն գերազանցում էր Տիգրանին կանոնավոր հետևակային մարտում, ապա նրա բոլոր փորձերը՝ չեղորացնել հայկական հեծելազորի թվային և որակական զգակի գերազանցությունը սեփական և դաշնակից հեծելազորով, անարդյունք էին. հզոր հայկական այրուձին գերակայեց հոռմեականի հանդեպ մինչև պատերազմի ավարտը։

Այսպիսով՝ Տիգրանը գերազանցում էր Լուկուլլոսին ծանր և թերև հեծելազորի քանակով և որակով։ Հոռմեական դաշնակիցներից միայն որոշ թրակիական և զալատական հեծելազորեր ունեին հայկական թերև հեծելազորին հավասար մարտունակություն։ Հայկական կատաֆրակտոսների գնդերը այն գորատեսակն էին, որը ոչ միայն քացակայում էր հոռմեացիների մոտ, ավելին. հոռմեացիները ծանոթ չէին այս գորատեսակի մարտավարությանը։

Հակառակորդների թերև հետևակի մարտունակությունը մոտավորապես հավասար էր։ Հայկական նետածիզների ընտիր գնդերը իրենց փորձառությամբ և մարտունակությամբ

որոշակիորեն գերազանցում էին հակառակորդին, սակայն այս պատերազմում թերև հետևակին նախատեսված էր խաղալ ստորադաս դեր։

Հայկական ծանր հետևակը իր մարտունակությունով համապատասխանում էր միջին փորբասիական մակարդակին՝ բուրանիական ծանր հետևակին, լավագույն գնդերը կարող էին որպես հավասարը հավասարի հետ մարտնչել նաև իմաստ մարտունակ զալատական ծանր հետևակի հետ, սակայն հոռմեական լեզեռններին խիստ զիջում էին փորձով, կարգապահությամբ և ծանր հետևակային մարտավարությամբ։

Հայկական քանակի գումարային ապահովումը ավելի նման էր պարթևականին, այնքան ուռածացած չէր, որքան սելիկյան քանակներինը, սակայն իր քանակով գերազանցում էր, իսկ շարժունակությամբ զիջում էր հոռմեականին։

Զորամիավորումների կազմակերպման կատարելիության իմաստով երկու քանակները գտնվում էին նույն բարձր մակարդակի վրա։

Արշավի անցկացման մեջ հոռմեացիները որոշ չափով գերազանցում էին հայերին։ Վերջինս չէր վերաբերում հայկական հեծյալ զորաբանակներին, որոնք ունակ էին մեծ արագությամբ տեղափոխել պատկառելի հեռավորությունների վրա։

Դաշտային ճամբարներ կառուցելու մեջ հոռմեական քանակը խիստ գերազանցում էր հայկականին, ինչպես նաև անխտիր Հին աշխարհի բոլոր ժամանակների քանակներին։

Ամբողների պաշտպանման և պաշարողական գործողությունների մեջ երկու կողմն էլ տիրապետում էին այն ժամանակաշրջանի բոլոր հայտնի միջոցներին։

Երկու քանակների մարտական ոգին շատ բարձր էր, երկուսն էլ սովոր էին հանուն հայթանակի դիմանալ բարձր հոգեկան և ֆիզիկական լարումներին։ Հակառակորդների քանակների արհեստավարժությունը կասկածից վեր էր։

Տիգրանը և Լուկուլլոսը իրենց ժամանակի լավագույն զորավարներից էին։ Երկուսն էլ ունեին զորամիավորումների լավ զորավարներ և ընտիր սպայակազմ։

Այս պատերազմում միակ հարձակվող կողմը Հոռմը չէր։ Տիգրանը նույնքան զամանակությունը էր տրամադրված Հոռմի դեմ, որքան Լուկուլլոսը՝ Հայաստանի։ Նա արդեն արձակել էր պա-

տերազմի հրաման և Միհրդատին խոշոր՝ 10.000 հեծելազորով ուղարկել դեպի Պոնտոս՝ հռոմեացիների դեմ ուղմական գործողություններ սկսելու և երկիրը Միհրդատին վերադարձնելու համար: Պարզապես Լուկուլլոսին հաջողվեց ավելի շուտ հարձակվել Հայաստանի վրա և այդ պատճառով, ստանալ որոշակի ուղմավարական առավելություն:

Սկզբունքորեն, Տիգրանի համար իր կողմից սկսվող պատերազմը չունի դեմ հարկադրված մի պաշտպանական գործողություն էր՝ Պոնտոսի թագավորությունը փրկելու և *status quo*-ն վերականգնելու համար:



## Գլուխ 5.

Մ.Թ.Ա. 69 թ. ՌԱԶՄԱՐԴԱՎԸ

Հռոմեական պատմությունները Մարիոսի և Սուլլայի հաղթանակների մասին սնապարձ հոետորների խղճով երևակայության արտադրությունն են, որոնք բացարձակ անտարեր էին վերաբերվում իրադարձություններին:

Իրադարձությունների փոխանցումը այն արշավների մասին, որտեղ Լուկուլլոսը և Պոնտեոսը պատերազմը վերսկսելուց հետո սկզբում հաղթում են Միհրդատին, իսկ հետո Տիգրանին՝ Հայաստանի թագավորին, նոյն բնույթն է կրում և մեզ համար ոչ մի արժեք չի ներկայացնում:

...  
K. Eckhardt, Die armenischen Feldzuge des Lucullus.

Berliner Dissert. 1909 (Klio, IX und X). Ռազմաքննադատական դատողությունները բավարար հիմնավորված չեն, ինչի հետ համաձայն է և Գրեքեն («Գերմ. գրակ. թերթ» 1910, № 47).

Հանս Շելլբյուկ, 1920 [100, էջ 354]

Մ.թ.ա. 69 – 67 թթ. հայ-հռոմեական պատերազմը բաղկացած էր երեք՝ 69, 68 և 67 թթ. ռազմարշավներից:

Ըստ անտիկ պատմիչներից մեզ հասած տվյալների՝ 69 թ. ռազմարշավը ներառում էր հետևյալ արշավները, ռազմական ընդհարումները (մարտերը ու խոշոր ճակատամարտերը) և այլ գործողությունները:

### Արշավներ.

1. Լուկուլլոսի բանակի արշավը Եփեսոսից մինչև Կապադովկիայի արևելյան սահման՝ Եփրատ գետը:
2. Լուկուլլոսի բանակի գետնանցումը ու արշավը թշնամու երկրով՝ Ծոփրով և Աղձնիրով դեպի Հայկական կայսրության գլխավոր մայրաքաղաք Տիգրանակերտը:

- 3.Հայ-պոնտական հեծյալ զորաբանակի արշավը դեպի Պոնտու Միհրդատ Ելպատորի հրամանատարությամբ:
- 4.Տիգրանի դաշտային բանակի արշավը Միհրիայից Հայաստան:
- 5.Աղիաբենեի զորքերի արշավը դեպի Տիգրանի բանակատեղին:
- 6.Կողմության զորքերի արշավը դեպի Տիգրանի բանակատեղին:
- 7.Օսրոենեի զորքերի արշավը դեպի Տիգրանի բանակատեղին:
- 8.Իրերական, աղվան և ատրպատականյան զորքերի արշավը դեպի Տիգրանի բանակատեղին:
- 9.Դաշնակից քարակենացիների հեծելարանակների արշավը դեպի Տիգրանի բանակատեղին:
- 10.Դաշնակից սակարառուկների հեծելարանակների արշավը դեպի Տիգրանի բանակատեղին:
- 11.Սուրենայի զորաբանակի արշավը Տիգրանի բանակի դեմ:
- 12.Սերստիլիոսի զորաբանակի արշավը օսրոյենցիների դեմ:
- 13.Տիգրանի բանակի նահանջը Հայկական Տավրոսից հյուսիս Տիգրանակերտի ճակատամարտից հետո:
- 14.Լուկովոսի բանակի արշավը Կողմության ձևուելու համար:

Ռազմական ընդհարումներ.

- 1.Մերուժանի զորաբանակի ճակատամարտը Սերստիլիոսի զորաբանակի դեմ:
- 2.Հայկական այրումիու ճակատամարտ-Ճեղքումը Տիգրանակերտի մոտ:
- 3.Սուրենայի զորաբանակի հարձակումը Տիգրանի բանակի գումակի վրա:
- 4.Տիգրանակերտի պաշարումը և հոռմեական գրոհների հետմրումը Մանկայոսի դեկավարած կայազորի կողմից:
- 5.Սերստիլիոսի զորաբանակի ճակատամարտը Տիգրանի մոտ շտապող Օսրոենեի բանակի դեմ:
- 6.Տիգրանակերտի գլխավոր ճակատամարտը:
- 7.Վարձկաների ապստամբությունը Տիգրանակերտում և քաղաքի անկումը:

Այլ գործողություններ.

- 1.Հայկական ուժերի համախմբումը Հայկական Տավրոսի հյուսիսային ստորոտներին Տիգրանակերտի ճակատամարտից հետո:

- 2.Կողմությի դիմումը Պարթևստանի թագավորին:
- 3.Հայկական բանակի համալրումը և ռազմական ուժորմը:
- 4.Լուկովոսի դիմումը իր զորավարներին Պոնտու՝ օգնություն ուղարկելու հրամանով:
- 5.Տիգրան Բ Մեծի դաշնակից և վասալ կիլիկյան ծովահենների մարտական գործողությունները 69 թ.

## 5.1.Լուկովոսի արշավանքի սկիզբը և առաջին մարտերը

### 5.1.1.Գետնանցում և արշավ դեպի Տիգրանակերտ

69 թ. գարնանը, Լուկովոսի բանակը դրւու եկավ արշավի հայերի դեմ՝ սրբնթաց երթով կտրեց անցավ Կապարդովկիան, Արիորարզանի գաղտնի պատրաստած լաստերով հաջողությամբ անցավ վարարած Եփրատը և ներխուժեց Հայաստան: Հայկական սահմանապահ ուժերը անկարող էին արգելակել այս երթը, նույնիսկ Եփրատամերձ խոշոր ամրոց Տոմիսայի կայազորը չկարողացավ խոշներուել հոռմեական բանակի գետնանցին:

Լուկովոսը արագացված երթով շարժվեց դեպի Տիգրանակերտ: Տիգրանի հիմնական ուժերը դեռ գտնվում էին իր հայկական տերության հարավում՝ Փյունիկիայում և Հարավային Միհրիայում, ուստի ժամանակի գործոնը Լուկովոսի համար ձեռք էր բերում արտակարգ նշանակություն:

Փորձենք պարզել հոռմեական բանակի արշավի որոշ մարմանանությունները:

Պլուտարքոսը վկայում էր, որ Լուկովոսը, ճանապարհ մինչև Եփրատ անցավ արագացած երթով: Եփեսոսից մինչև Կապարդովկիան և Հայաստանը բաժանող Եփրատը մոտավորապես 900 հոռմեական մղոն էր, որը Լուկովոսի բանակը կարող էր անցնել մոտավորապես 45-50 օրում:

Ակզբում Լուկովոսի բանակը արշավում էր Հոռմին պատկանող տարածքներով, հետո դաշնակից երկրի՝ Կապարդովկիայի վրայով: Նա կարող էր ունենալ թերեւացված գումակ և

խուսափեր երեկոյան դաշտային ճամբար կառուցելու պարտականությունից: Դրա շնորհիվ նա կարող էր օրական անցնել ոչ թե 15, այլ 20 և նույնիսկ մինչև 23 մղոն (վերջինս՝ ոչ մշտական): Այսպիսի հեռավոր արշավների ժամանակ հետիունն բանակի ուժերը պահպանելու և, միաժամանակ, բանակին վերաբերող տարրեր տնտեսական խնդիրները տեղին կարգավորելու համար անհրաժեշտ էր 5-10 օր անընդհատ երթից հետո մեկերկու օրվա հանգիստ տալ զինվորներին: Եթե հաշվի առնենք, որ Լուկովոսի համար արագությունը շատ մեծ նշանակություն ուներ, ապա կարող ենք համարել, որ 10 օրանոց անընդհատ երթից հետո նա բանակին տալիս էր մեկ, ավելի հավանական է՝ երկու օր հանգիստ, որը նաև օգտագործում էր ստորաբաժանումներում մարտավարության պարապմունքներ անցկացնելու համար: Հատկապես դա կարող էր դաշնակիցների նորաստեղծ կոհորտները մարզելու համար: Այդպես, նա միաժամանակ հասնում էր երկու նպատակի՝ համախմբում և ամրացնում կազմը դաշնակիցների և յուրայինների հետ, երկրորդը՝ զինվորները հասցնում էին հանգստանալ և պահպանել իրենց մարտունակությունը:

Եփեսոսից դուրս գալուց մոտավորապես մեկուկես ամիս հետո Լուկովոսը արդեն նվիրատի ափին էր, որը նա արագ անցավ ի շնորհիվ Արիորարզանի կարգադրությամբ գաղտնի պատրաստած լաստերի: Հայկական հետախուզությունը դրժվար թե նկատած չյիներ սահմանամերձ շրջանի այս աշխատությունը, ուստի կարելի է մտածել, որ Տիգրանը տեղեկացված էր Լուկովոսի ներխուժման ուղղության մասին:

Պատերազմը սկսելուց հետո (Ծոփքում Լուկովոսը արդեն թշնամական տարածքում էր) Լուկովոսի բանակի առաջինացման տեմպը նվազեց, որովհետև հռոմեացիները արդեն շարժվում էին լիարժեք գումարկով և ամեն երեկո ստիպված կառուցման էին դաշտային ճամբար:

Եփրատն անցնելուց հետո հռոմեացիներին մինչև Տիգրանակերտ մեռում էր քայլել միայն 200-235 մղոն՝ նշանակում է 12-15 օրվա ճանապարհ:

Տիգրանը իր փոքրասիական գործակալների և լրտեսների շնորհիվ Լուկովոսի արշավանքի երթուղու մասին տեղեկացվել էր ավելի շուտ, քան վերջինս հայտնվել էր Եփրատի ափին:

Այդ պահին, ըստ երևույթին, Տիգրանը եփրատամերձ Սելսկիա ամրոցի մոտ էր: Այստեղ էր, ըստ երևույթին, նա հանդիպել էր Սիհրդատ Եվպատորի հետ (Տիգրան Սեծը արդեն գրավել էր Պողոմայիսը, հասցը Եփրատի գետնանցը՝ Սելսկիա ամրոց՝ գերված Սելսկիա Սելենե-Կլեոպատրա թագուհուն, որտեղ վերջինս ենթարկեց մահապատճի: Ըստ երևույթին, Տիգրանը այստեղ էր նախապես հրավիրել Սիհրդատին: Եթե օր խորհրդակցելուց հետո որոշվեց պատերազմ հայտարարել Հռոմին և Սիհրդատին՝ ի համալրումն իր 4.000 հեծյալ թիկնազորին, տրվեց ևս 6.000 ընտիր հայկական հեծելազոր՝ Պոնտոս արշավելու համար:

Սիհրդատ Եվպատորի հեծյալ գորարանակի կազմը հետևյալն էր:

- 2.000 պոնտական հեծելազոր, որով ինքը 71 թ. անցել էր Հայաստան:
- 2.000 պոնտական հեծելազոր, որը նշվում է պատմիչների կողմից՝ սլյած 69 թ.: Ըստ երևույթին, այս հեծելազորը կազմված էր 71-69 թթ. Պոնտոսից Հայաստան անցած միհրդատյան զինվորականներից: Թե՛ առաջին, թե՛ երկրորդ զորագնդում Սիհրդատի մոտ ծառայում էին հարյուրավոր և հազարավոր հայեր Փոքր Հայրից: Կարելի է եղանակացնել, որ միհրդատյան 4.000 հեծելազորի մոտավորապես կեսը Փոքր Հայրի զինվորներն էին:
- Տիգրանը Սիհրդատին Սելսկիայում տրամադրում է 2.000 կատաֆրակտոսու ու 2.000 թեթև հեծելազոր, ընդամենը 4.000 զինվոր:
- Տիգրան Սեծը հրամայում է, որ Ծոփքի և Աղձնիքի բդեշխությունների կատաֆրակտոսների զները միանան Սիհրդատի զորաբանակին (մենք արդեն խոսել ենք բդեշխների զորաբանակների հնարավոր կազմի մասին): Այդպիսով, ճանապարհին Սիհրդատին են միանում ևս 2.000 կատաֆրակտոս, որոնց հետ միասին Սիհրդատի բանակը հասնում է 10.000 հեծյալի, որից 4.000 ծանրազեն: Այս պատկառելի ուժը ընդունակ էր դրս վուելու Պոնտոսից հռոմեացիներին, որը ապագայում ապացուցվեց 68-67 թթ. իրադարձություններով:

Այս մանրամասնությունները պարզելուց հետո հասկանալի է դառնում Մեհրուժանի զորաբանակի մասին Պլուտարքոսի և Ապահանսուի հաղորդումների տարբերության պատճա-

որ: Առաջինը պատմում է Ծոփքի բդեշխ Մեհրուժանի գորաբանակի մասին՝ 3.000 հեծյալ և շատ ավելի հետևակ (իմացիր 6.000 զինվոր), երկրորդը՝ Միհրդատին կատաֆրակտոսների գունդը հանձնելուց հետո Մեհրուժանի մոտ մնացած հեծյալների թվի մասին՝ 2.000 զինվոր: Ապահանոսը, լավ իմանալով երրորդ պոնտական պատերազմի ժամանակ պոնտական (որը մեծ մասով նոյն վիճակում է) այրումին նշանակությունը հոռմեացիների դեմ պայքարում, այնքան չի կարևորում հայկական հետևակի մասնակցությունը ծավալված ճակատամարտում, որ նշում է միայն Մեհրուժանի 2.000 հեծյալներից բաղկացած գորագունդը: Մեհրուժանի գորաբանակի մասին ավելի մանրամասն կիսունքը ստորև:

Լուկուլլոսի արշավանքի մասին արքայից արքան իմացել էր այն ժամանակ, երբ Միհրդատը իր գորաբանակով արդեն Հայաստանվ շարժվում էր դեպի Պոնտու:

Ինքը՝ Տիգրանը, Լուկուլլոսին հակադրվելու համար դեռ պետք է հավաքեր իր զորքերը, որոնց հիմնական մասը դեռ Միհրայի հարավում էր, և Հայաստան հասնելու համար նրանք պետք է անցնեին մոտ 150-190 փարսախ ճանապարհ:


Հաշվի առնելով հարավսիրիական պատերազմի ավարով խիստ ծանրաբեռնված գումակը, դա հնարավոր էր ոչ պակաս, քան երկու ամսում, կամ ավարի մի մասը պետք է թողնվեր Անտիոքում:

Հաշվի առնելով Փոքր Ասիայի պատմական կլիմայաբանությունը [64], կարող ենք ենթադրել, որ Լուկուլլոսի բանակը դուրս էր Եկեղ Եփեսոսից ոչ շուտ, քան մարտի վերջին – ապրիլի սկզբին ու շարժվել դեպի Հայաստան, իսկ Ծոփք էր հասել մայիսի երկրորդ կեսին:

Տիգրանի գործակալները Փոքր Ասիայում վատահաբար կարող էին որոշել հոռմեական բանակի երթուղին Լուկուլլոսի մեկնելուց մոտավորապես մեկ-երկու շաբաթ հետո և տեղեկացնել այդ մասին արքայից արքային ամենաշուտը ևս մեկ-երկու շաբաթում: Այդպիսով, Տիգրանը տեղեկանում էր Լուկուլլոսի արշավանքի մասին այն ժամանակ, երբ Լուկուլլոսը արդեն անցել էր իր դաշնակից Կապանովկիայի տարածքի կեսից ավելին: Նոյնիսկ եթե Տիգրանին հաջորդեր վերջացնել գործերը Միհրիայում և կարգավորել իր բանակը, այնպես, որ

մեկ ամիս հետո դուրս գար արշավի Լուկուլլոսի դեմ, միևնույն է, նա հասնում էր Տիգրանակերտ ավելի ուշ, քան Լուկուլլոսը:

Հայաստան՝ Աղձնիք վերադառնալուց բացի, Տիգրանը պետք է տեղեկացներ Միհրդատ Եվպատորին հայկական հեծյալ գորագունդը նրա հրամանատարության տակից հանելու և Տիգրանակերտ ուղարկելու մասին: Այստեղից, անվտանգության նկատառումներից ելենով, անհրաժեշտ էր դուրս բերել Տիգրանի կանանցը և զանձերը: Ըստ երևոյթին, Միհրդատը արդեն Հայաստանի արևմտյան մասում էր, երբ նրա մոտ գունվոր հայկական հեծելազորին Տիգրանը հրամայեց շրջվել դեպի Տիգրանակերտ: Ստացվեց այնպես, որ հոռմեացիները և հայկական հեծելազորերը Տիգրանակերտի մոտ հայտնվեցին գրեթե միաժամանակ, հայերը մի փոքր ուշ:



Քարտեզ 5.1. Սարտնչող կողմերի տեղակայումը և արշավանքները. Լուկուլլոսի արշավանքը Հայաստան

Ինչ ու Միհրդատի 4.000 հեծյալ գորագունդը շմանակցեց Տիգրանակերտից կանանցի և զանձերի դուրս բերման

գործողությանը: Վերջապես, Միհրդատը Տիգրանակերտից պետք է էվակուացներ սեփական դստերը՝ Կլեոպատրային: Ինձ թվում է, որ դրան կա շատ տրամաբանական պատասխան՝ Միհրդատի հարձակողական ֆունկցիան Պոնտոսում ընդհատվեց, սակայն մնաց պաշտպանականը. անհրաժեշտ էր ապահով պահել հայկական սահմանը Պոնտոսում գտնվող հոռմեական գործերի հենարավոր ներխուժումից: Միհրդատի 4.000 հեծելազորը և Գուգարքի բդեշխի գորաբանակը այն ուժերն էին, որոնք մշտական սպառնալիք էին ստեղծում հոռմեացիների համար Փոքր և Մեծ Հայքի սահմանագլխին:

Պատմիչների կողմից Ծոփքի բնակչությանը հղած այն մեղադանոթությունը, որ նրանք չդիմադրելով հոռմեական բանակին, դավաճանեցին Տիգրանին, ըստ երևոյթին իրական վիճակը չհասկանալու կամ Տիգրանի իշխանությունը մեկ անգամ ևս նսեմացնելու տարրական փորձ է, մի սովորական հերոյությանը, որը հաճույքով կրկնում են զրեթե բոլոր ժամանակակից պատմաբանները: Պոլտարքոսը գրում էր, որ ծոփքեցիները, հիշելով իրենց նախկին անկախությունը, հարեցին Լուկուլլոսին և չխոչընդոտեցին նրա երթին դեպի Տիգրանակերտ: Այս պնդումը ավելի շատ նման է ցանկալին իրականի հետ խառնելու մարդկային հայտնի թուլությանը: 69 թ.-ին Ծոփքը արդեն քառորդ դար հայկական տերության կազմում էր, արդեն մեծացել էր նոր սերունդ, որը սովորել էր հպարտանալ իր հայրենիքի փառքով և օգուլել Տիգրանի քաղաքականության օգուտներից: Անտիկ պատմիչների այս պնդումը ինձ համար բացարձակ անընդունելի է:

Արդյո Լուկուլլոսը պաշարել էր Ծոփքում որևէ քառաք, կամ ամբող և չեր հանդիպել դիմադրության: Ոչ, հոռմեական բանակը սրբնարաց շարժել էր դեպի Տիգրանակերտ: Ի՞նչ պետք է անեն Ծոփքի հայերը. դուրս գային դաշտ 55.000-ոց հզոր հոռմեական բանակի դեմ և կոտորվել ին հանուն արքայից արքա Տիգրանի: Եթե Հաննիքալը ներխուժել էր Հյուսիսային Խոսակա, տեղի հոռմեացի բնակիչները ինչ ու չընդդիմացան ահեղ ախտյանին և դուրս չեկան դաշտ՝ կոտորվելու հանուն չոռմի փառքի: Այս անհեթերության մասին մեկ անգամ պետք է խոսել, որ հետագայում այլևս չընսարկվի: Ծոփքի ազնվականությունը արդեն քառորդ դար կազմում էր հայ ազնվականու-

թյան անբաժանելի մասը, Հայկական կայսրության տարբեր մասերում վարում տարբեր պատասխանատու պաշտոններ, իսկ արհավիրքի պահին Մեհրուժանի բանակի կազմում անվեհեր մարտնչեց հանուն իր և համահայկական սպազայի համար:


Առաջինը՝ Ծոփքում էր գունվում Մեհրուժանի խոշոր զորաբանակը, որի խնդիրն էր դիմակայել Կապադովկիայի կողմից ներխուժած հոռմեացիներին: Մեհրուժանը, ըստ որոշ հեղինակների հայտնած կարծիքների, ենուն Ծոփքաց երկրի մեծատոհմիկ ազնվականներից էր, գուցե և նախկին թագավորի ազգականներից [34]: Իր հրամանաստարության տակ գտնվող 8-10.000 գորաբանակի մեծ մասը կարող էր կազմված լինել հենց իր՝ Ծոփքի բդեշխականում հավաքագրված զինվորներից, որոնց հերոսական պայքարի մասին մենք դեռ կխոսենք:

Երկրորդը՝ ես կցանկանայի տեսնել, ինչպես էր դիմադրելու իր գուտ կամ փորբիկ գուտաքաղաք մտնող 5.000-ոց գորաբանակին ժամանակակից գուտացին ու քաղաքացին, որ պատկերացնելի 2.100 տարի առաջ նման սիրագործությունը 55.000-ոց հոռմեական բանակի դեմ Ծոփքում:

Լուկուլլոսը Ծոփքից պահանջեց մթերք և իր գորքերի համար հանգիստ անցում Աղձնիք՝ դեպի Տիգրանակերտ և ստացավ: Ծոփքի հայերի համար դա անտեղի չկողոպտվելու և չզնչանալու հնարավորություն էր: Լուկուլլոսի համար՝ արագությունը չկորցնելու հնարավորություն: Սակայն այն, որ Լուկուլլոսը արշավեց Ծոփքի վրայով երկու եշելունվ հետևից թիկունքի ապահովության համար ունենալով մեկ լեզեն, Ծոփքի հայերի հանդեպ Լուկուլլոսի անվտանգության և երկյուղի խոսուն վկայություն էր:

Լուկուլլոսի բանակի երթուղին դեպի Տիգրանակերտ ճշշտված է Հակոբ Մանանյանի կողմից (Քարտեզ 5.2.) [29]:

Առաջին լուրջ հակագեցությունը ներխուժած հոռմեական բանակին, ցույց տվեցին Մեհրուժանի (Միհրաբարզանի) գորքերը Տիգրի գետի մոտակայքում:



Քարտեզ 5.2. Լոռի լուսակի երթուղին դեպի  
Տիգրանակերտ (ըստ Հ. Մանանյանի)

### 5.1.2. Մերուժանի գորաբանակի մարտը Սերստիլիոսի հետ

Պլուտարքոսի այս հաղորդումը, որ Միհրաբարզանը Տիգրանի կողմից ուղարկվել էր Լոռի լուսակի դեմ, որովհետև հոռմացիների ներխուժման մասին հայտնել էր առաջինը, ժայռ առաջացնող ինսինուացիան:

Հայտ երևույթին, Միհրաբարզանը՝ Մերուժանը, որը Հայաստանի չըս կողմանապահներից՝ բդեշխներից մեկն էր, պարտավոր էր տեղեկացնել իր արքայից արքային ինչպես նաև Աղձնիք բդեշխին՝ Մանկայոսին (Մամ' իլ), որը նաև Տիգրանակերտի կայազորի պարետն էր, ռազմաբաղարական իրավիճակի կտրուկ փոփոխության մասին:

Չի բացառվում, որ Տիգրանը այս ռազմավարական ուղղության վրա, որը ամենամոռն էր Հռոմի գերիշխանության ոլորտում գտնվող Կապադովկիային, պահում էր հասուկ գորաբանակ, որի հրամանատարը հենց Մերուժանն էր:

Լոռի լուսակի վրա Մերուժանի գորաբանակի հարձակման մասին մենք տեղեկանում ենք Պլուտարքոսից և Ապիհանոսից:

Ապիհանոսը ճակատամարտի ոչ մի մակրամասնություն չի պատմում, եղան է որ Մերուժանը հարձակվեց Լոռի լուսակի վրա 2.000 հեծյաներով, պարտվեց և փախուատի դիմեց: Պլուտարքոսի հաղորդումը շատ ավելի մակրամաս է:

Պլուտարքոսը վկայում էր, որ բացի 3.000 հեծյաներից, հոռմացիների վրա հարձակվել են ավելի շատ թվով հետևագորայիններ: Նշանակում է, կարելի է ենթադրել, որ Միհրաբարզանի գորաբանակը բաղկացած էր 3.000 հեծյալից և մոտավորապես 6-7.000 հետևակից՝ մոտ 10.000 զինվոր (հնարավոր է, որ հեծելազորից մի գունդ՝ 1.000 հեծելամարտիկ, լինեն զրահապատ և 7.000 հետևակը ունենար հետևյալ կազմ՝ 2.000 նետաձիգներ, 2.000 նիզակակիրներ, 2.000 վահանակիրներ ու 1.000 սակրավորներ՝ եթե հետևենք հայկական բանակի մեր վերականգնմանը): Գորաբանակի կազմում զրահապատ հեծելազորի բացակայությունը կարող էր կապված լինել այդ գնդի, (ինչպես նաև Աղձնիքի բդեշխի՝ Մանկայոսի ենթակայության տակ գտնվող կատաֆրակտուսների գնդի) ներզրավումով Միհրդատ Եվպատորի հրամանատարության տակ Պոնտոս արշավոր հայկական հեծյալ գորաբանակի կազմի մեջ:

Սակրավորները և գումակը դժվար թե մասնակցած լինեն հոռմացիների վրա կատարած հարձակմանը, նշանակում է՝ հոռմացիների վրա հարձակվել են 8.000 զինվոր (հայկական տիպային գորաբանակը առանց կատաֆրակտուսների և օժանդակ գնդերի):

Ապիհանոսը արդեն գիտի, որ Մերուժանի մոտ մնացել էր միայն 2.000 հեծյալ, որովհետև 1.000 կատաֆրակտոս վերաենթարկվել էին Միհրդատ Եվպատորին: Ապիհանոսը, որը բարձր չէր գնահատում թե՛ Միհրդատի, թե՛ Տիգրանի հետևակի մարտական կարողությունները և համարում էր, որ հոռմացիներին հիմնական վտանգը զայս էր արքաների հզոր հեծելազորից, հայկական հետևակի մասին այստեղ անզամ հարկ չի համարում հիշատակել:

Հայկական գորաբանակի կազմը կարող էր նաև տարբերվել ներկայացվածից. Ճակատամարտի ընթացքը դրանից էականորեն չի փոխվում:

Մերուժանը, լինելով փորձված գորավար, քաջ գիտակցում էր, որ իր 8-9.000 գորաբանակով չի կարող պարունակյան մատնել հոռմացին 55.000 զորքին: Մասր ստորաբաժանում-

ներով դժվարացնել հռոմեացիների առաջսաղացումը ևս չէր հաջողվում: Լուկուլլոսի հրամանատարները և զորքերը վարժ են այդպիսի մարտերին: Տեղանքը բարենպաստ չէր դարանակալելու համար: Միայն Տիգրիսի մոտ հայկական բանակը հնարավորություն է ստանում անսպասելի մոտենալ հռոմեացիներին: Ըստ երևույթին, հռոմեացիները մի փոքր թուլացրել էին իրենց զգնությունը:

Սեհրուժանը ընտրում է այն պահը, երբ երեկոյան հռոմեացիների մի մասը արդեն սկսում է ճամբարի կառուցումը, մյուսը շրջակայրում պարեն էր հայրայթում, իսկ հռոմեացիների մի զգալի մասն էլ դեռ երթի ընթացքում էր: Եթե հետևենք հռոմեական արշավակարգի մեր վերականգնմանը, ապա կարող ենք ենթադրել, որ Փիմբրիայի լեզեռնային գորամիավորման գինվորները արդեն սկսել էին ճամբարի կառուցումը, Սեհրստիլոսի ստորաբաժանումների զգալի մասը արդեն սկսել էր շրջակա զուտերում պարեն հավաքել, իսկ գումակը և Սուրենայի գորաբանակը դեռ երթի մեջ էին, երբ հայերը հարձակվեցին նրանց վրա:

Ցանկացած բանակի համար այս վիճակը խիստ վտանգավոր է և Լուկուլլոսի տագնապը միանգամայն տեղին ու հասկանալի էր:

Սեհրուժանի այրումին սրբնթաց հարձակվում է պարեն հայրայթող հռոմեական ստորաբաժանումների վրա, որոնց նոր էր զգուշացրել հարձակման մասին հռոմեական հետախուզությունը: Հռոմեացիների մի մասը կոտորվում է, մյուսը կազմակերպված համատորեն դիմադրում էր, երբ նրանց վրա է գրոհում Սեհրուժանի գորաբանակի հայկական հետևակը: Թեժ մարտը ընթանում է հայերի ակնհայտ առաջելությամբ:

Լուկուլլոսը այս հարձակումից խիստ անհանգստանում է և հարձակմանը ենթարկված գորամասերին օգնության է ուղարկում լեզատ Սեհրստիլոսին 1.600 հեծյալով և թիշ ավել (որք ան ավել՝ 2-3.000 լեզեռն էր) թեթևագեն և ծանրագեն հետևակայիններով, հրամայելով (Պլուտարքոս) «... մոտենալ և դիմադրել թշնամուն և սպասել լուրիք» թե Լուկուլլոսի հետ մնացած գորքը արդեն տեղավորվել է ճամբարում: Սեհրստիլոսը ուզում էր այդպես էլ վարվել, բայց Սեհրուժանը հանդուզն հարձակմամբ ստիպեց նրան կովի բոնվել, և մարտն սկսվեց: Սեհրուժանն ընկալ գենքը ձեռքին, նրա զինվորները, բացի քշերից, փախչելուց սպասեցին: «Պլուտարքոս, Լուկուլլոս, 25, էջ 62) [42]:

Սեհրստիլոսի խնդիրն էր պաշտպանվել Սեհրուժանից այնքան ժամանակ, մինչև բոլոր հռոմեացիները կհասնեն ճամբար: Սեհրուժանի հարձակումը բախումը վերածում է լուրջ ճակատամարտի:

Տեղի ունեցած կատաղի մարտում թվային ակնհայտ գերազանցություն ունենալու հռոմեացիները. Սեհրստիլոսի հետևակը և հեծելազորը օգնության էին գնացել հայերի հարձակմանը ենթարկված իրենց սեփական գորամասերին, որոնք միասին պատկառելի ուժ էին՝ 12.000 հետևակային և 3.000 հեծյալ՝ 8.000 զինվորներից բաղկացած հայկական բանակի դեմ:

Սեհրստիլոսին մեծ դժվարությամբ հաջողվում է կասեցնել հայերի գրոհը: Սեհրուժանը զոհվում է մարտում, հայկական գորքի մասնադիրները նահանջի, հետո փախտատի են դիմում: Հռոմեացիները հետապնդում և կոտորում են նրանց մի մասին:

Պլուտարքոս.

«Տիգրանի մերձավորներից առաջինը Սեհրուժանն էր, որ համարձակվեց նրան ճշմարտությունը հայտնել: Նա ևս իր անկեղծության համար վաստ պարզեց ստացավ: Եթեք հազար հեծյալով և մեծաթիվ հետևակով ևս անմիջապես ուղարկվեց Լուկուլլոսի դեմ՝ զորավարին կենդանի բրնձու, իսկ մյուսներին կրոսորելու հրամանով: Այդ ժամանակ Լուկուլլոսի գորքի մի մասն արդեն տեղավորվում էր ճամբարում, իսկ մյուս մասը դեռևս ճանապարհին էր: Երբ առաջապահ հետախուզները հաղորդեցին թշնամու մոտենալու մասին, Լուկուլլոսը անհանգստացավ, որ հակառակորդը հարձակվելով իր՝ դեռևս ցրված ու չկարգավորված գորքի վրա, կարող է խուճապ առաջանալ:

Ուստի և ինքը շարունակեց կարգավորել ճամբարը, իսկ լեզատ Սեհրստիլոսին նախապես ուղարկեց թշնամու դեմ 1.600 հեծյալով և թիշ ավելի՝ ծանրագեն ու թեթևագեն հետևակով՝ հրամայելով նրան մոտենալ ու դիմադրել թշնամուն և սպասել լուրիք, թե Լուկուլլոսի հետ մնացած գորքը արդեն տեղավորվել է ճամբարում: Սեհրստիլոսը ուզում էր այդպես էլ վարվել, բայց Սեհրուժանը հանդուզն հարձակմամբ ստիպեց նրան կովի բոնվել, և մարտն սկսվեց: Սեհրուժանն ընկալ գենքը ձեռքին, նրա զինվորները, բացի քշերից, փախչելուց սպասեցին: «Պլուտարքոս, Լուկուլլոս, 25, էջ 62) [42]:

Ճակատամարտի ընթացքը կարելի է բաժանել չորս փուլի.

1. հայոց հեծելազորի և հետևակի գրոհը պարեն հայթայթող հոռմեական ստորաբաժանումների վրա.
2. հայոց հեծելազորի և հետևակի գրոհը հոռմեացիներին օգնության հասած Սերստիլիոսի գորաբանակի վրա.
3. հոռմեական հեծելազորի և հետևակի հակազորի Սերուժանի գորաբանակի վրա.
4. Սերուժանի մահը, հայկական գորաբանակի նահանջը և փախուստը:

Առաջին փուլ՝ հայոց հեծելազորի և հետևակի գրոհը պարեն հայթայթող հոռմեական ստորաբաժանումների վրա


Սերուժանի հետախուզությանը վերջապես հաջողվում է մասնակիորեն վնասազերծել հոռմեական հետախուզությանը, որը թույլ է տալիս Սերուժանին կազմակերպել հումկու գրոհ հոռմեացիների վրա նրանց համար ամենաաննպաստ պահին:

Լուկովոսը արշավում էր դեպի Տիգրանակերտ արդեն մեկ շարայունով՝ չորս գորամիավորումներով: Ըստ երևոյթին, առջևում էին առաջին և երկրորդ Փիմբրիական լեգեոնները, հետո Սեքստիլիոսի լեգեոնը, հոռմեական բանակի ողջ գումարը և վերջում՝ Սուրենայի լեգեոնը: Հոռմեական գորաբանակները շարժվում էին խիստ հերթականությամբ՝ առջևում հոռմեական լեգեոնը, հետո դաշնակից ծանր հետևակը, ապա թերթազենների և հեծելազորի ստորաբաժանումները: Հոռմեական բանակը խիստ հետևում է արշավի կանոններին, առջևից և հետևից շարժվում էին, համապատասխանաբար առաջապահ և վերջապահ գործքերը, թերթը վերահսկվում էին կողմնապահ ստորաբաժանումները: Նրանք տեղանքը հեղեղել են իրենց հետախույզներով:

Արշավից արդեն անցել էր մի քանի օր: Արշավում 55.000 բանակի շարայունների երկարությունը առնվազն 10 մրդն էր: Ըստ Պլուտարքոսի, հոռմեական բանակի զիսամասը արդեն հասել էր ճամբարի համար ընտրված տեղին և սկսել էր ճամբարի կառուցումը: Բանակի մի մասը դեռ երթի մեջ էր, իսկ ճամբարի տեղանքը հասած ստորաբաժանումների մի մասը շրջակա զյուղերում և վայրերում մթերք էր հայթայթում:

Բանակը, որ ամեն գիշեր տեղակայվում էր նոր պատրաստված դաշտային ճամբարում, գտնվում էր ապահով վիճակում: Սակայն մինչև այս ապահովությանը հասնելը նա

մի քանի երեկոյան ժամ շատ անցանկալի լարված վիճակում էր: Այս ժամերը հոռմեացիները միշտ չեն սիրել հակառակորդի հետ հանկարծակի բախման հնարավորության համար:



Գծանկար 5.3. Սերուժանի գորաբանակի ճակատամարտը Լուկովոսի դեմ. Առաջին փուլ՝ հայոց հեծելազորի և հետևակի գրոհը պարեն հայթայթող հոռմեական ստորաբաժանումների վրա:


Սերուժանը իր հարձակումը կազմակերպեց հոռմեացիների համար ամենաչիրած եղանակով: Նրան հաջողվել էր համեմատաբար աննկատ մոտենալ հոռմեական բանակին: Հոռմեացիների համար հանկարծակի, հայկական հեծելազույերը սլանում են ճամբարի մոտակա տարածքներում մթերք հավաքող հոռմեացիների վրա: Հարձակումն այնքան սրբնեաց էր, որ հոռմեական հետախուզության զգուշացումը հասնում է յուրայիններին հայ հեծյալների հետ միասին: Այն հոռմեական զոկատները, որոնք հարձակման ճանապարհին էին, կոսորվում են, մնացածը հայերի հետ բռնվում են ձեռնամարտի: Սակայն հոռմեացիների վիճակը ծանր է և ավելի է ծանրանում, երբ վրա է հասնում հայկական հետևակը: Ցրված հոռմեական

զորամասերին սպառնում է ոչխացում: Դլուտարքոսը լավ է նկարագրում Լուկովոսի տագիապը. նա դեռ չփսի հարձակվողների ընդհանուր թիվը, կա մշտական վախ, որ հայերը այսուել հասցրել են կենսորուացնել մեծ ուժեր և դիմում են վճռական գրոհի: Հռոմեացիները ունեն զգալի կորուստներ:

Լուկովոսի հրամանով իր՝ հարձակման ենթարկված զորամասերին անհապաղ օգնության է գնում լեզատ Սեբաստիլուոր 1.600 հեծելազորով և մի քանի հազար լեգեոներներով:

**Երկրորդ փուլ հայոց հեծելազորի և հետևակի զրոհի հռոմեացիներին օգնության հասած Սեբաստիլոսի զորաբանակի վրա**


Նկատելով Սեբաստիլոսի մոտեցող զորամասերին՝ Մեհրուժանը իր հեծելազորի և հետևակի մի մասով զրոհում է Սեբաստիլոսի վրա: Վերջինս հարձակվելու վոխարեն, հարկադրված է պաշտպանվել: Ըստհարումը վերածվում է համաձակատամարտի: Ակզրնական շրջանում հռոմեացիները մեծ դժվարությամբ են ետ մղում հայկական զորամասերի զրոհը:



Գծանկար 5.4. Մեհրուժանի զորաբանակի ճակատամարտը Լուկովոսի դեմ. Երկրորդ փուլ՝ հայոց հեծելազորի և հետևակի զրոհը Սեբաստիլոսի օգնության հասած զորաբանակի վրա:

**Երրորդ փուլ, հռոմեական հեծելազորի և հետևակի հակազոռող Մեհրուժանի զորաբանակի վրա**

Ճակատամարտի ընթացքում անընդհատ մարտի դաշտին են մոտենում տարածքում ցրված Սեբաստիլոսի լեգեոնի (զորամարտիրման՝ զորաբանակի) հետևակի և հեծելազորի նոր խմբեր՝ կոհորտները և ապաները: Հռոմեացիների թվային գերակշռությունը ավելի ու ավելի մեծանում է: Պաշտպանվող կողմը արդեն հայերն են, որոնք, ասես չնկատելով ուժերի աճող անհավասարությունը, համառորեն կովում են հռոմեացիների դեմ:




Գծանկար 5.5. Մեհրուժանի զորաբանակի ճակատամարտը Լուկովոսի դեմ. Երրորդ փուլ՝ հռոմեական հեծելազորի և հետևակի հակազոռող Մեհրուժանի զորաբանակի վրա:

Սեբաստիլոսը, տեսնելով իր թվային զգալի առավելությունը՝ 13-14.000-ի դեմ, ձգուում է շրջապատել հայոց գլուխը: Սարտը սաստկանում է: Մեհրուժանը սուրը ձեռքին կրվում է առաջին շարքերում՝ ոգլուրելով իր զինվորներին: Անհրաժեշտ էր ևս մի փոքր դիմանալ հռոմեացիների սաստկացող

Ճնշմանը՝ մինչև լրիվ գիշերեւը, որից հետո դուրս բերել զորաքանակը մարտից: Եթե այդ ամենը հաջողվեր, ապա հայ զորավարը իր մարտական խնդիրը կհամարեր լուծված: Գիշերը անհամեատ ավելի հեշու նա կառկվեր թշնամուց և կոլիրքավորվեր մոտակայրում:

#### Չորրորդ փուլ՝ Սեհրուժանի մահը, հայկական զորաքանակի նահանջը և փախուատը

Այսուեւ տեղի է ունենում այն, ինչ ծանրագույնս է անդրդադանում մարտնչող հայկական զորաքանակի վրա: Մարտուն հերոսաբար զոհվում է հայոց հրամանատարը՝ Սեհրուժանը: Նոյնիսկ Պատարքոսի սուր հաղորդումից երեսում է՝ ինչ ազդեցություն ուներ իր հայրենակիցների վրա այս անվեհեր զորավարի պահվածքը:



Գծանկար 5.6. Սեհրուժանի զորաքանակի ճակատամարտը Լուկուլլոսի դեմ. Չորրորդ փուլ՝ Սեհրուժանի մահը, հայկական զորաքանակի նահանջը և փախուատը:

Մեծ զինվորականի մահը թուացրեց հայոց մարտական ոգին, իսկ հոռմեացիները սաստկացրին ճշշումը: Հրամանա-

տարությունը ստանձնած հազարապետները, որոնք մարտընչում էին նրա կողքին, սկզբում փորձեցին նահանջել, բայց հետո չկարողացան պահել զորքը, որը կազմալուծվեց և դիմեց փախուատի: Հոռմեացիները հետապնդեցին պարտվածներին, սակայն նորահաս գիշերը և Լուկուլլոսի կտրուկ պահանջը՝ բոլորին անհապաղ հավաքվել ճամբարում, վերջ որեցին հայերի հետապնդմանը:

Հայկական զորքի ցար ու ցրիվ եղած ստորաբաժանումները գիշերը սկսեցին հավաքվել հոռմեական ճամբարից բավականին հեռու մոտակա անմատչելի վայրերում:

Հոռմեացիները շահեցին ճակատամարտը միայն իշխորհիլ Սեհրուժանի մահվան: Եթե հայկական զորաքանակը կազմակերպված դուրս ցար ճակատամարտից և հետազյում է ս հետևեր թշնամու բանակին, մենք միանչանակ կխոսեինք հայերի հարթանակի մասին: Սակայն Սեհրուժանը զոհվեց, և հայերը պարտվեցին: Լուկուլլոսն էլ, իր հերթին, առաջին անգամ զգաց հայոց բանակի հարվածի ուժը:

#### Ճակատամարտի ընթացքի վերլուծությունը

Ճակատամարտի ժամանակ Սեհրուժանի զործողությունները նապատակավաց են և ենթադրում են ձևավորված ուազմավարություն: Թշարկենք հայկական մարտավարության որոշ տարրերը:

- հայոց զնդերը կարողացել են մոտենալ և ընդունել մարտական կարգ, մինչև նկատվել են հոռմեական հետախուզության կողմից.
- ճակատամարտի համար ընտրվել էր երեկոն՝ ելեկով երկու կարետր հանգամանքից՝

ա. հոռմեական բանակի համար իսկամ աննպաստ էր մարտ վարել ճամբարի կառուցման պահին: Նման հնարքի մասին մեզ հայտնի են բազմաթիվ դեպքեր հոռմեական ուազմական պատմություններ:

բ. անհավասար մարտը կարող էր վերջանալ անհաջողությամբ, որի դեպքում ավելի ոյուրին էր նահանջել գիշերվա մթին:

- Սեհրուժանը մարտ վարելու նախաձեռնությունը չի գիտել հակառակորդին և ինքն է գրուել Սեքստիլիոսի վրա.
- հայերը այս անհավասար մարտում ցույց են տվել համառու-

թյուն և հաղթելու մեծ կամք՝ նահանջելով միայն իրենց հրամանատարի՝ Մեհրուժանի գոհվելուց հետո:

Ճակատամարտի ընթացքի վերականգնումը և մեր նկարագրությունը կասկած չի թողնում, որ հռոմեացիների հետ մարտի էր բանվել հայոց կանոնավոր բանակի փորձված զորաբանակ, որը հետապնդել է վճռական նպատակ՝ հնարավորին չափ մեծ կորուստներ պատճառել թվով խիստ գերազանց հակառակորդին: Հայկական գորքը ճակատամարտում կատարել է մի շարք զորաշարժեր, որոնց համար պահանջված էր համապատասխան շարային և մարտական պատրաստվածություն:

Ճակատամարտում հակառակորդների կորուստների մասին պահպանվել է միայն Պլուտարքոսի հադրությունը, որ հայերից քշերն են փրկվել: Այս հադրությանը անհրաժեշտ է վերաբերյալ զգուշությամբ, որովհետև հեղինակը սիրում է այս բառակապակցությունը օգտագործելով վերջացնել պատմությունը հերթական հռոմեական կամ հռոմեական հաղթական, կամ «հաղթական» ճակատամարտի մասին, որից անմիջապես հետո «ոչնչացած» թշնամու մոտ անմիջապես զոնվում են ուժեր՝ պայքարը շարունակելու համար:

Ըստ երևույթին, հռոմեացիները ունեցել են զգայի կորուստներ, հատկապես ճակատամարտի սկզբնական փուլում, հայերը, համեմատարար մեծ կորուստներ են ունեցել ճակատամարտի վերջում՝ փախուստի ժամանակ: Հաշվի առնելով մարտի համառությունը, պարենավորման համար շրջակայքում ցրված հռոմեացիների համար կանոնավոր մարտի բռնվելու անհնարինությունը՝ հռոմեացիները պետք է կորցրած լինեն առնվազն մի քանի հարյուր՝ մինչև հինգ հարյուր լեզեներ: Ոչ պակաս, քան հինգ հարյուր զինվոր կորցրած պետք է լինեն այս մարտում հռոմեական դաշնակիցները: Ըստհանուր կորուստը կարելի է համարել մոտ հազար սպանված:

Անհամեմատ ավելի մեծ են հայերի կորուստները, որոնց մեծ մասը հայերը տվել են փախուստի ժամանակ: Նվազագույնը՝ երկու հազար, առավելագույնը՝ մինչև երեք հազար մարտիկ: Պայմանականորեն կարող ենք համարել, որ մարտում երկու կողմից ընկել էր մոտ հազարական զինվոր, իսկ հռոմեացիների կողմից հետապնդման ժամանակ հայերը կորցրել էին

ևս մոտ հազար կամ երկու հազար զինվոր: Հայերին օգնել է փրկվել վրա հասած զիշերակին մուրք:

Առաջին լուրջ ընդհարումը հայերի հետ Լուկուլլոսին ցոյց տվեց, որ առաջիկայում սպասավում է համար պայքար վճռական տրամադրված հակառակորդի դեմ:

Դեսպի Տիգրանակերտ շարժվելու ճանապարհին այս ճակատամարտը Լուկուլլոսի համար լուրջ խոչընդոտ չեղ:

Ինչո՞ւ Մեհրուժանը շրմութեց հռոմեական բանակին մաեր հարձակումներով անհանգուտացնելու եղանակը: Ըստ երևույթին, այդպիսի փորձեր նա կարող էր անել նախկինում, մինչև ճակատամարտը, սակայն մենք մի փոքր անց կհամոզվենք՝ ինչ փորձառություն ուներ հռոմեական բանակը մանր լեռնային մարտեր վարելու մեջ, ուստի հայերի հաջողությունը այսուղև կասկածելի էր, կամ նվազագույնի էր հասցված: Տվյալ վիճակում Մեհրուժանի որոշումը միակ իրական հնարավորությունն էր լուրջ հարված հասցնել Լուկուլլոսին:

Մեհրուժանի հմտությունը և քաջությունը զնահատել են նաև հակառակորդները, ինչի մասին են վկայում այս ճակատամարտի մասին պատմող Պլուտարքոսի խոսքերը. «Մեհրուժանն ընկալ գենքը ձեռքին»:

Մեհրուժանի գորաբանակի մնացած զինվորները, կամ համախմբված ձևով անցել էին մայրաքաղաք՝ Տիգրանակերտ և ուժեղացրել նրա պաշտպանողականությունը, կամ էլ հետևել են հռոմեական բանակին՝ առանց ակտիվ մարտական գործողություններ ծավալելու:

Մեհրուժանի գորաբանակի հետ ճակատամարտելուց հետո Լուկուլլոսը անխոչընդոտ շարժվում է դեսպի Տիգրանակերտ: Ծոփի սահմանից մինչև Տիգրանակերտի մատուցները հռոմեական բանակը այլևս կազմակերպված դիմադրության չհանդիպեց:

### 5.1.3. Հայկական այրուձիու գրոհը Տիգրանակերտի մոտ

Անմիջապես հռոմեական ներխուժումից հետո Տիգրանը իր 6.000 այրուձին, որից 4.000 կատաֆրակտուներն էին, հանեց

Միերդատի ենթակայությունից և ուղարկեց Տիգրանակերտ՝ զանձարանը, կանանցը և արքունիքը քաղաքից դուրս բերելու և Արտաշատ ուղեկցելու համար:

Եթե հեծյալ գորագունը հասավ Տիգրանակերտ, այնուղիւ տեսավ քաղաքի մատուցներին նոր հասած հոռմեացիներին, որոնք արդեն սկսել էին կառուցել պաշարողական ճամբարը, որի համար կատարում էին անհրաժեշտ հողային աշխատանքները, ամրացնում և հարմարեցնում էին իրեն համար քաղաքամերձ որոշ տնտեսական կառուցները։ Ինչպես Մէհրուժանի գորաբանակի հարձակման դեպքում, այնպէս էլ այս անզամ, հայոց այրուձին հարձակումը կատարեց երեկոյան և հանկարծակի։

Հոռմեացիների համար այս տիած պատմության մասին հաղորդում են Ապահանոսը և Մէմսոնը։

«... նախ նրանցից մոտ 6.000-ին ուղարկեց Տիգրանակերտ, որոնք հոռմեացիների միջով մոնելով բերդ, այնուղին խեցին ու դուրս բերեցին թագավորի հարձերին։» (Ապահանոս. Գիրք XII, Միերդատական, 85) [17]:

«Նա (Տիգրանը) նույնպէս գորք ուղարկեց Տիգրանակերտ քաղաքը, որի մեջ գտնվում էր նրա (Տիգրանի) կանանցը։ Մրանք զարդ այնուել և նետաձգությամբ կտրելով հռոմեական ճամբարից դուրս գալու ճանապարհը՝ դուրս բերին զիշերով նախապէս Տիգրանի կանանցը ու թանկազին ամենաարժեքավոր իրերը։ Իսկ լրասարացին հոռմեացիները և նրանց հետ նաև բրակիացիները արիաբար կովեցին, հայերից շատերին սպանեցին և կենդանի բռնվածներից շատերին էլ զերի վերցրին։ Սակայն այն, ինչ որ նախապէս ուղարկված էր, փրկվեց ու հանձնվեց Տիգրանին։» (Մէմսոն. Պոնտական Հերակլեայի պատմություն, Գիրք XVI, մաս LVI) [17, 167]:

Պատմիշներից առաջինը մեզ հաղորդում է հայկական հեծյալ գորաբանակի թիվը՝ 6.000 հեծյալ, երկրորդը՝ ճակատամարտի մանրամասնությունները։

Կլուտաքոսը իր հերոսի հեղինակության համար ոչ այնքան քարենապատ և պատվարեր այս պատերազմական դրվագի մասին նախընտրում է լրել։

Մէկը զիտենք, որ Տիգրանը կառուցել էր Տիգրանակերտ քաղաքի եզրին կամ նրանից ոչ հեռու հզրագույն մի ամրոց և

այգով շրջապատված պարսպագուրկ շքեղ արքունական պալատ։

Ապահանոսի հաղորդումը այն մասին, որ հայկական հեծելագները մտել են բերդ, կարող էր վկայել նաև այն մասին, որ կանանցը և զանձերը գտնվում էին ոչ թե բուն քաղաքում, այլ ամրոցում։ Տիգրանակերտ անունը կարող էր կրել ոչ միայն բուն քաղաքը, այլ նաև այս երեք կառուցները միասին վերցրած։ Մեզ թվում է, որ շատ հավանական է, որ Տիգրանի կանանցը և զանձերը պահպել են հենց այս անառիկ ամրոցում, որը ունեցել է Տիգրանի թիկնազորի հետևակային զնդերից հատկացված կայազոր։ Միայն այսպէս Տիգրանը կարող էր լրիվ ապահով լինել։ Սակայն այս ամենը միայն ենթադրություն է, որը առանձնապես չի փոխում մարտական գործողությունների ընթացքը։

Հակամարտող կողմերի մարտավարության հետագա վերլուծության վրա նույնպէս այս մանրամասնությունը հական ազդեցություն չունի։

Ինչպես և առաջին հարձակման ժամանակ (Մէհրուժանի գորաբանակի ճակատամարտը), հայկական այրումին գրոհում է երեկոյան և հոռմեացիների համար անսպասելի։ Զրահապատ կատաֆրակոսների գորասյունները և թեթևազգեն հեծյալների զնդերը անցնում են հոռմեական լեզեռներների և դաշնակիցների մարտաշարքերի մոտակայքով, կանգնեցնում ու արգելակում են նրանց հակազորից նետահարությամբ և մտնում քաղաք (կամ ամրոց)։

Հոռմեացիները չեն կարողանում հակազրել այս գործողությանը։ Ոչ մի բան չի նշվում նրանց բավականին ուժեղ հեծելազորի մասին։ Ըստ երևույթին, ճակատամարտի այս փուլում հոռմեական հեծելազորը մարտին ընդհանրապես չի մասնակցում։

Ինչպես են քաղաքի պաշտպանները օգնում իրենց մոտ եկող հայոց հեծելազորին, պատմիշներից տեղեկություն չունենք, սակայն կարծում ենք, որ պարիսպներից կարելի էր որոշակիորեն օգնել հարձակվող հեծելազորին եթե ոչ նետահարությամբ՝ հետավորության պատճառվ, ապա հեռահար քարենտ մերենաների օգտագործմամբ։ Սակայն այս ամենը լոկ ենթարություն է։

Կանանցը և զանձերը հեծելազորով դուրս բերելու համար

պաշտպանակերտը սեղմող օդակը ձեղքելու գործոց դուրսունները կարելի է բաժանել երեք հաջորդական փուլերի:


- 1.Հայկական այրուձիու գրոհը հռոմեացիների վրա Տիգրանակերտի մոտ.
- 2.Հայկական այրուձիու դուրս զալը Տիգրանակերտից.
- 3.Հայկական այրուձիու վերջապահ զնի մարտը հռոմեական հեծելազորի հետ:

Առաջին փուլ՝ հայկական այրուձիու գրոհը հռոմեացիների վրա Տիգրանակերտի մոտ

Հայոց հեծելազորի գրոհը սկսվում է երեկոյան: Անսպասելի հարձակումով հայերը ցրում կամ ոչխացնում են իրենց ճանապարհին պատահած հռոմեական զորամասերը և մտնում քաղաք: Հակառակորդի շարքերը կամ դիրքերը ձեղքելու մարտավարությունը բավականին բարդ էր և պահանջում էր ծանր և թեթև հեծելազորի հստակ ու նպատակալաց գործողություններ:

Կատաֆրակտուսների զնդերը իրենց անշիմադրելի հարվածային ուժով պետք է ճնշեն հակառակորդի ցանկացած փորձը՝ արգելափակել հեծելազորի ճանապարհը: Այս դեպքում ծանրազեն այրուձիու նիզակամարտը այնքան էլ պետք չէ և կարող է կիրառվել միայն խիստ անհրաժեշտության դեպքում: Նետաձգությամբ ճանապարհը բացում են թեթև հեծելազնիերը, որոնք մեծ արագությամբ սուրում են ավելի դանդաղ, բայց ահազդու շարքերով ընթացող կատաֆրակտուսների կողքին և ապահովում հեռահար մարտը: Նրանք և՛ պաշտպանում են ծանր հեծելազորին թշնամու թեթևազնեներից ու լեգեններներից, և միաժամանակ իրենք պաշտպանում են կատաֆրակտուսներով ինարավոր ձեռնամարտից: Այս տիպիկ պարթեական մարտաձևը ծանրո չէր Լոկոլուսին, որի գործերը հանկարծակի եկած պարտվում են հայերը մտնում են քաղաք: Հայկական հեծելազորին մեծապես օգնեց այն հանգամանքը, որ հռոմեացիները նոր եին հասել Տիգրանակերտ և դեռ չին հասցել լուրջ պաշտպանական կառույցներ կառուցել:

Չատ կարևոր էր ճիշտ ընտրել հարվածի ուղղությունը: Այսուեղ իր ծանրակշիռ խորս էր ասել հայկական հետախուզությունը:




Գծանկար 5.7. Հայկական այրուձիու գրոհը Տիգրանակերտի մոտ:

Երկրորդ փուլ՝ Հայկական այրուձիու կանանցի և զանձերի դուրս բերումը Տիգրանակերտից:

Հայկական հեծելազորի Տիգրանակերտ մտնելը առաջադրված խնդրի սկզբնական մասն էր, որի իմաստը ոչ թե հռոմեացիներին կորուստներ պատճառել կամ ահաբեկելն էր, այլ կանանցի և զանձերի դուրս բերումն էր:

Անսպասելի հարձակումից ուշի եկած հռոմեացիները պետք է փորձեին տապալել հայերի դուրս պրծնելու բոլոր ջանքերը: Սակայն, երբ զիշերվա կեսին հայկական հեծյալ զանգվածը դուրս էր զայիս Տիգրանակերտի դարպասներից, հռոմեացիները, իրենց դառը փորձից ենելով, հայկական հեծելազնդերի ընթացքին առանձնապես չեն խցինդուսում:

Այսպիսով, քաղաքից բարեհաջող դուրս են բերվում կանանցը և մեծաքանակ զանձերը:




**Գծանկար 5.8.** Հայկական այրումիու կանանցի և զանձերի դուրս բերումը Տիգրանակերտից:

**Երրորդ փուլ. Հայկական այրումիու վերջապահ գնդի մարտը հռոմեական հեծելազորի հետ**

Տիգրանակերտից զիշերը դուրս էին բերվել պատկառելի քանակությամբ մարդիկ և հազարավոր տաղանդների զանձեր։ Այդ պատճառով ուղեկցող հայկական հեծելազորի ընթացքը դարձել էր առվորականից դանդաղաշարժ։

Առավտոյան հայերին հետապնդող հռոմեական և թրակիական հեծելազորը հասնում է հայկական վերջապահ զորքին՝ արիերզարդին։ Տեղի է ունենում թեժ մարտ, որի ընթացքում, ինչպես լինում է զրեթե միշտ, առաջապահը ջարդում է վերջապահին։ Պլուտարքոսը շտապում է հայտնել հերթական հռոմեական հաղթանակի մասին։

Սակայն առաջապահ հռոմեական զորագնդի հաջողությունը հարաբերական էր. հայկական հեծելազները բարեհաջող կատարել էին իրենց հիմնական խնդիրը և վերջացրել է վակուացիան։



**Գծանկար 5.9.** Հայկական այրումիու վերջապահ գնդի մարտը հռոմեական հեծելազորի հետ։

Հայկական վերջապահ հեծելազնի քանակը մենք չգիտենք, սակայն նման դեպքերում հատկացնում են ոչ ավելի, քան զորքի կեսը, և ոչ պակաս, քան մեկ քառորդը։ Մենք ընդունենք միջինը՝ մեկ երրորդը, երկու գունդ՝ մոտավորապես 2.000 թթվագեն հեծյալ։

Այս զորագունդը դիմակայել էր հռոմեական 5-6.000 հեծյալներից բաղկացած զորաբանակին։ Նման դեպքերում, եթե բուն ճակատամարտում կորուստները մոտավորապես հավասար են, ապա նահանջող և հատկապես փախչող կողմը տալիս է խոշոր կորուստներ (թեթև հեծելազորը անհամեմատ ավելի թիշ, քան հետևակը)։

Հռոմեացիների երճվանքը իրենց փոքրիկ հաղթանակով անսեղի էր. նրանք պարտվել էին բուն զործողության մեջ՝ կանանցի և զանձերի դուրսբերումը կատարված էր անթերի (ոռու և արևմտյան ռազմական արվեստի պատմության մասնագետներին խորհուրդ կտայի այս զործողությունը՝ օպերացիան, մոցնել իրենց ռազմարվեստի պատմության դասազրերի մեջ որպես ժամանակավոր նպատակային ապաշրջափակման փայլուն օրինակ)։

## Տիգրանակերտի պաշարումը ճեղքած ու կահանցող և զանձերը դուրս բերած զորաբանակի գործողությունների վերուծությունը

Կողմանի կորուստների մասին կարող ենք միայն ենթադրություններ անել: Եթե քաղաքամուտի ճակատամարտը տարել էր աննշան քանակով հայ հեծելամարտիկների կյանքեր՝ մոտ 100 հոգի, ապա հոռոմեական կորուստները ոչ պակաս էին, քան 500 զինվոր: Հայկական այրուձիո՛ քաղաքից դուրս գալու ժամանակ, ըստ երևույթին, հակառակորդներից յուրաքանչյուրը կորցրել էր ոչ ավել, քան 100-200 զինվոր:

Հոռոմեացիների խիստ անհանգստության և մեծ կորուստների մասին կողմանակիորեն վկայում է այն, որ հետապնդումը նրանք սկսում են միայն առավոտյան: Նպաստել էր մեծաքանակ կորուստներին նաև հայկական այրուձիու մարտավարության անտվոր եղանակը՝ հեծյալների առաջին շարքերը՝ կատաֆրակտուսները կործանել էին իրենց առջևում գտնվող հակառակորդի դիմադրությունը նիզակներով և հեծյալ զանգվածի ուժով, իսկ հետևից պացողները՝ նետահարումով:

Հայկական այրուձիու վերջապահ զնի մարտը հոռոմեական հեծելազորի հետ անցնում էր հոռոմեական հեծելազորի ձևող թվային գերազանցության պայմաններում:

Այս մարտում հոռոմեացիների կորուստը ես հաշվում եմ մոտավորապես 500 զինվոր, հայերինը՝ մոտ 1.000 – 1.200 հեծյալ, որոնց գրեթե կեսը՝ փախուստի ժամանակ:

Այդպիսով, Տիգրանակերտի մոտ կայացած այս ճակատամարտի ընթանուր կորուստները այսպիսին էին: Հայերը՝ մոտավորապես 1.300 – 1.500 զինվոր, հոռոմեացիները՝ մոտ 1.200 – 1.300 զինվոր:

Հայկական հեծելազորի գիշերային գրոհը մեկ կամ երկու օրով ուշացրեց, բայց շնափանեց Լուկովոսի պաշարողական աշխատակըները:

Մարտավարական և ռազմավարական տեսանկյունից քըննարկվող էվակուացիոն օպերացիան հայերի կողմից կատարված էր գրեթե անթերի: Այս գործողության մեջ զգացվում է հայկական քանակի բարձր արհեստավարժությունը: Նշված գործողությունը բարդ էր բոլոր ժամանակների ցանկացած հեծելա-

զորի համար, հատկապես, եթե հաշվի առնենք, որ մեր դեպքում՝ Լուկովոսի հեծելազորը այս մարտերում քանակով զգալիորեն գերազանցում էր հայկականի՝ 8.000 ընդուն 6.000 հայկականի. այնուամենայնիվ վերջինիս հանդեպ նա անզոր գտնվեց:

### 5.1.4.Տիգրանակերտի պաշարումը

Տիգրանակերտի պաշարումը Լուկովոսի համար բավականին դժվար խնդիր էր: Բարձր պարիսպները՝ ուժեղացված հսկայական աշտարակներով, քաղաքի մեծությունը և տեղանքը, որը գրեթե անհնար էր սարքում քաղաքի լրիվ շրջապատումը, բազմահազար լավ սպառազինված և հմուտ դեկապարզող կայազորի առկայությունը հոռոմեացիների համար ստեղծում էին բազմաթիվ դժվարություններ [51, 207]:

Դիոն Կաստորը գրում էր.

«...և ստիպելով նրանց խուսափել ճակատամարտից՝ պաշարում էր Տիգրանակերտը: Բայց բարբարոսները նետաձգությամբ և (պաշարողական) մերենաների վրա թափած նավով մեծապես վնասեցին նրան: Այս դեղանյութը կուպրաշատ էր և բոցավառվոր, այնպէս որ հրկիզում էր այն ամենը, ինչ կաշում էր, և ոչ մի հեղուկով հեշտ չէր այն հանգնել» (Հոռոմեական պատմություն, Գիրք 36, Քսիփիլինս, 1-2) [17, 51]:

Ապահովություն. Գիրք. XII. Միհրդատական. 84.

« 84. Զոհեր մատուցելուց հետո նա (Լուկովոսը) երկու ընտիր լեզեռներով և 500 հեծյալներով արշավեց Տիգրանի վրա: Անցնելով Եփրատը՝ նա բարբարոսներից, որոնց երկրով անցնում էր, պահանջում էր միայն այն, ինչ անհրաժեշտ էր, քանի որ նրանք չէին կովում և ոչ էլ ուզում էին որևէ բանով տուժել, այլ թռնաս էին, որ Լուկովոսը և Տիգրանը իրենք լուծեն իրենց վեճը: Տիգրանին ոչ ոք չէր հաղորդում Լուկովոսի մոտենալու մասին: Քանզի առաջին իսկ մարդը, որն ասել էր այդ մասին, կախաղան էր հանելի նրա կողմից, որովհետև նա կարծում էր, որ այդ մարդը խուճապ էր առաջացնում քաղաքներում: Բայց երբ արդեն Տիգրանն իմացավ (այդ մասին), Մեհրուժանին երկու հազար հեծյալներով ուղարկեց առաջ, որպես-

զի փակի Լուկուլլոսի ճանապարհը: Իսկ Սանկայոսին հանձնարքեց պաշտպանել Տիգրանակերտը. Այն քաղաքը, որը, ինչպես նախապէս ասել եմ, բազավորն իր պատուին կառուցել էր այդ վայրում, և (երկրի) լավագույններին կանչում էր այնտեղ, սպառնալով, որ, այն ինչ չեն բերի իրենց հետ, կրոնագրավվի: Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ այլոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ բերարձակ գրոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ: Այս ամենը Սանկայոսին հանձնելով՝ ինքը շրջում էր երկիրը՝ զորք հավաքելու նպատակով: Լուկուլլոսը Մերձաժանին առաջին իսկ բախտմից հետո հաղթեց և փախուստի մատնեց: Իսկ Մերստիլիոսը, Սանկայոսին Տիգրանակերտում փակելուց հետո, կողոպտեց արքունի պալատը, որը պարսպապատ չէր, քաղաքի և բերդի շուրջ խանդակ փորեց, (պաշարողական) մերենաներ պատրաստեց և պարսպի տակ ականներ փորեց» [17]:

Պաշարման դժվարությունները վառ նկարագրած Դիոն Կաստորը վկայում է ոչ միայն այն մասին, որ Տիգրանակերտի պաշտպանները օգտագործել են նավթը որպես հրկիզոր նյութ: Հաղորդումից նաև երևում է, որ ինչ որ նյութի ավելացումով հայերը խտացրել և կաշուն են դարձրել նավթը՝ այսինքն պատրաստել են ժամանակակից նապալմին նմանվող հրկիզոր նյութ: Այս գենքի հնարավորությունները շատ մեծ էին հակառակորդի կենդանի ուժի և տեխնիկայի հրկիզման գործում:

Սակայն Լուկուլլոսը լավ գիտակցում էր, որ Տիգրանակերտը նորաստեղծ Հայկական տերության սիրտն է և Տիգրանի գաղափարների իրականացման մարմնավորումներից մեկը: Երբ դեռի Տիգրանակերտ անվեհ էր որպես ռազմավարական հնարք, միաժամանակ, դա հարված էր տիգրանյան Հայկական կայսրության մեծապեսական հավակնություններին: Լուկուլլոսը գիտեր, որ Տիգրանը չի կարող շրնդրունկ մարտահրավերը:

Եթե Լուկուլլոսին հաջողվեր շուտ՝ մինչև Տիգրանի բանակի մոտենալը, գրավել քաղաքը, ապա իր ռազմավարական դիրքը կդատինար անխոցելի: Ուստի հոռմեական գորքերը շանք չլսնայեցին՝ քաղաքը գրավելու համար: Գրոհները հետևում

էին մեկը մյուսին, սակայն հետ էին միլում և մեծ կորուստներ պատճառում Լուկուլլոսի բանակին:


Առաջին «սիրագործությունը», որ կատարեցին Մերստիլիոսի զինվորները, քաղաքից դուրս գտնվող արքունական պալատի գրավումը, բալանը և հրկիզորն էր: Միաժամանակ քաղաքի մոտ սկսվեց կառուցվել հոռմեացիների պաշարողական ճամբարը: Այսուել հոռմեացիները ստացան երկրորդ հարվածը հայերից, մեկը պատմեցինք՝ ինչպես երեկոյան դեպի քաղաք գրոհեց հայկական զրահապատ և թերև հեծելազորի մի խոշոր գորագունը:

Տիգրանակերտի պաշարման մասին մենք տեղեկություններ ենք քաղում Պլուտարքոսի և Կաստոր Դիոնի հաղորդումներից: Շատ կարևոր է Կաստոր Դիոնի հաղորդումը Տիգրանակերտի պարիսպների տակ ծավալված համար մարտերի մասին:

Լուկուլլոսը շտապում էր վերցնել Տիգրանակերտը մինչև Տիգրանի գորքերի մոտենալը: Տիգրանակերտն ուներ պաշտպանական հզոր համակարգ վիթխարի 50 կանգուն (25 մետր) բարձրությամբ պարիսպներ, որոնց հաստությունը այնքան էր, որ նրանց մեջ կառուցված էին ախոռներ՝ հեծելազորի ձիերի համար: Աշտարակների բարձրությունները ավելի շատ էին՝ մոտ 75, երեւն խոսվում էր 100 կանգունի մասին: Այս վիթխարի պաշտպանական համակարգը պաշտպանում էր Մանկայուի գլխավորած գորաբանակը՝ ոչ պակաս, քան 9.000 զինվոր, չի բացառիւմ, որ այսուել էին գտնվում նաև Մերձաժանի գորաբանակի մնացորդները (ավելի հավանական է, որ Մերձաժանի գորաբանակը հետազոտում միացած լիներ Տիգրանի զլասվոր բանակին): Քաղաքի պաշտպանությանը ներգրավված էին նաև քաղաքային համայնքի ջոկատները և հոյն վարձկաները (ըստ երևույթին, Միրիայից), կապադովկիացիք, սակայն նրանց մասնակցությունը անեղան էր:

Տիգրանակերտի պաշտպանը տեղ մոտավորապես կես տարի: Հոռմեացիները կատարեցին բազմաթիվ գրոհներ, որոնք հետ մրկեցին ամենայն վճռականությամբ: Հայկական պատրազմական տեխնիկան ակնհայտորեն գերազանցեց հոռմեականին: Շատ հավանական էր, որ այս հեռահար մերենաների

զգայի մասը նույսպես կառուցել էին հովյան ճարտարագետները և ճարտարապետները:



Նկար 5.10. Պաշարողական աշտարակի օգուագործումը

Հոումեացիները Տիգրանակերտի պաշարման ժամանակ կորցրել էին ոչ պակաս, քան հազար լեզուներ և երկու հազար դաշնակից: Հայերի կորուստները Տիգրանակերտի պարիսպների վրա աննշան էին և դժվար թե անցնեին մի քանի հարյուրից, առավելագույնը՝ 500 զինվորից:

Այդպես համառոքեն պաշտպանվելով և մեծ կորուստներ պատճառելով Լուկուլլոսի բանակին՝ Տիգրանակերտում սպասում էին արքայից արքայից վճռական գործողություններին:

Միայն այն բանից հետո, եթե Տիգրանակերտի ճակատամարտում հայերը պարտվեցին, տրամադրությունները պաշարված Տիգրանակերտում արմատապես փոխվեցին:

### 5.1.5. Հայ-հոումեական կոիվները Տավրոսում՝ Սուրենայի և Սեբաստիլոսի գրոհները

Տիգրանակերտի ճակատամարտին անմիջապես նախորդել է երկու նշանակալից ռազմական բախտում:

Պելոտարքոս. Կենսագրություններ. Լուկուլլոս. 25. [42].

«Այնուհետև Տիգրանը թողեց իր իսկ հիմնած Տիգրանա-

կերտ հսկա քաղաքը, նահանջեց դեպի Տավրոս և սկսեց բոլոր կողմերից իր գորքն այստեղ հավաքել: Լուկուլլոս, որպեսզի ժամանակ չուն երան պատրաստվելու, Սուրենային ուղարկեց՝ հանձնարարելով երան հարձակվել Տիգրանի մոտ գնացող ուժերի վրա և արգելել երանց կենտրոնացումը. Ուղարկեց նաև Սեբաստիլոսին, որպեսզի սա փակի արքային օգնության շտապող արարական խոշոր զորամասի ճանապարհը: Սեբաստիլոսը հարձակվեց արարելորի վրա այն պահին, եթե սրանք բանակ էին դնում, և մեծ մասին կոստրեց. իսկ Սուրենան, հետապնդելով Տիգրանին, եթե վերջինս անցնում էր նեղ ու երկար կիրճով, օգովեց հարմար պահից և հարձակվեց արքայի գորքի երկարածիք շարքերի վրա: Տիգրանը, թողնելով իր ամրող գումարը, կարողացավ փախչել: Հայերից շատերն սպանվեցին, իսկ մեծ մասը գերի ընկավ:»

Առաջինը տեղի է ունեցել այն ժամանակ, եթե Տիգրանը իր բանակով անցնում էր Տավրոսի լեռնանցքներով: Դարանակալած հոումեական զորքը՝ Սուրենայի հրամանատարությամբ, բաց է թողնում արքայից արքայի մարտունակ զնիերը և հարձակվում է վերջից եկող գումակի վրա: Գումակի պահակազորը ոչխցացվում է, և հարավսիրիական պատերազմի ավարի մի մասը և գերիները ընկնում են հոումեացիների ձեռքը:

Սուրենայի գորաբանակի հաջողությունը վկայում է այն մասին, որ Տավրոսի լեռներում տեղաշարժվող Տիգրանի հայկական բանակը անբավարար ձևով էր կազմակերպել իր արշավային շարասյուների կողմանապահ պարեկությունը և տեղանքի հետախուզությունը: Հույսը դրել էին այն բանի վրա, որ իրենք իրենց հայրենի երկրում են, իսկ թշնամին բավականին հեռու է՝ Տիգրանակերտի մոտակայքում: Հարձակմանը ենթարկված հայկական բանակի գումակային և պահապան զորամասերը ջախջախվել էին, և հոումեացիների ձեռքն էր ընկել գումակի մի մասը: Ըստ երևույթին, նրանք նաև ազատել էին գերիների մեծ մասին:

Գործողությանը մասնակցած Սուրենայի ուժերը նշանակալից էին՝ մոտ 8-12.000 զինվոր: Հարձակումը իրականացվել էր երկար ու նեղ կիրճում, որը թույլ չէր տվել Տիգրանին արագ օգնության հասնել յուրայիններին, իսկ հետո կազմակերպել Սուրենայի զորաբանակի արդյունավետ հետապնդումը: Ավե-

լին, ստեղծվում է տպավորություն, որ Մուրենային կամ չեին հետապնդել, կամ կ դա հայերն արել են խիստ անբավարար: Ինչիցեւ, Մուրենայի արշավանքը շատ վտանգավոր էր հենց հարձակվողի համար. Եթե Տիգրանը որոշեր հետապնդել Մուրենային, ապա վերջինս պետք է քողներ ավարը և փորձեր փրկել սեփական կյանքը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է զրանցել, որ Մուրենան վարպետորեն ընտրել էր հարձակման վայրը և պահը, հանդուզն ձևով հարձակվել գումակի վրա, ոչչացրել պահակազորը, ազատել գերիներին և տարել գումակի ամենաթերև մասը: Դրանից հետո նա հաջողությամբ խուսափել էր հայկական գորքերի հարվածներից և անկորուստ վերադարձել Լուկուլլոսի մոտ: Այս ամենը արդեն հռոմեական գորքի նշանակալից հաղթանակն էր:

Պլուտարքոսի հայտարարությունը՝ Տիգրանի փախուստի և բազմաթիվ հայ գերիների մասին, սովորական պարձենկություն էր: Կորուստների մասին շատ դժվար է դատել՝ ենթալով մարտի բնույթից և կարճատևությունից, կարելի է ենթարկել, որ հռոմեացիները ու իրենց դաշնակիցները կորցրել էին ոչ ավել, քան 500, իսկ հայերը՝ մոտ 1.000 զինվոր:

Երկրորդ Սերստիլիոսի հռոմեական զորաբանակի հարձակումն էր Տիգրանին օգնության շտապող Օսրոենեի արարական զորաբանակի վրա: Արաբները, չդիմանալով հանկարծակի հարձակմանը, որոշակի դիմադրությունից հետո դիմում էն փախուստի:

Հստ իս, պարտության մատնել Օսրոենեի արաբների բավականին մարտունակ զորաբանակին, դժվար ինդիր էր, որը հաջողվեց Սերստիլիոսին: Այս զորավարի մարտական փորձը վիթխարի էր: Լուկուլլոսը նրան տալիս էր դժվարագույն հանձնարարություններ: Ինչ արժեին միայն Սերստիլիոսի գործողությունները 71 թ.-ին Պոնտոսում, որտեղ նա վճռական դեր խաղաց Սիհրդասի հեծելազորը ոչչացնելու գործում: Սերստիլիոսը արաբներին հաղթեց շնորհիվ իր սրընթաց հարձակման: Արաբները դեռ չեին հարդարել իրենց շարքերը, երբ նրանց վրա սլացին Սերստիլիոսի լեզեռներները և դաշնակիցները: Սերստիլիոսի զորաբանակում կար մոտավորապես 11.000 – 13.000 զինվոր: Նա ընդհարվել էր 15-20.000 բանակի հետ և պարտության մատնել նրան. այս հռոմեական հաղթանակը շատ նշա-

նակալից էր. Տիգրանը զրկվեց զգակի համալրումից:

Ըստ երևույթին, մարտը եղել է շատ համար ու տևել է բավականին երկար. վերջում օսրոենցիներին հետապնդելիս, հռոմեացիները բավականին մեծ կորուստներ են պատճառել նրանց: Եթե ճակատամարտի ժամանակ հռոմեացիների ընդհանուր կորուստները համարենք մոտավորապես 500 զինվոր, որից լեզեռներների թիվը, ըստ երևույթին, դրա կեսը, ապա արաբները, կորցնելով մարտի ժամանակ մոտ 1.000 զինվոր, 3-4.000 էլ կորցրել են փախուստի ժամանակ, ընդհանուր 4-5.000 զինվոր: Մնացածները վերադարձել էին են իրենց երկիր:

Հռոմեացիների ակտիվ գործողությանները Տիգրանակերտի հարակից տարածքներում և Տավրոսի լեռնանցքներում անհնար էր իրագործել առանց տեղացիների գործուն մասնակցության: Մենք հակված ենք մտածել, որ Լուկուլլոսը ուներ խորհրդատուններ և ուղևորություններ Տիգրանից դժգոհ հայերից, կորդվացիներից, աղիաբենցիներից և օսրոենցիներից: Այս ներքին «հինգերորդ շարասյուն»-ը մեծապես նպաստել էր Լուկուլլոսի հաջողությանը:

Եթե Մեհրումանի զորաբանակի, հայոց այրուձիու և Տիգրանակերտի պաշտպանների հաջող գործողությունները ցույց տվեցին Լուկուլլոսին հայկական բանակի ուժը, ապա Մուրենայի և Սերստիլիոսի արտակարգ համարձակ գործողություններն էլ Տիգրանին ցույց տվեցին հռոմեական բանակի արտակարգ մարտունակությունը:

Այդպիսով Տիգրանակերտի ճակատամարտի համար Տիգրանը կարողացավ կենորունացնել միայն 80.000 բանակ: Զկային կոմմագենցիները, ճանապարհին շախչախված օսրոենցիները: Եթե այդ բոլոր զորքերը համարեին Տիգրանի բանակը, ապա նրա թիվը կարող էր հասնել 100-110 հազարի:

#### 5.1.6.Տիգրանի և Լուկուլլոսի պատրաստությունները զիսավոր ճակատամարտին

Լուկուլլոսը գիտակցում էր, որ քանի Տիգրանակերտի պաշտպանները սպասում են Տիգրանի զորքին, նրանք սոլկուն և համար դիմադրելու են պաշարողների ձեռնարկած բոլոր

գրոհներին: Նշանակում է՝ քաղաքը գրավել հանկարծակի գրոհով գրեթե անհնարին էր: Տիգրանը նոյնակա գիտեր, որ իր մայրաքաղաքը գրեթե անառիկ է:

Տիգրանի հապաղումը զիսավոր ճակատամարտից, որը կարող էր լուծել պայքարի ելքը, հնարավոր է պայմանավորված էր մի շարք հանգամանքներով.

- բժնամուն կործանիչ հարված հասցնելու համար հարկավոր էր հավաքել Լուկովոսի բանակին վստահարար գերազանցող մեծ զորք,

- հարկավոր էր հաստատել իր գերիշխանությունը տատանվողների և բացահայտարար Հռոմի կողմը անցնելու ցանկացողների վրա.

- հարկավոր էր չեղոքացնել այլ ուղիներից տերությանը սպառնացող վտանգները:

Չնայած թվարկված բոլոր հանգամանքներին՝ ինձ այնքան էլ հասկանալի չէ՝ ինչ ու Տիգրանակերտի պաշարումից միայն ավելի քան չորս ամիս հետո տեղի ունեցավ Տիգրանակերտի ճակատամարտը:

Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքը կարելի է վերականգնել՝ օգնվելով Պլուտարքոսի, Ապահանոսի, Մեմոնի, Ֆլեգոնի, Ֆրոնտինոսի և Սալլյուստիոսի երկերից:

Մինչ այժմ տիրապետում էր այն կարծիքը, որ ճակատամարտի պահպանված նկարագրությունները հակասական են, որի հիման վրա որոշ հետազոտողներ մերժում էին պահպանված տեղեկություններից այս կամ այն դրվագի իրականությունը: Սակայն պահպանված նյութի մանրամասն ուսումնասիրությունը բացահայտում է տեղի ունեցած ճակատամարտի հավաստի և մանրամասն պատկերը, որի մեջ, ինչպես մասնիկները իմանակարի մեջ, անհակասական տեղավորվում են բոլոր պահպանված տեղեկությունները: Տպավորություն է ստեղծվում, որ Տիգրանակերտի ճակատամարտի մանրամասնությունները շարադրված են եղել ինչ որ անհայտ մեկ աղբյուրից, որտեղից ամեն մի հեղինակ քաղել է հատկապես իր պատմական կամ բարյուգ-գեղարվեստական երկի համար ամենաըդունելի տեղեկությունները:

Մենք արդեն շարադրել ենք Լուկովոսի բանակի թվաբանակի, կառուցվացի և հրամանատարական կազմի մասին մեր

մանրամասն վերլուծությունը:

Տիգրանի բանակի մոտենալը Տիգրանակերտին ստիպում է Լուկովոսին բաժանել բանակը երկու մասի. մեկը պետք է շարունակեր քաղաքի պաշարումը, մյուսը զնար ընդառաջ Տիգրանին:

Մինչև Տիգրանակերտի ճակատամարտը, անհրաժեշտ է ամփոփել հակառակորդների կորուստները նախորդ մարտերում:

#### Աղյուսակ 5.1.6.1. Ճակատակորդների կորուստները մինչև Տիգրանակերտի ճակատամարտը

Ռազմական ընդհարումները	հայերը	հոումեացիները
Մեկուժանի ճակատամարտը	3.000	1.000 (500*)
Հայոց այրուձիռ զոհիը Տիգրանակերտի մոտ	1.300-1.500	1.200-1.300 (500)
Տիգրանակերտի պաշարումը	300-500	3.000 (500)
Սուրենայի հարձակումը զոմակի վրա	1.000	500 (200)
Սերստիլիոսի մարտը արաբների հետ	5.000	1.000 (300)
Ըստամենը	մոտ 11.000	մոտ 7.000 (2.000)

\* - լեզեններները

Այսպիսով, Լուկովոսի կորուստները կազմում էին իր բանակի 12,7%-ից ավելին՝ մոտ 7.000 զինվոր, որից մոտ 2.000 լեզեններ, ընդ որում, հիմնականում Սերստիլիոսի և Սուրենայի նոր համալրված լեզեններից, որովհետև ֆիմբրիայի փորձված վետերանները թիզ զոհ էին տալիս, իսկ Լուկովոսին անհրաժեշտ էր մարտերում կոփել Բարբայի բերած նոր զինվորներից համալրում ստացած Սերստիլիոսի և Սուրենայի լեզենները: Այսպիսով, կարող ենք համարել, որ վերոհիշյալ մարտերից հետո այս երկու լեզեններում մնացել էր 5.000-ական

**Լեզուներ:**

Մեր հաշվարկներով՝ հոռմեացիների կորուստները ըստ գորատեսակների կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

- Լեզուներներ. 20.000-ից՝ 2.000-ը (10%),
- դաշնակիցների ծանր հետևակ. 20.000-ից՝ 3.000-ը (15%),
- թեթևագեն հետևակ՝ 4.000-ից՝ 1.000-ը (25%),
- հեծելազոր՝ 9.000-ից՝ 1.000-ը (11%),

ընդամենը՝ 7.000 զինվոր:

Համեմատաբար մեծ կորուստներ եր կրել թերև հետևակը Տիգրանակերտի վրա անցկացվող զրոհների ժամանակ, երբ իր նետահարությամբ կամ քարանտությամբ փորձում եր թեթևացնել ծանր հետևակի զրոհը: Քաղաքի պաշտպանների նետերը և պարսատիկներից նետած քարերը բարիս բուն իմաստով հնձում էին հոռմեական թերև հետևակի շարքերը:

Հիմնվելով մեր՝ վերականգնման մեթոդով ստացված կորուստների տվյալների և Լուկուլոսի բանակի կառուցվածքի վրա՝ փորձենք պատկերացնել հոռմեական բանակի վիճակը Տիգրանակերտի ճակատամարտի նախօրեին:

Մինչև զրամասերի թվարանակը ներկայացնելը ևս մեկ անգամ ընդգծենք մեր ներկայացրած տվյալների հարաբերականությունը: Եթե մենք ներկայացնում ենք «Սեբատիլիոսի կոհորուներում 500-ական զինվոր», դա չի նշանակում, որ մենք չենք պատկերացնում, որ մի կոհորութ կարող եր ունենալ 524, իսկ մյուսը՝ 325 զինվոր: Սակայն, եթե մենք պնդում ենք, որ «պատերազմից անմիջապես առաջ ֆիմբրիայի լեզուների կոհորուներում միշտնում կար 400, իսկ Սուրենայի ու Սեբատիլիոսի լեզուներում՝ 600 լեզուներ», ապա մենք զգալիորեն մոտենում ենք ճշմարտությանը: Ավելին, եթե մենք ընենում ենք մեր վերականգնած բանակի գործողությունները անտիկ հետինակների տվյալների անլիան տակ, ապա ստանում ենք ընդունելի արդյունքներ, որոնք վերացնում կամ գոնե թուլացնում են պատրազմի ընթացքը նկարագրող սկզբնադրյուրների մեջ առկա պաթետիկայի ազդեցությունը:

Աղյուսակ 5.1.6.2. Լուկուլոսի բանակի կորուստների հետևանքով, գորամասերում զինվորների թվարանակի փոփոխությունը

Զորամիավորում	Կոհորտները և ալաները հեծելազորում	Զինվորների թիվը պատ. սկզբում	Զինվորների մ. թիվը S.Ճ. նախօրեւն
I ֆիմբրիական լեզուն զրամիավորում.			
- ֆիմբ. լեզուն	10	400	400
- բութ. ծ. հետևակ	10	500	425
- իտ. թ. հետևակ	2	500	375
- իտ. հեծելազոր	6	250	223
- զումակ	1	500	500
II ֆիմբրիական լեզուն զրամիավորում.			
- ֆիմբ. լեզուն	10	400	400
- բութ. ծ. հետևակ	10	500	425
- թթ. թ. հետևակ	2	500	375
- իտ. հեծելազոր	6	250	223
- զումակ	1	500	500
Սեբատիլիոսի լեզուն զրամիավորում.			
- Սեբատ. լեզուն	10	600	500
- զալ. ծ. հետևակ	10	500	425
- թթ. թ. հետևակ	2	500	375
- թթ. հեծելազոր	10	300	267
- զումակ	1	500	500
Սուրենայի լեզուն զրամիավորում.			
- Սուրեն. լեզուն	10	600	500
- զալ. ծ. հետևակ	10	500	425
- թթ. թ. հետևակ	2	500	375
- թթ. հեծելազոր	10	300	267
- զումակ	1	500	500

Ըստ Պլուտարքոսի՝ Լուկուլլոսը Տիգրանակերտի մոտ՝ իր պաշարողական ճամբարում, թողնում է խոշոր ուժեր՝ 6.000 լեզեռներ Սուրենայի հրամանատարությամբ։ Լիկինիոս Սուրենան, որի արտակարգ խիզախությունը և համառությունը արտահայտվել էր դեռ 86 թ. Հունաստանում։ Պիրեյի պաշարման ժամանակ (առաջին պոնտական պատերազմ՝ 89 – 85 թթ. մ.թ.ա.), իր ռազմական փորձով և հմտությամբ Լուկուլլոսից հետո Երկրորդն էր հռոմեական բանակում, նշանակվեց պաշարողական բանակի հրամանատար՝ հետևյալ ուժերով։

Մանրամասնենք Պլուտարքոսի այս հակիմք հաղորդումը։

Լուկուլլոսը Տիգրանակերտի պաշարումը շարունակելու համար թողնում է Սուրենայի գորաբանակը, որը ուժեղացնում է Սերստիլիոսից վերցրած որոշ գորամասերով։

- Սուրենայի լեզեռներ՝ 5.000 լեզեռներ։
- զալատացի ծանր հետևակը՝ 4.250 զինվորներ։
- թրակիական թեթև հետևակը՝ 750 զինվորներ։
- զալատական հեծելազորը՝ 2.670 հեծյալներ։
- Սուրենայի գումակը՝ 500 զինվորներ։
- Սերստիլիոսի լեզեռնից 2 կոհորտ՝ 1.000 լեզեռներ։
- Սերստիլիոսի զալ ծանր հետևակի 2 կոհորտ՝ 850 զինվոր։
- զալատացի հեծյալներ, 1 ալա՝ 267 հեծյալ
- Սերստիլիոսի գումակը՝ 500 զինվոր։
- Ֆիմբրիական լեզեռների գումակը՝ 1.000 զինվոր։

Այսպիսով, Սուրենան պաշարողական ճամբարում ուներ։

- 6.000 լեզեռներ 12 կոհորտում։
- 5.100 զալատացի ծանրազեն հետևակ 12 կոհորտում։
- 750 թեթևազեն հետևակ 2 կոհորտում։
- 267 զալատացի հեծյալ 1 ալայում և
- 2.000 գումակի զինվորներ 4 կոհորտում։

այսինքն։

- 11.100 ծանր հետևակ։
- 750 թեթև հետևակ։
- 267 հեծյալ և
- 2.000 օժանդակ գորը։

Ընդամենը՝ 14.117 զինվոր՝ մոտավորապես 14.000 զինվոր։

Սուրենայի գորաբանակի զինավոր խնդիրն էր արգելակել քաղաքի պաշտպանների հնարավոր ակտիվ գործողու-

թյունները։

Մինչև Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքի վերլուծությունը սկսելով ավելորդ չեմ համարում մեջբերում կատարել Հանս Նելրյուսից [100, էջ 269].

«Ի շնորհիվ ճակատամարտի սպասիչ և տեսանելի պատկերի, որը տվել են երկու հակառակորդները Կաննի (Ճակատամարտի – Ա.Գ.) վերաբերյալ, մենք գտնվում ենք չափազանց բարենպաստ և հազվագյուտ պայմանների մեջ։ Դա մեզ հնարավորություն է տալիս այս օրինակի վրա մեկ անգամ ևս համոզվել՝ որքան անպիտան են այն ճակատամարտերի նկարագրությունները, որոնք զրկված են վերոհիշյալ հատկություններից։ Մեր պատմաբանները միշտ ենթարկվում են գայթակության՝ պիտակի նյութի բացակայության դեպքում գործի մեջ դնել ոչ պիտանին։ Այն, ինչ որ գոյություն ունի ավանդության մեջ (Եթե չկա դրան հակասող ուրիշ հաղորդագրություններ), նրանք շարունակում են կրկնել՝ դնեն նետելով միայն ամենաբացահայտ անհեթերությունները։ Սակայն դա ճիշտ չէ։ Շատ հավանական է, որ այդպիսի շարադրմամբ բոլոր հավաստին դեն կնետվի, և կմնա միայն ոչ ճշմարիտը։ Ապացույց է ծառայում Կաննի մոտ տեղի ունեցած ճակատամարտի այն մանրամասն նկարագրությունը, որը պահպանվել է Ապահանուսի մոտ։ Եթե պատահմամբ մենք չունենայինք այլ աղբյուրներ, ապա մեր այն տեղեկությունները, որոնք մենք ստուգել էինք Ապահանուսից, չին ունենա նույնիսկ հեռավոր աղերսներ ճշմարտության հետ։ Հաշվի առնելով, որ շատ հական է, որ մեր գործի ընթերցողը ներթափանցվի վերը նշված մեթոդուղիքական դրույթով, ես այստեղ մանրամասն շարադրում եմ Ապահանուսին, որը, ըստ երևույթին, վերապատմում է ինչ-որ հռոմեական դատարկաբանություն՝ առասպել։»

Մենք պատրաստվում ենք վերլուծել հայոց հնադարի պատմության համար չափազանց կարևոր Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքը՝ հիմնվելով անհամեմատ ավելի հեղիեղուկ տեղեկությունների վրա։ Պլուտարքոսի և Ապահանուսի մոտ պահպանված ամենամարամասն տեղեկությունների արժեքը հեռավոր չափով անգամ չի համեմատվի Պոլիբիոսի և Լիկիոսի հաղորդածի հետ Կաննի ճակատամարտի մասին։ Սակայն արդեն մի քանի դար, եվրոպական ուգմագիտական

մտքի բազմաթիվ կարկառուն ներկայացուցիչներ իրենց վերլուծություններով զգալիորեն հակադրվում են իրար՝ անհանգուացնելով թե՛ Հաննիբալ Բարկայի, թե՛ Տերենտիոս Վարրոյի աճյունները:

Տիգրանակերտի ճակատամարտը նկարագրված է միակողմանի և հաղորդված է մեզ Պլուտարքոսի բարոյախոսական ներբառի շղարշում: Ապահանոսի հետարրբությունը Պոնտոսի արքայի անձնավորությունն էր, որի արժանիքները պետք է ընդգծվեն նաև իր գործընկերոջ իրական և հնարած թերություններով: Տիգրանին իր գործունեության քիչ թե՛ շատ անաշխատ նկարագրության (զեմ ասում գլուխատականի) շանս պատմության կողմից տրված չէր: Մնում է վերլուծել պահպանված սակավաթիվ տեղեկությունները և փորձել հասկանալ, թե ինչ կատարվեց Տիգրանակերտի մոտ մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին, այլապես կվտանգեներ այս պատերազմում Լուկովոսի հանդեպ Տիգրանի տարած փայլուն հաղթանակի անհաջող մեկնարկի պատմաների իրական վերլուծությունը:

## 5.2.Տիգրանակերտի գլխավոր ճակատամարտը

Երբ ուժն է դժվարացնում շարժման ազատությունը,  
Փոքրիկ ճկունությունը կհաղթի սաստիկ ճնշումը ...  
Լյու Տզի (1311 – 1375 թթ.)  
Ժնացի գորավար [128]

Տիգրանակերտի ճակատամարտի մասին մենք տեղեկություններ ունենք մի շաբաթ անտիկ պատմիչներից:

Պլուտարքոս. Կենսագրություններ. Լուկովոս. 26 – 28.  
«26. ... Սկզբում Տիգրանը հանգիստ լսում էր նման խորհուրդները, բայց երբ նրա մոտ միավորվեցին իրենց համայն գորքով հայերն ու գորդիենները, և իրենց գորքերի գործին անցած հայտնվեցին մեղացի և աղիաբենացի արքայինները, երբ Բարելույան ծովից ժամանեցին արարական մեծաթիվ գորքերը, իսկ Կասացից ծովից՝ աղվանից և նրանց սահմանական իրերների ամրոխները, և երբ արդեն նրանց միացան նաև նոյնացես ոչ

փոքրարիվ, Արարսի ավերի ազատ ցեղերը, որոնց Տիգրանը համոզել էր սիրալիրությամբ և ընծաներով, այնժամ արդեն և՛ արքայական խնջույքներում, և՛ բազավորական խորհրդում լսվում էին միայն բարբառուներին հատուկ ինքնավատան գովասանքներ և սպառնալիքներ: Տարսիլեսին մահապատիճ էր սպառնում այն բանի համար, որ նա հանդես էր զայխս ճակատամարտ տալու դեմ Տիգրանն սկսեց անօամ Միհրդատին կասկածել, թե, նախանձից դրդված, նա փորձում է իրեն ետ պահել մեծ սիրանքից: Հենց այդ պատճառով է Տիգրանը շապասեց Միհրդատին, որպեսզի չկիսի փառքը նրա հետ, և դուրս եկավ ամբողջ զորքով: Ընդ որում, պատմում են, թե նա գանգատվում էր ընկերներին և ափսոսում, որ ինքը պետք է չափիլ միայն Լուկուլլոսի և ոչ թե Հռոմի բոլոր զորավարների հետ միանգամայից: Նրա ինքնավատահությունը ամենելին էլ չի կարելի աերանական և անմիտ համարել. չ է որ նա իր զորքերում տեսնում էր այսքան ցեղեր և արքաներ, ծանրագեն հետեւակի այսքան մարտաշարքեր, հեծալների այսքան բազմություն: Հիրավի, նա ուներ երկու բյուր աղեղնավոր և պարսադիկավոր, իինզ բյուր և իինզ հազար հեծյալ, որոնցից մեկ բյուր և յոթ հազարը զրահապատ էին, - այս թիվն էր նշված սէնատին հղած Լուկուլլոսի գեկույցներում, - տասնինզ բյուր ծանրագեն հետևակ՝ թվական տարբեր կազմ ունեցած զորամիավորումներում: Ճանապարհաշինարարների, կամուրջ կապողների, գետերը մաքրողների, անտառահատումների և այլ աշխատանքներով զրադարձների թիվը երեք և կես բյուր էր. սրանք դասավորված էին մարտիկների ետևում և զորքին հաղորդում էին առավել պատկառազդու տեսք՝ միաժամանակ մեծացնելով նրա հզորությունը:

27. Երբ Տիգրանը, Տավրոս անցնելով, իր գորքով հայտնվեց և տեսավ Տիգրանակերտի առաջ բանակած հոռմեական զորքը, պաշարված բարբառուները նրա հայտնվելը դիմավորեցին ծափահարություններով ու խացուցիչ ճիշերով և պարիսպների վրայից սկսեցին հոռմեացիներին մատնացուց անել հայկական զորքը: Լուկուլլոսի երավիրած ուզմական խորհրդում ումանք առաջարկում էին պաշարումը վերացնելով զնալ Տիգրանի դեմ, իսկ մյուսները ասում էին, թե չի կարելի ետևում թողնել այսքան թշնամիների, ինչպես և չի կարելի դադարեցնել պաշարումը: Լուկուլլոսը հայտարարեց, թե երկու կողմերն էլ, առան-

ձին վերցրած, իրավագի չեն, բայց միասին վերցրած, լավ խորհուրդ են տալիս, և նա զորքը բաժանեց երկու մասի: Սուրենային վեց հազար հետևակով ևս թողեց՝ պաշարումը շարունակելու, իսկ ինքը վերցրեց իր հետ բանեցորս կոհորտ, որը կազմում էր ոչ ավելի քան մեկ բուրք ծանրազեն հետևակ, ինչպես նաև ամբողջ հեծելազորը և շուրջ հազար պարսադիկավոր և աղեղնակոր, և նրանց հետ շարժվեց թշնամու դեմ: Երբ ես ամբարեց գետի մոտ՝ ընդարձակ դաշտում, երա ցորքը Տիգրանին բաց խիստ աննշան: Արքային թնողներին սա առիթ տվեց սրամտերու: Ումանք հմտորեն ծանակում էին, մյուսները զվարձանալու համար վիճակ էին զցում ձեռք բերվելիք ափարի շուրջ, և չկար մի զորապետ կամ արքայիկ, որը չղիմեր Տիգրանին ամբողջ գործը միայն իրեն հանձնարարելու խնդրանքով, իսկ նա թող նստեր և մնար հանդիսատես: Տիգրանն ինքը ևս ուզում էր նուրբ սրամող թվալ, և նա ասաց բոլորին հայտնի իր հետևյալ խոսքը. «որպես դեսպանություն սրանք շատ են, իսկ որպես զորք՝ թիշ: Այդ օրն այդպես էլ անցավ կատակերով ու զվարձանքով:

Հաջորդ օրվա լուսաբացին Լուկուլլոսը յուրայիններին դուրս բերեց լիազեն: Թշնամու զորքը կանգնած էր գետից արևելք. Ի դեպ, գետն այնտեղ թերվում է արևմուտք, և այդ ուղղությամբ է գտնվում գետնանցման առավել հարմար վայրը: Եվ երբ Լուկուլլոսը շտապեց իր զորքին այնտեղ տանել, Տիգրանը կարծեց, թե նա նահակցում է: Արքան իր մոտ կանցեց Տարսուսին և ծիծաղելով ասաց. «Տես ում ես, ինչպես է փախչում քո «անպարտելի» հոռմետական հետևակը»: Ի պատասխան Տարսուսին ասաց. «Ես կուզենայի, տեր արքա, որ հանուն քո բարերախոսության կատարվեր անկարելին. Զ՞է որ այս մարդիկ ճանապարհորդելու համար չեն հազնում իրենց լավագույն զգեստը, չեն մաքրում իրենց վահանները և չեն մերկացնում սաղավարտները, ինչպես իհմա, երբ երանք իրենց զենքերը հանել են կաշվե պատյաններից: Այս փայլը ցույց է տալիս, որ նրանք մտադիր են կովելու և արդեն իհմա գնում են թշնամու դեմ»: Նա դեռևս չէր վերցացրել իր խոսքը, երբ Լուկուլլոսը ետ շրջեց իր զորքը, հայտնեց առաջին արձիվը, և կոհորտներն սկսեցին գետնանցման համար շարվել ըստ կենսուրիաների: Տիգրանը դժվարությամբ ուշրջ էկավ, ասես զինարքութիւն հետո, և երկու-երեք անգամ բացականչեց. «Այդ մնա՞ց վրա են զա-

**լիս:** Խառնաշփոթի մեջ նրա հրոսակները սկսեցին դասավորվել մարտակարգով: Ինքը՝ արքան վերցրեց կենտրոնը, ձախ թիւր վստահեց Աղյարեների բազավորին, իսկ աջ թիւր, որի առաջին շարքերում գտնվում էր նաև զրահապատ հեծելազորի մեծագույն մասը, հանձնարարեց մեղացիների բազավորին:

Երբ Լուկուլլոսը դեռ նոր էր պատրաստվում գետն անցնել, զորագույններից ունանք նրան համոզում էին զգուշանալ, քանզի այդ օրն այն «ան» կոչված դժբախու օրերից էր: Անցյալում այդ օրը կոտորվել էին կյմբրերի դեմ ճակատամարտում Կեպիոնի զիխավորած հոռմետական զորքերը: Բայց Լուկուլլոսը նրանց պատասխանեց հետևյալ հիշարժան խոսքով. «Իսկ ես հոռմետացիների համար այդ օրն էլ կուրծանեմ երշանիկ»: Դա դեկտեմբերյան տոների նախօրեին էր:

28. Այս ասելուց հետո նա պատվիրեց զինվորներին աշակուր լինել, իսկ ինքը գետն անցավ և առաջինը շարժվեց թշնամու դեմ: Նա հազել էր երկաթէ թեփուկապատ պսպղուն զրահ ու ծոպավոր թիկնոց: Առաջորդն անցնելով նետքներից տարածությունը, նա իսկոյն մերկացրեց թուրք քանի որ նետերով հարվածող հակառակորդի դեմ կովելիս պեսք էր անհապաղ ձեռնամարտի բռնվել: Այստեղ նա նկատեց, որ զրահապատ հեծելազորը, որի վրա թշնամին մեծ հուսեր էր դրել, դասավորված է հարթ և լայն զագար ունեցող մի բլիր ստորոտում, իսկ բլիր զագարը տանող չորս ասպարեզ երկարությամբ ճանապարհ ոչ թեր էր, ոչ էլ դժվարամատչելի: Ոիստի նա հրամայեց իր մոտ եղած թրակացի և զալատացի հեծելազորայիններին թշնամու հեծելազորին հարվածել կողրից և սրերով ետ մոել երանց նիզակները, քանի այդ զրահապատ հեծյաների ամբողջ ուժը հենց այդ նիզակներն էին, որից բացի երանք ոչինչ չընեին իրենց պաշտպանելու և կամ թշնամուն հարվածելու համար, ասես երանք փակված էին իրենց ծաներ, ծծալվող զրահների մեջ: Ինքը՝ Լուկուլլոսը, երկու կոհորտի զույին անցած, նետվեց դեպի բլուրը: Զինվորները մեծ ոգևորությամբ հետևեցին երան, քանի որ տեսան, որ իրենց զորավարը զենքը ձեռքին, հետիոտն, առաջինը ինքն է գնում թշնամու վրա՝ իրենց հետ բաժանելով դժվարությունները ու վտանգները: Բլուրը բարձրանալով՝ Լուկուլլոսը կանգնեց բոլորի համար տեսանելի տեղում և գոռաց. «Մերն է հաղթանակը, մերն է,

**մարտիկներ»:** Այս խոսքերով նա զինվորներին առաջնորդեց զրահապատ հեծելազնոյի դեմ և հրամայեց այլնս տեղերը չգործադրել, այլ ընդհուար մոտենալ թշնամուն և սրերով հարվածել թշնամու ազդրերին ու անպաշտպան մասերին: Ասենք, այս ամենի կարիքը չկար, բանի որ զրահապատ հեծյալները չղիմացան հոռմեացիների հարձակմանը, այլ աղաղակելով՝ ամորալի փախուստի դիմեցին և զրահներով ծանրացած իրենց ձիերով միլրճնեցին իրենց իսկ հետևակի շարքերի մեջ, նախքան սրանք կովի կրօնվեին: Այսպիսով, առաեց արյուն հեղեղու, հսկայական այդ բանակը պարտության մատուցեց: Տիգրանի զինվորները փախան, ավելի ճիշտ՝ փորձեցին փախչել, բայց իրենց շարքերի խոտության ու խորության պատճառով իրենք փակում էին իրենց իսկ ճանապարհը, որի պատճառով է մեծ կոտորած սկսվեց: Տիգրանը ճակատամարտի սկզբում փորրաթիվ ուղեկիցների հետ դիմեց փախուստի: Տեսնելով, որ իր որդին ևս դժբախտության մեջ է, նա վերցրեց խովրն իր զիմից և արտասկելով այն հանձնեց նրան ու հրամայեց, որ ինքը իրեն փրկի բոլոր հնարավոր միջոցներով: Բայց պատանին չհամարձակվեց խովրը դնել զիմին, այլ այն տվեց պահելու իր ամենահավատարիմ ծառային: Դպրամագալ այս ծառան գերի ընկավ և, այսպիսվ, Տիգրանի խոյրը ևս ավելացավ մյուս ավարին: Ասում են, որ թշնամու հետևակից կոսորտեց հարյուր հազարից ավել մարդ, իսկ հեծելազորից շատ քերն էին փրկվել: Հոռմեացիներից վիրավորվել էր հարյուր մարդ և սպանվել իինզը:

Փիլիսոփա Անտիոքոսը «Աստվածների մասին» գրքում, խոսելով այս ճակատամարտի մասին, պեղում է, որ արևո դեռևս սրա նմանը չի տէսել. Իսկ մեկ այլ փիլիսոփա՝ Ստրաբոնը «Պատմական հիշատակարաններ» գրքում պատմում է, թե իրենք՝ հոռմեացիները ամոր էին զգում, և ծիծաղում այն պատճառով, որ զենք էին բարձրացրել այսպիսի խառնամբույսի դեմ: Լիլիոսի պատմելով՝ հոռմեացիները երբեք չեն կովել թվով իրենց այսքան գերազանցող թշնամու դեմ. իրոք, հաղթողները հազիվ թէ կազմեին պարտվողների բաներորդ մասը: Ինչ վերաբերում է ուսկան գործում առավել ճարտար և հմուտ հոռմեացի գորականներին, ապա նրանք Լուկովուսին գովում էին առավելապես այն բանի համար, որ նա հաղթել էր երկու ամենափառաբանված և ամենահզոր արքաների երկու

հակաղիր միջոցներով՝ սրբնթացությամբ և անշտապությամբ. Եթե Միհրդատին, որ այդ ժամանակ զտնվում էր իր հզորության զագաթնակետին, նա ի վերջո հրուծեց պատերազմը ձգձելով, ապա Տիգրանին ջախչախնեց կայծակնային հարվածով: Բոլոր ժամանակներում շատ չեն եղել նրա նման զորավարները, որոնք սպասողականությամբ ճանապարհ հարթեին իրենց գործողությունների համար, այլ համարձակ ձնշումով ապահովել են անվտանգությունը:» [42]:

Ապահանու Ալեքսանդրիացի. Գիր 12. Միհրդատական.

«86. Մինչ Սեբաստիլիոսը գրադարձ էր այս գործերով, Տիգրանը, հավաքելով մոտ բանինգ բյուր հետևակ և հինգ բյուր հեծյալ, նախ նրանցից մոտ վեց հազարին ուղարկեց Տիգրանակերտ, որոնք, հոռմեացիների միջով մտնելով բերդ, այնտեղից խեցին ու դուրս բերեցին բազավորի հարձերին: Իսկ զորքի մնացած մասով ինքը՝ Տիգրանը, շարժվեց Լուկովուսի վրա: Այնժամ Միհրդատը, առաջին անգամ զայռվ նրան տեսաւթյան, խորհուրդ տվեց կովի չըռնվել հոռմեացիների հետ, այլ միայն հեծելազորով արշավել նրանց շուրջը և, ավերելով երկիրը, եթե հնարավոր է, նրանց առվի մատնել, ինչպես և ինքը Լուկովուսի կողմից Կյուզիկոսի մոտ առանց կովի ուժասպառ էր եղել և կորցրել իր զորքը: Իսկ Տիգրանը, ծաղրելով Միհրդատի այդ ուզմավարությունը, առաջ է շարժվում՝ պատրաստ կովելու: Տեսնելով, որ հոռմեացիները սակավաթիվ են, նա այսպես հեգնեց: «Եթե սրան դեսպաններ են, շատ են, իսկ եթե թշնամի՝ հույժ սակավ:» Լուկովուսը, Տիգրանի թիկունքում հարմար մի բյուր նկատելով, իր հեծյալներին հրամայեց թշնամուն անհանգրստացնել ճակատից, նրան քաշել իրենց կողմը և կամովին ետ նահանջել, որպեսզի հետապնդող բարբարոսների շարքերը քայրայվեն: Իսկ ինքը, հետևակի հետ անցնելով (թշնամու) թիկունքը, աննկատ բարձրացավ բյուրը: Եվ երբ նա տեսավ, որ թշնամին (հեծելազորը) հաղածելիս իրը թէ հաղթած լինելով՝ շատ էր ցրվել, իսկ նրա ամբողջ գումակը զտնվում էր ներքեւում, գոչեց: «Զինվորներ, մենք հաղթում ենք» և առաջինը ինքը վագելով հարձակվեց գումակի վրա: Գումակի իսկույս աղմլայից փախչելով, ընկավ հետևակի վրա: Իսկ հետևակը՝ հեծելազորի: Շուտով պարտությունը եղավ լիակատար, որովհետև արդեն հոռմեացի հեծյալները ես դարձան ու կոտորեցին նրանց,

որոնք հետապնդելիս ցրվել էին հեռուները, իսկ գրումակը, յունացի մատնաված, ընկնում էր մըուսների վրա: Եվ այդ ամբոխի մեջ իրար էին կոխտում՝ առանց ձշզրիտ իմանալու, թե որտեղից էր սկսվել նրանց համար այդ արհավիրքը: Մեծ եղավ կոտորածը, քանի որ ոչ ոք կողոպուտով չէր գրադփում, Լուկուլլոսը սպառնալով արգելել էր այդ, ուստի և ապարանջաններն ու մանյակներն իսկ թողնելով՝ նրանք շարունակում էին սպանել մոտ հարյուր քանի սասպարեզի վրա՝ մինչև զիշերը վրա հասնելը: Միայն դրանից հետո նրանք վերադարձան և սկսեցին կողոպտել, քանի որ Լուկուլլոսն արդեն այդ թույլ էր տվել:» [17]:

Մենան Հերակլեացի. Պոնտական Հերակլեայի պատմություն. Գիրք XVI.

«LVII. (1) Աս (Տիգրանը), հավաքելով 80 հազար զորք, իջավ ցած, որպեսզի հարստահարիչների ձեռքից փրկի Տիգրանակերտը և թշնամիներին հեռացնի: Կամենալով այդ շուտ վերջացնել և տեսնելով, որ հոռմեացիների բանակը սակավաթիվ է, նա ասաց. «Եթե նրանք ուզում են որպես դեսպաններ ներկայանալ, մեծ բազմությամբ են եկել, իսկ եթե որպես թշնամիներ են եկել՝ չափազանց թիշ են»: Եվ այդ ասելուց հետո նա բանակ դրեց: (2) Իսկ Լուկուլլոսը վարպետությամբ ու հոգացողությամբ ճակատամարտի համար մարտակարգ կազմեց և, քաջալերելով իր զորքը՝ իսկոյն փախուստի մատնեց աջ թևը, հետո սրա միջոցով ետ մղեց հարևան զորքը և ապա հերթով՝ ամբողջ զորքը: Հայերն ահաբեկված ու անզուսապ կերպով դիմեցին փախուստի, և մարդկանց թվի համեմատ էր նաև նրանց կոտորածը: Իսկ Տիգրանն իր արքայական խույրը և ապարոշը տվեց որդուն և ինքը փախավ իր ամրոցներից մեկը:

Բայց Լուկուլլոսը, վերադառնալով Տիգրանակերտ, պաշարեց քաղաքը ավելի համարձակորեն: Իսկ քաղաքում գտնվող Միհրդատի զարավարները, որ բոլորովին հուսահասովել էին, իրենց փրկելու համար քաղաքը հանձնեցին Լուկուլլոսին, քանզի փախենալով նրանց կողմից ճանաչվելով բոնվելուց, (արքան) պոկել էր դրանք ու դեն շարտել:» [17]:

Սերստ Հովհաննես. Ստրատեգեմաներ. II. Գլուխ I.

«14. Լուկուլլոսը, նաև Մեծ Հայրում Միհրդատի ու Տիգրանի դեմ պատերազմնիս, Տիգրանակերտի մոտ ուներ 15 հազար մարդուց ոչ ավել, իսկ հակառակորդ՝ անթիվ, և այդ պատճառով,

նվազաշարժ գորք: Դրանից օգտվեց Լուկուլլոսը. նա հարձակվեց դեռ շշարփած հակառակորդի վրա և այնպէս հիմնավոր նրան ցրեց, որ նույնիսկ իրենք՝ թագավորները, փախան ցցելով իրենց պատվանշանները:» [238]:

Գլուխ II.

«4. Լուկուլլոսը, Միհրդատի ու Տիգրանի դեմ Մեծ Հայրում՝ Տիգրանակերտի մոտ նախատեսվող ճակատամարտի համար զորքի մի մասով արագ գրադեցրեց մոտակա բլրի հարթ զազարը. այնուեղից նա վազրով իջավ ներքում տեղակայված հակառակորդի վրա և թեսից հարձակվեց նրա հեծելազորի վրա. վերջինս ետ դարձավ և կոխտուեց սեփական հետևակայինների շարքերը՝ իրենց հետևից ճեղքվելով, նա փառավոր հաղթանակ տարավ:» [29]:

Դիոն Կասսիոս Կոլկեան. Գիրք XXXVI. Քսիփիլինոս. 2, 3.

«2. ... Այդ բանից Տիգրանը, նորից սրտապնդվելով, այնքան մեծ զորքով առաջ եկավ, որ նույնիսկ ծիծաղեց այնտեղ զտնվող հոռմեացիների վրա պատմում են, ուրեմն, որ նա ինքը ասել է՝ եթե եկել են պատերազմելու, թիշ են, իսկ եթե եկել են դեսպանության՝ շատ են եկել:

3. Սակայն նրա հրճվաերը երկար չտևեց, այլ շուտով նրան պարզ դարձավ, թե որքան են քաջությունն ու արվեստը գերազանցում են ամեն մի թվի: Նրա փախուստից հետո զինվորները, զտնելով նրա խույրը և մոտիկ ընկած ապարոշը, հանձնեցին Լուկուլլոսին, քանզի փախենալով նրանց կողմից ճանաչվելով բոնվելուց, (արքան) պոկել էր դրանք ու դեն շարտել:» [51]:

Սալլուստիոս. IV. Հատվածներ. 69.

«Որովհետև տեղի նեղվածությունը (ասված է պարթև քաղաքոր Միհրդատին վերագրված այդ նամակում) զորքի բազմությանն արգելու էր հանդիսանում ճակատամարտ տալու՝ Տիգրանի անխոհեմությունը նրանք (հոռմեացիները) ցուցադրում են իրեն հաղթություն:» [29, 289]:

Օրոսիոս.

(Լատիներենիս իմացությունը դժվարությամբ բավարարում է ինչ-որ քան հասկանալու համար, ուստի չեմ հանդիսանում ներկայացնել սեփական քարզմանությունս, փոխարենը բերում

եմ լատիներեն տեքստը, որից օգտվելու ժամանակ կատարում եմ համապատասխան հղումներ)։

«HISTORIARUM ADVERSUM PAGANOS LIBRI VII LIBER 6. 3.6. praeterea Lucullus transgressus Euphraten et Tigrim, apud Tigranocertam urbem cum Mithridate et Tigrane congressus paruissima suorum manu magnum hostium numerum occidit; nam triginta milia hominum in eo bello caesa referuntur. <sup>7</sup> Tigranes uix centum quinquaginta equitibus comitatus aufugit diademate et tiara ne agnosceretur abiectis. tunc ad Lucullum totius paene orientis supplices uenere legati; imminentे hieme per Armeniam in Mesopotamiam regressus Nisibin urbem illis tunc locis inclitam expugnauit et cepit.» [279].

Եվտրոպիոս.

#### «EVTRUPII BREVIARIVM LIBER SEXTVS

[9] Ergo Lucullus repetens hostem fugatum etiam regnum Tigranis qui Armeniis imperabat ingressus est. Tigranocertam, civitatem Arzanenae, nobilissimam regni Armeniaci, cepit, ipsum regem cum septem milibus quingentis clibanariis et centum milibus sagittariorum et armatorum venientem decem et octo milia militum habens ita vicit, ut magnam partem Armeniorum deleverit. Inde Nisibin profectus eam quoque civitatem cum regis fratre cepit.» [279].

Ֆեզոն Տրալլացի (Այուլերի գրքում համապատասխան տեղը գրված է հունարեն, մեջբերումը համարեցի անտելի: Հ. Սանաւյանի տրված տեղեկությունները համապատասխանում են Այուլերին) [29, 271]:

Պլուտարքոսը իր երկերից մեկում մեկ անգամ ևս անդրադառն է Տիգրանակերտի ճակատամարտին՝ ներկայացնելով մարտնչող կողմերին այլ թվաքանակով, քան իր հոչակավոր «Կենսագրություններ»-ում:

Պլուտարքոս. «Թագավորների և զորավարների ասույթներ». 87. Լուկուլլոս. (իմ կողմից թարգմանված է ուստերենից)։

1. Լուկուլլոս Հայաստանում, տասը հազար հետևակով և հազար հեծյալներով գեաց Տիգրանի վրա, որը ուներ հարյուր հիսուն հազար զորք. զորքը նախքան հոկտեմբերյան տոններն էր, իսկ այդ օրը Կեափոնի հռոմեական զորքը ջախջախել էին

կիմվրերը: Ինչ-որ մեկը հիշեցրեց, որ հռոմեացիները այդ օրը համարում են անբարենպաստ ու վտանգավոր: «Հետո ինչ, - ասաց Լուկուլլոսը, - եկեք այսօր իմազախ մարտնչենք, որ այս օրը՝ Հոռովի համար ոչ բարի, «սիհց» սարքենք լուսավոր ու ուրախալի»։

2. Նրա զինվորները ամենաշատը վախենում էին զրահակիր հեծյալներից: «Մի վախեցեք, - ասաց կրանց Լուկուլլոսը, - հաղթանակը երանցից ավելի հեշտ է ետ իմել, քան զրահները»: Իսկ մոտենալով բյորին և նկատելով շարժում թշնամիների մեջ՝ ևս գոչեց. «Հաղթանակը մերն է, զինակիցնե՞ր», և, առանց դիմադրության բշեց թշնամուն այնպես, որ հռոմեացիներից զոհվեցին հինգ, իսկ հակառակորդից՝ ավելի քան տասը հազար» [194]:

Ժամանակակից պատմաբաններից Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքն են ուսումնասիրել Դրումանը, Նեյմանը, Թեոդոր Սումմենը, Ռեյնախը, Կուրտ Էրիարդը, Հ. Ասուրյանը, Հակոբ Սահանյանը, Եվգենի Ռազինը, Սարգսի Սարգսյանը, Ռուբեն Սանասերյանը և Հայկ Հակոբյանը [5, 11, 21, 29, 34, 171]: Վերոհիշյալ հեղինակների հետազոտությունները և արտահայտած կարծիքները շատ բազմազան և կարևոր են ճակատամարտի իրական ընթացքը վերականգնելու համար: Նրանց մակրամասն վերլուծությունը կզբանեցներ ես 70-100 է։

Նշարավոր է՝ ապագայում կգտնվի որևէ ռազմական պատմաբան, որը կվերլուծի և կգնահատի Տիգրանակերտի ճակատամարտի ուսումնասիրության պատմության մանրամասները: Այսպիսի աշխատանքը, ինչպես նաև ճակատամարտի ընթացքի համակարգչային մոդելավորումը ծանրակշիռ գիտական ատենախոսության արժանի թեմա է։

Նկարագրելով ճակատամարտի ընթացքը՝ ես միայն անհրաժեշտության դեպքում կանորադառնամ նախորդներին հայտնած կարծիքներին։

Մինչև ճակատամարտի մեր վերականգնումը շարադրելը և հիմնավորելը, անդրադառնամք սկզբնադրյուրներին։

Ըստ Պլուտարքոսի՝ Լուկուլլոսը, թողենելով Սուրենայի զրաբանակը Տիգրանակերտի մոտ, հոկտեմբերի 5-ին շարժվում է Տիգրանի բանակին ընդառաջ և գետի հակառակ ափի ընդարձակ դաշտում՝ Տիգրանի զորքերից ոչ հեռու, ճամբար է

դնում: Հաջորդ օր՝ առավոտյան, Լուկուլլոսի բանակը շարժվում է Տիգրանի վրա գետի հայկառակ ափով: Լուկուլլոսը, նկատելով հայկական բանակի թևում գտնվող հարք և լայն զագաթով բլուրը, որի ստորոտին կանգնած էին հայ կատաֆրակտուները, իր հեծելազորը ուղարկում է հայկական հեծելազորի վրա հարձակվելու համար, իսկ ինքը սուրբ ձեռքին հռոմեական կոհորտները տանում է հայոց ծանրազեն հեծելազորի վրա՝ հարվածելով նրան թից: Հայերը դեռ չէին հարդարել իրենց մարտական շարքերը:

Ճակատամարտի սկզբում, չղիմանալով հռոմեական բանակի թևային զրոհին, հայկական զրահապատ հեծելազորը խուճապահար փախչում է և միրճվում սեփական հետևակի մեջ, որից հետո սկսվում է համատարած փախուստը: Լուկուլլոսի հրամանով հետապնդումը շարունակվում է մինչև ուշ գիշերը:

Այս նկարագրությունից հասկանալի չէ, թե այս ժամանակահատվածում ինչ էին անում Տիգրանի կենտրոնը և ձախ թևը: Ստեղծվում է տպավորություն, որ Պլուտարքոսը պատմում է ճակատամարտի մասին իր հայտնի պատմության միայն այն մասը, որտեղ զրահով և անվեհեր քաջությամբ զիշավոր գործող դեմքն է ինքը՝ Լուկուլլոսը:

Պլուտարքոսից մենք ստունում ենք շատ կարևոր մանրամասնություններ կայացած ճակատամարտի մասին.

1. Ճակատամարտի նախորդ օրը Լուկուլլոսը Տիգրանի բանակի մոտակայքում դրել է դաշտային ճամբար.
2. Լուկուլլոսը ճակատամարտը սկսել է դեռ շարքերը չհարդարած հայկական բանակի դեմ.
3. Հռոմեական լեզենները զրադեցրել են իրենց ձախ թևում գտնվող բլուրը և այնտեղից թից հարվածել են հայկական կատաֆրակտուների գնդերին.
4. Ճակատից հայկական զրահապատ հեծելազորի վրա զրոհել է հռոմեացիների հեծելազորը.
5. հայկական հեծելազորը միրճվել է սեփական հետևակի շարքերը, որից հետո սկսվել է համատարած խուճապ և փախուստ.
6. Հռոմեական բանակը երկար և համար հետապնդել է պարտված հայերին:

Ինչ վերաբերում է հայկական և հռոմեական զորքերի տեղաշարժերին, ապա ամեն ինչ նկարագրված է խառնաշփոթ և

անհստակ: Փոխարենը, ճակատամարտի ընթացքը համեմված է մասնակիցների ճառերով:

Ճակատամարտին մասնակցած հայերի թիվը Պլուտարքոսը նշում է 260.000, իսկ հռոմեացիներինը՝ 15.000:


Զոհվածների թիվը Պլուտարքոսը նշում է հայերից՝ ավելի, քան 100.000 սպանված հետևակից և զրեթե ողջ հեծելազորը (50.000?), իսկ հռոմեացիներից՝ 5 սպանված և 100 վիրավոր:

Իր մեջ ուրիշ ստեղծագործության մեջ, մեծ հոյնը մոռանում է իր վերոհիշյալ թվերը՝ նշելով ճակատամարտում մասնակցած հայերի և հռոմեացիների թիվը համապատասխանաբար 150.000 և 11.000: Կորուստների մասին տվյալները նույնապես փոխված են՝ արդեն սպանվել է 10.000 հայ, հռոմեացիների կորուստները նախկինի նման 5-ն են [42, 194]:

Պլուտարքոսի նկարագրությունը թերի է և եթե ընթրունի որպես ճակատամարտի վերջնական պատկեր՝ անհավանական: Վերջին երկու դարի հետազոտողների մեծ մասը ընդունել է Պլուտարքոսի տվյալ նկարագրությունը, սակայն ուզմական պատմության այնպիսի ակնառու գործից, ինչպիսին Հանս Շելբրուկն է, հեգնանքով է խոսում այսպիսի առասպելական նկարագրություններին հավատացողների մասին [100, 101]:

Հակոբ Մանանյանի մենագրությունում բերված Տիգրանակերտի ճակատամարտի գծանկարը (ուես գծանկար 5.11.) միայն մասնակիորեն է համապատասխանում Պլուտարքոսի նկարագրությանը [29]: Գծանկարում հռոմեական բանակի հետևագործ հիմնական հատվածը ճակատային զրոհ է ձեռնարկում հայկական հետևակի վրա, իսկ հայերի հեծելազորը գտնվում է միայն նրանց աջ թևում, չնայած Պլուտարքոսը միանշանակորեն ասում է, որ հայկական զրահապատ հեծելազորի հիմնական մասն էր կենտրոնացած հայերի աջ թևում: Գծանկարի խոշոր թերություններից է զորքերի զանգվածների ոչ մասշտաբային պատկերումը, որի հետևանքով, ըստ Պլուտարքոսի վկայության, ճակատամարտում մասնակցած 3.000 հռոմեական և 55.000 հեծելազորի ուղղանկյունները նույն շափսի են: (Գծանկարում անհասկանալի է նաև հայկական հետևակի խուճապի պատճառը:)

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, որ առանց Պլուտարքոսի հայտնած տեղեկությունների, ճակատամարտի մեր վերականգնման փորձը կիններ խիստ թերի:



Գծանկար 5.11. Տիգրանակերտի ճակատամարտը ըստ  
Պլուտարքոսի (Հ.Մանանյանի մենագրությունից)

Ապահանոսը նկարագրում է Տիգրանակերտի ճակատամարտի այն մանրամասնությունները, որոնք չի ցանկանում նշել Պլուտարքոսը: Մանրամասները այնքան ել նպաստավոր չեն Լուկուլոսին փառաբանելու համար. նա գրոհում է գումարի վրա: Ապահանոսից մենք իմանում ենք հետևյալ կարևոր տեղեկությունները.

1. Լուկուլոսը հրամայում է հեծելազորին անհանգստացնել հայերին ճակատից, հետո քաշել իրենց կողմը և կամովին եւ նահանջել, որպեսզի հայկական հեծելազորի շարքերը քայլա-

### Վեն:

Այսուեղ հասկանալի չէ՝ ինչու պետք է նահանջի հոռմեական հեծելազորը: Այդ կեղծ նահանջը որպակապես և թվապես գերազանցող հեծելազորից կարող է բերել հեծելազորի քայլայմանը և ոչնչացմանը, անկախ հետևակային մարտի ելքից:

2. Լուկուլոսը հետևակով անցնում է հայերի թիկունքը և գրոհում է հայկական բանակի թիկունքում կանգնած գումարի վրա:

Անհասկանալի է՝ ինչպէս է հաջողվում Լուկուլոսին անկատ անցկացնել հոռմեական լեզեռները հայկական բանակի թիկունք: Տիգրանը չի նկատում մարտի դաշտում Լուկուլոսի բանակի հիմքը կազմող հոռմեական ծանր հետևակայի բացակայությունը:


3. Թիկունքից հարձակման ենթարկված գումակն ընկնում է իր առջևում կանգնած հետևակի վրա, վերջինս կազմալուծվում է և խառնվում հեծելազորի հետ:

Այս պահը նոյնական այնքան էլ հասկանալի չէ, որովհետև հոռմեական հեծելազորին հետապնդող հայկական հեծելազորը կամ նրա ստվար մասը արդեն բավականին հեռացել էին հայկական հետևակի դիրքերից (որը դեռ չկը հասցել շարքերը հարդարել): Ինչպէս կարող էր հայկական հետևակը խառնվել հոռմեական հեծելազորին հետապնդող հայկական հեծելազորի հետ:

4. Տեղեկանում ենք, որ հայկական բանակի հետապնդումը կրել է ուազմավարական ընույթ և շարունակել է 120 ասպարեզ՝ մինչև ուշ գիշեր:

Ապահանոսի տեղեկությունները, ինչպէս Պլուտարքոսինը, անկյունաբարային են ճակատամարտի հնարավոր ընթացքը վերականգնելու համար: Համայութեալ Ապահանոսի պատմածը Պլուտարքոսի պատմածի հետ՝ նկատվում է, որ անցանկալի մանրամասնությունները չի ներկայացնում Պլուտարքոսը:

Տակոր Մանանյանի մենագրությունում բերված Տիգրանակերտի ճակատամարտի գծանկարը (ունի գծանկար 5.12.) հիմնականում համապատասխանում է Ապահանոսի նկարագրությանը, սակայն գծանկարից բացարձակ հասկանալի չէ՝ որտեղից հայտնվեց հոռմեական հետևակը ... [29]:



Գծանկար 5.12. Տիգրանակերտի ճակատամարտը ըստ Ապալյանոսի (Հ. Սանանյանի մենագրությունից)

Մեմնոնի կարծ հաղորդման մեջ կան շատ կարևոր դրույթներ.

1. Լուկուլլոսը բաջակերելով իր զորքը՝ խսկոյն փախուստի մատնեց աջ թևը:
2. Հետո սրա միջոցով էտ մղեց հարևան զորքը (կենտրո՞նը, - Ա. Գ.) և սպա հերթով՝ ամբողջ զորքը:
3. Հայերն ահարեկված ու անզուսաց կերպով դիմեցին փախուստի, և մարդկանց թվին համեմատ էր նաև նրանց կոտորածը:

Ըստ Մեմնոնի՝ հայկական բանակը միանգամից չի կազմականացվել և դիմել փախուստի: Մկրում պարտվել է աջ թևը, հետո կազմականացվել կենտրոնը, վերջում միայն՝ ձախ թևը: Նշանակում է, ճակատամարտը այդրան է կարճատև չի եղել:

Նշմարվում է հայկական բանակին հասցված ուժեղ թևային հարվածը, որի հետևանքով վերջինս պարտություն է կրում:

Ըստ Ֆրոնտինոսի Լուկուլլոսի հաղթանակի գրավականն էին.

1. Տիգրանի բանակի մեծաքանակության պատճառով առաջացած դժվարաշրժությունը և դանդաղ կոտորությունը. Լուկուլլոսի բանակի հարձակման պահին հայերը դեռ շարված չէին:
  2. Լուկուլլոսի գործողությունների արագությունը. զորքի մի մասով արագ զրադեցրեց մոտակա բլրի հարթ գագարը. Այնտեղից նա արագ վագրով իջավ ներթևում տեղակայված հակառակորդի վրա:
  3. Լուկուլլոսի իրականացրած արդյունավետ թևային հարվածը հայկական հեծելազորի վրա:
- Ֆրոնտինոսի հաղթանակը հականորեն հարստացնում է մեր պատկերացումները Տիգրանակերտի ճակատամարտի մասին:

Դրոն Կասիոսը ոչ մի մանրամասնություն Տիգրանակերտի ճակատամարտի մասին չի հաղորդում:

Սալլուստիոսին է պատկանում շատ կարևոր հաղորդում, որը կարևոր է ճակատամարտի ողջ ընթացքի բնույթը և արդյունքը ընկալելու համար.

1 ... տեղի նեղվածությունը զորքի բազմությանն արգելք էր հանդիսանում ճակատամարտ տապա. Տիգրանի անխոհեմությունը հոումացիները ցուցադրում են իրն հաղթություն [29]:


Օրոգիուսը նշում է Տիգրանի բանակի զոհերի բանակը ճակատամարտում՝ 30.000 մարդ:

Եվտրոպիուսը՝ ճակատամարտում մասնակցած հայկական բանակի մասին բերում է իր տվյալները՝ 100.000 հետևակ և 7.500 զրահակիր հեծելազոր:

Ֆեգոն Տրալլացու հաղորդած տեղեկությունները մեր կարծիքով վերաբերում են որիշ՝ 68 թ. տեղի ունեցած երրորդ զիլավոր ճակատամարտին, սակայն հետազոտողների մի մա-

սր ճակատամարտում մասնակցած հայերի թիվը՝ 30.000 հեծյալ և 40.000 հետևազոր, վերագրում է Տիգրանակերտի ճակատամարտին [11, 29, 34]:


Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքի մասին նոր ժամանակի պատմաբանների կարծիքները կարելի է բաժանել երեք խմբի՝ առաջինը այն հետազոտավորներն են, որոնք հիմնականում հարում են Պլուտարքոսի պատմածին, երկրորդը՝ Ապպիանոսի տարբերակին, երրորդը՝ որոնք փորձում են միացնել Պլուտարքոսի և Ապպիանոսի հաղորդումները, չորրորդը՝ ըստ Եության Ժմտում են Տիգրանակերտի ճակատամարտի՝ որպես զլանվոր (генеральное сражение) ճակատամարտ լինելու փաստը:



Գծանկար 5.13. Տիգրանակերտի ճակատամարտը ըստ Եվգենի Ռազինի [199]:

Սարգս Սարգսյանի Տիգրանակերտի ճակատամարտի նկարագրությունը հետաքրքիր է ներկայացված գծանկարում (տես գծանկար 5.14.) [45]: Այսուել հոռմեական հեծելազորը պատկերված է մոտավորապես երկու անգամ ավելի շատ, քան

հայկականը: Անհասկանալի է, թե ինչո՞ւ Տիգրանը չի նկատում հոռմեական հետեակի շրջանցող զորաշարժը:




Գծանկար 5.14. Տիգրանակերտի ճակատամարտը ըստ Սարգսյանի [45]:

### 5.2.1.Լուկուլլոսի ճակատամարտի պլանը և հոռմեական բանակի դիսպոզիցիան

Ա.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 5-ին Լուկուլլոսը, թողնելով Տիգրանակերտի տակ Մուրենայի 14.000-ոց զորաբանակը, իր մասցած ուժերով շարժվում է դեպի Տիգրանի բանակը և երեկոյան ճամբար դնում գետափին: Տիգրանի բանակը գտնվում է գետի հակառակ ափից որոշակի հեռավորության վրա: (Գծանկար 5.15. Լուկուլլոսի բանակի շարժը դեպի Տիգրանի բանակը):

Հաջորդ օրը՝ առավոտյան, Լուկուլլոսը թողնում է իր դաշ-

տային ճամբարի պահպանության համար Սերստիլիոսի լեզեռնի երկու հոռմետական և երկու դաշնակցային կողորտ՝ 1.000 լեզեռներ և 850 զալատական ծանրազեն հետևակ, և մասցած ուժերով շարժվում Տիգրանի բանակի վրա: Այս գործողությունները հոռմետական ավանդական մարտավարության տիպիկ նմուշ են՝ ճակատամարտի դաշտի մոտակայքում ունենալ ամրացված ճամբար, ուր անհաջողության դեպքում կարող էր պատսպարվել հոռմետական բանակը: Հատկապես դա կարևոր էր այն դեպքում, եթե հակառակորդը ուներ ուժեղ հեծելազոր և մեծաքանակ թերթակներ:



Գծանկար 5.15. Լուկուլլոսի բանակի շարժը դեպի Տիգրանի բանակը

Եթե հոռմետական բանակի ընդհանուր թվից հանենք հոռմետական երկու ճամբարներում գտնվածներին՝ 48.000-ից 16.000-ը, ապա անմիջապես Ճակատամարտին մասնակցած հոռմետական բանակի թիվը կկազմի 32.000 զինվոր:

Պարզէնք ճակատամարտին մասնակցած Լուկուլլոսի զինվորների թիվը.

- երկու ֆիմբրիական լեզեռն՝ 8.000 լեզեռներ (20 կողորտ).
- Սերստիլիոսի լեզեռնից՝ 2.000 լեզեռներ՝ (4 կողորտ).
- ընդամենը՝ 10.000 լեզեռներ 24 կողորտում, նաև
- Լուկուլլոսի թիվնազորը (Սերստիլիոսի լեզեռնից)՝ 1.000 լեզեռներ (2 կողորտ).
- ընդամենը 11.000 լեզեռներ 26 կողորտում.
- թերթազեններ՝ 750 զինվոր (2 կողորտ).
- իտալիկյան հեծելազոր՝ 2.670 հեծյալ (12 ալա):

Ընդամենը ճակատամարտում մասնակցած հոռմետացիների (ընդհանրապես իտալիկների) թիվը՝ 14.520 զինվոր՝ մոտավորապես՝ 14.500 (մոտավորապես 15.000) զինվոր:

Լուկուլլոսի բանակում ճակատամարտի դուրս եկած դաշնակիցների թիվը.

- բութանիացի ծանր հետևակ՝ 8.500 զինվոր (20 կողորտ).
- զալատացի ծանր հետևակ՝ 2.550 զինվոր (6 կողորտ).
- թրակիացի թերթազեններ՝ 1.500 զինվոր (4 կողորտ).
- թրակիական և զալատական հեծելազոր՝ 5.053 հեծյալ (19 ալա).

Ընդամենը ճակատամարտում մասնակցած հոռմետացիների դաշնակիցների թիվը՝ 17.603 զինվոր, մոտավորապես՝ 17.500 զինվոր:

Այդպիսով՝ ճակատամարտում մասնակցած Լուկուլլոսի բանակի թիվը հասնում էր 32.000 զինվորի, որից՝

- ծանրազեն հետևակ՝ մոտավորապես 22.000 զինվոր.
- թերթազեն հետևակ՝ մոտավորապես 2.250 զինվոր.
- հեծելազոր՝ մոտավորապես 7.750 հեծյալ:

Մեկ անգամ ևս ստուգենք հոռմետական բանակի ուժերի տեղաբաշխումը:

Հայաստան արշաված 4 լեզեռնում կար 40 կոհորտ, որոնցից ֆիմբրիական լեզեռններում, որոնք հավաքագրվել էին 86 թ. և մեծաթիվ կորուստներ էին ունեցել 87-69 թթ. բազմաթիվ ծանր մարտերում, կոհորտաներում միջինում մնացել էր 400-ական լեզեռներ, ընդամենը երկու լեզեռնում՝ 8.000 լեզեռներ: Լուկուլլոսյան երկու լեզեռները հավաքագրվել էին 74 թ. և համարվել էին Բարբայի Խոալիայից բերված զինվորներով մինչև լեզեռնի լրիվ կազմ՝ 6.000-ական լեզեռներ: Այս լեզեռները 69 թ. մարտերում կրեցին զգալի կորուստներ՝ մոտավորապես 1.000-ական լեզեռներ, սակայն, նույնիսկ այս կորուստներից հետո ունեին ավելի լրիվ կազմ, քան ֆիմբրիական լեզեռները, ուստի ընդուներով նրանց կոհորտներում միջինը 500 լեզեռներ, ստանում ենք երկու լեզեռնում՝ 10.000 լեզեռներ:

Այդպիսով, Տիգրանակերտի ճակատամարտից առաջ, չորս լեզեռնում կար 18.000 լեզեռներ, որոնք 69 թ. հոկտեմբերի 6-ի առավոտյան տեղաբաշխված էին առյուսակ 5.2.1.1.-ում նշված ձեվով.

**Առյուսակ 5.2.1.1. Հռոմեական լեզեռների տեղաբաշխումը Տիգրանակերտի ճակատամարտի օրը**

		Կոհորտներ
Մասնակ-ցել են ճակատա-մարտին	Զախ թևում 2 ֆիմբրիայի լեզեռն և Սեբատիլիոսի 4 կոհորտ՝ 10.000 լեզեռներ	20 կոհորտ 400 լեզեռներով և 4 կոհորտ 500 լեզեռներով - 24
Մասնակ-ցել են ճակատա-մարտին	Լուկուլլոսի թիկնապահ-ներ՝ Սեբատիլիոսի 2 կոհորտ՝ 1.000 լեզեռներ	2 կոհորտ 500 լեզեռներով - 2
Չեն մաս-նակցել ճակատա-մարտին	Գետափի դաշտային ճամբարում՝ Սեբատիլիոսի 2 կոհորտ՝ 1.000 լեզեռներ	2 կոհորտ 500 լեզեռներով - 2

Չեն մաս-նակցել ճակատա-մարտին	Պաշարողական ճամբա-րում, Սուբենայի հրա-մանատարության տակ – լուկուլլոյան մեկ լեզեռն և Սեբատիլիոսի 2 կոհորտ՝ 1.000 լեզեռներ	12 կոհորտ 500 լեզեռներով - 12
	Ընդամենը	40

Եվտրոպիուսը նշում է Հայաստան արշաված զինվորների թիվը՝ – 18.000 զինվոր (լեզեռներներ՝ թ), որը համընկանում է ճա-կատամարտում մասնակցած լեզեռներների թվի հետ: Մեր հայ պատմաբանների փորձերը՝ Լուկուլլոսի 4 լեզեռնի մեջ հաշվել 24.000 լեզեռներ՝ ենելով նրանից, որ լեզեռնի կազմում, ըստ օրենքի, նախատեսվում եր ունենալ 10 կոհորտ 600-ական լե-զեռներներով, ակներև սիսալ է, որը զայիս է հոռմեական ուսպ-մական գործի յուրահատկություններին անտեղյակ լինելուց: Հին հռոմեացիները, որպես օրենք, ոչ թե համալրում էին լեզե-ռները, այլ կազմում նորերը, որի պատճառով որոշ լեզեռնե-րում լեզեռներների թիվը նվազում էր մինչև 3.000 (հետագա-յում՝ Հուլիոս Կեսարի մոտ նույնիսկ մինչև 1.000 զինվոր) [249, 250]: Բարբայի բերած զինվորներով համարված Լուկուլլոսի երկու լեզեռները ոչ թե օրինաշափություն, այլ բացառություն էին: Լուկուլլոսի մնացած գործերի մասին Եվտրոպիուսը չի նշում: Սա մի հնարք է սեփական ուժերի թիվը քացնելու համար, նշվում են միայն թվիրիտները՝ Հռոմի քաղաքացինե-րը՝ ծանրագեն հետևակը, որովհետև հաճախ թեթևագենները և հեծելազորը, որոնք բերված էին Խոալիայից, կազմված եր նույնիսկ ոչ թե իտալիկներից, այլ ցիզալայան զալերից կամ հռոմեացիների տիրապետության տակ վաղուց ապրող այլ ժո-ղովորդներից:

Պլուտոարքոսը, որը երբեմն որոշակի անփութությամբ է վե-րաբերվում թվերին կամ զինում է նրանց իր բարոյախոսական նախատակներին, նշելով Լուկուլլոսի ներխուժման կամ ճակա-տամարտում մասնակցած բանակի թվաքանակը, պատահ-մամբ թե զիտակցարք չի “նկատում” դաշնակիցներին՝ նաև

մոռանալով նշել Սուրենայի 6.000 լեզեռներին և 1.000 թերևագեններին (կարող է նրա համար, որ ներխուժելով Հայաստան՝ Սովորում հոռմեական բանակը շարժվում էր երկու էշելնով՝ Սուրենայի զորաբանակն էլ հենց երկրորդ՝ հետևի էշելնն էր): Դա չի խանգարում Պլուտարքոսին՝ հետազոյում, նկարագրել իր շշվարկված զորքերի գործողությունները: Այդպիսով, վերականգնելով Պլուտարքոսի պատահական բացրուրումները, ստանում ենք 18.000 ծանրազեն, մոտ 1.000 թերևազեն և մոտ 3.000 (2.670) հեծյալ, ընդամենը՝ 22.000 զինվոր բուն հոռմեական բանակում Տիգրանակերտի ճակատամարտի նախօրեին, որը ճիշտ է:

Ապահանուր Հայաստան ներխուժած հոռմեական բանակի թիվը նշում է՝ երկու ընտիր լեզեռն և 500 ձիավոր: Նա փաստուրներ չի նշում ոչ միայն դաշնակիցներին, այլ նաև ֆիմբրիական երկու լեզեռնը (8.000 լեզեռներներ), թերևազեններին (1.000 խույիկներ), իսկ հեծելազորից միայն բուն հոռմեացիներից կազմվածը՝ չնշելով 2.500 իտալիկներին: Լուկովորը սկսել էր պատերազմը Հայաստանի հետ առանց ծերակրպությունների և շահազգրված չեր նշել ֆիմբրիական երկու լեզեռնի մասնակցությունը, որոնք իրեն վերանքթարկված էին միայն Միհրդատի դեմ պատերազմ վարելու համար:

Պատմելով Տիգրանակերտի ճակատամարտի մասին՝ Պլուտարքոսը արդեն հիշատակում է 1.000 պարսավոր և աղեղնավոր թերևազեններին և նշում, որ 6.000 լեզեռներ թողնվել եր Տիգրանակերտի պարհապների տակ: Սակայն Պլուտարքոսը չի հիշատակում դաշտային ճամբարի 1.000 լեզեռներներին և Լուկովորի թիկնազորը՝ երկու ընտիր կոնորտների՝ 1.000 լեզեռներների մասին, որոնց նախատեսված չեր օգուազդել մարտում, և որոնք գրոհեցին միայն Լուկովորի նախաձեռնությամբ:

Ֆրոնտինիուսի տվյալները առանձնապես չեն տարբերվում Պլուտարքոսի հաղորդածից, սակայն զարմանալի ձևով նշում են ճակատամարտում մասնակցած բուն հոռմեական բանակի թիվը՝ 15.000 զինվոր, որից (մեր հաշվարկով) 11.000 լեզեռներ, մոտ 1.000 թերևազեն և մոտ 3.000 հեծելազոր [238]:

Ստորև մենք մանրամասն կրենենք ճակատամարտի ընթացքը, որում վճռորոշ դեր կատարեցին լեզեռներները և հեծելազորը, այսինքն 11.000 լեզեռներները, 1.500 թերևազենները և 7.750 հեծյալները, ընդամենը՝ 20.250 զինվոր: Մնացած 11.750 դաշնակից զինվորները կատարել են ցուցադրական՝ դեմոստրացիոն զորաշարժ, հնարավոր է, որ 1.500 թերևազենները նաև մասնակցել էին Տիգրանի բանակի հետապնդմանը:

Այս դաստիարակություններից հետո կարող ենք պնդել, որ Տիգրանակերտի ճակատամարտում հոռմեական բանակի բանակը, կազմը և դեկավարությունը մեզ հիմնականում հայտնի են:

Անցնենք հոռմեացի զորավարի հնարավոր ծրագրերի ու մտահղացումների բացահայտմանը:

Անկասկած, Լուկովորը բարձր էր գնահատում Տիգրանի զորավարական տաղանդը և հայկական բանակի մարտունակությունը:

Այն բոլոր պարձենկուտ խոսքերը, որոնք ասվում են հաղթանակից հետո, բացարձակապես չեն արտահայտում այն լարվածությունը, որով նախապատրաստվում է այդ հաղթանակը: Բուն ճակատամարտից առաջ ամեն ինչ գնահատում և հաշվում են այնպես, ինչպես որ կա իրականում:

Լուկովորը ամեն ինչ արել էր, որ հանդիպի ճակատամարտում Տիգրանի հնարավորինս վորք բանակի հետ: Դրան էին նպաստել ինչպես հաջողված դիվանագիտական (Կոմմագենե), այնպես էլ Սուրենայի և, հատկապես, Սեբատիյոսի, ուզմական հաջորդությունները (Օսրոյենեի բանակը): Սակայն նույնիսկ ոչ լրիվ կազմով հայկական բանակը ներկայացնում էր 70-80.000 զինվորներից բաղկացած, փորձառու զորավարներով դեկավարվող հսկայական զանգված, որի հարվածին նա պետք է դիմանար: Հատկապես մտահոգիչ էր հայկական հեծելազորը, որը ոչ միայն ավելի քան երկու անգամ գերեզմանում էր հոռմեականին, այլև ավելի մարտունակ էր:

Լուկովոր ենթադրում էր, որ Տիգրանը իրեն փորձելու է

պարտադրել կանոնավոր ճակատամարտ՝ հետևակը կենտրոնում, հեծեկազորը՝ թերին: Եթե նա ընդուներ Տիգրանի մարտառք և զնար ճակատային բախմանը, ապա Տիգրանը սկզբում թերում պարտության կմատներ ու կցրեր բռյլ հռոմեական հեծելազորին, իսկ հետո կսղմեր հռոմեական հետևակը իր մեծաթիվ հետևակի ու հեծելազորի միջև, որից հետո այդ մահաբեր շրջապատման օղակից դուրս պրծնելը շատ դժվար գործ կլիներ:

Տիգրանի նպատակը Լուկուլլոսի համար «Կաններ» նախապատրաստելն էր: Սակայն «Կաններ»-ի համար անհրաժեշտ էր ոչ միայն Հաննիբալի, այլև Վարրոնի առկայությունը: Իսկ Լուկուլլոսը ամենին Տերենցիոս Վարրոն չէր:

Լուկուլլոսը ընդունում է Տիգրանի համար անսպասելի մի որոշում, որը իրականացնելուց հետո իր անունը ուսկե տառերով էր գրվելու համաշխարհային ռազմարվեստի պատմության էջերում: Կանխատեսնելով հայկական բանակի դասավորությունը՝ նա որոշում է առջևից հեծելազորով հարվածել հայկական կիսադասավորված զորքերին, ձեռնամարտի բռնվել հայկական հեծելազորի հետ, մինչև հայկական զորքի աջ թևի մոտակայրում գտնվող բրի հետևից հռոմեական լեզեռները անկատորեն շրջանցեն հայկական բանակը և թիկունից հարվածեն գումակին, իսկ աջ թևից՝ կատաֆրակտուներին: Նրա մոտակայրում էր՝ թևային հարվածով շահել ճակատամարտը՝ օգտագործելով իր բանակի հիմնական զորատեսակը՝ լեզեռները: Նրա համար, որ Տիգրանը շրջացահայտի իր մտադրությունները, Լուկուլլոսը պետք է դաշնակիցների ծանր հետևակը դասավորեր կոհորտներով և ցույց տար Տիգրանին որպես հռոմեական լեզեռներ, այս էլ այնքան համոզիչ որ համոզեր Տիգրանին, որ սա է իր զլաւակը ուժը, մինչև որ իսկական լեզեռները կկատարեին հայկական բանակի շրջանցումը: Դրա համար Լուկուլլոսը օգտագործեց իր մոտ պահված մոտ 2.000 զոհված լեզեռներների սպառազինության կոմպլեկտները, որով նա զինեց դաշնակիցներին՝ բութանիական ծանր հետևակը:

Լուծումը շատ հանդուզն էր. եթե հայոց արքան ունենար ուժեղ ռեզերվ, մասնատված հռոմեական բանակի պարտությունն անխուսափելի էր:

Հոռոմեական բանակի հիմնական ուժի՝ լեզեռների ձախթի և թիկունիքի հարվածը հեծելազորի ճակատային գրոհի և դաշնակիցների փաղանգի ցուցադրական գործողությունների ֆոնի վրա պետք է ապահովեն հռոմեացիների հաղթանակը: Դաշնակիցների կոհորտների և թեթևագենների բացակայության դեպքում Տիգրանին դժվար կլիներ համոզել, որ ողջ հռոմեական բանակը իր առջևում է: Բացի դրանից, դաշնակցային 11.000-ոց զանգվածը անհրաժեշտ օպերացիոն կապ էր ստեղծում հեծելազորի և հայերին շրջանցող լեզեռների միջև:

Անհաջողության դեպքում հռոմեական զորքերը կարող էին նահանջել և պատսպարվել դաշտային ճամբարում, իսկ Սուրենայի 14.000 զորքանակը ընդունակ էր հետ մղել Տիգրանակերտից դուր եկած հայկական զորամասերին և պաշտպանվել թե՛ Տիգրանակերտից պաշտպանների, թե՛ Տիգրանի բանակի հնարավոր հարձակումներից. Եթե Լուկուլլոսը անհաջողություն կրեր ճակատամարտում: Եվ Կիզիկոսի հերոսը ընդունակ էր պատրաստած լինել այնպիսի դաշտային ամրություններ, որոնք դիմանային ուժեղ բանակի գրոհին: Լուկուլլոսի հիմնական հովարդ հռոմեական լեզեռների արտակարգ շարժունակության և մարտունակության վրա էր: Այդ պատճենով 10.000 զորհաղ լեզեռներների կորիզը կազմում էին երկու ֆիմբրիական լեզեռների պողպատակութ վետերանները:

## 5.2.2.Տիգրանի ճակատամարտի պլանը և հայկական բանակի դիսպոզիցիան

Այժմ անդրադառնանց հայկական բանակի կազմին:

Ապահովանության հաղորդումը ճակատամարտին մասնակցած հայկական 250.000 հետևակազորի և 50.000 հեծելազորի մասին ավելեր բյուրիմացություն է և, ըստ երևույթին, ավելի շատ արտացոլում էր հայկական կայսրության ընդհանուր զինուժի մոտավոր բանակը և մորթիկացինն հնարավորությունները, քան դաշտային բանակ հանելու ունակությունը: Հիշենք, որ շին աշխարհի ուգմական պատմությունը այդպիսի մեծության դաշտային բանակներ գրանցել է միայն շին Զինաստանում: Արդեն 100.000-ոց բանակը համարվում էր շատ խոշոր և պատմության

մեջ թիւ էն դեպքերը, որ այդ թիվը զգալիորեն գերազանցվեր: 69 թ. վիճակով, հայկական կայսրության ռազմական կարողությունները այդպիսի հնարավորություններ չէին ընձեռում:

Պլուտարքոսը իր վկայության մեջ բերում է Ասպիհանոսի հաղորդածին մոտ թվեր, որ նույնպես ավելի շատ վկայում էն Տիգրանյան տերության ընդհանուր ռազմական կարողությունների մասին: Պլուտարքոսը նաև նշում էր տարբեր զորատեսակների թվաքանակը, որը շատ արժեքավոր տեղեկություն է ոչ միայն Տիգրանի ողջ բանակի, այլև Տիգրանակերտի ճակատամարտում մասնակցած հայկական ուժերի հնարավոր կազմը պատկերացնելու համար: Ըստ Պլուտարքոսի (Lucullus, 26, 9) Տիգրանը ճակատամարտում ուներ:

20.000 աղեղնավոր և պարսավոր,  
55.000 ձիավոր, որոնցից 17.000 զրահավոր,  
150.000 ծանրազեն հետևակ,  
35.000 կամուրջ և ճանապարհ շինող և այլ աշխատող,  
ընդամենը՝ 260.000 զինվոր:

Եթե այս բանակը երեք անգամ փորբացնենք (Մեմնոնի հաղորդած 80.000 թվին համապատասխան), ապա կստանանք.

6.000 աղեղնավոր և պարսավոր,  
17.000 ձիավոր, որոնցից մոտ 7.000 զրահավոր,  
46.000 ծանրազեն հետևակ,  
11.000 կամուրջ և ճանապարհ շինող և այլ աշխատող,  
Ըստամենը՝ 80.000 զինվոր:

Ֆլեգոնը, ըստ Կուրտ Էրիարդի արտահայտած կարծիքի, շփոթելով Տիգրանակերտի ճակատամարտում մասնակցած հայկական բանակի թվաքանակը Արածանիի ճակատամարտի հետ, նշում է 30.000 ձիավոր և 40.000 հետևակ [11]: Մենք կարծում ենք, որ Ֆլեգոնի նշված թվերը վերաբերում են Հայաստանի հարավում 68 թ. ուշ աշնանը կայացած երրորդ մեծ ճակատամարտին: Եթե համեմատ դեպք, ենթադրենք, որ Էրիարդը ճիշտ էր, ապա Ֆլեգոնի և Մեմնոնի տվյալները գրեթե լրիվ համընկնում են: Պարզապես Ֆլեգոնը չի նշում ոչ մարտական ստորաբաժանումների թիվը:



Նկար 5.16. Կատաֆրակտոս, I դ. (Ա. Գորեկիկի վերականգնումը, նշենք, որ մ.թ.ա. I դ. առաջին կեսին ազդյերը դեռ զրահով պաշտպանված չէին):

Եվտրոպիուսը հաղորդում է 100.000 հետևակի և 7.500 զրահակիր հեծելազորի մասին: Այս թվերը նույնպես շատ հետաքրքրիք են: 7.500 կատաֆրակտոսներ Տիգրանը կարող էր հավաքել ճակատամարտի համար: Ավելին, եթե քննում ենք Պլուտարքոսի հաղորդած հայկական բանակի տեսակների համամասնությունը, հանգում ենք այն եզրակացության, որ դա ոչ միայն հայկական ճոշավոր այրումին էր, այլ նաև մեղականը:

Եթե փորձենք համաձայնեցնել Պլուտարքոսի տվյալները Մեմնոնի հաղորդածի հետ, հաշվի առնելով նաև Եվտրոպիոսի թվերը, ստացվում է, որ Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցած հայկական բանակի թվաքանակը ըստ զորատեսակների կարող էր լինել հետևյալը.

20.000 ձիավոր, որոնցից 7.500 կատաֆրակտոս.

5.000 աղեղնավոր և պարսավոր.

45.000 ծանրազեն հետևակ.

10.000 կամուրջ և ճանապարհ կառուցող և այլ աշխատող.

ընդամենը՝ 80.000 զինվոր:

Կարո՞ն էր Տիգրանը հավաքել 100.000 հետևակ: Անշուշտ, սակայն դրան խոչնորությունների հոռմեացիների ակտիվ դիվանագիտական և ռազմական գործողությունները, որի հետևանքով

Տիգրանի ենթակա որոշ թագավորություններ և իր մոտ ժամանող զորքերի մի մասը չմասնակցեց ճակատամարտին: Հնարավոր ենք համարում, որ եթե չինեին այս խոշջնդրությունները, ապա Տիգրանը ի վիճակի էր հավաքել ավելի մեծ բանակ:

Հետաքրքիր է նշել հռոմեական բանակի ավելի մեծ շարժունակությունը՝ ըստ մեր հաշվարկների, հռոմեական 55.000-ոց բանակի 4%-ից պակաս թիվ (2.000 մարդ) էին կազմում օժանդակ ստորաբաժնումները, իսկ հայկական 80.000 բանակի՝ 12.5%-ը (10.000 մարդ):

Եթե հիշենք սելևկյան բանակների մեծաթիվ գումակները, այս թվերը զարմանալի չեն բայց: Եթե Անտիոքոս Գ բանակի մեկ հռայիսին սպասարկում էր մեկ ծառա, իսկ ձիավորին՝ երկու, բնական է, որ 80.000 բանակին ուղեկցեր մոտ 160.000 սպասարկող անձնակազմ, որտեղից էլ կարող էին ծնվել 260.000 – 300.000 բանակների մասին առասպելները: Սակայն դժվար էր պատկերացնել՝ ինչպես մարդկանց այդ հսկա ամբոխը պեսոք է հարթահարեր Հայկական Տավրոսի լեռնացքները և պարենավորվեր: Ըստ երևոյթին, Տիգրանի բանակին ուղեկցող գումակը իր բանակով զգայիրեն զիջել էր սելևկյան բանակներին: Հայկական, ինչպես նաև պարթեական, բանակները երբեք չեն ունեցել սելևկյան բանակների նման մարդաշտությունը:

Այժմ պարզենք հայկական բանակի ազգային կազմը և համապատասխան զորատեսակները:

Ծանր հեծելազորը հայկական բանակում ներկայացված էր հայկական և ատրպատականյան կատաֆրակտուսների զիջերով, մոտավորապես.

- հայկական ճոշավոր այրում (5 գունդ)՝ 5.000 հեծյալ,  
- ատրպատականյան կատաֆրակտուսներ (2,5 գունդ)՝ 2.500

հեծյալ, ընդամենը՝ 7.500 հեծյալ: Այս թվից 500 ատրպատականյան կատաֆրակտուսները Միհրդատ Մեդացու թիկնազորից են:

Ըստ երևոյթին, Տիգրան Մեծի թիկնազորի հեծելազորը՝ 2 գունդ, նույնպես ճոշավոր այրում (5 գունդ)՝ 5.000 հեծյալ, սակայն նախատեսված բացառապես արքայից արքայի անձը պահպանելու համար, որը նախատեսված չեղ օգտագործել որկից ճակատամարտում: Այդ պատճառով Տիգրան Մեծի թիկնազորը՝ 2.000 կատաֆրակտուսներին, հայկական բանակի կազմի մեջ չենք հաշ-

#### Վում:

- Թեթև հեծելազորը հայկական բանակում ներկայացված էր հայկական, ատրպատականյան, քարակենական, սակարառույյան և օսրոյենական հեծելազորերով, որի հնարավոր կազմն էր.
- հայկական թեթև այրում (5 գունդ)՝ 5.000 հեծյալ,
  - ատրպատականյան թեթև այրում (1,5 գունդ)՝ 1.500 հեծյալ,
  - քարակենական թեթև այրում (2 գունդ)՝ 2.000 հեծյալ,
  - սակարառույյան թեթև այրում (2 գունդ)՝ 2.000 հեծյալ,
  - իբերական թեթև այրում (1 գունդ)՝ 1.000 հեծյալ,
  - աղյաբենական թեթև այրում (1 գունդ)՝ 1.000 հեծյալ,
- ընդամենը՝ 12.500 հեծյալ:

Ծանր հետևակը հայկական բանակում ներկայացված էր հայկական, ատրպատականյան, իբերական, աղյաբենական, աղյաբենական, կորդուրյան վահանակիրների և նիզակակիրների զնյերով.


- հայկական վահանակիրներ (10 գունդ)՝ 10.000 զինվոր,
- հայկական նիզակակիրներ (10 գունդ)՝ 10.000 զինվոր,
- ատրպատականյան, իբերական, աղյաբենական ծանրազեն հետևակ (15 գունդ)՝ 15.000 զինվոր,
- աղյաբենական և կորդուրյան ծանրազեն հետևակ (10 գունդ)՝ 10.000 զինվոր.

ընդամենը՝ 45.000 զինվոր:

Թեթև հետևակը հայկական բանակում ներկայացված էր հայկական և ատրպատականյան զնյերով.

- հայկական նետաձիգներ և պարսավորներ (4 գունդ)՝ 4.000 զինվոր,
  - ատրպատականյան նետաձիգներ (1 գունդ)՝ 1.000 զինվոր.
- ընդամենը՝ 5.000 զինվոր:
- Գումակի կազմի մոտավորապես կեսը՝ 5.000-ը հայեր էին, մասցածը այլազգի:

Այսպիսով, Տիգրանի բանակի մոտավորապես կեսը՝ 39.000 զինվորը, հայ էին (Տիգրանի թիկնազորի 2.000 հեծյալների հետ՝ 41.000 զինվոր՝ կեսից ավելին), մասցածը Հայկական բազմազգ կայսրության այլ ներկայացուցիչները, որտեղ իրենց բազմությամբ աշքի էին ընկնում ատրպատականցիները և աղյաբենցիները: Հայկական բանակի կազմը Տիգրանակերտի ճակատամարտում ներկայացված է թիվ 5. 17. գծանկարում:



Գծանկար 5. 17. Հայկական բանակի կազմը Տիգրանակերտի ճակատամարտում


308

Թվում է, թե Տիգրանը ծրագրում էր Լուկովոսին տալ դասական ճակատամարտ՝ հետևակը կենտրոնում, հեծելազորը թևերին։ Առաջին փուլում կցախչախներ հակառակորդի հեծելազորը, հետո Լուկովոսի հետևակին կցցեր իր հետևակին հեծելազորի մեջ և կոչչացներ։ Մի խորով, Տիգրանը նախատեսում էր Լուկովոսի բանակի համար ստեղծել երկրորդ «Կանեքը»։

Կարո՞ն էր Տիգրանը շիմանալ Կանների մոտ՝ մ.թ.ա. 216 թ. կայացած ճակատամարտի մասին։ Կարդացած շլիներ Պոլիբոսի մանրամասնագույն նկարագրությունը և լսած շլիներ սեփական արքունիքում պահպանված զրոյցները այդ ճակատամարտի մասին, որը պատմել էր ինքը՝ Հաննիքալը իր Արտաշես պապին։ Անհավատալի է Տիգրանը նախապատրաստում եր Լուկովլուսին շրջապատել Կանների ոռով, սակայն կուրորեն չկը հետևում Կաննի շաբունին։


Ս.թ.ա. 216 թ. հոսուեացիների և կարթազենացիների միջև կայացած Կաննի ճակատամարտը մարտավարական շրջապատման դասական օրինակ էր:

Առանց մակրամասն նկարագրության հիշենք Կաննի ճակատամարտի հիմնական փուլերը.




Գծանկար 5.18ա. Կանեմ ճակատամարտը հռոմեացիների և կարրագենացիների միջև մ.թ.ա. 216 թ.՝ 1-ին փուլը


309



Գծանկար 5.18ր. Կաննի ճակատամարտը հոռմեացիների և կարթագենացիների միջև մ.թ.ա. 216 թ.՝ 2-րդ փուլը



Գծանկար 5.19ա. Կաննի ճակատամարտը հոռմեացիների և կարթագենացիների միջև մ.թ.ա. 216 թ.՝ 3-րդ փուլը



Գծանկար 5.19ր. Կաննի ճակատամարտը հոռմեացիների և կարթագենացիների միջև մ.թ.ա. 216 թ.՝ 4-րդ փուլը

Հաննիբալը որոշեց շրջապատել հոռմեացիներին իր ուժեղ թևերով, որոնք բաղկացած էին ուժեղ հեծելազորից: Կարթագենական հեծելազորը տևաբաշխվեց խիստ անհավասար՝ հոռմեական ձախ թևում գտնվող ուժեղ՝ 4.000-ոց հեծելազորին հակառակում էր միայն 2.000 կարթագենացի հեծյալ, այն դեպքում, եթե հոռմեական աջ թևի 2.000 հեծելազորի դեմ կարթագենացիները կենսորոնացրել էին բազմակի ավել հեծյալներ՝ 8.000 (այդ թվում ծանր այրումին): Միանչանակ է, որ Հաննիբալին պետք էր արագ և անվերապահորեն ջախջախել հոռմեացիների թևերից մեկը (կենտրոնը կարող էր շղիմանալ հոռմեացիների ճնշմանը), տվյալ դեպքում հոռմեական աջ թևը: Հետևակի թևերին ինքը տևապարել էր փորձված հետևակի խորը զորայուները: Հոռմեացիները ընկծեցին Հաննիբալի թռույլ կենտրոնը, սակայն կործերից շրջապատվեցին հետևակով, իսկ մի փոքր անց նաև հետ վերադարձավ հոռմեական հեծելազորին ցրած կարթագենական հեծելազորը և թիկունիքից հարվածեց հոռմեացիներին, որոնք շրջապատվեցին և կործանիչ պարտություն կրեցին:

Հետազյում Կանների ուրվականը հետապնդում էր բազմաթիվ զորավարների, սակայն քչերը կարողացան կրկնել այն

այս կամ այն շափով: Տիգրանին, ըստ երևոյթին, հաջողվել էր իր որոշ թշնամիներին շախչախել նման եղանակով, սակայն ինքը թերազնահատել էր Լուկովոսի ռազմավարական տաղանդը: Կար նաև մեկ այլ պատճառ: Տիգրանակերտի մոտ հավաքված Տիգրանի բանակը ավելի նման էր դանդաղաշարժ սելլսյան բանակներին, քան այն սրընթաց բանակին, որով Տիգրանը սկզբանական շրջանում ընկել էր պարթևներին ...

Ըստ երևոյթին, Տիգրանը իր վարած պատերազմներում շատ ճակատամարտեր էր շահել նման եղանակով, նաև վերջին՝ հարավսիրիական պատերազմում, որտեղ շախչախել էր տասնյակ հազարավոր զինվորներ ունեցող ախտյանների բանակները:

Տիգրանը իր ժամանակի ամենափորձված և տաղանդավոր զրավարներից մեկն էր: Տիգրանակերտի ճակատամարտում նրա կիրառած ռազմավարության դեմ հնչած քննադատությունը, ինչպես օրենք, Տիգրանի մոտահացումները շրմբոնելու կամ թերի ըմբռնելու հետևանք է:

Հետևենք Տիգրանի մտքերի հետարավոր ընթացքին:

Տիգրանը հետևում էր հոումեա-պղնտական պատերազմների ընթացքին և զիտեր, որ Միհրդատի գլխավոր հարվածային ուժը հոումեացիների դեմ փոքրիայցյան ծանր հեծելազորն էր: Նառումովը, վերլուծելով 3-րդ պոնտական պատերազմի ընթացքը, հարց է տալիս. «Այս ի նշ հեծելազոր է, որ հոումեական 5 լեգենը վախենում են դաշտ դուրս գալ»: Ինքը, Նառումովն էլ պատասխանում է այդ հարցին՝ հայկական գրահապատ այրումին: Իսկ ինչ կարող է անել այդ այրումին, հայտնի է դառնում Նառումովի 67թ. Զելայի ճակատամարտի բավականին մանրամասն վերլուծությունից [173]:

Կատաֆրակտուների գնդերը կարող էին օգտագործվել մարտական երկու եղանակով՝ առաջինը ուղղակի հարվածելով ճակատիվ ծանր հետևակին և բռնկելով նրա հետ ծանր ձեռնամարտի, երկրորդը՝ հետահար մարտ՝ նետ ու աղեղով: Առաջին եղանակը կարող էր բերել մեծ կորուստների (եթե վրա շահասեր սեփական հետևակը), սակայն հասցնում էր վճռական արյունքների:

Տիգրանը որոշում է իր աջ թևում տեղակայել կատաֆրակտուների գնդերի մեծ մասը, որով շեշտակի հարված հասցնի լեզենների ձախ թևին, կազմալուծի նրանց շարքերը, որով հետարավորություն տա իր բազմաթիվ ծանր հետեվակին պարտության մատնել հոումեական լեզեններին: Այս հարվածը իրականացվում է խիստ զրայալունով՝ դրագուայով: Այն, որ 6.500 կատաֆրակտուները, ինչպես Զելայում 4.000 հայ կատաֆրակտուները ունակ են խորտակիչ հարվածով ճշմել, շախչախել լեզեններին, անկասկած էր: 1.500 թերի հեծելազորը հայկական բանակի աջ թևում պետք է կատարեր օժանդակ ֆունկցիաներ մինչև հակառակորդի փախուստը, որի ժամանակ նա պետք է փոխարիներ ճռշապոր այրումին:

Այս պատճառով Տիգրանը իր աջ թևում հոծ շարքերով դասավորեց ծանր այրումին և հրամանատարությունը հանձնեց նման հեծելազորների մեծ փորձ ունեցող զրավարին՝ Միհրդատ Մեդացու:

Տիգրանի բանակի կենտրոնը կազմող հետևակը նովինպես դասավորված էր որոշակի մտահացումով: Կենտրոնում գրտնվող վահանակիրների, նիզակակիրների և թեթևազենների հայկական գնդերը կազմում էին Տիգրանի բանակի մարտակարգի հիմքը. հոումեական հոչակավոր հետևակի հնարավոր գրոհը պետք է ընդուներ հայկական կայսերական բանակի ամենատոկուն հետևակը: Հայկական հետևակի առաջին զիծը կազմում էին վահանակիրները, երկրորդը՝ նիզակակիրները և, երրորդը՝ նետաձիգները:

Հայկական բանակի ձախ թևում ուներ բարդ կառուցվածք. նա բաղկացած էր Աղյարենեի թագավորի հրամանատարության տակ գտնվող բուն ձախ թևից՝ 10.000 հետևակ ու 1.000 հեծյալ և հզոր հեծելազանակից՝ 11.000 հեծյալ, որը դեկավարում էին հայ զրավարները:

Աղյարենեի թագավորի զրաբանակը պետք է ապահովեր հայկական բանակի ձախ թևի կայունությունը: Զախ թևի մեծաքանակ հեծելաբանակը նախատեսված էր ոչ թե հայկական ձախ թևի պաշտպանելու, այլ հոումեական հեծելազորի դիմադրությունը ընկերուց հետո շրձանցող երթով դրւու գալու համար հոումեացիների թիկունը և շեշտակի հարվածով շրջապատելու նրանց՝ զցելով հայկական հետևակի, աջ թևի զրահապատ այրումին և թեթևազեն հեծելազորի մահաբեր օղակի

մեջ: XIX դարի և XX դարի առաջին քառորդի ուսւ և գերմանացի զորավարները այսպիսի խնդիրներ կատարող մեծ հեծելաբանները անվանում էին ռազմավարական հեծելազոր (стратегическая конница):

Այսպիսին էր Լուկովոսի համար նախատեսված Տիգրանի «Կանեթը»: Տիգրանը կարծում էր, որ Լուկովոսը պահպանել է իր Պոնտոսյան ռազմարշավում ցուցաբերած զգուշությունը և որոշ դանդաղկոտությունը:

Ծրագիրը իրատեսական էր, նրան դժվար էր հակադրվել, և Տիգրանը համոզված էր իր հաղթանակի վրա: Այն հանձարեղ հնարքը, որը կվիրառվի Լուկովոսի կողմից իր դեմ, նրա համար բացարձակ անսպասելի էր:

### 5.2.1. Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքը

Տիգրանակերտի ճակատամարտի ընթացքը նպատակահարմար է նկարագրել՝ նշելով հայկական և հոռմեական զորքերի նախնական դասավորությունը, իսկ բուև ճակատամարտի ընթացքը բաժանել չորս փուլ:

- առաջին փուլ՝ հոռմեական թեթևագեն հետևակի գրոհը հայկական բանակի աջ թևում գտնվող բյոթի վրա և հոռմեական հեծելազորի գրոհը հայկական հետևակի վրա.
- երկրորդ փուլ՝ հայկական հեծելազորի հակահարվածը և հոռմեականի նախանջը (կեղծ փախ ուսուր).
- երրորդ փուլ՝ հոռմեական լեզեռների թիկունքային ու թևային գրոհը հայկական բանակի վրա.
- չորրորդ փուլ՝ հոռմեական հեծելազորի կրկնակի գրոհը, հայկական բանակի վերջնական կազմալուծումը և փախուստը մարտի դաշտից:

#### 5.2.1.1. Զորքերի նախնական դասավորությունը Տիգրանակերտի ճակատամարտից առաջ (նկար 5.20.)

Քննենք զորքերի նախնական դասավորությունը Տիգրանակերտի ճակատամարտից առաջ (նկար 5.20.) Առաջինը հետեւ-

վենք հոռմեական բանակի զորաշարժերին:

Ս.թ.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ի առավոտյան հոռմեական բանակը երեք զորայուներով դուրս է զայխ դաշտային ճամբարից և շարժվում են այժմյան Բոհետան-առ գետի աջ ափով դեպի հայկական բանակը: Առաջին զորայունը բաղկացած էր Լուկովոսի ողջ հեծելազորից՝ մոտ 8.000 հեծյալ, երկրորդ զորայունը, որը շարժվում էր առաջինի հետևից, կազմված էր դաշնակիցների ծանր- և թեթև հետևակից՝ 11.000 զինվոր, երրորդ շարժվում էր երկրորդի հետևից և մոտավորապես բաղկացած էր 2.000 հետևակից: Վերջին զորայունում էր գտնվում Լուկովոսը:

Այդ ժամանակ գետի հակառակ ափին Տիգրանը կարգավորում էր իր բանակը. կենտրոնում կանգնեցնում էր հետևակը՝ մոտավորապես 45.000 ծանրազեն և 5000 թեթևազեն: Աջ թևում էր կազմում հիմնականում զրահապատ հեծելազորը՝ մոտ 8.000 հեծյալներ, որից 6.500 կատաֆրակտուսները, ձախ թևում էր տեղադրված հայկական բանակի զրեթե ողջ թեթև հեծելազորը՝ մոտ 12.000 հեծյալ: Հայկական բանակի աջ թևը դեկավարում էր Միհրատ Մեղացին, ձախ թևը՝ Աղիարենեի բազավորը և հայ հեծելազորի հրամանատարը, կենտրոնը և ընդհանուր բանակի դեկավարությունը Տիգրանը վերցրել էր իր վրա: Հետևում տեղադրվել էր 10.000-ոց գումակը:

Հայկայական՝ 80.000-ոց հայկական բանակի շարվող շարքերի առջև ծավալվող 21.000-ոց հոռմեական բանակի տեսքը այերան անհամոզի էր, որ Տիգրանը հեզնում է. «Բանակցությունների համար շատ են, պատերազմելու համար՝ թիշ»:

Այս պահին հոռմեական դաշնակիցների թեթևազենների երկու կողորոտ դուրս են մղում հայկական բանակի աջ թևի մոտակայքում գտնվող բյոթի զագաթից հայ հետախույզներին և այնտեղ գտնվող աննշան թվով հայ պարսավորներին և նետաձիգներին: Այս ընդհարումը հայերի կողմից դիտվում է որպես չշին մի դրվագ, որովհետև շուտով հայկական զրահապատ այրուձին պետք է հարձակվեր հոռմեացիների վրա: Սակայն, զրավելով բյոթը, հոռմեացիները հնարավորություն են ստանում հայերին հակառակ ստորոտով, դեպի հայերի աջ թևը և թիկունը՝ զումակը, աննկատ անցկացնել իրենց 4-րդ զորայունը՝ լեզեռներներին:

Այդպիսով հոռմեական դաշտային ճամբարից հայերի հա-

մար աննկատ դրւու է զայիս չորրորդ գորասյունը, որը բաղկացած է 10.000 լեզեններից՝ 24 կոհորտ (և 2 կոհորտ դաշնակցային թերթ հետևակից՝ մոտ 750 զինվոր): Դա ֆիմբրիական լեզեններն են և Մերստիլոսի լեզենի չորս կոհորտը: Նրանք սրբնթաց կտրում անցնում են գետը և շարժվում են դեպի Տիգրանի բանակի աջ թևը ու թիկունքը: Լուկովլոսի այս գորաշարժը՝ մաները, Տիգրանի համար տեսանելի չէ, որովհետև իր բանակի աջ թևում գտնվող բլուրներ բարցենում են հակառակորդի այս գործողությունը: Միասնական հետո այդ լեզենները կիայտնվեն հայկական գումարի մոտակարում՝ հայկական բանակի աջ թևից ու հետևից:

Լուկովլոսը իր թիկնապահ 2 կոհորտով (1.000 լեզեններ) և 2 կոհորտ դաշնակից գալատներով (850 ծանրագեններ) շարժվում է դաշնակցային հետևակի և թերթագենների հետևից՝ բավականին հետ մնալով նրանցից: Տիգրանը տեսնում է իր վրա շարժվող հոռմետական գորքի աջ թևը՝ հեծելազորը, կենտրոնը՝ դաշնակցային ծանր հետևակը՝ շարված կոհորտներով ու թերթագենների խմբերով և ձախ թևի մի մասը՝ Լուկովլոսի թիկնապահ 2 կոհորտը և դաշնակցներին՝ 2 կոհորտ, 850 զինվորով, ընդամենը՝ ավելի քան 21.000 զինվոր: Դեպի իր թիկունք շարժվող երրորդ գորասյունը՝ 10.000 լեզեններներին և 750 թերթագեններին, նա չի նկատում:


Հոռմետական հեծելազորը, հասնելով և մի փոքր էլ անցնելով գետի դիմացի ափին շարվող հայկական հետևակին, շրջադարձ է կատարում ձախ և մարտական դիրք ընդունում:

Հետևից քայլող դաշնակցների ծանր հետևակը գետափից մի փոքր հեռու ևս ձախ շրջադարձ է կատարում և դեմքով շրջվելով դեպի հայերը՝ հարդարում մարտական շարքերը: Նա կանգնած է հոռմետական ոճով՝ շահմատած դասավորված կոհորտներով: (Տականական է, որ առաջին զիծը զինված է զնիված 2.000 լեզեններների սպառազինության կոմպլեկտներով:) Հեռվից նրանք արտաքիսապես ոչ մի բանով չեն տարբերվում հոռմետացիներից: Թերթագենները պաշտպանում են ծանրագենների թերթը:


Հոռմետական դասավորության ձախ թևին Լուկովլոսի 4 կոհորտները և կատարում են շրջադարձ և սկսում մարտական հարդարումը: Շրջադարձ կատարող կոհորտների շարժումը Տիգրանին անհասկանալի է և նա ենթադրում է, որ հոռմետ-

ցիները նահանջում են:

Հոռմետացիները սպասվածից 1.5–2 անգամ քիչ են, և Տիգրանը զարմանում է: «Բանակցելու համար շատ են, կովելու համար՝ քիչ»: Իրեն շրջանցող 10.000 լեզեններներին նա չի տես նում:



Գծանկար 5.20. Տիգրանակերտի ճակատամարտ. հայկական և հոռմետական բանակների նախնական դասավորությունը:



Գծանկար 5.20.ա. Հայկական և հռոմեական բանակների նախնական դասավորության մանրամասնությունները

69 թ. հոկտեմբերի 6-ի առավոտյան հայկական բանակը անշտապ շարվում է գետի ձախ ափին: Նա բաղկացած էր ոչ ու ձախ թերթից և կենտրոնից: Բանակի հետևում գտնվում էր զումակը:

Ազ թերթ բացառապես կազմված էր հեծյալներից: Դրանք հայկական ու ատրպատականյան կատաֆրակտոսների զնդերն էին՝ 6.500 հեծյալ և Միհրդատ Մեղադի թերթների հեծելազորի գունդը ու հեծյալ թիկնազորի թերթազենները՝ 1.500 հեծյալ ընդամենը 8.000 հեծյալ: Ազ թերթի հրամանատարն էր Ատրպատականի բազավոր Միհրդատ Մեղադին:

Կենտրոնում կանգնած հետևակը բաղկացած էր երկու մասից, որոնցում ծանրազեն հետևակայինները շարվում էին խորը շարայուններով, իսկ թերթազենները զրադեցնում էին շարայունների միջև եղած տարածությունները, մեծ մասն էլ կանգնած էր ծանր հետևակի հետևությունում: Կենտրոնի աջից շարվում էր ատրպատականցինների, իբրևների և աղվանների ծանր ու թերթն հետևակը: Կենտրոնի ձախ կետում՝ բուն կենտրոնում, կանգնած էին վահանակիրների ու նիզակակիրների հայկական զնդերը, իսկ կենտրոնի աջ կետում՝ ատրպատականցի, իբրևների և աղվանների զորքերը, որոնց հետևից կանգնած էին հայ և ատրպատականցի նետաձիգները և պարսավորները: Բոլորը միասին՝ մոտ 40.000 զինվոր: Հայկական հետևակորի հետևում կանգնած էր Տիգրանը իր թիկնազորով, որը այսուղից դեկավարում էր հայկական բանակի և՝ կենտրոնը, և՝ բանակը ամբողջապես:

Կենտրոնում կանգնած հայկական հետևակից դեպի ձախ կանգնած էր Տիգրանի բանակի ձախ թերթ, որը բաղկացած էր աղիաբենցինների շարայուններից, կորդվացիններից, հոյն վարձկան հովլիտներից («սիրիացիններից»), ընդամենը՝ մոտ 10.000 զինվոր: Թերթազեն հետևակը այսուեղ նույնպես կանգնած էր ծանրի հետևություն: Զախ թերթի հետևակի թերթ պահպանում էր աղիաբենական թերթազեն հեծելազորը: Մեր ենթադրություն է, որ այս հեծելազորի կազմում աղիաբենների հեծյալների թիվը չէր գերազանցում 1.000-ից, և այս հեծելազորները անմիջապես պաշտպանում էր աղիաբենյան հետևակի ձախ թերթը:

Ձախ թերթ ծայրանեղ ձախ մասը զրադեցնում էր հայկական կատաֆրակտոսների մեկ գունդ, հայկական, բարակենեական ու սակարակառկների թերթն հեծելազորը, ընդամենը՝ 11.000

hɛðju:

Այսպիսով, հայկական բանակի ձախ թևի հետևակային զրաքայլ և աղիաբենցի հեծյալների հրամանատարն էր Աղիաբենեի թագավորը: Մենք չենք կարծում, որ 11.000 հեծյալներից բաղկացած խոշոր զորքանակի հրամանատարությունը վստահված լիներ ոչ այնքան հմտութ հեծելազորային հրամանատարին, ինչպիսին Աղիաբանեի թագավորն էր: Մեր կարծիքով՝ այս հեծելազորի հրամանատարը պետք է լիներ հայագի հեծելազորային հրամանատար: Այս խոշոր հեծյալ զորքանակը նախատեսված էր հոռմեացիների հեծելազորը ընկելու և թիկունքից հոռմեական հետևակին հարվածելու համար:

Հայկական բանակի հետևում կանգնած էր ամբողջ գումարը, նաև հայկական բանակի օժանդակ զորամասերը, որոնց թիվը մոտ 10.000 էր։ Գումարը կանգնած էր հետևակի և, ըստ երևույթին, նաև աջ թիվ ալրուձիու հետևում։


Սարտը սկսվելու պահին հայկական բանակը դեռ չէր հասցրել լինկ հարդարել իր մարտական շարքերը:

5.2.1.2.Առաջին փուլ՝ հռոմեական թերևազեն հետևակի գործը հայկական բանակի աջ թևում գտնվող բլրի վրա և հռոմեական հեծեադրորի ճակատային գործը

Հողումական թեթևազգեն հետևակը գրոհում է հայկական բանակի աջ թևում գտնվող բլրի վրա և այստեղից դուրս վանում հայկական հետախուզական ստորաբաժանումները:

Լուկովլոսը, Վերջնականապես համոզվելով, որ հայկական բանակի դասավորությունը համապատասխանում է իր ծրագրերին, իր թիկնազորի երկու կողմուրոց հետադարձ է տալիս և շարժվում է մոտ մեկ ստայիլում (մոտ 185 մետր) հետո՝ մոտայր-վելով անցնել գետը և բարձրանալ իր թեթևազենների կողմից գոռաված բուռող. և 3 ստայիլում:

Բլրից Լուկովլոսին զեկուցում են հայկական բանակի դասավորության մասին և նաև այն մասին, որ հայերը չունեն ռեգերպ՝ երկրորդ էշելոն: Լուկովլոսը տեսնում է, որ իր ծրագիրը մոտ է իրագործելուն և հստակեցնում է Ճակատամարտում իր հետաքա գործողությունները:



Գծանկար 5.21. Տիգրանակերտի ճակատամարտի առաջին փուլը՝ հռոմեական թերևագեն հետևակի գրոհը հայկական բանակի աջ թևում զունվող բրիդ վրա և հռոմեական հեծելազորի գրոհը հայկական հետևակի վրա:

Երբ Լուկովոսի 4 կոհորտը հետ էն դառնաւմ, Տիգրանին թվում է, որ Լուկովոսը նահանջում է, և նա զարմանում է՝ ասելով Տարսիկեսին՝ «Խոսմեացիները նահանջում են»: Սակայն Լուկովոսի նպատակը գետի դիմացի բլուրն է, որտեղից այլ կոհորտների հետ միասին շուտով կարելի է հարձակվել հայկական ծանրազեն այրումիու վրա:

Այս պահին հոգմեական հեծելազորը գրիում է վերջնականպես դեռ շարված հայկական հետևակի վրա, հատկապես

նրանից ավելի ձախ կանգնած այլազգի հետևակի վրա: Տիգրանը հրամայում է իր ձախ թիվի հեծելազորին անցնել հայկագորի: Հայկական հետևակի առջև սկսվում է հայկական և հոռմատական հեծելազորների հեծելամարտը:

#### 5.2.1.3. Երկրորդ փուլ՝ Հոռմտական հեծելաղորի նահանջը և լեզեռների մաները

Հայերի վրա հարձակվող գրեթե 8.000 հոռմտական հեծելազորի վրա է գրնում 11.000 հայկական հեծելազորը, որից 1.000 կատաֆրակտուսներ են: Հայտնի է, որ մարտում թերև հեծելազորը չի դիմանում կատաֆրակտուսների ճակատային գրնոհին:

Տեղի է ունենում կատաղի հեծելամարտ: Այս մարտում հոռմտացիները և հոռմտական դաշնակիցները՝ զալատական ու թրակիական այրումին, մեծ խիզախությամբ դիմակայում են հայերին, սակայն ուժերը անհավասար են:


Կարճ բախումից հետո հոռմտական հեծելազորը չի դիմանում հայկական հեծելազորի հրեշավոր ճնշմանը և սկսում է նահանջել: Լուկովուսի համար այս պահը ամենավտանգավորն է ճակատամարտի ողջ ընթացքում: Եթե իր հեծելազորը ջախջախվի մինչև իր լեզեռների դիրքավորումը հայերի աջ թևում և թիկունքում, ապա նոյնիսկ լեզեռներների գրնոհը կարող է բերել միայն մասնակի հաջողորդայան:

Հոռմտական բանակի դաշնակից ծանրազենները, որոնք դասավորված են կոհորտներով և թերթից պաշտպանված թերթազեններով, մարտի մեջ չեն մտնում, սակայն դիրքավորվում են գետի աջ ափին՝ հայկական հետևակի և աջ թիվ գրահապատ հեծելազորի հնարավոր գրնոհը դիմակայելու համար:

Հոռմտական ծանր հետևակը՝ լեզեռներները, որոնք սրբնաց երթով անցել են մոտավորապես 8-10 ասպարեզ ճանապարհ, արդեն հասցել են շրջանցել հայկական բանակի աջ թևը և մտնել հայերի թիկունք, պատրաստվում են հարձակվել հայկական բանակի կատաֆրակտուսների ու գրմակի վրա:

Այդ պահին Լուկովուսը իր երկու թիկնապահ կոհորտով և երկու զակատական կոհորտներով բարձրանում է հայկական դիրքերի աջ թևում գտնվող բլուրը, որի գագաթին գտնվում էր

իրենից 3 ասպարեզ հեռավորության վրա (մեկ ասպարեզով կինը մոտեցել էր բլուրի՝ նահանջելով իր դիրքերից): Բլրի լանջից լավ երևում էին ճակատամարտի դաշտը և Լուկովուսի ձախ թիկունքը, ուր հայկական գրմակին և կատաֆրակտուսների թիվին աննկատ մոտենում էին լեզեռներները: Շուտով պետք է կասվեր հայկական գրահապատ հեծելազորի աջ թիվ և գրմակի վրայի գրոհը:



Գծանկար 5.22. Տիգրանակերտի ճակատամարտի երկրորդ փուլ՝ հայկական հեծելազորի հակահարվածը և հոռմտականի նահանջը.

Հոռմտական հեծելազորի փախուստի կեղծ լինելը շատ

կասկածելի է, առաջինը, որովհետև հոռմեացիները չեն կարող դիմանալ իրենցից որակապես և թվով գերազանցող հեծելազորի գրոհին, երկրորդը և ամենակարևորը՝ այդ կեղծ նահանջի իմաստը անհասկանալի է, երա օգտին բերվող փաստարկները անհամոզիշ են: Ըստ իս, կեղծ նահանջի վարկածը առաջ է քաշվել ճակատամարտից հետո՝ հոռմեական հաղթանակի փառքը ավելացնելու համար:

#### 5.2.1.4. Երրորդ փուլ. Լեզեռնների գրոհը գումակի և ծանր հեծելազորի վրա, հոռմեական հեծելազորի փախուստի ավարտը


Հանկարծակի հայկական աջ թևից և հետևից գումակի վրա գրոհում են հոռմեական լեզեռնները: Գրոհի ենթարկված գումակը խուճապահար միրճվում է հետևակի շարքերը:

Հայկական բանակի աջ թևում գտնվող կատաֆրակտուսների վրա լեզեռներները գրոհում են թիվը: Խորը զրաքայունով շարված հայոց ծանր այրումին անկարող է կովել այսպիսի անհարմար դիրքում: Ավելին, իմասեալով, որ կատաֆրակտուսները ընդունակ են վարելու հեռահար մարտ նետաձգութամբ, Լուկովոսը յուրայիններին խստագույնս արգելում է հեռահար մարտ վարել և պահանջում է անհապաղ անցնել ձեռնամարտի:

Լուկովոսը որն իր թիկնազորի երկու կոհորտներով (և դաշնակից գալատների երկու կոհորտներով) արդեն հայկական աջ թևի բլրի լանջին էր, այստեղից գոչում է, որ հաղթանակը իրենցն է, և թիվը գրոհում է կատաֆրակտուսների վրա: Նրան միանում են մասցած կոհորտները:

Աջ թևում խորը շարքերով կանգնած և գրոհի դեռ չանցած հայկական հեծելազորի համար այս մարտը հոռմեական ծանր հետևակի դեմ խիստ անբարենպաստ է. ենթարկվելով ուժեղ հարվածի կողքից և շարքերը խառնված լինելով իրենց դասավորության մեջ միրճված հայ հետևակայիններով և գումակի մարդկանցով՝ կատաֆրակտուսների շարքերը վերջնականապես քայրացվում են: Հայկական հետևակը, որի շարքերը խախտված էին երա շարքերի մեջ միրճված խուճապի մատնված գումակով, լրիվ խառնվում են, և նա դիմում է փախուստի՝ իր

հերքին միրճվելով առջևում մարտնչող հայկական հեծելազորի վերջին շարքերի մեջ:



Գծանկար 5.23. Տիգրանակերտի ճակատամարտի երրորդ փուլը՝ լեզեռնների գրոհը գումակի և ծանր հեծելազորի վրա և հոռմեական հեծելազորի կեղծ փախուստի ավարտը

Առաջինը կազմակուծվում է հայկական բանակի աջ թևը, հետո՝ կենտրոնը, վերջում՝ ձախ թևը, և հայկական բանակը սկսում է կորցնել իր մարտունակությունը:

Այդ պահին հայկական հեծելազորի հարձակողական բարք բռնանում է, և հոռմեական հեծելազորը արդեն դադարեցնում է իր նահանջը: Նախաձեռնությունը սկսում է անցնել

հողմական հեծելազորի կողմը, և արդեն նրանք են հարձակվում հայկական հեծելազորի վրա ճակատից:


Երբորդ փուլի վերջում մենք ունենք հետևյալ պատկերը, առջևից հայկական բանակի վրա գրնում է՝ հռոմեական հեծելազորը, իսկ աջ թևից և թիկունքից՝ լեգեոնների ծանրազեն հետևակը։ Հայկական բանակի ձախ թևը կազմում հեծելազորը նույնպես նեղ վիճակում է հայտնվում։ Առջևից գրնում է՝ հռոմեական հեծելազորը, հետևից՝ շարքերը միաբանած խուճապահը եղած հայկական հետևակը։ Այդ պայմաններում մարտ վարելը խիստ դժվարանում է, և հայկական հեծելազորը պարտվում է։

5.2.1.5. Չորրորդ փուլ. Հայկական բանակի խուժապն ու փախուստը և նրա հետանոռումը (նկար 5.24. և 5.25.)

Ճակատամարտի չորրորդ՝ վերջին փուլը սկսվում է հայկական բանակի համատարած խուճապահար փախուստով, որին հոռմեական բանակը հետապնդում է մինչև երեկո։ Որպես օրենք հետապնդումը կատարվում էր հեծելազորով և թեթևազորով, սակայն Լուկովյոսը պահանջում էր, որ հետապնդմանը մասնակցեն նաև լեգեններները։ Հետապնդմանը տևում է 120 ստադում հետավորության վրա՝ ամբողջ օրը և դադարում է միայն ուշ երեկոյան։ Ճակատամարտը վերջանաւ է հոռմեական բանակի վճռական հաղթանակով։

Տեսնելով իր բանակի պարտությունը՝ Տիգրանը քողուսում է իր բանակը, որին արդեն ոչ մի բանով չէր կարող օգնել, և փախչում է անվտանգ մի տեղ՝ իր ամրոցներից մեկը։ Տիգրանի այս փախուստը, նույնիսկ նրա խույրի հետ կապված ավելի, քան կասկածելի պատմությունները, ինձ բացառապես չեն հուզում։ Ավելին, ես միանշանակ բացասական գնահատական կտայի մի բաղարական և ուզմական գործի ինքնասպան կեցվածքին, որը, իր մեապարծությունից ենթակա, «հերոսաբար» գոհվում է նման պարագայում՝ զրկելով իր ժողովրդին իր խելքից, կամքից և իր հանդեպ տածած հավատից։


Եթե Տիգրանը մեզ համար դժբախտ այս ճակատամարտում, ուր մենք օրինաչափորեն պարտվել էինք մեզանից ավելի խելամիս և արագ գործող հակառակորդից, «հերոսակար», ապա ո՞վ պետք է կոտր 68-ի հաղթանակները, որ 67-ին հաղթական ավարտին հասցներ թե՛ մեր, թե՛ հոռմեացիների համար այս ճակարգույն պատերազմը: Պլուտարքոսի բարոյախտական միտքը արդյոք ընտրւն ակ էր, ընկաել միշտ ապրելու և ոչ մի պարագայում չպարտվելու նման գաղափարախտությունը:



Գծանկար 5.24. Տիգրանակերտի ճակատամարտի չորրորդ  
փուլը՝ հայկական բանակի խուճապը

Մեր մոլորակի հինգհազարամյա ամենահղոր և անընդհատական քաղաքակրթություններից մեկը՝ Զինաստանը, դեռ 2.500 տարի առաջ ի հայտ էր բերել ուզմավարական հնարքների ամբողջ մի համակարգ, որը քաղկացած է 36 դրույթներից: Այս դրույթներից վերջինը հետևյալն է. «Անույս վիճակում լավագույն երրորդ՝ փախտաւոն է» [119, 120]:

Տիգրանը մեծ էր նույնիսկ իր պարտության պահին ...



Գծանկար 5.25. Տիգրանակերտի ճակատամարտի չորրորդ  
փուլը՝ հայկական բանակի փախտաստը և նրա  
հետապնդումը

328

Տիգրանակերտի ճակատամարտում Լուկովոսին հաջողվում է նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և գերազանցելով հայերին արագության մեջ, հմուտ օգտագործելով Տիգրանի թույլ տված սխալները. աջ թիվի բլիր անբավարար պաշտպանությունը և ուժերվի բացակայությունը՝ հասնել հաղթանակի:

Սա փայլուն հաղթանակ էր. թույլ արագաշարժը հաղթում է դանդաղաշարժ ուժեղին:

Մարտի դաշտում տարած հաղթանակը Լուկովլոսը ամբապնում է հակառակորդի համար, երկարատև հետապնդումով։ Բայց ավելի լավ ձև ձեռք բերած հաղթանակը ամբապնելու համար։ Բայց դրանից, հետապնդումն է տալիս գերիների մեծամասնությունը։ Ապահանոսը վկայում է, որ հետապնդումը տևել է մինչև ուշ գիշեր և 120 ստալիում հեռավորության վրա։ Դա պարտված բանակի ռազմավարական հետապնդում է։

Տիգրանը իր թիկնազորով դիմում է փախուստի և ուշ գլշերին իր 150 զինակիցներով ապաստանում է հայկական բերդերից մեկում։ Տիգրանի խոյրի պատմությունը խիստ անհավանական է, Տիգրանը ռազմի դաշտից նահանջել է իր 2.000 հեծյալ թիկնազորով, և 150 զինակիցները ոչ քե ողջ ուղեկիցներն էին, այլ առքայի «քններներ» և բարեկամները։

**5.2.1.5. Տիգրանակերտի ճակատամարտի  
նշանակությունը պատերազմի ընթացքի համար.  
կողմերի կորուստները**

### Անդրադարնանք կողմերի կորուստներին:

Տիգրանակերտի ճակատամարտում Լուկովոսի բանակի կորուստները խիստ պակասեցված են: Դա տարբեր հետազոտողների կողմից բազմից նշված հոռմեական գորավարների սովորական պրակտիկան է: Ըստ Պլոտարքոսի՝ հոռմեացիներից սպանվել է 5 և վիրավորվել 100 մարդ: Ճակատամարտի ընթացքի քննությունը թույլ է տալիս կարծել, որ, իսկապես, հիմնական կորուստը ունեցել է հոռմեական հեծելազորը, աե-

Նշան կորուստներ են ունեցել մարտում մասնակցած լեզեռները: Իմ գնահատականով՝ հոռմեական հեծելազորը կորցրել է մոտ 1.000 հեծյալ, իսկ հոռմեացի ծանրազեններից զոհվել է մոտ 100 լեզեռներ և 5 կենոտորին: Հետազոյում այս թվերը փոխվել են հայտնի 5 սպանվածի և 100 վիրավորի: Ինչնիցեւ, իմ գնահատականով, Տիգրանակերտի ճակատամարտում հոռմեացիների ընդհանուր կորուստը 1.000 զինվորից մի փոքր ավելի էր:

Տիգրանի բանակի կորուստները անհամեմատ ավելի մեծ էին: Արդի պատմաբանների գնահատականները խիստ տարբեր են, հետազոտողների լուրջ մասը ամենահավանական են համարում Ֆլեգոն Տրալացու հաղորդումը 5.000 սպանվածների մասին:

Ես կարծում եմ, որ Ֆլեգոն Տրալացու հաղորդումը 5.000 սպանվածների մասին վերաբերում է մեկ այլ, շատ կարևոր երրորդ գլխավոր ճակատամարտին, որի ընթացքը և հետևանքները այնքան անփառունակ էին հոռմեական գենքի համար, որ հոռմեաներ պատմաբանները դրա մասին չեն հիշում: Մենք Տիգրանակերտի ճակատամարտում հայերի կորուստների վերաբերյալ ունենք մեկ այլ, շատ կարևոր վկայություն, դա նոյն Պլուտարքոսն է: Իր հօջակավոր «Թագավորների և զորավարների ասույթներում» նա, պատմելով Լուկուլլոսի մասին, Տիգրանակերտի ճակատամարտում զոհված հայերի թիվը նշում է 10.000 զինվոր [194]:

Ես հակված եմ ընդունել այս թիվը: Բուն ճակատամարտի ընթացքում հայերը տվել են 2-3.000 սպանված, մնացած 7-8.000 սպանվել են հետապնդման ժամանակ: Զոհվածների զգակի մասը՝ միշտ մեկ երրորդը, գումակի և սպասարկող սուրբաժանումների զինվորներն էին:

Ճակատամարտի նկարագրությունից երևում է, որ փախուստի ժամանակ նվազագույնն են տուժել Աղիաբենեի քաղաքորի իրամանատարության տակ զոնվող գորաբանակը և սակարակառների, քարակենացիների ու հայերի թերևազեն հեծելազները: Կորուստների մեծ մասը ընկնում է ատրապատականյան, իբրական, աղվանական և հայկական հետևակի, հետո հայկական և ատրապատականյան այրուձիու վրա: Մեզ թվում է, որ կատաֆրակտոսները կարողացել են դուրս գալ

մարտից ավելի քիչ կորուստներով, քան հայկական ծանրազեն հետևակը, որովհետև դուրս են եկել շրջապատման օդակից, որը անընդհատական չի եղել:

Այդպիսով 10.000 զոհվածների կեսից ավելին մենք վերագրում ենք բուն հայկական զորամասերին:

Պլուտարքոսը գրում է նաև բազմաթիվ գերիների մասին, և այս դեպքում մենք հիմքեր չունենք նրան շվատահելու: Մեզ թվում է, որ գերիների քանակը նույնպես պատկառելի էր, ոչ պակաս մի բանի հազարից՝ 3-5.000 մարդ:

Այդպիսով, հայկական բանակը տվել էր ճակատամարտում մոտ 10.000 սպանված և մոտ 3-5.000 գերի՝ ընդամենը կորցնելով 13-15.000 զինվոր: Հոռմեացիների կորուստները 1.000-ից ավելի էին:

Օրոսիոսի հաղորդումը 30.000 սպանվածի մասին մերժվում է ճակատամարտի նկարագրված կարձատևությամբ, հայկական հեծելազորի ճակատամարտից դուրս գալու և հետապնդումից կտրվելու ունակությամբ: Ըստ երևույթին, դա ակնհայտ շափազանցություն է (տեսականորեն, համար հետապնդումը կարող էր տալ այդպիսի զոհերի այդպիսի թվեր, սակայն Սալլյուստիոսի հաղորդման բնույթը բացարձակ Ժխտում է, այս տեսակետով) [29]:

Այս թիվը տրամաբանական է որպես ճակատամարտի հետևանքով Տիգրանի բանակի անվերադելի կորուստների ընդհանուր չափը: Բացի սպանվածներից և գերի ընկածներից, Տիգրանի ցրված զորքից անդառնալի հեռացան հարավի վասակների բոլոր զորքերը, որոնցով կորուստի թիվը կազմում էր Տիգրանի բանակի առնվազն կեսը:

Գումարելով 13-15.000 սպանվածներին և գերվածներին 15-20.000 ցրված վասակների և դաշնակիցների զորքերը՝ ստանում ենք 28-35.000, այսինքն 80.000-ոց բանակի զրեթե կեսը:

Ինչ վերաբերում է Պլուտարքոսին, ապա իր հսկա թվերին համապատասխան, նա իր հերոսի զինվորների ձեռքով պետք է «սպաներ» գոնե 100.000 հետևակ և զրեթե ամբողջ հեծելազորին, ինչը և «կատարեց»: Ինչնիցեւ, հոռմեական զորավարների հաղորդած թշնամիների կորստին լուրջ չեն վերաբերվում ոչ միայն արդի զիտնականները, այլ հաճախ, նաև դեպքերի ժամանակակիցները [29, 34, 42]:

Համեմատաբար ցածր այս կորուստները պայմանավորված են նրանվ, որ տևական մարտ չի եղել, հայկական բանակը ճակատամարտից մի քիչ հետո խուճապահար դիմել է փախուստի: Սայլուստիոլոսը ճակատամարտի ելքը նկարագրում է այսպես. «Հռոմեացիները՝ Լուկուլլոսը, հայերի անխոհեմության հետևաերով առաջացած փախուստը վերագրում են իրենց՝ որպես հաղթանակ»:

Հայկական բանակի կորուստներին պետք է վերագրել նաև այս աղիաբենցիներին, հովներին և այլազգիներին, որոնք ճակատամարտից հետո, մեկնելով իրենց երկուները, ընդմիշտ հեռացան հայկական բանակից:

Այդ առումով ճակատամարտից հետո հայկական բանակը կորցրել էր իր կազմի մոտավորապես կեսը, և Ապահանոսի հաղորդումը այն մասին, որ սպանվել էր 30.000 հայ, կարող ենք ընդունել ոչ որպես սպանվածներ, այլ ճակատամարտից հետո հայկական բանակի շարքերը լրած այլազգի զինվորների ընդհանուր թիվը, որը, ըստ Էռլյան, նույնպես անվերադարձ կորուստ էր:

Հանս Դելբրյուկի [100, էջ 402] դիպուկ նկատողությամբ ավարտներ այս ենթագույնը.

«Հռոմեացիները սովորել էին հաղթանակների մասին ստանալ հիպերբռլիկ լուրեր, օրինակ՝ Սուլլայից, որը, ունենալով 16.500 մարդ և կորցնելով միայն 12-ին, թերոնեայում հաղթել էր 120.000 մարդու. կամ Լուկուլլոսից, որը, ունենալով ընդամենը 14.000 մարդ, ընդ որում տալով 5 սպանված և 100 վիրավոր, Տիգրանակերտում հաղթել էր 250.000 մարդու, որից 55.000 հեծելազորը: Սակայն այս բոլոր թվերը համեստ են թվում համեմատած այն 13.000 հովների հետ, որոնք, ըստ Քսենտիոնի, կամ իր մեկնաբանի, Կունաքում հաղթել էին 900.000 պարսիկներին: Այս ամենը ապացուցում է, որ հռոմեացիները, ինչպես և հովները, բարբարոսների զորքերի վերաբերյալ գտնվում էին ինչ-որ թվային հիպենոսի տակ, որը մթագնում էր նույնիսկ ամենապայծառ ուղեղները:»

Տիգրանակերտի ճակատամարտը Լուկուլլոսի ռազմական և քաղաքական գործունեության գագաթն է: Հառյանակը ահեղ հակառակորդի հանդեպ լիարժեք էր և անվիճելի: Նա իրական հնարավորություններ էր ստեղծում Տիգրանակերտ մայրաքա-

դարը գրավելու համար:

Տիգրանակերտի ճակատամարտում Լուկուլլոսը զիտակցում էր, որ իր հաղթելու միակ շանսը կապված է երկու գործուների հետ: Սուազինը՝ արագությունը: Տիգրանի բանակին անհրաժեշտ էր գրոհել այն պահին, եթե նա դեռ պատրաստ չէր մարտի:

Երկրորդը՝ անհրաժեշտ էր հասցնել այնպիսի հարված, որի հետևանքով հայկական բանակը կկորցներ իր կայունությունը: Այդպիսի հարված կարող է հասցել, եթե հանկարծակի հարվածել թվից, ավելի լավ է՝ թիկունքից:

Շատ կարևոր է նաև ժամանակին տեսնել և օգտագործել հակառակարդի սխալները:

Լուկուլլոսի գորավարական տաղանդը ոչ մի տեղ այնպես չէր փայլել, ինչպես Տիգրանակերտի ճակատամարտում:

Ռազմական արվեստի պատմության տեսանկյունից այս ճակատամարտը մեծ հետաքրքրություն է առաջացնում: Այս տեսանկյունով ճակատամարտի մանրամասն վերլուծությունը կտրվի 69 թ. ռազմարշավի արդյունքների ամփոփման ժամանակ:

### 5.3.Տիգրանակերտի անկումը և 69 թ. ռազմարշավի ավարտը

#### 5.3.1.Հայկական բանակի վիճակը ճակատամարտից հետո

Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ հայերը կորցրել էին բանակի կեսը, մյուս կեսի մեծ մասը մի քանի շաբաթ ընթացքում հավաքվեց Տավրոսի լեռներում և լեռնանցքներով անցավ Արածանիի հովիտը: Այս զորքերի մեջ կային միայն հայեր, ատրպատականցիք և հյուսիսային ժողովուրդներ՝ իրերները և աղվանները: Այստեղ այլև չկային աղիաբենցիք, կորդվացիք, արաբները, հոյվ վարձկանները և այն բոլոր ժողովուրդները, որոնք ապրում էին հայկական տերության հարավային երկրներում: Շուտով այդ երկուների զահականները իրենց կիշշակեն անկախ և կիամագործակցեն Լուկուլլոսի հետ, իսկ 66 թ.-ն՝ բոլորը կենթարկվեն պարթևներին:

Տիգրանը հարկադրված էր շտապ վերականգնել Հայաստանի սասանված ռազմական կարողությունները: Նա Բազադասի գործք ողջ բանակը վերադարձեց Հայաստան: Ետ կանչվեցին նաև Աղյարենեյում, Օսրոենեյում, Կոմագենեյում և Դաշտային Կիլիկիայում մնացած բոլոր հայկական զորամասերը: Հայկական զորքերի նման կենտրոնացումը Հայաստանում խիստ բարձրացրեց երկրի պաշտպանվածությունը: Այսուհետ Տիգրանը ուներ նոր բանակ՝ Լուկովոսին դիմակայելու համար:

Կրած պարտությունից հետո Հայաստանում հոգերանական վիճակը այնպիսին էր, որ Տիգրանը և հայոց պավանին գիտակցում էին բանակի բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը:

Մեծ էր Տիգրանակերտի ճակատամարտի քաղաքական ազդեցությունը հայկական տերության ճակատագրի վրա: Լուկովոսի մեկ դիպուկ հարվածով Տիգրանի մեծ տերությունը հայտնվեց քայլայման եզրին: Տիգրանակերտի ճակատամարտի քաղաքական նշանակությունը անհամեմատ ավելի մեծ էր, քան ուզմականը: Սիրիան բացահայտորեն հրաժարվեց հայոց թագավորից: Նա չէր ցանկանում ենթարկվել պատերազմի արհավիրքներին: Սիրիական վերևախավը հանդուրժեց Սելլյանների վերադարձ զահին՝ միաժամանակ մտնելով զաղտնի հարաբերությունների մեջ հոռմեացիների հետ:

Տիգրանակերտի պարտության ուզմական քաղաքիչը մեծ էր, քայլ ոչ անհուսալի: Ճակատամարտում ունեցած կորուստները հիմնականում առաջացել էին հպատակած ժողովուրդների գինվորների եւո քաշվելու հաշվին: Հայկական բանակի ամենամարտունակ զորամասերը դուրս էին եկել համեմատաբար փոքր կորսոտվ: Սիրիայից և այլ հպատակ երկրներից վերադարձող հայկական զորամասները ունեին մարտական մեծ փորձ: Հայաստանն ուներ բավական բանակությամբ ուսուլակը՝ պայքարը շարունակելու համար:

Բարոյահոգերանական գործոնը մեծ նշանակություն ունի պատերազմի ժամանակ: Պատերազմներ կան, որոնք շահել են ի հաշիվ այդ գործոնի: Պոլիբոսը շատ վատ վառ նկարագրում է այն տրամադրությունը, որը տիրում էր Հռոմում Կանների մոտ հոռմեական բանակի ջախչախիչ պարտությունից հետո, երբ Հաննիբալին հաջողվել էր 50.000 զորքով շրջապատել և ոչնչաց-

նել հոռմեական 86.000 բանակը՝ կոտորելով մոտ 70.000 հոռմեական զինվոր: Ըստ Պոլիբիոսի՝ Հռոմը խիստ վշտացած էր, քայլ վճռական՝ շարունակելու պայքարը:

Նոյն վճռականությունը՝ շարունակել պայքարը Լուկովուրսի դեմ, մենք տեսնում ենք հայոց արքունիքում և բանակում 69 թ. վերջին: Հայերը վշտացել են, սակայն իրենց վճռականությունը՝ շարունակել պայքարը, չէր խաթարվել:


### 5.3.2.Տիգրանակերտի անկումը

Տիգրանակերտի ճակատամարտից մի քանի օր անց հոռմեացիներին հաջողվում է գրավել Տիգրանակերտը: Տիգրանակերտի կորուստը լուրջ հարված էր Հայաստանի պատշաճանական համակարգին: Հայերը կորցրեցին ոչ միայն Հայաստանի խոշորագույն քաղաքներից երկրորդը, այլև հարավի խոշորագույն ամրությունը: Տիգրանակերտի անկման մեջ վճռական դեր խաղացին նրա այլազգի բնակչության տրամադրությունները: Հենվերվ այդ տրամադրությունների վրա՝ ապստամբեցին հովու վարձկանները և ներս թողեցին հոռմեացիներին: Հայաստանի զարդ ու հպարտություն հանդիսացող հայոց նոր՝ հարյուրիստնեազարանց մայրաքաղաքն ընկավ թշնամու ձեռքը:

Ապահովություն. Գիրք XIII. Միհրդատական. 86.

«Մանկայութը, Տիգրանակերտից տեսնելով այդ պարուրությունը, կասկածելով հելլենների վրա, որոնք նրա մոտ վարձկաններ էին, բոլորին զինաթափեց: Մրանք, ձերքակարումից վախինալով, բրերով զինված զնացին և բանակեցին բացօթյա: Երբ Մանկայութը նրանց դեմ հանեց զինված բարբարուների, նրանք, իրենց զգեստները վահանների փոխարեն կապկալով ձախ ձեռքին, խիզախաբար վագեցին նրանց վրա: Եվ ում որ սպանում էին, իսկույն բաժանում էին նրա զենքերը իրար միջև: Երբ, այսպիսով, նրանք հնարավորին չափ իրենց բավարարեցին (զենքով), գրավեցին միջաշտարակային մի քանի մասեր և դրսից հոռմեացիներին կանչելով, բարձրացողներին ներս թողեցին: Այսպէս զրավեց Տիգրանակերտը և կողոպտվեց մեծ հարստություն, ինչպիսին կլիներ նորակառուց և փառասիրու-

թամբ բնակեցված քաղաքում» [17]:



Նկար 5.26. Գրոհային  
աստիճաններ

ցանկանում էր զինաթափել և մեկուսացնել նրանց, սակայն վարձկանները ապստամբում են, գրավում պարսպի մի մասը՝ հարակից աշտարակով և ներս են թռղնում հոռմեացիներին: Հայկական բանակի մասցորդները լրում են Տիգրանակերտը և հեռանում լեռները:

Եթե հաջողվեր Տիգրանակերտը պաշտպանել ևս կես տարի, ապա Լուկուլլոսի 68 թ. արշավանքը դեպի Արտաշատ կձախողվեր: Լուկուլլոսը հարկադրված պետք է Օսրոենելով շարժվեր դեպի Միրիա: Նոյիսկ այդպիսի մեծ հաղթանակից հետո, ինչպիսին էր Տիգրանակերտի ճակատամարտում տարած հաղթանակը, առանց Տիգրանակերտի գրավման Լուկուլլոսը չէր կարող համարել իր գործը վերջնականապես հաջողված: Արդեն 68 թ. զարևանը նա հանդիպելու էր նոր հայկական բանակին, և, եթե Տիգրանակերտը կանգուն մնար մինչ այդ, ապա Լուկուլլոսի ուզմավարական վիճակը խիստ կծանրանար:

Տիգրանակերտի անկման հետևանքները ավելի աղետալի էին տերության ճակատագրի համար, քան պարտությունը Տիգրանակերտի ճակատամարտում: Այս երկու գործոնը իրաք ոչ թե գումարվեցին, այլ ընդհանուր աղետալի վիճակը բազմապատկեցին: Այս աղետը սկսվել էր դեռ Պոնտոսյան պետության թուլացումով և անկուսով, որի հետևանքով Հայկական կայսրությունը միայնակ էր մնացել իր ոխերիմ թշնամիների՝ Շոտմի և Պարթևստանի արանքում:

69 թ. աշնանը-ձմռանը և 68 թ. զարևանը Հայաստանում Տիգրանը անցկացրեց զորահավաք և բանակի ուզմական բարեփոխում:

Լուկուլլոսը արեց ամեն ինչ, որ ոչչացնի հայկական տերության մայրաքաղաքը: Անխնա կողոպուտից հետո մայրաքաղաքն այրվեց և հնարավորին չափ քանդվեց:

Տիգրանակերտի ճակատամարտում տարած հաղթանակից հետո Տիգրանակերտի գրավումը Լուկուլլոսի երկրորդ հաջողությունն էր: Կործանվեց Հարավային Հայաստանի խոշորագույն ամրությունը: Քաղաքում այդքան դժվարությամբ հավաքված հույն և կապարտվելացի բնակչության մի մասը ցրվեց: Հսկայական էին նյութական և մարդկային կորուստները:

Ավելի մեծ էին քաղաքական կորուստները: Տիգրանի հայկական տերությունը անմիջապես փլուզվեց ոչ թե Տիգրանակերտի ճակատամարտում կրած պարտությունից, այլ Տիգրանակերտի կորստից հետո:

Մեկ անգամ է կրկնեմ՝ եթե Տիգրանակերտը դիմանար պաշարմանը, և Տիգրանակերտի ճակատամարտից գոնե մի քանի շաբաթ հետո հոռմեացիների թիկունքում հայտնվեր հայկական գոնե մի քանի հեծելազունոյ, ապա պատերազմը միանգամայն այլ տեսք կը նույնականացներ: Հետզհետև ավելացնելով իր ուզմական խմբավորումը՝ Տիգրանը կկարողանար Լուկուլլոսին մատնել դժվարագույն վիճակի՝ դժվարացնելով նրա պարենավորումը և գերլարված վիճակում պահելով հոռմեական գործերը:

Այդպիսով Տիգրանակերտի կորուստը մենք համարում ենք պատերազմի առաջին փուլի մեծագույն կորուստներից մեկը: Հետազոյում Տիգրանակերտը վերականգնվեց, սակայն երբեք չհասավ այն բարզակամնան, որը նա վայելում էր իր պատմության առաջին տասը տարիների ընթացքում:

Հետարքիր է պարզաբանել Տիգրանակերտի պաշտպանական համակարգի հատակագիծը, փորձել պարզել հոռմեական պաշարողական ճամբարի վայրը: Եթե դա մեզ հաջողվի անել, ապա կստանանք հնարավորություն՝ ավելի հստակ լուսաբանելու պատերազմի իրադարձությունները:

Ս.թ.ա. 216 թ. հոռմեացիների՝ Կաննի մոտ կրած ծանր պարտությունը, բեկումսային էր Երկրորդ այտեկիցան պատե-

րազմում: «Կանենից» հետո պարտություն կրած հոռմեացիները սկսեցին դանդաղ, սակայն անդարձելի առավելության հասնել իրենց ահեղ քշիամու հանդեպ:

Նոյնը կատարվեց Տիգրանակերտի ճակատամարտից հետո: Այս փայլուն հաղթանակը՝ հոռմեացիների միակ վճռական հաջողությունն էր այս պատերազմում, որին հաջորդեց վճռորչ ձախողումների մի շղթա, որը ավարտվեց հայերի համոզիչ հաղթանակով: Հռոմը հարկադրված էր փոխել իր գորավարին:

### 5.3.3.Լուկովոսի նախապատրաստումը 68 թ. ռազմարշավին

Գրավելով Տիգրանակերտը՝ Լուկովոսը հիմնուին կողոպեց և ավերեց այն, դրանից հետո նա անցավ Կորդոր, որտեղ պետք է ձմեռեր իր բանակը: 69 թ. տարեվերջին նա վերահսկում էր Ծոփքը, Աղձնիքը, Կորդորը: Կորդորում հոռմեական բանակի համար հավաքված էին պարենի մեծ պաշարներ:

Լուկովոսը անցկացրեց մի շարք միջոցառումներ.

- Փոքր Ասիայի հոռմեական տիրույթներից նա պահանջեց և ստացավ բանակի համար որոշ համարում, սակայն Սոռնատիուսը չենթարկեց Լուկովոսի հրամանին և իր լեգենով Հայաստան չեկավ.
- Հաշմանդամներին և ծառայությանը ոչ պիտանի զինվորներին ուղարկեց Փոքր Ասիայի հոռմեական տիրույթները.
- Միրիայում և Տիգրանից նոր անկախացած վորք թագավորություններում ծավալեց ակտիվ դիվանագիտական գործունեություն.
- Կապեր հաստատեց Պարթևատանի թագավոր Օրոդեսի հետ առաջարկելով համատեղ պատերազմել Տիգրանի դեմ.
- Ավարտին հասցրեց 68 թ. ռազմարշավի ծրագիրը:

### 5.3.4.Տիգրանի նախապատրաստումը 68 թ. ռազմարշավին. Հայկական բանակի նոր ուժորմի անհրաժեշտությունը

Տիգրանը 69 թ. վերջին կատարեց մի շարք գործողություններ.

- Հայաստանում անցկացրեց ընդհանուր գորահավաք.
- Ակնեց ռազմական բարեփոխումներ.
- Միրիայտի հետ միասին դիմեց Պարթևատանի թագավորին՝ առաջարկելով համատեղ պայքարել հոռմեացիների դեմ.
- Վերանորոգեց ու ամրացրեց Արտաշատի պաշտպանական համակարգը:

69 թ. գարնան վերջին Հայաստանում անցկացվեց ընդհանուր գորահավաք, որից հետո ընտրվեցին ամենաուժեղ և խիզախի երիտասարդները, որոնք պետք է համարեին հայոց բանակը: Միաժամանակ հայոց բանակից արձակվեցին բոլոր հաշմանդամ և ծառայությանը անպատճ տարիքով զինվորները: Բանակը համարվեց և հասցեց մինչև 70.000 հետևակային և 30-35.000 հեծելազորային, իսկ մեծագույն վաճառքը վաճառները արձակվեցին տուն: Այսպիսով՝ հայկական բանակի կազմը թարմացվեց նոր ուժերով:

Հայակական հեծելազորի կազմակերպվածությունը և մարտունակությունը հոռմեականից ավելի բարձր էր, ուստի ռազմական վերափոխումներ կատարելու անհրաժեշտությունը չկար: Այլ էր վիճակը հայկական հետևակում, եթե նրա թերթագենն նետաձիգների գնդերը գերազանցում էին հոռմեական թերթագեններին, ապա ծանր հետևակը խիստ զիջում էր հոռմեական լեգեններին:

69 թ. վերջին Տիգրանը Միրիայտի մոտ գտնվող փորձառու հոյն և վտարանդի հոռմեացի սպաների օգնությամբ սկսում է հայկական հետևակի ռազմական բարեփոխումը:

Տիգրանը և Միրիայտը, դիմելով Օրոդեսին, գգուշացնում են, որ իրենց պարտության դեպքում զիշատիչ ու ազան Հռոմը հաջորդը պատերազմելու է պարթևների դեմ: Պարթևաց արքան նախընտրում է չեղոքությունը:

Կարևորագույն նախապատրաստական ռազմական միջո-

ցառումներից էր Արտաշատ մայրաքաղաքի և նրա շրջակայրում գտնվող ամրոցների վերանորոգումը և հզորացումը: Հաննիքալի հանձնարով նախագծված այս պաշտպանական համակարգը աշխարհում ուժեղագույններից մեկն էր:

Լուկովոսի համար սկսվելու էր պայքարի երկրորդ՝ վճռական փուլը:

### 5.3.5.Հայկական բանակի տիգրանակերտյան պարտության պատճառների վերլուծությունը

69 թ. ուղարշավի արդյունքները իիստ անբավարար էին հայկական տերության համար: Տիգրանի նախատեսված ծրագրերը չիրագործվեցին, հոռմեացիներն էլ հասան ակնառու հաջողությունների:

Նշենք հայկական կողմի սխալները Տիգրանակերտի ճակատամարտում:

- ուղերվի բացակայությունը.
- վատ կազմակերպված հետախուզությունը.
- ուղմաղաշի մոտակա ուղմավարական բարձունքները չզբաղեցնելու պատճառով նրանք հակառակորդին զիջելը.
- Ճակատամարտում նախաձեռնությունը հակառակորդին զիջելը.
- մեծաթիվ հեծելազորի մարտակարական հետարակորությունների անբավարար օգտագործումը.
- սեփական բանակի բվային գերազանցությանը ապավինելը.
- անտեղի համոզունքը, որ Լուկովոսը կը նդունի Տիգրանի առաջարկած մարտառը՝ ճակատային «Ճիշտ ճակատամարտը», որի ընթացքում հոռմեացիները անխուսափելիորեն կճզգմվեին հայերի թևերին գտնվող հզոր հեծելազորի և կենտրոնում գտնվող հետևակի միջուն (Կանները կը կնքելու համար անհրաժեշտ էր ոչ միայն Հաննիքալի, այլև Վարրոնի առկայությունը):

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Տիգրանը պայքարում էր Հոռմի ամենատաղանդավոր գրավարներից մեկի դեմ: Լուկովոսը Տիգրանակերտի գլխավոր ճակատամարտում ուղմական պատմության մեջ առաջին անգամ հակառակորդի ճակատում շեղող և ցուցադրական գործողությունների ֆոնի վրա կիրառեց ուղմավարական շրջանցման եղանակը:

### 5.4. 69 թ. ուղարշավի արդյունքները և գնահատականը

Հայ-հռոմեական պատերազմի 69 թ. ուղարշավը ուղմական արվեստի տեսանկյունից հետաքրքիր էր նրանով, որ առաջին անգամ համաշխարհային ուղմական պատմության մեջ Տիգրանակերտի ճակատամարտում Լուկովոսի կողմից կիրառվեց բանակի հիմնական ուժերով շրջանցում և թից ու բիկունքից հարված հակառակորդի ճակատում ցուցադրական գործողությունների ֆոնի վրա:

Պատերազմի առաջին տարվա ընթացքում հակառակորդ կողմերի կատարված մնացած այլ գործողությունները ուղմական արվեստի տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն չեն ներկայացնում:

Պատերազմի ընթացքը անտիկ պատմիչների կողմից նկարագրված է բավականին մանրամասն և չնայած շարադրանքի որոշ հակասությունների՝ թույլ է տալիս վերականգնել ուղմական գործողությունների հիմնական ընթացքը:

69 թ. ուղարշավի ողջ ընթացքում հոռմեացիները պահեցին իրենց ձեռքում ուղմավարական նախաձեռնությունը: Հայկական կողմի՝ հաջողված ուղմական գործողությունները կրում էին տեղական բնույթը և կականապես ուղմարշավի արդյունքների վրա չաղցեցին: Այսեղ պետք է նշվի երկու մարտնչող կողմերի մարտավարական վարպետությունը՝ հայերի կողմից Մերուժանի գորազնի հարձակման մարտավարությունը և Տիգրանակերտի մոտ հայկական հեծելազորի անցկացքած գրոհը: Հոռմեացիների հաջողված տեղական մարտերից էին Սեբատիյոսի հարձակումը արաքների վրա և Սուրենայի գլխավորած հոռմեացիների հարձակումը Տիգրանի բանակի գումակի վրա:

Խոշոր ուղմավարական հաջողություն էր հոռմեացիների համար հաղթանակը Տիգրանակերտի գլխավոր ճակատամարտում, հետո Տիգրանակերտի անկումը, որը խիստ բարեւավեց հոռմեացիների ուղմավարական վիճակը:

Այդ ամենի պատճառով գրեթե քանդվեց Տիգրանի մեծ տերությունը, սակայն ուղմական առումով հայկական գորքերի վերադարձը և կենտրոնացումը հայրենիքում, հոռմեացիների

համար անսպասելիորեն, ուժեղացրին Հայաստանի դիմադրութականությունը:

69 թ. ձմռանը Արտաշատում ամփոփվեցին տարվա արդյունքները: Հարավսիրիական պատերազմի մարդկային կորուստներին գրամարվեցին հայ-հոռմեական պատերազմի մարդկային կորուստները.

- հարավսիրիական պատերազմում հայկական կորուստներ՝ մոտավորապես 7.000 զինվոր.
- պատերազմի սկզբից մինչև Տիգրանակերտի ճակատամարտը՝ 11.000 զինվոր.
- Տիգրանակերտի ճակատամարտում (և գերի ընկածները)՝ 13-15.000 զինվոր.
- Տիգրանակերտի անկման ժամանակ՝ մոտավորապես 3-5.000 զինվոր.

Ընդամենը՝ մոտավորապես 35-40.000 զինվոր:

Այսպիսով հայկական բանակը ունեցել էր մեծ կորուստներ, որից բուն հայկական զնները ոչ պակաս, քան 25-30.000-ը: Եթե սրան գումարենք հիվանդությունից և վնասվածքներից ծառայությանը անպիտաններին, բանակի ընդհանուր կորուստը 69 թ. տարեվերջին կարող էնք ենթադրել 30-35.000 հայ զինվոր: Եթե այսքանին գումարենք ավագ տարիքի զինվորների ամենամյա փոփոխությունը՝ մոտ 5%՝ ստանում ենք ևս 5.000 հոգի, որը բանակը թարմացնելու համար կարող էր այս տարի կատարվել ավելի խիստ՝ ստացվում է մոտավորապես 7-10.000 ծերացած զինվոր: Ընդանուր բանակը՝ մոտավորապես 35-45.000 զինվոր:

Այսպիսով, 69 թ.-ի տարեվերջին բանակի անձնակազմի մեկ երրորդից ավելին՝ 104.000-ից 40.000-ը դրւու էին եկել շարքից: Անհրաժեշտ էր կատարել նոր զորահավաք:

Այդ զորահավաքը կատարվեց 69-68 թ. ձմռանը: Հայաստանի զավաներից և քաղաքներից ընտրվեցին 100.000 երիտասարդներ, որոնցից մոտ 40.000 ամենաուժեղներին և խիզախներին հավաքագրեցին բանակ:

Արդի պատմաբաններից ումանք Ապպիանոսի տեղեկությունները այս զորահավաքի մասին հասկանում են որպես ամբողջ 100.000 զորակոչիկներից ստեղծած նոր բանակ: Դա, առաջին հերթին, խոսում է այդ զիտնական-պատմաբանների բա-


նակի եռթյունը բացարձակ շհասկանալու մասին:

Բանակ ստեղծելը չափազանց բարդ և աշխատատար գործներաց է բոլոր ժամանակներում: Դրա համար պահանջվում է հսկայական ինտելեկտուալ ներդրում ու պրդաստյա կամք, նաև հասարակության մեջ որոշակի ուսումնական ավանդույթների առկայություն: Բանակը բարդ տցիալական մեխանիզմ է: Նույնիսկ բանակի մասնակի ռեֆորմը պահանջում է հսկայական ջանքեր: Հայկական բանակի դեպքում մեծ էր նաև զենքի կորուստը: Ապագա հետևակի ռեֆորմի համար նաև պահանջվում էր ամենակարճ ժամանակում պատրաստել մի քանի տասնյակ հազար ծանր հետևակային սպառազինության կոմպլեկտ: Այս բոլոր միջոցառումները կատարվեցին Տիգրանի և Սիհրդատի դեկավարությամբ: Ծանր հետևակի մարզումը հանձնարարվեց Սիհրդատի թիկնագորի հմուտ հոռմեական և հոյսի սպաներին:

Ժամանակին Հաննիբալը շատ շուտ էր զնահատել հոռմեական հետևակային մարտավարության արժանիքները: Նրան մ.թ.ա. 216 թ. Կանեի ճակատամարտից առաջ հաջողվել էր սպառազինել իր ծանր հետևակը ռազմավարային հոռմեական զենքով և չորս շաբաթում մարզել լեզենական մարտաձևով: 69-68 թթ. այդ խնդիրը ծանրացավ նաև դաշնակից արքաների առջև:

Տիգրանը և Լուկովլուսը բաց զիտակցում էին, որ հիմնական պայքարը դեռ առջևում է, ուստի 69 թ. աշնան-ձմռանը մարտնչող կողմերը սկսեցին եռանդրուն նախապատրաստվել հաջորդ՝ 68թ. ռազմարշավին: Տիգրանը Սիհրդատի գործուն աջակցությամբ նախաձեռնեց չափազանց բարդ և աշխատատար ծրագիր՝ հաջորդ զարնանը հակադրվել Լուկովլուսին ոչ միայն իր զերազանց հեծելագորով, այլև կատարելագործված գծային (ծանր) հետևակով:





## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղոնց, Նիկողայոս. Միհրդատ Եվլպատոր և Տիգրան Մեծ: Երկեր հինգ հատորով. Հատոր Ա. Պատմազիտական ուսումնասիրություններ: Եր., Եր. համալս. հրատ., 2006, էջ 156-168:
2. Աթոյան, Կարլեն. Ռազմա-սպորտային մենամարտերը Հայաստանում: Երևան, «Լուս», 1965, 220 էջ:
3. Աթոյան, Կարլեն. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում. (Ֆիզիկական կուլտուրան հին և մեջնադարյան Հայաստանում): Մասն առաջին: Եր., «Լուս», 1985, 375 էջ:
4. Ալեքսանդր Մակերենացի. Արիանոս. Ալեքսանդրի արշավանք. Քվինսոն Կուրցիոս Ռուֆոս. Ալեքսանդր Մակերենացու պատմությունը: Եր., 1987, 656 էջ:
5. Աստուրեան, Հ. Յ. Քաղաքական վերաբերութիւններ ընդմեջ Հայաստանի եւ Հոռվայ. 190-էն և Ք. մինչեւ 428 յ. Ք.: Վենետիկ - Ս. Ղազար, 1912, 5+391 էջ:
6. Արմեն, Ք. Հրանտ. Մեծն Տիգրան: Գահիրե, 1957, 9+248 էջ:
7. Գևորգյան, Արա. Արածանիի ճակատամարտի նշանակությունը ու ազմարվեստի պատմության մեջ: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Աշուարակ, 2005, էջ 55-59:
8. Դանիելյան, Էդուարդ. Տիգրան II Մեծի քաղաքակրթական գործունեության ու ազմավարությունը: //Պատմաբանասիրական հանդես, 2006, 2, էջ 3-12:
9. Եղիազարյան, Արման. Արաբական ցեղերը Տիգրան Մեծի տերության համակարգում: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Աշուարակ, 2005, էջ 63:
10. Էջիբեկյան, Ժ.Գ. Հայաստանը և Սելսկյանները: Եր., ԳԱ հրատ., 1979. - 128 էջ:
11. Էրիարտ, Կուրտ. Տիգրան Բ եւ հայ-լուկովեան պատե-

- րազմները: Թարգմ. գերմ. Աշխատասիրեց Հ. Գարեգին Գարանֆիլեան: Վիեննա, 1926, 291 էջ:
12. Լեսկով, Վ.Ա. Սպարտակ: Թարգմ. ոռու. Եր., «Հայաստան», 1987, 472 էջ:
  13. Խաչատրյան, Ժորես. Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո: //Պատմա-բանասիրական հանդես, 2007, 2, էջ 3-36:
  14. Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Քննական բնագիրը Մ. Աբելյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկն. Ստ. Մալխասյանի: Երևան, Եր. պետ. համալս. հրատ., 1981, 588 էջ:
  15. Կարազյան, Հովհաննես. Ֆելիքս Տեր-Մարտիրոսյին «Հայաստանը մ.թ.ա. 522-520 թթ. ապստամբության ժամանակ» հոդվածի մասին: //Պատմա-բանասիրական հանդես, 2001, 1, էջ 247-249:
  16. Կրկյաշարյան, Ս.Ս. Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.): Եր., «Լուսակն», 2005, 312 էջ:
  17. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Հատոր 1. Հնագույն ժամանակներից մինչև դարի IX կեսերը: Կազմ. Պ.Հ. Հովհաննիսյան, Ս.Գ. Արքահամյան: Եր., Երևանի համալս. հրատ., 1981, 944 էջ:
  18. Հայ ժողովրդի պատմություն. Հատոր 1. Հայաստանը նախադարյան-համայնական և սորկատիրական կարգերի ժամանակաշրջանում: Եր., ԳԱ հրատ. 1972, 992 էջ:
  19. Հակոբյան, Հայկ. Հոռմեա-արենեյան առնչությունները ու ազմական տակտիկայի բնագավառում. Բանքեր Երևանի համալսարանի, 1983, 3 (51), էջ 49-70.
  20. Հակոբյան, Հայկ. Ավարայրի ճակատամարտը (Պատմաբնական տեսություն): //Պատմա-բանասիրական հանդես, 2003, 1, էջ 40-67.
  21. Հակոբյան, Հայկ. Տիգրան Մեծ: Եր., 2005, 244 էջ:
  22. Հակոբյան, Հայկ. Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը: //Պատմա-բանասիրական հանդես, 2007, 3, էջ 3-29.
  23. Հակոբյան, Մհեր. Հայ ժողովրդի ու ազմական տարե-

- գիրք. Գիրք յոթերորդ՝ մ.թ.ա. 95-65: Եր., Հեղինակային հրատ., 2007, 40 էջ:
24. Հակոբյան, Սիլե. Հայ ժողովրդի ռազմական տարեգիրք. Գիրք ութերորդ՝ մ.թ.ա. 65- մ.թ.1: Եր., Հեղինակային հրատ., 2007, 40 էջ:
  25. Հարությունյան, Բարկեն. Պոնտոսի Սիհրդատ VI Եպապատրո թագավորը նաև հայոց արքա: //Պատմաբանա-սիրական հանդես, 2003, 3, էջ 131-152:
  26. Հերոդոտոս. Պատմություն ինք գրից. Թարգմ. հին հուն. Ս. Կրկյաշարյանի: Եր., ԳԱ հրատ., 1986. - 652 էջ:
  27. Հովհաննիսյան, Պետրոս. Տիգրան Մեծի գործունեության լուսաբանումը Նիկողայոս Ադրնից աշխատություններում: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Աշտարակ, 2005, էջ 31-34:
  28. Մաժի, Դավիթ. Հոռմեական քաղաքականութեան նպատակը Հայաստանի եւ Անդրկովկասի մէջ: Թարգմ. անգլ. Փարիզ, 1939, 14 էջ:
  29. Մանանյան, Հակոբ. Տիգրան Երկրորդը և Հոռմը. Նոր լուսաբանությամբ ըստ Ազգբնադրյունների: Վերահաստարակություն 1940 թ., Երևան, 1972, 260 էջ:
  30. Մանասերյան, Ռուբեն. Հայկական ռազմարվեստի սկզբունքները Տիգրան Մեծի օրոք: - Թեզիսներ հանրապետական գիտաժողովի, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարություն, նոյեմբեր, 1997 թ., էջ 27- 28:
  31. Մանասերյան, Ռուբեն. Թագավորական իշխանության հաստատության գարզացման առանձնահատկությունները Արտաշեսյանների օրոք (Թագավոր և ավագանին): //Լրաբեր հասարակական գիտությունների. Եր., 1999 թ., թիվ 1, էջ 78- 85:
  32. Մանասերյան, Ռուբեն. Տիգրան Մեծ (համառոտ ակնարկ): Պատմություն, թիվ 1, Եր., 2002 թ., էջ 144-158:
  33. Մանասերյան, Ռուբեն. Սպարտուակի մոտ ժամանած հեծելազորի հարցի շորջ (Վարկած՝ Սպարտուակի հետ Տիգրան Մեծի ռազմական կազերի վերաբերյալ): //Պատմաբանասիրական հանդես, Եր., 2004 թ., թիվ 3, էջ 252- 269:
  34. Մանասերյան, Ռուբեն. Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ. Մ.թ.ա. 94 - 64 թթ.: Երկրորդ, լրացված հրատարակություն: Երևան, 2007, 258 էջ:
  35. Մանասերյան, Ռուբեն. Հայաստանը Արտավագրից մինչև Տիգրան Մեծ: Երևան, «Արեգ», 1997, 216 էջ:
  36. Մարգարյան, Երվանդ. Տիգրան Բ-ի աշխարհակալ տէրության զաղափարաբանական հայեցակարգի հիմքերի մասին: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Աշտարակ, 2005, էջ 63-66:
  37. Մարտիկյան, Սուրեն. Հայոց բանակի մարտավարության և ռազմավարության առանձնահատկությունները թ.ա. 80 - 70 թթ. Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Աշտարակ, 2005, էջ 53-54:
  38. Մարտիկյան Սուրեն, Սովորյան Արտակ. Մեր հայրանակները. Հատոր Ա. Երևան, «Նորավանք», 2008, 260 էջ:
  39. Մելքոնյան, Հ.Գ. Աղիաբենի պետությունը և Հայաստանը: Երևան, ԳԱ հրատ., 1980, 275 էջ:
  40. Մինասյան, Եղիկ. Տիգրան Մեծի ռազմադիմականագիտական գործունեության պատմությունից: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուցումների հիմնադրույթներ: Աշտարակ, 2005, էջ 50 - 53:
  41. Շահնազարյան, Ն.Հ. Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ.թ.ա. VI – մ.թ. V դ.): Եր., Եր. համալս. հրատ., 1990, 296 էջ:
  42. Պլուտարքոս. Կենսագրություններ. Թարգմ. հին հուն. Ս. Գրքաշարյանի: Եր., «Սարգիս Խաչենց», 2001, 392 էջ:
  43. Զահուկյան, Գ.Բ. Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան: Եր., ԳԱ հրատ., 1987, 748 էջ:
  44. Սահինյան, Ա.Ա. Գառնի ամրոցի պաշտպանական համակարգը: //Պատմաբանասիրական հանդես, 1980, թիվ 3 (90), էջ 88 - 106:

45. Սարգսյան, Ա.Վ. Հայ ուազմական արվեստի պատմությունից: Եր., 1969, 220 էջ:
46. Դիոդորոս Սիկիլիացի. Պատմական գրադարան ... Հատվածաբար թարգմանություն հին հռոմ. Ս.Ս. Կրկյաշարյանի. (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Հին հունական աղբյուրներ Բ): Եր., ԳԱ հրատ., 1985: - 204 էջ:
47. Ստեփանյան, Ալեքս. Հելենիստական Հայաստանի տնտեսական կյանքի մի հարացույցի մասին: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուրումների հիմնադրույթներ: Աշուարք, 2005, էջ 20-24:
48. Տիգրան Մեծ՝ հայրենապաշտ տիրակալը: Գիտահանրամատչելի փաստագրական ֆիլմ: DVD, 2005 թ.:
49. Տիգրայան, Գ.Ա. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ — մ.թ.ա. III դ. վերջ): //Պատմաբանասիրական հանդես, թիվ 2 (93), էջ 68 - 84:
50. Ուուչենկո, Ս.Լ. Հովհոս Կեսար. Թարգ. ուսւ. Եր., 1980, 448 էջ:
51. Հովհենիս Փլավիոս, Դիոն Կասիոս. Հատվածաբար թարգմանություն հին հռոմ. Ս.Ս. Կրկյաշարյանի. (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Հին հունական աղբյուրներ Ա): Եր., ԳԱ հրատ., 1976: - 268 էջ:
52. Քարամեան, Ն. Պարթենները Պարսկաստանում եւ նրանց յարաբերութիվները հայոց հետ: Վաղարշապատ, 1897, 9+70 էջ:
53. Քեննովն. Անարքասիս. Հին հռոմ. թարգմ. Ս. Կրկյաշարյանի. Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 284 էջ:
54. Օհակյան, Սուրայդ Նորից Խորենացու առաջին Արտաշեսի մասին //Պատմա-բանասիրական հանդես, 2003, 1, էջ 40-67.
55. Օհակյան, Սուրայդ. Ալեքսանդր Սակելոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը: Եր., 2003, 84 էջ:
56. Օհակյան, Սուրայդ. Տիգրան Մեծի արտաքին քաղաքականության տրամաբանությունը: Տիգրան Մեծ. Գահակալության 2100-ամյակ. Միջազգային գիտաժողով: Զեկուրումների հիմնադրույթներ: Աշուարք, 2005, էջ

- 59-62:
57. Ակոպյան, Ա.Մ. Каменные ядра из Арташата. В кн. Проблемы античной археологии. М., 1986, с. 235.
58. Амфитеатров, А.В. Армения и Рим. Петроград: «Просвещение». - 361 с.
59. Аппиан. Римская история. <http://ancientrome.ru/antitr/appian>
60. Аппиан. Гражданские войны. <http://ancientrome.ru/antitr/appian>
61. Аракелян, Б.Н. Раскопки крепости Гарни. //Вестник древней истории, 1951, 4, с. 101-114.
62. Аракелян, Б.Н.. Основные результаты раскопок древнего Арташата в 1970 – 1973 гг. //Историко-филологический журнал, 1974, № 4 (67), с.44 – 60.
63. Аракелян, Б.Н.. Арташат: основные результаты раскопок 1970 – 1977 г. Том I. (Археологические раскопки в Армении, № 16.), Ереван, Изд. АН АрмССР, 1982, 71 с., 46 с Илл..
64. Арманд, Д.Л., Добринин, Б.Ф., Ефремов, Ю.К., Зиман, Л.Я., Мурзаев, Э.М., Спрыгина, Л.И. Зарубежная Азия: Физическая география. М.: Гос.уч.-пед. изд. МП РСФСР, 1956. – 608 с.
65. Артиллерия римской сухопутной армии. <http://www.xlegio.ru>
66. Арутюнян, А.Ж. Арташес I и создание древнеармянской профессиональной армии. //Вестник древней истории, 2009, № 2, с.129 – 137.
67. Археология СССР с древнейших времен до средневековья в 20 томах: Древнейшие государства Кавказа и Средней Азии. Отв. Ред. Тома Г.А. Кошеленко. М., «Наука», 1985, 496 с.
68. Афиней. О машинах. //Вестник древней истории, 1940, № 3-4, с. 414 – 424.
69. Бабаян, Давид. Такое в истории Ирана сымели сделать лишь Александр Македонский и Тигран Великий. <http://www.panarmenian.ru>
70. Бабичев, Н.Т., Боровский, Я.М.. Словарь латинских кры-

- латах слов. М.: «Русский язык», 1982, 960 с.
71. Беликов, А.П.. Парфянский поход Красса: военно-технический аспект. <http://www.xlegio.ru> и военно-исторический журнал «PARA BELLUM».
  72. Беликов, А.П. Рим и Парфия: истоки взаимного неприятия. «Античный мир и археология», Вып. 11, Саратов, 2002. <http://www.xlegio.ru> и военно-исторический журнал «PARA BELLUM».
  73. Бенгтсон, Г. Правители эпохи эллинизма. Пер. с нем. М., 392 с.
  74. Бикерман, Э.. Государство Селевкидов. Пер. с франц. – М.: Изд-во «Наука»; 1985. – 264 с.
  75. Блаватский, В.Д. Битва при Фате и греческая тактика. Битва при Фате и греческая тактика IV века до н.э. //Вестник Древней истории, 1946, № 1, с. 101 – 106.
  76. Блаватская, Т.В. Из истории греческой интелигенции эллинистического времени. М., «Наука», 1983. – 328 с.
  77. Ле Бозк, Я. Римская армия эпохи Ранней Империи. Пер. с франц. М.Н. Челинцева. М.: «Российская политическая энциклопедия», 2001. [www.roman-glory.com](http://www.roman-glory.com)
  78. Бокщанин, А.Г. Парфия и Рим. Часть II. Система политического дуализма в Передней Азии. М.: Изд. Московского ун-та, 1966, 304 с.
  79. Бокщанин, А.Г. Битва при Каррах. //Вестник Древней истории, 1949, № 4, с. 41 – 50.
  80. Болингброк. Письма об изучении и пользе истории. (Серия «Памятники исторической мысли») Пер. с англ. М.: «Наука», 1978. – 360 с.
  81. Бурназян, Г.С. Армянское войско в борьбе против римских завоевателей в первом веке до нашей эры. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук. 1956, 40 с.
  82. Владзимирский, А. Скифы – конные стрелки из лука. <http://www.xlegio.ru>
  83. Военное искусство античности. (Антология мысли).– М.: Изд-во Эксмо, Спб.: Terra Fantastica, 2003. – 768 с.
  84. Всемирная история войн. (Часть 1. Войны Древнего мира. с. 3-85) .Авторы-составители А.Г. Мерников и А.А. Спектор. Минск: ООО «Харвест», 2004. – 640 с.: ил.
  85. Габелко, О.Л. Вифинское царство в системе эллинистических государств. Автореф. дисс. на соиск. уч. ст. канд. ист. н. М., 1998. [www.referatama.ru](http://www.referatama.ru)
  86. Габриелян, Р.А.. Армения и Атропатена. Ереван, Изд. РАУ, 2002. 320 с.
  87. Гельцер, М.Л. Войско Угарита и его организация. Вестник Древней истории, 1969, № 3, с. 21-38.
  88. Гиро, П.. Частная и общественная жизнь римлян: Легион, когорта и их боевой порядок во времена Цезаря. (По Colonel Stoffel, Histoire de Jules Cesar, II, p. 274, pp. 337–342). Тактика. (По Colonel Stoffel, Histoire de Jules Cesar, II, 323 et suiv.). <http://www.xlegio.ru>
  89. Глушанин, Е.П. Военные реформы Диоклетиана и Константина. //Вестник древней истории, 1987, № 2, с. 51-73.
  90. Голдсуорти, А. Во имя Рима. Пер. с англ. М. Алферова. М.: «Транзиткнига», 2006. [www.roman-glory.com](http://www.roman-glory.com)
  91. Горелик, М.В. Панцирное снаряжение из кургана у с. Красный Подол. //В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 119-120.
  92. Горончаровский, В.А., Никоноров В.П. Илуратский кафактарий (К истории античной тяжелой кавалерии). //Вестник Древней истории, 1987, 1, с. 201-213.
  93. Гуленков, К.Л.. Один эпизод из Спартаковской войны: Последний поход Спартака. <http://www.xlegio.ru>
  94. Гуленков, К.Л.. Битва за Пирей. <http://www.xlegio.ru>
  95. Гуленков, К.Л. Третья Митридатова война: кампания 71 г. До н.э. «Studia historica», Volume III. М., 2003. <http://www.???.ru>
  96. Дандамаев М.А., Луконин В.Г.. Культура и экономика Древнего Ирана. М.: «Наука», Гл. Ред. Восточной литературы. 1980, 416 с.
  97. Дандамаев М.А. Политическая история Ахеменидской державы. М.: «Наука», Гл. Ред. Восточной литературы. 1985, 320 с.
  98. Дебс, Г. Гомер. Военное соприкосновение между римлянами и китайцами в античное время. //Вестник Древней истории, 1946, № 2, с. 45-50.

99. Денисон Дж. История конницы. – М.: АСТ, 2001. – 480 с.: ил. (Военно-историческая библиотека). [www.militera.lib.ru](http://www.militera.lib.ru)
- 100.Дельбрюк, Ганс. История военного искусства в рамках политической истории. Том 1. Античный мир. Пер. с нем. М.: Гос.воен.изд., 1936. – 464 с.
- 101.Дельбрюк, Ганс. История военного искусства в рамках политической истории. Том 2. Германцы. Пер. с нем. М.: Гос.воен.изд., 1937. – 400 с.
- 102.Дильс, Г. Античная техника. Пер. с нем. М-Л.: Гос.тех.-теор.изд., 1934. – 216 с.
- 103.Дмитриев, В.А. «Всадники в сверкающей броне»: Военное дело сасанидского Ирана и история римско-персидских войн. - Спб.: Петербургское востоковедение, 2008. - 368 с. (серия «Militaria Antiqua», XII).
- 104.Добролюбов, Ярослав. Обнажение приема: Нефедкинский перевод Полиэна. //Отечественные записки, 2002. [http://magazines.russ.ru/02/2002/8/2002\\_08\\_58.html](http://magazines.russ.ru/02/2002/8/2002_08_58.html)
- 105.Дройзен, И.Г. История эллинизма. Т.1. История Александра Великого. Пер. с франц. М.: Изд. Солдатенкова, 1891.- 399+185 с.
- 106.Дройзен, И.Г. История эллинизма. Т.2. История диадохов. Пер. с франц. М.: Изд. Солдатенкова, 1893.- 391+119 с.
- 107.Дройзен, И.Г. История эллинизма. Т.3. История эпигонов. Пер. с франц. М.: Изд. Солдатенкова, 1893.- 514+202 с.
- 108.Егоров, А.Б. Теодор Моммзен и «Римская история». <http://rome.webzone.ru/public/mommesen/hist/intro.htm>
- 109.Егоров, А.Б. Последние планы Цезаря (к проблеме римского глобализма). - Мнемон: Исследования и публикации по истории античного мира. Вып. 5. Под ред. Проф. Э.Д. Фролова. Спб., 2006, с. 77-94.
- 110.Есаян С.А. Оружие и военное дело Древней Армении (III – I тыс. До н.э.). Ер., Изд АН АрмССР, 1966, 160 с.
- 111.Есаян С.А. Древняя культура племен Северо-восточной Армении (III – I тыс. До н.э.). Ер., Изд АН АрмССР, 1976, 271 с.
- 112.Есаян С.А. Доспех Древней Армении (III – I тыс. До н.э.). Ер., Изд АН АрмССР, 1986, 88 с.
- 113.История корабля в открытках. Вып.1. <http://www.xlegio.ru>
- 114.Жигунин, В.Д. Международные отношения эллинистических государств в 280 – 220 гг. до н.э. Издательство Казанского университета, 1980. – 192 с.
- 115.Жмодиков, А. Тактика римской пехоты IV – II в. До н.э. <http://www.xlegio.ru>
- 116.Жмодиков, А. Ответ на замечания И. Литсиоса. <http://www.xlegio.ru>
- 117.Жмодиков, А. Второй ответ Илье Литсиосу. <http://www.xlegio.ru>
- 118.Жмодиков, А. Этапы развития фаланги. В сб. Военная археология. Материалы международной конференции 2-5 сентября 1998 г. СПб, 1998, с. 89-92. <http://www.xlegio.ru>
- 119.фон Зенгер, Харро. Стратагемы. Т. 1. Пер. с нем. М.: Изд-во Эксмо, 2004. – 512 с.
- 120.фон Зенгер, Харро. Стратагемы. Т. 2. Пер. с нем. М.: Изд-во Эксмо, 2004. – 1024 с.
- 121.Зубарь, В.М., Симоненко, А.В. О снаряжении боевых коней в первые века н.э. на территории Северного Приченоморья. // Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 148-155.
- 122.Казаров С.С. Поход Антиоха III в Греко-Бактрию (208 – 206 гг. До н.э.) <http://www.xlegio.ru>
- 123.Калинин, Алексей. Битва при Платеях. <http://www.xlegio.ru>
- 124.Калинин, Алексей. Марафонское сражение. Сержант: военно-исторический журнал № 9, с. 45-52. [www.xlegio.ru](http://www.xlegio.ru)
- 125.Калинин, Алексей. Примечания к «Заметкам на полях» И.Литсиоса. <http://www.xlegio.ru>
- 126.Канья, Р. Legio. <http://www.xlegio.ru>
- 127.Караев, Г.Н. Военное искусство Древнего Китая. М., Воениздат. 1959, 218 с.
- 128.Китайская военная стратегия. Сост., пер., вступ. ст. и

- коммент. В.В. Малышкина. (Кит. классика: новые переводы, новый взгляд). М.: ООО «Издательство ACT», 2004. – 432 с.
129. Клаузевиц, Карл. О войне. Пер. с нем. – М.: Эксмо; СПб.: Мидгард, 2007. – 864 с.
130. Клир, Дж. Системология: автоматизация решения системных задач. Пер. с англ. – М.: «Радио и связь», 1990. – 544 с.
131. Кнабе, Г.С. Рим Тита Ливия – образ, миф, история. В кн. Тит Ливий. История Рима от основания города. Т. 3. М., 1994, с. 591 – 655.
132. Кован, Р. Римские легионеры: 58 г. до н.э. – 69 г. н.э. Пер. с англ. И.А. Феногенов. М.: «Астрель», 2005. [www.roman-glory.com](http://www.roman-glory.com)
133. Колесов, А.С. История войн Древнего Мира: Римская армия после реформы Гая Мария. – 2005-6. [www.war-strategy.narod.ru](http://www.war-strategy.narod.ru)
134. Колесов, А.С. История войн Древнего Мира: Митридатовы войны. – 2005-6. [www.war-strategy.narod.ru](http://www.war-strategy.narod.ru)
135. Колобов, А.В.. О трактате «De munitionibus castrorum». <http://www.xlegio.ru>
136. Колобов, А.В.. Римские легионы вне полей сражений (эпоха Ранней империи): Учебное пособие. Пермь, 1999. Из <http://www.xlegio.ru>
137. Коннолли, П. Греция и Рим. Энциклопедия военной истории. Пер. с англ. С. Лопухова, А. Хромова. М.: «Экмо-Пресс», 2000. [www.roman-glory.com](http://www.roman-glory.com)
138. Конрад, Н.И.. Избранные труды: Синология: Сунь-цзы. У-цзы. М.: «Наука», Гл. ред. восточной литературы. 1977, 624 с.
139. Кораблев, И.Ш. Ганнибал. М.: Изд-во «Наука», Гл. ред. вост. лит., 1976, 400 с.
140. Ксенофонт. Киропедия. Пер. с древнегр. М., «Наука», 1976, 336 с.
141. Ксенофонт. Гиппарх (обязанности начальника конницы). Пер. с древнегр. <http://www.xlegio.ru>
142. Ксенофонт. О коннице. Пер. с древнегр. <http://www.xlegio.ru>
143. Кузинич, В.И. Историография античной истории. – 398 с. [www.sno.pro1.ru/lib/kuzll/](http://www.sno.pro1.ru/lib/kuzll/)
144. Кузинич, В.И. История древней Турции. Изд. 2-е, перераб. и доп. М.: Высшая школа, 1996. – 400 с. [http://www.vo-krug-mira.ru/sno.pro1.ru\\_all\\_for\\_Kuz.ru](http://www.vo-krug-mira.ru/sno.pro1.ru_all_for_Kuz.ru)
145. Куликов, А.В. Восточная политика Рима и политическая борьба в Римской республике (II-I вв. до н.э.). Псков: ПГПИ, 2004. – 108 с.
146. Кусикьян, И. Тигран II и Рим. //Исторический журнал, № 10. – с. 87-98.
147. Ленцман, Я.А. О хлебной торговле Делоса в III – II вв. до н.э. //Вестник Древней истории, 1946, № 2, с. 89-96.
148. Лиддел Гарт, Б.Х. Стратегия непрямых действий. Пер. с англ. М.: Изд. иностр. лит., 1957. – 536 с.
149. Литсиос, Илья. Замечания на статью А. Жмодиков. «Тактика римской пехоты IV – II в. до н.э.» <http://www.xlegio.ru>
150. Литсиос, Илья. Второй ответ А.Л. Жмодикову. <http://www.xlegio.ru>
151. Литсиос, Илья. Марафонское сражение Калинина – Заметки на полях. <http://www.xlegio.ru>
152. Литсиос, Илья. Ответ Калинину. <http://www.xlegio.ru>
153. Лукиан. Как следует писать историю. В кн. Лукиан. Сочинения: В двух томах. Пер. с греч. Т.2. М.: «Алетейя», 2001. – с. 81 - 99.
154. Лукулл, Луций Лициний (до 117 – 56 г. до н.э.). <http://www.ancientrome.ru>
155. Магн, Гней Помпей (106 – 48 г. до н.э.) <http://www.ancientrome.ru>
156. Макьюэн, Эдвард, Роберт Л. Миллер, Кристофер Бергман. Конструкции и изготовление древних луков. <http://www.xlegio.ru>
157. Манандян, Я.А. Тигран II и Рим в новом освещении по первоисточникам. Ереван, 1943. – 240 с.
158. Манасерян, Р.Л. Тигран Второй и римско-понтийская война 73 – 71 гг. //Вестник общественных наук АН Арм.ССР, 1977, № 5.
159. Манасерян, Р.Л. Процесс образования державы Тиграна

- П. //Вестник Древней истории, 1982, № 2, с. 122-140.
160. Манасерян, Р.Л. Держава Тиграна II у ее борьба против экспансии Рима и Парфии (Автореферат дисс. На соискание ученой степени канд. историч.наук), Ереван, АН Арм.ССР, Институт истории., 1982 г., 40 с.
161. Манасерян, Р.Л. Борьба Тиграна II против экспансии Рима в Каппадокии. //Вестник Древней истории, 1985, № 3, с. 109-118.
162. Манасерян, Р.Л. К вопросу о вероисповедании населения городов Армении (I в. до н.э. - IV в. н.э.). //Историко-филологический журнал, 1989, № 2 (125), с. 198 — 204.
163. Манасерян, Р.Л. Международные отношения на Переднем Востоке в 80-70 гг. до н.э. (Тигран II и войска с берегов Аракса). //Вестник Древней истории, 1992, № 1, 152-160.
164. Марр, Н.Я. К вопросу о задачах арменоведения. В кн. Кавказский культурный мир и Армения. Ереван, «Гандзасар», 1995, с. 15 — 23.
165. Мартиросян, Амаяк. Пути Артшат — Тигранакерт и Артшат — Мцхета на карте Пейтингера. //Историко-филологический журнал, 1999, 2-3, с. 359-363.
166. Махлаюк А. В. Scientia rei militaris (к вопросу о професионализме высших военачальников римской армии) //Вестник Нижегородского государственного университета им. Н. И. Лобачевского. Сер.: История. «Издательство ННГУ». Нижний Новгород, 2002. [www.roman-glory.com](http://www.roman-glory.com)
167. Мемнон. О Гераклее. Пер., введ. и comment. В.П. Дзагуровой. //Вестник Древней истории, 1951, № 1, с. 283-316.
168. Мкртчян, Т. А. Долгий путь от камня до железа. Ер., 2004, 251 с.
169. Молев, Евгений Александрович. Властитель Понта. Н.Новгород: Изд-во ННГУ, 1995, - 144 с. [www.militera.lib.ru/bio/mollev\\_el/indeh.html](http://www.militera.lib.ru/bio/mollev_el/indeh.html)
170. Моммзен, Теодор. История Рима. Том II: От битвы при Пидне до смерти Суллы. Пер. с нем. М., ГСЭИ, 1937, 448

с.


171. Моммзен, Теодор. История Рима. Том III: От смерти Суллы до битвы при Тапсе. Пер. с нем. М., Огиз, госполитиздат, 1941, 560 с.
172. Моммзен, Теодор. История Рима. Том V: Провинции от Цезаря до Диоклетиана. Пер. с нем. М., Изд. иностр. лит., 1949, 630 с.
173. Наумов, Л.А. Численность армии Митридата. [http://gym1505.ru/files/pages/page\\_4626-analizdoc.doc](http://gym1505.ru/files/pages/page_4626-analizdoc.doc)
174. Нечитайлов, М.В. И снова битва при Иссе ... <http://www.xlegio.ru>
175. Нечитайлов, Максим. Конница Ахеменидской державы во второй половине V в. До н.э. «Para bellum», № 10, 2000. <http://www.xlegio.ru>
176. Нечитайлов, Максим. Кавалерия Александра Македонского. Журнал «Para bellum», № 10, 2000. <http://www.xlegio.ru>
177. Нефедкин, А.К. Новая история конницы? Рецензия на книгу: Тараторкин В.В. Конница на войне. История кавалерии с древнейших времен до эпохи Наполеоновских войн (Библиотека военной истории). Минск: Харвест, 1999, 431 с., 100 илл. <http://www.xlegio.ru>
178. Нефедкин, А.К. Происхождение и история серпоносных колесниц. //Журнал «Para bellum», № 2, 1997, № 9, 2000. <http://www.xlegio.ru>
179. Нефедкин, А.К. Об истории серпоносных колесниц. Журнал «Para bellum», № 2, 1997, № 11, 2000. <http://www.xlegio.ru>
180. Нефедкин, А.К. Длинные копья варваров (К вопросу об элементарной тактике херусков в начале I века нашей эры). <http://www.xlegio.ru>
181. Нефедкин А.К. Спецсеминар «Битва в Античности». Журнал «Para bellum», <http://www.xlegio.ru>
182. Нефедкин, А.К. Научная жизнь — новые явления. Журнал «Para bellum», <http://www.xlegio.ru>
183. Нефедкин, А.К. Использование собак в римском военном деле. Журнал «Para bellum», <http://www.xlegio.ru>

184. Нефедкин, А.К. Основные этапы формирования фаланги гоплитов: военный аспект проблемы. //Вестник древней истории, № 1, 2002, с. 87-96.
185. Нефедкин, А.К. Worley L.J. Hippies: The Cavalry of Ancient Greece (History and Warfare) Boulder – San Francisco – Oxford: Westview Press, 1994, 241 p., ill. (рецензия; источник: ВДИ, № 3, 2000.)
186. Нефедкин, А.К. M. Mielczarek. The Army of the Bosporan Kingdom. Translated by N.V. Sekunda (Studies In the History of the Ancient and Medieval Art of Warfare. V. Iv.). Lodz: Oficyna Naukowa Ms, 1999, 103 p. 25 Pis. (рецензия; источник: ВДИ, № 3, 2002.)
187. Новичков, Ю.А. Г. Флавий Фимбрия во главе армии популяров в первой Митридатовой войне. – 7 с. <http://vestnik.ssu.samara.ru/gum/2008web1/hist/200810203.pdf>
188. Переялов, С.М.. Сарматский контос и сарматская посадка. Российская археология, 1999, № 4.
189. Перл, Г. Эры вифинского, понтийского и боспорского царств. //Вестник Древней истории, 1969, № 3, с. 39-69.
190. Пинк, И. Катафрактарии Древнего мира. <http://www.xlegio.ru> и военно-исторический журнал «PARA BEL-LUM».
191. Плутарх. Серторий. //Вестник Древней истории, 1939, № 2, с. 301-316.
192. Плутарх. Избранные жизнеописания в двух томах. Пер. с древнегреч. Т.1. М.: «Правда», 1987. – 592 с.
193. Плутарх. Избранные жизнеописания в двух томах. Пер. с древнегреч. Т.2. М.: «Правда», 1987. – 608 с.
194. Плутарх. Изречения царей и полководцев. В кн. Плутарх. Застольные беседы. Л.: «Наука», 1990, с. 340-386. (Серия «Литературные памятники»).
195. Полибий. Всеобщая история. Том 1. Книги I – X. Пер. с древнегреч. (Историческая библиотека). М.: ООО «Издательство АСТ», 2004. – 765 с.
196. Полибий. Всеобщая история. Том 2. Книги XI – XXXIX. Пер. с древнегреч. (Историческая библиотека). М.: ООО «Издательство АСТ», 2004. – 765 с.
197. Полиэн. Стратегемы. Пер. с греч. Под общей ред. А.К. Нефедкина. СПб.: Евразия, 2002. – 608 с.
198. Пугаченкова, Г.А. О панцирном вооружении парфянского и бактрийского воинства. //Вестник Древней истории, 1966, № 2, с. 27-43.
199. Разин, Е.А.. История военного искусства. Том 1. Военное искусство рабовладельческого периода войны. – М.: Воениздат, 1955. – 560 с.
200. Ренат, Флавий Вегетций. Краткое изложение военного дела. Вестник древней истории, 1940, 1, с. 231 – 293.
201. Римская миля и другие меры длины. <http://vostlit.narod.ru>
202. Родионов, М.В. История Древней Греции и Древнего Рима: Конспект лекций. М.: А-Приор, 2006. – 224 с.
203. Россия (СССР) в локальных войнах: Введение. М., 2000, с. 15 – 17.
204. Ростовцев, М.И. Армия и флот Селевкидов. («Кембриджская древняя история», глава «Сирия и Восток», русский оригинал). ВДИ, № 4, 2000. <http://www.xls gio.ru>
205. Садаев, Д.Ч. История Древней Ассирии. М., Наука, 1979. – 248 с.
206. Сапрыкин, С.Ю. О хронологических границах эпохи эллинизма. - История: Мир прошлого в современном освещении. Сб. научн. ст. К 75-летию со дня рождения проф. Э.Д. Фролова. Под ред. проф. А.Ю. Дворниченко. Спб., 2008, с. 213 – 234.
207. Саркисян, Г.Х. Тигранакерт: из истории древнеармянских городских общин. М., Изд-во вост. лит., 1960. - 160 с.
208. Саркисян, Г.Х. Обожествление и культ царей и царских предков в древней Армении. //Вестник Древней истории, 1966, № 2, с. 3-26.
209. Саркисян, Г.Х. Свидетельство поздневавилонской клинописной хроники об Армении времени Тиграна II. //Историко-филологический журнал, 1991, № 2 (133), с. 45 – 54.
210. Севастьянова, О.И. Новый труд по древней истории Армении. //Вестник Древней истории, 1946, № 2, с. 112-

211. Секунда, Н. Армия Александра Великого. Пер. с англ. Я. Зверева. М. ООО «Издательство АСТ»; ООО «Издательство Астрель», 2004. – 53 с., 8 цв. илл. (Военно-историческая серия «Солдат»).
212. Селецкий, Б.П. Источники финансирования Суллы в период войны с Митридатом Евпатором. //Вестник Древней истории, 1982, № 2, с. 63-75.
213. Свечин, А.А. Эволюция военного искусства. Том I. М.-Л. Воентиз, 1928. <http://www.militera.lib.ru>
214. Симоненко, А.В. Некоторые дискуссионные вопросы современного сарматоведения. //Вестник Древней истории, 2002, № 1, с. 107-122.
215. Скобелев, Д.А.. Праща: снаряды и способы метания в Античности. <http://www.xlegio.ru>
216. Скобелев, Д.А.. Техника стрельбы из пращи и способы ее держания. <http://www.xlegio.ru>
217. Скорый, С.А. Доспех скифского типа. //В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 82-102.
218. Смыков, Е.В.. Луций Лициний Лукулл: полководец и общественное мнение. АМА. Вып. 10. Саратов, 1999, с. 47-62. <http://www.militera.lib.ru>
219. Страбон. География в 17 книгах. Пер. с древнегреч., статья и ком. Г.А. Стратановского. Л.: «Наука», 1964. – 944 с.
220. Строков, А.А. История военного искусства: Рабовладельческое и феодальное общество. М., Воениздат., 1955, с. 46 – 47, 62 – 63, 80 – 89, 108 – 119.
221. Сулла, Луций Корнелий: Война с кимврами и тевтона-ми. Союзническая война. Консулат. Источник: Инар Франсуа. Сулла. Ростов-на-Дону, «Феникс», 1997. <http://www.militera.lib.ru>
222. Сулла, Луций Корнелий: Начало войны с Митридатом. Инар Франсуа. Сулла. Ростов-на-Дону, «Феникс», 1997. <http://www.militera.lib.ru>
223. Сулла, Луций Корнелий: Окончание войны с Митрида-том. Инар Франсуа. Сулла. Ростов-на-Дону, «Феникс», 1997. <http://www.militera.lib.ru>
224. Тактик, Эней. О перенесении осады. //Вестник Древней истории, 1965, № 1, с. 237 – 268.
225. Тараторин, В.В. История боевого фехтования: Развитие тактики ближнего боя от древности до начала XIX века. OCR Палек, 1998. <http://www.militera.lib.ru>
226. Тарн, В. Эллинистическая цивилизация. Пер. с англ. М.: Изд. иностр. лит., 1949. – 372 с.
227. Тер-Мартиросов, Феликс. Армения в период восстания 522 – 520 гг. до н.э. //Историко-филологический жур-нал, 2001, 1, с. 231-246.
228. Тер-Мартиросов, Феликс. Границы Армении в Закавказье (IV – II вв. до н.э.). //Историко-филологический жур-нал, 2006, 1, с. 298-306.
229. Тер-Мартиросов, Феликс. Ервандашат. //Историко-фи-лологический журнал, 2008, 1, с. 3-19.
230. Томсинов, В.А. Краткая история египтологии. (Серия «Исследования по всемирной истории») М.: Изд. «Зерцало»: Изд. дом «Вече», 2004. – 320 с.
231. Трейстер, М.Ю. Комментарий к письму Х.74 Плиния Младшего. //Вестник Древней истории, 1987, 1, с. 213-219.
232. Труб, Е.Л. Военная техника античности. <http://www.genstab.ru>
233. Утченко, С.Л. Римская армия в I в. до н.э. //Вестник Древней истории, 1962, № 4, с. 30 – 47.
234. У-цзин. Семь военных канонов древнего Китая. Изд. 2-е, исправленное. Пер. с англ. иссл. и прим. Ральфа Д. Со-йера. СПб.: «Евразия», 2001. – 448 с.
235. Феликс, Луций Корнелий Сулла (138 – 78 г. До н.э.). <http://www.ancient-rome.ru>
236. Фрай, Ричард. Наследие Ирана. Пер. с англ. М.: Наука, 1972. – 468 с.
237. Франсуа И., Ковалев С.И. Митридатовы войны. 6 декабря 2006 г. Источник: Франсуа И. Сулла. «Феникс». РнД., 1997. Ковалев С.И. История Рима. Курс лекций. СПб., 2003. <http://www.militera.lib.ru>
238. Фронтин, Юлий Секст. Стратегемы. //Вестник Древней истории, 1946, № 1, с. 217 – 306.

- 239.Хазанов, А.М.. Очерки военного дела сарматов. М.: «Наука», Гл. Ред. Восточной литературы. 1971, 172 с.
- 240.Хазанов, А.М.. Катафрактарии и их роль в истории военного искусства. //Вестник древней истории, 1968, № 1, с. 180-191.
- 241.Хазанов, А.М.. Пешие и конные. Вокруг света, 1977, 1. <http://www.xlegio.ru>
- 242.Хан, Иштван. Аппиан и Александрия. //Вестник древней истории, 1968, № 1, с. 72-86.
- 243.Харболт, Т. Битвы мировой истории: Зела (Zela) 3-я Митридатова война. Тигранокерта (Tigranokerta) 3-я Митридатова война. 1993. <http://interpretive.ru/dictionary/407/word/>
- 244.Хачикян, Армен. Ганнибал на востоке и в Армении. //Историко-филологический журнал, 2006, 1, с. 285-297.
- 245.Херцог, Хаим, Гишон, Мордехай. Библейские сражения. Пер. с англ. М.: АСТ: Астрель, 2005. – 320 с.
- 246.Хефлинг, Гельмут. Римляне, рабы, гладиаторы: Спартак у ворот Рима. Пер. с нем. М.: «Мысль», 1992. – 272 с.
- 247.Хлевов, А.А. Морские войны Рима. СПб.: Изд-во С.-Петербург. ун-та, 2005. – 496 с.
- 248.Холмогоров, В.И. Римская стратегия в IV в. н.э. у Амиана Марцеллина. //Вестник древней истории, 1939, № 3, с. 87-97.
- 249.Цезарь, Гай Юлий. Записки о галльской войне. <http://lib.aldebaran.ru>
250. Цезарь, Гай Юлий. Записки о гражданской войне. Записки продолжателей Цезаря. <http://lib.aldebaran.ru>
- 251.Черненко, Е.В. Битва при Фате и скифская тактика IV в. до н. э. //В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 59-74.
- 252.Чолоян, Джемил Муразович. Исторический ареал сложения курдского этноса. Курдистан – страна курдов. 9.12.2005. <http://www.ezidixane.ru/content/view/679/218>
- 253.Шабан, В.А. Рецензия на книгу Нефедкин, А.К. «Боевые колесницы и колесничие древних греков». СПб., 2001. [www.lmr.ru](http://www.lmr.ru)
- 254.Шабан, В.А. О непобедимости конницы катафрактов. Альманах\_Фрідріх2: славянский милитаристский альманах, декабрь 2006, № 6. <http://wars175xnarod.ru/f2/Html/6Fridrich6.html>
- 255.Шабан, В.А. Реконструкция македонской сариссы. Альманах\_Фрідріх2, декабрь 2007, № 7. <http://wars175xnarod.ru/f2/Html/7Fridrich7.html>
- 256.Шабан, В.А. О величине полибиевого фута. Альманах\_Фрідріх2, декабрь 2007, № 7. <http://wars175xnarod.ru/f2/Html/7Fridrich7.html>
- 257.Шахермайр, Фриц. Александр Македонский. 2-е изд., исправленное. М.: Наука, 1986. – 384 с.
- 258.Шкрабо, Дмитрий. Битва при Магнесии (190 г. До н.э.). «Воин», № 12, 2003, с.2-12. <http://www.xlegio.ru>
- 259.Шмалько, Андрей. «Пришел, увидел, победил» (Битва при Зеле 2 августа 47 г. До н.э.). <http://www.xlegio.ru>
- 260.Шокарев, Ю.В. Луки и арбалеты. М., 2001, 173 с.
- 261.Шрамко, Б.А. Из истории скифского вооружения. // В сб.: Вооружение скифов и сарматов. Киев, 1984. с. 22-38.
- 262.Шустов, В.Е. Войны и сражения древнего мира. Ростов-на-Дону: «Феникс», 2006. [www.roman-glory.com](http://www.roman-glory.com)
- 263.Энциклопедия военной мысли. Под ред. Питера Тоурсаса. Пер. с англ. М.: «ЭКСМО», 2002, 736 с.
- 264.Caldwell, Craig H. War and Peace in the Ancient World (review). The Journal of Military History - Volume 71, Number 4, October 2007, pp. 1217-1218. <http://muse.jhu.edu/journals>.
- 265.Goldsworthy, A.K. The Othismos, Myths and Heresies: The Nature of Hoplite Battle. «War in History», 1997; 4; 1. [www.roman-glory.com](http://www.roman-glory.com)
- 266.Hanson, Victor Davis. Introduction: the Historiography of Ancient Warfare. – 10 p. – The Cambridge History of Greek and Roman Warfare, Volume 1: Greece, the Hellenistic World and the Rise of Rome. [www.cambridge.org](http://www.cambridge.org)
- 267.Hanson, Victor Davis. The Status of Ancient Military History: Traditional Work, Recent Research, and On-going Controversies. The Journal of Military History Vol. 63, Iss. 2 April 1999. [www.victorhanson.com/articles/hanson/](http://www.victorhanson.com/articles/hanson/)

- 268.Kimberly, Kagan. 1972 - Redefining Roman Grand Strategy. *The Journal of Military History*. - Volume 70, Number 2, April 2006, pp. 333-362. [http://muse.jhu.edu/journals/journal\\_of\\_military\\_history/vol70/70.2.kagan.html](http://muse.jhu.edu/journals/journal_of_military_history/vol70/70.2.kagan.html)
- 269.Lendering, Jona. Parthian Empire. [wwwiran chamber.com/history/parthian/](http://wwwiran chamber.com/history/parthian/)
- 270.Liddell, Henry George and Scott, Robert. A Greek – English Lexicon. [www.perseus.tufts.edu/cgi-bin/ptext?d=oe](http://www.perseus.tufts.edu/cgi-bin/ptext?d=oe)
- 271.Muller, Carolus. Fragmenta historicorum graecorum. Volume III. Parisiis. Editore Ambrosio Firmin Didot, 1849, p.746 (606 p.). [www.archive.org](http://www.archive.org)
- 272.Nercessian, Y.T. Silver Coinage of the Artaxiad Dynasty of Armenia. Los Angeles, 2006. – 222 p., 96 plates.
- 273.Poirot III, John Joseph. Perceptions of Classical Armenia: Romano-Parthian relations, 70 BC-220 AD. A Thesis degree of Master of Arts in the Department of History. Louisiana State University, 2003. – 85 p.
- 274.Roman infantry tactics. [http://wapedia.mobi/en/Roman\\_infantry\\_tactics,\\_strategy\\_and\\_battle\\_formation](http://wapedia.mobi/en/Roman_infantry_tactics,_strategy_and_battle_formation)
- 275.Shahbazi, A.Sh. Parthian Army. [wwwiran chamber.com/history/parthian/](http://wwwiran chamber.com/history/parthian/)
- 276.Speidel, Michael Alexander. Early Roman Rule in Commagene. – 19 p. Mavors-Institut fur antike Militargeschichte. [www.mavors.org](http://www.mavors.org)
- 277.Starspawn. Римско - армянская война. <http://www.war online.org/forum>
- 278.Webber, Christopher. Odrysian Cavalry Arms, Equipment, and Tactics. – Early Symbolic Systems for Communication in Southeast Europe. Chapter 45. Ed. Nikolova L. – p. 529-554.
- 279.Eutropius. [www.thelatinlibrary.com/eutropius/eutropius1.shtml](http://www.thelatinlibrary.com/eutropius/eutropius1.shtml)
- 280.Война и мир в терминах и определениях – Словарь: Глава 16. Военная история. [www.voina\\_i\\_mir.ru/dicchapter/](http://www.voina_i_mir.ru/dicchapter/)
- 281.Вэрри, Джон. Войны античности от Греко-персидских войн до падения Рима: Иллюстрированная история. Пер. с англ. М.: Эксмо, 2004. – 224 с.
- 282.Гольденков, И.А. Армия императорского Рима I – II вв. н.э. М. ООО «Издательство Астрель»: ООО «Издательство ACT», 2000. – 48 с., 8 цв. илл. (Военно-историческая серия «Солдатъ»).
- 283.Келли Девриз, Мартин Догерти, Йен Дикки, Филлис Джестайс, Роб Райс. Великие сражения Древнего мира: 1285 г. до н.э. – 451 г. н.э. Пер. с англ. М.: Эксмо, 2008. – 224 с.: илл. (История военного искусства).
- 284.Попов, И. Армии Древнего Китая III вв. до н.э. – III вв. н.э. М. ООО «Издательство ACT» : ООО «Издательство Астрель», 2001. – 48 с., илл. (Военно-историческая серия «Солдатъ»).
- 285.Саймон Энглин, Филлис Дж. Джестис, Роб С. Райс, Скотт М. Раш, Джон Серрата. Войны и сражения Древнего мира : Энциклопедия военной истории. Пер. с англ. М.: Эксмо, 2004. – 272 с.: илл.
- 286.Առաքելյան, Ա.Գ. Հունական գրականության պատմություն: Երկրորդ լրացված և բարեփոխված հրատ. Եր., 1962. – 616 էջ :
- 287.Лосев, А.Ф. Эллинистически – римская эстетика I – II вв. н.э. М.: Изд. Моск. ун-та, 1979. – 416 с.
- 288.Спартак. [www.wikipedia.ru](http://www.wikipedia.ru)
- 289.Крисп, Гай Саллюстий. Сочинения. Пер. с лат. М.: Изд. «Наука», 1981. – 224 с. (Памятники исторической мысли).
- 290.История Древнего мира. Под ред. И.М. Дьяконова, В.Д. Нероновой, И.С. Свенцицкой. Изд. 3-е, испр. и доп. М.: Наука. Главная редакция восточной литературы, 1989. Кн. 2. Расцвет древних обществ. Отв. ред. И.С. Свенцицкая. – 572 с. с карт.



## ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԸ մատենաշար

«Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշարը նախատեսված է Հայաստանի և հարակից երկրների պատմության հին և վաղ միջնադարյան ժամանակաշրջանի ռազմական պատմության տարբեր հարցերի լուսաբանման համար։ Այն ընդգրկելու է գիտական և գիտահանրամատչելի, ինչպես նաև կարևորագույն սկզբանադրյուրների հրապարակումները։ Հետագայում նախատեսվում է ունենալ մշտական կայք համացանցում, որի միջոցով համագործակցել տվյալ բնագավառում աշխատող արտասահմանյան մասնագետների հետ և տարածել ծառագիր և համակարգված տեղեկություններ մեր ժողովրդի գործունեության այս կարևորագույն բնագավառի մասին։

Մատենաշարով նախատեսվում է հրատարակել հետևյալ մենագրությունները։

- Արա Գևորգյան. Տիգրան Մեծի բանակը. մ.թ.ա. 95 – 55 թթ. Պրակ I: Երևան, «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2009 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր II):

- Արա Գևորգյան. Հին Հայաստանի բանակը. մ.թ.ա. XV – II դդ.: Երևան, «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2010 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր I):

- Արա Գևորգյան. Հին Հայաստանի բանակը. մ.թ.ա. 55 – մ.թ. 428 թթ.: Երևան, «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2011 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր III):

- Արա Գևորգյան. Հին Հայաստանի զինագործությունը մ.թ.ա. XV – մ.թ. V դդ.: Երևան, «Արևելք-Արևմուտք» ԳԲՀ հրատարակչություն, 2011 թ.: («Հին Հայաստանի ռազմական գործը» մատենաշար, հատոր IV):

Արա Գևորգյան. Հին Հայաստանի բանակը. մ.թ.ա. XV – II դդ.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

#### Մուտք

#### Նախաբան

ՄԱՍ I. Հայկական բանակի հնագույն պատմությունը

Գլուխ I. Ռազմական գործը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. XVI դ.

Գլուխ II. Հին Հայքի՝ Հայաստանի բանակը՝ մ.թ.ա. XV – XIII դդ.

Գլուխ III. Նախրիի բանակը՝ մ.թ.ա. XIII – IX դդ.

ՄԱՍ II. Բիայնիի բանակը հին արևելյան ռազմական համակարգում

Գլուխ IV. Վանի թագավորության բանակը՝ մ.թ.ա. IX – VIII դդ.

Գլուխ V. Վանի թագավորության բանակը՝ մ.թ.ա. VII – VI դդ.

ՄԱՍ III. Հայկական բանակը մ.թ.ա. VII – II դդ.

Գլուխ VI. Հայաստանի բանակը՝ մ.թ.ա. VII – VI դդ.

Գլուխ VII. Հայկական բանակը Արեմենյանների ռազմական համակարգում՝ մ.թ.ա. 550 – 331 թթ.

Գլուխ VIII. Երվանդունիների բանակը՝ մ.թ.ա. 331 – 201 թթ.

Գլուխ IX. Արտաշեսյանների բանակը՝ մ.թ.ա. 201 – 95 թթ.

Գլուխ X. Եզրակացություններ

#### Վերջաբան

#### Գրականություն

#### Հավելված

## Արա Մկրտչի Գևորգյան




Ծնվել է 1954 թ. Երևանում: 1977 թ. ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետը, մասնագիտությամբ բժիշկ-թերապևտ և ասեղնաբույժ է: 1970 թ.-ից զբաղվում է ուսումնական պատմության և ուսումնական գործի տարրեր հարցերով: 1971 թ.-ից զբաղվում է Հին աշխարհի ուսումնական պատմության ուսումնասիրությամբ: 1973 թ.-ից զբաղվում է ծրագրավորման և համակարգային վերլուծարանության, 1979 թ.-ից բժշկական փորձագիտական համակարգերի մշակման տեսական և գործնական հարցերով:

1996 թ.-ից՝ «Արևելք-Արևմտուր» գիտական և բժշկական հիմնադրամի տնօրենն է, 2007 – 2009 թթ.՝ Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիայի տեղեկատվական տեխնոլոգիաների ֆակուլտետի «Ծրագրակազմի ճարտարագիտություն» առարկայի դասախոս:

Վերոհիշյալ բոլոր բնագավառներում ունի հրատարակված գիտական աշխատություններ:

Դարձայան պատերազմի մասնակից և II կարգի պատրազմի հաշմանդամ:



**Քարտեզ.** Արևելքի քաղաքական վիճակը 94 – 66 թթ. Ա.թ.ա.

Կազմեց Ռ.Լ. Սանասերյանը [34]:

Նկար. զրի երկրորդ էջում պատկերված է Անտիոքոս հատած Տիգրանի տեսրադրաբան՝ [272]:

Հոռմեական բանակի նկարները՝ Ե. Ռազինի զրից [199]:

Արա Մկրտչի Գևորգյան

ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԲԱՆԱԿԸ

մ.թ.ա. 95 – 55 թթ.

Պրակ I

Հրատ. խմբագիր՝ Սուսաննա Խսաջանյան  
Տեխն. խմբագիր՝ Նարինե Գևորգյան

Նկարիչ՝ Ծովինար Ղազարյան  
Համակարգչային ձեռավորում՝ Լիլիթ Ավագյան  
և Տաթևիկ Հովսեփյան  
Կազմարար՝ Հովհաննես Հովսեփյան

«Արևելք – Արևմուտք» ԳԲԸ հրատարակչություն  
Երևան, Ավան, Դուրյան թաղ. 28/9  
Հեռ. 61-13-78, (093) 38-70-22  
Էլ. փոստ [arevelkarevmutk@acupuncture.am](mailto:arevelkarevmutk@acupuncture.am)